

ԲԻԻԶԱՆԴԻ ԹՈՐԻԻԿԵԱՆ



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ

Մ Ա Ր Մ Ն Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր

Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Տ ՈՐ ՉՈՐՐՈՐԴ
(1991 - 2007)

ՊԵՅՐՈՒԹ
2007

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Պատմութիւն Յայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հատորներու շարքին, ներկայ չորրորդ համարը կ'ընդգրկէ 1991էն 2006 ժամանակաշրջանը՝ Հայաստանի վերանկախացումէն մինչեւ մեր օրերը:

Հատորը կը պարփակէ Հ.Ս.Ը.Մ.ի 9 շրջաններու եւ աւելի քան 92 մասնաճիւղերու, առաւել Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի՝ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի եւ 9 մարզերու մասնաճիւղերու կամ սկաուտական միաւորներու կազմակերպչական, սկաուտական, մարզական, ընկերային եւ ազգային գործունէութիւններու ընդհանուր պատկերը: Հատորը կը պարունակէ նաեւ միութեան 4 Ընդհանուր ժողովներու (Ե, Զ, Է, Ը) եւ 4 Կեդրոնական Վարչութիւններու գործունէութիւններու պատմութիւնը: Վերջապէս, հատորը ունի Մամուլի եւ Յաւելաճի բաժիններ: Հատորին պատկերազարդումը զտում մըն է տասնեակ հազարաւոր նկարներու շարքէն, իւրաքանչիւր մասնաճիւղի յատուկ, մի քանի նմոյշներու ընտրութեամբ: Մարզական, սկաուտական, ժողովական եւ հրապարակային առիթներու մանրամասնութիւններուն համար, ընթերցողի ուշադրութեան յանձնած ենք «ՄԱՐԶԻԿ» պաշտօնաթերթի համապատասխան էջերը: Այս բոլորը ամփոփուած շուրջ 400 էջերու սեղմ պարունակին մէջ:



Վերոյիշեալ աշխատանքին ամբողջացումը երկարեցաւ քառամեակի մը վրայ եւ ամբողջական է այն համեմատութեամբ, որքանով արտօնեցին մեր տրամադրութեան տակ գտնուող կեդրոնական արխիւները եւ շրջաններու կամ մասնաճիւղերու տրամադրած տեղեկութիւնները. բաներ որոնք հաղորդակցութեան բացառիկ ճիգերու կարիքը ստեղծեցին:

Ներկայ չորրորդ հատորն ալ, նախկիններուն նման, ուղղուած է գլխաւորաբար Հ.Ս.Ը.Մ.ի այժմու ղեկավարութեան ուսումնասիրութեան, անշուշտ նաեւ բոլոր Հ.Ս.Ը.Մ.ականներուն եւ հայ ընթերցողներուն, որոնք կը հաւատան մեր աշխարհատարած Միութեան առաքելութեան:

Փակելէ առաջ այս տողերը, յայտնեմ, որ այս աշխատանքը կը նուիրեմ կնոջս՝ Տիգի (Տիգրանուհի) Թորիկեանին, անդրանիկ զաւակիս՝ Վիգէնին, իր կնոջ՝ Հուրիին եւ զաւակներուն՝ Հրայրին եւ Արամին, երկրորդ զաւակիս՝ Գառնիկին, իր կնոջ Ռիթային եւ զաւակներուն՝ Նարեկին եւ Արիին, երրորդ զաւակիս՝ Անիին, իր ամուսնոյն՝ Թորոս Պապիկեանին եւ զաւակներուն՝ Առէնին եւ Սեւակին եւ, վերջապէս, չորրորդ զաւակիս՝ Շաղիկին, իր ամուսնոյն՝ Սագօ-Վաչէ Պոյաճեանին եւ զաւակներուն՝ Կասիային եւ Լիլիթին:

Բ. ԹՈՐԻԿԵԱՆ

ՇՆՈՐՅԱԿԱԼԻՔ

Հ.Մ.Ը.Մ.ի պատմության ներկայ Դ. հատորին հրատարակության առթիւ, պարտք կը համարենք մեր շնորհակալութիւնները յայտնելու բոլոր անոնց, որոնք տեղեկութիւններով, փաստաթուղթերով, վկայութիւններով, նկարներով կամ այլ օժանդակութիւններով նպաստեցին մեր աշխատանքին ամբողջացման:

Կ'ուզենք յատկապէս յիշել անունները հետեւեալ անձերուն.-

Աթենքէն՝	Կարպիս Գույունճեան
Լոս Անճելըսէն՝	Սամուէլ Մկրտիչեան
Մոնթրէալէն՝	Տիրան Շահինեան
Գորտոպայէն՝	Սուսանա Վրզվրզեան
Գահիրէէն՝	Տոքթ. Սուրէն Պայրամեան
Եիւնիէն՝	Րաֆֆի Եսայեան

«Մարզիկ»ի խմբագիր Վիգէն Աւագեան:

Կեդրոնական Վարչութեան գործավարուհի՝ Վերա Բարսեղեան:

Հրատարակչական մարմնի անդամներ՝

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր՝ Կարպիս Գապասագալեան
Միհրան Շիմշիրեան
Պետիկ Սապունճեան
Տոքթ. Իշխան Եղիայեան

Բ. Թ.

Հատորին վերջաւորութեան, ընթերցողը պիտի գտնէ «Գործնական Թելադրանքներ Ընթերցողին» խորագրով բացատրողականը, ուր յիշուած են օգտագործուած մատենագիտական աղբիւրներուն թուագրուծի ձեւերը:

Նկարներու պարագային, բացի յատուկ յիշատակութիւններէ, անունները արձանագրուած են ծախէն աջ շարքով:

Ա. ՄԱՍ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ

ԵՒ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

29 Մարտ - 3 Ապրիլ 1991

- ՀՐԱԻԷՐ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ
- ՆԵՐԿԱՅ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ
- ԺՈՂՈՎԻ ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ
- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ
- ԲԱՆԱԶԵԻ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
- ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
- ՓԱԿՈՒՄ 5ՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ



Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովի մասնակիցներու խմբանկար – Յունաստան, 1991

ՀՐԱԽԵՐ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ

16 Յունուար 1991 թվականի թիվ 39 շրջաբերականով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը կը տեղեկացնէ Շրջաններուն եւ Մեկուսի շրջաններուն՝ կազմակերպելու շրջանային Ներկայացուցչական կամ անդամական ընդհանուր ժողովներ եւ ընտրելու իրենց պատգամաւորները մասնակցելու համար Հ.Մ.Ը.Մ.ի հինգերորդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին: Կեդրոնական վարչութիւնը թիվ 36 եւ 37 շրջաբերականներով շրջաններուն ուղարկած էր հետեւեալ օրակարգի ցանկը.-

- Ժողովի բացում, առժամեայ դիւանի ընտրութիւն
- Մնայուն դիւանի եւ յանձնախումբերու ընտրութիւն
- Աշխատանքային յանձնախումբեր
- Շրջաններու եւ Կեդրոնական վարչութեան քառամեայ գործունէութեան տեղեկագրերու ընթերցում
- Տեղեկագրերու մասին հարցումներ եւ ըստ էութեան քննութիւն

- ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներ
- Աշխատանքային յանձնախումբերու զեկուցումներ եւ քննարկում
- Հաշուեքննիչ եւ բանաձեւի յանձնախումբերու զեկուցումներ
- Նախահաշիւ 1991-1995 քառամեակի գործունէութեան
- Հինգերորդ Կեդրոնական վարչութեան ընտրութիւն
- Փակում հինգերորդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի:

ՆԵՐԿԱՅ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՁԱՅՆՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի հինգերորդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ 29 Մարտին 3 Ապրիլ 1991ին, Աթէնքի մօտակայ վուլիակմէնի շրջանի «Արմոնիա» պանդոկի համագումարներու սրահին մէջ, մասնակցութեամբ 56 լիազօր պատգամաւորներու, 20 խորհրդակցական ձայնով եւ 10 ի պաշտօնէ մասնակցողներու:



Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի Դիւանը – 1991

Լիազոր պատգամաւորներն էին.-

Կեդրոնական Վարչութիւն՝ 1 պատգամաւոր, Յունաստան՝ 4, Լիբանան՝ 8, Սուրիա՝ 6, Արեւմտեան Միացեալ Նահանգներ՝ 9, Գանատա՝ 6, Արեւելեան Միացեալ Նահանգներ՝ 5, Աւստրալիա՝ 3, Հարաւային Ամերիկա՝ 1, Ամման՝ 2, Փարիզ՝ 1, Լոնտոն՝ 2, Վալանս՝ 1, Վիեննա՝ 2, Հայաստան՝ 5:

ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ

Կեդրոնական վարչութեան ատենապետ Տոքթ. Միսաք Արզումանեանի բացման խօսքէն ետք ժողովը ընտրեց առժամեայ դիւան, ատենապետ՝ Բիւզանդ Թորիկեան, ատենադպիր՝ Սուրէն Նազարեան: Լիազորագրերու ստուգումէն ի յայտ եկաւ որ լիազոր պատգամաւորներէն 56ի վրայ 40, իսկ շրջաններէն 21ի վրայ 13 ներկայ են. հետեւաբար ժողովը օրինաւոր մեծամասնութիւն կը կազմէ:

Ապա ընտրուեցան մնայուն դիւանի անդամներ. ատենապետներ՝ Բիւզանդ Թորիկեան եւ Գէորգ Մանկէլեան. ատենադպիրներ՝ Կարպիս Շիրրտմեան, Սուրէն Նազարեան, Լեւոն Պէնկեան եւ Րաֆֆի Կէօփօղլանեան:

Ընտրուեցան նաեւ հաշուեքննիչ, նախահաշիւի, բանաձեւի, արխիւային եւ քուէախոյզ յանձնախումբերու անդամներ:

Բ. եւ Գ. նիստերու ընթացքին յաջորդաբար կարդացուեցան շրջաններու քառամեայ գործունէութիւններու եւ ընթացաւարտ կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագրերը: Եղան լուսաբանական հարցումներ վերոյիշեալ տեղեկագրութիւններու մասին:

Դ. եւ Ե. նիստերը յատկացուեցան լուսաբանական հարցումներու պատասխաններուն եւ պատգամաւորներու կողմէ կեդրոնական Վարչութեան գործունէութեան ըստ էութեան քննութեան:

Զ. նիստը բացուեցաւ 1 Ապրիլ 1991ի երեկոյեան ժամը 16.10ին: Այդ պահուն ընդհանուր ծա-

փողջոյններու մէջ ժողովասրահ մուտք գործեցին Հայաստանի նորաստեղծ շրջանի ներկայացուցիչները, ընկերակցութեամբ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Հրայր Մարուխեանի: Այս պատմական ներկայութիւնը ողջոյնի խօսքերով դիմաւորեցին կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան եւ ժողովի դիւանի անունով Բիւզանդ Թորիկեան: Ժողովին ուղուած Հ.Յ.Դ.աշնակցութեան Բիւրոյի պատգամը փոխանցեց Հրայր Մարուխեան, որ շեշտեց Հայաստանի շրջանի կազմութեան կարեւորութիւնը եւ զայն «անկիւնադարձային» իրականացում նկատեց Հ.Մ.Ը.Մ.ի եւ Մայր հայրենիքի համար — [Ծ/111-112. 19-21]:



Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի ամպիոնէն իր պատգամը կը փոխանցէ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխեան

Երեքշաբթի, 2 Ապրիլի առաւօտեան, Է. նիստը յատկացուեցաւ Հայաստանի շրջանի գործունէութեան տեղեկագրութեան՝ ամփոփ ձեւով ներկայացուած Վարդան Բախչեանի կողմէ: Ապա Հ.Մ.Ը.Մ.-Հայաստան եւ սկառուական աշխատանքային յանձնախումբերը առանձնացան լծուելու համար իրենց աշխատանքին:

Ը. եւ Թ. նիստերը յատկացուեցան աշխատանքային յանձնախումբերու զեկուցումնե-

րուն եւ անոնց քննութիւններուն: Ապա լսուեցան ընդհանուր եւ համագաղութային ձեռնարկներու ծրագրումի առաջարկներ, արխիւային, հաշուեքքնիչ եւ բանաձեւի յանձնախումբերու զեկուցումներ:

Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը նկատուեցաւ «Գոհացուցիչ»:

Չորեքշաբթի, 3 Ապրիլ 1991ի վերջին՝ Ժ. նիստը բացուեցաւ կէսօրէ ետք ժամը 3.30ին: Կարգուեցաւ նախահաշիւի յանձնախումբի զեկուցումը եւ վաւերացուեցաւ: Ապա տեղի ունեցաւ հինգերորդ Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն, լսուեցան ժողովականներու եւ

դիւանի կողմէ սրտի խօսքեր եւ մաղթանքներ:

Նորընտիր Կեդրոնական Վարչութեան անդամներ ընտրուեցան Տոքթ. Միսաք Արզումանեան, Միհրան Շիմշիրեան, Տոքթ. Յարութիւն Գազանձեան, Եղիշէ Խոստեղեան, Կարօ Թիւթիւնճեան, Արա Յակոբեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Վարուժան Սերոբեան, Վարդան Բախշեան, Սուրէն Նազարեան, Ժիրայր Պոյաճեան եւ Արթիւրօ Յովհաննէսեան:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերգով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ապրիլ 1991 - Ապրիլ 1995

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՆՈՐ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ, ՀԱՄԱ Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆ 5ՐԴ ԸՆԴՀ. ԲԱՆԱԿՈՒՄ
- ՄԱՐԶԱԿԱՆ, ՀԱՄԱ Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆ 4ՐԴ ԽԱՂԵՐ
- ԿԱԼՈՒԱԾ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ



Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ կեդրոնական վարչության Ա. կազմի խմբակար, անդրանիկ միստի ընթացքին: Կը բացակային Յարութիւն Յովհաննէսեան եւ Եղիշէ Խոստեղեան



Հինգերորդ կեդրոնական վարչության Բ. կազմի խմբակար, ոտքի առաջինը՝ Համլէթ Չրախչեան կը փոխարինէ Ժիրայր Պոյաճեանը, երրորդը՝ Արմէն Աղայեան կը փոխարինէ վարդան Բախչեանը

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի հինգերորդ Կեդրոնական Վարչութիւնը իր անդրանիկ նիստը գումարեց 4 Ապրիլ 1991ին, Աթէնքի մէջ: Այս նիստին ընթացքին կատարուեցաւ աշխատանքներու բաժանում հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան
- Փոխ ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
- Ատենադպիրներ՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան եւ Կարօ Թիւթիւնճեան
- Գանձապահ՝ Միհրան Շիմշիրեան
- Հաշուապահ՝ Պատրիկ Կիւլպէնկեան
- Գոյքապահ՝ Արա Յակոբեան
- Խորհրդականներ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Սուրէն Նազարեան, Վարդան Բախշեան, Ժիրայր Պոյաճեան, Եղիշէ Խոստեղեան, եւ Արթիւրօ Յովհաննէսեան:

Կազմը դժբախտութիւնը ունեցաւ կորսնցնելու իր անդամներէն Ժիրայր Պոյաճեանը, 17 Հոկտեմբեր 1991ին, հիւանդութեան պատճառով եւ Վարդան Բախշեանը՝ 17 Դեկտեմբեր 1991ին, նահատակուած Արցախի ազատագրման կռիւներու ընթացքին: Հանգուցեալ անդամները փոխարինուեցան Համլէթ Չրախչեանով եւ Արմէն Աղայեանով:

Քառամեակին ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը գումարեց լրիւ կամ մասնակի լիազումար նիստեր՝ 15 Օգոստոս 1992ին՝ Նիւ Եորք, 7 Ապրիլ 1993ին՝ Հալէպ, Սեպտեմբեր 1993ին՝ Մոնթրէալ, 28 Սեպտեմբեր 1994ին եւ 6 Ապրիլ 1995ին՝ Պէյրութ:

Միջդիւանային խորհրդաժողովը կայացաւ 13 Յունիս 1993ին Գանատա, մասնակցութեամբ 11 շրջաններու վարչութեանց դիւաններու ներկայացուցիչներուն:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կեդրոնական Վարչութեան անդամները կազմակերպչական առաքելութեամբ, Շրջանային ժողովներու, տօնակատարութիւններու

կամ շրջանային ձեռնարկներու առիթներով այցելած են շրջաններ եւ մասնաճիւղեր:

Այցելութիւններ տրուած են գրեթէ բոլոր շրջաններուն:

Նոր Շրջաններ եւ մասնաճիւղեր

1991-1995 քառամեակին ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին միացան հետեւեալ նոր մասնաճիւղերը. Պուլկարիոյ մէջ՝ Սոֆիա, Փլովտիվ, Վառնա եւ Ռուսճուք: Արեւմտեան Մ. Նահանքներու շրջան՝ Սոլթ Լէյք Սիթի, Սանթա Գլարա Վալի, Սաութ Պէյ, Ինլէնտ Էմփայր եւ Գրեսէնթա Վալի: Սուրիա՝ Քեսապ: Նոյն ժամանակաշրջանին գործելէ դադարած են Նիւ Եորք Պէյսայտի եւ Վալանթին Ալսինայի մասնաճիւղերը:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան միջազգային ճանաչում

1989էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ. սկսաւ պաշտօնապէս գործել Հայրենիքէն ներս: Այս իրողութեան լոյսին տակ, 1991էն սկսեալ կը մտածուի ապահովել Հայաստանի սկաուտական շարժման անդամակցութիւնը՝ Միջազգային Սկաուտական Շարժումին (OMMS) : Այս նպատակին կը ծառայեն Լիբանանէն Միհրան Շիմշիրեանի եւ Յունաստանէն Պօղոս Չոլաքեանի ճիգերը, որոնք իրենց երկիրներու Ֆետերասիոններուն կողմէ ստեղծուած առիթները կ'օգտագործեն Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ծանօթացնելու համար Միջազգային Գրասենեակի ներկայացուցիչներուն: 1993ին այս աշխատանքը կը վստահուի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Տոքթ. Յարութիւն Գազանճեանին, որ նախապատրաստական կապերէ ետք, 18 Սեպտեմբեր 1994ին, Ժրնեւի մէջ կ'այցելէ Միջազգային Գրասենեակ եւ լայնօրէն ծանօթացնելով Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծումէն մինչ այդ անոր սկաուտական գործունէութիւնը, բարոյապէս կ'ապահովէ անոր ճանաչումը իբրեւ Հայաստանի մէջ գործող կազ-



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ե. ընդհանուր բանակումի խմբապետական կազմը - Բիրական, 1994

մակերպություն (Տե՛ս Աերկայ հատորի Դ.մասի չորրորդ գլխու այս բաժինը):

Կեդրոնական Վարչությունը գործակցություններ կեդրոնական սկաուտական յանձնախումբի մը, այս քառամեակին կը մշակէ Վկայեալ եւ Արարատեան կարգերու քննությունն յաջողություն պայմանները, կը խմբագրէ միաստղի, երկաստղի, նորագիրի, նորընծայի, Բ. եւ Ա. կարգի սկաուտական գիտելիքներու գիրքերը, սկաուտական ընդհ. կանոնագրություններ վերամշակուած գիրքը, Հայաստանի մէջ կը կազմակերպէ նորագիրի, նորընծայի, Բ. եւ Ա. կարգի խմբապետներու որակաւորման բանակումներ, Սոֆիայի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գործունէություններ վերսկսման բանակում, Ամմանի եւ Փարիզի մէջ եռօրեայ խմբապետական սեմինարներ եւ սկաուտական դպրոց բանակումներ՝ Հանքաւան, 8-29 Օգոստոս 1991ին եւ Պէյրութ, 3-23 Օգոստոս 1992:

Սկաուտական բաժինի գլխաւոր իրականացումը կը հանդիսանայ համաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ ընդհ. բանակումը, 27 Յունիսէն 7 Օգոստոս 1994ին, Բիւրականի մէջ՝ Հայաստան, մասնակցություններ 14 շրջաններէ 500 սկաուտներու — [Ծ/153 լրիւ]:

ՄԱՐԶԱԿԱՆ

Նախաձեռնություններ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-

կան Վարչություն եւ կազմակերպություններ Գանատայի Շրջանային Վարչություն, 9էն 15 Յուլիս 1993ին տեղի ունեցան համաՀ.Մ.Ը.Մ.ական 4րդ խաղերը: Խաղերուն բացումը տեղի ունեցաւ Թորոնթոյի մէջ եւ խաղերը շարունակուեցան եւ փակուեցան Մոնթրէալի մէջ: Այս խաղերուն Ֆուտբոլի եւ աթլետիկայի խումբերով մասնակցեցան հետեւեալ շրջաններու խումբերը՝ Ֆրանսա, Քուէյթ, Հարաւային Ամերիկա, Աւստրալիա, Արեւելեան Միացեալ Նահանգներ եւ Գանատա: Խաղերուն հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրություն 75ամեակի տօնակատարություն եւ պաշտօնական հանդիպումներ — [Ծ/139.8-18]:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

Կեդրոնական Վարչությունը այս քառամեակին յատուկ յանձնախումբի մը գործակցություններ շարունակեց հրատարակել «ՄԱՐԶԻԿ» պաշտօնաթերթը, մինչեւ ԺԲ. տարուան թիւ 3ը, խմբագրություններ Վարուժան Մուրատեանի, որու մահէն ետք խմբագրությունը ստանձնեց Զաւէն Թորիկեան:

Հ.Մ.Ը.Մ.ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 75ԱՄԵԱԿ

Անկախ Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններու եւ մասնաճիւղերու նախաձեռնություններ կազմակերպուած տօնակատարություններէն, Կեդրոնական Վարչություն գլխաւորած կարեւորագոյն հանդիսությունները եղան Լիբանանի շրջանի Մայիսեան Փառատօնը, 30 Մայիս 1993ին, բարձր հովանաւորություններ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսի: Վեհափառ այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ին նուիրեց 75.000 ամերիկեան տոլար, որմէ 25.000 ամերիկեան տոլարը Կեդրոնական Վարչություն — [Ծ/137.12]:

Կազմակերպուեցաւ նաեւ հրապարակային հանդիսություն՝ Պուրճ Համուտի «Յակոբ Տէր Մելքոնեան» սրահին մէջ, հովանաւորություններ եւ ներկայություններ Լիբանանի հանրապետություն նախագահ Իլիաս Հրաուրիի - [Ծ/142.11]:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

11 – 17 Ապրիլ 1995

- ԲԱՑՈՒՄ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ
- ՆԵՐԿԱՅ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ
- ԺՈՂՈՎԻ ՅԱԶՈՐԴԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ
- ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ
- ԲԱՆԱԶԵԻՆԵՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
- ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
- ՓԱԿՈՒՄ ԵՐԴ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ



Պատգամատրական 6րդ Ընդհանուր Ժողովին մասնակիցներու խմբանկար – Պրումանա, Լիբանան, Ապրիլ 1995

ՆՊԳՓՎՍԿԱՅԻՆ ԿՎԵՆՆԵՐ ԳՆԻՊՓԿԻՊՈՒՄԻ ԵՂԷ ԳՎՓՎՍՈՏՈՆ

ԲԱՑՈՒՄ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ

Հ.Մ.Ը.Մ.ի վեցերորդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 11էն 17 Ապրիլ 1995ին, Լիբանանի Պրումմանա գիւղի «Le Crillon» պանդոկի ժողովասրահին մէջ: Ժողովի պաշտօնական բացումի ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» Շքանշանով պարգեւատրեց վեթերան եւ բարերար անդամներ՝ Գրիգոր Մղձաւետիքեանը եւ Ատոմ Թնճուկեանը:

Ընդհանուր ժողովի օրակարգին մաս կը կազմէին.-

- Առժամեայ դիւանի ընտրութիւն եւ լիազօրագրերու ստուգում

- Ընտրութիւն մնայուն դիւանի, յանձնախումբերու եւ աշխատանքային յանձնախումբերու

- Շրջաններու քառամեայ ամփոփ տեղեկագրերու ընթերցում

- Ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցում

- Հարցումներ եւ ըստ էութեան քննութիւն

- Աշխատանքային յանձնախումբերու զեկուցումներ

- ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներ, առաջարկներ եւ որոշումներ

- Ընտրութիւն Զ. Կեդրոնական Վարչութեան

- Փակում Զ. Ընդհանուր ժողովի:

Ա. Գիստ, 11 Ապրիլ 1995

Կեդրոնական Վարչութեան ատենապետ Տոքթ. Միսաք Արզումանեանի հրաւերով ժողովի առժամեայ դիւանի անդամներ ընտրուեցան՝ նախագահ՝ Գառնիկ Մկրտիչեան եւ քարտուղար՝ Կարպիս Շիրրտմեան: Լիազօրագրերու ստուգումէն ի յայտ եկաւ ժողովի մասնակիցներու հետեւեալ պատկերը.

Իրաւասու ձայնով պատգամաւորներ՝

- Արեւելեան Միացեալ Նահանգներ՝ Արա Թելպելեան, Յակոբ Խաչատուրեան, Մուրատ

Մանուկեան, Սարգիս Ստեփանեան եւ Վահէ Տուտազլեան

- Արեւմտեան Միացեալ Նահանգներ՝ Րաֆֆի Սարգիսեան, Վարդգէս Թուլումճեան, Մանուէլ Մարսէլեան, Ներսէս Մելքոնեան, Հայկ Յովսէփեան, Կարպիս Շիրրտմեան, Փիէռ Չրախչեան, Գօգօ Պալեան, Սիրան Պոսնոյեան եւ Ժիրայր Սարգիսեան

- Աւստրալիա՝ Սարգիս Տէր Պետրոսեան եւ Յովհաննէս Մարտոյեան

- Գանատա՝ Լեւոն Պէնկեան, Սիւզի Գալթակեան, Գրիգոր Գուլումճեան, Մոսիկ Թօփուզեան, Արմէն Կէտիկեան եւ Գէորգ Մանկէլեան

- Լիբանան՝ Անդրանիկ Պէօյիւքեան, Հայկ Աշգարեան, Մելիք Գուլայեան, Գառնիկ Մկրտիչեան, Պետրոս Շեմմեսեան, Յարութիւն Չէքիճեան, Ժագ Պոյաճեան եւ Պետիկ Սապունճեան

- Հայաստան՝ Յարութիւն Յարութիւնեան, Այտա Բախչեան, Գուրգէն Թանգեան, Ռուլանտ Շառոյեան, եւ Տիգրան Չաքմաքճեան

- Հարաւային Ամերիկա՝ Գէորգ Գարամանուկեան եւ Արմանտօ Թորգոմեան

- Յունաստան՝ Յարութիւն Մխիկեան եւ Պօղոս Չոլաքեան

- Սուրիա՝ Խորէն Գուլումճեան, Ալօ Աճէմեան, Գէորգ Գալեմքէրեան, Ալեքսան Իսկէնտէրեան, Մանօ Տէր Մանուէլեան եւ Քնար Ֆրունճեան

- Ամման՝ Գէորգ Աւագեան, Սիլվա Մենեքչէյեան

- Լոնտոն՝ Ալէք Խաչատուրեան, Անահիտ Սարգսեան եւ Ալտօ Ֆլէրի

- Միլանօ՝ Յարութիւն Պաստրմաճեան

- Փարիզ՝ Հրաչ Սիսեռեան եւ Վարանդ Պաղտասարեան

- Քուէյթ՝ Կարօ Միսիրեան եւ Ազնիւ Խաչատուրեան

- Աղեքսանդրիա՝ Տոքթ. Արմէն Գաւուքճեան եւ Վահան Գաւուքճեան

- Գահիրէ՝ Վարուժան Գազանճեան եւ Վարդան Գազանճեան:

Ի պաշտօնէ եւ հրաւիրեալ մասնակցողներ

Կեդրոնական Վարչութիւն՝ Վարուժան Սերոբեան, Յովհաննէս Տէր Յարութիւնեան, Կարօ Թիւթիւնճեան, Միհրան Շիմշիրեան, Տոքթ. Յարութիւն Գազանճեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Արա Յակոբեան, Սուրէն Նազարեան, Եղիշէ Խոստեղեան, Արթիւրօ Յովհաննէսեան, Արմէն Աղայեան եւ Համլէթ Չրախչեան:

Ի պաշտօնէ սկաուտական կեդրոնական յանձնախումբ՝ Արփի Էթիէմէզեան, «Մարզիկ» պաշտօնաթերթ՝ Ջաւէն Թորիկեան:

Հրաւիրեալներ՝ Աբրահամ Մինասեան, Թորոս Տօնիկեան, Խորէն Քիրազեան, Բիւզանդ Թորիկեան, Երուանդ Տէմիրճեան, Ատոմ Թնճուկեան, Սեյլա Թնճուկեան, Չոհրապ Անտոնեան, Յակոբ Արթինեան, Կարպիս Գապասագալեան, Մանուէլ Գարճեան, Մհեր Դաւիթ-

եան, Վարդգէս Հայրապետեան, Սիրական Աւագեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Արա Պալիոզեան, Սեդրակ Պուրսալեան եւ Հրայր Տէր Թորոսեան:

Մամուլ՝ Հրաչ Վարժապետեան եւ Լուիֆիկ Այվազեան

Հ.Յ.Դ. Բիւրօ՝ Երուանդ Մոնոֆարեան:

Մնայուն դիւան եւ յանձնախումբեր

Ժողովի մնայուն դիւանի անդամներ ընտրուեցան ատենապետներ՝ Գառնիկ Մկրտիչեան եւ Գէորգ Մանկէլեան. ատենադպիրներ՝ Կարպիս Շիրրտմեան, Մոսիկ Թոփուզեան, Լեւոն Պէնկեան եւ Մուրատ Մանուկեան:

Ժողովը ընտրեց նաեւ հաշուեքննիչ, բանաձեւի, արխիւալին, նախահաշիւի եւ քուէախոյզ յանձնախումբեր:

Յաջորդաբար կարդացուեցան Լոնտոնի, Փարիզի, Վիէննայի, Փլովտիվի, Վառնայի եւ Ռու-



Պատգամատրական 6րդ Ընդհանուր Ժողովի դիւանը

սէի մասնաճիւղերու ամփոփ տեղեկագրերը:
Նիստը փակուեցաւ երեկոյեան ժամը 10.00ին:

Բ. Նիստ 12 Ապրիլ 1995

Բ. նիստի ընթացքին ժողովը լսեց Միլանոյի, Երուսաղէմի, Եաֆայի, Գահիրէի, Ամմանի եւ Քուէյթի մասնաճիւղերու քառամեայ ամփոփ տեղեկագրերը, ապա Արեւելեան Միացեալ Նահանգներու, Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Աւստրալիոյ, Յունաստանի, Լիբանանի, Սուրիոյ, Հարաւային Ամերիկայի, Գանատայի եւ Հայաստանի Շրջաններու քառամեայ գործունէութեանց տեղեկագրերը: Եղան լուսաբանական հարցումներ, որոնց պատասխանեցին պատկան շրջաններու պատգամաւորները: Ապա կարդացուեցաւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագրերը: Լուսաբանական 39 հարցումներուն պատասխանեցին Կեդրոնական Վարչութեան անդամները:

Ճաշի դադարէ ետք ժողովը ըստ էութեան քննեց ընթացաւարտ Վարչութեան գործունէութիւնը, որուն մասին Կեդրոնական Վարչութեան ատենապետը տուաւ համապատասխան բացատրութիւններ, շնորհակալութիւն յայտնելով թեր ու դէմ եղած արտայայտութիւններուն համար:

13, 14 եւ 15 Ապրիլի Գ. Դ. եւ Ե. նիստերու ընթացքին աշխատանքային յանձնախումբերու կազմութենէն ետք, անոնք առանձնացան իրենց յատուկ նիւթերու ուսումնասիրութեան՝ մարզական, սկստական (ներքին եւ միջազգային, ՀԱՍԿ-Հայաստանի Ազգային Սկստական Կազմակերպութիւն բաժիններով), Հ.Մ.Ը.Մ.-Հայաստան, կանոնադրային, «Մարզիկ» պաշտօնաթերթ, տնտեսական, ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներ, արհեստավարժ դրութիւն եւ կազմակերպչական աշխատանքային յանձնախումբեր: Կարդացուեցան Կեդրոնական Վարչու-

թեան գործունէութեան քննութեան յատուկ հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու զեկուցումները եւ պատգամաւորներու կողմէ քուէարկուեցան:

16 Ապրիլի Զ. նիստով ժողովը լսեց աշխատանքային յանձնախումբերու ուսումնասիրած նիւթերու մասին եզրակացուած բանաձեւերը, նաեւ՝ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութեան «Գնահատելի» բնորոշումով եզրակացուած բանաձեւը, որ նոյնութեամբ քուէարկուեցաւ:

1995-1999 քառամեակի ընթացքին գործադրելի գլխաւոր որոշումներէն են.-

- Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի սկստական միաւորը Միջազգային Սկստական Կազմակերպութեան (OMMS) անդամ դարձնելու համար ոչ մէկ ճիգ խնայել: Կեդրոնական Վարչութիւնը այս աշխատանքներու ծիրին մէջ պարտի յառաջացնել Հայաստանէն ներկայացուցչական կազմ մը, ներկայացնելու Հայաստանի սկստական միաւորը յաջս՝ Սկստական Միջազգային Գրասենեակին: Այս ներկայացուցչական կազմը միութենական ներքին հասկացողութեամբ համարատու է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի սկստական միաւորի՝ OMMS ի մօտ արձանագրութեան անունը հարկ է որ արտացոլացնէ այս իրագործումին Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութիւնը, ինչպէս՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., «Բարձրացի՛ր-Բարձրաց՛ւր», Armenian National Scouts Movement/HOMENETMEN:

- Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը, գաղափարաբանութիւնը եւ ոգին ծանօթացնող գրականութիւնը մատչելի դարձնել Հայաստանէն ներս գրքոյկներու հրատարակութեամբ:

- Մասնաճիւղերու մարզական կարգ մը խումբերէն ներս կիրարկուող արհեստավարժ դրութիւնը սահմանափակուի եւ կիրարկուի միայն Կեդրոնական Վարչութեան արտօնութեամբ:

- Քաջալերել Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի պաշտօ-

նախերթ՝ «ՄԱՐԶԱՇԽԱՐՀ»-ի հրատարակու-
թիւնը՝ յատկացնելով 5000 ամ. տոլար:

Ապա տեղի ունեցաւ վեցերորդ Կեդրոնական
Վարչութեան կազմի ընտրութիւն:

Ժողովը լսեց սրտի քաջալերական խօսքեր
զանազան Շրջաններու պատգամաւորներուն
կողմէ ինչպէս նաեւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայա-
ցուցիչ՝ Երուանդ Մոնոֆարեանի պատգամը, որ
չեչտը դրաւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան կարե-
ւորութեան վրայ՝ Սփիւռքի եւ յատկապէս Մայր
Հայրենիքի տարածքին:

Քուէախոյզ յանձնախումբի աշխատանքնե-
րու աւարտին Կեդրոնական Վարչութեան ան-
դամներ ընտրուած յայտարարուեցան՝ Ժիրայր
Սարգիսեան, Հրաչ Սիսեռեան, Վարուժան Սե-
րոբեան, Կարօ Թիւթիւնճեան, Միհրան Շիմչի-
րեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Գօգօ Պալեան,
Տոքթ. Միսաք Արզումանեան, Մանուէլ Հալլաճ-
եան, Անդրանիկ Պէօյիւքեան եւ Սարգիս Ստե-
փանեան:

Ժողովը փակուեցաւ յոտնկայս երգուած
«Յառաջ Նահատակ» քայլերգով:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՎԵՑԵՐՈՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

18 Ապրիլ 1995 - 1 Ապրիլ 1999

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՆՈՐ ԸՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ
- ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի վեցերորդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը 17 Ապրիլ 1995ի նիստով իր աշխատանքներուն բաժանումը կատարեց հետեւեալ կերպով.-

Ատենապետ՝ Տոքթ. Միսաք Արզումանեան
Փոխ ատենապետ՝ Վարուժան Սերոբեան
Ատենադպիրներ՝ Կարօ Թիւթիւնճեան եւ Միհրան Շիմշիրեան

Գանձապահ՝ Անդրանիկ Պէօյիւքեան
Հաշուապահ՝ Պատրիկ Կիւլպէնկեան
Խորհրդականներ՝ Մանուէլ Հալլաճեան՝ Սուրիա, Հրաչ Սիսեռեան՝ Ֆրանսա, Ժիրայր

Սարգիսեան եւ Գօգօ Պալեան՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Սարգիս Ստեփանեան՝ Արեւելեան Միացեալ Նահանգներ:

Այս կազմը 1995-99 քառամեակի ժամանակաշրջանին գումարած է Լիբանանի մէջ՝ 115 ընթացիկ նիստեր, իսկ Լիբանանի կամ այլ Շրջաններու մէջ 4 լիազումար եւ 3 մասնակի կազմով նիստեր:

26 Մարտ 1997ին Փարիզի մէջ տեղի կ'ունենայ միջդիւանական Դ. խորհրդաժողովը, մասնակցութեամբ 14 Շրջաններու վարչութիւններու դիւաններու ներկայացուցիչներուն: Այս խորհրդաժողովի ընթացքին կը ճշդուին Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Երդ Ընդհանուր Բանակումի եւ Երդ Խաղերու վայրերն ու թուականները:



1995 - 1999 Կեդրոնական Վարչութեան կազմը: Նստած՝ Կարօ Թիւթիւնճեան, Տոքթ. Միսաք Արզումանեան, Վարուժան Սերոբեան եւ Անդրանիկ Պէօյիւքեան: Ոտքի՝ Պատրիկ Կիւլպէնկեան, Մանուէլ Հալլաճեան, Սարգիս Ստեփանեան, Հրաչ Սիսեռեան, Գօգօ Պալեան, Ժիրայր Սարգիսեան եւ Միհրան Շիմշիրեան:

Նոր Շրջաններ եւ մասնաճիւղեր

1995-1999 քառամեակին ՀՄԸՄի ընտանիքին կը միանան նոր հիմնուած հետեւեալ մասնաճիւղերը.- Ալմելօ՝ Հոլանտա, 1996ի Յունուարին. Լաս Վեկաս՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներ, 1997ին. Պաուլըիէ՝ Լիբանան, 1998ին. Պուլկարիոյ շրջաններուն մէջ կը վերընձիւղին Շումէն՝ 1997ին եւ Պուրկազ՝ 1998ին:

Գործուղումներ եւ այցելութիւններ

Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ անդամներ, Շրջանային ներկայացուցչական ժողովներու, Մեկուսի Շրջաններու անդամական Ընդհանուր ժողովներու, հիմնադրութիւններու, հիմնադրութեան ամեակներու տօնակատարութիւններու, միջշրջանային խաղերու, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ծրագրի խաղերու, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ընդհանուր Բանակումներու, միջդիւանային խորհրդատուութիւններու եւ այլ առիթներով այցելած են ընդհանուր 18ի վրայ 15 Շրջաններ եւ Մեկուսի Շրջաններ:

Մարզական

Համահայկական խաղերու ծրագրի ստեղծումէն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը մասնակցած է 20-30 Ապրիլ 1997ի Հ.Խ.Հ.Կ. (Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի) հիմնադիր ժողովին, յանձին Յարութիւն Յարութիւնեանի: 10 Մայիս 1997 թուակիր նամակով Կեդրոնական Վարչութիւնը հաղորդեց իր ներկայացուցիչներուն անունները Համահայկական խաղերը նախաձեռնող կոմիտէին յանձին Հրաչ Սիսեռեանի, Յարութիւն Յարութիւնեանի, Հրաչ Տէր Սարգիսեանի, Վարդգէս Էսկիպաչեանի, Մանուէլ Մարսէլեանի եւ Արմէն Աղայեանի: Նկատի ունենալով քաղաքներու հաւաքականներով մասնակցելու գործնական դժուարութիւնները, բացի Հ.Մ.Մ.ի եւ Հ.Բ.Ը.Մ.ի ներկայացուցիչներու հետ հանդիպումներէն, Կեդրոնական Վարչու-

թիւնը հանդիպում մը ունեցաւ Հ.Խ.Հ. Կոմիտէի նախագահ Աշոտ Մելիք Շահնազարեանի հետ, շեշտելով իր տեսակէտին վրայ, որ խաղերուն մասնակցող խումբերը իւրաքանչիւր քաղաքի մէջ գործող հայ մարզական միութիւններու հաւաքականով չպայմանաւորուին, այլ՝ անոնց միջմիութեանական գտումի խաղերէն յաղթականը ըլլայ մասնակցողը կամ իւրաքանչիւր միութիւն իր լրիւ խումբով մասնակցի, ինչ որ մերժուեցաւ Հ.Խ.Հ.Կ.ի նախագահին կողմէ: Այսուհանդերձ, Կեդրոնական Վարչութիւնը իր 18 Նոյեմբեր 1998 թուակիր թիւ 38 շրջաբերականով տեղեկացուց Շրջաններուն, որ կարելիութեանց սահմաններուն մէջ մասնակցին Համահայկական Ա. խաղերուն, Երեւանի մէջ:

Հիմնադրող ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Խաղեր
ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ծրագրի խաղերը, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան, տեղի ունեցան 31 Յուլիսէն 10 Օգոստոս 1997ին Ուաշինկթընի եւ Նիու Ճըրզիի մէջ, վոլիպոլի եւ պասքեթպոլի մրցաշարքերով: Խաղերուն մասնակցեցան Հարաւային Ամերիկայի, Ֆրանսայի, Աւստրալիոյ, Լոնտոնի, Լիբանանի, Յունաստանի, Գանատայի, Արեւմտեան եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջաններու տղոց եւ աղջկանց ներկայացուցչական խումբերը: Խաղերը հովանաւորեցին Տէր եւ Տիկին Օհան Օհանեաններ: Խաղերու բացման հանդիսութիւնը եւ առաջին հանգրուանի մրցումները տեղի ունեցան Ուաշինկթընի մէջ, իսկ Բ. հանգրուանի մրցումներն ու փակման հանդիսութիւնը Նիւ Ճըրջիի մէջ:

Այս առթիւ Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլինթըն հետեւեալ ողջոյնի նամակը յղեց Հ.Մ.Ը.Մ.ին.

«Հ.Մ.Ը.Մ.ի համաշխարհային Ծրագրի մարզախաղերուն մասնակից մարզիկներուն, մարզիչպատասխանատուներուն եւ այս առիթով մէկտեղուած մարզասէր հանրութեան,

«Մարգական մրցակցութիւնը կրնայ մեզ մղել դրսևորելու մեր լաւագոյնը: Երբ մարգախաղ մը կը կիրարկենք եւ կը ճգնինք զարգացրնել մեր ձիրքերը, ի յայտ կու գան թաքուն կարողութիւններ եւ տաղանդ, մենք կը յայտնաբերենք մեր ներքին իրական կարողականութիւնը: Երբ, վերջապէս, մեր մարզումները կը տանին փորձադաշտ, կը հանդիպինք նուիրեալ անձերու, որոնք կը բաժնեն ազնի մրցակցութեան մեր խանդավառ ոգին: Ձերինին նման մրցաշարքերը հոգետոչոր առիթ կ'ընձեռեն զօրացրնելու մեր հաւատքը մեր մասին եւ խմբային աշխատանքի արժէքին մեր հասկացողութիւնը:


«Կ'ողջունեմ իւրաքանչիւրդ, ձեր կորովին եւ խանդավառութեան համար, եւ բոլորիդ կը յղեմ հոգեւորոգ մրցաշարք մը ունենալու լաւագոյն մաղթանքներ»:

Վոլիպոլի եւ պասքեթպոլի մրցաշարքերու ախոյեանութիւնները խլեցին Արեւմտեան Միացեալ Նահանգներու տղոց եւ աղջկանց կազմերը:

Խաղերուն առընթեր տեղի ունեցան պաշտօնական այցելութիւններ, ճաշկերոյթներ եւ պարահանդէսներ — [Ծ/182-6 եւ 29]:

Սկառուտական

«Հայրենիքին հետ, Հայրենիքին համար» կարգախօսով, ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Երդ Ընդհանուր Բանակումը տեղի ունեցաւ 12-21 Յուլիս 1998 ժամանակամիջոցին, Հայաստանի Աղաւնաձոր շրջանին մէջ, մասնակցութեամբ 18 Շրջաններ ներկայացնող 715 սկառուտներու: Այս առթիւ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակին նուիրուած շքերթ՝ Երեւանի «Ազատութեան» հրապարակին վրայ եւ պաշտօնական հանդիսութիւն՝ օփերայի սրահին մէջ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ նախագահ Ռոպէրթ Քոչարեանի: Այս առթիւ տեղի ունեցան պաշտօնական այցելութիւններ — [Ծ/193-194 լրիւ]:



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Երդ ընդհանուր բանակումի խորհրդանիշ վահանը

ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Գ. համագումար

14էն 23 Դեկտեմբեր 1996ին Սիտնիի Պէյտըն Փաուըլ բանակավայրին մէջ, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ գործակցութեամբ Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական Գ. համագումարը, մասնակցութեամբ Շրջաններու 24 խմբապետ-խմբապետուհիներու: Սկառուտական ընդհանուր կանոնագրի եւ գիտելիքներու գրքոյկներու ծրագրումներով եւ դասախօսութիւններու շարքով իրականացած այս համագումարին հետեւեցան պաշտօնական եւ միութենական այցելութիւններ եւ Շրջանի միջմասնաճիւղային Նաւասարդեան Խաղերը: - [Ծ/175.3]:

Կեդրոնական Վարչութիւնը այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» Շքանշանով պարգեւատրեց Աւստրալիոյ վեթերան անդամներ՝ Արթուր Աղամալեանը եւ Զաւէն Բրուտեանը:

ՀԱՍԿի մասնակցութիւնը Համաշխարհային Սկառուտական Շարժումին, համաձայն Երդ Պատգամաւորական Ընդհ. ժողովի որոշման, հիմնուելով ՀԱՍԿի վերամշակուած կանոնագրութեան՝ Հ. Ս. Շարժումի Գրասենեակին կողմէ ընդունման վրայ, նաեւ Հայաստանի մէջ կայացած Ա.Պ.Հ.ի (Անկախ Պետութիւններու



ՀամաՀ.Մ.Ը.Մա.կան 6րդ Ընդհանուր Բանակումի խմբապետական կազմէն անդամներ, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական պատուիրակութեան հետ- Աղանաձոր, 1998



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական սկաուտական Գ. համագումարին մասնակիցներու խմբանկար - Սիտնի, 1996

Հասարակապետութիւն) երկիրներու անդրա-
նիկ բանակումին առիթով, Հայ Արիւններու կազ-
մակերպութեան ղեկավարութեան կողմէ եղած
զիջումին՝ ըստ որում, Հայ Արիւնները կը դադրեցը-
նէին իրենց գործունէութիւնը եւ հայ սկաու-
տութեան ջահը կը փոխանցէին ՀԱՍԿին:
Միաժամանակ, Հ.Ս.Շարժումի Գրասենեակը
վաւերացուց ՀԱՍԿի անդամակցութիւնը Հա-
մաշխարհային Սկաուտական Շարժումին: Այս
ձեւով Հ.Ս.Ը.Մ.ը իր իրաւատիրոջ՝ ՀԱՍԿին փո-
խանցեց ազգային աւանդ մը (Տե՛ս Աերկայ հա-
տորի Դ. Մասի 4րդ գլուխի այս բաժինը):

Հրատարակչական

Խմբագրութեամբ Կարպիս Գապասագալեա-
նի, Լուսին Գազէգեանի եւ Գառնիկ Թորիկեա-
նի, Կեդրոնական Վարչութիւնը լոյս ընծայեց
սկաուտական գիտելիքներու գիրքերու շարքի

առաջին երեքը՝ «Կակուղ թաթիկ», «Նորագիր»
եւ «Նորընծայ»:

«ՄԱՐԶԻԿ» Պաշտօնաթերթ

Յունուար 1995ի դադրեցումէն ետք, Յունի-
սին, Կեդրոնական Վարչութիւնը «Մարզիկ»ի
խմբագրութեան պաշտօնին հրաւիրեց Վիգէն
Աւագեանը, որուն օժանդակեցին սիրայօժար եւ
վճարովի աշխատակիցներ եւ մինչեւ 1999ի
Մարտ ամիսը «Մարզիկ» լոյս տեսաւ 45 թիւե-
րով:

Նիւթական

Հ.Ս.Ը.Մ.ի վեցերորդ Կեդրոնական Վարչու-
թեան 1995-1999 քառամեակի նիւթական գոր-
ծառնութեան պատկերն է՝ մոտաք՝ 369,000 ամ-
տոլար, ելք՝ 360,000 ամ. տոլար:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

31 Մարտ - 5 Ապրիլ 1999

- ՀՐԱԻԷՐ ԵՒ ՕՐԱԿԱՐԳ
- ՆԵՐԿԱՅ ԸՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐ
- ԲԱՑՈՒՄ ԵՒ ԱՌԺԱՄԵԱՅ ԴԻԻԱՆ
- ՄՆԱՅՈՒՆ ԴԻԻԱՆ ԵՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ
- ԸՐՋԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆՑ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻԻՆՆԵՐ
- ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ
- ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
- ԸՆՏՐՈՒԹԻԻՆ 7ՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
- ՓԱԿՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ



Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգմատրական Ընդհանուր Ժողովի մասնակիցներու խմբանկար - Լիբանան, Ապրիլ 1999

Համաձայն Կեղրոնական Վարչութեան 11 Յունուար 1999 թուականի թիվ 39 շրջաբերականի հրաւերին, Հ.Մ.Ը.Մ.Ի եօթներորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին բացումը տեղի ունեցաւ 31 Մարտ 1999ին, Լիբանան, Ատմա գիւղի Սէյտէթ Ըլ Ժապալ վանական համալիրի ժողովասրահին մէջ, հետեւեալ օրակարգով.-

- Ժողովի բացում, առժամեայ դիւանի ընտրութիւն

- Մնայուն դիւանի եւ յանձնախումբերու ընտրութիւն

- Շրջաններու քառամեայ ամփոփ տեղեկագրերու ընթերցում

- Ընթացաւարտ Կեղրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցում եւ քննարկում

- Յանձնախումբերու զեկուցումներ

- ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկներ

- Առաջարկներ եւ որոշումներ

- Եօթներորդ Կեղրոնական Վարչութեան ընտրութիւն

- Փակում 7րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի:

Ժողովին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 31 Մարտ 1999ի կէսօրէ ետք ժամը 5ին, ներկայութեամբ Լիբանանի հայոց թեմի Առաջնորդ Գեղամ Եպիսկոպոս Խաչերեանի, Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեանի եւ ազգային եւ միութենական կազմերու ներկայացուցիչներուն – [Ծ/202.9]: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.Ի «Արտակարգ» Պատուանշանով պարգեւատրուեցան Տոբթ. Սուրէն Պայրամեան, Խորէն Քիրազեան եւ Վարդիվառ Յովհաննէսեան:

Ա եւ Բ. նիստեր, 31 Մարտ 1999

Ժողովը լիազօրագրերու ստուգման եւ ժողո-



7րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի դիւանը



Պատգամատրական 7րդ Ընդհանուր Ժողովի մասնակիցները կ'այցելեն Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին- Անթիլիաս Ապրիլ 1999

վի օրինականութիւնը հաստատելու համար ընտրեց առժամեայ դիւան. ատենապետ՝ Գէորգ Մանկէլեան, ատենադպիր՝ Մարալ Տիքպիքեան:

Ստուգումէն ի յայտ եկաւ, որ 56 լիազօր պատգամաւորներ եւ 28 խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ, ինչպէս նաեւ 24ի վրայ 15 Շրջաններ ներկայ էին ժողովասրահ, հետեւաբար ժողովը օրինաւոր համարուեցաւ:

Բ. նիստով ընտրուեցաւ ժողովի մնայուն դիւանը՝ ատենապետներ՝ Գէորգ Մանկէլեան եւ Գառնիկ Մկրտիչեան, ատենադպիրներ՝ Մարալ Տիքպիքեան, Մարօ Քէչիչեան, Յակոբ Խաչատուրեան եւ Տոքթ. Մանուէլ Իսկէնտէրեան:

Ընտրուեցան նաեւ հաշուեքննիչ, բանաձեւի, արխիւային, նախահաշիւի եւ քուէախոյզ յանձնախումբեր: Որոշուեցաւ որ իւրաքանչիւր ժողովական արձանագրուի աշխատանքային հե-

տեւալ յանձնախումբերէն մէկուն մէջ.- մարզական, սկստական, կանոնադրային, տնտեսական, կազմակերպչական, դաստիարակչական եւ «Մարզիկ» պաշտօնաթերթ:

Գ. եւ Դ. նիստեր, 1 Ապրիլ 1999

Գ. Նիստի ընթացքին յաջորդաբար կարդացւեցան Արեւելեան Միացեալ Նահանգներու, Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Աւստրալիոյ, Գանատայի, Յունաստանի, Սուրիոյ, Լիբանանի, Հայաստանի, Անգլիոյ, Ֆրանսայի, Պուլկարիոյ, Գահիրէի, Աղեքսանդրիոյ, Քուէյթի, Հոլանտայի եւ Հայֆայի տեղեկագրերը, որոնց մասին եղած լուսաբանական հարցումներուն պատասխանեցին համապատասխան շրջաններուն ներկայացուցիչները:

Դ. նիստի ընթացքին կարդացուեցաւ ընթա-

ցաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան բարոյական տեղեկագիրը: Լուսաբանական հարցումներուն պատասխանեցին Կեդրոնական Վարչութեան անդամներ, ապա ժողովականները ըստ էութեան քննեցին ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը, որուն մասին կարգ մը բացատրութիւններէ ետք՝ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տոքթ. Միսաք Արզումանեան շնորհակալութիւն յայտնեց ժողովին:

Ե. եւ Զ. նիստեր, 2 Ապրիլ 1999

Ե. նիստի ընթացքին ճշդուեցան սկստական, կանոնադրային, մարզական, տնտեսական, աշխատանքային յանձնախումբերու անդամներուն ցանկերը եւ անոնք անցան իրենց յատուկ աշխատանքներուն:

Զ. նիստի ընթացքին քննուեցան սկստական կանոնագրի, համաՀ.Մ.Ը.Մ.ական Ընդհ. Բանակումի, ծրագիր-կանոնագրի, դաստիարակչական, մարզական (համաՀ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու, համաՀայկական Ա. խաղերու մասնակցութեան եւ արհեստավարժութեան) հարցերը՝ մշակուած աշխատանքային յանձնախումբերու կողմէ եւ առնուեցան որոշումներ: Ժողովը վաւերացուց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» Պատուանշանի Կեդրոնական Վարչութեան մշակած կանոնագրութիւնը:

Ե. նիստ, 3 Ապրիլ 1999

Ժողովը շարունակեց քննել տնտեսական, կազմակերպչական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, դաստիարակչական եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ աշխատանքային յանձնախումբերու կողմէ ուսումնասիրուած եւ առաջարկներու յանգած բանաձեւերը:

Կիրակի 4 Ապրիլը՝ դադար, յատկացուեցաւ այցելութիւններու:

Թ. նիստ, 5 Ապրիլ 1999

Առաւօտեան, այս նիստի ընթացքին լսուեցան առաջարկներ համաՀ.Մ.Ը.Մ.ական ձեռ-

նարկներու եւ հաշուեքննութեան մասին, ինչպէս նաեւ՝ արխիւային, հաշուեքննիչ եւ բանաձեւի յանձնախումբերու զեկուցումները: Ժողովը Կեդրոնական Վարչութեան 1995-1999 քառամեակի գործունէութիւնը նկատեց «Գնահատելի»: Ապա վաւերացուեցաւ նախահաշիւի յանձնախումբին ներկայացուցած առաջարկը, որ կը հաւասարակշռուի 208.000 ամ. տոլարով:

Որոշումներ

- ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումը կայացնել Հայաստանի մէջ
- Սկստական գիտելիքներու գիրքերու շարքի հրատարակութիւնը ամբողջացնել
- Կանոնադրային քուէարկուած յօդուածներու բարեփոխումները հրատարակել Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի նոր հրատարակութեամբ
- Մարզական խումբերու անդամները արհեստավարժ դրութեամբ վարձատրելու մասին նախորդ Ընդհ. Ժողովին որոշումը վերահաստատել
- Հաստատել Հ.Մ.Ը.Մ.ի քաջալեր անդամի դրութիւն՝ տարեկան 250 ամ. տոլարի վճարումով:

Ժ. նիստ, 5 Ապրիլ 1999

Երեկոյեան, ժողովը լսեց պատգամաւորներու կողմէ զանազան հարցերու մասին տեսակէտներ՝ յանձնելի յառաջիկայ Կեդրոնական Վարչութեան ուղադրութեան: Ապա տեղի ունեցաւ նոր Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն: Քուէախոյզ յանձնախումբի աշխատանքներու աւարտին ընտրուած յայտարարուեցան ժիրայր Սարգիսեան, Հրաչ Սիսեռեան, Մուրատ Մանուկեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Գառնիկ Մկրտիչեան, Մանուէլ Հալլաճեան, Գօգօ Պալեան, Աբրահամ Ահարոնեան, Պետիկ Սապունճեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Բիւզանդ Թորիկեան, Յարութ Զէքիճեան եւ Հրաչ Տէր Սարգիսեան:

Ժողովը լսեց սրտի խօսքեր՝ արտայայտուած կարգ մը պատգամաւորներու կողմէ, ապա փակումը կատարուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերգի խմբերգումով:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ապրիլ 1999 - Ապրիլ 2003

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՆՈՐ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ, ՀԱՄԱՀ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ
7ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄ
- ՄԱՐԶԱԿԱՆ, ՀԱՄԱՀ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 6ՐԴ ԽԱՂԵՐ
- ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
- ԹԱՆԳԱՐԱՆ - ՀԱՄԱՑԱՆՑ



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ խաղեր.

1. 6րդ խաղերու վահանը - 2. Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի վեթերաններու խումբը- 3. Ֆութպոլի մրցաշարքի ակոյեան Սուրիոյ ներկայացուցչական խումբը- 4. Փինկիոնկի մրցաշարքի ակոյեան Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները- 5. Կեդրոնական վարչութեան անդամները կապուցելէն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին- 6. Խաղերու բարի գալուստի ճօճուն պաստաղը - 7. Աթլէթներ Ռիթա եւ Մարիա Գեորգեաններ՝ Լիբանան, Ազնի Գույումճեան՝ Սուրիա



Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Կեդրոնական Վարչութեան խմբանկար. Աբրահամ Ահարոնեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Մանուէլ Հալլաճեան, Ժիրայր Սարգիսեան, Գառնիկ Մկրտիչեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Պետիկ Սապունճեան, Գօգօ Պալեան, Բիւզանդ Թորիկեան: Բացականեր՝ Հրաչ Սիսեռեան, Մուրատ Մանուկեան, Սարգիս Տէր Պետրոսեան եւ Յարութ Չէքիճեան

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 7րդ Ընդհանուր Ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը իր առաջին նիստով կատարեց աշխատանքներու բաժանում՝ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Բիւզանդ Թորիկեան
- Փոխ ատենապետ՝ Ժիրայր Սարգիսեան
- Ատենադպիր՝ Յարուկ Չէքիճեան
- Գանձապահ՝ Ստեփան Տէր Պետրոսեան
- Խորհրդականներ՝ Պետիկ Սապունճեան,

Գառնիկ Մկրտիչեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Աբրահամ Ահարոնեան, Գօգօ Պալեան, Հրաչ Սիսեռեան, Մանուէլ Հալլաճեան եւ Մուրատ Մանուկեան:

Այս կազմը 1999-2003 քառամեակի ընթացքին գումարած է 164 հերթական նիստեր, 3 լիազուցմար նիստեր, Երեւան՝ 27-31 Օգոստոս 1999ին, Պէյրուկ՝ 10 եւ 17 Օգոստոս 2001ին, Երեւան՝ 2-3 Յունիս 2003ին, եւ ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական միջդիւանային Ե. խորհրդաժողով, 13-15 Օգոստոս 2001ին՝ Պէյրուկ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

1999-2003 քառամեակի ընթացքին, Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու, մասնաճիւղերու հիմնադրութիւններու, հիմնադրութեանց ամեակներու կամ այլ տօնակատարութիւններու առիթներով, Կեդրոնական Վարչութեան անդամներ այցելած են գրեթէ բոլոր Շրջաններն ու Մեկուսի Շրջանները՝ Արեւմտեան Մ. Նահանգներ, Գանատա, Արեւելեան Մ. Նահանգներ, Հարաւային Ամերիկա՝ Արժանթին եւ Ուրուկուէյ, Ֆրանսա, Հոլանտա, Լոնտոն, Վիէննա, Պոլկարիա, Յունաստան, Սուրիա, Լիբանան, Եգիպտոս՝ Գահիրէ եւ Ադեքսանդրիա, Ամման, Կիպրոս, Աւստրալիա եւ Հայաստան:

ՆՈՐ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԾԻՂԵՐ

1999-2003 քառամեակի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի

ընտանիքին կը միանան Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի հետեւեալ նորակազմ մասնաճիւղերը.- Ուոլնաթ Քրիք (2000ին) եւ Տենվէր Գոլորատո (2002ին), կը վերակազմուի Պոլկարիոյ Տոպրիչի մասնաճիւղը (1999ին): 27 Ապրիլ 2002ին Պոլկարիոյ մասնաճիւղերու անդրանիկ ներկայացուցչական ժողովով կը կազմակերպուի Պոլկարիոյ Շրջանային կառույցը:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

26 Յուլիսէն 5 Օգոստոս 2002ին, Բիւրականի Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՄԿԻ սկառուտական բանակավայրին մէջ կայացաւ ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ Ընդհանուր Բանակումը, մասնակցութեամբ 17 Շրջաններու 541 սկառուտներուն: Այս առթիւ բանակավայրը այցելեցին Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝ Ռոպէրթ Քոչարեան, եւ Համաշխարհային Սկառուտական Շարժումի



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ ընդհանուր Բանակումի դրօշակները



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ճրդ խաղերուն մասնակից Լիբանանի, Սուրիոյ, Գանատայի, Արժանթինի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Երջաններու աթլէթներ եւ պատասխանատուներ

ընդհանուր քարտուղար՝ Ժագ Մորէոն: Բանակումի յայտագրին մաս կազմեց Արագածի գագաթ մագլցում: 150 Հ.Մ.Ը.Մ.ականներ նուաճեցին Արագածի գագաթը եւ զետեղեցին Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակները եւ յուշատախտակներ – [Ծ/242 լրիւ]:

Համաձայն Դրդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումին, Կեդրոնական Վարչութիւնը ճշդեց եւ թիւ 45 յատուկ շրջաբերականով Երջաններուն տեղեկացուց սկաուտական Արարատեան կարգի ստացման պայմանները:

ՄԱՐԶԱԿԱՆ

11-16 Օգոստոս 2001ին, հովանաւորութեամբ Լիբանանի Հանրապետութեան նախագահ Զօ-

րավար Էմիլ Լահուտի եւ մասնակցութեամբ 11 Երջաններու աւելի քան 300 մարզիկ մարզիկուհիներու, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Լիբանանի Երջանային Վարչութեան օժանդակութեամբ իրականացան ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ճրդ խաղերը: Խաղերու յայտագրին մաս կազմեցին Ֆուլթոլ, աթլէթիզմ եւ փինկփոնկ: Ֆուլթոլի մրցաշարքին մասնակցեցան հետեւեալ Երջաններու ներկայացուցչական խումբերը.- Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Արեւելեան Միացեալ Նահանգներ, Հարաւային Ամերիկա, Գանատա, Սուրիա, Լիբանան, Լոնտոն, Փարիզ, Բուէյթ եւ Կիպրոս: Փինկփոնկի մրցաշարքին մասնակցեցան Գանատա, Սուրիա, Լիբանան եւ Իրաք: Աթլէթիզմի մրցումներուն մասնակցեցան Արեւելեան Միացեալ Նահանգներէն, Գանատայէն, Սուրիայէն,



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ խաղերու
վահագնը - Լիբանան, 2001

Հարաւային Ամերիկայէն եւ Լիբանանէն 56 երկ-
սեռ մարզիկներ:

Խաղերու նախապատրաստական եւ կազմա-
կերպչական բաժնին իրականացման համար զօ-
րակոչի ենթարկուեցան աւելի քան 700 ան-դամ-
ներ, որոնք գործեցին հետեւեալ յանձնախում-
բերու ընդմէջէն. - պատուիրակութիւններու ըն-
դունելութիւն, փոխադրու-
թիւն, կեցութիւն, տեսարժան
վայրերու այցելութիւն, բաց-
ման եւ փակման հանդիսու-
թիւն, Ֆուտպոլ, փինկփոնկ,
աթլէթիզմ, տնտեսական,
լրատուական, դաշտերու
հսկողութեան, յաղթանակի
պարահանդէսի եւ փրոթոքո-
լի - [Ծ/231 թիւը լրիւ]:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ԽԱՂԵՐ

1999-2003 քառամեակի ըն-

թացքին կեդրոնական վարչութիւնը մնայուն
կապի մէջ եղաւ Համահայկական Խաղերու Հա-
մաշխարհային Կոմիտէին հետ: Նախապէս ար-
դէն իր կազմէն Հրաչ Սիսեռեան մասնակցած
էր Համահայկական խաղերու հիմնադիր ժողով-
ներուն:

Համահայկական Ա. Խաղերը տեղի ունեցան
28 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 1999ին, Երեւանի
մէջ: Սփիւռքէն եւ Հայրենիքէն 62 քաղաքներէ
խաղերուն մասնակցող մարզիկներու ընդհա-
նուր թիւ 1141ի վրայ 599ը Հ.Մ.Ը.Մ.ականներ
էին:


2001ին, Համահայկական Բ. խաղերուն
մասնակցող Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց
խումբէն աթլէթ՝ Ռոզիկ Չոպանեան 100 մ.
վազքի 3րդ դիրքին կ'արժանանայ, իսկ Ռիթա
Գէորգեան գունդի արձակման մրցումին
երկրորդ կը հանդիսանայ, 10.70 մ.
արձակումով:

Իսկ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.ի աթլէթներէն
Ջաւէն Դաւիթեան 100 մ. վազքի ախոյեան
հանդիսացաւ 10" 5/10 ժամանակով:

5-7 Մայիս 2000ին Փարիզի մէջ կայացած
Հ.Խ.Հ.Կ.ի նստաշրջանին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնա-
կան վարչութիւնը իր ներկայացուցիչներուն
միջոցաւ առաջարկեց խաղերու հիմնական կա-
նոնագրութեան, մասնակ-
ցութեան պայմաններու,
հերթականութեան, գոր-
ծադրութեան եւ վարչական
այլ հարցերու կապակցա-
բար բարեփոխումներ կա-
տարել:

Համահայկական Բ. Խա-
ղերը տեղի ունեցան 18էն 26
Օգոստոս 2001ին, Երեւանի
մէջ: Մեծ թիւով
Հ.Մ.Ը.Մ.ականներ կրկին
մասնակցեցան այս խաղե-
րուն՝ Սփիւռքի զանազան
քաղաքներու հաւաքական-
ներուն միանալով կամ ան-





Համահայկական Ա. խաղերու 100 մ. վազքի ախոյեան, Հ.Մ.Ը.Մ.ական Զաւէն Դաւիթեան

Ջատ խումբերով:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, յետ մանրամասն ուսումնասիրութեան, Հ.Խ.Հ.Կ.ի 16-17 Նոյեմբեր 2002ի նստաշրջանին, ներկայացուց Խաղերու կանոնադրութեան իր առաջարկած բարեփոխումները, որոնք ընդունուեցան ժողովին կողմէ եւ որոնց իբր հետեւանք՝ Համահայկական Խաղերը դարձան Հայաստանի նախաձեռնութիւն, գլխաւորութեամբ Հայաստանի արտաքին գործոց նախարարին (փոխան՝ նախապէս իբրեւ գանատական նախաձեռնութիւն, արտօնուած՝ Միջազգային Ողիմպիական Կոմիտէին կողմէ): Հ.Խ.Հ.Կ.ի նոր կազմի անդամներ ընտրուեցան իր կազմէն՝ Ստեփան Տէր Պետրոսեան՝ փոխ նախագահ, իսկ Յարութ Զէքիճեան եւ Հրաչ Տէր Սարգիսեան Համահայկական Խաղերու Համաշխարհային Բիւրոյի անդամներ:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

1999-2003 քառամեակին Կեդրոնական Վարչ-

չութեան հրատարակչական իրականացումները եղան՝ սկսած սկստական «Միաստղ»ի, «Երկաստղ»ի, «Բ. կարգ»ի եւ «Ա. կարգ»ի գիտելիքներու գիրքերու հրատարակութիւնները, Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական ուղեցոյցի պատրաստութիւնը, Ընդհանուր, Սկստական եւ Ընդհանուր Բանակումներու կանոնադրութիւններու միացեալ մէկ գրքոյկի մէջ հրատարակութիւնը եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի անխափան հրատարակութիւնը, ամսական հերթականութեամբ, բարեփոխուած բովանդակութեամբ եւ ամբողջութեամբ գունաւոր տպագրութեամբ: Յատուկ վարչական եւ խմբագրական մարմին-



Հ.Մ.Ը.Մ.ի «Վարդգէս Տէր Կարապետեան» կեդրոնական թանգարան կ'այցելէ Լիբանանի Կեդրոնական դրամատան փոխ կառավարիչ՝ Հ.Մ.Ը.Մ.ական Ալէն Պալեան՝ ձախին

ներ այս աշխատանքը իրականացուցին գլխաւորութեամբ «Մարզիկ»ի մօտ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Պետիկ Սապունճեանի:

ԹԱՆԳԱՐԱՆ

Քառամեակի ընթացքին թուագրուեցան եւ

նկարագրութեամբ արձանագրուեցան Հ.Մ.Ը.-
Մ.ի «Վարդգէս Տէր Կարապետեան» թանգարա-
նին աւելի քան 800 իրերը, մետալներ, բաժակ-
ներ, դրօշակներ, յուշանուէրներ, նկարներ,
օրացոյցներ, վկայականներ, կնիքներ, դրոշմա-
թուղթեր, անդամատետրեր, անցեալի եւ ներկա-
յի հրատարակութիւններու նմոյշներ, տարագ-
ներ, Հ.Մ.Ը.Մ.ականներու անհատական գոյքեր,

պատմական նամակներ վկայութիւններ
եւայլն:

ՅԱՄԱՑԱՆՑ

Կեդրոնական վարչութիւնը 2001ի Յունիսէն
սկսեալ հաստատեց իր համացանցը՝ www.homenetmencentral.com հասցէով:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

4 - 7 Յունիս 2003

- ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
- ՕՐԱԿԱՐԳ
- ԱՌԺԱՄԵԱՅ ԴԻԻԱՆ, ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ
- ՄՆԱՅՈՒՆ ԴԻԻԱՆ, ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ
- ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ
- ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
- ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ
- ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
- ՓԱԿՈՒՄ



Հ.Մ.Ը.Մ.ի Ցրդ Պատգամատրական Ընդհանուր Ժողովի խմբանկար- Ծաղկաձոր, 4-7 Յունիս 2003

Հ.Մ.Ը.Մ.ի ութերորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ 4էն 7 Յունիս 2003ին, Ծաղկաձորի (Հայաստան) Գրողներու Միութեան Հանգստեան Տան մէջ:

4 Յունիսի ժամը 15ին, Երեւանի «Արմենիա» պանդոկի «Տիգրան Մեծ» սրահին մէջ տեղի ունեցաւ Ընդհանուր Ժողովի պաշտօնական բացումը, որուն ընթացքին յաջորդաբար խօսքեր առին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Բիւզանդ Թորիկեան, Հայաստանի Հանրապետութեան նախագահի խորհրդական՝ Ռազմիկ Դաւոյեան, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Արշակ Ծայրագոյն վարդապետ Խաչատուրեան եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ՝ Հրանդ Մարգարեան: Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի ողջոյնի խօսքը կարդաց Գառնիկ Մկրտիչեան – [Ծ/251-252.3]:

Կեդրոնական Վարչութեան կողմէ ճշդուած Պատգամաւորական Ժողովի օրակարգերն էին.-

- Ժողովի բացում, առժամեայ դիւանի ընտրութիւն
- Ներկաներու եւ լիազօրագրերու ստուգում
- Ժողովի մնայուն դիւանի ընտրութիւն
- Ընտրութիւն հաշուեքննիչ, բանաձեւի, արխիւային, նախահաշիւի եւ քուէախոյզ յանձնախումբերու
- Ընտրութիւն աշխատանքային յանձնախումբերու (մարզական, տնտեսական, «Մարզիկ» պաշտօնաթերթ, կազմակերպչական, կանոնադրային, սկաուտական)
- Ընթերցում Շրջաններու քառամեայ գործունէութիւններու տեղեկագրերու
- Ընթերցում Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան տեղեկագրի
- Լուսաբանական հարցումներ եւ ըստ էութեան քննութիւն Կեդրոնական Վարչութեան գործունէութեան
- Աշխատանքային յանձնախումբերու զեկուցումներ եւ որոշումներ
- Ժողովական յանձնախումբերու զեկուցումներ

- Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն
- Փակում:

Ա. Նիստ, 4 Յունիս 2003

Պատգամաւորական Ը. Ընդհանուր Ժողովի բացման խօսքը արտասանեց Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Բիւզանդ Թորիկեան, որուն բարի գալուստի եւ յաջողութեան մաղթանքներուն յաջորդեց Հ.Յ.Դ.ի Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի թելադրիչ եւ յաջողութեան մաղթանքի խօսքը:

Ապա առժամեայ դիւանի անդամներ ընտրուեցան ատենապետ՝ Մհեր Դաւիթեան, ատենադպիր՝ Յակոբ Խաչատուրեան: Լիազօրագրերու ստուգումէն ի յայտ եղաւ, որ ներկայ են 51ի վրայ 46 լիազօր պատգամաւորներ եւ 23ի վրայ 15 Շրջաններ: Հետեւաբար ժողովը օրինաւոր համարուեցաւ:

Ժողովի մնայուն դիւանի անդամներ ընտրուեցան, ատենապետներ՝ Մհեր Դաւիթեան եւ Մոսիկ Թոփուզեան, ատենադպիրներ՝ Յակոբ Խաչատուրեան, Արա Քէօհնէլեան, Քնար Ֆրոնտեան եւ Աստղիկ Փանոսեան:

Կատարուեցաւ Ժողովի հաշուեքննիչ, նախահաշիւի, արխիւային, բանաձեւի եւ քուէախոյզ յանձնախումբերու ընտրութիւն եւ առաջին նիստը փակուեցաւ:

Բ. նիստ, 5 Յունիս 2003

Ա. նիստի ատենագրութեան վաւերացումէն ետք կազմուեցան հետեւեալ աշխատանքային յանձնախումբերը.-

Սկաուտական, Մարզական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, տնտեսական, կանոնադրային եւ կազմակերպչական: Ապա յաջորդաբար կարգացուեցան Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿի, Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Արեւելեան Միացեալ Նահանգներու, Գանատայի, Հարաւային Ամերիկայի, Աւստրալիոյ, Լիբանանի, Սուրիոյ, Լոնտոնի, Ամմանի, Քուէյթի, Գահիրէի Շրջաններու քառամեայ (1999-2003) տարեշրջաններու ամփոփ տեղեկագրերը: Շրջաններու ներկայա-

ՊԱՏԳԱՄԱՌՈՐԱԿԱՆ Ը. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
4 - 8 ՅՈՒՆԻՍ 2003

ԻՐԱՒԱՍՈՒ ԶԱՅՆՈՎ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Եղբ. Բիզանդ Թորիկեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ԸՐՁԱՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ Մ. ՆԱՀԱՆ ԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ
ԸՐՁԱՆ

- Զոյր Աստղիկ Փանոսեան
- Զոյր Մարո Քչիչեան
- Եղբ. Գօգո Սկրեան
- Եղբ. Միեր Դափթեան
- Եղբ. Մանուկ Մարտիչեան
- Եղբ. Համլեթ Զրախեան
- Եղբ. Ներսես Սեյրանեան
- Եղբ. Կարո Իսրեյան
- Եղբ. Սազո Կարապետեան
- Զոյր Զապել Հիմոյեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄԵՐԻԿԱՅԻ Մ. ՆԱՀԱՆ ԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ
ԸՐՁԱՆ

- Եղբ. Վահրամ Դանիելեան
- Եղբ. Յակոբ Խաչատրեան
- Եղբ. Յովիկ Արզաբեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՆԱՍԱԿՅԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Տիրան Շահինեան
- Եղբ. Բարսեղ Կարապետեան
- Եղբ. Սեդրակ Պարսպեան
- Եղբ. Վրեժ Սեյրանեան
- Եղբ. Գեորգ Յակոբեան
- Եղբ. Մոսիկ Թովմազեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱՄԱՅԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Արմանո Թարգոմեան
- Եղբ. Յակոբ Թապաբեան
- Եղբ. Էդուարդ Գարամանուկեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍՏՐԱԼՈՅ ԸՐՁԱՆ

- Եղբ. Յովհաննես Մարտոյեան
- Եղբ. Պետրոս Արմենեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԻԱՍՏՆԻԱ ԸՐՁԱՆ

- Եղբ. Ազարիկ Եղղանեան

Հ.Մ.Ը.Մ.Ի Հ.Ա.Ս.Կ.

- Եղբ. Սեդրեք Տեր Պողոսեան
- Եղբ. Հրաչ Շմառեան
- Եղբ. Արամ Ֆրանկեան
- Եղբ. Յարութիւն Յարութիւնեան
- Եղբ. Բազրատ Եսայեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԵՐԱՆԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Պետրոս Շեմսեան
- Եղբ. Մարգրիտ Կիրակոսեան
- Եղբ. Ներսես Մուկանեան
- Եղբ. Ֆեռիկ Խաչատրեան
- Եղբ. Լուսինե Գալստեան
- Եղբ. Կարո Մելիքեան
- Եղբ. Շեքի Արեւեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՆԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Զարեհ Ժամբեան
- Եղբ. Անու Սեմեան
- Եղբ. Վիգեն Կարաբեան
- Եղբ. Գեորգ Կարապետեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԿՈՒՍԻ ԸՐՁԱՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՏՐԸՆՆՈՒ ՄԵԿՈՒՍԻ ԸՐՁԱՆ
Եղբ. Սեւան Նազարեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՂՏՈՆԻ ՄԵԿՈՒՍԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Արմանո Արքամեան
- Եղբ. Ալեք Խաչատրեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՆՈՆԻ ՄԵԿՈՒՍԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Էտուարդ Զարմաթեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ԲՈՒԿԵՅԻ ՄԵԿՈՒՍԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Յակոբ Պետրեան
- Եղբ. Մարտիրոս Մարտիրոսեան (վ.ն.)

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՀՐԵԻ ՄԵԿՈՒՍԻ ԸՐՁԱՆ

- Եղբ. Արա Քոհնեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՄ. ԲՈՒՐՈՎՍԿԻ

- Եղբ. Վազգեն Խոտորեան

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԶԱՅՆՈՎ ՊԱՏԳԱՄԱՌՈՐՆԵՐ

Ի ՊԱՇՏՅՈՒՆ - ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՍՆԵՐ

- Եղբ. Ժիրար Սարգիսեան
- Եղբ. Ստեփան Տեր Պետրոսեան
- Եղբ. Յարութ Զեքիեան
- Եղբ. Գառնիկ Սկրտիչեան
- Եղբ. Պետիկ Սապունճեան
- Եղբ. Գօգո Պալեան
- Եղբ. Արթուր Անարանեան
- Եղբ. Հրաչ Տեր Սարգիսեան
- Եղբ. Մարգրիտ Տեր Պետրոսեան
- Եղբ. Մանուկ Հայրապետեան
- Եղբ. Հրաչ Մարտիրոսեան
- Եղբ. Մուրադ Մանուկեան

Ի ՊԱՇՏՅՈՒՆ

- Եղբ. Թամար Արզեան
- Եղբ. Վիգեն Ազգեան
- Եղբ. Իշխան Եղիայեան

ՀՐԱԻՐԵԱԼՆԵՐ - ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵ

Հարաստանի Հանրապետության մշակույթի, մարմնակրթության և երիտասարդական հարցերու նախարար Ռոլանդ Շատոյեան

Լեւոնյից Դարաբաղի Հանրապետության մշակույթի, մարմնակրթության և երիտասարդական հարցերու նախարար Արմեն Մարգարեան

Լիբանանի մարմնամարզի և երիտասարդական հարցերու նախարար Տոքթ. Սեպուհ Յովհաննեան

Հ.Յ.Ի. Բիւրօ

- Եղբ. Ատոմ Թնճուկեան
- Եղբ. Պատրիկ Կիպրեան
- Եղբ. Միհրան Շիմշիրեան
- Եղբ. Կարո Թիթիւնճեան
- Եղբ. Պերճ Ասատուրեան
- Եղբ. Հրայր Խաչատուրեան

ՀՐԱԻՐԵԱԼՆԵՐ ԸՐՁԱՆՆԵՐԸ

- Եղբ. Արմանո Գիլիեան
- Եղբ. Պերճ Պետրոսեան
- Եղբ. Յարութ Մատնեան
- Եղբ. Վրեժ Ազգեան
- Եղբ. Բաճիկ Աբանեան
- Եղբ. Յովհաննես Նիկողոսեան
- Եղբ. Այտա Բախչեան
- Եղբ. Ժան Պելեան
- Եղբ. Յակոբ Խաչերեան
- Եղբ. Յակոբ Պալեան
- Եղբ. Վարդիվառ Յովհաննեան
- Եղբ. Յարութ Արմենեան

Պատգամատրական Ցրդ Ընդհանուր Ժողովի մասնակիցներու ստորագրութիւնները:
Աստղանիշ կրող անունները բացակայած են

ցուցիչները պատասխանեցին տեղեկագրերու կապակցաբար լուսաբանական հարցումներուն:

Գ. Նիստ 5 Յունիս 2003

Կարդացուեցան ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան բարոյական եւ նիւթական գործունէութիւններու տեղեկագրերը. եղան տեղեկագրերու մասին լուսաբանական հարցումներ: Ոսօք առաւ Լիբանանի մարզական եւ երիտասարդական հարցերու նախարար Տոքթ. Սեպուհ Յովնանեան, որ շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան կարեւորութեան վրայ:

Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը պատասխանեց լուսաբանական հարցումներուն:

Դ. եւ Ե. Անիստեր, 5 Յունիս 2003

Այս նիստին ընթացքին ըստ էութեան քննարկուեցաւ ընթացաւարտ Կեդրոնական Վարչութեան 1999-2003 քառամեակի գործունէութիւնը: Դրական գտնուեցան Կեդրոնական Վարչութեան արխիւային, «Մարզիկ» պաշտօնաթերթի, համացանցի, համա Հ.Մ.Ը.Մ.ական ճրագ խաղերու, հրատարակչական, Բիւրականի ՀԱՍԿի սեփական բնակավայրի շինարարական եւ միացեալ (ընդհանուր, սկառուտական եւ ընդհանուր բանակումներու) կանոնագրի հրատարակութեան իրականացումները: Անբաւարար գտնուեցան փոքր Շրջաններու հանդէպ հետաքրքրութիւնը, ժողովէն բացակայ Շրջաններու բացակայութեան մասին հետաքրքրութիւնը: Այս նիստին ընթացքին ժամանեց Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի պատգամաւոր Սեւան Նազարեան, որ կարդաց իր մասնաճիւղին տեղեկագրութիւնը:

Զ Նիստ, 6 Յունիս

Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը կարդաց ժողովին ըստ էութեան քննարկման պատասխանը եւ փակման խօսքը: Ժողովականները առանձնացան՝ իւրաքանչիւրը իր աշխատանքային յանձնախումբի աշխատանքներուն:

Է. եւ Ը. Անիստեր, 6 Յունիս 2003

Ժողովը լսեց մարզական, տնտեսական, «Մարզիկ» պաշտօնաթերթի, կազմակերպչական, կանոնագրային եւ սկառուտական աշխատանքային յանձնախումբերու զեկուցումները:

Թ. Նիստ, 7 Յունիս 2003

Ժողովի յանձնախումբերը՝ հաշուեքննիչ, արխիւային, նախահաշիւի եւ բանաձեւի զեկուցեցին իրենց աշխատանքներուն մասին: Ընթացաւարտ Կեդրոնական վարչութեան գործունէութիւնը նկատուեցաւ «Գնահատելի»:

Ապա տեղի ունեցաւ նոր Կեդրոնական Վարչութեան ընտրութիւն: Քուէախոյզ յանձնախումբի աշխատանքի միջոցին սրտի խօսքեր արտասանեցին Բիւզանդ Թորիկեան, Գօգօ Պալեան, Ժիրայր Սարգիսեան, Մանուէլ Հալլաճեան, Պետիկ Սապունճեան եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան:

Քուէախոյզ յանձնախումբի աշխատանքներու աւարտին ընտրուած յայտարարուեցան՝ Ստեփան Տէր Պետրոսեան, Լեւոն Պաղտասարեան, Գառնիկ Մկրտիչեան, Յարութիւն Յարութիւնեան, Մանուէլ Մարսէլեան, Մհեր Դաւիթեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Վահրամ Դանիէլեան, Կարօ Թիւթիւնճեան, Գէորգ Կարապետեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Աբրահամ Ահարոնեան եւ Սարգիս Տէր Պետրոսեան:

Պատգամաւորական ժողովի դիւանի փակման խօսքէն ետք ժողովը փակուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերգով:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՒԹԵՐՈՐԴ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յունիս 2003 - Սեպտեմբեր 2007

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՆՈՐ ԸՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԺԻԻՂԵՐ
- ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ - ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ
- ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
- ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ, ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ



Ութերորդ Կեդրոնական Վարչութեան խմբանկար: Ա. շարք - Գէորգ Կարապետեան, Պատրիկ Կիւլպէնկեան, Գառնիկ Մկրտիչեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Արրահամ Ահարոնեան: Բ. շարք՝ Վահրամ Դանիէլեան, Մհեր Դաւիթեան, Հրաչ Տէր Սարգիսեան, Մանուէլ Մարսէլեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Կարօ Թիւթիւնճեան: Նկարէն կը բացակային Լեւոն Պաղտասարեան եւ Յարութիւն Յարութիւնեան

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի ութերորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութիւնը, իր անդրանիկ նիստին ընթացքին, իր աշխատանքներուն բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Գառնիկ Մկրտիչեան

Փոխ ատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեան

Ատենադպիր՝ Կարօ Թիւթիւնճեան

Գանձապահ՝ Պատրիկ Կիւլպէնկեան

Խորհրդականներ՝ Աբրահամ Ահարոնեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Հրաչ Տէր Սարգիս-

եան, Վահրամ Դանիէլեան, Գէորգ Կարապետեան, Յարութիւն Յարութիւնեան, Լեւոն Պաղտասարեան, Մանուէլ Մարսէլեան եւ Մհեր Դաւիթեան:

16 Յունուար 2006ին, ատենադպիր Կարօ Թիւթիւնճեանի անակնկալ մահուան պատճառով, ատենադպիրի պաշտօնին հրաւիրուեցաւ Կարպիս Գապասագալեան:

Այս կազմը, մինչեւ 15 Օգոստոս 2007, գումարած է 169 ընթացիկ նիստեր, 4 լիագումար նիստեր, Գահիրէ՝ 18-20 Հոկտեմբեր 2003ին, Երե-

լան՝ 15-18 Օգոստոս 2004ին, Աթէնք՝ 28-30 Յուլիս 2005ին եւ Երեւան՝ 10-12 Օգոստոս 2006ին:

ՆՈՐ ՇՐՋԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱԾԻՂԵՐ

Պաղտատ

Համաշխարհային Բ. Ընդհ. Պատերազմի ավարտէն ետք, Պաղտատի մէջ կը սկսի Հ.Մ.Ը.-Մ.ական շարժում, 1948ին յանգելով տեղւոյն մասնաճիւղի հիմնադրութեան (տե՛ս Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Բ. հատոր, էջ 257): Պաղտատի Հ.-Մ.Ը.-Մ.ը Միութեան կեդրոնական կառոյցին միացաւ 27 Նոյեմբեր 2003ին (տե՛ս Աերկայ հատորի Գ. Մասի Տասներկուերորդ գլուխը):

Պուտափեշտ

Հունգարիոյ մայրաքաղաք Պուտափեշտի մէջ հաստատուած նախկին Հ.Մ.Ը.-Մ.ականներու նախաձեռնութեամբ, 28 Մայիս 2005ին հիմնուեցաւ տեղւոյն Հ.Մ.Ը.-Մ.ի մասնաճիւղը:

Մուսուլ

Պաղտատի Հ.Մ.Ը.-Մ.ի նմանողութեամբ, Մուսուլի մէջ 1960ին կը վերընձիւղի տեղւոյն Հ.-Մ.Ը.-Մ.ի մասնաճիւղը՝ աթլեթիզմի մէջ գնահատելի արդիւնքներ արձանագրելով— [ԶԱ]: Մուսուլի մասնաճիւղին միացումը Հ.Մ.Ը.-Մ.ի կեդրոնական կառոյցին պաշտօնապէս տեղի ունեցաւ 21 Օգոստոս 2005ին:

Շուէտ

1995ին դադրած Շուէտի Հ.Մ.Ը.-Մ.ի մասնաճիւղը վերամիացաւ կեդրոնական կառոյցին, 6 Նոյեմբեր 2005ին կայացած անդամական ընդհանուր ժողովի որոշումով:

Մարսէյ

Մարսէյի Հ.Մ.Ը.-Մ.ի մասնաճիւղը Միութեան



Հ.Մ.Ը.-Մ.ի ութերորդ Կեդրոնական Վարչութեան ատենադպիր Կարպիս Գապասագալեան, որ 16 Յունուար 2006էն սկսեալ փոխարինեց Կարօ Թիրօնեանը, վերջնոյս մահէն ետք

հնագոյն մասնաճիւղերէն է, հիմնուած 1924ին: 1964ին տեղւոյն Արծիւ Ֆուլթպոլի խումբի միացումով կը կազմուի Հ.Մ.Ը.-Մ.- ԱՐԾԻԻ Ֆուլթպոլի ակումբը: Հ.Մ.Ը.-Մ.-ԱՐԾԻԻը Միութեան կեդրոնական կառոյցին միացաւ 24 Յունուար 2007ին [Ծ/274.4]:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԵՐ - ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

2003-2007 քառամեակի ընթացքին, կեդրոնական Վարչութեան անդամներ, կազմակերպչական գործուղումներու, Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու, Մեկուսի Շրջաններու անդամական ընդհ. ժողովներու, միջդիւանային խորհրդաժողովներու, համաՀ.Մ.Ը.-Մ.ական Դրդ Խաղերու, համաՀ.Մ.Ը.-Մ.ական Տրդ Ընդհ. Բանակումի, ամեակներու տօնակատարութիւններու եւ այլ առիթներով, այցելած են հետեւեալ շրջաններն ու մասնաճիւղերը.

2003ին, Նիկոսիա, Եգիպտոս, Սուրիա, Գանատա:

2004ին, Արեւմտեան Մ. Նահանգներ, Լիբանան, Հարաւային Ամերիկա, Յունաստան, Վիէննա, Հայաստան:

2005ին, Պուլկարիա, Փարիզ, Վալանս, Մարսէյ, Տեսին, Լիոն, Յունաստան, Արեւելեան Մ. Նահանգներ, Հայաստան, Շուէտ:

2006ին Հայաստան, Ամման:

2007ին Աւստրալիա, Թեհրան, Կիպրոս, Քուէյթ:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ

ՀամաՀ.Մ.Ը.-Մ.ական դիւանական 6րդ խորհրդաժողով Հ.Մ.Ը.-Մ.ի Շրջանային եւ Մեկուսի Շրջաններ

րու վարչութեանց միջդիւանային ճրգ խորհրդաժողովը տեղի ունեցաւ Աթէնքի մէջ, 1 Օգոստոս 2005ին, մասնակցութեամբ Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու, Հարաւային Ամերիկայի, Գանատայի, Աւստրալիոյ, Յունաստանի, Լիբանանի, Պոլլկարիոյ, Լոնտոնի, Փարիզի, Վիէննայի, Նիկոսիոյ, Ադեքսանդրիոյ, Գահիրէի, Քուէյթի եւ Պատրիարքարանի ներկայացուցիչներուն: Խորհրդաժողովին հրաւիրուած էին նաեւ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.ի ներկայացուցիչները: Խորհրդաժողովը լսեց Կեդրոնական Վարչութեան երկամեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը եւ Շրջաններու գործունէութեանց ամփոփ զեկուցումները եւ ծրագրեց յառաջիկայ երկամեակի գործունէութիւնները զօրացնելու եւ արդիականացնելու միջոցները:

Միջին Արեւելքի միջդիւանական Ա. խորհրդաժողով

Միջին Արեւելքի Շրջաններու մասնաճիւղերու եւ Մեկուսի Շրջաններու վարչութեանց միջդիւանական Ա. խորհրդաժողովը տեղի ունեցաւ 8-10 Սեպտեմբեր 2006ին, Ամմանի մէջ: Ժողովին մասնակցեցան Լիբանանի եւ Սուրիոյ Շրջանային Վարչութիւններու, Պէյրութի, Պոլրճ Համուտի, Ժըտէյտէի, Հալէպի, Դամասկոսի, Լաթաքիոյ, Ամմանի, Քուէյթի, Նիկոսիոյ, Պատրիարքարանի եւ Պաղտատի մասնաճիւղերու վարչութիւններու ղեկավարներու ներկայացուցիչները: Ժողովը լսեց մասնակից վարչութիւններու ներկայացուցիչներուն զեկուցումները, Կեդրոնական Վարչութեան վարչագիտական եւ 21րդ դարու մարտահրաւէրները դիմագրաւելու միջոցները: Ծրագրուեցան Միջին Արեւելքի Շրջաններու սկառուտական խմբապետական ժողով եւ Նիկոսիոյ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի միջլրջանային ֆոլթպոլի եւ պասքեթպոլի մրցաշարք:

Ուղեկից Միութիւններու խորհրդաժողով Կեդրոնական Վարչութեան վեց անդամներ եւ 12 Շրջաններու ներկայացուցիչներ մասնակ-

ցեցան ուղեկից միութիւններու՝ Հ.Օ.Մ.ի, Համազգայինի եւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչներու խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ 18-20 Նոյեմբեր 2004ին, Լիբանանի մէջ:

Հայաստան- Սփիւռք Գ. խորհրդաժողով 7 Ապրիլ եւ 16 Յունիս 2006 թուակիր զոյգ նամակներով, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան կը հրաւիրէր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը մասնակցելու եւ ելոյթ ունենալու Հայաստան-Սփիւռք Գ. խորհրդաժողովի ընթացքին: Սակայն վերջին պահուն, երբ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչները հասած էին Երեւան, անոնց տեղեկացուեցաւ թէ խորհրդաժողովի ղեկավարին կողմէ կը մերժուէր Կեդրոնական Վարչութեան ելոյթ ունենալը եւ թէ հրաւէրը սխալմամբ ուղուած էր իրենց: Այս կացութեան առջեւ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչները պատահածին դէմ բողոքեցին արտաքին գործոց նախարարին հետ հանդիպման մը ընթացքին, հետագային ուղղելով նաեւ 13 Հոկտեմբեր 2006 թուակիր նոյնիմաստ նամակ: Աւելի ուշ, Վարդան Օսկանեան ներողամտութեան նամակ յղեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, դրուատելով Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած կազմակերպութեան ներդրումն ու արժանիքները – [Ծ/ 293-294.3 եւ 295-296.3]:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Դ. համագումար

Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, 9-14 Օգոստոս 2004ին, Հայաստանի Ծաղկաձոր ավանի Գրողներու Հանգստեան Տան մէջ կազմակերպուեցաւ համաՀ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 4րդ համագումարը, մասնակցութեամբ 14 Շրջաններու 24 խմբապետ-խմբապետուհիներու: Համագումարին ուսումնասիրութեան նիւթերն էին սկառուտական մերօրեայ հրատապ զանազան հարցեր:

ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ցրդ ընդհ. բանակում «Միշտ Պատրաստ Հայրենիքին Համար» նշանաբանով, 17 Շրջաններէ շուրջ 650 բանակողներու մասնակցութեամբ, ՀԱՍԿԻ Բիւրականի բանակավայրին մէջ, 31 Յուլիսէն 9 Օգոստոս 2006ին տեղի ունեցաւ ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ցրդ Ընդհանուր Բանակումը: Բանակումի ընդհանուր խմբապետն էր Ալէք Սաչատրեան, գործակցութեամբ՝ Ընդհանուր Բանակումի խմբապետական կազմին, որուն մաս կազմեցին Հրաչ Շմաւոնեան, Լուսին Գազէզեան, Օշին Փիրումեան, Իրմա Ճէրէճեան, Գօգօ Մկրեան, Յարութ Նասոյեան, Մանուկ Քէօչկէրեան, Տիրան Շահինեան եւ Ռուզան Թամրազեան:

Տասնօրեայ բանակումին յայտագիրը կ'ընդգրկէր բացման եւ փակման հանդիսութիւններ, խարուկահանդէսներ, տեսարժան վայրերու այ-

ցելութիւններ: Բանակավայր այցելեցին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամներ՝ Հրանդ Մարգարեան եւ Վահան Յովհաննիսեան, Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ՝ Սպարտակ Սէյրանեան, եւ Արագածոտնի թեմի առաջնորդ Թորգոմ Վրդ. Տօնիկեան – [Ծ/ 289-290. լրիւ]:

Միջին Արեւելքի բարձրաստիճան խմբապետներու Ա. համագումար

Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, Պէյրութի մէջ, 25 եւ 26 Նոյեմբեր 2006ին տեղի ունեցաւ Միջին Արեւելքի բարձրաստիճան խմբապետներու համագումար: Համագումարին մասնակցեցան Քուէյթէն, Սուրիայէն, Իրաքէն եւ Լիբանանէն 16 խմբապետ-խմբապետուհիներ: Համագումարը քննեց որակաւոր խմբապետներ պատրաստելու, սկաուտական գիտե-



ՀամաՀՄԸՄական 7րդ խաղերու Յունաստանի Օրջանի գործադիր մարմնի անդամներ, Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանի ընկերակցութեամբ

լիքներ փոխանցելու, ազգային եւ բարոյական դաստիարակութիւնը շեշտելու միջոցները եւ առաջարկներ ներկայացուց կեդրոնական վարչութեան: Կեդրոնական վարչութեան սկառտական բաժնի պատասխանատու Կարպիս Գապասագալեան վարեց համագումարի աշխատանքները:

ՄԱՐՁԱԿԱՆ

ՀամաՂ.Մ.Ը.Մ.ական 7րդ խաղեր

ՀամաՂ.Մ.Ը.Մ.ական 7րդ խաղերու կազմակերպումը վստահուեցաւ Յունաստանի Շրջանային վարչութեան: Խաղերու յայտագրին մաս կազմեցին պասքեթպոլի եւ վոլիպոլի տղոց ու աղջկանց խումբերու մրցաշարքեր եւ լողի մրցումներ: Խաղերը տեղի ունեցան 24 էն 30 Յուլիս 2005ին, Աթէնքի մէջ: Խաղերուն մասնակցեցան Արեւելեան եւ Արեւմտեան Մ. Նահանգներու, Աւստրալիոյ, Լիբանանի, Գանատայի, Պուլկարիոյ, Հարաւային Ամերիկայի, Յունաստանի, Հ.Մ.Ը.Մ.- Ֆրանսի, Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-Կամքի, եւ Թեհրանի «Արարատ»ի ներկայացուցչական խումբերը: Խաղերու նախագահութիւնը ստանձնեց Ալպէր Շահինեան: Բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 24 Յուլիս 2005ին, Աթէնքի սոֆթպոլի ողիմպիական մարզադաշտին մէջ, պատուիրակութիւններու ընդհանուր տողանցքով: Պասքեթպոլի տղոց եւ աղջկանց մրցաշարքերու ախոյեան հանդիսացան Արեւմտեան Մ. Նահանգներու ներկայացուցչական կազմերը: Վոլիպոլի տղոց մրցաշարքի ախոյեան հանդիսացաւ Յունաստանի կազմը, իսկ աղջկանց վոլիպոլի մրցումին յաղթանակը ապահովեց Հարաւային Ամերիկայի խումբը: Լողի 19 մրցումներու 16 առաջնութիւնները խլեցին Արեւելեան Մ. Նահանգներու լուղորդները, իսկ 3 առաջնութիւն՝ Արեւմտեան Մ. Նահանգներու լուղորդները:

31 Յուլիսին տեղի ունեցաւ խաղերու եզրափակիչ հանդիսութիւնը ընդհանուր տողանցքով եւ յաղթանակի բաժակներու եւ մետալներու

տուչութեամբ: Խաղերուն առընթեր եղան պաշտօնական այցելութիւններ, ճաշկերոյթ եւ յուշանուէրներու փոխանակում:

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

2003ի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան թելադրանքով, Միութեան հիմնադրութեան 85ամեակի պաշտօնական հանդիսութիւններ կազմակերպուեցան Սուրիոյ, Լիբանանի, Արեւմտեան Մ. Նահանգներու, Հարաւային Ամերիկայի եւ Գանատայի Շրջաններէն ներս: Այս առիթներով կեդրոնական վարչութեան անդամներ փոխանցեցին յաւուր պատշաճի պատգամներ:

Կեդրոնական վարչութեան 2004ի Բ. լիագումարի որոշումով եւ Հայկական Յեղասպանութեան 90ամեակի ոգեկոչման ծիրին մէջ, 1 Հոկտեմբեր 2005ին կատարուեցաւ ուխտագնացութիւն դէպի Տէր Զօր եւ Մարկատէ: Այս առիթը յատուկ յուշաքար մը գետեղուեցաւ Մեծ Եղեռնի յուշահամալիրին մէջ - [Ծ/278.3]:

2006ի ընթացքին, կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ, Շրջաններ եւ մասնաճիւղեր յատուկ հանդիսութիւններով նշեցին «ՄԱՐ-ԶԻԿ» պաշտօնաթերթի հրատարակութեան 25ամեակը: Կեդրոնական հանդիսութիւնը կազմակերպուեցաւ 19 Մարտ 2006ին, Լիբանանի մէջ - [Ծ/282.5]: 25ամեակի առիթով հանգանակութիւններ կազմակերպուեցան «ՄԱՐ ԶԻԿ»ի ֆոնտին:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

«Մարզիկ» Պաշտօնաթերթ

Կեդրոնական վարչութեան քառամեայ գործունէութեան ընթացքին, «Մարզիկ» պաշտօնաթերթի հրատարակութիւնը, հակառակ նիւթական դժուարութիւններու, շարունակուեցաւ գունաւոր եւ պատկերազարդ բովանդակութեամբ: «Մարզիկ»ի առաջնորդող խմբագրականներով կեդրոնական վարչութիւնը Հ.Մ.Ը.-

Մ.ի գաղափարաբանութիւնը փոխանցեց իր շարքերուն եւ յաջորդող էջերով, օրը-օրին արձագանգեց Շրջաններու լայնատարած գործունէութեան: Յունիս 2003էն մինչեւ Օգոստոս 2007 լոյս տեսած են 40 թիւեր: «Մարզիկ» իր հրատարակութեան 25ամեակը թեւակոխեց 2005ին:

Հ.Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24

Հայկական Յեղասպանութեան 90ամեակին առիթով Կեդրոնական Վարչութիւնը հրատարակեց «Հ.Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24» խորագրով 40 էջերէ բաղկացող գրքոյկ մը, մեկենասութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

Հ.Մ.Ը.Մ.ի Դաստիարակչական Ուղեցոյց

Հ.Մ.Ը.Մ.ականին վայել ազգային, բարոյական եւ մարզական ոգիով դաստիարակելու կոչուած 40 էջերէ բացկացող գրքոյկ մը, հրատարակուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հրատարակչական Ֆոնտի ծախսերով:

Հ.Մ.Ը.Մ.ական Կենցաղագիտութեան եւ Փրոթոքոլային Հասկացողութեան Ուղեցոյց եւ Շքանշաններու Կանոնագրութիւն

Հ.Մ.Ը.Մ.ական վարքի, յատկապէս հրապարակային ելոյթներու առթիւ նուիրապետական կարգերը յարգելու կոչուած դրութիւնը դասա-

ւորող եւ Հ.Մ.Ը.Մ.ի երեք կարգի շքանշաններու կանոնագրութեան 32 էջերէ բաղկացող գրքոյկ մը, հրատարակուած Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հրատարակչական Ֆոնտի ծախսերով:

Շինարարական

Կեդրոնատեղի, Կեդրոնական Թանգարան

18 Հոկտեմբեր 2005ի, Ա. լիագումարի ընթացքին Կեդրոնական Վարչութիւնը որոշեց Կեդրոնատեղիի ներքին բաժանումները վերադասաւորել եւ ամբողջութեամբ բարեզարդել: Այս նպատակով պատրաստուեցաւ նախածրագիր, որուն վաւերացումէն ետք սկսան վերանորոգման աշխատանքները: Կեդրոնական գրապահեստը փոխադրուեցաւ յատուկ վայր: Շինարարական աշխատանքները երկարեցան մինչեւ 2006ի սկիզբը: Շինարարական ծախսերու գլխաւոր նուիրատուն հանդիսացաւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի ցկեանս նախագահ՝ Վարուժան Գազանճեան:

Կեդրոնական Թանգարանին մէջ նոր դարաններ աւելցուեցան եւ արդիականացաւ: Թանգարանի նոր իրերը վերադասաւորուեցան եւ ամբողջութեամբ ցանկագրուեցան:

Կեդրոնատեղիի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 17 Մարտ 2006ին — [Ծ/282.3]:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ

- ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
- ԱՐԺԱՆԵԱՑ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ
- ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏՈՒԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ



Արժանեաց Ծրանշան



Արտակարգ Պատուանշան



Ծառայութեան Ծրանշան

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Հ.Մ.Ը.Մ.ական կենցաղագիտութեան եւ փրութոքովային հասկացողութեան ուղեցոյց»ի 2007ին հրատարակուած գրքոյկին համաձայն (էջ 24), Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց Ոսկի եւ Արծաթ շքանշանները համազօր են եւ ցարդ շքանշանակիրները կը դառնան «Արժանեաց» շքանշանակիրներ:

Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց եւ Ծառայութեան շքանշաններու կանոնագրութեանց մասին տե՛ս Գ. հատորի իններորդ գլուխը, էջ 57-61:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

17 Ապրիլ 1995ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը հաստատեց Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ Պատուանշան»ի դրութիւնը: Ստորեւ Արտակարգ Պատուանշանի կանոնագրութիւնը վաւերացուած 7րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին կողմէ:

Յօդ. 1 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իրեն կը վերապահէ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշան տալու որոշումը եւ շքանշանը կը յանձնուի իր կամ լիազօր անձի մը կողմէ:

Յօդ. 2 - Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանին հետ կը յանձնուի համապատասխան լամբակի պէճ եւ հաստատագիր, որ կը կրէ Կեդրոնական Վարչութեան կնիքը, ատենապետին եւ ատենադպիրին ստորագրութիւնները, պարգեւատրման որոշումի թուականը:

Յօդ. 3 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը յատուկ մատեանի մէջ կ'արձանագրէ Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանի արժանացած անձերուն անունները, նկարները եւ պարգեւատրման որոշումի թուականը:

Յօդ. 4 - Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանին կրնայ արժանանալ.-

ա) Հ.Մ.Ը.Մ.ական մը կամ միութեան բարեկամ մը, որ իշխանական նուիրատուութիւն կատարած է Հ.Մ.Ը.Մ.ին:

բ) Հայ կամ օտար անձնաւորութիւն մը, որ թանկագին ծառայութիւն մատուցած է Հ.Մ.Ը.Մ.ին:

Յօդ. 5 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանով կրնայ պարգեւատրել.-

ա) Իր նախաձեռնութեամբ, այս պարագային անհրաժեշտ է նախապէս տեղեակ պահել պարգեւատրեալին բնակած երկրին Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւնը:

բ) Շրջանային կամ Մեկուսի Վարչութեան ղեմուժով. այս պարագային անհրաժեշտ է որ առաջարկին կցուած ըլլան ենթակային կենսագրութիւնը եւ «Արտակարգ» պատուանշանին պարգեւատրումին յատուկ ղեմուժնագիրը, որ իբրեւ «Յաւելուած» մաս կը կազմէ այս կանոնագրութեան:

Յօդ. 6 - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը «Արտակարգ» պատուանշանով պարգեւատրուած անձին անունը կը հրատարակէ իր պաշտօնաթերթին մէջ, հայ մամուլով, նաեւ յատուկ շրջաբերականով կը յայտնէ Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններուն, որոնք իրենց կարգին կը փոխանցեն մասնաճիւղերուն եւ շարքերուն:

Յօդ. 7 - Կարելի է յետ մահու պարգեւատրել թանկագին ծառայութիւն մատուցած անձնաւորութիւն մը:

Ստորեւ «Արժանեաց» շքանշանակիրներու ընդհանուր ցանկը որոշումի եւ տուչութեան թուականներով եւ «Արտակարգ» պատուանշանակիրներու ցանկը որոշումի եւ տուչութեան թուականներով:

Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց շքանշան 1976ի հիմնումէն սկսեալ ժամանակագրական կարգով.-

**Հ.Մ.Ը.Մ.ի Արժանեաց շքանշանի տուչութիւններ
ժամանակագրական կարգով**

Շքանշանակիր	Շրջան. Մեկուսի կամ մասնաճիւղ	Որոշման թուական	Տուչութեան թուական
Տիգրան Ա.Քհնյ. Խոյեան	Ուաշինկթըն	22 Փետրուար 1976	Օգոստոս 1978
Յովհաննէս Շահինեան	Պէյրուս	30 Յունուար 1977	13 Նոյեմբեր 1977
Լուտեր Մասպանաճեան	Հալէպ-Թորոնթօ	30 Յունուար 1977	Յետ մահու, Փետրուար 1977
Թորոս Խաչատուրեան	Գահիրէ	6 Սեպտեմբեր 1977	16 Սեպտեմբեր 1977
Լեւոն Գայեան	Աթէնք	25 Յուլիս 1978	Օգոստոս 1978
Գեորգ Յաբէթեան	Աթէնք	25 Յուլիս 1978	Օգոստոս 1978
Խաչիկ Բարթեմեան	Թեսալոնիկէ	7 Օգոստոս 1978	Օգոստոս 1978
Վահան Գաւուքճեան	Աղեքսանդրիա	6 Մարտ 1979	10 Փետրուար 1980
Դանիէլ Դանիէլեան	Աթէնք - Մոնթրէալ	30 Ապրիլ 1980	26 Հոկտեմբեր 1980
Հրանդ Մուրատեան	Պէյրուս	17 Դեկտեմբեր 1980	
Քերոբ Առաքելեան	Լոս Անճելըս	17 Դեկտեմբեր 1980	28 Նոյեմբեր 1982
Ալպէր Յակոբեան	Պէյրուս	17 Դեկտեմբեր 1980	Տուչութիւնը չկատարուեցաւ
Գարեգին Շամլեան	Գահիրէ - Նիւ Երզնկ	5 Մայիս 1982	30 Յուլիս 1983
Տիգրան Ոսկերիչեան	Դամասկոս	16 Նոյեմբեր 1983	11 Դեկտեմբեր 1983
Սարգիս Պապիկեան	Դամասկոս	16 Նոյեմբեր 1983	11 Դեկտեմբեր 1983
Պետրոս Կարապետեան	Պոսթըն	1 Մայիս 1984	25 Նոյեմբեր 1984
Շաւարշ Ա. Քհնյ. Մեհրապեան	Պուլճնոս Այրէս	25 Յունուար 1985	22 Նոյեմբեր 1985
Պարգեւ Միսիրեան	Հալէպ	27 Յունուար 1986	Մարտ 1987
Գործ Տազետեան	Ամման	10 Մայիս 1987	24 Նոյեմբեր 1988
Սիրարփի Վարդանեան	Ժըտէյտի	26 Մայիս 1987	
Յովհաննէս Սթամպուլեան		8 Յուլիս 1988	10 Սեպտեմբեր 1988
Տոքթ. Ժոզէֆ Մելիքեան		8 Յուլիս 1988	10 Սեպտեմբեր 1988
Զաւէն Սապունճեան	Հալէպ	4 Հոկտեմբեր 1988	27 Նոյեմբեր 1988
Սուրէն Նազարեան	Հալէպ	4 Հոկտեմբեր 1988	27 Նոյեմբեր 1988
Եղիշէ Մանուկեան	Պէյրուս - Լոս Անճելըս		14 Մայիս 1992
Յովհաննէս Պայթարեան	Պէյրուս	16 Յուլիս 1992	25 Դեկտեմբեր 1992
Վարուժան Գազանճեան	Գահիրէ		26 Նոյեմբեր 1993
Յարութիւն Բարսեղեան	Լոս Անճելըս		9 Հոկտեմբեր 1993
Գործ Տաղլեան	Պուլճնոս Այրէս	23 Սեպտեմբեր 1993	18 Դեկտեմբեր 1993

ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ԵՒ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐ

Շքանշանակիր	Շրջան. Մեկուսի կամ մասնաճիղ	Որոշման թուական	Տուչութեան թուական
Պարգելի Պարսամեան	Պուլենուս Այրես	28 Հոկտեմբեր 1993	18 Դեկտեմբեր 1993
Վարդգես Ալահայտոյեան	Պէյրուք - Լոս Անճելըս	23 Սեպտեմբեր 1993	1994
Սեւակ Սագինեան	Կլէնտլլ	23 Սեպտեմբեր 1993	1994
Կարպիս Գույումճեան	Աթէնք	23 Սեպտեմբեր 1993	
Ատոմ Թնճուկեան	Պէյրուք	23 Սեպտեմբեր 1993	11 Ապրիլ 1995
Գրիգոր Մղձաւետիքեան	Պէյրուք	23 Սեպտեմբեր 1993	11 Ապրիլ 1995
Տոքթ. Յարութիւն Գազանճեան	Պէյրուք-Փարիզ		
Բիւզանդ Թորիկեան	Պէյրուք		21 Մարտ 2004
Երուանդ Տէմիրճեան	Հալէպ-Պուրճ Համուտ		11 Փետրուար 1996
Յովհաննէս Տէր Յարութիւնեան	Պուրճ Համուտ- Անթիլիաս		11 Փետրուար 1996
Սամուէլ Մկրտիչեան	Լոս Անճելըս		1998
Վարուժան Սերոբեան	Մոնթրէալ		22 Յունիս 1999
Ժիրայր Խաչատուրեան	Պէյրուք	22 Հոկտեմբեր 1999	18 Յունուար 2000
Տոքթ. Միսաք Արզումանեան	Պ. Հ.-Սան Ֆրանսիսքո		8 Յուլիս 2001
Արշակ Գոլըստոն	Սիտնի		12 Դեկտեմբեր 2002
Պերճ Գրիգորեան	Աթէնք		2 Փետրուար 2003
Պողոս Պողոսեան	Աթէնք		2 Փետրուար 2003
Յարութիւն Թագուրեան	Աթէնք		2 Փետրուար 2003
Օննիկ Շանկայեան	Աթէնք		2 Փետրուար 2003
Երուանդ Շահինեան	Թորոնթո		
Ժիրայր Սարգիսեան	Պէյրուք-Սան Ֆրանսիսքո		26 Յունիս 2004
Գօգօ Պալեան	Պոսթըն-Լոս Անճելըս		26 Յունիս 2004
Վահէ Չոքկարեան	Հալէպ-Պէյրուք		11 Մայիս 2006
Կարօ Թիւթինճեան	Անթիլիաս	Յետ մահու, 17 Յունուար 2006	
Պետրոս Շենմեսեան	Այնճար-ժընտլյտէ	Յետ մահու, 5 Նոյեմբեր 2006	
Յովհաննէս Մարտոյեան	Սիտնի		3 Մարտ 2007
Զաւէն Բրուտեան	Սիտնի		3 Մարտ 2007
Մանուէլ Հալլաճեան	Հալէպ-Թորոնթո	25 Հոկտեմբեր 2006	2007
Միհրան Շիմշիրեան	Պէյրուք	8 Օգոստոս 2007	2007

**Հ.Ս.Ը.Մ.ի Արտակարգ Պատուանշանի տուչութիւններ
ժամանակագրական կարգով**

Շքանշանակիր	Շրջան. Մեկուսի կամ մասնաճիւղ	Որոշման թուական	Տուչութեան թուական
Արամ Արք. Քէշիշեան (Այժմ կաթողիկոս)			17 Ապրիլ 1995
Սուրեն Արք. Գաթարոյեան			14 Նոյեմբեր 1993
Արսէն Յեքիմեան	Սիտնի		6 Դեկտեմբեր 1995
Սարգիս Տէր Պետրոսեան	Սիտնի		6 Դեկտեմբեր 1995
Պերճ Մոմճեան	Սիտնի		6 Դեկտեմբեր 1995
Յովհաննէս Մարտոյեան	Սիտնէյ		6 Դեկտեմբեր 1995
Փայլակ Ադամեան	Մելպուռն		6 Դեկտեմբեր 1995
Պերճ Թաշճեան	Մելպուռն		6 Դեկտեմբեր 1995
Արթուշ Աղամալեան	Սիտնի		6 Դեկտեմբեր 1995
Զաւէն Բրուտեան	Սիտնի		6 Դեկտեմբեր 1995
Արմէն Սմբատեան	Հայաստան		19 Նոյեմբեր 1998
Յովհաննէս Սերոբեան	Դամասկոս		20 Դեկտեմբեր 1998
Սարգիս Պասմաճեան	Դամասկոս		20 Դեկտեմբեր 1998
Յակոբ Մկրտիչեան	Գամիշլի		20 Դեկտեմբեր 1998
Տոքթ. Տիգրան Չափանեան	Հալէպ		20 Դեկտեմբեր 1998
Ռոլանտ Շառոյեան	Երեւան		
Խորեն Քիրազեան	Սոֆիա		31 Մարտ 1999
Տոքթ. Սուրեն Պայրամեան	Գահիրէ		31 Մարտ 1999
Վարդիվառ Յովհաննէսեան	Պուրճ Համուտ-Փարիզ		31 Մարտ 1999
Տիգրան Պարտիզպանեան	Փլովտիվ	2002	27 Ապրիլ 2002
Զաքար Չորպաճեան	Պուրճ Համուտ	7 Մարտ 2003	
Մինաս Ադամեան	Աթէնք		2 Փետրուար 2003
Սերգօ Իսկահատեան	Աթէնք		2 Փետրուար 2003
Կարօ Յովակիմեան	Գոքիմիա		2 Փետրուար 2003
Առաքել Թերզեան	Հալէպ		

Բ. Մ Ա Ս

ՇՐՋԱՆՆԵՐ

ԵՒ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

- ԱԹԷՆՔ - ՖԻՔՍ
- ԳՈՔԻՆԻԱ
- ԹԵՍԱՂՈՆԻԿԷ - ՍԵԼԱՆԻԿ
- ԳԱՐԷԱ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ԱԹԵՆՔ -ՖԻՔՍ

Կազմակերպչական Գործունեություն

Աթենքի Հ.Մ.Ը.Մ.ի 1990-92 երկամեակի վարչական կազմը կը գործէ ատենապետութեամբ՝ Պաղտիկ Գարապաճաքեանի, ատենադպրուհին է Արշալոյս Սամուէլեան: 1992ի Մայիսին մասնաճիւղին անդամական պատկերը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.- մարզիկներ՝ 248, սկաուտներ՝ 48, օժանդակ անդամներ՝ 171: Մասնաճիւղին սկաուտական գործունէութիւնը կը վարէ յատուկ ծնողական յանձնախումբ մը: Վարչութեան ակումբ-նստավայրը եւ մարզադաշտը տրամադրուած են Հայ Կապոյտ Խաչի Շրջանային Վարչութեան կողմէ:

10 Յունիս 1992ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Կարպիս Ճանիկեան
Փոխ ատենապետ՝ Պաղտիկ Գարապաճաքեան

Ատենադպրուհի՝ Արշալոյս Սամուէլեան
Գանձապահ՝ Դաւիթ Պետրոսեան

Խորհրդականներ՝ եւ մարզախաղերու պատասխանատուներ՝ Արշալիր Գուլյումեան, Ֆիլիփ Ծերոնեան, Արմենակ Աւետիսեան, Յովիկ Տէր Յովակիմեան, Գէորգ Եսայեան, Ժիրայր Գալայճեան, Տիգրան Չաքրեան, Արիսթօ Կիւզէլեան, Յովհաննէս Գայթանճեան, ապա փոխարինուած՝ Սերգօ Եղիշէեանով: Այս տարեշրջանին մասնաճիւղի օժանդակ եւ մարզիկ անդամներու ընդհանուր թիւն է 290: Մասնաճիւղը կը կիրարկէ ֆուլթպուլ, պասքեթպուլ, զանազան դասակարգերու եւ երկու սեռի խումբերով, որոնք կը մասնակցին Աթենքի Փետերասիոններու ախոյեանութիւններու մրցաշարքերուն: Մասնաճիւղը ունինաւ գլխաւորաբար տեղացի մարզիկներէ բաղկացած լողի առանձին ճիւղ, ուր կը մարզուին շուրջ 100 լուղորդներ:

25 Յունիս 1994ին մասնաճիւղին նորընտիր վարչութեան ղեւանը կը մնայ նոյնը, մարզախաղերու պատասխանատուներէն ոմանց փոփոխութեամբ կազմին վրայ կ'աւելնան Արա



Աթենքի Հ.Մ.Ը.Մ.ի 2001 տարուան ֆուլթպուլի խումբը



Աթէնքի Հ.Մ.Ը.Մ.ի 2004 տարուան ֆութպոլի կազմը, որ Գ. դասակարգէն Բ. դասակարգ բարձրացաւ

Պարսամեան, Գրիգոր Մինասեան, Յարութիւն Խաչատուրեան եւ Գ. Գուլոյեան:

Տարեշրջանի ընթացքին վերոյիշեալ կազմէն կարգ մը հրաժարումներու հետեւանքով վարչական կազմի անդամակցութեան կը հրաւիրուի Յակոբ Թոքաթլեան:

1994-1995 տարեշրջանի մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 391, որոնցմէ 82ը սկաուտական շարքերէն:

Մարզական բոլոր խումբերը կը մասնակցին հելլէն պետական ֆետերասիոններու ախոյեանութեանց մրցաշարքերուն: Տարեշրջանի վերջաւորութեան մասնաճիւղը կը կազմէ փոքր տղոց պասքէթպոլի դպրոց, 35 մարզիկներու մասնակցութեամբ: 115 տեղացի լուղորդներէ բաղկացած խումբ մը կը մարզուի մասնաճիւղի

վարչութեան հովանիին տակ Հ.Մ.Ը.Մ.ին ապահովելով 1.900.000 տրախմիի պետական նպաստ մը:

Վարչութեան հրապարակային ձեռնարկներէն են Սբ. Ծննդեան Աւետում, պարահանդէսներ, Նոր Տարուան քաթայի հաւաքներ: Այս տարեշրջանին մասնաճիւղը կը պատուէ Հայաստանի ըմբշամարտիկները, որոնք Աթէնք կը գտնուին միջազգային մրցաշարքի մը առիթով:

27 Մայիս 1996ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ 1996-1998 երկամեայ գործունէութեան համար: Նորընտիր վարչութիւնը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յակոբ Եթիմեան, ապա գանձա-

պահ, եւ փոխարինուած Յարուժիւն Խաչատուրեանով, փոխատենապետ՝ Կարպիս Ճանիկեան, ատենադպիր՝ Սարգիս Մինասեան, փոխատենադպիր՝ Վիվիան Պարսումեան, գանձապահ՝ Դաւիթ Պետրոսեան, փոխգանձապահ՝ Արշօ Գուլյումճեան, խորհրդականներ՝ Արա Պարսումեան, Գրիգոր Մինասեան, Յարուժիւն Խաչատուրեան, Յակոբ Թոքաթլեան եւ Նազար Աւագեան, որուն Շրջանային Ընդհանուր խմբապետ նշանակուելէն ետք կազմը կ'ամբողջացուի Օննիկ Կենդանեանով:

Այս կազմին կ'օժանդակէ մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդը, որուն կ'անդամակցին Ազատ Պէրպէրեան, Պէթի Գալայճեան, Ազապի Աբրահամեան, Սիպիլ Աճէմեան, Ազնիւ Աճէմեան եւ Վասօ Աբիկեան:

Մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 257, որոնցմէ 42ը սկաուտական շարքերէն:

Վարչութեան ճիգերով այս տարեշրջանին կը նորոգուի Առաքելեան-Կիւտէնեան պասքեթպոլի դաշտը՝ լուսաւորուով եւ յարակից բաժիններով:

24 Յունիս 2000ին մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ երկամեայ գործունէութեան համար վարչական կազմ, ատենապետ՝ Յովիկ Տէր Յովակիմեան, քարտուղար՝ Շողիկ Տատոյեան, գանձապահ՝ Սերգօ Էրջէնեան, խորհրդականներ՝ Յովհաննէս Ղազարեան, Արա Պարսումեան, Յակոբ Թոքաթլեան, Յարուժիւն Կիւտէնեան, Յովիկ Խաչերեան եւ Արամ Փիլաֆեան:



Աթէնքի մասնաճիւղի վերերաններէն պասքեթպոլի խումբ մը

Նորընտիր վարչութիւնը կը նշանակէ Սկաուտական Խորհուրդ, որուն կ'անդամակցին Ազատ Պէրպէրեան, Սիպիլ Աճէմեան, Ծովիկ Մինասեան, Վասօ Աբիկեան, Լուսին Շահպազեան եւ Թերեզա Խաչերեան:

Այս Տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւն է 218, որոնցմէ 38 սկաուտական շարքերէն: Մասնաճիւղի ընթացիկ գործունէութեան մաս կը կազմեն Սբ. Ծննդեան Աւետում, տարեկան պարահանդէս, Մայիսեան յուշավագք:

Մարզական գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղը 1990-1992 տարեշրջանին կը կիրարկէ Ֆուտպոլ, պասքեթպոլ եւ լուդորդութիւն: Ֆուտպոլը կը կիրարկէ Ա. խումբը, որ կը մասնակցի յունական Ֆետերասիոնի Գ. դասակարգի ախոյեանութեան եւ բաժակի մրցաշարքերուն: Խումբը կը բաղկանայ ամբողջութեամբ հայ մարզիկներէ, մարզիչ՝ Արիսթօ Կիւզէլեան: Մասնաճիւղը ունի նաեւ Ֆուտպոլի փոքրերու կազմ շուրջ 25 մարզիկներով, խումբին մարզիչն է՝ Յակոբ Եթիմեան: Պասքեթպոլի ճիւղը կը կիրարկեն 5 խումբեր, աղջկանց երկու եւ տղոց երեք զանազան դասակարգի խումբերով: Պասքեթպոլի խումբերու մարզիչներ են՝ Գ. Եսայեան եւ Թ. Սուքիասեան:

1990-91 եղանակին աղջկանց պասքեթպոլի կազմը Գ. դասակարգի իր խմբակին պարագլուխը կը հանդիսանայ: Մասնաճիւղին պասքեթպոլի ներկայացուցչական կազմը 1991ին եւ 1992ին Փարիզի մէջ կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսի «Սուրէն Մուրատեան» պասքեթպոլի մրցաշարքերուն: 1993ին խումբը կը տիրանայ նոյն մրցաշարքի ախոյեանութեան:

Մասնաճիւղին փոքր աղջիկներու պասքեթպոլի զուտ հայակազմ խումբը 1994ին կը յաջողի իր դասակարգի մրցաշարքին ապահովել առաջնութիւնը: Խումբը կը մարզէ Արշա Սամուէլեան: 1995-1996 եղանակին Ֆուտպոլի Ա. կազմը իր դասակարգի 14 խումբերու շարքին կը գրաւէ չորրորդ դիրքը, պասքեթպոլի Ա. կազմը 10

խումբերու շարքին կը գրաւէ 7րդ դիրքը, իսկ պատանիներու կազմը 11 խումբերու շարքին 9րդ դիրքը: Աղջկանց Ա. կազմը 10 խումբերու շարքին կը գրաւէ 4րդ դիրքը, իսկ փոքր աղջիկներու խումբը 10 խումբերու շարքին 7րդ դիրքը:

1996-97 եղանակին Ֆուտպոլի առաջին կազմը Աթէնքի Ֆետերասիոնի ախոյեանութեան մասնակցող 15 խումբերու մէջ կը գրաւէ 9րդ դիրքը, իսկ 1997-98 եղանակին կը յառաջդիմէ մէկ դիրքով՝ գրաւելով 8րդ դիրքը: Այս տարեշրջաններուն գլխաւոր մարզիչ Արիսթօ Կիւզէլեանին կ'օժանդակէ Յ. Եափուճեան: Ֆուտպոլի կրտսերներու եւ փոքրերու խումբերը կը բաւարարուին անկախ մրցաշարքերու մասնակցութեամբ:

1997-98 եղանակին պասքեթպոլի մեծ աղջիկներու խումբը համեմատաբար համեստ արդիւնքներու կը տիրանայ, մինչ փոքր աղջիկներու խումբը Ֆետերասիոնի ախոյեանութեան մրցաշարքի 12 խումբերու կարգին կը գրաւէ 5րդ դիրքը: Տղոց խումբերը կը յարատեւեն զանազան դասակարգերու ախոյեանութեանց մասնակցութեամբ:

Մասնաճիւղին պասքեթպոլի տղոց եւ աղջրկանց ներկայացուցչական խումբերը կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական Ե. մարզախաղերուն 20 Յուլիսէն մինչեւ 10 Օգոստոս 1997ին, Ուաշինկթընի եւ Նիւ Ճըրզիի մէջ:

Մասնաճիւղին Ֆուտպոլի առաջին խումբը մաս կը կազմէ Աթէնքի Գ. դասակարգի խմբակցութեան եւ Ֆետերասիոնի 2000-2001 եղանակի ախոյեանութեան մրցաշարքին կը գրաւէ 15 խումբերու վրայ 4րդ դիրքը, իսկ 2001-2002 եղանակին 6րդ դիրքը: Խումբին մարզիչներն են Արիսթօ Կիւզէլեան եւ Ացարեան:

Նոյն եղանակներուն պասքեթպոլի առաջին խումբը, որ կը մասնակցի Աթէնքի Գ. դասակարգի խումբերու ախոյեանութեան մրցաշարքերուն, յաջորդաբար կը գրաւէ 3րդ եւ 11րդ դիրքերը:

Լուդորդութեան բաժինին մէջ խումբը 41 խումբերու վրայ կը գրաւէ 19րդ դիրքը:



Աթէնքի մասնաճիւղի 1995 տարուան պասքէթպոլի տղոց խումբը

Պասքէթպոլի աղջկանց եւ տղոց խումբերը 2000ի եղանակի աւարտին Գ. դասակարգէն կը բարձրանան Բ. դասակարգ:

2001ի Սեպտեմբերին մասնաճիւղին պասքէթպոլի տղոց խումբը կը մասնակցի Երեւանի մէջ Համահայկական Բ. խաղերուն:

12 Ապրիլ 2003ին մասնաճիւղը կը կազմակերպէ Հայկական Յեղասպանութեան ՑՑամեակի նշումին նուիրուած լողարշաւի մրցաշարք, ուր ախոյեանութեան կը տիրանան Հ.Մ.Ը.Մ.ականներ Արման Գրիգորեան եւ Վասիլի Վարդանեան:

2004ի Մայիսին, Ֆուլթպոլի եւ պասքէթպոլի ախոյեանութեանց մրցաշարքերու աւարտին, մասնաճիւղին ֆուլթպոլի եւ պասքէթպոլի խումբերը յաջող եղանակի մը շնորհիւ մէկական դասակարգ կը բարձրանան -[Ծ/262.34]:

Սկաուտական

Մասնաճիւղին սկաուտական գործունէութիւնը կը վարէ վարչութեան կողմէ նշանակուած Սկաուտական Խորհուրդը: Սկաուտական գործունէութեան եղանակին բացումը տեղի կ'ունենայ դպրոցական վերամուտի առընթեր՝ պաշտօնական հանդիսութեան մը ընթացքին, որուն ներկայ կը գտնուին Աթէնքի հայութեան պաշտօնական ներկայացուցիչները:

1992ի վերամուտի բացման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 3 Հոկտեմբեր 1992ին - [Ծ/130.36]:

1993ի վերամուտը 25 Սեպտեմբեր 1993ին:

1995ի վերամուտը 14 Հոկտեմբեր 1995ին - [Ծ/162.46]:



Աթլետիկ Հ.Մ.Ը.Մ.ի 1995 տարուան պասքեթպոլի աղջկանց կազմը

1997ի Մարտին մասնաճիւղի միաւորի խմբապետութիւնէն կը հրաժարի Համբիկ Յովսէփեանը, որ կը փոխարինուի Վ. Մկրտիչեանով:

2000 տարեշրջանի մասնաճիւղի խմբապետն է Արամ Փիլաֆեան, փոխ խմբապետ՝ Օննիկ Աւագեան:

2003ի Մարտ եւ Ապրիլ ամիսներու ընթացքին, երեք հանգրուաններով, մասնաճիւղին աստիճանաւորական կազմը ունեցաւ դպրոց-բանակումներ, ուր դասախօսներ՝ Պողոս Չոլաքեան, Վերոնիք Քիւրէքճեան, Վրէժ Բաթանեան, Յարութիւն Մանուկեան, Տոքթ. Փանայոթիս Խայրոս, Վիգէն Մկրտիչեան, Արուսեակ Գարամանեան, Ազարիկ Եորղանճեան, Նիքոլայոս Պայիս, աստիճանաւորներուն փոխանցեցին ազգային, սկաուտական, վարչագիտական եւ բժշկական տարբեր նիւթեր: Երեք հանգրուաններու աւարտին մասնակից աստիճանաւորները անցուցին համապատասխան քննութիւններ:

Հրապարակային եւ ընկերային գործունէութիւն

Աթլետիկ Հ.Մ.Ը.Մ.ը 1991-1992 տարեշրջանին եւս, ըստ իր աւանդական սովորութեան, կը կազմակերպէ Սբ. Ծննդեան Աւետիսի շրջագայութիւն, Գոքինիոյ մասնաճիւղի գործակցութեամբ: Վարչութիւնը կը կազմակերպէ խրատ-ճանքի երեկոներ, ճաշկերոյթներ: Մասնաճիւղը կը մասնակցի Ապրիլեան յուշավազքին:

1997-1998 տարիներուն մասնաճիւղին հրապարակային գործունէութեանց մաս կը կազմեն Սբ. Ծննդեան Աւետում, Նոր Տարուան գաթայի կտրում, Մայիս 28ի առթիւ կազմակերպուած պասքեթպոլի մրցաշարք, սկաուտական խումբերու մասնակցութեամբ յունաց ազգային տօներու առթիւ կազմակերպուած տողանցք:

Հրատարակչական

1999ի Սեպտեմբերէն սկսեալ մասնաճիւղը կը հրատարակէ MARZASER յունարէն լեզուով 4 էջնոց երկամսեայ մը՝ հանրութեան ծանօթացրնելու համար Աթլետիկ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը:

Նիւթական

1996 Մայիսէն մինչեւ 1998ի Մայիս, մասնաճիւղի նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք 16.498.591 տրախմի, ելք՝ 15.965.964 տրախմի:

ԳՈՔԻՆԻԱ

Կազմակերպչական Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղի 1990ի Յունիսէն մինչեւ 1992 Մայիս ամսուան գործունէութիւնը կը վարէ, ատենապետութեամբ Պերճ Գիզիրեանի, հետեւեալ վարչական կազմը.՝ Վահան Քէօսէեան, Պետրոս Միքայէլեան, Յարութիւն Տէր Արթինեան, Վարուժան Չաքմաքճեան, Ռուբէն Պոյաճեան, Յակոբ Հաճի Աբրահամեան, Յարութիւն Պատիկեան եւ Սողոմոն Նուրճանեան:



Աթլետիկ մասնաճիւղի 2000 տարուան պասքեթպոլի աղջկանց կազմը

Կազմի կարեւոր աշխատանքներէն կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի Դ. Ընդհանուր բանակումի կազմակերպչական աշխատանքները, «Ղարաբաղի Օգնութեան» յանձնախումբի աշխատանքներուն օժանդակութիւնը եւ ընթացիկ ձեռնարկներ՝ Ծննդեան Աւետիս, Ամանորի գաթայի կտրում: Այս տարեշրջանին մասնաճիւղը կը հաշուէ 190 անդամներ, որոնցմէ 90ը սկաուտական շարքերէն:

Մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը 1992-93 երկամեակի գործունէութեան համար կ'ընտրէ նոր վարչական կազմ.- ատենապետ՝ Հայկազ Տէօքմէճեան, անդամներ, Գէորգ Պաղվանդեան, Քերոբ Էքիզեան, Պերճ Գիզիրեան, Յովհաննէս Մանկոյեան, Յաբէթ Աղամեան, Պենոն Մանիկեան, Վարուժան Չաքմաքճեան եւ Սողոմոն Նուրճանեան:

Տարեշրջանի ընթացքին կ'արձանագրուի մասնաճիւղի անդամներու թուական զգալի աճ: Սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 140: Սկաուտական աշխատանքները կը վարէ

Ծնողական Խորհուրդ մը, որուն մաս կը կազմեն Ա. Տէր Արթինեան, Մ. Կորկոտեան, Հ. Չաքմաքճեան, Վ. Սերոբեան, Հ. Բաշաճեան եւ Վ. Մանիքեան:

27 Մայիս 1996ին տեղի կ'ունենայ մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը, նախագահութեամբ Թագուր Յովակիմեանի եւ քարտուղարութեամբ Վահէ Աբիկեանի: Ժողովին ընթացիկ աշխատանքներէն ետք կ'ընտրուի 1996 տարեշրջանի մասնաճիւղի վարչական կազմ, որուն կ'անդամակցին Վահէ Աբիկեան, Յովհաննէս Մանկոյեան, Թորոս Մանուչեան, Վեհանուշ Մանիկեան, Յարութիւն Չալըքեան եւ Կարէն Մխիթարեան:

1997 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան անդամներն են Հայկ Չիչէքեան, Յարութիւն Տէր Յարութիւնեան, Վահէ Աբիկեան, Փերուզ Չաքմաքճեան, Վարդան Կարապետեան, Սողոմոն Նուրճանեան, Ճէրի Նարեկեան եւ Կարէն Մխիթարեան:



1993ի Ապրիլ 24ի յուշատունէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի մասնաճիւղերու սկաուտական շարքերը Աթէնքի գլխաւոր հրապարակ Սինթաղմայի վրայ

Մարզական

Գոքինիոյ մասնաճիւղի առաջին կազմերը կը մասնակցին Բիրէայի Ֆետերասիոնի Գ. դասակարգի ախոյեանական մրցաշարքերուն: 1995-1996 եղանակին Փոլթպոլի առաջին կազմը իր դասակարգի 17 խումբերու շարքին կը գրաւէ 8րդ դիրքը, վոլիպոլի երէցներու կազմը 12 խումբերու շարքին 11րդ եւ պատանիներու խումբը 12 խումբերու շարքին 3րդ դիրքը, իսկ վոլիպոլի աղջկանց կազմը 6 խումբերու շարքին կը գրաւէ 4րդ դիրքը: 1999ին, մասնաճիւղը ունի մեծերու եւ փոքրերու Փոլթպոլի խումբեր, մեծ աղջկանց եւ մեծ տղոց վոլիպոլի խումբեր: 2000ին, մասնաճիւղի վոլիպոլի խումբը Յունաստանի ախոյեանական մրցաշարքին ընթացքին

իր յաջող արդիւնքներուն շնորհիւ Գ. դասակարգէն կը բարձրանայ Բ. դասակարգ:

Սկաուտական

1992էն սկսեալ աստիճանաւորական նոր կազմ մը կը ստանձնէ Գոքինիոյ մասնաճիւղին սկաուտական աշխատանքները: Մասնաճիւղին խմբապետն է Յ. Յովակիմեան: Սկաուտական խումբերը կը մասնակցին Շրջանային Սկաուտական Խորհուրդի ծրագրած բոլոր աշխատանքներուն՝ միջմասնաճիւղային բանակում, աստիճանաւորական լսարաններ, դպրոց-բանակումներ եւ փաղանգի դասընթացքներ: Սկաուտական բաժնի նիւթական կարիքները կը հոգացուին ծնողական յանձնախումբի նախաձեռնած վիճակահանութեան եկամուտներով:



Փիրեայի 2003 տարուան ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ի Գոքիմիոյ մասնաճիւղի վոլիպոլի խումբը իր պատասխանատուներով. ոտքի՝ Գարլոս Գոյլումճեան, Աւագ Մանիկեան, Ծէլք Նարեկեան, Օննիկ Տաղեան, Վարդան Աֆսաւեքեան, Աւետ Ադամեան եւ Բահրիս Եանիս: Ծունկի՝ Միհրան Չալըքեան, Արմենակ Կեմրիմեան, Կարօ Պօյաճեան, Ռաֆայէլ Չալեան եւ Միքի Սերոբեան

1993ին խումբերը կը մասնակցին հայ սկաուտական հիմնադրութեան 80ամեակի տօնակատարութեան: Սկաուտական խումբերը կը մասնակցին նաեւ յունական եւ ազգային տօներու առթիւ կազմակերպուած տողանցքներուն եւ եկեղեցական տօնախմբութիւններուն: 25 Մարտ 1993ի տողանցքին կը հետեւի մասնաճիւղին սկաուտական նորակառոյց ակումբին բացման արարողութիւնը եւ երգման արարողութիւնը -[Ծ/136.16]:

1992-94 տարիներու սկաուտական բաժնի մուտքերու եւ ելքերու գումարները գրեթէ համահաւասար են՝ շուրջ մէկ միլիոն տրախմի:

1997-98 տարիներուն համար Ծնողական Խորհուրդի անդամուհիներ կը նշանակուին Սիլվա Եգեկէլեան, Վեհանուշ Մանիկեան, Ռիթա Յակոբեան, Ռոզիթա Փոսթաճեան եւ Մարի Աբիկեան: Տարեշրջանը կը բոլորուի ընթացիկ բոլոր ձեռնարկներու յաջող իրականացումով: Կազմը կը բարեզարդէ իր նստավայրը եւ վրաններ կ'ապահովէ բանակումներուն ծառայելու



Փիրեայի 2003ի եղանակի ախոյեան Գոքիմիոյ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի խումբը

համար: 1999ին սկաուտական անդամներուն թիւը կը բարձրանայ 93ի:

2000ին, մասնաճիւղին սկաուտ խմբապետն է Պետրոս Միքայէլեան: 27 Յուլիսին մասնաճիւղը կը կազմակերպէ իր ամառնային բանակումը՝ Սալամինա կղզիի Քանաքիա ափունքին: Փակման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 23 Յուլիսին -[Ծ/219.36]:



Յունաստանի շրջանային Սկաուտական Խորհուրդի, Աորընճայ եւ Բ. կարգի քննութիւններու առթիւ կազմակերպուած բանակում, 2 Ապրիլ 2005

Հրապարակային

Մասնաճիւղին աւանդական գործունէութիւններէն է Ապրիլ 24ի յուշավագքի մասնակցութիւնը: Մասնաճիւղին տնտեսական ապահովման համար կը կազմակերպուին ճաշերոյթներ եւ պարահանդէսներ: 15 Փետրուար 2000ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 75ամեակը, մասնաճիւղին «Ձաւարեան» կեդրոնի Ձաքարեան-Սարաճեան սրահներուն մէջ, հովանաւորութեամբ Յունաստանի արտաքին գործոց փոխ նախարար Ղրիգորիս Նիոթիսի -[Ծ/213.23]:


ԹԵՍԱՂՈՆԻԿԷ - ՍԵԼԱՆԻԿ

5 Օգոստոս 1991ին Սելանիկի Հ.Մ.Ը.Մ.ի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր

վարչական կազմ.- ատենապետ՝ Էտվին Ջամպաքեան, փոխ ատենապետուհի՝ Եղիս Գրիգորեան, ատենադպրուհի՝ Անժէլ Փափազեան, մարզական պատասխանատուներ՝ Միքայէլ Պասմաճեան եւ Խ. Սվազլեան, պատմինթրնի պատասխանատու՝ Ստեփան Բարթէմեան:

Մասնաճիւղին մարզական գործունէութիւնը կը կեդրոնանայ պասքէթպոլի եւ պատմինթրնի կիրարկման վրայ: Պասքէթպոլի Ա. կազմը կը մասնակցի տեղւոյն Ֆետերասիոնի Գ. դասակարգի ախոյեանութեան մրցաշարքերուն:

17 Ապրիլ 1992ին մասնաճիւղին պատմինթրնի նորակազմ խումբի 8 մարզիկներ մաս կը կազմեն Յունաստանի ազգային հաւաքականին, Ռումանիոյ Կալաց քաղաքի մէջ տեղի ունեցող պատմինթրնի Պալքանեան եւ միջազգային մրցաշարքին: Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներն են՝



Յունաստանի 49րդ Ծրջանային Ներկայացուցչական ժողովի խմբանկար

Արթին Փափազեան, Միհրան Փափազեան, Հայկ Պասմաճեան, Նաթալի Սրապոնեան, Յովիկ Գասպեան եւ Լիտա Զամպաքճեան, մարզիչ՝ Ստեփան Բարթէմեան, որոնց շնորհիւ յունական հաւաքականը կը գրաւէ մրցաշարքին երրորդ դիրքը:

1995-96 եղանակին պասքեթպոլի Ա. եւ Բ. կազմերը ախոյեանութեան մրցաշարքերուն 14 խումբերու շարքին կը գրաւեն 9րդ դիրքը:

1996 տարուան վարչութեան կ'անդամակցին ատենապետութեամբ՝ Մարո Մաքսուտեանի, Եղիս Գրիգորեան, Շահէն Պարտիզպանեան, Վասիլիքի Թերզեան, Միքայէլ Պասմաճեան, Խրիսթո Սվազլեան, Լեւոն Գալէնտէրեան, Վիքթոր Թերզեան եւ Կարի Փիւսկիւլեան:

ԳԱՐԷԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Գարէայի մասնաճիւղը գործած է մերթ աշխատունակ, մերթ սառեցուած կացութիւններով: 1992-1994 եղանակներու դադարէն ետք Յունաստանի Շրջանային Սկաուտական Խորհուրդի ջանքերով կրկին հիմը կը դրուի մասնաճիւղի սկաուտական բաժնի գործունէութեան, 1 Հոկտեմբեր 1994ին կայացած պաշտօնական հանդիսութեան մը ընթացքին - [ԽԵ/7.11.1994]:

9 Ապրիլ 1995ին, Գարէայի քաղաքապետութեան օժանդակութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն սկաուտական կազմը կը կատարէ ծառատընկում՝ 1915ի Եղեռնի 80ամեակը նշելու նպատակով - [ԽԵ/12.4.1995]:

Շրջանային Կազմակերպչական եւ Մարզական Գործունէութիւն

3 Յունիս 1990ին ընտրուած Շրջանային Վարչութեան կարեւորագոյն ձեռնարկը եղաւ համաՀ.Մ.Ը.Մ.ական 4րդ Ընդհանուր Բանակումի կազմակերպումը: Շրջանային Վարչութիւնը 1991-1992 երկամեայ գործունէութեան ընթացքին կազմակերպած է նաեւ Հայ Սկաուտի Օր,

Վարդանանցի ոգեկոչում՝ 13 Փետրուար 1991ին եւ 18 Մարտ 1992ին, Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումներ եւ յուշավազքեր՝ 21 Ապրիլ 1991ին եւ 12 Ապրիլ 1992ին:

17 Մարտ 1991ին Շրջանի երեք մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ Շրջանային Ներկայացուցչական Ժողով, ընտրելու համար Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակցելիք պատգամաւորները:

30 եւ 31 Մայիս 1992ին Շրջանի երեք մասնաճիւղերու ներկայացուցիչներուն մասնակցութեամբ տեղի կ'ունենայ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի 51րդ Ներկայացուցչական Ժողովը, որուն աւարտին երկամեայ գործունէութեան համար ընտրուեցաւ հինգ անդամներէ բաղկացած վարչական կազմ: Սակայն այս կազմի երեք անդամներու հրաժարումին պատճառով Յունիսին տեղի կ'ունենայ եօթնամեայ կազմի մը ընտրութիւնը, որուն մաս կը կազմեն՝ ատենապետ՝ Կարո Յովակիմեան, փոխ ատենապետ՝ Օննիկ Հարոնեան, ատենադպիր՝ Սերգօ Մինասեան, գանձապահ՝ Սերոբ Սերոբեան, խորհրդականներ՝ Մինաս Աղամեան, Յակոբ Եթիմեան, Յարութիւն Մխիկեան:

Այս կազմի գլխաւոր իրականացումները պիտի ըլլային Յունաստանի Շրջանի ներքին կանոնագրի նախագիծի պատրաստութիւն, պասքեթպոլի մրցաշարքի կազմակերպում եւ անոր եկամուտին՝ 2.5 միլիոն տրախմիի յատկացումը Կիւմրիի աղէտեալ շրջանին մէջ մարզարանի մը շինութեան, համաՀ.Մ.Ը.Մ.ական 4րդ Ընդհանուր Բանակումի կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարժման 80ամեակի, Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 70ամեակի եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակի նշումներ, Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի շրջանին մէջ սկաուտական սեմինարի կազմակերպում, Կեդրոնական Վարչութեան թելադրանքով:

15 Մայիս 1994ին 52րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, մասնակցութեամբ հետեւեալ անդամներ-



Գոքիհիոյ մասնաճիւղի վոլիպոլի կրտսերներու խումբը. ոտքի՝ Կարպիս Արապեան, Անդրանիկ Գարամանեան, Ադամ Չալըքեան, Գարլօ Հելվանեան, մարզիչ Խրիսթօ Ռումեան: Ծուկի՝ Վարդգէս Չարուքեան, Ալեքսան Հելվանեան, Կարէն Աղանեան, Արմէն Աղանեան եւ Գոսթաս Աքսիորթիս

րուն՝ Կարօ Յովակիմեան, Յակոբ Եթիմեան, Պերճ Գիգիրեան, Յարուսթիկ Մխիկեան եւ Կարօ Մինասեան:

27 եւ 28 Մայիս 1995ին Շրջանային Վարչութիւնը Մայիսեան ելոյթներու շարքին կը կազմակերպէ միջմասնաճիւղային Ֆուտպոլի եւ պասքեթպոլի մրցաշարքեր, որոնց իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կազմը - [Ծ/159.30]:

1996 տարեշրջանի Շրջանային Վարչութեան անդամներն են, ատենապետ՝ Պերճ Գիգիրեան, փոխ ատենապետ՝ Հայկազ Տէօքմէճեան, ատենադպրուհի՝ Վերգին Բալուլեան, գանձապահ՝ Պաղտիկ Գարապաճաքեան, խորհրդականներ՝ Վարուժան Չաքմաքճեան, Սերոբ Սերոբեան եւ

Պողոս Չոլաքեան:

1999ին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը Փարիզի մէջ կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պասքեթպոլի մրցաշարքին:

1999 եւ 2000 տարիներուն Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ աւանդական Ապրիլեան յուշավազքերը, մասնակցութեամբ հայ եւ յոյն մարզիկներու:

25 Յունիս 2000ին կը գումարուի Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի 57րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը, նախագահութեամբ Յակոբ Պետոյեանի եւ Ազարիկ Եորդանճեանի, քարտուղարներ՝ Սերգօ Գաբրիելեան եւ Յովհաննէս Ղազարեան: Ժողովին կը մասնակցին Աթէնքի եւ Գոքիհիոյ մասնաճիւղերու ներկայացուցիչները,

կը բացակային Սելանիկի մասնաճիւղի ներկայացուցիչները: Յետ ընթացաւարտ Շրջանային Վարչութեան գործունէութեան քննարկումին, ժողովէն կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութեան կազմ.- ատենապետ՝ Կարօ Յովակիմեան, ատենադպիր՝ Պօղոս Չոլաքեան, գանձապահ՝ Ազարիկ Եորղանճեան, խորհրդականներ՝ Կարպիս Ճանիկեան եւ Յովհաննէս Մանկոյեան:

14 Յունիս 2002ին տեղի կ'ունենայ Շրջանի 58րդ Ներկայացուցչական ժողովը, մասնակցութեամբ Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու ներկայացուցիչներուն: Ժողովական ընթացիկ աշխատանքներու աւարտին կ'ընտրուի նոր Շրջանային վարչական կազմ.- ատենապետ՝ Պօղոս Չոլաքեան, ատենադպրուհի՝ Վերգին Բալուլեան, գանձապահ՝ Ազարիկ Եորղանճեան, խորհրդականներ՝ Կարպիս Ճանիկեան եւ Յարութիւն Խաչատուրեան:

5 Յունիս 2004ին Շրջանի 60րդ Ներկայացուցչական ժողովէն կ'ընտրուի նոր վարչական կազմ՝ ատենապետ՝ Յակոբ Եթիմեան, ատենադպիր՝ Յակոբ Պետոյեան, գանձապահ՝ Սերգօ Արապեան, խորհրդականներ՝ Յարութիւն Խաչատուրեան եւ Ազարիկ Եորղանճեան: Այս կազմին գլխա-



Գոքինիոյ Հ.Մ.Ը.Մ.ի 2003 տարուան վոլիպոլի կրտսերներու խումբը

ւոր իրականացումը կ'ըլլայ համաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ Խաղերու կազմակերպումը Աթէնքի մէջ, 24էն 30 Յունիս 2005ին - [Ծ/276.9-38]:

4 Յունիս 2006ին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի 62րդ Ներկայացուցչական ժողովը կ'ընտրէ նոր Շրջանային վարչական կազմ.- ատենապետ՝ Պօղոս Չոլաքեան, փոխ ատենապետ՝ Կարպիս Ճանիկեան, ատենադպիր՝ Վերոնիք Քիւրքճեան, գանձապահ՝ Արա Պատեւեան, խորհրդական՝ Վահան Քէօսէեան: Տարեշրջանի ընթացքին կազմէն կը հրաժարի Վերոնիք Քիւրքճեան, կազմին կը միանան Վերգին Բալուլեան, Ազնէս Թոքաթլեան եւ Յովհաննէս Մանկոյեան:

Շրջանային Սկաուտական Գործունէութիւն

24 Յունուար 1993ի միջմասնաճիւղային արշաւի եւ կարկանդակի հաւաքոյթներէն ետք, Շրջանային սկաուտ. խմբապետութեան ծրագրած միջմասնաճիւղային 4րդ բանակումը տեղի կ'ունենայ 16-26 Յունիս 1993ին, Այ Անտրէայի սկաուտական բանակավայրին մէջ, մասնակցութեամբ Աթէնք-Ֆիքսի, Գոքինիոյ 70 սկաուտներու եւ Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Սոֆիայի եւ Փլովտիվի մասնաճիւղէրէն 10 արի-արենոյշներու պատուիրակութեան մը:

Բանակումը նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակին եւ Յունաստանի Շրջանի հիմնադրութեան 70ամեակին: Բանակումին ընդհանուր պատասխանատուն էր Արմէն Մանուկեան-[Ծ/138.11]:

28-29 Յունուար եւ 18-20 Փետրուար 1994ին տեղի կ'ունենան Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպած դպրոց-բանակումները Նէա Մաքրիի հեյլէն արենուչական բանակավայրին մէջ-[ԽԵ/4.3.1994]: 20 Մարտին Հայ Սկաուտի Օրուան առթիւ Գոքինիոյ «Չաւարեան» աղումբին մէջ կայացած հաւաքին 16 աստիճանաւորները կը ստանան իրենց աստիճանները-[ԽԵ/26.3.1994]: Շրջանի սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է՝ Ֆիքս՝ 60, Գոքինիա՝ 130, Գարէա՝ 20:

21-31 Յունիս 1995ին միջմասնաճիւղային 5րդ

բանակումը տեղի կ'ունենայ Այա Մարինայի արենուչական բանակավայրին մէջ - [Ծ/161.24]:

25 Յուլիսէն 2 Օգոստոս 1998ին տեղի կ'ունենայ միջմասնաճիւղային ընդհանուր բանակում՝ Այ Անտրէայի սկաուտական բանակավայրին մէջ, ընդհանուր խմբապետութեամբ Ազարիկ Եորդանճեանի եւ մասնակցութեամբ 45 արիարենոյշներու: Նոյն տարուան Յուլիսի 12էն 21ին Շրջանէն 3 սկաուտներէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ բանակումին Աղաւնաձորի մէջ, Հայաստան:

Հրապարակային

Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ աւանդական կարգ մը ձեռնարկներ կը կրկնուին իւրաքանչիւր տարի: Այս կարգի նախաձեռնութիւններէն է Վարդանանց տօնի յիշատակումը:

1991ին այս ձեռնարկը տեղի կ'ունենայ «Աթենայիք» թատերասրահին մէջ: Օրուան բանախօսն է Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամ տոքթ. Յարութիւն Գազանճեան (Գեղարդ):

Հրապարակային աւանդական ձեռնարկներէն է նաեւ Ապրիլեան Յուշավագքը, նուիրուած 1915ի Հայոց Եղեռնի յիշատակութեան: Յուշավագքը տեղի կ'ունենայ ամէն տարի, Նէա Զմիռնիի յուշակոթողէն մեկնումով եւ վերադարձով նոյն վայրը: Հայ եւ յոյն մեծաթիւ մարզիկներ կը մասնակցին այս յուշավագքերուն: 21 Ապրիլ 1991ին տեղի կ'ունենայ Ապրիլեան Յուշավագքի 6րդ ելոյթը մասնակցութեամբ, 156 զանազան տարիքի եւ երկու սեռերու մարզիկներու: Եղեռնի 77րդ տարեդարձին առթիւ 12 Ապրիլ 1992ին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները Աթէնքի Գարէայի շրջանին մէջ կը կատարեն ծառատընկում, տեղւոյն քաղաքապետին հովանաւորութեամբ - [Ծ/125.34]:

Հայ Սկաուտի Օրուան նշումներուն, որոնք կը զուգադիպին Վարդանանցի յիշատակութեան օրուան, հրապարակային այս շքեղ հան-

դիսութեանց ներկայ կը գտնուին Աթէնքի հայութեան բոլոր պաշտօնական եւ համայնքային ներկայացուցիչները: 1992ի տօնակատարութիւնը տեղի կ'ունենայ Աթէնքի քաղաքապետութեան կեդրոնի թատերասրահին մէջ, ներկայութեամբ 500 հանդիսականներու - [Ծ/124.26]:

1993ին կը նշուի հայ սկաուտիզմի 80ամեակի եւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտիզմի 70ամեակին նուիրուած հանդիսութիւն՝ Աթէնքի պատերազմական թանգարանի սրահին մէջ - [ԽԵ/5, 8, 10 եւ 11.3.1993]:

14 Նոյեմբեր 1993ին կը նշուի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը - [ԽԵ/13, 15 եւ 16.11.1993]:

28 Հոկտեմբեր 1995ին Այ Նիքոլա եկեղեցւոյ մէջ գոհաբանական արարողութենէն ետք Ֆիքսի եւ Գոքինիոյ մասնաճիւղերը կը մասնակցին Յունաստանի ազգային տօնին առթիւ կազմակերպուած տողանցքին - [Ծ/162.47]:

Արամ Ա. Կաթողիկոսի Յունաստանի թեմին տուած հովուապետական այցելութեան առթիւ, 15 Փետրուար 1996ին, Աթէնքի Ազգային Առաջնորդարանի սրահին մէջ յատուկ հանդիսութեամբ, Յունաստանի սկաուտական կեդրոնը «Փիւնիկ» բարձրագոյն շքանշանով կը պարգեւատրէ Վեհափառ Հայրապետը: Հովուապետական այս այցելութեան բոլոր հանգրուաններուն Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերը կը բերեն իրենց պաշտօնական մասնակցութիւնը - [Ծ/166.26]:

Իւրաքանչիւր տարի Շրջանային Վարչութիւնը կազմակերպած է 25 Մարտի յոյն ազգային տօնին առթիւ սկաուտական տողանցք:

23 Մարտ 1997ին Աթէնքի Զինուորական Թանգարանի հանդիսասրահին մէջ Յունաստանի Շրջանային Վարչութիւնը մեծ շուքով կը տօնէ սկաուտական համաշխարհային շարժման 90րդ, հայ սկաուտութեան հիմնադրութեան 85րդ եւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան հիմնադրութեան 75րդ տարեդարձները: Այս առթիւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց եւ

Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետները, ինչպէս նաեւ Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեան յատուկ պատգամներ կ'ուղարկեն Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան - [Ծ/178.6-19]:

9 Մայիս 1999ին Շրջանային Վարչութիւնը, գործակցութեամբ Գոքինիոյ քաղաքապետութեան, կը կազմակերպէ Ապրիլեան Յուշավազք, մասնակցութեամբ յոյն եւ հայ 174 մարզիկներու - [Ծ/204.37]:

1999 եւ 2000 տարեշրջաններուն, Շրջանային Վարչութիւնը կը հիւրընկալէ Հայաստանի մշակոյթի նախարար Ռոլանտ Շառոյեանը եւ Հայաստանի մարզական փոխ նախարար Իշխան Զաքարեանը, Յունաստան տրուած իրենց այցելութեանց առիթով: Շրջանային Վարչութիւնը կը հիւրասիրէ Յունաստանի մօտ Հայաստանի դեսպան Արմէն Պետրոսեանը:

Համաձայն 56րդ Ներկայացուցչական Ժողովի որոշումին Շրջանային Վարչութիւնը 10.000

ամերիկեան տոլար կը յատկացնէ Երեւանի մէջ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնատեղիի գնման համար:

13 Մայիս 2002ին, «Համահայկական Մարզախաղերու Օր»ուան առթիւ Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ Աթէնքի եւ Գոքինիոյ փոքրերու, պատանիներու եւ երէցներու խումբերուն միջեւ բաժակի մրցումներ, հովանաւորութեամբ Աթէնքի մօտ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեանի - [Ծ/239.35]:

2 Փետրուար 2003ին, Շրջանային Վարչութիւնը մեծաշուք հանդիսութեամբ կը տօնէ հայ սկսողութեան 90ամեակի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 85ամեակի եւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակի տարեդարձները: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան ատենապետ Բիւզանդ Թորիկեան Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» Շքանշանով եւ «Արտակարգ» պատուանշանով կը պարգեւատրէ Շրջանի վեթերան եօթը անդամներ - [Ծ/248.24]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Լ Ի Ք Ա Ն Ա Ն

- ՊԷՅՐՈՒԹ
- ԶԱՀԼԷ
- ԹՐԻՓՈԼԻ
- ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ
- ԱՅՆՃԱՐ
- ՃԻԻՆԻ
- ԱՆԹԻԼԻԱՍ
- ԺԸՏԷՅՏԷ
- ՊԱԹՐՈՒՆ
- ՊԱՈՒՇՐՅԻԷ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՊԵՅՐՈՒԹ

Կազմակերպչական Գործունեություն

1991-92 տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի Պէջրութի մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Վարուժան Պէքերէճեան, փոխ ատենապետ՝ Գրիգորիս Պողարեան, ատենադպրուհի՝ Սօսի Մալխասազալեան, գանձապահ՝ Նազո Հապիպեան, հաշուապահներ՝ Յակոբ Գըլպաչեան եւ Վիգէն Գարալէքեան, խորհրդականներ՝ Վիգէն Սարգիսեան, Ալէքս Աճէմեան, Տարօն Միսաքեան, Յովհաննէս Ծատուրեան եւ Միհրան Այանեան: Տարեշրջանի ընթացքին, խորհրդական չորս անդամներու հրաժարման պատճառով Վարդգէս Ծատուրեան կը հրաւիրուի վարչութեան անդամակցութեան:

Վարչական այս կազմին եւ յաջորդող բոլոր կազմերուն օժանդակած են հետեւեալ յանձնախումբերը.- Սկաուտական Խորհուրդ, Փութպուլի, պասքեթպուլի, փինկփոնկի, հեծիկի, ալոմբի, տնտեսական եւ ընկերային:

1992-93 տարեշրջաններուն վարչութեան ատենապետութիւնը յաջորդաբար կը վարեն Գրիգորիս Պողարեան եւ Պետիկ Լօճիկեան, վարչական կազմերուն կ'անդամակցին Գօգօ Նալպանտեան, Մաքօ Ունճեան, Արա Խաչատուրեան, Անդիկ Մալխասազալեան, Լեւոն Սոմոքեան, Վարդգէս Ծատուրեան, Սահակ Գաբրիէլեան, Միհրան Այանեան, Բարունակ Բարունակեան, Լենա Պաթմանեան, Նազօ Հապիպեան, Համբիկ Միսաքեան, Կարպիս Պալեան եւ Աբիկ Տանակէօզեան, վերջինս փոխարինւած Վիգէն Սարգիսեանով: Այս կազմը կը նախաձեռնէ մարմնամարզի նոր ճիւղի կիրարկման պատրաստութեան, յատուկ սրահի եւ գոյքերու ապահովումով: Կը կազմակերպէ ճաշկերոյթ-պարահանդէս, վիճակահանութիւն եւ խրախճանք՝ Նշան Փալանճեան Ճեմարանի բակին մէջ:

1993-94 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան ղեկանի կազմը կը մնայ նոյնը, խորհրդական անդամներն են Խաչիկ Պարսումեան, Սա-

հակ Գաբրիէլեան, Նազօ Հապիպեան, Միհրան Այանեան եւ Ասատուր Սրապեան: 6 Մարտ 1994ին տեղի կ'ունենայ մասնաճիւղին վերանորոգուած ալոմբի բացման հանդիսութիւնը, ներկայութեամբ լիբանանեան ողիմպիական կոմիտէի, սկաուտական եւ մարզական Ֆետերասիոններու ներկայացուցիչներուն, Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեանց ներկայացուցիչներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ական հոծ բազմութեան —[Ծ/147.12]:

Վերոյիշեալ կազմը կը գործէ ութ ամիս, ապա կը փոխարինուի նշանակովի վարչական նոր կազմով՝ ատենապետութեամբ Գօգօ Նալպանտեանի:

13 Նոյեմբեր 1994ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Նազօ Հապիպեան, փոխ ատենապետ՝ Գօգօ Նալպանտեան, ատենադպրուհի՝ Մաքօ Ունճեան, գանձապահ՝ Խաչիկ Պարսումեան, խորհրդականներ՝ Վաչէ Տէմիրճեան, Յովհաննէս Ծատուրեան, Ասատուր Սրապեան, Արա Խաչատուրեան եւ Միհրան Այանեան:

1995-96 տարեշրջանին վարչական կազմը կը մնայ նոյնը բացի Յովհաննէս Ծատուրեանէն եւ Ասատուր Սրապեանէն: Նորընտիր կազմին կ'անդամակցին Անդիկ Մալխասազալեան եւ Լեւոն Սոմոքեան: Տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է, մուտք՝ 8.100.000 լ.ո., ելք՝ 9.600.000 լ.ո.:

1996-97 տարեշրջանին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Վարդգէս Հայրապետեան, փոխ ատենապետ՝ Գօգօ Նալպանտեան, ատենադպրուհի՝ Մակի Խաչերեան, գանձապահ՝ Նազօ Հապիպեան, խորհրդականներ՝ Անդիկ Մալխասազալեան, Յովիկ Խոստեղեան, Կարօ Տէմիրճեան, Վահէ Զամիչեան եւ Կիրակոս Գարակէօզեան:

1997 Սեպտեմբերին ընտրուած վարչութեան մաս կը կազմեն, ատենապետութեամբ Վարդգէս Հայրապետեանի, Մաքօ Ունճեան, Գօգօ Նալպանտեան, Անդիկ Մալխասազալեան, Աշոտ

Խանամիրեան, Մհեր Ծատուրեան, Րաֆֆի Թորիկեան, Ջալէն Փանոսեան եւ Լեւոն Սոմոքեան: Այս կազմը կը գործէ մինչեւ 1999ի Փետրուար ամիսը: Կազմակերպչական գլխաւոր աշխատանքը կը հանդիսանայ անդամացանկերու բերեղացումը: 501 անդամներ մաս կը կազմեն մասնաճիւղին: Սկստակաւ կողքին վարչութեան հակակշռին տակ կը գործեն պասքեթպոլի կրտսերներու, ֆութպոլի «Դանիէլ Վարուժան» եւ մարմնամարզի խումբերը: 16ամսեայ նիւթական գործառնութեան գումարը կը բարձրանայ 16 միլիոն լ. ոսկիի եւ 17.000 ամ. տոլարի:

1999ի Մայիսէն 2003ի Փետրուար, մասնաճիւղի վարչական կազմերուն անդամակցած են՝ Գօգօ Նալպանտեան՝ ատենապետ, Մաքօ Ունճեան, Անդիկ Մաւիսազալեան, Անդօ Խաչատուր-

եան, Նազօ Հապիպեան, Րաֆֆի Թորիկեան, Յարութ Գարակէօզեան, Ջալէն Գապասազալեան, Յարութ Ալաճաճեան, Լեւոն Սոմոքեան, Ճորճ Վարդանեան եւ Գարլօ Պէրպէրեան: Մասնաճիւղի բոլոր անդամները՝ մարզիկ, սկստութի օժանդակ կ'ապահովագրուին իրենց միութեան կողմէն:

2003-2004 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն ատենապետ՝ Գարլօ Պէրպէրեան, ատենադպիր՝ Մաքօ Ունճեան, գանձապահ՝ Րաֆֆի Սաղղասարեան, հաշուապահ՝ Րաֆֆի Թորիկեան, խորհրդականներ՝ Ռազմիկ Գարատաղեան (արխիւ), Վահէ Պարսումեան (սկստակաւ), Խորէն Գուլաճեան (ֆութպոլ), Գօգօ Նալպանտեան (ակումբ), Յարութ Ալաճաճեան (ճատրակ եւ քոնկ ֆուլ): Այս կազմին



Պէրպոլի Հ.Մ.Ը.Մ.ի 1997 տարուան «Դանիէլ Վարուժան» ֆութպոլի խումբը

անդամները անձնապէս կ'իրականացնեն ակումբի եւ պասքեթպոլի դաշտի կարգ մը նորոգութիւնները, որոնք ժամանակի ընթացքին անհրաժեշտ դարձած էին:

Մարզական

Ֆուտպոլի ճիւղին մէջ վարչութեան հակակշռին տակ կը գործէ «Դանիէլ Վարուժան» խումբը, դասակարգային երեք ենթաբաժանումներով, մարզիչներ՝ Սահակ Գաբրիէլեան եւ Բարսեղ Թրնաքեան: Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմը միայն անուանական կապ ունի մասանճիւղին հետ՝ զայն ներկայացրնելով յաջա պատկան ֆետերասիոնին: Ֆուտպոլի դասակարգային խումբերը հանդիպումներ կ'ունենան քոյր մասանճիւղերու խումբերուն

դէմ, կը մասնակցին Ֆուտպոլի Շրջանային յանձնախումբի կազմակերպած միջմասանճիւղային մրցաշարքերուն: 2004ին այս խումբերը կը մարզեն Խորէն Գուլաճեան եւ Հայդուկ Չէօրէքճեան:

Պասքեթպոլ

Աղջկանց կազմը 1994ին Լիբանանի ախոյեանութեան տիրանալով իր բաժակը կը ստանայ հանրապետութեան նախագահ Իլիաս Հրաուիի ձեռամբ -[Ծ/156.21]: 1995 եւ 1996ին խումբը կը պահէ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսը: 1996ին միջարաբական ախոյեան խումբերու մրցաշարքին կազմը կը գրաւէ 3րդ դիրքը: 1997ին խումբը կ'ապահովէ Լիբանանի ախոյեանութեան իր 44րդ տիտղոսը -[Ծ/184.24]: 1999ին



Պէյրութի մասնաճիւղի պասքեթպոլի աղջկանց Բ. դասակարգի խումբը 2000ին

տղոց Բ. դասակարգի խումբը կը մարզէ նախ Մհեր Ծատուրեան, ապա՝ Հրայր Տիշչէֆենեան եւ Արմէն Արեւեան:

Տարիներու ընթացքին պասքեթպոլի կարեւոր թիւով մարզիկուհիներ մաս կազմած են Լիբանանի ազգային հաւաքականներուն:

Փինկ-փոնկ

Պէյրուսի մասնաճիւղի փինկ-փոնկի մարզիկները կը գործեն շրջանային յանձնախումբի հսկողութեամբ եւ ախոյեանութեանց մասնակցութեամբ:

Յեծելարչաւ

1994ի Լիբանանի ախոյեանութեան մրցումներու աւարտին Պէյրուսի հեծելանկորդները կը խլեն կրտսերներու դասակարգի բաժակները: Մասնաճիւղի հեծելանկորդները կը մարզուին քոյր մասնաճիւղերու մարզիկներուն հետ, հեծելարչաւի շրջանային յանձնախումբի հսկողութեամբ:

Մարմնամարզ

1994ի Յուլիսէն սկսեալ մասնաճիւղի մարզական գործունէութեան վրայ կ'աւելնայ մարմնամարզի ճիւղը: Մարմնամարզի գործիքներով օժտուած սրահը կ'օգտագործեն նաեւ հեծելարչաւի, աթլետիզմի եւ պասքեթպոլի մարզիկները:

Ճատրակ

Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ.ի ճատրակի դասընթացքները սկսած են 2002 տարեշրջանէն սկսեալ եւ տեղի կ'ունենան էշրէֆիէի «Ազատամարտ» ակումբին մէջ, դասատու՝ Գէորգ Կոստանեան: Շուրջ 25 անդամներ կը կիրարկեն այս ճիւղը: 4 Յունուար 2004ին ճատրակի յանձնախումբը կը կազմակերպէ մրցաշարք մը Անթիլիասի եւ Պէյրուսի մասնաճիւղերու մարզիկներուն միջեւ:

Քոնկ ֆու

Մասնաճիւղին մարզական նորագոյն ճիւղը քոնկ ֆուն է, որ կը կիրարկուի փոքր թիւով մարզիկներու կողմէ:



1996 տարուան Լիբանանի ախոյեան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի աղջկանց պասքեթպոլի խումբը



Սրահային պարեր- Danses de salon

Պէյրուսի ազգային սրահին մէջ Շաբաթ օրերը կը կիրարկուի սրահային պարերու ուսուցում: Ոսուցչուհին է Միրեյլա Զաքար:

Սկաուտական

Պէյրուսի Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական ճիւղը կը գործէ չորս միաւորներու բաժանմունքներով: 23-30 Օգոստոս 1992ին մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը կը կայանայ Մար Մուսա գիւղի անտառներուն մէջ: 1993ին մասնաճիւղին սկաուտ խմբապետն է Վազգէն Պէքէրէճեան: 1994ին մասնաճիւղէն 13 արեւոյշներ կը

մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական Դ. ընդհանուր բանակումին:

1998-99 տարեշրջանին կը վերակազմուի Ե. միաւորը Հայաշէն թաղամասին մէջ: 1999ի սկիզբը կը կազմուի մասնաճիւղի երէց սկաուտներու փաղանգը:

14 Յունուար 2001ին մասնաճիւղի 15 խմբապետ-խմբապետուհիներ կը մասնակցին մասնագիտական սեմինարներու եւ իրենց կարգին մասնաճիւղէն 35 սկաուտներ կը պատրաստեն Ա. կարգի քննութիւններ — [Ծ/224.36]:

2003ը ընթացիկ հաւաքոյթներու կողքին բացառիկ գործունէութեան եղանակ մը կը հանդիսանայ. Բարեկենդանի տօնակատարութիւն,

ձիւնագնացութիւն, այցելութիւններ՝ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրատուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի թանգարան:

Եղանակի փակումը տեղի կ'ունենայ 5 Յունիս 2003ին պաշտօնական հանդիսութեամբ - [Մ/253.31]:

2003-2004 տարեշրջանի սկաուտական գործունէութեան վերամուտի հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Պաղտատի մասնաճիւղէն պատուիրակութիւն մը, որ այդ օրերուն Լիբանան կը գտնուէր Կեդրոնական Վարչութեան հրաւերով: 30 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 2004 մասնաճիւղին տարեկան ընդհ. բանակումը կը կայանայ Խալէ գիւղի Շերվուտ բանակավայրին մէջ, մասնակցութեամբ 106 սկաուտներու:

Երէջներու եւ պարմանուհիներու եռօրեայ արշաւ-բանակումը տեղի կ'ունենայ 29 Ապրիլ - 1 Մայիս 2005ին - [Մ/ 273.26]:

Ընկերային, Ազգային, Զրապարակային

Մասնաճիւղի բոլոր վարչական կազմերուն գործակցած են ընկերային յատուկ յանձնախումբեր, որոնք գլխաւորաբար ակումբէն ներս եւ պարագայաբար այլ վայրերու մէջ ընկերային զանազան ձեռնարկներ (խրախճանք, պտոյտ, հանգրուանային արշաւ եւ այլք) կազմակերպելով արձանագրած են նիւթական եւ բարոյական յաջողութիւններ:

2 Յունիս 1994ին մասնաճիւղը ճաշկերոյթ-պարահանդէսով կը նշէ իր հիմնադրութեան 70ամեակը:

14 Նոյեմբեր 1999ին, Համազգայինի Ն. Փալանճեան Ճեմարանի Վասպուրական սրահին մէջ մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 75ամեակը, հովանաւորութեամբ Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ նախագահութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Գեղամ Մայրազոյն Վարդապետ Խաչերեանի: Ներկայ կը գտնուին Լիբանանի մարզական եւ երիտասարդական նախարարութեան ընդհանուր տնօրէն Զէյտ Խիամի, մարզական եւ սկաուտա-

կան Ֆետերասիոններու ներկայացուցիչներ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու հոծ բազմութիւն մը - [Մ/210.22]:

75ամեակի ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի կ'ունենայ 15 Յունուար 2000ին: Այս առթիւ Կեդրոնական Վարչութիւնը «Արժանեաց» Շքանշանով կը պարգեւատրէ մասնաճիւղի երկարամեայ վարչական, վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական Ժիրայր Խաչատուրեանը - [Մ/212.33]:

Զահլէ

Մինչեւ 1990 թուական, Զահլէի մասնաճիւղը կը գործէ բնականոն ընթացքով: 1991էն սկսեալ մասնաճիւղի գործունէութիւնը կը կեդրոնանայ սկաուտական բաժինին վրայ:

Սակայն շուտով սկաուտական բաժինը եւս կը կաղայ եւ մասնաճիւղին գործունէութիւնը ամլութեան կը մատնուի: 1995էն սկսեալ մասնաճիւղը կը դադրի գործելէ:

Թրիփոլի

Հ.Մ.Ը.Մ.ի Թրիփոլի մասնաճիւղը կը շարունակէ իր միութենական գործունէութիւնը, հիւսիսային Լիբանանի մէջ մարզական շարժման առաջնորդողի առաքելութեամբ:

1993ին մասնաճիւղի վարչութեան անդամներն են, ատենապետ՝ Միքայէլ Յարութիւնեան, փոխ ատենապետ՝ Ղազար Ազատեան, ատենադպրուհի՝ Սօսի Նաճարեան, գանձապահ՝ Ժագ Ռըստիկեան, խորհրդականներ՝ Ժիրայր Մանօ Խաչերեան եւ Էտմոն Մազմանեան: Մասնաճիւղը կը կիրարկէ պասքեթպոլ, փինկփոնկ եւ հեծելաշաւ, ինչպէս նաեւ սկաուտութիւն:

4էն 11 Սեպտեմբեր 1994ին մասնաճիւղին սկաուտական շարքերը իրենց տարեկան բանակումը կը կատարեն Այն Աքրին գիւղին մէջ: Բանակումը կը փակուի խարուկահանդէսով - [Մ/154.15]:

45-ն 12 Օգոստոս 1996ին, սկսողական շարքերէն 22 բանակողներ Ուատի Աննուպինի Հատտէթ գիւղին մէջ կը կատարեն իրենց տարեկան բանակումը: Փակման խարուկահանդէսի ընթացքին 4 սկսողներ կու տան իրենց երդումը – [Մ/172.32]:

1996ի տարեկան բանակումը տեղի կ'ունենայ Քուրայի շրջանի Նահր էլ Ճոզ գետի ափին, մասնակցութեամբ 20 սկսողներու, խմբապետութեամբ Մանօ Սրապոնեանի, փոխ խմբապետ՝ Բաֆֆի Սահակեան:

1998ին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ Յովսէփ Քէչիչեանի, Սիլվա Պօղոսեան, Եղիա Սրապոնեան, Բաֆֆի Նալպանտեան, Հրանդ Առաքելեան, Թինա Թովմասեան եւ Թալին Սրապոնեան: Այս տարեշրջանին կը կատարուի նորոգուած ակումբի բացումը: Պասքեթպոլի ճիւղը ունի տղոց եւ աղջկանց երկուքական խումբ: Ընկերային յանձնախումբը կը կազմակերպէ Մայրերու Օրուան տօնակատարութիւն եւ անդամական խրախմանքներ:

1999էն մինչեւ 2004 վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Հրանդ Առաքելեան: Յաջորդական կազմերուն կ'անդամակցին Եղիա Սրապոնեան, Ալին Խուրի, Միհրան Սահակեան, Պերճ Ալպարեան, Արլին Առաքելեան, Էտմոն Մազմանեան, Մանուէլ Սրապոնեան, Աւետիս Իսկէնեան, Լենա Ատանալեան, Գրիգոր Յարութիւնեան, Արմիկ Տէր Սարգիսեան եւ Ռոժէ Խուրի:

1999ին անդամական ցանկի գտումներէն ի յայտ կու գայ որ մասնաճիւղը ունի 52 անդամներ: Սկսողական շարժումը որ տկարացած էր, նոր թափով կը վերսկսի գործունէութեան, 25 սկսողներու մասնակցութեամբ: Կը կազմակերպուին զոյգ բանակումներ, Պըքֆին՝ 24 Յուլիսին եւ Քաֆթուն՝ 29 Օգոստոսին: Պասքեթպոլի ճիւղը ունի տղոց 3 եւ աղջկանց մէկ խումբեր: Աղջկանց խումբը կը տիրանայ իր դա-

սակարգի միջմասնաճիւղային մրցաշարքի ախոյեանութեան: 13 եւ 14 Հոկտեմբեր 1999ին մասնաճիւղը կը կազմակերպէ սթրիթ պոլի մրցաշարք՝ հիւսիսային Լիբանանի խումբերուն միջեւ: Մասնաճիւղին տարեկան նիւթական գործունէութեան գումարն է 4.265.000 Լ. ոսկի:

2000ին, մասնաճիւղը, ամբողջացնելէ ետք կը թական նախարարութեան սահմանած պայմանները, կը վերանորոգէ պասքեթպոլի, փինկփոնկի եւ հեծելարշաւի կիրարկման իր արտօնագրերը: Փինկփոնկի խումբի 7 մարզիկները կ'ապահովեն Հիւսիսային Լիբանանի ախոյեանութեան Բ. դիրքը: Սկսողական ճիւղը կրկին տազնապի մէջ է:

2001ին սկսողական ճիւղը վերակենդանացնելու նպատակով Պէյրութէն կը հրաւիրուի խմբապետ Կարօ Թերզեան: Փինկփոնկի խումբը կը յաջողի ապահովել Լիբանանի բաժակի մրցաշարքի Հիւսիսային Լիբանանի ախոյեանութիւնը: Պասքեթպոլի խումբերը կը մասնակցին միջմասնաճիւղային եւ Ֆետերասիոնի կազմակերպած մրցաշարքերուն: Մարի Սրապոնեան կը վկայուի Ֆետերասիոնի կազմակերպած պասքեթպոլի մարզիչներու դասընթացէն:

12 եւ 13 Մայիս 2001ին մասնաճիւղը կը կազմակերպէ սթրիթ պոլի տարեկան երրորդ մրցանքը, մասնակցութեամբ 54 երկսեռ խումբերու, Նուպարեան-Խրիմեան Ազգային վարժարանի շրջափակին մէջ:

2004ին Թրիփոլի մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն, ատենապետութեամբ՝ Հրանդ Առաքելեանի, Լենա Ատանալեան, Առլէն Առաքելեան, Ռոժէ Խուրի, Եղիա Սրապոնեան, Գրիգոր Յարութիւնեան եւ Արմիկ Տէր Սարգիսեան:

Պուրճ Յանուտ

1991-1992 տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ

Համուտի մասնաճիւղը կը թեւակոխէ Լիբանանի յետ-պատերազմեան ժամանակաշրջան: Հետզհետէ մասնաճիւղի մարզական եւ սկստական ճիւղերը կը վերագտնեն իրենց երբեմնի կենսունակութիւնը: Նոր ուժեր կու գան ստուարացնել շարքերը: Անդամներու ընդհանուր թիւն է 665: Վարչութեան ատենապետն է Հայկ Աշգարեան:

14 Մարտ 1992ին ընտրուած վարչական կազմին կ'անդամակցին Սարգիս Սաղրեան, Անթուան Գազէզեան, Վրէժ Աբրահամեան, Վարուժ Գալայճեան, Կարպիս Համամճեան, Սալբի Մելքոնեան, Զատիկ Այնթապլեան, Գաբրիէլ Արզումանեան եւ Զոհրապ Մարգարեան:

Մասնաճիւղը կը մշակէ սկստուտութիւն,

ֆուլթպոլ, պասքեթպոլ, փինկփոնկ, հեծելարշաւ եւ աթլետիզմ: Իւրաքանչիւր ճիւղ կը գործէ յատուկ յանձնախումբի մը հսկողութեամբ, բացի աթլետիզմէն, ուր մասնաճիւղի մարզիկները մաս կը կազմեն Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբին: Վարչութեան կը գործակցին նաեւ ընկերային եւ ակումբի բարեգարգման յանձնախումբեր:

1993էն 1995 տարեշրջաններուն վարչական յաջորդական կազմերուն մասնակցած են, ատենապետութեամբ Կարպիս Համամճեանի եւ Հրայր Ֆերմանեանի, Սալբի Մելքոնեան, Կարօ Բարսեղեան, Անթուան Գազէզեան, Գօգօ Չիֆճեան, Վրէժ Աբրահամեան, Զոհրապ Մարգարեան, Րաֆֆի Գապաքեան, Ռազմիկ Ոսկերիչեան, Աբ-



Պուրճ Համուտի մասնաճիւղի 1995 տարուան վարչական եւ սկստական խորհուրդի կազմերը կ'այցելեն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. կաթողիկոսին



Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիղի 1996 տարուան ֆուլթայոլի խումբը

րահամ Մոսիկեան եւ Մինաս Գասարճեան:

1994ի 26 Օգոստոսէն 4 Սեպտեմբեր մասնաճիղը կը կազմակերպէ իր տարեկան բանակումը Պիքֆայա գիւղի Նահասի անտառներուն մէջ – [Ծ/154.12]:

1996էն 1998 տարեշրջաններուն վարչական կազմերուն կ'անդամակցին, ատենապետութեամբ Գրիգոր Քէշիշեանի եւ Ճորճիկ Ռաստկէլէնեանի, Բաֆֆի Շէֆիկեան, Սալբի Մելքոնեան, Անթուան Գազէգեան, Գրիգոր Զիֆճեան, Ռազմիկ Ոսկերիչեան, Մինաս Գասարճեան, Զատիկ Այնթեպլեան, Զոհրապ Մարգարեան, Ծովինար Խաչատուրեան, Պաղտասար Յարութիւնեան, Գրիգոր Մկրտիչեան, Զաւէն Պոյաճեան, Մարալ Տէրտէրեան, Տիգրան Վարդապետեան, Զարեհ Եագուպեան եւ Մանուշակ Գիգիրեան:

11 Փետրուար 1996ին, մասնաճիղը կը տօնէ իր հիմնադրութեան 60ամեակը: Օրուան պատ-

գամը կը փոխանցէ Կեղրոնական Վարչութեան ատենապետ՝ տոքթ. Միսաք Արզումանեան: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» Շքանշանով կը պարգեւատրուին Յովհաննէս Տէր Յարութիւնեան եւ Երուանդ Տէմիրճեան:

1997ին ֆուլթայոլի խումբը կը բարձրանայ Գ. դասակարգ, շնորհիւ մարզիչ եւ մարզիկ Վաչէ Սարգիսեանի ճիգերուն: Խումբը Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբին մարզիկներ տրամադրող գլխաւոր շտեմարանը կը հանդիսանայ: Պասքեթպոլի աղջկանց կազմը կը մասնակցի Լիբանանի Ա. դասակարգի, իսկ տղոց խումբը Բ. դասակարգի ախոյեանութեանց մրցաշարքերուն: Խումբերու մարզիչն է Նշան Սարգիսեան: 178 սկաուտներ կը մասնակցին տարեկան ընդհանուր բանակումներուն, խմբապետութեամբ Յակոբ Զպլաքեանի եւ Սեդա Պէշլեանի, Տէյր Ըլ Հարֆի անտառներուն մէջ:

1999ին, 226 սկաուտներ իրենց բանակումը կը

կատարեն Տէյր էլ Քամարի մէջ: Այս առթիւ Լիբանանի հանրապետութեան նախագահ՝ էմիլ Լահուտ բանակողները կ'ընդունի Պէյթըտինի նախագահական պալատին մէջ – [Ծ/208.3]:

2000 եւ 2001ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Մինաս Գասարճեան, վարչական կազմերուն կ'անդամակցին Յովիկ Ճորճեան, Պաղտասար Յարութիւնեան, Զաւէն Պոյաճեան, Գրիգոր Մկրտիչեան, Լուսին Գազէզեան, Ժիրո Գանթարճեան, Պողոս Մարսէլեան, Ճորճիկ Սալորեան, Շողիկ Խաչատուրեան փոխարինուած Մարգրիտ Նալպանտեանով, Զատիկ Այնթէպլեան, Նուպար Էսկիճեան եւ Յովիկ Խաչատուրեան: Ֆութպոլի խումբը մարզած են Սեպուհ Պապիկեան եւ Սամուէլ Պողոսեան: Զորս տարիքային խումբեր կը կիրարկեն պասքէթպոլ: Սկաուտական բաժինը կը բաղկանայ երեք միա-

ւորներէ: Մասնաճիւղի անդամներու թուական պատկերն է.- սկաուտներ՝ 330, մարզիկներ՝ 120, օժանդակներ՝ 296:

25 Փետրուար 2001ին մասնաճիւղը մեծ շուքով կը տօնէ իր հիմնադրութեան 65ամեակը: Օրուան բանախօսն է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Գառնիկ Մկրտիչեան: Այս առթիւ յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ Լիբանանի առաջնորդ Գեղամ Եպիսկոպոս Խաչերեանին, շնորհաւորական խօսք կ'արտասանէ Նորայր Ծ. Վարդապետ Աշրգեան: Շրջանային Վարչութեան ողջոյնի խօսքը կ'արտասանէ ատենապետ Պետրոս Շեմմեսեան: Յուշատախտակներով կը պարգեւատրուին մասնաճիւղի վեթերան անդամներ Յովհաննէս Պէրպէրեան եւ Նազարէթ Կէլոյեան- [Ծ/225.23]:

2002ի Մարտ 2էն 3 սկաուտական խումբը կը



Պուրճ Համուտի մասնաճիւղի 2003 տարուան ֆութպոլի կազմը

կազմակերպել Լաբլուքի մէջ ձիւնի վրայ բանակում: Մասնաճիւղին սկսողական կազմը, 3-6 Մայիս 2002ին, Պէյրուժի Նահատակաց հրապարակին վրայ կը կազմակերպել «Արկածախնդրական Խաղերու Փառատօն»: 13 սկսողներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ Ընդհանուր Բանակումին, Բիւրականի մէջ:

Մասնաճիւղին պետական արտօնագիրը կը վերանորոգուի 19 Նոյեմբեր 2002ի, թիւ 297862 արտօնագրով:

2003ին ձիւնի վրայ բանակումը տեղի կ'ունենայ 1-2 Մարտին, Ֆաքրայի մէջ: 6 Մայիսին մասնաճիւղին սկսողական կազմը Պէյրուժի նահատակաց հրապարակին վրայ կրկին կը կազմակերպել «Արկածախնդրական Խաղերու Փառատօն»: Աննախընթաց այս խաղերը կ'ունենան

11.000 այցելուներ –[Ծ/238.28]: Ֆուտպոլի խումբը կը մարզեն Տիգրան Նուպարեան, ապա Ստեփան Պաղտասարեան: Վարչութիւնը կը հաստատէ պասքէթպոլի փոքրերու յատուկ դպրոց եւ կը կազմէ փոքրերու ֆուտպոլի խումբ:

2003-2004 տարեշրջանի վարչական կազմին կ'անդամակցին ատենապետ՝ Յովիկ Պիլէմճեան, Նորա Բարսեղեան, Պաղտասար Յարութիւնեան, Ֆէտի Թաթրա, Դրօ Ճանճիկեան, Յովսէփ Տիքիճեան եւ Վիքի Գիգիրեան: 7 Մարտ 2004ին մասնաճիւղը կը կազմակերպել Սկսողի Օրուան տօնակատարութիւն –[Ծ/260.22]:

2004-2005 տարեշրջանի վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի Նորա Բարսեղեանէն, կազմին վրայ կ'աւելնան Սիլվա Պօղոսեան, Ժազ Ղազարեան եւ Յարութ Էգաճեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի պասքէթպոլի աղջկանց կազմը կը բարձրանայ Բ. դասակարգ

13 Հոկտեմբեր 2005ին մասնաճիւղի անդամական ընդհ. ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, մասնակցութեամբ հետեւեալ անդամներուն՝ Յովիկ Պիլէմճեան, Լուսին Գազէզեան, Սիրան Պետրոսեան, Ժազ Ղազարեան, Դրօ Ճանճիկեան, Յովսէփ Տիքիճեան, Հրաչ Պոչնագեան, Հրայր Ֆերմանեան եւ Ներսէս Չիլինկիրեան:

Իւրաքանչիւր տարի Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը նիւթական նպաստներով օժանդակած է մասնաճիւղի գանձին:

1991էն 2006 տարիներուն, յաջորդական Սկաուտական Խորհուրդներուն անդամակցած են Աբրահամ Մոսիկեան, Հրաչ Սէֆէրեան, Իշխան Շահինեան, Մոսիկ Չափարեան, Գրիգոր Քէչիչեան, Յասմիկ Գազէզեան, Արմէն Եագուպեան, Սիլվա Պօղոսեան, Հրաչ Պոչնագեան, Գարօլ Պէշլեան, Սարգիս Մանուկեան, Կարինէ Եսայեան, Ռինա Թաղէոսեան, Համբիկ Միսիրեան, Սօսի Գրիգորեան, Լիւսի Գազէզեան, Աւետիս Տէմիրճեան, Սիլվի Գուլյումճեան, Պէթի Պէշլեան, Թամար Հալէօլեան, Եղիկ Ապաճեան, Աղաւնի Մկրտիչեան, Հուրի Տէր Ղազարեան, Ռուբէն Եթերեան, Արուսեակ Աճէմեան, Լենա Պարսումեան, Լիզա Մարտոյեան, Ժանէթ Տէր Ղազարեան, Տորիս Գարամանուկեան, Րաֆֆի Տօնէրեան, Էլի Թաշճեան, Ներսէս Չիլինկիրեան, Յովիկ Ճորճեան, Աւօ Տէմիրճեան, Յակոբ Չափարեան, Ծովիկ Մկրտիչեան, Րաֆֆի Քէչիչեան, Մայտա Անտոնեան, Լենա Պէշլեան, Նորա Բարսեղեան, Կարինէ Լեւոնեան, Մանօ Նորընծայեան, Ալին Հայրապետեան, Արամ Խաչատուրեան, Արմէն Տիմիճեան, Մակի Էսմէրեան, Տիգրան Գրիգորեան, Կարօ Ղազարեան, Կարօ Կարապետեան, Անի Կիտանեան, Ֆէտի Թաժրա, Ատրուշան Չէքմէյեան, Ժազ Ղազարեան եւ ուրիշներ:

Այնճար

Լիբանանի հայաբնակ Այնճար գիւղի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը 1991ին 43 տարեկան է:

Տարեշրջանի մասնաճիւղի վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետութեամբ Տոքթ. Յակոբ Թովմասեանի, Յարութ Լազիսեան, Միսաք Թեճիրեան, Յուլակ Գէորգեան, Վարդգէս Պոյաճեան, Լեւոն Թաշճեան եւ Կարօ Թաշճեան:

1991ի Մայիսին մասնաճիւղը կը կազմակերպէ «Մարզական Օրեր», նուիրուած՝ Հայաստանի Հանրապետութեան ստեղծման 73րդ տարեդարձին: Խաղերու փակման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ 28 Մայիսին — [Ծ/113-114.28]:

1992ին մասնաճիւղի վարչութեան անդամներն են Արա Քիւրտեան, Հրաչ Քէնտիրճեան, Րաֆֆի Յովսէփեան, Պետրոս Փայթաճեան, Պետիկ Շաննագեան, Արմէն Պետոյեան եւ Սարգիս Տօնիկեան: Մասնաճիւղին 44րդ անդամական ընդհ. ժողովը այս կազմի գործունէութիւնը կը նկատէ «Գոհացուցիչ»: Յուլիս 1993 - Փետրուար 1994 ութամսեայ գործունէութեան վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի Րաֆֆի Յովսէփ-



Այնճարի մասնաճիւղի վերերան արլէթ Լեւոն Թաշճեան, Մասնապէն Ծթորա մարաթոն վազքի յաղթանակի բաժակը կը ստանայ ձեռամբ Ծթորայի քաղաքապետին- 6 Յունիս 2004

եանէ եւ Պետիկ Շաննագեանէ, որոնք կը փոխարինուին Կարօ Սթամպուլեանով եւ Կարօ Քէչիչեանով: Վարչական այս կազմերուն կ'օժանդակեն Սկաուտական Խորհուրդ, պասքեթպոլի, ֆութպոլի եւ ընկերային յանձնախումբեր: Ֆութպոլի Ա. կազմի մարզիչն է Ժան Կէիքեան, Բ. եւ Գ. խումբերը կը մարզէ Թորգոմ Զանան: Պասքեթպոլի խումբերը կը մարզեն Րաֆֆի Քէնտիրճեան, Գաբրիէլ Աղամեան, Արա Քիւրտեան, Րաֆֆի Գէորգեան եւ Ֆուատ Ղանմա:

1994էն 2000 տարիներու յաջորդական վարչական կազմերուն անդամակցած են, ատենապետութեամբ Պետրոս Փայթաճեանի, Ժագ Տաղլեանի եւ Րաֆֆի Գէորգեանի՝ Արմիկ Տանալեան, Թամար Լազիսեան, Հրաչ Քէնտիրճեան, Արա Քիւրտեան, Սարգիս Գազանճեան, Յովհաննէս Շաննագեան, Յարութ Լազիսեան, Արմէն Պետոյեան, Վիգէն Քէնտիրճեան, Գօգօ Քէչիչեան, Մովսէս Տուտազլեան, Աբօ Մալքըճեան, Վահէ Քենտիրճեան, Սեպուհ Պոյաճեան, Զարեհ Թովմասեան, Պետիկ Մախուլեան եւ Ասպետ Սթամպուլեան:

1998-99ին մասնաճիւղի մարզական գործունէութիւնը կը կեդրոնանայ պասքեթպոլի ճիւղին վրայ, աղջկանց մէկ եւ տղոց զոյգ խումբերով: Խումբերը կը մարզեն Վրէժ Թագեան եւ Սեւակ Խօչեան: Ֆութպոլի ճիւղը համեմատաբար տկար գործունէութիւն կը յայտնաբերէ: Մասնաճիւղի ընկերային գործունէութիւնը յաջող արդիւնքներ կ'արձանագրէ կը կազմակերպուին զատկական հակվթամարտ, ճաշկերոյթ-պարահանդէս, ակումբէն ներս համակարգիչի դասեր, 29 Օգոստոս 1998ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակի ճաշկերոյթ-պարահանդէս, հովանաւորութեամբ Այնճարի քաղաքապետութեան, իսկ Սբ. Պօղոս եկեղեցւոյ սրահին մէջ հրապարակային հանդիսութիւն, որուն ընթացքին մասնաճիւղէն 11 անդամներ կը ստանան Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշան: Տարեշրջանի ընթացքին վարչութիւնը կ'իրականացնէ պասքեթպոլի դաշտի նստարաններու շի-

նութիւնը: Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 610, որոնցմէ 304ը սկաուտական շարքերէն:

2001-2002 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ Սամուէլ Պոյաճեանի՝ Աշխէն Գազանճեան, Գէորգ Թասլաքեան, Վարուժ Զիլինկիրեան, Զարեհ Թովմասեան, Գաբօ Աղամեան եւ Թամար Անտոնեան: Մարզական ճիւղերը տակաւ կը զարգանան, մասնաճիւղը կը կազմակերպէ միջվարժարանային մարզական մրցաշարքեր: Սկաուտութիւն եւ շեփորախումբ յաջող տարեշրջան մը կը բոլորեն, 102 սկաուտներ իրենց տարեկան բանակումը կը կատարեն Ճիպէյլի «Թռչնոց Բոյն»ին մէջ:

2002էն սկսեալ, մասնաճիւղի սկաուտական շեփորախումբը նոր թափով կը յառաջդիմէ, ղեկավարութեամբ Պարգեւ Թասլաքեանի:

2002-2003 տարեշրջանին վարչութեան կ'անդամակցին Գէորգ Թասլաքեան, Թերէզ Քէնտիրճեան, Յարութ Զէյթլեան, Սերոբ Սագայեան, Մարալ Սթամպուլեան, Սեպուհ Պոյաճեան եւ Յարութ Զատիկեան: Մարզական կարեւորագոյն ճիւղն է պասքեթպոլը, 6 տարբեր դասակարգի տղոց եւ աղջկանց խումբերով: 2003ի Ապրիլին շեփորախումբը կ'այցելէ Կիպրոս Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ե.Մ.ի վարչութեան հրաւերով — [Ծ/251-252.75] եւ 10-14 Յուլիսին Յորդանան:

2003-2004 տարեշրջանին վարչական կազմին կ'անդամակցին Ժագ Տաղլեան՝ ատենապետ, Ծովիկ Գրըճեան-Մղտեսեան, Յարութ Զէյթլեան, Հայկ Քէչիչեան, Սեպուհ Պոյաճեան, Զարեհ Թովմասեան եւ Թամար Լազիսեան: 7 Մարտ 2004ին սկաուտական միաւորը կը կատարէ փոխանցման արարողութիւն, այս առթիւ կը կատարուի աստիճաններու տուչութիւն — [Ծ/260.25]: Միաւորի խմբապետուհին է Սեւան Աղամեան:

2004 եւ 2005 տարիներուն վարչական կազմերուն կ'անդամակցին, ատենապետութեամբ Րաֆֆի Գէորգեանի՝ Ասպետ Սթամպուլեան, Սեւան Աղամեան, Արամ Զաքարեան, Հայկ

Քէչիչեան, Սեպուհ Պոյաճեան, Թերէզ Տուտազլեան, Մկո Քէնտիրճեան, Շիրազ Քէնտիրճեան եւ Շանթ Թազեան: 6 Յունիս 2004ին մասնաճիւղի ակտիւսներէն վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական Լեւոն Թաշճեան, Մասնաայէն Շթորա՝ Պեքայի մարաթոնի մրցումին կը հանդիսանայ ախոյեան եւ կը ստանձնէ յաղթանակի բաժակը՝ ձեռամբ Շթորայի քաղաքապետին — [Մ/269.35]: Ֆուտպոլի խումբը կը տիրանայ միջմասնաճիւղային մրցաշարքի ախոյեանութեան: Այնճարի մասնաճիւղը կը գործէ կենսունակ, ընկերային եւ ազգային ձեռնարկներով:

Ծիւնի

Ճիւնիի մասնաճիւղի 65րդ անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած՝ 1991 տարեշրջանի

վարչութեան անդամներն են.- ատենապետ՝ Ներսէս Ճուպանեան, ատենադպիր՝ Րաֆֆի Եսայեան, գանձապահ՝ Նազո Սարաֆեան, փոխ ատենապետ՝ Արա Պալեան, հաշուապահ՝ Վահէ Խաչերեան, խորհրդականներ՝ Մանուէլ Գազանճեան եւ Յովիկ Գալայճեան: Վարչութիւնը կը գործէ Սկաուտական Խորհուրդի, մարզական, ընկերային եւ յարաբերական յանձնախումբերու օժանդակութեամբ:

Պասքեթպոլի տղոց կազմը կը մասնակցի միջմասնաճիւղային մրցաշարքերու եւ տեղական խումբերու դէմ բարեկամական մրցումներու: Մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ փինկփոնկ եւ քոնկ ֆուլ: Ընկերային յանձնախումբը կը կազմակերպէ խրախճանքներ: 1991ի եղանակին սկաուտական խումբը իր տարեկան բանակումը կը կայացնէ 14-22 Սեպտեմբերին, Մէյրուպայի



Ծիւնիի մասնաճիւղի սկաուտական գործունէութեան վերամուտ – Նոյեմբեր 1994

մէջ: Խոսմբի խմբապետն է Րաֆֆի Կէօվօղլանեան: Վարչութիւնը կը շահագործէ նաեւ Թապարթա Պիչի լողարանը մատչելի պայմաններ ապահովելով իր անդամներուն եւ համակիրներուն:

Տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւն է 116:

1992ին վարչութեան ղեկանը կը մնայ անփոփոխ, փոխ ատենապետի պաշտօնը կը ստանձնէ Աւետիս Աղիարեան, խորհրդականներն են Արշակ Միքայէլեան, Գառնիկ Գաբրիէլեան, Վահէ Խաչերեան, Յովիկ Գալայճեան եւ Մանօ Գազանճեան: Մարզական գլխաւոր ճիւղը կը մնայ պասքեթպոլը, աթլէթները մաս կը կազմեն Շրջանային ներկայացուցչական խումբին՝ մասնակցելու համար Լիբանանի ախոյեանութեան մրցումներուն: Սկսած սկսած ճիւղը կարեւոր յառաջդիմութիւններ կ'արձանագրէ:

1993ին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ Նազօ Սարաֆեանի, Թալին Աբանեան, Նազօ Մարտիկեան, Արշակ Միքայէլեան, Յովիկ Գալայճեան, Աւօ Աղիարեան եւ Յարութ Ատուրեան: Վարչութեան նշանակած յանձնախումբերը կը վարեն Րաֆֆի Եսայեան՝ Սկսած Խորհուրդ, Ներսէս Ճուպանեան՝ մարզական, Վահէ Խաչերեան՝ ակումբ, Մկօ Խաչերեան՝ ընկերային եւ Լիզա Միքայէլեան՝ երիտասարդական: Մասնաճիւղը կը բոլորէ արդիւնաւէտ տարեշրջան մը:

1994ին վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ Ներսէս Ճուպանեանի, Թալին Աբանեան, Վահէ Խաչերեան, Նազարէթ Աբանեան, Վարդան Գաբրիէլեան, Նազօ Մարտիկեան, Մանօ Գազանճեան, Յովիկ Գալայճեան եւ Յարութ Ատուրեան: Սկսած սկսած բաժինը նոր թափով կը վերսկսի գործունէութեան: 22-27 Օգոստոս 1994ին, մասնաճիւղի սկսած սկսած կազմը իր տարեկան բանակումը կը կազմակերպէ Զմմառ գիւղի անտառներուն մէջ:

1995ին վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետութեամբ՝ Ներսէս Ճուպանեանի, Րաֆֆի Եսայեան, Աւետիս Աղիարեան, Արշակ

Միքայէլեան, Թալին Աբանեան, Վահէ Խաչերեան, Րաֆֆի Ատուրեան, Արա Գատէմեան եւ Նշան Գարայեան: Մասնաճիւղը իր կիրարկած մարզաճիւղերուն վրայ կ'աւելցնէ ֆութպոլը, նորեկ մարզիկներու մասնակցութեամբ: Սկսած սկսած իրենց բանակումը կը կատարեն 24-28 Օգոստոսին, Այնճարի մէջ:

1996 եւ 1997 տարեշրջաններուն մասնաճիւղի ատենապետն է Զարեհ Պալեան: Վարչական կազմին կ'անդամակցին Գօգօ Թորիկեան, Րաֆֆի Եսայեան, Նշան Գարայեան, Րաֆֆի Ատուրեան, Արա Գատէմեան, Նազօ Սարաֆեան, Միմի Աւագեան, Թալին Աբանեան, Նորա Գազանճեան, Լեւոն Զամիչեան, Վահէ Խաչերեան, Գէորգ Գազանճեան եւ Ալէն Պալեան: Մարզական եղանակին մասնաճիւղի պասքեթպոլի խումբը հսկայ յառաջդիմութիւններ կ'արձանագրէ շնորհիւ մարզիչ Թոնի Գարայեանի հետեւողական աշխատանքներուն եւ մարզիկներու ճիգերուն: Խոսմբը 1996ի միջմասնաճիւղային մրցաշարքին կը յաջողի տիրանալ ախոյեանութեան – [Ծ/175.28]: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 148ի: Մասնաճիւղը յատուկ հանդիսութեամբ կ'ոգեկոչէ իր հանգուցեալ անդամներուն յիշատակը – [Ծ/181.28]: 10-17 Օգոստոս 1997ին մասնաճիւղին սկսած սկսած կազմը իր տարեկան բանակումը կը կատարէ Աթալթունի մէջ – [Ծ/183.29]:

12 Հոկտեմբերին տեղի կ'ունենայ սկսած սկսած աշխատանքներու վերամուտի հաւաքոյթ: Այս առթիւ Պաղիրայի աստիճան կը ստանայ Թամար Օհանեան, իսկ Առաջնորդի աստիճան՝ Նուարդ Օհանեան եւ Փիթըր Աղիարեան:

1998 տարուան վարչական կազմին կ'անդամակցին ատենապետութեամբ՝ Րաֆֆի Մարկարոսեանի, Թալին Աբանեան, Միհրան Գասպարեան, Րաֆֆի Եսայեան, Րաֆֆի Ատուրեան, Վարդան Գաբրիէլեան Նշան Գարայեան, Արա Գատէմեան եւ Միմի Աւագեան: Վարչութեան տարեկան նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտքեր 5.800.000լ.ո. եւ 5170ամ.

տոլար, ելք՝ 5.600.000 լ.ո. եւ 5100 ամ. տոլար:

1999-2000 տարեշրջանին վարչութեան ատենապետն է Րաֆֆի Մարկարոսեան, անդամներ՝ Ներսէս Ճուպանեան, Վարդան Գսաճիքեան, Ալէք Խորշետեան եւ Արա Գատէմեան: Այս կազմը ինք կը հսկէ սկաուտական գործունէութեան եւ նախկին սկաուտներ Սազօ Միսիրեանի եւ Ճորճիկ Բաթանեանի գործակցութեամբ կը վերակազմէ կազմալոյծ սկաուտական շարքերը: Անդամներու ընդհանուր թիւն է 165, որոնց 31ը սկաուտական շարքերէն: Վարչութիւնը կը բարեզարդէ ակումբը՝ օժտելով արդիական սարքերով:

2000 տարուան մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին Նազարէթ Մարտիկեան՝ ատենապետ, Ներսէս Ճուպանեան, Վարդան Գսաճիքեան, Նշան Գարայեան եւ Արշակ Միքայէլ-

եան: Սկաուտական խումբը կը տառապի փորձառու խմբապետի մը չգոյութիւնէն, այսուհանդերձ վարչութիւնը ճիգ չի խնայեր եւ կը յաջողի ոտքի պահել խումբը, որ Նոյեմբերէն սկսեալ կը վերսկսի գործունէութեան, ժրտէյտէի մասնաճիւղէն Կարօ Թերզեանի խմբապետութեամբ: Խումբը շուտով կը բաղկանայ 37 անդամներէ: Պասքեթպոլի խումբի մարզիչի պաշտօնը կը վարեն Յարութ Ծստքեան, Րաֆֆի Ատուրեան եւ Յակոբ Տէր Ղազարեան: Խումբը կը մասնակցի Լիբանանի Դ. դասակարգի ախոյեանութեան մրցաշարքերուն:

7 Յունիս 2001ին մասնաճիւղի 76րդ անդամական ընդհ. ժողովէն կ'ընտրուի նոր վարչական կազմ, ատենապետութեամբ Ներսէս Ճուպանեանի: Կազմին կ'անդամակցին Րաֆֆի Եսայեան, Ալէք Խորշետեան, Վարդան Գսաճիք-



Հ.Ա.Ը.Ա.ի Ծիւնիի դաշտին վրայ 2000ի Ապրիլ 24ի յուշատօն

եան եւ Արա Գատէմեան: Մարգական, ընկերա-
յին, յարաբերական յանձնախումբեր եւ ըՍ-
կառուտ Խորհուրդ կը գործակցին վարչութեան
նախաձեռնութիւններու յաջողութեան: Վար-
չութեան միամեայ նիւթական գործունէու-
թեան նիւթական պատկերն է՝ 4.823.000 լ.ո. եւ
1871 ամ. տոլար:

Մասնաճիւղի հիմնադրութեան 50ամեակը,
որուն կը զուգադիպէր Լ. Օ. Խ.ի «Սեւան» մաս-
նաճիւղի հիմնադրութեան 60ամեակը, գործակ-
ցաբար նշուեցաւ մասնաճիւղի ակումբին սրա-
հին մէջ 1 Դեկտեմբեր 2001ին, ներկայութեամբ
Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին աւագանիին,
մասնաճիւղի հիմնադիր անդամներուն եւ զոյգ
միութեանց անդամներուն: Այս առթիւ յուշա-
նուէրներ յանձնուեցան ԼՕԽի ձիւնի մասնա-
ճիւղի հիմնադիր անդամուհիներէն Անթուանէթ
Հաստաճեանին եւ Հ.Մ.Ը.Մ.ի ձիւնի մասնա-
ճիւղի վեթերան անդամներէն Րաֆֆի Եսայեա-
նին - [Ծ/234.27]:

3 Յուլիս 2002ին նորընտիր վարչութեան ան-
դամները կը մնան անփոփոխ, բացի Ալէք Խոր-
չէտեանէն: Կազմի նոր անդամներն են Մանօ
Գազանճեան, Արամ Մարտիկեան եւ Միհրան
Գասպարեան: Համեմատաբար տկար տարեշր-
ջան մը, որ կ'երկարի մինչեւ 5 Սեպտեմբեր 2003,
երբ կ'ընտրուի նոր վարչական կազմ, ատենա-
պետ՝ Գէորգ Գազանճեան, անդամներ՝ Արա
Գատէմեան, Ալէք Խորչէտեան, Մելիք Գարա-
սարգիսեան, Միհրան Գասպարեան, Արա Մար-
տիկեան եւ Մանօ Գազանճեան: Սկառուտական
կազմը կը բաղկանայ 16 գայլիկ-արծուիկներէ,
առաջնորդութեամբ Մարիա Գարտաշեանի եւ
Էլսի Գարայեանի:

25 Ապրիլ 2004ին մասնաճիւղը, մասնակցու-
թեամբ Անթիլիասի մասնաճիւղի կազմերուն,
պաշտօնական հանդիսութեամբ եւ դէպի Սբ.
Յարութիւն եկեղեցի տողանցքով կը նշէ Ապրիլ-
եան Եղեռնի 85ամեակը - [Ծ.262.24]: Անդամա-
կան ընդհ. ժողովը 2003-2004 տարեշրջանի գոր-
ծունէութիւնը կը նկատէ «Գոհացուցիչ»:

24 Սեպտեմբեր 2004ին անդամական 80րդ
ընդհ. ժողովը կ'ընտրէ հետեւեալ վարչական
կազմը. Գէորգ Գազանճեան, Րաֆֆի Ատուր-
եան, Վարդան Գսաճիքեան, Արա Գատէմեան,
Մելիք Գարասարգիսեան, Մանօ Գազանճեան եւ
Օրօր Գարասարգիսեան: Այս կազմը կը գործէ
մինչեւ 30 Սեպտեմբեր 2005: Մարգական ճիւղե-
րը տկար կացութեան մէջ են նորեկ մարզիկնե-
րու չգոյութեան պատճառով: Պէյրութի մաս-
նաճիւղէն պասքեթպոլի խումբ մը կը փոխարի-
նէ ձիւնի կազմը ներկայացնելու յաջս պատ-
կան Ֆետերասիոնին: Սկառուտական բաժինը կը
բաղկանայ 19 անդամ հաշուող գայլիկ-ար-



Ծիւնի մասնաճիւղի 80րդ անդամական ընդհանուր
ժողովի դիւանը
եւ նորընտիր վարչական կազմը -
24 Սեպտեմբեր 2004

ծուիկներէ: Վարչական կազմը ներքին դժուար
պարագաներ կը դիմագրաւէ՝ սպասելով աւելի
լաւ պայմաններու ստեղծման:

Անթիլիաս

1991ին Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղը
21ամեայ կենսունակ մասնաճիւղ մըն է իր
սկառուտական եւ մարզական գործունէութիւն-
ներով:

Մասնաճիւղի 1992 տարուան վարչական
կազմին կ'անդամակցին, ատենապետութեամբ



Անթիլիասի մասնաճիղի անդամուհի,
Ճատրակի Լիբանանի եւ արաբական
աշխարհի բազմիցս ախոյեանուհի
«Միջազգային Վարպետ» Բնարիկ Մուրատեան

Մելիք Գուլայեանի, Միշել Տիք Խորոզեան, Բաֆֆի Գատեան, Աւագ Խաչատուրեան, Յարութիւն Լիպարեան, Արտո Աճէմեան, Ալպէր Նիկողոսեան, Կարօ Կարապետեան եւ Վազգէն Տէր Ղուկասեան: Տարեշրջանի ընթացքին կազմէն կը հրատարին Բաֆֆի Գատեան, Կարօ Կարապետեան, Ալպէր Նիկողոսեան եւ Յարութիւն Լիպարեան: Կազմը կ'ամբողջացուի Գրիգոր Գլըպոզեանի եւ Շանթ Աւետիսեանի նշանակումով: Մասնաճիղի անդամներու ընդհանուր թիւն է 210:

6 Ապրիլ 1993ին մասնաճիղի Մըզհէրի սեփական հողաչերտին վրայ պաշտօնապէս հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան համալիրին, հովանաւորութեամբ Գարեգին Բ. Կաթողիկոսի, հանդիսապետութեամբ Լիբանանի թեմի առաջնորդ Արամ Արքեպիսկոպոս Քէչիչեանի, ներկայութեամբ Լիբանանի պետական եւ ազգային աւագանիին եւ պասքեթպոլի դաշտի շինու-

թեան բարերարներ՝ Ատոմ եւ Սելլա Թնճուկեաններուն – [Մ/135.12]:

1994 տարուան վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Ռուբէն Ճէրիտեան: Վարչական կազմին կ'անդամակցին Մակի Գազանճեան, Շանթ Աւետիսեան, Վիգէն Հացագործեան, Յովսէփ Պապիկեան, Փօլ Եսայեան, Բաֆֆի Խանամիրեան, Հրաչ Տաղլեան եւ Կարօ Յարութիւնեան: Տարեշրջանի ընթացքին, Յարութ Գրիօղլեան կը փոխարինէ Մակի Գազանճեանը: Վարչական այս կազմին կ'օժանդակեն Սկաուտ Խորհուրդը եւ Փուլթպոլի, պասքեթպոլի, մարզական, ընկերային եւ Զալքայի մարզադաշտի յանձնախումբեր: Մասնաճիղի Սկաուտ Խմբապետն է Ներսէս Լիպարեան: Սկաուտական շարքերու ընդհ. թիւն է 337, տարեկան ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 5էն 11 Սեպտեմբերին Այնճարի մէջ: 250 սկաուտներ կը մասնակցին այս բանակումին – [Մ/154.14]: Սկաուտական հաւաքները տեղի կ'ունենան Ազգ. Եղիշէ Մանուկեան վարժարանի շրջափակէն ներս: Սկաուտական շարքերէն միաւորներ կրօնական տօներու առթիւ Անթիլիասի մայրավանքէն ներս կը հսկեն կարգապահութեան: Մասնաճիղէն 21 սկաուտներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական Ե. Ընդհ. Բանակումին:

Մարզական բաժինը կը կիրարկէ ֆուլթպոլ, փինկփոնկ, պասքեթպոլ, վոլիպոլ, հեծելարշաւ եւ ճատրակ:

Այս տարեշրջանին կը շարունակուին Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ. համալիրի եւ Ատոմ եւ Սելլա Թնճուկեան պասքեթպոլի գոց դաշտի շինարարական աշխատանքները:

Մասնաճիղի 27րդ անդամական ընդհ. ժողովը վարչութեան գործունէութիւնը կը նկատէ «Խիստ Գնահատելի» բանաձեւով եւ կ'ընտրէ 1995 տարեշրջանի վարչական կազմը՝ բաղկացած հետեւեալ անդամներէն. - Կարօ Յարութիւնեան՝ ատենապետ, Ժագ Հացագործեան, Սեպուհ Պարսումեան, Բաֆֆի Խանամիրեան, Հրաչ Տաղլեան, Ռոժէ Քէօրքիւնեան, Ռազմիկ



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի աղջկանց պասքեթպոլի Գերկայացուցչական՝ Անթիլիասի խումբը 2003ին

Յակոբեան, Յարուլթ Գրիողլեան եւ Յովսէփ Պապիկեան: Այս տարեշրջանին մասնաճիւղի վոլբոլի տղոց եւ աղջկանց խումբերը կը մասնակցին Լիբանանի ախոյեանութեանց մրցաշարքերուն, մարզական բոլոր ճիւղերը կը գործեն բնականոն ընթացքով, յատուկ թափ կը ստանայ ճատրակի ճիւղը, ուր մասնաճիւղի ներկայացուցիչները Քնար եւ Սիւզան Մուրատեաններ կ'ապահովեն Լիբանանի միջվարժարանային մրցաշարքերու ախոյեանութիւնները: Անոնք շուտով Լիբանանը պիտի ներկայացնէին զանազան միջազգային մրցաշարքերուն, ապահովելով ախոյեանութեան բաժակներ — [Ծ/171.16]:

Զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրէ սկաուտական բաժինը իր միաւորներով, ընդհանրապէս 351: Վարչութիւնը, հակառակ բոլոր ճիգերուն,

չի յաջողիր ապահովել Զալքայի ազգապատկան հողաշերտը օգտագործել իբրեւ մարզադաշտ, դրացի կալուածատէրերու արգելքին պատճառով: Տարեվերջին վարչութեան նիւթական գործառնութեան պատկերն է մուտք՝ 58.000 ելք՝ 48000 ամ. տոլար: Վարչութեան գործունէութիւնը կը նկատուի «Գնահատելի»:

17 Փետրուար 1996ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 25ամեակը — [Ծ/165.30]:

1996էն 1999 տարեշրջաններուն մասնաճիւղի յաջորդական վարչական կազմերուն անդամակցած են ատենապետներ՝ Շանթ Աւետիսեան, Սեպուհ Պարսումեան եւ Սարգիս Կիրակոսեան, անդամներ՝ Անդո Պոյաճեան, Արշիկ Աւրճեան, Թորոս Մեսրոպեան, Քրիստ Մանուկեան, Ալին Հայրապետեան, Յովիկ Կէօզիլպէօյիւքեան,

Յակոբ Թորոսեան, Հերա Արթինեան, Ներսէս Գրիգորեան, Ժիրայր Հապիպեան, Շահէ Թերզեան, Հրայր Ճիմպաչեան, Րոժէ Քէօրքիլնեան, Վիգէն Պետոյեան, Աբօ Տինկիզեան, Թամար Գոճաօղլանեան, Մարօ Թազեան, Սեւակ Զոլաքեան եւ Զաւէն Գապասագալեան: Անդամներու ընդհ. թիւը կը բարձրանայ 687ի:

Շնորհիւ հետեւողական ճիգերուն, 1996-1997 եղանակին պասքեթպոլի աղջկանց կազմը Լիբանանի Ա. դասակարգ կը բարձրանայ, վոլիպոլի աղջկանց կազմը զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրէ, ճատրակ կիրարկող անդամներու թիւը կը բարձրանայ 25ի: Վարչութեան գլխաւոր ղեկավարութիւնը նիւթական միջոցներու ստեղծումն է: Եղանակի ամէնէն գործունեայ ճիւղը կը մնայ սկաուտականը:

16-22 Օգոստոս 1999ին մասնաճիւղի տարե-

կան ընդհանուր բանակումը կը կայանայ Զմմառի մէջ, իսկ 24 Հոկտեմբերին մասնաճիւղի սկաուտական գործունէութեան վերամուտը տեղի կ'ունենայ ազգային Եղիշէ Մանուկեան քոլէճի սրահին մէջ – [Ծ/209.35]:

1999ի Դեկտեմբերին Քնարիկ Մուրատեան, Եմէնի մէջ, կը տիրանայ արաբական երկիրներու ճատրակի մրցաշարքի ախոյեանութեան եւ կ'արժանանայ միջազգային վարպետի տիտղոսին – [Ծ/210.33]: Քնարիկ կը պահէ 1996-97-98-2000-2001 տարիներուն, Լիբանանի աղջկանց ախոյեանութիւնը – [Ծ237.7] եւ կը գլխաւորէ Լիբանանի հաւաքականը աշխարհի 35րդ ողիմպիականին – [Ծ/245.14]:

1999ի եղանակին ճատրակի Լիբանանի կրտսերներու (16-18 տարեկան) ախոյեանութեան կը տիրանայ Սերժ Յովնանեան:



Անթիլիասի մասնաճիւղի հիմնադրութեան 25ամեակի տօնակատարութեան առթիւ վարչութեան ատենապետ Կարօ Յարութիւնեան իր պատգամը կը փոխանցէ

2000 տարուան մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն Շանթ Աւետիսեան՝ ատենապետ, Հերա Արթինեան, Թորոս Մեսրոպեան, Քրիստիան Մանուկեան, Անդօ Պոյաճեան, Յովիկ Կէօզիլպէօյիւքեան, Արշիկ Աւրճեան, Յակոբ Թորոսեան եւ Ալին Հայրապետեան: 13 Սեպտեմբեր 2000ին Զինաստանի մէջ, Քնարիկ Մուրատեան կը մասնակցի ճատրակի աշխարհի բաժակի մրցաշարքին, ներկայացնելով ասիական ցամաքամասը:

2002 տարեշրջանի սկաուտական գործունէութեան մաս կը կազմեն նորագիրներու եւ Բ. կարգի բանակում (16,17 Փետրուար), Բարեկենդանի ձեռնարկ (17 Փետրուար) եւ տարեկան ձիւնագնացութիւն (3 Մարտ) – [Ծ/236.28]:

8 Յուլիս 2002ին մասնաճիւղի 36րդ անդամական ժողովէն ընտրուած վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Ներսէս Լիպարեան, ատենադպիր՝ Մարիա Թերզեան, գանձապահ՝ Յակոբ Մարկարոսեան, անդամներ՝ Անժելիք Սապունճեան, Արա Հաճինազարեան, Շանթ Աւետիսեան, Գօգօ Խալոյեան, Թորոս Մեսրոպեան եւ Դրօ Մանտալեան: Սկաուտական գործունէութիւնը բնականոն

կ'ընթանայ, մարզական բաժինը կը տառապի նիւթական միջոցներու անբաւարարութենէ՝ ստեղծուած մարզիչներու եւ այլ ծախսերու յատկացումներէն: Ընկերային ձեռնարկները գոհացուցիչ յաջողութիւններով կը պսակուին:

28 Սեպտեմբեր 2002ին տեղի կ'ունենայ Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ. մարզամշակութային համալիրի պաշտօնական բացման հանդիսութիւնը, ներկայութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսին եւ Լիբանանի հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ երեսփոխան Միշէլ Մըրի — [Ծ/244.14]: Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղը նախապէս սկսած էր օգտագործել հա-

մալիրի մարզական բաժինը, 23 Հոկտեմբեր 2000ին, «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» պասքեթպոլի դաշտին վրայ կայացնելով առաջին մրցումը — [Ծ/221.32]:

2002-2003 եղանակին մասնաճիւղի պասքեթպոլի աղջկանց կազմը Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքին Յրդ դիրքը կը գրաւէ: Ճատրակի 16-17 տարեկան դասակարգի ախոյեանութեան կը տիրանան մասնաճիւղի կրտսերներու խումբերը:

2003 տարուան վարչական կազմին կ'անդամակցին Գօգօ Գլրպոզեան ատենապետ, Մարիա



Հ.Մ.Ը.Մ.ի Ժըտէյտէի մասնաճիւղի սկաուտներու տարեկան ընդհանուր բանակումը 2003ին

Թերզեան, Թորոս Մեսրոպեան, Յակոբ Մարկարոսեան, Արա Հաճինազարեան, Չոհրապ Խորոզեան, Ալպէր Նոխուտեան, Ժան Ժազ Աճէմեան եւ Անժելիք Սապունճեան:

Ներկայացնելով Լիբանանը, 2003ին Քնարիկ Մուրատեան Գահիրէի մէջ կը տիրանայ արաբական աշխարհի ախոյեանութեան, արաբական 9 երկիրներու ախոյեաններուն դէմ տանելով 6 յաղթանակ, 2 պարտութիւն եւ մէկ հաւասարութիւն:

16 Սեպտեմբեր 2004ին կ'ընտրուի նոր վարչական կազմ՝ ատենապետ՝ Յովիկ Նիկողոսեան, անդամներ՝ տոքթ. Մինաս Գարամինասեան, Սազո Գասապեան, Յովիկ Կէօզիլպէօյիլքեան, Յակոբ Մարկարոսեան, Անժելիք Սապունճեան, Թամար Ճիմպաչեան, Արա Հաճինազարեան եւ Վարդան Մուրատեան:

2004ի Մայիսին մասնաճիւղի Ֆուլթայոյի խումբը կը տիրանայ միջմասնաճիւղային մրցաշարքի ախոյեանութեան — [Ծ/261.19]:

2004ին Քնարիկ Մուրատեան կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան:

Ժըտէյտէ

Հ.Մ.Ը.Մի Ժըտէյտէի մասնաճիւղի գործունէութիւնը կը տարածուի Ժըտէյտէի, Ֆանարի, Պաուլըրիէի եւ Ռաուտայի լայնատարած շրջանին վրայ: Սկսած 1991 թուականէն մասնաճիւղը կը կիրարկէ Ֆուլթայոյ, պասքեթպոյ, փինկփոնկ եւ հեծելարշաւ: 1991 տարուան վարչական կազմին կ'անդամակցին Նուարդ Հովիւեան, Յակոբ Գելուկեան, Յակոբ Գարակէօզեան, Գէորգ Տօնապետեան, Սիմոն Թաչճեան, Սահակ Արթինեան, Մելքոն Յակոբեան, Մովսէս Զուլամեան եւ Կարօ Պասմաճեան: Վերջնոյն հրաժարականին պատճառով վարչութեան մաս կազմելու կը հրաւիրուի Լեւոն Փանոսեան:

1992ին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը գերազանցէ 300ը: Մանաճիւղի 18րդ անդամական ընդհ. ժողովը, 16 Փետրուար 1992ին, կ'ընտրէ հետեւեալ վարչական կազմը. Յակոբ Գարակէօզեան, Սիմոն Թաչճեան, Գէ-

որգ Աւրնեան, Մովսէս Զուլամեան, Սահակ Արթինեան, Մելքոն Յակոբեան, Աշոտ Քէչիչեան, Ճորճ Չաղլասեան եւ Նուարդ Հովիւեան: Մասնաճիւղի 7 Ֆուլթայոյի խումբերը կը գործեն Ամանոսի, Ռաուտայի եւ Ֆանարի շրջաններուն յատուկ յանձնախումբերու հսկողութեամբ: Մարզական խումբերը հանդիպումներ կ'ունենան քոյր մասնաճիւղերու եւ տեղական խումբերու դէմ: Մասնաճիւղի Ֆուլթայոյի Ա. կազմը կը գործէ «Հ.Մ.Ը.Մ. Զահլէ»ի արտօնագրով, մասնակցելով Ֆուլթայոյի Ֆետերասիոնի ախոյեանական մրցաշարքերուն:

Բացի վերոյիշեալ վարչական անդամներէն, 1993էն 2000 տարեշրջաններուն յաջորդական վարչական կազմերուն մաս կազմած են՝ Ալեքսան Հաճիմանուկեան, Արմէն Գարօ Քէչիչեան, Սարգիս Թոփուզեան, Չոհրապ Յակոբեան, Ժիրայր Գազանճեան, Յակոբ Քէչիչեան, Լուսին Պօղոսեան, Րաֆֆի Նաճարեան, Հրայր Սաղըրեան, Անդրանիկ Գաթրճեան, Տիգրան Խտրլարեան, Ժազլին Մկրեան, Ժանէթ Պօղոսեան, Չոհրապ Գանտահարեան, Պօղոս Թովմասեան, Լիզա Համալեան, Լենա Կէրէքմեզեան, Մհեր Պագալեան, Առաքել Փանոսեան, Վարուժան Պօղոսեան, Առաքել Տօնիկեան, Պետիկ Լօճիկեան, Նուպար Ռումուլեան, Սիլվա Գալուստեան, Հրանդ Պետրոսեան, Ժողէֆ Ասատուրեան, Սոնա Աբրահամեան, Կարօ Յովհաննէսեան, Վիգէն Շամլեան, Յարութ Տէյիրմէնճեան, Տիգրան Սարգիս, Սուրէն Զոքաքլեան եւ Արմէն Թագուրեան:

Մասնաճիւղի սկսած անդամներու շարքերը կը կազմակերպեն տարեկան բանակումներ, որոնցմէ 28 Օգոստոսէն 9 Սեպտեմբեր 1991ին՝ Այն Ալաք, Սեպտեմբեր 1993ին՝ Այնճար, 11էն 18 Սեպտեմբեր 1994ին՝ Ճուրլթ Պալլութի մէջ — [Ծ/154.16]:

1998ին Ժըտէյտէի մասնաճիւղը կը բաժնուի երկու մասնաճիւղերու, առաջինը՝ Ժըտէյտէի մասնաճիւղ, որ կ'ընդգրկէ Ժըտէյտէի շրջանը,



Ժրտէյտէի մասնաճիւղի 1996 տարուան գալլիկներն ու արծուիկները

նստավայր ունենալով Մար Եոսէֆ թաղի ԼՕԽի «Անահիտ» մասնաճիւղի կեդրոնը, երկրորդը՝ Պաուլըիէի մասնաճիւղ, որ կ'ընդգրկէ Ֆանարի եւ Ռաուտայի շրջանները:

Այս բաժանումով ժրտէյտէի անդամներու թուական պատկերն է. սկաուտներ՝ 223, մարզիկներ՝ 35 եւ օժանդակներ՝ 50, ընդհանուր թիւ 308: մասնաճիւղի մարզական բաժինը զգալիորէն կը տկարանայ:

29 Յուլիս 2001ին, անդամական 28րդ ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, որուն կ'անդամակցին տոքթ. Յակոբ Մէլէքեան, Փիէռ Ճէիգեան, Կարպիս Լաբոյեան, Խաժակ Գարակէօզեան, Յակոբ Թնկրեան, Սիլվա Սաղրեան եւ Իրմա Ճէրէճեան:

2002ին մասնաճիւղի սկաուտական շարքերը վերաշխուժացման հանգրուանի մէջ են: Յաջոր-

դաբար իրարու կը հետեւին այցելութիւններ ՔԱՀԼի Ծերանոց, չմշկումի կեդրոն, «Թռչնոց Բոյն»: Կը կազմակերպուին խմբապետական սեմինար, ճիւնագնացութիւն: Սկաուտական կազմը կը վերագտնէ իր երբեմնի աշխուժութիւնը՝ [Ծ/236.26]: Ա. կարգի սեմինար եւ երկօրեայ արշաւ բանակում կը կայանան 19 եւ 26 Հոկտեմբերին — [Ծ/245.36]: Մտքով թերաճ մանուկներու «Զուարթնոց» կեդրոն կ'այցելեն խմբապետական կազմի եւ երէցական փաղանգի սկաուտներ, 22 Փետրուար 2003ին — [Ծ/249.32]:

2002-2003 տարեշրջանին վարչութիւնը կը բաղկանայ 5 անդամներէ՝ տոքթ. Յակոբ Մէլէքեան՝ ատենապետ, Իրմա Ճէրէճեան, Յակոբ Թնկրեան, Խաժակ Գարակէօզեան եւ Սեդրակ Մալտոսեան: Այս կազմը կը գործէ մինչեւ 19 Փետրուար 2003, գլխաւոր նպատակ ունենալով մարզական բաժնի աշխուժացում եւ տնտեսա-

կան բարելավում: Այս շրջանին անդամներու ընդհանուր թիւն է 260:

2003-2004 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին Փիէռ Ճէհիգեան՝ ատենապետ, Իրմա Ճէրէճեան, Սիլվա Սաղըրեան, տոքթ. Յակոբ Մէլէքեան, Րաֆֆի Յակոբեան, Ժիրայր Գազանճեան եւ Սեդրակ Մալտոսեան: Տարեշրջանի սկսած սկստական գործունէութեան վերամուտին առթիւ Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի սկստական աւագանին եւ մասնաճիւղի հիմնադիրներէն Պետրոս Շեմմեսեան կը հատեն մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակի կարկանդակը — [Ծ/259.32]:

29 Փետրուար 2004ին խմբապետական կազմը Սկստական Օրուան առթիւ խրախմանք մը կը կազմակերպէ, շրջանի 5-12 տարեկան փոքրերուն յատուկ, սկստական շարժումը անոնց ծանօթացնելու նպատակով:

Պատուշրիտ

Հ.Մ.Ը.Մ.ի Պատուշրիտի մասնաճիւղը կազմըլած է ժըտէյտէի մասնաճիւղի նախկին անդամներէ, որոնք կը բնակին Ֆանարի եւ Ռաուտայի շրջաններուն մէջ:

18 Սեպտեմբեր 1998ին, Ֆանարի մատրան սրահին մէջ, 49 անդամներու ներկայութեան, տեղի կ'ունենայ Պատուշրիտի Հ.Մ.Ը.Մ.ի անդրանիկ անդամական ընդհանուր ժողովը, որուն աւարտին կ'ընտրուի մասնաճիւղի առաջին վարչական կազմը. ատենապետ՝ Արա Մինասեան, ատենադպրուհի՝ Սիլվա Գալուստեան, գանձապահ՝ Րաֆֆի Նաքթաչեան, հաշուապահ՝ Վազգէն Յակոբեան, խորհրդականներ՝ Նուպար Ռումուլեան, Նարեկ Մկրեան եւ Արա Հաճիմանուկեան:

Մասնաճիւղը կը կիրարկէ սկստութիւն, Ֆոլթպոլ եւ պասքեթպոլ: Առաջին տարեշրջանի աւարտին մասնաճիւղը կը հաշուէ 175 անդամներ, որոնցմէ 51ը սկստական շարքերէն: Ունի ֆոլթպոլի 6 խումբեր եւ պասքեթպոլի աղ-

ջկանց մէկ խումբ: 70 սկստներու մասնակցութեամբ, մասնաճիւղի անդրանիկ բանակումը տեղի կ'ունենայ 1999ին, Պհարսաֆ գիւղին մէջ — [Ծ/208.34]: Մարզական խումբերը կ'օգտագործեն Ֆանարի եւ Ռաուտայի ազգապատկան կալուածներու դաշտերը:

10 Հոկտեմբեր 2003ին անդամական Գ. ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Մինաս Պէքէրէճեան, փոխ ատենապետ՝ Գէորգ Գոճաւագեան, ատենադպիր՝ Նայիրի Գարակէօզեան, գանձապահ՝ Աբգար Մանուկեան, սկստական՝ Ազատ Գարակէօզեան, ֆոլթպոլ՝ Աւօ Էքմէքեան, ճատրակ՝ Շանթ Ջատիրեան, հեծիկ՝ Լեւոն Փալանճեան, խորհրդական՝ Զոհրապ Թաշճեան: Սկստական ճիւղը կը գործէ զոյգ միաւորներով, Ֆանար՝ 38 սկստներ եւ Ռաուտա՝ 20 սկստներ: Ֆոլթպոլի 3 խումբեր՝ Լեյլաւան, Ղարաբաղ եւ Արմէն Գարօ կը գործեն Ֆանարի շրջանին մէջ, իսկ 2 խումբեր՝ Սերոբ Աղբիւր եւ Պայքար Ռաուտայի շրջանին մէջ: Վարչութիւնը 14էն 21 Մարտ 2004ին կը կազմակերպէ միջանդամական փինկփոնկի մրցաշարք: Մասնաճիւղէն մարզիկներ կը մասնակցին «Համաշխարհային Ողիմպիական Օր»ուան վազքերուն՝ արձանագրելով պատուաբեր արդիւնքներ: 18 Յուլիս 2004ին մասնաճիւղէն խումբեր, Այնճարի մէջ կը մասնակցին Շրջանային Վարչութեան կազմակերպած միջմասնաճիւղային պասքեթպոլի, փինկփոնկի եւ հեծելարշաւի մրցաշարքերուն: Mont la Salleի կազմակերպած ֆոլթպոլի մրցաշարքին մասնաճիւղի կազմը կը տիրանայ ախոյեանութեան:

9 Հոկտեմբեր 2004ի անդամական Գ. ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը կը բաղկանայ հետեւեալ անդամներէն. Համօ Աղպօշեան՝ ատենապետ, Յովսէփ Խաչերեան, Աշոտ Քէշիշեան, Գօգօ Զէնճիրճեան, Լեւոն Փալանճեան, Վարուժ Պօղոսեան, Յովսէփ Յակոբեան, Գէորգ Գոճաւագեան եւ Սոկրատ Թաշճեան:

Շրջանային գործունեություն

Կազմակերպչական

2 Մայիս 1993ին, Լիբանանի 31րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովին կողմէ ընտրուած Շրջանային Վարչութեան մաս կազմած են Անդրանիկ Պէօյլըբեան, Յարութիւն Զէքիճեան, Յարութիւն Մընջրեան, Սարգիս Աճէմեան, Բաֆֆի Մունջօղլեան, Կարօ Աբրահամեան, Գէորգ Աւրնեան, Միշէլ Զէյթունլեան, Բաֆֆի Կէօփօղլանեան, Պետիկ Սապունճեան եւ Ժազ Պոյաճեան: Այս կազմը կը գործէ մինչեւ Ապրիլ 1995:

32րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը 1995-1996 տարեշրջանի գործունէութեան համար կ'ընտրէ Շրջանային Վարչութեան կազմ, ատենապետ՝ Սարգիս Աճէմեան, քարտուղար՝ Արփի Էթիէմէզեան, գանձապահ՝ Ներսէս Տօնիկեան, հաշուապահ՝ Ստեփան Տէր Պետրոս-

եան, փոխ ատենապետ՝ Յակոբ Խաչերեան, խորհրդականներ՝ Կարպիս Գապասագալեան, Բաֆֆի Մունջօղլեան, Արա Պարսումեան եւ Վրէժ Թազեան:

1999ի Մարտ 5-7 եւ Ապրիլ 16-19 զոյգ հանգրրուաններով Շրջանը կը կայացնէ իր 34րդ Ներկայացուցչական ժողովը, որմէ ընտրուած Շրջանային Վարչութեան մաս կը կազմեն Վարդգէս Հայրապետեան՝ ատենապետ, Ժազ Պոյաճեան, Միշէլ Տիք Խորոզեան, Վարուժան Գէորգեան, Միշէլ Զէյթունեան, Բաֆֆի Խանամիրեան, Հրակ Ոսկերիչեան, Կարօ Յարութիւնեան, Բաֆֆի Կէօփօղլանեան, Ալպէր Նոխուտեան եւ Սեւակ Աբրահամեան: 2000ի Մայիսին վերոյիշեալ կազմի հրաժարականին հետեւանքով, Կեդրոնական Վարչութեան կողմէ նշանակովի կազմին կ'անդամակցին Պետրոս Շեմմեսեան՝ ատենապետ, Զոհրապ Պոսնոյեան, Ճորճիկ Ռասուկէլէնեան, Յարութիւն Թազուրեան, Վարու-



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի 36րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովի խմբանկար



ԼԵՎԱՄԻ 2001 տարեշրջանի յաղթական վարժարանների բաժակատուխոսին

Ժան Գեորգեան, Րաֆֆի Մուկնչոզյան եւ Սեւակ Աբրահամեան:

12 Յունիս 2001ին Շրջանային Ներկայացուցչական Ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, ատենապետ՝ Ճոնի Արեւեան, ատենադպրուհի՝ Յասմիկ Մուրատեան, գանձապահ՝ Ալպէր Նոխուտեան, խորհրդականներ՝ Ժան Պէլեան, Միշէլ Խորոզեան, Սարգիս Սերոբեան, Նազո Հապիպեան, Սեւակ Աբրահամեան, Հրայր Խաչատուրեան, Վիգէն Սարգիսեան եւ Զոհրապ Մարգարեան:

14 Օգոստոս 2003ին Շրջանի 36րդ Ներկայացուցչական Ժողովէն կ'ընտրուի Շրջանային նոր վարչութիւն. ատենապետ՝ Յակոբ Քէշիշեան, փոխ ատենապետ՝ Րաֆֆի Մուկնչոզյան, ատենադպիր՝ Համբիկ Միսաքեան, գանձապահ՝ Հրայր Սաղրեան, խորհրդականներ՝ Միշէլ Տիք

Խորոզեան, Պետիկ Լոճիկեան, Վրէժ Թազեան, Նազո Հապիպեան եւ Վաչէ Նաճարեան:

2005ին նորընտիր Շրջանային վարչութեան կազմը կը մնայ նոյնը, բացի խորհրդական անդամներէն, ուր Լուսին Գազէգեան, Րաֆֆի Թորիկեան եւ տոքթ. Մինաս Գարամինասեան կը փոխարինեն Պետիկ Լոճիկեանը, Նազո Հապիպեանը եւ Վաչէ Նաճարեանը:

Շրջանային մարզական գործունէութիւն

Աթլետիզմ

1995ի եղանակին Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմի ակթիւթները Լիբանանի ախոյեանական մրցումներուն կը խլեն 20 ոսկի, 11 արծաթ եւ 15 պրոնզ մետալներ: Փոքր աղջիկներ կը



ԼԵՎԱՄԻ 1997-1998 տարեշրջանի ախոյեան վարժարանների և սպորտային կենտրոնների մարզիկները յաղթանակի բաժակներ կը ստանան Հ.Մ.Ը.Մ.ի վարչականների ձեռամբ

գրաւեն խմբային ախոյեանութեան դիրքը, իսկ փոքր տղաքը խմբային երկրորդ դիրքը [Ծ/158.31]:

26 Հոկտեմբեր 1996ին Լիբանանի իրենց դասակարգերու ախոյեանութեան բաժակները ստացան Հ.Մ.Ը.Մ.ի աթլէթները [Ծ/173.29]:

1999ի եղանակին Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկ-մարզիկուհիները կը տիրանան անհատական մետալներու: Մէկ քայլ ոստումի մրցումին Ռոզիկ Չոպանեան կը հաստատէ իր դասակարգի Լիբանանի նոր մրցանիշ՝ 5.39 մ.:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի աղջկանց խումբը Պէյրուսը կը ներկայացնէ 1999ի Համահայկական Ա. խաղերուն, Երեւան, ուր Ռոզիկ Չոպանեան կը տիրանայ 100 մ. վազքի պրոնզէ մետալին:

2000ի եղանակին Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները իրենց տարիքային բաժանումներով, զոյգ հանգրուաններով, Լիբանանի Ֆետերասի-

ոնի ախոյեանութեանց մրցումներուն, կը տիրանան 15 մետալներու — [Ծ/216.28], [Ծ/220.34]:

Փինկփոնկ

ՀՄԸՄԻ Լիբանանի փինկփոնկի հաւաքականը տարիներ շարունակ գրաւած է Լիբանանի ախոյեանութեան եւ այլ մրցաշարքերու առաջին դիրքը: 1997 եղանակին նոր ուժերով ներկայացող կազմը կ'ապահովէ Լիբանանի խմբային ախոյեանութեան տիտղոսը — [Ծ/184.27]: Նոյն խումբը յաջորդաբար կը տիրանայ 2001ի, 2002ի

Աղջկանց կազմը 1998ին կը տիրանայ արաբական երկիրներու ախոյեան ակումբներու մրցաշարքի ախոյեանութեան եւ 1999ին Լիբանանը կը ներկայացնէ նոյն ախոյեանութեան:

2002ին Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց կազմը կը տիրա-

նայ համաարարական մրցաշարքի ախոյեանութեան՝ պարտութեան մատնելէ ետք Թունուզի, Յորդանանի եւ Եգիպտոսի ախոյեան կազմերը [Ծ/245.3]: Նոյն տիտղոսին կը տիրանայ նաեւ 2003ի եղանակին Լիբանանի մէջ, յաջորդաբար պարտութեան մատնելով Թունուզի, Պահրէյնի, Լիբանանի եւ Սուրիոյ ակումբներու խումբերը եւ աւարտական մրցումի յաղթանակը տանելով Եգիպտոսի Ահլի-Չամալէք ակումբներու միացեալ կազմին դէմ- [Ծ/258.15]:

2003ի եղանակին Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի գանազան դասակարգերու երկու սեռերու մարզիկները կը խլեն բոլոր մրցաշարքերու ախոյեանութիւններու առիւծի բաժինը – [Ծ/254.36]:

2005ին աղջկանց կազմը կրկին կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան, տղոց խումբը կը գրաւէ 3րդ դիրքը – [Ծ/273.26]:

Ֆութպոլ

1997 եղանակին Ֆութպոլի ներկայացուցչական կազմը կ'ապահովէ Լիբանանի ախոյեանութեան երրորդ դիրքը, իսկ կրտսերներու խումբը կը հանդիսանայ երկրորդ:

2000ին Լիբանանի կրտսերներու երեք դասակարգերը կ'ունենան յաջող եղանակ մը, տանելով բազմաթիւ յաղթանակներ – [Ծ/215.22]:

2003ին Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը Բ. դասակարգի ախոյեանութեան տիրանալէ ետք կը բարձրանայ Ա. դասակարգ – [Ծ/250.16]:

2004էն սկսեալ Ֆութպոլի ճիւղը զոյգ դժուարութիւններ կը դիմագրաւէ: Համաձայն ծրոյցի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի որոշումին, Կեդրոնական Վարչութիւնը կ'արգիլէ Ֆութպոլի մարզիկներուն վճարումներ կա-



Հայաստանի անկախութեան 78րդ տարեդարձին առթիւ կազմակերպուած Մայիսեան Փառատօնին մասնակից աթլէթներու խումբը



Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը կ'ընդունի Հ.Մ.Ը.Մ.ի ճատրակի եւ փինկփոնկի Լիբանանի ախոյեանուհիները, իրենց պատասխանատուներու ընկերակցութեամբ

տարել արհեստավարժ դրուժեամբ եւ կը թելադրէ գոհանալ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու մասնակցութեամբ բոլոր դասակարգի խումբերէն ներս, խուսափելով օտար մարզիկներու մեծածախս մասնակցութենէն:

Տարիներու ընթացքին Փոլթալի ներկայացուցչական խումբերու թեքնիք պատասխանատուի պաշտօնը վարած են Ներսէս Ճուպանեան, Գէորգ Մարտիկեան, Յոբիկ Մոսկոֆեան, Աբօ Գասապեան, Յակոբ Աբգարեան, Յովհաննէս Յուսամեան եւ ուրիշներ:

Պասքեթպոլ

Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքերուն Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի աղջկանց ներկա-

յացուցչական խումբը յաջորդաբար կը տիրանայ 1995ի, 1996ի եւ 1997ի ախոյեանութիւններուն, 1998ի եւ 1999ի Լիբանանի Ֆետերասիոնի բաժակներուն:

Պասքեթպոլի աղջկանց ներկայացուցչական կազմը 1997 տարուան միջարաբական ախոյեան խումբերու մրցաշարքին կը գրաւէ երրորդ դիրքը- [Մ/178.24]:

2004ին տղոց ներկայացուցչական կազմը կը յաջողի Բ. դասակարգէն բարձրանալ Ա. դասակարգ:

Յեծելարշաւ

1995ին Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի կրտսերներու ներկայացուցչական խումբը կը տիրանայ



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի 2004-2005 եղանակի ֆութպոլի ներկայացուցչական կազմը



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆութպոլի ներկայացուցչական խումբը կ'այցելէ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանին



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի կրտսերներու ֆուտպոլի ներկայացուցչական խումբը- 1985-86ի ծնունդներ

Լիբանանի ախոյեանութեան:

1999ին Յարութ Պուչաքճեան կը խլէ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսը —[Ծ/210.35]:

Հ.Մ.Ը.Մ.ի խումբը կը հանդիսանայ Լիբանանի փոխ ախոյեան:

Միջմասնաճիւղային մրցաշարքեր

Բացի մասնաճիւղերու մարզական ընթացիկ գործունէութիւններէն, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած են միջմասնաճիւղային մրցաշարքեր ֆուտպոլի կամ պասքեթպոլի խումբերու ճակատումով:

1994ին Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ միջմասնաճիւղային պասքեթպոլի «Վա-

րուժան Մուրատեան» մրցաշարք:

1997 տարեշրջանի մրցաշարքերը կը կայանան Այնճարի մէջ —[Ծ/184.32]:

ԼԵՎԱՍ

1991էն 2004 դպրոցական տարեշրջաններուն, Շրջանային Վարչութեան նշանակած ԼԵՎԱՍի յանձնախումբերու կազմակերպութեամբ, մարզական զանազան ճիւղերու մրցաշարքերու կազմակերպութեամբ կատարուած են միջվարժարանային խաղեր:

Շրջանային սկաուտական գործունէութիւն

11 եւ 12 Դեկտեմբեր 1993ին Շրջանային



Լիբանանի Շրջանային սկաուտական խմբապետական կազմը, Լիբանանի անկախութեան տօնին առթիւ ծաղկեպսակ կը գետնէ՛ Նահատակաց հրապարակի յուշարձանին - 22 Նոյեմբեր 2004

խմբապետութիւնը կը կազմակերպէ միջմասնաճիւղային խմբապետական սեմինար, մասնակցութեամբ 85 աստիճանաւոր սկաուտներու, նպատակ ունենալով միօրինականացնել սկաուտական աշխատանքները բոլոր մասնաճիւղերէն ներս: Նոյն կարգի թեքնիք զարգացման միջմասնաճիւղային մրցումներ կը կազմակերպուին յաջորդաբար, արի, երէց, գայլիկ եւ արծուիկ բաժիններուն յատուկ, 1995 եւ 1996

եղանակներու ընթացքին - [Ծ/167.27]:

1999-2000 եղանակին Շրջանային խմբապետութիւնը կը կազմակերպէ միջխմբապետական ժողով եւ երկօրեայ համագումար - սեմինար, դաստիարակչական դասախօսական շարք, երէց-պարմանուհիներու մարզումի արշաւ-բանակում եւ վկայեալ կարգի դասընթացք - [Ծ/211.25]:

4-6 Օգոստոս 2000ին տեղի կ'ունենայ միջմասնաճիւղային Ռալի բանակում՝ Աանա գիւղի անտառներուն մէջ: 500 սկաուտներ կը մասնակցին այս բանակումին - [Ծ/218.21]:

9 եւ 10 Սեպտեմբերին Լիբանանի միջմիութեանական «դեսպանատուն» մը ներկայացնելու մրցանքին Լիբանանի պատուիրակութիւնը կը տիրանայ «լաւագոյն դեսպանատան» տիտղոսին - [Ծ/219.32]:

4 եւ 5 Նոյեմբերին տեղի կ'ունենայ գայլիկ-արծուիկ եւ մոկլի ճիւղերու խմբապետներու սեմինար - [Ծ/221.29]:

19 Յուլիս 2001ին, Լիբանանի Շրջանէն 12 խմբապետներ Բիւրականի մէջ կը մասնակցին Հ.Ա.Ս.Կ.ի Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական ճանաչման 1700ամեակին նուիրուած բանակումին - [Ծ/230.35]:

14 Հոկտեմբեր 2001ին 42 խմբապետ-խմբապետուհիներ կը մասնակցին միջմասնաճիւղային խմբապետական ընդհանուր ժողովին:

2-7 Սեպտեմբեր 2002ին Շրջանը կը կազմակերպէ միջմասնաճիւղային ընդհանուր բանակում, մասնակցութեամբ 500 սկաուտներու - [Ծ/243.27]:

Ազգային, հրապարակային հանդիսութիւններ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքի տարեկան գլխաւոր ձեռնարկը կը հանդիսանայ Մայիսեան



Լիբանանի Շրջանային սկաուտական խմբապետութեան կազմակերպած երէց - պարմանուհի խմբապետներու յատուկ սեմինարին մասնակիցներու խմբանկար. 26 Նոյեմբեր 2000

Փառատօնը, ուր մարզական, միջվարժարանային եւ այլ մրցաշարքերու աւարտին պաշտօնական հանդիսութեամբ ընդհանուր տողանցքով կը փակուին տարեկան գործունէութիւններու եղանակները: Այս հանդիսութիւնները, որոնք տեղի ունեցած են Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աթոռակալ Հայրապետներու հովանաւորութեան ներքեւ եւ ներկայութեամբ լիբանանահայ երեք համայնքներու, պետական բարձրաստիճան պաշտօնատարներու, մարզական եւ սկաուտական ֆետերասիոններու, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային վարչութիւններու ներկայացուցիչներուն, կը համախմբեն զանազան տարիքի բազմահազար հայութիւն:

Ստորեւ Մայիսեան Փառատօններու շարքը 1991էն սկսեալ.-

- 16 Յունիս 1991ին - [Ծ/117.14] - [Ծ/126.20]:
- 30 Մայիս 1993ին, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակին - [Ծ/137.12]:
- 29 Մայիս 1994ին - [Ծ/149.3]:
- 28 Մայիս 1995ին - [Ծ/159.3]:
- 2 Յունիս 1996ին - [Ծ/168.4]:
- 1 Յունիս 1997ին - [Ծ/180.33]:
- 31 Մայիս 1998ին - [Ծ/192.34]:
- 30 Մայիս 1999ին
- 2000ին
- 2001ին
- 9 Յունիս 2002ին - [Ծ/239.16]:
- 22 Յունիս 2003ին - [Ծ/251-252.60]
- 6 Յունիս 2004 - [Ծ/262/16]:

Տարեկան յաջորդականութեամբ կազմակերպուած են նաեւ Սկաուտի Օրուան հանդիսութիւնները:

Գլխաւոր հրապարակային ելոյթը պիտի հանդիսանար 11էն 16 Օգոստոս 2001ին ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ճրգ խաղերու կազմակերպումը – [Ծ/229.3] եւ [Ծ/231.12]:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ շքեղ հանդիսութիւններ կազմակերպուած են Միութեան հիմնադրութեան ամեակներու առիթներով:

75ամեակ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ հանրապետութեան նախագահ Իլիաս Հրաուիի – [Ծ/142.11]:

21 Մարտ 2004ին, 85ամեակ, էմիլ Լահուտ համալիրի շքեղ հանդիսասրահին մէջ, հովանաւորութեամբ Լիբանանի Հանրապետութեան նախագահ էմիլ Լահուտի, որ հետեւեալ պատգամը արձանագրեց այս առթիւ հրապարակուած գրքոյկին մէջ.

Ձեզի՝ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութեան Լիբանանի գաւակներ,

Պէտք է հպարտ զգաք ձեր Միութեան անցեալով, որ լուսաւոր կերպով եւ պայծառօրէն դրոշմուած է մարզական նուաճումներով եւ սերունդներու դաստիարակութեամբ, մարզական ազնիւ մրցակցութիւն ու ծառայասիրութիւն սորվեցնելով սկաուտական շարքերուն, ինչ որ սկզբունքներն են բոլոր նման շարժումներուն:

Եւ այն իրագործումներն ու տարիներու վրայ երկարող աշխատանքները, զորս կը պարփակէ այս գրքոյկը, օրինակելի են Լիբանանի մարզական եւ սկաուտական միութիւններուն, որոնք մեծ պարտականութիւն ունին Լիբանանի մարզական կեանքը հասցնելու կատարելագործուած դիրքերու, որպէսզի Լիբանանի մարզական մակարդակը աւելի եւս բարձրանայ եւ

իր յատուկ տեղը ունենայ միջազգային հանդիպումներու եւ մրցաշարքերու ընթացքին:

Կը յուսամ որ կը շարունակէք ձեր ճիգերը, ձեր ընտրած ուղիով, ներգրուելով նոր սերունդներ եւ անոնց հոգիները կը համակէք մարզական ազնուագոյն ոգիով, կերտելով միտք ու մարմին, որ անվթար կերպով իր բարերար ազդեցութիւնը ունենայ մարզիկներուն վրայ:

Ողջո՛յն ձեզի եւ ողջոյն Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 85ամեակին:

Յոյսով եմ որ ձեր ապագան լիցքաւորուած կ'ըլլայ հայրենիքի սիրով եւ նուիրումով:

Լիբանանի Հանրապետութեան
Նախագահ
Զօրավար Էմիլ Լահուտ

Նոյնպէս, Արամ Ա. Հայրապետ հետեւեալ օրհնութեան խօսքը յղեց Միութեան հիմնադրութեան 85ամեակին առթիւ:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ**

Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ,

Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադրութեան 85ամեակը: Կը գնահատենք Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատուներուն ծրագրուած ճիգը՝ յատուկ նախաձեռնութիւններու ճամբով արժեւորելու Հ.Մ.Ը.Մ.ի 85ամեակը:

Արդարեւ, ամբողջ 85 տարիներ Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ կենդանի ներկայութիւն հայ կեանքէն ներս: Ան եղաւ ներկայութիւն իր հաւատքով, վճռակամութեամբ ու տեսիլքով: Ան եղաւ ներկայութիւն իր հայաշունչ դաստիարակութեամբ եւ մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու ամուր կապուածութեամբ: Ահա թէ

ինչու իւրայատուկ դիմագիծ, նկարագիր եւ ուղղութիւն ունեցող միութիւն մը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ը: Սովորական միութենէ մը անդին, ան դարձաւ ընտանիք մը, ազգային արժէքներով սնող ու սնուցանող մեծ ընտանիք մը: Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ նուիրական առաքելութեան լծուած ազգային կառոյց մը: Առաքելութիւն մը, որ եղաւ այնքան հրամայական ու վճռական Սփիւռքի ապահայացնող պայմաններուն մէջ:

85 տարիներու պատմութիւնը Հ.Մ.Ը.Մ.ին եղաւ մնայուն պայքարի, հետեւողական ճիգի, կազմակերպչական հզօրութեան, գիտակից յանձնառութեան, ամբողջանուէր նուիրումի պատմութիւն մը: Մեր ժողովուրդի զաւակներէն շատեր ուրախութեամբ տուին Հ.Մ.Ը.Մ.ին՝ իրենց ազգային կազմաւորումը ու հայեցի կրթութիւնը:

Անցեալի իրագործումներով հպարտանալը հեշտ է, սակայն անցեալի փորձառութեամբ

զինուած դէպի ապագայ քալելը դժուար է: Այս պէտք է ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի ճամբան՝ դէպի յառաջ, դէպի ապագայ, դէպի նորանոր իրագործումներ:

Հայրապետական ջերմ սիրով,

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Իրենց պատգամները փոխանցեցին նաեւ Արամ Ա. Կաթողիկոսի, Հանրապետութեան նախագահ Էմիլ Լահուտի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի, Լիբանանի սկառտական Ֆետերասիոնի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» Շքանշանով պարգեւատրուեցաւ Բիւզանդ Թորիկեան – [Ծ/260.12]:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍՈՒՐԻԱ

- ԴԱՄԱՍԿՈՍ
- ՀԱԼԷՊ
- ԼԱԹԱՔԻԱ
- ԳԱՄԻՇԼԻ
- ՔԵՍԱՊ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ԴԱՄԱՍԿՈՍ

Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոսի մասնաճիւղը Սուրիոյ հնագոյն մասնաճիւղն է եւ կը գործէ մարզական եւ սկաուտական բաժիններով: Մասնաճիւղը կը կիրարկէ Ֆուլթպուլ, պասքեթպուլ, փինկ-փոնկ: Սկաուտական բաժինը ունի նուագախումբ:

1992 տարուան վարչական կազմի անդամներն են.- Աւետիս Աճէմեան՝ ատենապետ, Յարութ Պալապանեան, Րաֆֆի Արապեան, Գէորգ Գալէմքերեան, Պաղտասար Չամիչեան, Յակոբ Թեհմիզեան եւ Ջարեհ Տընտլեան: Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 234:

28 Օգոստոսէն 9 Սեպտեմբերին, մասնաճիւղին սկաուտական կազմը, բաղկացած 80 անդամներէ իր տարեկան բանակումը կը կատարէ

Քեսապի մէջ: Ընթացիկ յայտագրի կողքին բանակողները կը հետեւին բանախօսութիւններու: Փակման խարուկահանդէսը տեղի կ'ունենայ 5 Սեպտեմբերին: Այս առթիւ բանակավայր կ'այցելեն Դամասկոսի Թեմի կաթողիկոսական Փոխանորդ Սեպուհ Ծ. Վարդապետ Սարգիսեան եւ միաբաններ:

24 Հոկտեմբեր 1993ին մասնաճիւղը կը նշէ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 75ամեակը- [Ծ/142.23-25]:

30 Օգոստոս 1996ին մասնաճիւղը կը կազմակերպէ Սուրիոյ միջմասնաճիւղային պասքեթպուլի մրցաշարքը: 7-19 Օգոստոսին մասնաճիւղին տարեկան ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ Քեսապի մէջ:

31 Հոկտեմբեր 1998ին մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 80ամեակը:



Դամասկոսի մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումի խմբանկար – Քեսապ 2000

1999ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Րաֆֆի Արապեան, անդամներ՝ Գէորգ Գալէմբերեան:

Մասնաճիւղը իր հիմնադրութեան 75ամեակին առթիւ, 19 Սեպտեմբերին, կը կազմակերպէ պասքեթպոլի, ճատրակի եւ փինկփոնկի մրցաշարք, մասնակցութեամբ Դամասկոսի հայ մարզական ակումբներու խումբերուն — [Ծ/211.11]: Նոյն առթիւ կը կազմակերպուի հրապարակային հանդիսութիւն — [Ծ/212.28]:

2001ին մասնաճիւղի գայլիկներու վոհմակը կը կազմակերպէ եռօրեայ ձմեռնային բանակում՝ Մարմարիթա վանքին մէջ: 3-11 Սեպտեմբերին կը կայանայ մասնաճիւղին ընդհանուր բանակումը Քեսապի մէջ:

Մասնաճիւղէն պասքեթպոլի 2 մարզիկներ մաս կը կազմեն Դամասկոսի հաւաքականին մասնակցելով Համահայկական Բ. Խաղերուն, Երեւանի մէջ, Օգոստոս 2001ին:

2002ի մասնաճիւղի տարեկան «Ջաւախք» ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 28 Օգոստոսէն 7 Սեպտեմբերին, մասնակցութեամբ սկաուտական խումբերէն 94 անդամներու:

31 Հոկտեմբեր 2003ին մասնաճիւղը կը նշէ Միութեան հիմնադրութեան 85ամեակը:

ՀԱԼԷՊ

Կազմակերպչական

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղը Սուրիոյ շրջանի մեծագոյն մասնաճիւղն է իր մարզական եւ սկաուտական լայնածաւալ գործունէութեամբ: Մասնաճիւղը պաշտօնապէս ծանօթ է «Եարմուք» անունով. կը կիրարկէ ֆուլթպոլ, պասքեթպոլ, փինկփոնկ, հէնտպոլ, թենիս, ակթլեթիզմ, լող, հեծելարշաւ, ճատրակ, փետրագնդակ եւ քարաթէ:

1992ին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն Խորէն Գուլումճեան՝ ատենապետ, Սո-

նա Մանուկեան, Արա Աշճեան, Պայծիկ Մելքոնեան, Արսէն Քէօշկէրեան, տոքթ. Աբրահամ Եագուպեան, Ջաւէն էքմէքճեան, Յարութիւն Ջերչեան եւ Գէորգ Երանոսեան:

1993ին վարչութեան անդամներն են.- Նշան Օղիկեան՝ ատենապետ, Գէորգ Կարապետեան, Մանուէլ Հալլաճեան, Յարութիւն Պարսումեան, Սարգիս Խորշիտեան, Վազգէն Մոմճեան, Մարի Մուրատեան, Րաֆֆի Նազարեան եւ Քերոբ Տաուլէ:

14 Նոյեմբեր 1994ին, Շրջանային վարչութիւնը կը յառաջացնէ նշանակովի վարչական կազմ: Անդամներու ընդհանուր թիւն է 1450, որոնցմէ 470ը սկաուտական շարքերէն:

Սարգական գործունէութիւն

Նկատի ունենալով որ Սուրիոյ մէջ մարզական ակումբներու, ֆուլթպոլի եւ պասքեթպոլի 3 խումբերու (երէց, պահեստ եւ երիտասարդ) ախոյեանութիւններու մրցաշարքերուն արդիւնքներուն գումարով կը ճշդուին ակումբներու դասակարգերը, Հ.Մ.Ը.Մ.ի խումբերու Ա. կամ Բ. դասակարգի մէջ պահելու գործը կը բարդանայ եւ գերագոյն ճիգի կը կարօտի:

1992ին մասնաճիւղին ֆուլթպոլի եւ պասքեթպոլի Ա. դասակարգի պահեստի եւ երիտասարդական խումբերու յանձնաձեւով Շրջանային Ներկայացուցչական Ժողովի որոշումով կը փոխանցուի Սուրիոյ Շրջանային վարչութեան: Կը կազմուի ֆուլթպոլի կեդրոնական յանձնախումբ: Այս կազմերու կողքին կը գործեն ֆուլթպոլի պատանիներու խումբեր: Ֆուլթպոլի կողքին մասնաճիւղը ունի հենտպոլի, թենիսի, փետրագնդակի, հեծելանիւի եւ քարաթէի խումբեր: Յատուկ յանձնախումբեր կը վարեն վերոյիշեալ խումբերու աշխատանքները:

1994ի եղանակին, մասնաճիւղին կրտսեր տղոց պասքեթպոլի խումբը կը տիրանայ Սուրիոյ ախոյեանութեան: Խումբին մարզիչն է Սերժ Պալապանեան: Խումբին մաս կը կազմեն Բագրատ Պալապանեան, Սուրէն Արսլանեան, Խա-



1996ի միջմասնաճիւղային խաղերու պասքեթպոլի մրցաշարքի ախոյեան՝
Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի աղջկանց խումբը

չիկ Մաւեան, Սեպուհ Մնճեան, Արա Արոյեան (խմբապետ), Ճորճ Փոսթալեան, Շանթ Թնկրեան, Սարօ Օհանեան, Վրէժ Փափազեան, Մարտիկ Զոլաքեան, Մհեր Գըլկէօզեան, Եղիա Պէքէրեան եւ Յակոբ Քիլէճեան:

1998ին Սուրիոյ պասքեթպոլի փոխ ախոյեանութեան տիտղոսին տիրանալէ ետք, 2000 եղանակին, մասնաճիւղին աղջկանց կազմը կը տիրանայ Սուրիոյ բաժակին — [Ծ/215.27]:

Տարիներէ ի վեր Հ.Մ.Ը.Մ.ական Դաւիթ Դաւիթեան կը վարէ Սուրիոյ թենիսի ազգային խումբի մարզիչի պաշտօնը՝ յաջողութիւններ արձանագրելով միջազգային մրցաշարքերու ընթացքին, յաջորդաբար 1995էն 1998 քառամեակին ան տիրացած է Սուրիոյ ախոյեանութեան:

2003ի եղանակին մասնաճիւղի մարզիկները յաջող արդիւնքներ կ'արձանագրեն քարաթէի, թէքուանտոյի, պիլիարտի եւ թենիսի ախոյեանութիւններու մրցաշարքերուն — [Ծ/250.27]: Աթլետիզմի խումբէն Գէորգ Թիւթիւնճեան կը տիրանայ Սուրիոյ մէկ քայլ ոստումի ախոյեանութեան:

Սկաուտական

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի սկաուտական բաժինի արտօնագրով կը գործեն նաեւ Ս.Օ.Խաչի արեւուշական «Նայիրի» եւ «Անի» խումբերը:

Տարեկան հերթականութեամբ Սուրբ Վար-



Հալէպի մասնաճիւղի սկաուտական Բ. կարգի սեմինարին մասնակիցներու խմբանկար - Յունուար 2003

դանանցի տօնական օրերուն մասնաճիւղին սկաուտական կազմերը կը տօնեն Հայ Սկաուտի Օր:

3 Օգոստոսէն մինչեւ 9 Սեպտեմբեր 1991 Հալէպի մասնաճիւղի սկաուտական զանազան միաւորներ եւ Ս.Օ.Խաչի արժուիկներ իրենց տարեկան բանակումը կը կատարեն Քեսապի էքիզօլուքի բանակավայրին մէջ:

1995ին մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի ատենապետութիւնը կը վարէ Պօղոս Պալէօգեան, սկաուտ խմբապետ՝ Վիգէն Գապաքեան: 1500 անդամներ կը գործեն սկաուտական (գայլիկ, մրջնիկ, արի, արենոյշ) շարքերէն ներս:

1997ին Սկաուտական Խորհուրդի ատենապետն է Զաւէն Բաղդիկեան, ընդհանուր խմբապետ՝ Շիրազ Համամճեան:

1999ի եղանակին մասնաճիւղի Սկաուտական

Խորհուրդը կազմակերպած է դպրոց-բանակում եւ միօրեայ սեմինար՝ զօրացնելու համար խմբապետական կազմերու [Թեքնիք կարողութիւնները – [Ծ/203.34], [Ծ/209.27]: 29 Յուլիսէն 27 Օգոստոս Քեսապի մէջ մասնաճիւղի զանազան միաւորներ կը կատարեն իրենց տարեկան բանակումները. գայլիկ-արժուիկ բաժիններ, պատասխանատու՝ Գէորգ Պէրդուտեան եւ Բաֆֆի Խտրլարեան. արի-արենոյշներ եւ պարմանուհի խումբեր՝ պատասխանատու՝ Արամ Յակոբեան եւ Վրէժ Էսմէրեան:

2002ի եղանակին, մասնաճիւղի միաւորներու տարեկան բանակումները տեղի կ'ունենան 5 Օգոստոսէն 2 Սեպտեմբեր ժամանակամիջոցին, տարբեր հանգրուաններով- [Ծ/244.36]:

27 Փետրուար 2005ին Սկաուտական Խորհուրդի կազմակերպութեամբ կը նշուի «Հայ



Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի «Գրիգոր Յակոբեան» սկաուտական միաւորի 2004ի տարեկան ընդհանուր բանակումի խմբանկար

Սկաուտի Օր»ը: 23 Մարտին «Մայրերու Օր»ը: 2005ին կը կազմակերպուին նաեւ նորընծայի եւ Բ. կարգի սեմինար, բանակում եւ արշաւ դէպի Դամասկոս, Սուրբ Սարգիս վանք եւ Սետնայա:

Մասնաճիւղի խմբապետական յաջորդական կազմերը մասնակցած են Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպած սեմինարներուն:

Ազգային, հրապարակային, հրատարակչական, շինարարական

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի հրապարակային գլխաւոր ելոյթը կը կազմէ Սբ. Զատիկուն օրերու աւանդական տողանցքը, մասնակցութեամբ Սուրիոյ մասնաճիւղերու սկաու-

տական եւ մարզական բոլոր միաւորներուն: Այս հանդիսութիւնները կը հովանաւորեն ազգային եւ քաղաքական ղեկավարութեան ներկայացուցիչները:

Մասնաճիւղը մեծ շուքով տօնած է Միութեան հիմնադրութեան 75, 80 եւ 85ամեակները:

1995ի Մարտ ամսուան ընթացքին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 70ամեակը: Տեղի կ'ունենան ցուցահանդէս, ծնողական ճաշկերոյթ, աստիճանատուչութիւն եւ պարգեւատրում — [Ծ/158.26]:

4 Մարտ 2001ին մասնաճիւղի սկաուտական միաւորները կը տօնեն Հայ Սկաուտի Օրը [Ծ/226.28]:

22-25 Ապրիլ 2001ին, Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման



Հալեպի մասնաճիղի սկաուտական շարքերէն 13 վարիչ առաջնորդներ եւ 26 փոխ խմբապետներ կը ստանան իրենց աստիճանները – 25 Սեպտեմբեր 2005

1700ամեակի առթիւ, Հ.Մ.Ը.Մ.ի, Վասպուրականի եւ Հ.Մ.Մ.ի սկաուտական կազմերը կը դիմաւորեն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.ը: Կը կատարուի ուխտագնացութիւն դէպի Տէր Զօրի Սուրբ Նահատակաց եկեղեցի – [Ծ/229-34]:

29 Յունիս 2003ին մասնաճիղին սկաուտական կազմը կը նշէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 85ամեակը – [Ծ/254.32]:

Հ.Մ.Ը.Մ.ի Հալեպի մասնաճիղի ընկերային գլխաւոր ձեռնարկն է «Ընտանեկան Պարտէզ»ը, ուր ամէն օր, մտերմիկ մթնոլորտի մէջ, կը հաւաքուին Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց ընտանեկան պարագաներով եւ բարեկամներով: Յատուկ յանձնախումբ մը կը ստանձնէ այս ձեռնարկին

խոհանոցային կազմակերպումը:

Մասնաճիղը հրատարակած է «ՄՈԿԼԻ» եւ «ՀԱՅ ՍԿԱՈՒՏ» պարբերաթերթերը:

Հալեպի Հ.Մ.Ը.Մ.ի շինարարական գլխաւոր իրականացումը մարզական համալիրի շինութիւնն է, որուն իրագործումը, դատական արգելքներու պատճառով երկարած է տարիներու վրայ եւ հանգրուաններով աւարտած:

ԼԱԹԱՔԻԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Լաթաքիոյ մասնաճիղը Սուրիոյ Շրջանի Յրդ մասնաճիղն է եւ կը գործէ մարզական եւ սկաուտական բաժիններով:

1992 տարեշրջանի մասնաճիղի վարչութեան

մաս կը կազմեն, ատենապետ՝ Ջալէն Գաբրիէլեան, ատենադպրուհի՝ Մատլէն Տէրտէրեան, մարզական՝ Նազօ Քէչիչեան, խորհրդականներ՝ Մարտիկ Գէորգեան եւ Գարօլ Գրիգորեան:

նաճիւղային փինկփոնկի, լողի եւ ճատրակի մրցաշարքերը: Մասնաճիւղի անդամներէն Պօղոս Ղազարեան կը վարէ Լաթաքիոյ մարզական ֆետերասիօնի նախագահութիւնը:

11 Դեկտեմբեր 1993ին, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը, օրուան պատգամախօսն է Կեղրոնական Վարչութեան ներկայացուցիչ՝ Կարօ Թիւթիւնճեան: Այս առթիւ մասնաճիւղի 11 անդամներ կը պարգեւատրուին «Ծառայութեան» շքանշանով - [Ծ/142.35]:

2 Մարտ 2000ին, մասնաճիւղը կը կազմակերպէ Հայ Սկաուտի Օրուան տօնակատարութիւն: 4 Մարտ 2001ի նոյն տօնակատարութեան կը զուգադիպի մասնաճիւղի հիմնադրութեան 75ամեակը, այս առթիւ տեղի կ'ունենայ աստիճանատուչութիւն- [Ծ/226.28]: 27 Օգոստոսէն 2 Սեպտեմբեր 2001ին Քեսապի մէջ մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան ընդհանուր բանակումը:

1996ին վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ տուքթ. Մինաս Պալեան: Յունիս 30ին մասնաճիւղը կը կազմակերպէ Սուրիոյ միջմաս-

2-8 Սեպտեմբեր 2002ին սկաուտական կազ-



Լաթաքիոյ մասնաճիւղի 2000 տարուան ընդհանուր բանակումին մասնակիցներու խմբանկար



1996ի միջմասնաճիւղային խաղերու պասքէթպոլի Բ. դասի ախոյեան՝ Լաթաքիոյ Հ.Մ.Ը.Մ.ի խումբը

մերը կը կազմակերպեն «Հայկազ Մեսումեան»ի անուան իրենց տարեկան բանակումը:

27 Փետրուար 2003ին Սբ. Վարդանանցի տօնին առթիւ մասնաճիւղին Սկաուտ Խորհուրդը եւ խմբապետական կազմը պաշտօնական հանդիսութեամբ կը նշեն Հայ Սկաուտի Օրը: 2003ին մասնաճիւղը ունի 6 խումբեր, ղեկավարութեամբ 11 խմբապետներու:

19 Մարտ 2005ին մասնաճիւղը կը նշէ Հայ Սկաուտի Օրը:

ԳԱՄԻՇԼԻ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանի 4րդ մասնաճիւղն է Գամիշլիի մասնաճիւղը:

1992 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան անդամներն են. Զաւէն Յովհաննէսեան՝ ատենապետ, Արաքսի Արմենակեան, Պէթի Սարգիսեան, Մկրտիչ Գրիգորեան, Յովհաննէս Տօնապետեան, Սերոբ Առաքելեան եւ Բաֆֆի Կենճոյեան:

1993ին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Իսրայէլ Մելքոնեան:

28 Նոյեմբերին մասնաճիւղը կը նշէ

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը, հովանաւորութեամբ Կոմիտաս Ծայրագոյն Վարդապետ Օհանեանի: Այս առթիւ «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրուեցան մասնաճիւղէն 12 վեթերան անդամներ:

1994 եղանակին մասնաճիւղի Ֆուտպոլի «Մասիս» խումբը եւ պասքէթպոլի աղջկանց կազմը կը տիրանան Սուրբիոյ հիւսիս արեւելեան շրջանի միջկազմային ախոյեանութիւններուն: 31 Յուլիսին մասնաճիւղը կը կազմակերպէ Սուրբիոյ միջմասնաճիւղային Ֆուտպոլի մրցաշարքը – [Ծ/156.26]:

1996ին Ֆուտպոլի խումբը կը տիրանայ «Նահատակ Պասէլ» մրցաշարքի բաժակին: Խումբը կը հանդիսանայ մրցաշարքի տիպար կազմ: Բերդապահ Ատուր Աղամեան՝ լաւագոյն բերդապահ եւ յառաջապահ Խաչիկ Պետոյեան՝ լաւագոյն սքորըրի դիրքերուն կ'արժանանան:

17 Մարտ 1997ին մասնաճիւղը ճոխ յայտագրով կը տօնէ Հայ Սկաուտի Օրը: Օրուան պատգամը կը փոխանցէ Անդրանիկ Ծ. վարդապետ



Գամիշլիի մասնաճիւղի 1996 տարուան ֆուտպոլի խումբը: Ուոքի՝ Բաֆֆի Ղուկասեան, Ալեքսան Հաքիմեան, Յովիկ Թոմասեան, Նուպար Ղազարեան, Ատուր Աղամեան, Կարպիս Էղոյեան, մարզիչ՝ Վարուժան Աբրահամեան: Նստած՝ Տանի Լահտոյեան, Նուպար Գրիգորեան, Խաչիկ Պետոյեան, Փօլ Աղամեան, Ռիատ Իշո, Ծորճ Նաճարեան, Վիգէն Աւետիսեան, պատասխանատու՝ Մհեր Յարութիւնեան:

Այվազեան, որ ի միջի այլոց կը հաստատէ թէ «Այսօր, լպրծուն գաղթաշխարհին մէջ, երբ եկող սերունդներուն հայօրէն յարատեւելու հարցը ազգային հրատապ մտահոգութիւն է, երբ ձուլումի վտանգը հասած է եւ մեր դոմերը կը զարնէ, երբ հայ մարդուն յարատեւութիւնը պահելու համար ամուր կոուսններու պէտք ունինք, դարձեալ Հ.Մ.Ը.Մ.ին կ'ուղղուին մեր նայուածքները» –[Ծ/178.30]:

1998ին մասնաճիւղին ֆուլթայոլի խումբերը նշանակելի յաջողութիւններ կ'արձանագրեն շահելով մրցաշարքերու ախոյեանութիւններ:

2001ին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Անդրանիկ Տիքիճեան: Հայ Սկաուտի Օրոտան տօնակատարութիւնը տեղի կ'ունենայ 22 Փետրուարին: Օրոտան պատգամը կը փոխանցէ Սուրիոյ Շրջանային Սկաուտ Խորհուրդի ատենապետ Խաժակ Տիլպէրեան- [Ծ/226.26]: 22-29 Յուլիս 2001ին եւ 21 Յուլիս 2002ին մասնաճիւղի սկաուտական միաւորները իրենց տարեկան բանակումները կը կայացնեն Քեսապի մէջ:

23 Մարտ 2003ին մասնաճիւղը կը նշէ Հայ Սկաուտի Օրը: 2003 ին մասնաճիւղը կը տօնէ ՀՄԸՄի հիմնադրութեան 85ամեակը: Հանդիսութեան խօսք կ'առնեն Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ Պօղոս Պալէոզեան եւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան –[Ծ/259.23]:

11 Դեկտեմբեր 2005ին մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 87ամեակը –[Ծ/281.34]:

ՔԵՍԱՊ

Քեսապի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը

սկսած է 1947 թուականին: Մասնաճիւղը Սուրիոյ Շրջանային կառոյցին պաշտօնապէս կը միանայ 8 Օգոստոս 1994ին: Մասնաճիւղի անդրանիկ վարչութեան մաս կազմած են.- Շողիկ Խըտրեան՝ ատենապետուհի, Լիզա Կարճիկեան, Վարդուկ Գազէզեան, Վիգէն Լընդեան եւ Օսիա Սաղտըճեան: Անդամներու ընդհանուր թիւն է 36:

11 Մարտ 2001ին մասնաճիւղը կը նշէ Հայ Սկաուտի Օրը:

2-9 Սեպտեմբեր 2001ին մասնաճիւղը կը կայացնէ իր տարեկան ընդհանուր բանակումը Ղընէմիէի մէջ, պատասխանատու՝ Յարութիւն Լընդեան:

7-14 Յուլիս 2002ին մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդին կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ տարեկան ընդհ. բանակում, 90 սկաուտներու մասնակցութեամբ-[Ծ/ 244.35]:

3 Մարտ 2003ին մասնաճիւղին Սկաուտական Խորհուրդը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 85ամեակի եւ Սկաուտի Օրոտան տօնակատարութիւնները: Օրոտան պատգամը կը փոխանցէ Սուրիոյ Շրջանային սկաուտական խմբապետութեան փոխ ատենապետ Բաֆֆի Փալանճեան-[Ծ/250.28]:

5 Մայիս 2005ին մասնաճիւղին գայլիկ-արծուիկները կը կատարեն միօրեայ բանակում, իսկ 7 Մայիսին՝ արի-արենոյշները, նուիրուած Հայկական Յեղասպանութեան 90ամեակի: 22 Մայիսին մասնաճիւղին գայլիկները կը կազմակերպեն Մոկլիի Օրոտան հրապարակային հանդիսութիւն –[Ծ/274.34]:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Կազմակերպչական

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ 7րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը 2 Յունիս 1991ին կ'ընտրէ



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ 2002 տարուան Երջանային Ներկայացուցչական Ժողովի խմբանկար

Երջանային Վարչութեան կազմ, ատենապետութեամբ Մանուէլ Հալլաճեանի: Կազմին կ'անդամակցին տոքթ. Մանուէլ Իսկէնտէրեան, Զեփիլու Էլէյճեան, Յարութիւն Արուշեան, Մանօ Տէր Մանուէլեան, Գէորգ Կարապետեան, Անդրանիկ Լախոյեան, Արամ Աւետիսեան, Մարի Մուրատեան եւ Ճորճ Տաուլէ:

Այս կազմը կը ստանձնէ Հալլապի մասնաճիւղի Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի խումբերու յանձնաձումը՝ կազմելով Երջանային յանձնախումբեր: Սակայն այս դասաւորումը ամլութեան կը մատնէ Հալլապի մասնաճիւղի վարչութիւնը եւ Երջանային Վարչութեան գործունէութիւնը կը կեդրոնացնէ Հալլապի մասնաճիւղի մարզական գործունէութեան վրայ, ղփուարացնելով Երջանային եւ մասնաճիւղային վարչութիւններու յարաբերութիւնները:

Սկառուտական բաժինը Երջանային Սկառուտական Խորհուրդի առաջնորդութեամբ կարելոր յառաջդիմութիւններ կ'արձանագրէ ըստ որակի եւ ըստ մասնաճիւղերու խումբերութուական աճի:

3 Յունուար 1993ին, Երջանի ծրգ Ներկայացուցչական Ժողովէն ընտրեալ Երջանային Վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ կազմով.- տոքթ. Մանուէլ Իսկէնտէրեան՝ ատենապետ, Զեփիլու Էլէյճեան, Յարութիւն Արուշեան, Մանօ Տէր Մանուէլեան, Խորէն Գուլյումճեան, Զաւէն Գասպարեան, Ալօ Աճէմեան, Սեպուհ Գաբրիէլեան (փոխարինուած Խորէն Արգումանեանով) եւ Արամ Աւետիսեան (փոխարինուած Անդրանիկ Աւրնեանով): Աւելի ուշ կազմը կ'ամբողջացուի Քնար Ֆուռուճեանի եւ Անդրանիկ Լախոյեանի մասնակցութեամբ:



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ 14րդ Երջանային Ներկայացուցչական Ժողով – 30 Մարտ 2003

1996-1997 երկամեակի Երջանային Վարչութեան կազմին կ'անդամակցին տոթթ. Մանուէլ Իսկէնտէրեան՝ ատենապետ, Քնար Ծուռունճեան, Մանուկ Քէօզկէրեան, Գէորգ Խաչատուրեան, Րաֆֆի Տէր Աբրահամեան, Անդրանիկ Լախոյեան եւ Անդրանիկ Աւրնեան, Վիգէն Գապաբեան, Զաւէն Գասպարեան, Աւետիս Աճէմեան եւ Խաչիկ Գալայճեան: :

1998-99 երկամեակին Երջանային Վարչութեան ատենապետութիւնը կը վարէ տոթթ. Տիգրան Զափանեան: Կազմին կ'անդամակցին Նուշիկ Տէյիրմէնճեան, Կարպիս Թովմասեան, Սեպուհ Գապագեան, Անդրանիկ Լախոյեան, Անդրանիկ Աւրնեան, Րաֆֆի Տէր Յակոբեան, Յարութիւն Պարսամեան, Գէորգ Գալէմբերեան, Յակոբ Մկրտիչեան եւ Խաչիկ Գալայճեան:

6 Յունիս 2000ին Սուրիոյ 12րդ Երջանային

Ներկայացուցչական Ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.- ատենապետ՝ Արամ Աւետիսեան, փոխ ատենապետ՝ Գէորգ Կարապետեան, ատենադպրուհի՝ Զեփիւռ Մուղալեան, գանձապահ՝ Կարպիս Թովմասեան, հաշուապահ՝ Սեպուհ Գապագեան, խորհրդականներ՝ Մանուկ Քէօզկէրեան, Զաւէն Գասպարեան, Մինաս Պալեան եւ Գէորգ Գալէմբերեան: Երջանը 2000-2001 երկամեակին ունեցած է կազմակերպական, սկաուտական եւ մարզական բեղուն գործունէութիւն: 54 հոգինոց պատուիրակութեամբ մասնակցած է ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ճրգ խաղերուն: Երջանի սկաուտութեան ընդհանուր թիւն է 1405: Երջանային Ներկայացուցչական Ժողովը երկամեակի գործունէութիւնը կը նկատէ «Գոհացուցիչ»:

9-10 Փետրուար 2002ին 13րդ Երջանային Ներ-



Հ.Մ.Ը.Մ.ի Տէր Զօրի մասնաճիւղի նորակազմ սկաուտական կորիզը

կայացուցչական ժողովէն ընտրեալ Շրջանային Վարչութեան կ'անդամակցին Գէորգ Կարապետեան՝ ատենապետ, Մանուկ Քէօզկերեան, Մարալ Տիքպիքեան, Պօղոս Պալէոզեան, Յարութ Խաչատուրեան, Զեփիլու Մուղալեան, Մանուկ Գազէլեան, Խաժակ Տիլպէրեան, Աւօ Աճէմեան, Նազարէթ Խալոյեան եւ Զաւէն Գասպարեան:

Այս կազմին երկամեայ գործունէութեան յաջողութիւններէն են Ֆութպոլի ներկայացուցչական կազմին Գ. դասակարգէն Բ. դասակարգ բարձրանալը, աղջկանց պասքեթպոլի ներկայացուցչական կազմին Սուրբիոյ ախոյեան հանդիսանալը, պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբին Բ. դասակարգէ՝ Ա. դասակարգ բարձրանալը — [Մ/239.26]:

30 Մարտ 2003ին, Շրջանի 14րդ Ներկայա-

ցուցչական ժողովի Ա. նիստը կ'ընտրէ 6 պատգամաւորներ՝ Սուրբիոյ Շրջանը ներկայացնելու Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական ծրագրի Ընդհանուր ժողովին: 1999-2003 քառամեակին Սուրբիոյ Շրջանը ունեցած է 615 անդամի թիւի աճ: Բ. նիստը տեղի կ'ունենայ 21 Սեպտեմբեր 2003ին: Այս ժողովէն կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութեան կազմ.՝ ատենապետ՝ Պօղոս Պալէոզեան, անդամներ՝ Մարալ Տիքպիքեան, Մովսէս Քէօզկէրեան, Անդրանիկ Աւրանեան, Խաժակ Տիլպէրեան, Մանուկ Գազէլեան, Յակոբ Մկրտիչեան, Աւօ Աճէմեան եւ Նազարէթ Խալոյեան:

Այս կազմը կը գործէ մինչեւ 14 Մայիս 2006: Մասնաճիւղերու հետ ընթացիկ կապերու կողմէն Շրջանը կը վերամշակէ իր ներքին կանոնադրութիւնը: Շրջանային Սկաուտական Խորհուրդի գործակցութեամբ, Տէր Զօրի մէջ, 24

Դեկտեմբեր 2004ին կը ստեղծուի սկաուտական շարժում, իսկ Եագուպիէի մէջ կը նախաձեռնուի սկաուտական կորիզի մը կազմութեան – [Ծ/274.5]:

2006ի Մայիսին տեղի կ'ունենայ 15րդ Շրջ-Ներկայացուցչական ժողով, որուն աւարտին կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութեան կազմ, ատենապետութեամբ Րաֆֆի Տէր Աբրահամեանի եւ անդամակցութեամբ Լիզա Լալէեանի, Մովսէս Քէօզկէրեանի, Շահէ Չաղլասեանի, Աբրահամ Եագուպեանի, Արմէն Քէօզկէրեանի, Մկրտիչ Գրիգորեանի, Աբրահամ Ասատուրեանի եւ Սարգիս Քիւրտեանի:

Սկաուտական

Սուրիոյ Շրջանային Սկաուտ Խորհուրդի

կազմակերպութեամբ, 7րդ խմբապետական միջմասնաճիւղային ժողովը տեղի կ'ունենայ 25 Դեկտեմբեր 1991ին, Հալէպի «Արամ Մանուկեան» ժողովրդային Տան մէջ: Ժողովը կը ճշդէ յաջորդ երկամեակի Սուրիոյ Շրջանի սկաուտական գործունէութեան ուղեգիծը: Յաջորդաբար կը կազմակերպուին 8րդ (17.4.1994), 9րդ (18 Դեկտեմբեր 1994), 10րդ (7 Յուլիս 1997), 12րդ (8 Մարտ 2001)ին եւ 14րդ (1 Մայիս 2005) խմբապետական ընդհանուր ժողովներ:

Սուրիոյ Շրջանային Սկաուտական Խորհուրդին կազմակերպութեամբ 1997ին կազմակերպուած է Սկաուտական Խորհուրդներու միջմասնաճիւղային խորհրդաժողով:

1998ին Շրջանի Սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 1635, մասնաճիւղային հետեւեալ թիւերով.- Հալէպ՝ 850, Դամասկոս՝ 255, Գամիշ-



Սուրիոյ միջմասնաճիւղային խմբապետական բանակումի խմբանկար – Սեպտեմբեր 2004



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկաուտական խորհուրդի կազմակերպած սեմինարին մասնակիցներու խմբանկար - Յունիս 2004

լի՝ 155, Լաթաքիա՝ 210 եւ Քեսապ՝ 165:

2002ին Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը կազմակերպէ խմբապետներու վերաորակաւորման սեմինար:

1991էն 2006, յաջորդական Շրջանային Սկաուտական Խորհուրդներուն մաս կազմած են Ալէքսան Իսկէնտէրեան, Զաւէն Տէրվիչեան, Միսաք Տէյիրմենճեան, Մանուկ Քէօշկերեան, Վահէ Յովհաննէսեան, Պօղոս Պալէօզեան, Հուրի Սերայտարեան, Արփի Թէնէքէճեան, Սոնա Սարգիսեան, Անդրանիկ Աւրնեան, Խաժակ Տիւպէրեան, Արմէն Քէօշկերեան, Վիգէն Գապագեան, Քնար Ֆուռուճեան, Սեզա Նշանեան, Ֆլոր Կարապետեան, Մարալ Տիքպիքեան, Բաֆֆի Յովսէփեան, Վահէ Քիւրքճեան, Այտա Գաւաֆեան, Մարալ Գալայճեան, Բաֆֆի Փա-

լանճեան, Մանուկ Իսկէնտէրեան, Տիգրան Փիլաճեան, Հուրի Իյճեան, Վահէ Թանաշեան, Մեղրիկ Ապահունի, Սեպուհ Գապագեան, Սիրուն Քէշիշեան, Լիզա Լալէեան, Սաօ Տիշոյեան, Մարիա Սերայտարեան, Սօսի Ֆրունճեան, Գէորգ Գարակաւուրեան, Ալին Քիւրիւմլեան, Յարութ Ղազարեան, Արտաշէս Փայասլեան, Հուրինա Պէրպէրեան, Լեւոն Իսկէնտէրեան եւ ուրիշներ:

Մարզական

Հ.Մ.Ը.Մ. Սուրիոյ մասնաճիւղերու մասնակցութեամբ, բացի Զատկական տօներու առթիւ կազմակերպուող մրցաշարքերէն, Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունե-

ցած են միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքեր, Դամասկոսի մէջ, 3 Օգոստոս 1996ին եւ յաջորդող տարիներուն:

Սուրիոյ միջմասնաճիւղային Ֆութպոլի մրցաշարքեր կազմակերպուած են Գամիշլիի մէջ, 21 Սեպտեմբեր 1997ին [Մ/185.20]:

Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ Հալէպի մասնաճիւղէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Համահայկական Ա. Խաղերուն, 28 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 1999ին, Երեւան: Պատուիրակութեան մաս կը կազմեն պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբեր, թենիսի Սուրիոյ ախոյեաններ՝ Դաւիթ եւ Գեղամ Դաւիթեաններ, աթլէթ Ռուլա Համբարձումեան, որ կը տիրանայ մէկ քայլ ոստումի ախոյեանի տիտղոսին, իսկ պասքեթպոլի կազմէն Ալին

Մարկոսեան կ'ընտրուի Համահայկական Ա. Խաղերու թագուհի:

21 եւ 30 Յունիս 2000ին Դամասկոսի մէջ տեղի կ'ունենան Սուրիոյ լողի ախոյեանութեան մրցումները: Հ.Մ.Ը.Մ.ի տղոց հինգ դասակարգի 19 լուղորդներ կը մասնակցին այս մրցումին, գրաւելով խմբային երկրորդ դիրքը: Այսպէսով խումբը Բ. դասակարգէն կը բարձրանայ Ա. դասակարգ:

17 Յունիս 2001ին տեղի կ'ունենան Ֆութպոլի, փինկ-փոնկի եւ աթլէթիզմի միջմասնաճիւղային մրցումներ, գտելու համար Համահայկական ճրգ խաղերուն մասնակցելիք մարզիկները: Յաջորդող եղանակներուն կը կազմակերպուին միջմասնաճիւղային մրցաշարքեր հետեւեալ կարգով.-



Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի, Հ.Մ.Մ.ի եւ Վասպուրականի սկաուտական խումբերը կ'այցելեն Տէր Զօրի Նահատակաց յուշահամալիր



Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի վոհմակներու եւ երամներու անդամները կ'այցելեն Ապրիլ 24ի յուշարձան

7 Նոյեմբեր 2003ին պասքեթպոլ՝ Դամասկոս,
27 Նոյեմբեր 2003ին մինի ֆուլթպոլ՝ Գամիշլի,
28 Մարտ 2004ին պասքեթպոլ՝ Հալէպ, 10 Յուլիս
2005ին լող եւ ճատրակ՝ Լաթաքիա:

18էն 25 Օգոստոս 2005ին չրջանը կը հիւրընկալէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ֆուլթպոլի խումբը:

Ազգային, Հրապարակային,
Հրատարակչական, Շինարարական

Սուրիոյ Շրջանի միջմասնաճիւղային աւանդական հրապարակային ելոյթն է Հալէպի Զատկական խաղերը եւ ընդհանուր տողանցքը: Այս ձեռնարկը, նախաձեռնութեամբ Սուրիոյ Շրջանային Վարչութեան, մրցաշարքերուն ընդմէջէն ի մի կը հաւաքէ չրջանի սկաուտական եւ մար-

զական բոլոր միաւորները: Տեղի կ'ունենայ ընդհանուր տողանցք:

Ստորեւ այս ելոյթներու թուականները ժամանակագրական կարգով.-

-1991 - [Ծ/125.12], 1992, 11 Ապրիլ 1993 - [Ծ/137.25], 3 Ապրիլ 1994 - [Ծ/151.5], 17 Ապրիլ 1995 - [Ծ/163.30], 1996, 31 Մարտ 1997 - [Ծ/178.33] եւ շարունակաբար:

Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակին եւ 80ամեակին նուիրուած մեծաշուք հանդիսութիւններ տեղի կ'ունենան Հալէպի մէջ, 14 Նոյեմբեր 1993ին-[Ծ/142.26] եւ 1998ին-[Ծ/200.51]:

24 Նոյեմբեր 2001ին, յետ «Յարգանքի Օր»ուան հանդիսութեան, Հալէպի Ազգային

ՍՈՒՐԻԱ



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ աթլետներու ներկայացուցչական խումբը 2001ին



Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ պասքեթպոլի տղոց եւ աղջկանց ներկայացուցչական խումբերը 2007ին

գերեզմանատան մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.-Մ.ի նուիրեալներու յատուկ դամբարանի պաշտօնական արարողութիւնը — [Ծ/234.23]:

18էն 20 Օգոստոս 2005ին Շրջանային Վարչութիւնը կը հիւրընկալէ Հ.Մ.Ը.Մ.- Ֆրանսի ֆուլթպոլի խումբը: Տեղի կ'ունենայ ֆուլթպոլի մրցում եւ տեսարժան վայրերու այցելութիւն: Նոյն թուականին Շրջանային Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամներու ներկայութեամբ, կը հիւրընկալէ Մուսուլի Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւնը՝ վերամիանալու Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական կառոյցին- [Ծ/ 287-288.33]:

1995ին, 2000ին եւ 2005ին Հայկական Ցեղասպանութեան 80, 85 եւ 90ամեակներու առիթներով, Շրջանի մասնաճիւղերու եւ այլ Շրջաններ

ընդ պատուիրակութիւններու մասնակցութեամբ ուխտագնացութիւններ կազմակերպուած են Ղէպի Տէր Զօր եւ Մարկատէ- [Ծ/278/3]:

Հրատարակչական

Տարեկան հերթականութեամբ մասնաճիւղեր եւ Շրջանային Սկսուտական Խորհուրդներ հրատարակած են գրպանի օրացոյցներ:

Շինարարական

Շրջանային Վարչութիւնը 1996-97 երկամեակին նորոգած է Քեսապի էքիզօլուքի ազգապատկան բանակավայրը: Հալէպի մասնաճիւղի գործակցութեամբ իրականացուցած է Հալէպի Ազգային գերեզմանատան մէջ «Հ.Մ.Ը.Մ.ի նուիրեալներու Դամբարան»ի շինութիւնը:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

- ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ
- ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ
- ՖՐԵԶՆՕ
- ՄՈՆԹԵՊԵԼԼՕ
- ՓԱՍԱՏԻՆԱ
- ԿԼԷՆՏԷՅԼ
- ՕՐԷՆՃ ՔԱՈՒՆԹԻ
- ՍԱՆ ՖԵՌՆԱՆՏՕ ՎԱԼԻ
- ՍԱՆ ՏԻԷԿՕ
- ՀԻՈՒՍԹԸՆ
- ԻՆԼԸՆՏ ԷՄՓԱՅՐ
- ՍԱՆԹԱ ԳԼԱՐԱ ՎԱԼԻ
- ՍՈԼԹ ԼԷՅՔ ՍԻԹԻ
- ՍԱՈՒԹ ՊԷՅ
- ՔՐԵՍԵՆԹԱ ՎԱԼԻ
- ՊԸՐՊԷՆՔ
- ԼԱՍ ՎԵԿԱՍ
- ՖԵՆԻՔՍ
- ՈՒՈԼՆԱԹ ՔՐԻՔ
- ՏԵՆՎԷՐ ԳՈԼՈՐԱՏՕ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻԻՆ

ԼՈՍ ԱՆՃԵԼՆՍ

Կազմակերպչական Գործունեութիւն

1991էն սկսեալ, Արեւմտեան Միացեալ Նահանգներու մայր մասնաճիւղի՝ Լոս Անճելըսի արագընթաց յառաջդիմութիւնները, կազմակերպչական, մարզական, սկաուտական եւ ազգային գետիններու վրայ, կը շարունակուին նոյն թափով: 1991 տարեշրջանի վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետութեամբ Կարպիս Շիրտրմեանի, Յարութ Քէհէեան, Նիկոլ Արզումանեան, Նազար Գազորեան, Վարուժ Քուչուկեան, Կարօ Իսբէնճեան, Թալին Դաւիթեան, Սիւզի Իփէկեան եւ Սալբի Մեսրոպեան: Մասնաճիւղը կը գործէ 1203. N. Vermont L.A. 90029 հասցէի նստավայրին մէջ:

1992 տարեշրջանի վարչութեան անդամներ կ'ընտրուին.- Մհեր Դաւիթեան՝ ատենապետ, Յարութիւն Քէհէեան, Սալբի Ճէճէեան, Սիւզի Մինոյեան, Կարօ Իսբէնճեան, Արա Գազանճեան եւ Նազար Գազորեան: Անդամական գետնի վրայ մասնաճիւղը զգալի աճ կ'արձանագրէ, ընդհանուր թիւը բարձրացնելով 702ի:

22 Նոյեմբեր 1992ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը 1993 տարեշրջանի իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Սթիվ Արթինեան
- Փոխ ատենապետ եւ մարզականի պատասխանատու՝ Կարօ Իսբէնճեան
- Ատենադպիր՝ Սալբի Ճէճէեան
- Գանձապահ՝ Սերգօ Աշրգեան



Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի 2007ի վարչական կազմը. ոտքի՝ Արամ Թովմաս, Կարպիս Շիրտրմեան, Յովիկ Ծահիճեան, Գրիգոր Սարգիսեան: Նստած՝ Լիւսի Մամպրոյեան, Անի Հիւնտոյեան, Հուրիկ Ֆուռնուզեան, Մայտա Ծահիճեան, Նելլի Փափազեան

Հաշուապահ՝ Յարութ Քէհէեան

Տնտեսականի պատասխանատու՝ Յարութիւն Բարսեղեան

Սկստականի պատասխանատու՝ Տիգրան Գեղինեան

Մասնաճիւղին սկստական եւ մարզական գործունէութիւնները կը կայանան Հովիվուտի Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանի եւ Հայ Կեդրոնի շրջանակէն ներս: Մասնաճիւղը կը շարունակէ կիրարկել Ֆութպոլ, վոլիպոլ, պասքեթպոլ, փինկփոնկ եւ աթլետիզմ:

Բացի սկստական եւ մարզական գործունէութիւններէն, մասնաճիւղը ունի նաեւ ընկերային կեանք, որ կը վարէ ընկերային օժանդակ յանձնախումբ մը:

Այս տարեշրջանին կը նշուի մասնաճիւղին հիմնադրութեան 25ամեակը, 9 Հոկտեմբեր 1993ին կազմակերպուած յատուկ տօնախմբութեամբ, ներկայութեամբ 700 հանդիսականներու, գլխաւորութեամբ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կիլիկեան Թեմի առաջնորդ Տաթեւ Արք. Սարգիսեանի: Հանդիսութեան ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով կը պարգեւատրուի Յարութիւն Բարսեղեան: Այս առթիւ վարչութիւնը կը հրատարակէ մասնաճիւղին 25ամեայ գործունէութիւնը ներկայացնող պատկերազարդ գրքոյկ մը:

1994էն 1999 տարիներուն մասնաճիւղին յաջորդական վարչութիւններու ատենապետութեան պաշտօնը վարած են Սթիվ Արթինեան եւ Կարօ Իսբէնճեան: Վարչական կազմերուն մասնակցած են՝ Սալբի Ճէճէեան, Սերգօ Աշրգեան, Յարութ Քէհէեայեան, Տիգրան Գեղինեան, Յարութիւն Բարսեղեան, Վահագ Թովմասեան, Րաֆֆի Իսբէնճեան, Արա Գազանճեան, Թամար Ուրիշեան, Յակոբ Աշճեան, Ասպետ Պետիկեան, Օննիկ Ֆիլիպեան, Երուանդ Աշճեան, Մարիամ Գահրամանեան, Յովիկ Սարգիսեան, Ճէրի Սերքոշեան, Լուսի Սօսիկեան, Վահէ Թաշճեան, Ներսէս Թաշճեան, Փիէռ Մանուկեան եւ Հրայր Պոյաճեան:

2000 տարեշրջանի վարչական կազմին կ'ան-

դամակցին ատենապետ՝ Սթիվ Արթինեան, փոխ ատենապետ՝ Վահէ Թաշճեան, ատենադպիր՝ Լիւսի Սօսիկեան, գանձապահ՝ Վահագ Թովմասեան, խորհրդականներ՝ Կարօ Իսբէնճեան, Երուանդ Աշճեան, Փիէռ Մանուկեան, Հրայր Պոյաճեան եւ Ներսէս Թաշճեան:

2001ին, Վահէ Թաշճեանի ատենապետութեամբ վարչական կազմին կ'անդամակցին՝ Փիէռ Մանուկեան, Մայտա Չահանեան, Անի Հինոյեան, Գարէն Պալեան, Ներսէս Թաշճեան, Երուանդ Աշճեան, Րաֆֆի Վարդիվառեան եւ Գրիգոր Գազանճեան:

2002 տարուան վարչական կազմի անդամներն են. ատենապետ՝ Փիէռ Մանուկեան, ատենադպրուհի՝ Մայտա Չահանեան, գանձապահ՝ Սեզա Նշանեան, յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Լիւսի Կարապետեան, Հայկ Աշրգեան, Դանիա Աշճեան, Համբիկ Հաւանճեան, Դրօ Ղուկասեան եւ Գրիգոր Գազանճեան:

Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը այս տարեշրջանին կը հասնի 600ի: Հետեւողական եւ արդիւնաւէտ աշխատանքներով կ'իրագործուին կազմակերպչական, մարզական եւ սկստական բոլոր աշխատանքները, յուսատու ապագայի խոստումներով:

2003 տարուան վարչական կազմին կ'անդամակցին Փիէռ Մանուկեան, Մայտա Չահանեան, Դանիա Աշճեան, Հայկ Աշրգեան, Համբիկ Հաւանճեան, Դրօ Ղուկասեան, Գրիգոր Գազանճեան, Արի Պոյաճեան եւ Հուրի Ֆունուզեան:

2004-2005 եղանակին վարչական կազմի անդամներ կ'ընտրուին Փիէռ Մանուկեան՝ ատենապետ, Անի Հինոյեան, Դանիա Աշճեան, Արի Պոյաճեան, Արամ Թոմաս, Դրօ Ղուկասեան եւ Լար Շալճեան:

Մարզական Գործունէութիւն

Լոս Անճելըսի մասնաճիւղի մարզական գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմեն Շրջանի Նաւասարդեան Խաղերը: Մասնաճիւղի պասքեթպոլի եւ Ֆութպոլի խումբերը միշտ մասնակցած են այս խաղերուն՝ զանազան դա-

սակարգի երկու սեռի կազմերով: Արձանագրելի են պասքեթպոլի աղջկանց Ա. կազմի յաղթանակները յաջորդաբար հինգ տարիներու, 1999-2003 մրցաշարքերու ախոյեանութիւններու ապահովումով:

Մասնաճիւղին մարզիկները յաճախ մաս կազմած են Շրջանի հաւաքականներուն՝ մասնակցելու համար Գանատայի, Արեւելեան Մ. Նահանգներու միջշրջանային խաղերուն եւ Երեւանի մէջ Համահայկական Ա. եւ Բ. Խաղերուն: 2004ին Փոլթպոլի Ա. խումբը կը մասնակցի Հարաւային Ամերիկայի միջմասնաճիւղային մրցաշարքին, Գորտոպայի մէջ:

Սկաուտական Գործունէութիւն

Լոս Անճելըսի մասնաճիւղի սկաուտական բաժինը կը գործէ հաւաքոյթներու, արշաւներու եւ տարեկան ընդհանուր բանակումներու հերթական իրագործումներով: Ամիսներու նախապատրաստական աշխատանքներու արդիւնքով իրագործուող տարեկան բանակումներու յայտագիրները իրենց դաստիարակչական բաժնի ազգային, թեքնիք եւ երիտասարդական նիւթերու ջամբումով, ինչպէս նաեւ ձեռային աշխատանքներու իրագործումով եւ փակման խարուկահանդէսներով ամէն հաւաստիք կը ներշնչեն ծնողներուն որ իրենց պատանի զաւակները կը գտնուին իտէալ միջավայրի մէջ եւ յաջող ելոյթներ կ'ունենան միութենական եւ ազգային շրջանակներէ ներս:

Այս կարգի տարեկան բանակումներէն են մասնաճիւղի 21էն 27 Օգոստոս 1995ի բանակումը, որ տեղի ունեցաւ Տէքոր Գէնիլընի անտառախիտ բանակավայրին մէջ, 70 արի-արենոյշներու մասնակցութեամբ եւ ընդհանուր խմբապետութեամբ Յարութ Մատէնլեանի- [Մ/161.20]: Տարեկան 30րդ ընդհանուր բանակումը տեղի ունեցաւ 3էն 8 Օգոստոս 1999ին, Վերթիկօ Օքսի սկաուտական բանակավայրին մէջ, ընդհանուր խմբապետութեամբ Հրայր Պոյաճեանի - [Մ/209.20]:

Սկաուտական փորձառու աստիճանաւորա-

կան ցանցի պատրաստութեան նպատակով, 9 Մարտ 1991ին մասնաճիւղի աստիճանաւորներ՝ Վարուժան Քուչուկեան եւ Յակոբ Այնթէպլեան կը մասնակցին Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպած Ա. կարգի քննութիւններուն եւ կը ստանան վկայական:

1996էն սկսեալ, վարչութեան կողմէ նշանակուած օժանդակ մարմին մը, բաղկացած նախկին խմբապետներէ եւ ծնողներէ, կը վարէ սկաուտական բաժինը:

18էն 25 Օգոստոս 2002ին AYFի բանակավայրին մէջ կայացաւ մասնաճիւղին 34րդ ընդհանուր բանակումը, խմբապետութեամբ Արի Պոյաճեանի: Բանակումի յայտագրին մաս կազմեցին մարզական ելոյթներ՝ լողարշաւ, քանէոյի մրցում, նշանառութիւն, արշաւներ, սկաուտական խաղեր եւ մրցանքներ: 24 Օգոստոսի բանակումի փակման հանդիսութեան ներկայ գտնուեցան 130 ծնողներ: 35րդ ընդհանուր բանակումը կը կայանայ Վերտուր Օքս բանակավայրին մէջ, 135 սկաուտներու մասնակցութեամբ:

27-29 Դեկտեմբեր 2002ին կը կայանայ Ա. կարգի խմբապետական բանակում՝ Sequoia National Park-ի մէջ: 2004 տարեշրջանի եղանակի փակումը կը կատարուի հրապարակային շքեղ հանդիսութեամբ՝ Barnsdall Gallery Theaterի մէջ:

Հրապարակային եւ Ազգային Գործունէութիւններ

1993ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 25ամեակը

1998ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 30ամեակը

2000ին մասնաճիւղը կը կազմակերպէ Մեծ Հաւաք՝ հին ու նոր անդամներու մասնակցութեամբ:

2003ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 35ամեակը հրապարակային հանդիսութեամբ եւ շքեղ պարահանդէսով:

Հրատարակութիւններ

Մասնաճիւղի ներքին լրատու՝ «Փոթորիկ» (նախկին «Լրատու»ի շարունակութիւնը) կը հրատարակուի եռամսեայ հերթականութեամբ:

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԲՕ

Կազմակերպչական Գործունէութիւն

Արեւմտեան Միացեալ Նահանգներու երկրորդ մասնաճիւղն է Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղը, հիմնուած՝ 1970ին:

1991 տարուան վարչական կազմի անդամներն են.- Ռոպէր Սարգիս՝ ատենապետ, Ռուբիկ Նազարեան, Արման Քիլիճեան, Կարէն Էքմէքճեան,

Մարալ Օլմասաքեան, Սիրան Նահապետեան եւ Թամար Սարգիսեան: Մասնաճիւղը կը գործէ 51 Common Wealth Ave. հասցէի կեդրոնին եւ Պրիկնկէյմ քաղաքի իր սեփական կալուածին մէջ: Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 265, որոնցմէ 94 սկաուտական, 117 մարզական եւ մնացեալը օժանդակներու շարքերէն:

1993 տարուան վարչական կազմին կ'անդամակցին Կորիւն Հայրապետեան, Աստղիկ Փանոսեան, Սօսի Գոճայեան, Ալին Էքմէքճեան, Ճորճ Վարդանեան, Թամար Սարգիսեան, Ռուբիկ Նազարեան եւ Հայկ Միսճեան: Այս տարեշրջանին անդամներու թիւը կը բարձրանայ 360ի: Մարզական խումբերը կը մարզուին Սան Պուրնո քաղաքին մէջ վարձուած մարզադաշտին մէջ:



Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը. ոտքի՝ Վաչիկ Սարգիսեան, Աիօ Ստեփանեան, Ծանթ Սարգիսեան, Ռոպէրթ Սարգիս, նստած՝ Աբրահամ Եագուպեան, Սագօ Սարգիսեան, Ալտա Ծապօ

1994 տարեշրջանին նախկին վարչական կազմին կը բացակային Ալին Էքմէքճեան, Ճորճ Վարդանեան, Թամար Սարգիսեան եւ Ռուբիկ Նազարեան, փոխարինուած Սերոբ Սամուրջաշեանով, Արման Քիլիճեանով եւ Արա Հարմանտարեանով:

1995էն 2002 տարիներուն յաջորդական վարչութիւններուն մասնակցած են հետեւեալ անդամները.- Ժենո Մինասեան, Սօսի Գոճայեան, Աստղիկ Փանոսեան, Ռազմիկ Առաքելեան, Կորիւն Հայրապետեան, Սերժ Չաքմաքճեան, Գօգօ Արիստակէսեան, Արմանտ Քիլիճեան, Ժանէթ Շահքարամի, Կարօ Սարգիսեան, Կարէն Էքմէքճեան, Վաչիկ Սարգիսեան, Յարուկ Տէյիր-

մէնճեան, Թամար Ս. Քիլիճեան, Համլէթ Գասպար, Այտա Շապօ, Հայկ Մխճեան, Արշօ Աւետեան, Սահակ Պալեան, Յարուկ Պետրոսեան, Սարգիս Շիրիքճեան, Յասմիկ Պուտազեան, Մարտիկ Շազալեան, Անդօ Մաքասճեան, Ռոպէր Պապիկեան, Անտրէ Նազարեան, Առլէթ Հայրապետեան, Րաֆֆի Խաչատուրեան, Վահան Տէրունեան, Վիգէն Գապաթուզեան, Սիլվա Պապիկեան եւ ուրիշներ:

2002ին մասնաճիւղը կը հաշուէ 420 անդամ, որոնցմէ 88 սկաուտական շարքերէն:

2003 տարուան վարչական կազմին կ'անդամակցին ատենապետուհի՝ Աստղիկ Փանոսեան, ատենադպիր՝ Անդօ Մաքասճեան, գանձապահ՝



Ֆրեզնոյի մասնաճիւղի 2007 տարուան վարչութիւնը. Գօգօ Հաւանճեան, Վահան Արամեան, Անի Ծահիճեան, Յասմիկ Թօփալեան, Ռոպէրթ Թորոսեան:
Կը բացակային՝ Մարտիկ Եփրեմեան, Սօսի Խաչատուրեան

Սարո Շահինեան, սկառուտականի ներկայացուցիչ Վարուժ Շիթիլեան, մարզականի ներկայացուցիչ՝ Արա Չաքալեան, խորհրդականներ՝ Վաչիկ Սարգիսեան եւ Արթին Պետրոսեան:

2004ին վարչական կազմի անդամներ կ'ընտրուին, Վարուժ Շիթիլեան՝ ատենապետ, Սազօ Սարգիսեան՝ ատենադպիր, Սարո Շահինեան՝ գանձապահ, Ռոպէր Սարգիսեան, Արա Չաքալեան, Գրիգոր Արիստակէսեան եւ Նորայր Գասապեան՝ խորհրդականներ:

2005ին վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի Արա Չաքալեանէն եւ Նորայր Գասապեանէն, որոնց կը փոխարինեն Սիլվա Պապիկեան եւ Աստղիկ Փանոսեան:

Մարզական Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի մարզական գործունէութեան առանցքը կը կազմեն պասքեթպոլի, վոլիպոլի, ֆուտպոլի եւ աթլետիզմի ճիւղերը, որոնց կողքին կը մշակուին այլ մարզաճիւղեր:

Մասնաճիւղին մարզական տարեկան հերթականութեամբ իրագործուող ձեռնարկն է Սեպտեմբեր ամսուան առաջին շաբաթավերջի պասքեթպոլի միջմասնաճիւղային մրցաշարքը: Մարզական խումբերը մնայուն ձեւով մասնակցած են շրջանի տարեկան Նաւասարդեան խաղերուն, տեղական լիկերու ախոյեանութիւններու մրցաշարքերուն եւ քոյր մասնաճիւղերու կազմակերպած մրցաշարքերուն:

1993ին մասնաճիւղի ֆուտպոլի խումբը կը ներկայացնէ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանը, մասնակցելով համաՀ.Մ.Ը.Մ.ական չորրորդ խաղերուն Գանատայի մէջ:

Սկառուտական Գործունէութիւն

Մասնաճիւղին սկառուտական գործունէութիւնը կը վարէ Սկառուտական Խորհուրդը: Սկառուտական գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ տարեկան միջմասնաճիւղային բանակումը՝ Սանթա Գլարայի, Ուոլնաթ

Քրիքի եւ Ֆրեզնոյի մասնաճիւղերու սկառուտական կազմերուն հետ միասնաբար:

Մասնաճիւղէն սկառուտներ մասնակցած են համաՀ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումներուն:

Այլ Գործունէութիւններ

Մասնաճիւղի հրապարակային ելոյթներէն են ազգային տօնախմբութիւններու մասնակցութիւնը: Վարչութիւնը կը հրատարակէ իր տարեկան օրացոյցը: Մասնաճիւղի հիմնադրութեան 25, 30, 35ամեակները եւ Միութեան հիմնադրութեան 85ամեակը նշուած են հրապարակային հանդիսութիւններով — [Ծ/ 259.26]:

ՖՐԵԶՆՕ

1991ին Ֆրեզնոյի Հ.Մ.Ը.Մ.ի «Սասուն» մասնաճիւղը կը շարունակէ իր գործունէութիւնը մարզական եւ սկառուտական գոյգ թեւերով: Մասնաճիւղի նստավայրի հասցէն է՝ 2348 Ventura Ave-ի Հայ Կեդրոնը: Անդամներու ընդհանուր թիւն է 221:

Սկառուտական բաժինը կը զարգանայ Սան Ֆրանսիսքոյի եւ Սանթա Գլարայի մասնաճիւղերու սկառուտական խումբերու գործակցութեամբ: Խումբերը կը մասնակցին տարեկան միջմասնաճիւղային բանակումներուն: Մարզական խումբերը կը մասնակցին Շրջանի Նաւասարդեան խաղերուն:

Մարզական բաժինը կը կիրարկէ ֆուտպոլ, պասքեթպոլ եւ վոլիպոլ երկսեռ խումբերով: 16 եւ 17 Ապրիլ 1993ին, մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային ֆուտպոլի մրցաշարք՝ 6 խումբերու մասնակցութեամբ:

1993ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 20ամեակը, տարեկան պարահանդէսի ընթացքին, ուր կը պարգեւատրուին անդամներ՝ Երուանդ Ճէմէնչէճեան, Վարուժան Պուլլութեան, Արամ Զիգմէճեան եւ Յակոբ Գունտաքճեան:

1994ին մասնաճիւղը կը կազմակերպէ

միջմասնաճիւղային վոլիպոլի առաջին մրցաշարքը:

1999ին եւ 2000ին յաջորդաբար 42 եւ 33 խումբեր կը մասնակցին մասնաճիւղի կազմակերպած 4րդ եւ 5րդ միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքերուն:

1999ին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 259ի:

2002ին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն ատենապետ՝ Նշան Տէր Գալուստեան, փոխ ատենապետ՝ Վահան Փանոսեան, ատենադպիր՝ Մարտիկ Չանչանեան, գանձապահ՝ Շողիկ Ճիէրեան, մարզականի ներկայացուցիչ՝ Սօսիկ Չպուքճեան, սկաուտականի ներկայացուցիչ՝ Ագապի Աթիկեան, խորհրդական՝ Ատրինէ Փոսթոյեան:

Անդամներու ընդհանուր թիւն է 135, որոնցմէ 60ը սկաուտական շարքերէն:

2003-2004 տարեշրջանին վարչական կազմին կ'անդամակցին Աւետիս Գրիգորեան՝ ատենապետ, Յովհաննէս Գարիկեան՝ ատենադպիր, Արա Ճիէրեան՝ գանձապահ, Սօսի Չպուքճեան եւ Ռոպէր Թորոսեան՝ խորհրդականներ:

24 Ապրիլ 2004ին, սկաուտական կազմի առաջնորդութեամբ, Ֆրեզնոյի քաղաքապետարանին առջեւ կը բարձրացուի հայկական Եռագոյնը, ապա 18 նորագիրներ իրենց երգումը կու տան Սողոմոն Թեւիթեանի յուշարձանին առջեւ:

ՄՈՆԹԵՊԵԼԼՕ

Կազմակերպչական, Մարզական եւ Սկաուտական Գործունէութիւններ 1991էն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեպելլոյի մասնաճիւղը կը շարունակէ գործել Հայ Կեդրո-



Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեպելլոյի մասնաճիւղի 2007ի վարչական կազմը. ոտքի՝ Ծաքէ Առաքելեան, Նշան Զէյթունեան, նստած՝ Հրաչ Զերչեան, Վահէ Մանուէլեան, Ծոն Բէրթոլեան

նին մէջ, սկառուտական եւ մարզական զոյգ բաժիններով: Տարեշրջանին ընթացքին, սկառուտ աստիճանաւորներ՝ Վահէ Մանուէլեան եւ Շանթ Մարգարեան կը ստանան Ա. կարգի վկայական: Մարզական խումբերը միշտ ներկայ են Շրջանի Նաւասարդեան խաղերուն: 1991ին եւ 1992ին մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային սոֆթպոլի մրցաշարքեր: 1991ին կը մասնակցի Գանատայի Շրջանի ձմեռնային խաղերուն: Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 417:

1993ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Վարդգէս Արապեան: Սկառուտական բաժնի խմբապետն է Վահէ Մանուէլեան: Շաբաթական հաւաքոյթները տեղի կ'ունենան «Մեսրոպեան» Ազգային վարժարանի շրջափակէն ներս:

15 Հոկտեմբեր 1994ին, մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 20ամեակը: Տարեշրջանի մասնաճիւղի ատենապետուհին է Ծովիկ Զէյթլեան: Մասնաճիւղը կը հաշուէ 380 անդամներ:

1999ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Մանուկ Զէյթլեան: 25 Սեպտեմբերին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 25ամեակը, Սբ. Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ - [Ծ/209.22]: Նոյեմբերին կը կազմակերպէ 25ամեակի ճաշկերոյթ - պարահանդէս:

2001ին 20 մարզական խումբեր կը գործեն զանազան ճիւղերու մէջ, մասնակցելով Շրջանի Նաւասարդեան խաղերուն:

2003 տարուան վարչական կազմի անդամներն են, ատենապետ՝ Արմէն Զալեան, ատենադպիր՝ Վիգի Աւագեան, գանձապահ՝ Լիւսի Կարպուշեան, սկառուտականի ներկայացուցիչ՝ Դրօ Մակարեան, մարզականի ներկայացուցիչ՝ Ռալֆ Պետրոսեան, խորհրդականներ՝ Մարի Մինասեան եւ Աննիկ Մնացականեան:

2004ին Մոնթեպելոյի վարչական կազմի անդամներն են. ատենապետ՝ Կարօ Տէմիրճեան, ատենադպիր՝ Նանօր Մարգարեան, գանձապահ՝ Աննիկ Մնացականեան, սկառուտականի ներկայացուցիչ՝ Վրէժ Մարգարեան, մարզականի ներկայացուցիչ՝ Դրօ Մարգարեան:

Տարեշրջանի մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 380, որոնցմէ 265 մարզիկներ, 32 սկառուտներ եւ 83 օժանդակներ: Սկառուտ միւսուորի խմբապետ՝ Նարեկ Բաղալեան: 10 արիւարենոյշներ կը մասնակցին Շրջանի 4րդ ընդհանուր բանակումին: Մարզական խումբերը կը մասնակցին Սան Տիէկոյի եւ Ֆրեզնոյի մասնաճիւղերու կազմակերպած մրցաշարքերուն: Մարզիչները կը մասնակցին շրջանային մարզական խորհուրդի կազմակերպած սեմինարներուն: Տղոց եւ աղջկանց խումբերը կը մասնակցին Նաւասարդեան խաղերու ֆուլթպոլի պասքեթպոլի եւ վոլիպոլի մրցաշարքերուն:

ՓԱՍՍԻՆԱ

Կազմակերպչական եւ Մարզական Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղը իր հիմնադրութեան օրէն սկսեալ յարատեւ յառաջդիմութիւններ կ'արձանագրէ: 1991ին սկառուտութեան կողքին, որուն հաւաքոյթները տեղի կ'ունենան Փասատինայի Հայ Կեդրոնին մէջ, ան կը շարունակէ կիրարկել ֆուլթպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, թենիս, փինկփոնկ եւ աթլետիկ: 1991 տարուան վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետուհի՝ Սիրան Պոսնոյեան
Փոխ ատենապետ՝ Յարութ Յարութիւնեան
Ատենադպիր՝ Արա Պոյաճեան
Գանձապահ՝ Երուանդ Վարդանեան
Մարզական՝ Արփի Օհաննէսեան:

9 Դեկտեմբեր 1992ին, մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ ատենապետուհի՝ Սիրան Պոսնոյեան, փոխ ատենապետ՝ Սազօ Սահակեան, ատենադպրուհի՝ Սիմա Կարապետեան, գանձապահուհի՝ Սօսի Սէմէրճեան, մարզական՝ Արա Պոյաճեան, մարզականի օգնական՝ Արտօ Գարայեան, սկառուտ խմբապետ՝ Պերճ Պետոյեան, սկառուտականի օգնական՝ Սազօ Կարապետեան, տնտեսական՝ Սարգիս Թաթիկեան:

1992-93 տարեշրջանին մասնաճիւղը ունի



Փասաատինայի մասնաճիղի 2007ի վարչությունը. ոտքի՝ Վիգեն Լապպատ, Յակոբ Գարապիպերճեան, Նազարեթ Քիրտոզլեան, Արթիւր Լարտքոմ, Ժագ Խաչատուրեան, Նստած՝ Սիմա Կարապետեան, Լիւսի Հապոյեան, Միսաք Թաթիկեան, Սօսի Սէմէրճեան

Ֆուլթայոլի 1, պասքեթբոլի 14 եւ վոլիպոլի 2 խումբեր: Անդամներու ընդհանուր թիւն է 383:

Վարչութիւնը կը շահագործէ շուրջ 110.000 ամ. տոլար արժողութեամբ իր սեփական կալուածք, անոր վարձքը միացնելով իր եկամուտին: Մասնաճիղին տարուան ելեմուտքի կշիռն է 163.000 ամ. տոլար: 1993ին մասնաճիղը կը տօնէ իր հիմնադրութեան 15ամեակը:

16 Դեկտեմբեր 1993ի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ 1994ի գործունէութեան համար:

Սիրան Պոսնոյեանի ատենապետութեամբ այս կազմին կ'անդամակցին Սիմա Կարապետեան, Թերէզ Քեմանճեան, Սագօ Սահակեան, Սագօ Կարապետեան, Գէորգ Մանուկեան,

Հրայր Նահապետեան, Արդօ Գարայեան եւ Սագօ Թաթիկեան: Ծնողական եւ երիտասարդական յանձնախումբերը կ'օժանդակեն վարչութեան գործունէութեան:

24 Նոյեմբեր 1999ին մասնաճիղին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 2000 տարուան վարչական կազմը:

Ատենապետ՝ Անդօ Շանլեան, փոխ ատենապետ՝ Սիմա Կարապետեան, ատենադպիր՝ Յակոբ Ղազարեան, գանձապահ՝ Սօսէ Սէմէրճեան, սկաուտական՝ Վիգէն Լապպատ, մարզական՝ Միսաք Թաթիկեան, խորհրդական՝ Արա Խաչիկեան, փոխարինուած Վիգէն Աբոշեանով:

Վարչական այս կազմին կ'օժանդակեն սկաուտական եւ մարզական խորհուրդներ:



Փասատինայի Հ.Մ.Ը.Մ.ի 1996 տարուան վարչական կազմը, նստած՝ Սոնա Յարութիւնեան, Սիմա Կարպետեան, Թերէզ Քեմանճեան, ոտքի՝ Յակոբ Ղազարեան, Արա Խաչիկեան, Սագո Կարապետեան, Սարգիս Թաթիկեան

2003 տարեշրջանի վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Սարգիս Սահակեան, փոխ ատենապետ՝ Յակոբ Ղազարեան, ատենադպիր՝ Ծովիկ Կարապետեան, գանձապահ՝ Նորա Աբոշեան, մարզական՝ Միսաք Թաթիկեան, խորհրդականներ՝ Վիգէն Աբոշեան եւ Վիգէն Լապպատ:

Այս տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւն է 677, որոնցմէ 95ը սկաուտներ եւ 240 մարզիկներ: Մասնաճիւղը ունի զանազան դասակարգերու վրայ բաժնուած տղոց եւ աղջկանց 22 պասքէթպոլի, 3 ֆուլթպոլի, փինկփոնկի եւ աթլէթներու խումբեր: Խումբերը իրենց փորձերը կը կատարեն Pasadena High, Wilson High,

Glendale Adventist, Lake avenue Congregational church եւ Coral դաշտերուն վրայ:

Բացի Շրջանի Նաւասարդեան 26րդ խաղերու մրցաշարքերէն, մասնաճիւղին խումբերը մասնակցած են քոյր մասնաճիւղերու կազմակերպած մրցաշարքերուն եւ Ֆուլթպոլի Arcedia Leagueի մրցաշարքերուն:

29 Մարտ 2003ին մասնաճիւղը ճաշկերոյթպարահանդէսով կը նշէ իր հիմնադրութեան 25ամեակը:

Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի մասնաճիւղը ունի նաեւ ընկերային եւ ազգային գործունէութիւններ, որոնց կարգին մնայուն բնոյթ ստացած են Ծաղկազարդի ճաշը, Ապրիլեան քայլարշաւը, Նաւասարդեան խաղերու փառատօնի առթիւ



Փասատինայի մասնաճիղի արժուիկները կը մասնակցին 1998ի Նալասարդեան խաղերու փակման հանդիսութեան տողանցքին

ճաշերու կրպակ եւ այլ ներքին հաւաքոյթներ: Մասնաճիղը ունի նաեւ «Անդօ Էթիէմբեան» կրթանպաստի ֆոնտ:

1991-2003 տարիներու ընթացքին մասնաճիղի իրարայաջորդ կազմերուն անդամակցած են՝ Սիրան Պոսնոյեան, Յարութիւն Յարութիւնեան, Արա Պոյաճեան, Երուանդ Վարդանեան, Արփի Օհաննէսեան, Սերոբ Տէր Պօղոսեան, Սիմա Կարապետեան, Սօսի Սէմէրճեան, Սազօ Սահակեան, Ռուբէն Պասթաճեան, Արտօ Գարայեան, Պերճ Պետոյեան, Սարգիս Կարապետեան, Սարգիս Եագուպեան, Անդօ Շանլեան, Սարգիս Թաթիկեան, Թերէզ Քեմանճեան, Գէորգ Մանուկեան, Սոնա Յարութիւնեան, Արա Խաչիկեան, Ներսէս Կարապետեան, Յակոբ Ղազարեան, Սազօ Ժամկոչեան, Միսաք Թաթիկեան,

Վիգէն Լապպատ, Վիգէն Աբոչեան, Սօսէ Պէքմէգեան, Ժիրօ Բարսեղեան, Սօսէ Շանլեան, Ծովիկ Կարապետեան, Նորա Աբոչեան եւ ուրիշներ:

2004 տարեշրջանին վարչութեան անդամներն են. ատենապետ՝ Արա Խաչիկեան, փոխ ատենապետ՝ Յակոբ Ղազարեան, ատենադպիր՝ Յակոբ Գարապիպեան, Գանձապահ՝ Սօսի Սէմէրճեան, խորհրդականներ՝ Վիգէն Աբոչեան, Վաչէ Աբոչեան եւ Պերճ Պետոյեան:

Այս տարեշրջանին մասնաճիղը ֆուլթայոլի եւ պասքեթպոլի 25 խումբերով, աթլետիկամի, թենիսի եւ փինկփոնկի մարզիկներով կը մասնակցի Նալասարդեան խաղերուն, ընդհանուր դասաւորման մէջ ապահովելով 8 առաջնութիւն, 2 երկրորդութիւն եւ 4 երրորդութիւն:

Սկառուտակյան Գործունեություն

Փաստինայի Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտակյան բաժինին կ'օժանդակեն Սկառուտակյան Խորհուրդը եւ ծնողական յանձնախումբը: Մասնաճիւղին սկառուտակյան խումբերը ամէն տարի կը մասնակցին Շրջանի Նաւասարդեան խաղերու փալման հանդիսութեանց տողանցքներուն: 1993ին, շնորհիւ սկառուտակյան իր զօրաւոր կազմի գործունէութեան, մասնաճիւղը երկրորդ տարին ըլլալով կը տիրանայ «Շրջուն Շուշանածաղիկ» մրցանակին:

16-23 Յունիս 1995ին AYFի բանակավայրին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղին տարեկան ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ սկառուտակյան շարքերէն եօթանասուն անդամներու:

Տարեկան ընդհանուր բանակումները կը կայանան հերթական դրութեամբ:

2000ին մասնաճիւղի սկառուտ խմբապետն է Անդօ Բարսեղեան:

2003ին մասնաճիւղի սկառուտ խմբապետն է Նազօ Քիւրտօղլեան եւ փոխ խմբապետ՝ Սեւակ Կարապետեան: Սկառուտակյան բաժինի անդամներու ընդհանուր թիւն է 95: Համաձայն տարեակիզբի նախագծուած ծրագրին, սկառուտակյան բաժնի զանազան խումբերը կ'իրագործեն արշաւներ, բանակումներ, քայլարշաւներ, ազգային եւ միութենական տօնակատարութիւններու մասնակցութիւն:

2004ին վերոյիշեալ աշխատանքներուն առընթեր մասնաճիւղի սկառուտները կը մասնակցին «Սբ. Մեսրոպ Մաշտոց» շքանշանի դասընթացքներուն:

ԿԼԵՆՏԵՅԼ

Կազմակերպչական Գործունեություն

1987էն 1990 Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյի «Արարատ» մասնաճիւղի վարչութիւններու ատենապետութիւնը վարած են՝ Ժորժ Ահարոնեան, Վիգէն Դաւիթեան եւ Ռուբէն Գիւրջեան:

Վարչական կազմերուն անդամակցած են Լիլիթ Պաղտասարեան, Վիկթոր Մարթին, Ալֆրէտ Խայեաթ, Կարէն Գրիգորեան, Արմիկ Պաղտասարեան, Ռուբիկ Սարեան, Վալօ Խալաթեան, Արմիկ Աբրահամեան, Արմոնդ Գորգորեան, Ռոբէրթ Շատիկեան, Անտրէ Փաշայի, Փիէռ Չրախչեան, Արիկ Գէորգեան, Արիս Յարութիւնեան, Խաչիկ Զարդարեան, Ալէն Բժշկեան, Պաղտիկ Տէր Գրիգորեան, Յովիկ Դաւթեան, Ռուզան Մովսիսեան, Հայկ Թիմա, Աբգար Քալանթարեան, Գարմէն Օհանեան, Պաղտիկ Աւագեան, Արմէն Աբրահամեան:

1991ին մասնաճիւղի կազմակերպչական, սկառուտակյան եւ մարզական բաժիններուն վրայ կ'աւելնայ մշակութայինը՝ գեղարուեստական զանազան ճիւղերու զարգացման նպատակով:

Տարուան վարչական կազմի անդամներն են, ատենապետ՝ Արմէն Աբրահամեան, փոխ ատենապետ՝ Արմոնդ Գորգորեան, ատենադպիր՝ Աբգար Քալանթարեան, գանձապահ՝ Վարուժ Աւանէսեան, խորհրդականներ՝ Անելկա Պատմագրեան, Րաֆֆի Սիմոնեան, Սերժիկ Իսաղուլեան, Օշին Փիրումեան, Արիկ Գէորգեան եւ Արմիկ Պաղտասարեան:

Աննախատեսելի արագութեամբ ընթացող անդամական աճը օրուան վարչութիւնը կը դնէ Պրոտուէյ պողոտայի կեդրոնի անբաւարարութեան դիմաց: Վարչութիւնը այս կացութիւնը դիմագրաւելու համար կը նշանակէ նոր կեդրոնի յանձնախումբ որուն պարտականութիւն կը տրուի աւելի ընդարձակ կեդրոնի եւ մարզադաշտերու պրպտումը:

1992ին վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Արմոնդ Գորգորեան: Վարչական կազմին կ'անդամակցին Ֆրէդ Խաչիկեան, Սեդա Խաչատրեան, Կարէն Գրիգորեան, Կարէն Պաղտասարեան, Վահէ Քէչիչեան, Աբգար Քալանթարեան, Ժորժ Մարտիրոսեան, Սազօ Աբրահամեան եւ Արմանտ Պատմագրեան: Վարչական կազմը կազմակերպչական հսկայական աշխատանք ունի իր առջեւ, մասնաճիւղի բոլոր



Կլէնտէլլի Արարատ մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը.
 Աստաժ՝ Վարուժ Միրզայեանց, Ռիմա Աբետի Սաղրեան, Գառնիկ Աբրահամեան,
 Ռուբինա Մանուշեհրի, Սերժ Կրագասեան, ոտքի՝ Արա Յակոբեան, Մետիկ Պապան,
 Հելիկ Իսաղուլեան, Գայիանէ Բժշկեան, կեդրոնի տնօրէն՝ Արմոնտ Գորգորեան

բաժիններու զարգացման համար: Յատուկ յանձնախումբեր կը գործակցին վարչութեան ծրագիրներուն:

1993ին վարչութեան ատենապետութիւնը կը ստանձնէ Աբգար Քալանթարեանը, փոխ ատենապետութեամբ Ժողա Մարտիրոսեանի, քարտուղարուհի՝ Սեդա Խաչատրեան, գանձապահ՝ Յովսէփ Մովսիսեան, անդամներ՝ Ծաղիկ Գրիգորեան, Յովիկ Մահտեսեան, Կարէն Պաղտասարեան, Արմանտ Պատմագրեան եւ Օշին Փիրումեան:

1994էն 2000 իրերայաջորդ վարչական կազմերուն անդամակցած են՝ Յրէդ Խաչիկեան, Արմոնդ Գորգորեան, Վիգէն Դաւթեան, Արմիկ

Աբրահամեան, Լիլիթ Բաղտասարեան, Մոնիկ Տէր Գրիգորեան, Բիանքա Զառահեան, Լէոնարդ Մանուկեան, Էմիլ Տէր Գրիգորեան, Սագո Աբրահամեան, Էտմոն Սուքիասեան, Մարիէթ Մուրատեան, Անելկա Խանլեան, Աբգար Քալանթարեան, Էլա Մահակեան, Հրաչիկ Գրիգորեան, Արմանտ Պատմագրեան, Ռազմիկ Յովհաննէսեան, Մարինա Մանուկեան, Մանիկ Պատմագրեան, Խաչիկ Խալաթեան, Վիգէն Միրզայեան, Արսինէ Յարութիւնեան, Արիս Յարութիւնեան, Վիքթոր Մարթին, Էդիկ Մարտիկեան, Էդիկ Մարութեան, Միլէն Զրախչեան, Անտրէ Փաշայի, Հայկ Թիմա, Էլլա Վարդանեան, Անահիտ Մանսուրեան, Կարէն Շահինեան, Սերժիկ

Իսաղուլեան, Հրայր Մեսրոպեան եւ Վահիկ Վարդանեան:

Այս ժամանակամիջոցին մասնաճիւղի ընթացիկ գործունէութիւններուն վրայ կ'աւելնան նոր կեդրոնի շինարարական աշխատանքները, որոնք կ'երկարին մինչեւ 2001 թուական, ժրջան գլխաւորութեամբ Էդիկ Մարութխանեանի եւ Վիթոր Մարթինի:

2001ի վարչական կազմի ատենապետութեան պաշտօնը կը վարէ Լիլիթ Բաղտասարեան, փոխ ատենապետ՝ Էդիկ Մարութխանեան, ատենադրուհի՝ Մոնիք Տէր Գրիգորեան, գանձապահ՝ Կարէն Շահինեան, խորհրդականներ՝ Անօ Մանսուրեան, Վահիկ Վարդանեան, Սագօ Աբրահամեան:

Մասնաճիւղի բոլոր բաժանմունքներու գործունէութիւնը վերջնականապէս կը փոխադրուի 3347 N. San Fernando Rd.ի համալիրը:

2002ին վարչութեան ատենապետութիւնը կը փոխանցուի Արմիկ Աբրահամեանին. կազմի միւս անդամներն են՝ Վիգէն Դաւթեան, Մեղեղի Մուրատի, Կարէն Շահինեան, Անօ Մանսուրեան, Էդիկ Մարութխանեան, Վահիկ Վարդանեան, Արտօ Ղազարեան եւ Գառնիկ Աբրահամեան: Նոր կեդրոնի ընձեռած պայմանները կ'ընդլայնեն բոլոր բաժանմունքներու գործունէութիւնները:

2003 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են.

Ատենապետ՝ Արմիկ Աբրահամեան

Փոխ ատենապետ՝ Արմիկ Բաղտասարեան

Ատենադպիր՝ Մեղեղի Մուրատեան

Գանձապահ՝ Կարէն Շահինեան

Խորհրդականներ՝ Արտաշէս Ղազարեանց, Գառնիկ Աբրահամեան, Խաչիկ Խալաթեան, Արա Յակոբեան եւ Արաքս Աւաննէսեան: Մասնաճիւղը կը հաշուէ 2024 անդամներ, որոնցմէ 557 սկաուտներ, 1941 մարզիկներ եւ 351 օժանդակ անդամներ:

2004 տարեշրջանին վարչութեան կ'անդամակցին Արմէն Աբրահամեան՝ ատենապետ, Խաչիկ Խալաթեան, Մոնիք Տէր Գրիգորեան,

Գառնիկ Աբրահամեան, Արաքս Աւաննէսեան, Արթօ Ղազարեան, Սարգիս Գատէհնեան, Արփի Մարտիրոսեան եւ Արա Յակոբեան: Անդամներու թիւը կը բարձրանայ 2206ի:

Մարզական Գործունէութիւն

Կլէնտէյլի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գործունէութեան առանցքը կը կազմեն Ֆուլթոյլի, պասթեթոյլի, վոլիպոլի, փինկ-փոնկի եւ աթլետիկ մարզաճիւղերը, որոնց զանազան դասակարգի խումբերը, երսեռ բաժիններով սկիզբէն ի վեր մասնակցած են Շրջանի Նաւասարդեան խաղերուն՝ ապահովելով առաջնակարգ դիրքեր: Աւելի ուշ այս մարզաճիւղերուն վրայ աւելցած են թենիսը, ճատրակը, քարաթէն, գեղարուեստական մարզանքը, մարմնամշակումը եւ լողը: Զանազան մարզաճիւղերու խումբերը կը մասնակցին պատկան ֆետերասիոններու ախոյեանական մրցաշարքերուն: Մարզիկներուն կը տրուի միութենական եւ ազգային դաստիարակութիւն:

1994ի Սեպտեմբեր 3էն 10, Հ.Ե.Դ.ի բանակավայրին մէջ 150 մարզիկներ կը մասնակցին մէկ շաբթուան ծրագրով մարզական նախապատրաստական աշխատանքներով մասնաճիւղի կազմակերպած մարզական բանակումին:

Բացի տեղական գործունէութիւնէն, մասնաճիւղին խումբերը մասնակցած են Հ.Մ.Ը.Մ.ական միջշրջանային մրցաշարքերու, համահայկական խաղերու եւ համա Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու, տիրանալով պատուաբեր արդիւնքներու որոնցմէ «Վարդգէս Տէր Կարապետեան» եւ «Ժիրայր Պոյաճեան» շրջուն բաժակներուն:

2004ին մարզական բաժանմունքին գործունէութեան կը մասնակցին 1279 անդամներ, որոնց փորձերուն ու կազմակերպութեան մօտէն կը հետեւին վարչութեան օժանդակ մարզական խորհուրդներն ու մարզիչները:

Սկաուտական Գործունէութիւն

Կլէնտէյլի մասնաճիւղի սկաուտական շարքերու աշխատանքները կը շարունակեն յառաջ-

դիմել 1991էն սկսեալ: Սկսուտական բաժանմունքի գործունէութիւնը, բացի սկսուտական դասական գործունէութենէն, կը զարգանայ ազգային եւ հայրենասիրական դաստիարակութեան ուղղութեամբ: Հետզհետէ կը բարձրանայ աստիճանաւորական ցանցի թիւն ու որակը:

9 Մարտ 1991ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Սկսուտական Խորհուրդի կազմակերպած Ա. կարգի քննութիւններուն մասնաճիւղէն յաջողեցան հետեւեալ աստիճանաւորները.- Ազնէս Օրդուրեգեան, Ալմարա Տէր Պետրոսեան, Քլոտիա Խաչատրեան, Ֆետրա Աբրահամեան, Լինա Դաւիթեան, Մարիամ Աղայեան, Շատիս Կիւրեղեան, Իվէթ Թահմազեան, Թալին Հինտոյեան, Էլլա Յարութիւնեան, Արամազդ Տէր Մարտիրոսեան, Դաւիթ Տէր Սարգիսեան, Սարօ Խըմզեան, Ժիլպէրթ Ալմիքայէլեան:

23 Դեկտեմբերին մասնաճիւղի երէցական փաղանգը, Կլէնտէյլի «Փրկութեան Բանակ» Կեդրոնին մէջ, 250 կարօտեալներու բաժնեց իր պատրաստած ծննդեան ճաշերը:

Արի-արենոյշներու խումբերը կը մասնակցին միջշրջանային բանակումներու Փարիզի եւ Լոնտոնի մէջ եւ ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական հինգերորդ, վեցերորդ եւ եօթներորդ բանակումներուն Հայաստանի մէջ: Տարեկան հերթականութեամբ կը կազմակերպուին սկսուտական զանազան բաժիններու բանակումները: Շարքերը կը մասնակցին Շրջանի Նաւասարդեան խաղերու ընդհանուր տողանցքներուն, ինչպէս նաեւ ազգային տօնախմբումներու հրապարակային ելոյթներուն:

2003 տարուան աւարտին սկսուտական շարքերու ընդհանուր թիւն է 538, ներառեալ խմբապետական կազմը: Մասնաճիւղի ընդհանուր խմբապետութեան պաշտօնները վարած են Վարուժ Միրզոյեան, Հարմիկ Սարեան, Վարդան Աղաբեկեան, Արտաշ Տէր Մինասեան, Արմիկ Բաղտասարեան, Ալէն Բժշկեան, Արիս Յարութիւնեան, Օշին Փիրումեան, Կարէն Բաղտասարեան, Արմանտ Պատմագրեան, Էմիլ Տէր Գէ-

որգեան, Զարեհ Մովսիսեան, Արսինէ Յարութիւնեան, Վիգէն Մերջանեան, Էլա Սահակեան, Թալին Հինտոյեան, Արփի Մարտիրոսեան, գործակցութեամբ փոխ խմբապետներու, վարիչ մարմիններու եւ Սկսուտական Խորհուրդներու անդամներուն:

2004ին սկսուտական բաժանմունքի անդամներուն թիւը կը բարձրանայ 671ի:

Մշակութային եւ երէցական բաժանմունքներ

1991ին, մասնաճիւղը իր մշակութային գործունէութեան համար կը կազմէ յատուկ յանձնախումբ, որուն գործունէութեան ծիրին մէջ կ'իյնան հայերէն լեզուի ուսուցում, երգի, պարի, նկարչութեան եւ թատրոնի դասընթացքներ:

Յանձնախումբին ճիգերով տարիներու ընթացքին կը զարգանան վերոյիշեալ մշակութային բնօյթ ունեցող նիւթերը, մասնակցութեամբ հարիւրաւոր աշակերտներու, որոնց աւելի ուշ կը միանան մեծերու պարախումբերը: Մշակութային աշխատանքներու արդիւնքով կը կազմակերպուին տարեկան «Մշակոյթի Օր»ուան ձեռնարկներ:

Մասնաճիւղին այլ գործունէութիւններու շարքին կարելի է յիշել երէցական բաժանմունքի աշխատանքները, որուն գլխաւոր նպատակն է մասնաճիւղին ընդհանուր գործունէութեան նիւթական կարիքներու ապահովումը, կազմակերպելով տարեկան վիճակահանութիւններ, Նոր Տարուան խրախճանքներ, Զատիկական տօնախմբութիւններ, նորաձեւութեան ցուցադրութիւններ եւ այս կարգի հասութեաբեր ձեռնարկներ: Բաժանմունքի վեթերան անդամներու մնայուն հոգածութիւնը կը նպաստէ մասնաճիւղի նիւթական եւ բարոյական բոլոր կարիքներուն:

Հրապարակային գործունէութիւններ

Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի մասնաճիւղը ազգային եւ պաշտօնական գետիններու վրայ իրականացուցած է հրապարակային աշխատանք: Իւրա-

քանչիւր տարի մասնաճիւղը նշած է իր հիմնադրութեան տարեդարձը: 22 Հոկտեմբեր 1994ին մասնաճիւղի հիմնադրութեան 16ամեակը կը տօնուի «Տէօքմէճեան» սրահին մէջ, մասնակցութեամբ 500 հանդիսականներու -[Ծ/155.32]:

2002ին Կլէնտէյլի մասնաճիւղի կեդրոնը կ'այցելէ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան նախագահ՝ Արկաղի Ղուկասեան:

Շինարարական

1999էն 2001 երկամեակի ընթացքին մասնաճիւղը իրականացուցած է շինարարական մեծածաւալ աշխատանք՝ «Արարատ» կեդրոնը օժտելով փակ մարզադաշտով, բազմանպատակ

հսկայ սրահով եւ, նախասրահով եւ 20 սենեակներով: Շինարարական աշխատանքներու աւարտին, 14 Հոկտեմբեր 2001ին, տեղի կ'ունենայ կեդրոնի պաշտօնական բացման հանդիսութիւնը, ազգային եւ պետական հիւրերու ներկայութեան: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանով կը պարգեւատրուի շինարարութեան մեծագոյն բարերար Զարեհ Պաղտասարեանը -[Ծ/234.31]:

Շինարարական աշխատանքներու իրականացման նիւթական եւ գործնական կարեւոր ներդրումներ ունեցած են Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Ռազմիկ Փուլատեան, Ռոպէրթ Իսաղուլեան, Բաբկէն Բաբլոյեան, Վահիկ Մակարեան, Սազօ Սարհատեան եւ Շահէն Թահմազեան:



Օրէնճ Քաունթիի մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը.
նոքի՝ Գօգօ Տէր Դաւիթեան, Վարդան Եաղմուրեան, Խաժակ Արզումանեան,
նստած՝ Սալբի Պչաքճեան, Զարուհի Տէր Դաւիթեան

Հրատարակչական

Մասնաճիւղը ունի «Homenetmen Ararat Newsletter» ամսաթերթը:

2003ին մասնաճիւղը կը հրատարակէ իր հիմնադրութեան 25ամեակին նուիրուած յուշամատեան, խմբագրութեամբ՝ Լիլիթ Պաղտասարեանի, օժանդակութեամբ՝ Գրիգոր Մկրեանի, Ռուբէն Գիւրճեանի եւ Արմիկ Աբրահամեանի: 18x21 սմ. ծաւալով, 104 էջերէ բաղկացող պատկերազարդ, գեղատիպ եւ գունաւոր հրատարակութիւն մը, ուր արձանագրուած են մասնաճիւղին 25 տարիներու գործունէութեան բոլոր բաժինները:

ՕՐԵՆԾ ԲԱՈՒՆԹԻ

Կազմակերպչական եւ Սարգական Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քառնթիի «Սարգարայատ» մասնաճիւղը 1991ին արդէն 12 տարեկան է: Մասնաճիւղը կը հաշուէ 186 անդամ, որոնցմէ 80ը սկառուտական շարքերէն: Սկառուտական հաւաքոյթները տեղի կ'ունենան «Արի Կիրակոս Մինասեան» Ազգային վարժարանի շրջափակէն ներս:

1988էն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քառնթիի մասնաճիւղին վերապահուած է ամէն տարի կազմակերպել Շրջանի միջմասնաճիւղային փինկփոնկի մրցաշարքը: 1994ի մրցաշարքին, «Ղուկասեան» սրահին մէջ, կը մասնակցին Կլէնտէյլի, Փասատինայի, Սան Ֆեռնանտո Հովիտի եւ մասնաճիւղի մարզիկները, չորս դասակարգի վրայ բաժնուած՝ գտումի 88 մրցումներով - [147.35]: 1994ի Օգոստոսին մասնաճիւղը կը կատարէ իր նոր կեդրոնին բացումը, ուր կը փոխադրուի մասնաճիւղին գործունէութիւնը: 8 Հոկտեմբերին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 15ամեակը:

2002-2003 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են ատենապետ՝ Վիգէն Տաքէսեան, ատենադպիր՝ Վարդան Եաղմուրեան, գանձապահ՝ Խաժակ Քէչիշեան, խորհրդականներ՝

Արա Աքմաքճեան, Տէնի Եկէնեան, Սալբի Պչաքճեան եւ Արմէն Ասարեան:

Մասնաճիւղը կը հաշուէ 209 անդամներ, որոնցմէ 55ը սկառուտական շարքերէն:

2004ին, մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին Վիգէն Տաքէսեան՝ ատենապետ, Զարուկ Տէր Դաւիթեան՝ ատենադպիր, Խաժակ Քէչիշեան՝ գանձապահ, Սիլվա Թիւթիւնճեան, Սալբի Պչաքճեան, Վարդան Եաղմուրեան եւ Արմէն Ասարեան՝ խորհրդականներ:

Շրջանի Նաւասարդեան 29րդ խաղերուն մասնաճիւղը կը մասնակցի 16 խումբերու եւ 52 անհատական խաղերու մարզիկներով: Սկառուտական բաժանմունքը կը մասնակցի շրջանային 4րդ ընդհ. բանակումին:

23 Հոկտեմբեր 2004ին մասնաճիւղը պաշտօնական տօնախմբութեամբ կը նշէ իր հիմնադրութեան 25ամեակը:

ՍԱՆ ՖԵՌՆԱՆՏՕ ՀՈՎԻՏ

Կազմակերպչական եւ Սարգական Գործունէութիւն

1979ին հիմնուած Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղը 1991ին կը գործէ իր սկառուտական եւ մարզական ճիւղերով: Մարզական բաժինը կը կիրարկէ Ֆուտպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, փինկփոնկ, թենիս, աթլետիզմ եւ լող:

1987էն 1990 տարեշրջաններուն մասնաճիւղին վարչական կազմերուն անդամակցած են՝ Զայլ Գազանճեան, Վարդգէս Թուլումճեան, Զայլ Հինտոյեան, Սարգիս Մահսէրէճեան, Վաչէ Գասպարեան, Օշին Յարութիւնեան, Նուպար Ֆատրճեան, Թորոս Սուսանի, Վարդան Գոլյումճեան, Յարութ Խոստանեան, Սարգիս Կիտցինեան, Հայկօ Արմէնեան, Մայք Վարժապետեան, Արման Աչճեան, Երուանդ Պէրէճեան, Յարութ Քէօսէեան, Յակոբ Տէմիրճեան, Սոնա Տէր Սարգիսեան, Լի Զաքարիոզեան, Վաչէ Եագուպեան, Թորոս Քէչէճեան:

1991 տարուան վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Բարգէն Տատոյեան, անդամներ՝ Յակոբ Բրինձեան, Սարգիս Պոյաճեան, Բենիամին Էրզրումեան, Թորոս Քէչէճեան, Էլի Պալուզեան, Յակոբ Սերոբեան, Թամար Պաղպուտարեան:

1992էն 1995 իրարայաջորդ վարչութիւններու ատենապետութիւնները վարած են Բաֆֆի Սարգիսեան, Թորոս Քէչէճեան, Երուանդ Պէրէճիքեան եւ Բաֆֆի Իշխանեան, անդամակցութեամբ հետեւեալ վարչականներուն.- Էլիզապէթ Եսայեան, Մարգրիտ Եղմուրեան, Լարա Քրիստիանեան, Վարդան Գուլումճեան, Շանթ Չոպանեան, Փիէռ Մոմճեան, Գրիգոր Սարգիս-

եան, Անդրանիկ Գամարեան, Յովհաննէս Պէրէճիքեան, Վաչէ Եազուպեան, Վանսօ Ճենապեան, Արթին Թոսունեան, Բաֆֆի Քրիստիանեան, Ռոստոմ Չալեան, Յարութ Քէօսէեան, Վաչէ Մկրտիչեան, Յակոբ Տէմիրճեան, Վարուժան Վարդանեան, Սեդա Դարբինեան, Սիլվա Տարագճեան, Ռազմիկ Արիսեան, Արփար Տէմիրճեան, Երուանդ Պէրէճիքեան:

1995ի սկիզբը մասնաճիւղին նստավայրը կը փոխադրուի իր նոր ակումբը՝ Հայ Կեդրոնի մէջ: 6էն 13 Օգոստոսին տեղի կ'ունենայ սկաուտական շարքերու տարեկան ընդհանուր բանակումը՝ Verdugo Oaks բանակավայրին մէջ, մասնակցութեամբ 60 սկաուտներու:

1995ին կը հաստատուի մարզադաշտի գնման



Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո վալիի 2006-2007 տարեշրջանի վարչական կազմը: Ոսքի՝ Էլի Պալուզեան, Փօլ Աւագեան, Արշօ Աւագեան, Նայիրի Պոսթանեան, Ծոնի Իսկէնտերեան, Աստաժ՝ Պէթի Մաքերեան, Ժոզէֆ Մկրեան, Մարալ Մանուկեան

անձեռնմխելի ֆոնտ մը՝ գոյացնելով 50.000 ամ. տոլար: Այս գումարը յաջորդական տարիներին յաւելումով 2004ին կը հասնի 180.000 ամ. տոլարի: Մարզական 45 խումբեր, երկսեռ բուժիններով կը գործեն մասնաճիւղէն ներս՝ կիրարկելով ֆուլթայոլ, պասքեթբոլ, վոլեյբոլ, փինկ-փոնկ, թենիս, լող եւ ատլետիկա: Սկսած տական ճիւղը իր ենթաբաժանումներով կը գործէ թեքնիք եւ ազգային գետիններու վրայ հրապարակային ելոյթներով: Խումբը ունի քառասուն անդամներէ բաղկացող նուազախումբ:

1996էն 1998 մասնաճիւղը արագընթաց յաջողութիւններով կը բոլորէ իր գործունէութեան ծրագիրները: Մասնաճիւղը կը հրապարակէ «Մասիս Ջայն» ներքին տեղեկատու ամսաթերթը:

1999ին մասնաճիւղին անդամներու ընդհանուր թիւն է 984, որոնցմէ 110 սկսողներ, 357 մարզիկներ, 124 գործօն եւ 393 օժանդակ անդամներ:

1999ին եւ 2000ին վարչութեան ատենապետն է Արամ Չոպանեան: Վարչական կազմերուն կ'անդամակցին Յարութ Խոտանեան, Պետրոս Թասլաքեան, Արմէն Ասլանեան, Ստեփան Խարմանտարեան, Վարդան Ասատուրեան, Մարո Չարխուտեան, Շանթ Չոպանեան, Խաչիկ Պոյաճեան, Օշին Յարութիւնեան, Սեդա Պերդուտեան, Հրաչ Մուրատեան, Փօլ Պաշգապաքեան, Գեղամ Սրապեան, Սազօ Չարխուտեան եւ Ժոզէֆ Մկրեան: Սկսած տական Խորհուրդը, մարզական եւ ընկերային յանձնախումբեր կ'օժանդակեն վերոյիշեալ կազմերուն:

2001ին եւ 2002ին մասնաճիւղին վարչութեան ատենապետն է Ժանօ Քահվէճեան, առաջին անգամ ըլլալով վարչութեան մաս կը կազմեն, Յակոբ Աւետեան, Մովսէս Պաղտոյեան, Պետրոս Գարակէօզեան, Վիգէն Մարտիրոսեան, Սոնա Պոյաճեան, Վանսօ Զենապեան եւ Շանթ Դարբինեան:

2002ին վարչութեան նստավայրը կը փոխադրուի Ֆերահեան վարժարան: Ընկերային ճոխ

ծրագիրներ եւ տարեկան պարահանդէս կ'իրագործուին յաջողութեամբ:

2003 տարեշրջանին մասնաճիւղին վարչութեան մաս կը կազմեն՝

Ատենապետ՝ Վաչէ Պէրպէրեան
Փոխ ատենապետ՝ Ժոզէֆ Մկրեան
Ատենադպիր՝ Մարալ Մանուկեան
Գանձապահ՝ Արփիար Տէմիրճեան
Հաշուապահ՝ Աւագ Սարտարեան
Սկսած տական՝ Օննիկ Պուլանիքեան
Մարզական՝ Սազօ Սազայեան եւ Շանթ Դարբինեան

Ընկերային՝ Հուրի Գազանճեան:

Այս կազմը սկսած տական եւ մարզական գործունէութեան առընթեր կը նախաձեռնէ մարզական նոր համալիրի մը շինարարական ծրագրի իրականացման:

20 Նոյեմբեր 2004ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 25ամեակը: Այս առթիւ կը կազմակերպուին մարզական եւ հրապարակային հանդիսութիւններ: Տարուան վարչական կազմին կ'անդամակցին Վաչէ Պէրպէրեան՝ ատենապետ, Ժոզէֆ Մկրեան, Մարալ Մանուկեան, Աւագ Սարտարեան, Օննիկ Պուլանիքեան, Սազօ Սազայեան, Կարպիս Խոտանեան, Յովիկ Պետեւեան, Մայք Շիրոյեան, Յարութ Խոտանեան եւ Արփիար Տէմիրճեան: Սկսած տական բաժանմունքը կը յառաջդիմէ խմբապետութեամբ Լեւոն Գասպարեանի, արձանագրելով թուական կարեւոր աճ, իր շարքերով եւ նուազախումբով մասնակցելով ազգային բոլոր հանդիսութիւններուն:

ՍԱՆ ՏԻԷԿՕ

1983ին հիմնուած Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղը 1991ին կը գործէ սկսած տական եւ մարզական բաժիններով: Անդամներու ընդհանուր թիւն է 113:

1991 տարուան վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Վահէ Մանուչակեան



Հ.Մ.Ը.Մ.ի Սան Տիէկոյի մասնաճիւղի 2001 տարուան վարչական կազմը: Նստած՝ Թալին Կիլտալեան, Բաֆֆի Վարժապետեան, Սարգիս Արթինեան, ոտքի՝ Վատիմ Ասատուրեան, Քոլին Քեմնից



Սան Տիէկոյի մասնաճիւղի 2004 տարուան պասքեթպոլի աղջկանց խումբը եւ պատասխանատուները

**Փոխ ատենապետ՝ Ներսէս Թիւֆէնքճեան
Ատենաղպիր՝ Եոլանտա Քեմնից
Գանձապահ՝ Շաքէ Թիւֆէնքճեան
Խորհրդականներ՝ Ճէյմս Զեթէեան, Աստղիկ**

Մարգարեան եւ Ատեյինա Մաղաքեան:

1992ի Փետրուար 15-17ին, մասնաճիւղը կը հիւրընկալէ Արեւմտեան Միացեալ Նահանգներու 8 մասնաճիւղերու 37 խումբերը, կազմակերպելով պասքեթպոլի եւ վոլիպոլի միջմասնաճիւղային մրցաշարքերը -[Մ/126.30]: Վարչութեան ատենապետն է Գէորգ Կիւլտալեան, անդամներ՝ Վահէ Մանուչակեան, Պօղոս Երեւանեան, Այտա Սուլթանեան եւ Եոլանտա Քեմնից:

1993ին եւ 1994ին վարչութեան ատենապետն է էմիլ Մաղաքեան, վարչական կազմերուն կ'անդամակցին Սամ Փելթէքեան, Սարգիս Արթինեան, Գէորգ Կիւլտալեան, Ալին Օհանեան, Լարա Պրէտիլի, Արա Պալալեան, Վահիկ Մինասեան, Սարգիս Գալուստեան, Արամ Վարդերեսեան, Սարգիս Պաղոյեան, Գրիգոր Գասարճեան եւ Սեւան Երկաթեան:

19-20 Փետրուար 1994ին, մասնաճիւղը կը կազմակերպէ պասքեթպոլի եւ վոլիպոլի տղոց



Սան Տիէկոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը. ոտքի՝ Բաֆֆի Վարժապետեան, Ծենէթ Մանուսանեան, Թալին Աթաբէկեան, նստած՝ Մարալ Կիլտալեան, Անիթա Հատուատ: Կը բացակայի Ալիս Վարժապետեան

եւ աղջկանց միջմասնաճիւղային մրցաշարքեր, մասնակցութեամբ 12 մասնաճիւղերու 51 խումբերուն — [Ծ/146.31]:

1995էն 2002 յաջորդական վարչական կազմերու ատենապետութիւնը վարած են Ալին Օհանեան՝ 1995, Էմիլ Մաղաքեան 1996, 1999, Բաֆֆի Վարժապետեան՝ 1997, 2000, 2001, 2002, Գէորգ Կիւլտալեան՝ 1998: Մասնաճիւղը կը հրատարակէ իր «Լրատու» պարբերականը:

16էն 18 Փետրուար 2000ին, մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 17րդ միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքը, 41 խումբերու մասնակցութեամբ:

2003 տարեշրջանին վարչական կազմի անդամներն են․-

- Ատենապետուհի՝ Մարալ Կիւլտալեան
- Ատենադպրուհի՝ Եոլանտա Քեմնից
- Գանձապահուհի՝ Սոնա Տէիրմէնճեան
- Մարզական ներկայացուցիչ՝ Քուրինթ Քեմնից
- Խորհրդական՝ Անի Երեւանեան:

2004 տարուան վարչութեան անդամներ կ'ընտրուին, Վահէ Մանուչակեան՝ ատենապետ, Եոլանտա Քեմնից, Անիթա Հատտատ, Քուրինթ Քեմնից եւ Անի Երեւանեան:

Մասնաճիւղին կը պակսի յատուկ կեդրոնատեղի ինչ որ կը սահմանափակէ անոր ծաւալման կարելիութիւնները:

ՅԻՄՈԸՆ

1983ին հիմնուած, Արեւմտեան Միացեալ Նահանգներու մասնաճիւղերու հիմնադրութեան կարգով 10րդ, Հիւսթընի մասնաճիւղը կարճատեւ կեանք մը միայն պիտի ունենար: Արդարեւ, սկզբնական երկամեակի ճիգերը հետզհետէ անյաղթահարելի դժուարութիւններ դիմագրաւեցին, յատկապէս տրամադրելի եւ մասնագէտ մարզուծի չգոյութեան պատճառով: 1987ի իր տեղեկագրին մէջ Շրջանային Վարչութիւնը կը դադրի Հիւսթընի մասնաճիւղը յիշատակելէ:

ԻՆԼԸՆՏ ԷՍՓՈՅՐ

Հիմնադրուիւն եւ Կազմակերպչական Գործունէութիւն 1991ին կը հիմնուի Ինլընտ Էմփայրի «Արագ» մասնաճիւղը:

Մասնաճիւղը կը գործէ Լաւերնի Հայ Կեդրոնին մէջ: Անդամներու ընդհանուր թիւն է 139, սկստական եւ մարզական բաժիններով:

1992ի Մարտին մասնաճիւղը կը կազմակերպէ ճատրակի միջմասնաճիւղային մրցաշարք: Ընկերային եւ երիտասարդական յանձնախումբեր կ'օժանդակեն վարչութեան աշխատանքներուն: Մասնաճիւղը ունի իր ներքին տեղեկատուն:

2001 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Բաֆֆի Յնժալեան:

Մասնաճիւղը ունի մարզական շարքերուն մէջ 35, սկստական շարքերուն մէջ 27 եւ 57 օժանդակ անդամներ: 20 Հոկտեմբերին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան տասնամեակը -[Ծ/234.36]:

- 2002ին վարչական կազմի անդամներն են՝
- Ատենապետ՝ Բաֆֆի Յնժալեան
- Ատենադպիր՝ Վիլմա Պետրոսեան
- Գանձապահ Ռազմիկ Մամբուրեան
- Խորհրդական՝ Անի Մազլումեան
- Յանձնախումբերու ներկայացուցիչներ՝ Ռոզանա Սաղեան (սկստական), Վազգէն Օտապաչեան (մարզական), Յովսէփ Տաղուրեան (ընկերային):

2003 տարեշրջանի վարչութեան մաս կը կազմեն՝

- Ատենապետ՝ Բաֆֆի Յնժալեան
- Ատենադպիր՝ Վիլմա Պետրոսեան
- Գանձապահ՝ Ռազմիկ Մամբուրեան
- Մարզականի ներկայացուցիչ՝ Վազգէն Օտապաչեան
- Սկստականի ներկայացուցիչ Թալին Պաղտոյեան
- Խորհրդականներ՝ Շաքէ Գալայճեան եւ Ան-



Ինչընտ Էմփայրի Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը.
ոտքի՝ Վազգէն Օտապաշեան, Արա Սարաֆեան, Յովսէփ Տանկարեան,
Վարուժ Պաղտասարեան, նստած՝ Ռոզին Սաղեան, Վազգէն Գալայճեան, Րաֆֆի Յնձալեան

գինէ Բէշիշեան:

Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 133ի:

2004ի վարչական կազմին կ'անդամակցին Շաքէ Գալայճեան՝ ատենապետ, Վիլմա Պետրոսեան, Րաֆֆի Յնձալեան, Վազգէն Օտապաշեան, Ռոզին Սաղեան, Յովսէփ Տանկուրեան եւ Անգինէ Բէշիշեան: Խմբապետական կազմը կը մասնակցի Շրջանային Սկաուտական Խորհուրդի աստիճանաւորական սեմինարներուն: Շարքերը կը մասնակցին Ապրիլեան ոգեկոչման դաստիարակչական ձեռնարկին, քայլարշաւին եւ Շրջանի 4րդ միջմասնաճիւղային բանակումին:

Մարզական բաժանմունքի գլխաւոր ձեռ-

նարկը կը հանդիսանայ Շրջանի պասքեթպոլի Բ. եւ Գ. դասակարգի խումբերու միջմասնաճիւղային մրցաշարքերու կազմակերպումը՝ 7 մասնաճիւղերու 29 խումբերուն մասնակցութեամբ:

Ընկերային, ծնողական, եւ տնտեսական յանձնախումբեր կ'օժանդակեն մասնաճիւղի գործունէութիւններուն -[Մ/267-268.58]:

ՍԱՆԹԱ ԳԼԱՐԱ ԶՈՎԻՏ

Հիմնադրութիւն, Կազմակերպչական եւ Մարզական Գործունէութիւն

Նախաձեռնութեամբ՝ Ժանօ Խաչեանի, Շահէն Աղապապեանի եւ Վահէ Պարոնեանի, 12



Սանթա Գլարայի Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիղի 2004 տարուան վարչական կազմը.
Կեդրոնը նստած՝ ատենապետ տորթ. Ծահէ Ենիգոմշեան

Մայիս 1991ին կայացած հաւաքոյթի մը ընթացքին կը հիմնուի Սանթա Գլարա Հովիտի Հ.Մ.Ը.Մ.ի «Անի» մասնաճիղը:

1991-92 տարեշրջանի մասնաճիղի անդրանիկ վարչութեան կ'անդամակցին.-

Ատենապետ՝ Հրայր Թաշճեան

Ատենադպիր՝ Ժանօ Խաչեան

Գանձապահ՝ Տիգրան Պապիկեան

Սկստական՝ Շահէն Աղապապեան

Մարզական՝ Վահէ Պարոնեան եւ Խաչիկ Պետրոսեան

Խորհրդական՝ Սիլվա Ստամպուլեան:

Մասնաճիղը կը գործէ Սանթա Գլարայի Հայ Կեդրոնին մէջ:

1993ին, նոյն կազմի ատենադպիրի պաշտօնը կը ստանձնէ Տանչուր Վարդանեան, գանձա-

պահ՝ Ժանօ Խաչեան:

1994ին, Հրայր Թաշճեանի ատենապետութեամբ վարչութեան կ'անդամակցին Ժանօ Խաչեան, Արդուշ Խաչատուրեան, Նորիկ Օհանեան, Վահէ Պարոնեան, Վահէ Սարգիսեան եւ Ժանէթ Թահիրեան:

1995էն 2003 վարչութիւններու ատենապետութիւնը կը վարեն Վահէ Պարոնեան, Հրայր Թաշճեան, Արդուշ Խաչատուրեան, Պօղոս Չանչանեան, Ռուրան Մաթեան եւ Վարուժան Պաղտատեան: Յաջորդական վարչական կազմերուն կ'անդամակցին Մարտիկ Չանչանեան, Մարալ Փանոսեան, Վահէ Գալֆայեան, Ճորճ Գրիգորեան, Համօ Եաղուպեան, Տանչուր Վարդանեան, Յակոբ Ստեփանեան, Անահիտ Օհանեան,

Յարուժ Արոյեան, Գրիգոր Գրիգորեան, Ժանէթ Թահիրեան, Ստեփան Օհանեան, Մելինէ Մխճեան, Ռուբէն Տէյլան, Ջաւէն Սողոյեան, Վարդուկ Թաշճեան, Նորիկ Օհանեան, Ռէնա Չանչանեան, Արաքս Պազէզի եւ Հուրի Մխճեան:

2003 տարուան մասնաճիւղի մարզական յանձնախումբին կ'անդամակցին Վահիկ Պարոնեան եւ Արա Տէյլան (Ֆուտպոլ), Շահան Ստեփանեան եւ Հուրիկ Թաշճեան (պասքեթպոլ), Շահան Ստեփանեան (աթլետիզմ), Ալէն Պարոնեան եւ Թալին Մորոյեան (վոլիպոլ), Վաչէ Մորոյեան (փինկ-փոնկ եւ թենիս), Վարուժ Պաղտասարեան (լող): Ֆուտպոլի 3, պասքեթ-

պոլի 5, վոլիպոլի 2, աթլետիզմի, լողի, թենիսի եւ փինկ-փոնկի խումբեր կը կազմեն մասնաճիւղի մարզական գործունէութեան ցանցը:

2004 տարուան վարչութեան կազմն է.-
Ատենապետ՝ տոքթ. Շահէ Ենիգոմչեան
Ատենադպիր՝ Ճորճ Գրիգորեան
Գանձապահ՝ Ռոլան Մաթեան
Մարզական՝ Վահէ Պարոնեան
Սկաուտական՝
Ընկերային՝ Պողոս Չանչանեան
Դաստիարակչական՝ Վազգէն Արզումանեան:

Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 311, որոնցմէ 124 մարզիկներ 62 սկաուտներ



Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը.
ոտքի՝ Հայկ Գամպուրեան, Վերա Մորոյեան, Մարալ Փանոսեան, Հուրիկ Թաշճեան,
Ջաւէն Սողոյեան, նստած՝ Ճորճ Գրիգորեան, Վահէ Պարոնեան, Վազգէն Արզումանեան



Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի 2003- 2004 եղանակի աթլետներու խումբը

գործօն մասնակցութիւն կը բերեն մասնաճիւղի աշխատանքներուն: Մարզական, սկաուտական, ընկերային եւ դաստիարակչական յանձնախումբեր կ'օժանդակեն մասնաճիւղի գործունէութեան զարգացման: Տնտեսական յատուկ յանձնախումբ մը կը լծուի աշխատանքի սեփական կեդրոն մը ապահովելու համար:


2005ին մասնաճիւղի վարչութեան անդամներ կ'ընտրուին.-

Ատենապետ՝ տոքթ. Շահէ Ենիգոմչեան
 Փոխ ատենապետ՝ Վազգէն Արզումանեան
 Ատենադպիր՝ Մարալ Պուրսալեան
 Գանձապահ՝ Զաւէն Սողոյեան
 Սկաուտական՝ Հայկ Գամպուրեան
 Մարզական՝ Ռուլան Մաթեան
 Ընկերային՝ Սիլվիա Պաղտատեան:

Սկաուտական Գործունէութիւն

Մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը կը սկսի 1991ի Սեպտեմբերին, Վազգէն Քհնյ. Մովսիսեանի ձեռամբ՝ դրօշակի օրհնութեան հաւաքին ընթացքին:

Սկաուտական շարքերու արագ աճով կը զարգանայ շարժումը, որուն առաջին օրերու խմբապետութիւնը կը վարէ Շահէն Աղապապեան: Սկաուտական շարքերը կը մասնակցին Շրջանի Նաւասարդեան խաղերու տողանցքներուն, կը կազմակերպեն արշաւներ եւ բանակումներ՝ բարձրացնելով շարքերու թեքնիք մակարդակը, կը գործակցին Սան Ֆրանսիսքոյի եւ Ուոլնաթ Քրիքի քոյր մասնաճիւղերու կազմերուն հետ: Մասնաճիւղէն 17 արի-արենոյշներ 1998ին կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումին Աղաւնաձորի մէջ:



Սուրբ Լէւոն Սիրիի 2000 տարուան վարչական կազմը

2005ին Սկաուտական Խորհուրդին մաս կը կազմեն Անուշ Սարտարեան, Մարալ Փանոսեան, Անէթ Մաթեան, Անի Ենիգոմչեան, Սօսի Մաճառեան եւ Ռամելա Խաչատուրեան:

2004էն սկսեալ մասնաճիւղը կը հրատարակէ 12-16 էջերէ բաղկացող «Անի» պարբերաթերթը՝ զայն ցրուելով հիւսիսային Քալիֆորնիոյ Հ.Մ.Ը.Մ.ական շրջանակներուն մէջ:

ՍՈՒԹ ԼԵՅՔ ՍԻԹԻ

Հիմնադրութիւն, կազմակերպչական եւ մարզական գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբ Լէւոն Սիրիի «Սպիտակ» մասնաճիւղը հիմնուած է 1991ին: Փոքրաթիւ անդամներէ բաղկացող այս մասնաճիւղը ունե-

ցած է միայն մարզական սահմանափակ գործունէութիւն:

1991էն մինչեւ 2002 մասնաճիւղի իրերայաջորդ վարչութիւններու ատենապետի պաշտօնը վարած են Ալպէր Շահինեան (1991-92-2000-2001), Գարեգին Կարմիրլեան (1993-94-95-96-2002), Յարութ Պէքարեան (1997-98), Վաչէ Եագուպեան (1999): Վարչական կազմերուն անդամակցած են՝ Թորոս Մկրտիչեան, Յովիկ Մկրտիչեան, Արա Պէքարեան, Րաֆֆի Պէգճեան, Վարդգէս Մկրտիչեան, Հուրի Մկրտիչեան, Աստղիկ Շահինեան, Գէորգ Կիւլկիլեան, Ճոն Գարագաշեան, Գէորգ Պարոնեան եւ Սիլվիա Կարմիրլեան:

2003ին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Գրիգոր Մկրտիչեան
Փոխ ատենապետ՝ Գէորգ Պարոնեան



Սուրբ Լէւր Սիրիի մասնաճիւղի պատանիները բնութեան ծոցին մէջ:

**Ատենադպիր՝ Հուրի Մկրտիչեան
Գանձապահ՝ Գարեգին Կարմիրլեան:**

Մասնաճիւղի անդամական թիւը կը մնայ տկար եւ նոր ուժերու բացակայութեան պատճառով մասնաճիւղը կը պարզէ կազմալոյծ վիճակ:

ՍԱՈՒԹ ՊԷՅ ՍԻԹԻ

Հիմնադրութիւն, Կազմակերպչական, մարզական եւ սկաուտական Գործունէութիւններ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Սաուլթ Պէյ Սիթիի «Արագած» մասնաճիւղը հիմնուած է 2 Մարտ 1992ին կայացած անդրանիկ հաւաքին ընթացքին, որուն ներկայ կը գտնուին Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները: Ներկաները կը լսեն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը օգտակարութեան, Միութեան նպատակին եւ

գործելակերպին մասին տեղեկութիւններ: Տեղւոյն վրայ կը նշանակուի մասնաճիւղի առժամեայ վարչութիւն՝ բաղկացած հետեւեալներէն. - Զեփիւռ Պաղոյեան, Յարութ Գանձապետեան, Գէորգ Պապուճեան, Վիգէն Սէփէթեան եւ Վարուժ Գուլումճեան: Այս կազմը կը գործէ գլխաւորաբար անդամարշաւի իրականացումով: Մասնաճիւղը կը գործէ Թորընսի Հայ Կեդրոնին մէջ:

Սեպտեմբերին, պասքեթպոլի խումբը կը մասնակցի Սան Ֆրանսիսքոյի Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպած միջմասնաճիւղային մրցաշարքին:

1993ին առաջին ընտրեալ վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Գէորգ Պապուճեան, փոխ ատենապետ՝ Յարութիւն Գանձապետեան, ատենադպիր՝ Զեփիւռ Պաղոյեան, գանձապահ՝ Վարուժ Գուլումճեան, խորհրդականներ՝ Օննիկ Գարակէօզեան, Պերճ Փափայեան եւ Հրանդ Իփրանոսեան:

Մասնաճիւղը կը գործէ մարզական եւ



Սաուր Պէյի մասնաճիւղի 2003 տարուան վարչական կազմը



Հ.Մ.Ը.Մ.ի Սառութ Պէյի 2007 տարուան վարչական կազմը. ոտքի՝ Կարօ Պոլսանեան, Զարմիկ Եմէնիճեան, Սիլվա Ետիկեան, Հուրի Ապանեան, նստած՝ Հիլտա Ղարաբէկեան, Անտրէ Սէֆերեան, Սիլվա Թոմասեան

սկառուտական բաժիններով:

23 Հոկտեմբեր 1993ին տեղի կ'ունենայ նորակազմ սկառուտական խումբի երդման արարողութիւնը, մասնակցութեամբ՝ 35 սկառուտներու, խմբապետութեամբ՝ Ակաթա Իփրանոսեանի – [Ծ/145.27]:

1994էն 2002 մասնաճիւղի յաջորդական վարչական կազմերուն ատենապետի պաշտօնը կը վարեն Զեփիւռ Պաղոյեան, Պերճուհի Պապուճեան, Բաֆֆի Մարտիրոսեան, Կարապետ Տէմիրճեան եւ Աբրահամ Ինճէյեան: Վարչական այլ պաշտօններ վարած են Զարմինէ Եմէնիճեան, Ժիրայր Սերիսոյեան, Յովսէփ Տիշչէքեան, Ակաթա Իփրանոսեան, Տիգրան Տէմիրճեան, Արփի Գարակէօզեան, Նուարդ Մուրատ-

եան, Մարինա Մարտիկեան, Վիգէն Ետիկեան, Ժանօ Եմէնիճեան, Վիգէն Եղիայեան, Սարգիս Վարդանեան, Կայծակ Պաղոյեան, Յարութիւն Աշրգեան, Գէորգ Պապուճեան, Արփի Մազլումեան, Անի Մազլումեան, Սիլվան Եղիայեան եւ Սիլվան Թովմասեան:

1999ին մասնաճիւղը կը կազմակերպէ փինկփոնկի միջմասնաճիւղային մրցաշարք:

2003ին անդամներու ընդհանուր թիւն է 105, որոնցմէ 26ը սկառուտական շարքերէն:

Վարչական կազմին կ'անդամակցին.- Ատենապետ՝ Կայծակ Պաղոյեան
Փոխ ատենապետ՝ Վիգէն Եղիայեան
Ատենադպիր՝ Բաֆֆի Մարտիրոսեան
Գանձապահ՝ Սիլվա Եղիայեան



Սաուր Պէյի մասնաճիւղի 1998 տարուան սկաուտական եւ մարզական կազմերը

Մարզականի ներկայացուցիչ՝ Վարդան Մուրատեան

Սկաուտականի ներկայացուցիչ՝ Յովիկ Պաղոյեան

Խորհրդական՝ Անի Մազլումեան:

2004 տարուան վարչութեան անդամներն են՝ Րաֆֆի Մարտիրոսեան՝ ատենապետ, Արփի Մազլումեան, Հիլտա Ղարաբէկեան, Վիգէն Եղիայեան եւ Զարմիկ Եմէնիճեան:

Օգոստոսին սկաուտական շարքերէն 10 անդամներ կը մասնակցին Շրջանի Դ. ընդհանուր բանակումին:

Վարչութիւնը կը հրատարակէ իր պատկերազարդ պարբերաթերթը:

ՔՐԵՍԵՆԹԱ ՎԱԼԻ

Քրեսենթա Վալիի հայ գաղութին թիւը արագօրէն կ'աճի 1992-93 տարեշրջանին: Տեղւոյն

վրայ արդէն գործօն են Հ.Օ.Մ-ի Հ.Յ.Դ-ի եւ Համազգայինի մասնաճիւղերը եւ պահանջը կը զգացուի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի մը կազմութեան: Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութիւնը, պարագան քննելով, 20 Յունուար 1993ին կը վաւերացնէ Քրեսենթա Վալիի «Շանթ» մասնաճիւղի կազմութիւնը, նշանակելով հետեւեալ առժամեայ վարչական կազմը՝

Ատենապետ՝ Կարպիս Էօլմէսէքեան

Ատենադպիր՝ Ռազմիկ Գարախանեան

Գանձապահ՝ Թովմաս Տէօքմէճեան

Սկաուտականի ներկայացուցիչ՝ Վարդգէս Շիրտրմեան

Մարզականի ներկայացուցիչ՝ Կայծակ Շահպազեան:

14 Մարտ 1993ին, տեղի կ'ունենայ մասնաճիւղին հրապարակային անդրանիկ ելոյթը, որուն ընթացքին առժամեայ վարչութիւնը կը



Քրեսենթա Վալիի մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը: Ուոքի՝ Զոհրապ Մարգարեան, Ռազմիկ Սիմոնեան, Թովմաս Թոքմաճեան, Սահակ Թադէոսեան, Արամ Պէքարեան, նստած՝ Ժագ Տապալաղեան, Արփի Նալպանտեան, Ալէք Արարատեան, Ալին Հապէշեան

զեկուցէ մարզական եւ սկաուտական բաժիններու ցարդ կատարած նախապատրաստական աշխատանքներու մասին: Տեղւոյն վրայ կ'արձանագրուին նոր անդամներ: 1994ին մասնաճիւղը կը հաշուէ 214 անդամներ:

Մասնաճիւղը ունի պասքեթպոլի խումբ, մարզիչ՝ Շանթ Յովասափեան:

Սկաուտական կազմը կը հաշուէ 35 նորագիրներ:

1998ին մասնաճիւղը կը նշէ իր հինմադրութեան հնգամեակը:

2003 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Սահակ Թադէոսեան
Փոխ ատենապետ՝ Զոհրապ Մարգարեան

Ատենադպիր՝ Վաչէ Մկրտիչեան
Գանձապահ՝ Ազիկ Խաչատուրեան
Խորհրդականներ՝ Լեւոն Գէորգեան, Ժիրայր Ախարաթեան եւ Ռուպինա Գապիրեան:

Տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւն է 545:

2004ին վարչական կազմին կ'անդամակցին, Թովմաս Տէօքմէճեան՝ ատենապետ, Ռուպինա Գապիրեան, Վանա Շրիքճեան, Զոհրապ Մարգարեան, Ռազմիկ Սիմոնեան, Արփի Նալպանտեան եւ Րաֆֆի Կակոսեան:

Մասնաճիւղը իր գործունէութիւնը կը զարգացնէ սկաուտական եւ մարզական բաժիններով: 620 մարզիկներ կը կիրարկեն, Ֆութպոլ, պասքեթպոլ, լող եւ աթլետիզմ - [Մ/267-268.62]:

ՊՐՐՊԵՆՔ

Կազմութիւն, հիմնադրութիւն եւ կազմակերպչական գործունէութիւն

1994ի աւարտին, իրանահայ «Սիփան» միութեան խումբ մը նախկին անդամներու նախաձեռնութեամբ, Գալիֆորնիոյ Պրրպէնք քաղաքին մէջ կը հիմնուի Հայ Մարզամշակութային Սիփան միութիւնը, ծրագիր ունենալով հայ երիտասարդ սերունդի ազգային հայեցի դաստիարակութիւնը: Շուտով նախաձեռնող կորիզին կը միանան շուրջ 60 նորագիր անդամներ՝ նստավայր ունենալով Պրրպէնքի Հայ կեդրոնի սրահը: Միութեան անդամարշաւի ջանքերով, տարի մը չբոլորած՝ անդամներու թիւը կը բարձրանայ 120ի, կը զարգանան միութեան մարզական եւ սկստական գործունէութիւնները եւ անդամական ընդհանուր ժողովի որոշումով կը դիմուի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան, միութիւնը միացնելու համար Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային վարչութեան հաւանութիւնը ստանալէ ետք, 25 Յուլիս 1995ին տեղի կ'ունենայ Շրջանի 15րդ մասնաճիւղի հիմնադրութեան աքթը, ուր կը նշանակուի Հ.Մ.Ը.Մ. «Սիփան» մասնաճիւղի առժամեայ վարչական կազմ, բաղկացած հետեւեալ անդամներէն. ատենապետ՝ Նորիկ Աբուլեան, քարտուղար՝ Անահիտ Խաչիկեան, գանձապահ՝ Ժերմէն Մեհրապի, խորհրդականներ՝ Ալֆրիկ Բանդարեան եւ Սարօ Ղազարեան, սկստախմբապետ՝ Արմիկ Աւետիսեան:

5 Նոյեմբեր 1995ին մասնաճիւղի անդամական Ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած 1996ի անդրանիկ վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ կազմով.՝ Նորիկ Աբուլեան, Անդրանիկ Երումեան, Նորայր Աբուլեան, Սիմոն Յովհաննէսեան, Մարտիկ Սաղաթէլեան, Սարօ Ղազարեան եւ Ալֆրիկ Բանդարեան:

Մասնաճիւղը կը հաշուէ 407 անդամներ, հետեւեալ բաժանումներով.՝ մարզիկներ՝ 170,



Պրրպէնքի մասնաճիւղի 1996-97 տարեշրջանի վարչական կազմը: սկստապետներ՝ 102, գեղարուեստական եւ երիտասարդական բաժանմունք՝ 54, երէցներու օժանդակ բաժանմունք՝ 81:

11 Փետրուար 1996ին տեղի կ'ունենայ մասնաճիւղին գործունէութեան պաշտօնական բացման հանդիսութիւնը - [ԽԹ/15.2.1996]:

Մասնաճիւղի բաժանմունքներու անդամները կը մասնակցին Պրրպէնքի նոր Հայ կեդրոնի բացման հանդիսութեան - [ԽԹ/7.3.1996]:

1997 տարուան վարչական կազմի անդամներն են՝ Նորիկ Աբուլեան, Սարօ Ղազարեան, Անդրանիկ Երումեան, Ռոպէրթ Ալդոյեան, Սերժիկ Բանդարեան եւ Նժդիկ Յակոբեան: 1997ին անդամներուն ընդհանուր թիւը կը բարձրանայ 440ի:

1998ին վարչութեան մաս կը կազմեն Նժդիկ Յակոբեան, Սարօ Ղազարեան, Ռոպէրթ Ալդոյեան, Ռոպէրթ Մեհրապեան եւ Նորայր Աբուլեան: Տարեվերջին վարչութիւնը ղեկավարու-



Պրոպեգնդի Հ.Մ.Ը.Մ.ի անդրամիկ սկաուտական խումբը եւ սկաուտական խորհուրդը

Թիւններ կ'ունենայ ապահովելու համար մարզական խումբերու յատուկ փորձերու դաշտեր, անդամներու թիւը զգալի նուազում կ'արձանագրէ: 1998ի անդամական ընդհանուր ժողովի որոշումով կը ծրագրուի սեփական մարզասրահ ունենալ:

Կ'ընտրուի 1999ի նոր վարչական կազմ՝ բաղկացած հետեւեալ անդամներէն.- Նորիկ Աբուլեան, Սարո Ղազարեան, Հիլտա Մինասեան, Թադէոս Ռոստոմեան, Աղաւարդ Աբուլեան, Արթուր Նահապետեան եւ Գարլո Նազարեան: 2000ին նախկին կազմէն Նահապետեան եւ Նազարեան կը փոխարինուին Արաքս Թադէոսեանով, Ռոպէրթ Ալդոյեանով եւ Գագիկ Ղարաբէկեանով:

2003 տարուան մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Նորիկ Աբուլեան
 Ատենադպիր՝ Սարո Ղազարեան
 Գանձապահ՝ Հիլտա Մինասեան
 Սկաուտականի ներկայացուցիչ՝ Արաքս Թադէոսեան

Մարզականի ներկայացուցիչ՝ Գագիկ Ղարաբէկեան

Խորհրդականներ՝ Թադէոս Ռոստոմեան եւ Ռոպէրթ Ալդոյեան:

Մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 88, որոնցմէ 35ը սկաուտական շարքերէն: Անդամներու թիւը կրկին աճ կ'արձանագրէ 2004ին՝ 135 եւ 2005ին՝ 145:

2004 եւ 2005 տարեշրջաններուն վարչական կազմերուն կ'անդամակցին.- Նորիկ Աբուլեան, Սարո Ղազարեան, Ռոպէրթ Ալդոյեան, Թադէոս Ռոստոմեան, Հիլտա Մինասեան, Վիգէն Աբրա-

համեան, Էրիկ Բիդխանեան, Յարութ Մարտիրոսեան, Վահիկ Քեչիչեան, Հիլտա Ամիրեան եւ Աղաւարդ Աբուլեան:

Սկաուտական գործունէութիւն

Մասնաճիւղի զարգացման առընթեր կազմակերպուեցան սկաուտական բաժնի աշխատանքները: 28 Յունուար 1996ին հրապարակային հանդիսութեամբ տեղի ունեցաւ սկաուտական բաժնի գործունէութեան պաշտօնական բացումը, ներկայութեամբ քաղաքապետ Տէյվիտ Գոլոնսքիի, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան լրիւ կազմին, քոյր միութիւններու ներկայացուցիչներուն եւ ծնողներուն: Կատարուեցաւ դրօշակի օրհնութիւն՝ ձեռամբ Նարեկ քհնյ. Շրիքեանի- [ԽԹ/1.2.1996]:

Սկաուտական միաւորի բաժինները շաբաթական հաւաքոյթներով կը ստանան թեքնիք, միութենական եւ ազգային դաստիարակութիւն, կը մասնակցին արշաւներու եւ բանակումներու:

1995-2005 տարեշրջաններուն սկաուտական բաժնի խմբապետութիւնը վարած են Արմիկ Աւետիսեան, Նաթալի Մելիքեան, Ռոպէրթ Նորաբեան, Սազօ Թաշճեան, Էդվին Միրանեան, Հելդիկ Զարգարեան եւ Յարութ Մարտիրոսեան:

1999ին սկաուտական խումբը կը մասնակցի Շրջանի «Շրջուն Շուշանածաղիկ» սկաուտական յատուկ մարզական մրցումներուն:



Պըրպէնքի Հ.Մ.Ը.Մ.ի 2007 տարուան վարչութիւնը. ոտքի՝ Վիգէն Մանուկեան եւ Վիգէն Աբրահամեան, նստած՝ Հիլտա Ամիրխանեան եւ Սարօ Ղազարեան



Լաս Վեկասի մասնաճիղի 2007 տարուան վարչական կազմը. ոտքի՝ Ռազմիկ Լիպարեան, Անի Ծիրանեան, Վիգէն Սարխանեան, նստած՝ Նորա Արմէնեան եւ Ազնի Գասամանեան

Մարզական գործունեութիւն

Պրըպէնքի մասնաճիղի մարզական գործունէութեան գլխաւոր առանցքը պասքեթպոլի կիրարկումն է. ունի նաեւ թենիս եւ լող կիրարկող մարզիկներ: Խումբերը կը մասնակցին Շրջանի Նաւասարդեան խաղերուն:

Հրապարակային եւ այլ գործունեութիւններ

Պրըպէնքի Հ.Մ.Ը.Մ.ի «Սիփան» մասնաճիղը ունեցած է հրապարակային լայն գործունէութիւն, ազգային, կրօնական եւ միութենական գետիններու վրայ:

31 Մարտ 1996ին մասնաճիղը կը կազմակերպէ Ծաղկազարդի տօնակատարութիւն [ԽԹ-/12.4.1996]:

11 Մայիս 1996ին Մայրերու Օր,
27 Յուլիս 1996ին Տարեկան հանդէս,
20 Օգոստոս 1997ին Ճաշկերոյթ - պարահանդէս,

8 Նոյեմբեր 1997ին «Կանանց Օրուան» տօնակատարութիւն, նուիրուած Սօսէ Մայրիկի յիշատակին:

Վերոյիշեալ ձեռնարկները կը կրկնուին տարեկան հերթականութեամբ:

15 Մարտ 2002ին մասնաճիղը կը սարքէ մեծարանքի երեկոյ՝ ի պատիւ կրթական գործիչ, Իրանի «Սիփան» միութեան հիմնադիր, «Ալիք» օրաթերթի բազմամեայ խմբագրապետ՝ Նորայր Էլսայեանին, որ երկամսեայ այցելութեամբ, Հայաստանէն կը ժամանէ Գալիֆորնիա - [ԽԹ-/21.3.2002] եւ [ԽԹ-/11.4.2002]:

ԼԱՍ ՎԵԿԱՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղը հիմնուած է 1997ին:

23էն 25 Նոյեմբեր 2001ին, մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային իր անդրանիկ պասքեթպոլի մրցաշարքը, մասնակցութեամբ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանի Ա. դասի 26 խումբերու: Այս մրցաշարքը երեք օրերու ընթացքին կը խանդավառէ Լաս Վեկասի հայ երիտասարդութիւնը: Խաղերը կը փակուին հայ-ամերիկեան նորակառոյց կեդրոնին մէջ կազմակերպուած պարահանդէսով:

2003 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն.-

- Ատենապետ՝ Վրէժ Թասլաքեան
- Փոխ ատենապետ՝ Մուրատ Գանունեան
- Ատենադպիր՝ Արփի Կարապետեան
- Գանձապահ՝ Շահէն Աբրահամեան
- Մարզականի պատասխանատու՝ Վիգէն Սարխանեան:

Անդամներու ընդհանուր թիւն է 35, մասնաճիւղը ունի սկաուտական կորիզ մը:

2004ին վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետ՝ Ժագ Գասամանեան, Նորա Արմէնեան, Վիգէն Սարխանեան, Հայկ Ադամեան եւ Դրօ Դանիէլեան:

Մասնաճիւղին անդամները կը մասնակցին Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումներուն: Իւրաքանչիւր «Գոհաբանութեան Օր»ուան շաբաթավերջին մասնաճիւղը կը կազմակերպէ տարեկան միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարք:

2005ին մասնաճիւղի վարչութեան ատենապետուհին է Նորա Արմէնեան:

18 Յունիս 2005ին, պաշտօնական ճաշկերոյթի ընթացքին 13 արի-արենոյշներ եւ 4 գայլիկարծուիկներ կու տան իրենց սկաուտական երգումը-[Ծ/277.310:]

ՖԵՆԻՔՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Ֆենիքսի, Արեւմտեան Միացեալ

Նահանգներու 17րդ մասնաճիւղը, հիմնուած է 1998ին: 21 Փետրուարին, հիմնադրութեան աքթին առընթեր կը նշանակուի առժամեայ վարչական կազմ, ատենապետ՝ Արչակ Ադդարեան, փոխ ատենապետ՝ Յարութիւն Շքլանեան, ատենադպիր՝ Շոճի Սոլաքեան, գանձապահ՝ Մակի Թորոսեան, խորհրդականներ՝ Կապի Խուրի, Յարութիւն Պոյաճեան եւ Գրիգոր Գանէթճեան: Այս կազմը կը գործէ մինչեւ 15 Նոյեմբեր, աշխատանքը գլխաւորաբար կեդրոնացնելով անդամարշաւի վրայ: Տարեվերջին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 60ի:

15 Նոյեմբերին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 1999ի վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Կապի Խուրի, Ատենադպրուհի՝ Շոճի Սոլաքեան, գանձապահ՝ Յարութիւն Շքլանեան, սկաուտական՝ Յարութիւն Պոյաճեան, մարզական՝ Գրիգոր Գանէթճեան:

Մասնաճիւղի սկաուտական եւ մարզական բաժինները հետզհետէ կը զարգանան: Մասնաճիւղը կը գործէ 16456 N. 32nd streetի իր նստավայրին մէջ:

2000 տարուան վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Կապի Խուրի, փոխ ատենապետ՝ Մարինա Սոլաքեան, ատենադպիր՝ Շոճի Սոլաքեան, գանձապահ՝ Լենա Սարգիսեան, սկաուտական՝ Յարութիւն Պոյաճեան, մարզական՝ Աբրահամ Սարգիսեան, խորհրդական՝ Սուրէն Աւաննիսեան:

Տարեշրջանին անդամներու թիւը կը բարձրանայ 115ի:

2001 տարուան վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Մարինա Սոլաքեան: Վարչութեան կ'անդամակցին Շոճի Սոլաքեան, Լենա Սարգիսեան, Անի Աւաննիսեան, Սուրէն Աւաննիսեան, Գրիգոր Գանէթճեան եւ Ժիրայր Յակոբեան:

2002ին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին .-

- Ատենապետ՝ Մինաս Կոկոնեան
- Ատենադպիր՝ Սեդա Տուզմանեան



2000 տարուան Ֆենիքսի մասնաճիւղի վարչութիւնը: Յարութիւն Պոյաճեան, Լեւոն Սարգիսեան, Մարինա Սոլաքեան, Կապի Խորի, Աբրահամ Սարգիսեան, Շոճի Սոլաքեան եւ Սուրէն Աւաննէսեան

Գանձապահ՝ Վահէ Նազիկեան
Սկաուտական՝ Անի Պէպէքեան
Խորհրդական՝ Զարուկ Պալթաճեան:
2003 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն.-
Ատենապետ՝ Մինաս Կոկոնեան
Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Աւետիս Ապրազեան
Ատենադպիր՝ Սեդա Տուզմանեան
Սկաուտականի պատասխանատու՝ Անի Պէպէքեան
Խորհրդական՝ Լիզա Գասպարեան:
Մասնաճիւղին անդամներու ընդհանուր թիւն է 87, որոնցմէ 26ը սկաուտական շարքերէն:

2004ի վարչական կազմին կ'անդամակցին Աբրահամ Սարգիսեան, Սուրէն Աւաննէսեան, Ժանէթ Պէքարեան, Սերժիկ Նազարեան եւ Շոճի Ցոլակեան:

ՈՒՈԼՆԱԹ ՔՐԻՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանի 18րդ մասնաճիւղը՝ Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղը հիմնուած է 2 Ապրիլ 2000ին: Ապրիլ 2001ին 80 նորագիրներու հաւաքին ներկայ կը գտնուին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան փոխ ատենապետ Ժիրայր Սարգիսեան, Շրջանային վարչութեան ատենապետ Մանուէլ Մարսէլեան եւ փոխ ատենապետ



Հ.Մ.Ը.Մ.ի Ֆեմիքսի 2007 տարուան վարչական կազմը. Ալեոտիս Ապրաքեան, Զարուհի Պալթաճեան եւ Էտուար Օհանէսեան

Հայկ Յովսէփեան: Հիմնադիր այս ժողովին կը նշանակուի առժամեայ վարչական կազմ:

Մասնաճիւղը կը գործէ մարզական եւ սկաուտական բաժիններով: Սկաուտական բաժինը սերտօրէն կը գործակցի Սան Ֆրանսիսքոյի եւ Սանթա Գլարայի մասնաճիւղերու սկաուտական բաժիններուն հետ:

Մասնաճիւղը ունի շաբաթական ռատիոժամի հաղորդում եւ կը հրատարակէ անգլերէն լեզուով իր «Տեղեկատուն»:

2003 տարեշրջանի վարչական կազմին կ'անդամակցին.-

- Ատենապետ՝ Սարգիս Շիրիքեան
- Ատենադպիր՝ Անի Թաթարեան
- Գանձապահ՝ Շարլ Մենզիլճեան
- Մարզական՝ Ճորճ Գասսապ
- Սկաուտական՝ Զոհրապ Մարգարեան:

2003ին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 52, որոնցմէ 22ը սկաուտական բաժինէն:

2004ի վարչական կազմի անդամներն են.- Սարգիս Շիրիքեան՝ ատենապետ, Յասմիկ Գրիգորեան, Զարլ Մենզիլճեան, Շաղիկ Աղապապեան եւ Սեպուհ Պալեան:

ՏԵՆՎԵՐ ՔՈԼՈՐԱՏՕ

Հ.Մ.Ը.Մ.ի Տենվէր Քոլորատոյի մասնաճիւղը հիմնուած է 20 Ապրիլ 2002ին:

Մասնաճիւղի անդրանիկ վարչութեան մաս կը կազմեն.-

- Ատենապետ՝ Վահիկ Ամիրզեան
- Փոխ ատենապետ՝ Հենրիկ Տիլան
- Ատենադպիր՝ Անի Պապայեան
- Գանձապահ՝ Արա Սեւտալեան
- Խորհրդական՝ Գարօյին Եոննիթ:

Մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 57 որոնցմէ 18 մարզիկներ եւ 39 օժանդակներ:

2004ին վարչական կազմի անդամներն են Վահիկ Ամիրզեան, Տիանա Պրաուն, Րաֆֆի Կարապետեան, Վասդօ Կարապետեան եւ Գարօյին Եոննիթ:

Մասնաճիւղը կազմաւորման փուլի մէջ կը գտնուի:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Կազմակերպչական

1989-1990 երկամեակին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմըտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան մաս կազմած են ատենապետ՝ Համլէթ Զրախչեան, փոխ ատենապետ՝ Ներսէս Մելքոնեան, ատենադպիր՝ Մհեր Դաւիթեան, գանձապահ՝ Յովսէփ Մովսիսեան, խորհրդականներ՝ Ճէք Մկրտիչեան, Հրաչ Անտոնեան, Մարտիկ Կապուտեան, Ժիրայր Սարգիսեան եւ Արմոնդ Գորգորեան, վերջինս փոխարինուած Լիլիթ Պաղտասարեանով, ապա ժորժ Ահարոնեանով:

Այս կազմը կը նշանակէ օժանդակ՝ սկաուտ-



Հ.Մ.Ը.Մ.ի Ուոլնաթ Քրիքի 2007 տարուան վարչական կազմը.
Անի Թաթարեան, Սեպուհ Պալեան, Արմինէ Ժամկոչեան, Ռուբիկ Աւաննէսեան,
Ալին Աղապապեան եւ Ծոն Մերիք: Կը բացակայի Յասմիկ Գրիգորեան

տական, մարզական, տնտեսական եւ շինարարական յանձնախումբեր:

8 Հոկտեմբեր 1990ին, Շրջանային Ներկայացուցչական ԺԱ. Ժողովէն ընտրուած կազմը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով. ատենապետ՝ Գօգօ Պալեան, փոխ ատենապետ՝ Չարլի Կալեան, քարտուղար՝ Պետրոս Պէրպէրեան փոխարինուած Արտուշ Տէր Մինասեանով, գանձապահ՝ Հարմիկ Սարեան, խորհրդականներ՝ Ճէք Մկրտիչեան, Մարօ Քէչիչեան, Փասքալ Կիւզէլ եւ Անուշաւան Էմիլեան:

Շրջանային վարչութեան նստավայրն է 109 E. Harvardի կեդրոնը, իսկ 27 Սեպտեմբեր

1992էն սկսեալ 501 E. Coloradoի կեդրոնը –[Ծ/130.28]: Այս կազմի իրականացումներէն են Հ.Մ.Ը.Մ.ի համաամերիկեան մարզախաղերու կանոնադրութեան պատրաստութիւնը, «Ժիրայր Պոյաճեան» շրջուն բաժակի եւ «Վարդան Բաշխեան» շրջուն շուշանաձողիկի հաստատում: Այս ժամանակաշրջանին Շրջանի մասնաճիւղերու ցանցին վրայ կ'աւելնան Սանթա Գլարայի, Սոլթ Լէյք Սիթիի, Սաութ Պէյի եւ Ինլընտ Էմփայրի մասնաճիւղերը:

Շրջանի անդամներու ընդհանուր թիւն է 6217:

Շրջանային վարչութեան օժանդակած են Շրջանային Սկաուտական եւ մարզական Խորհուրդներ, տնտեսական, Նաւասարդեան խաղե-

րու եւ Հ.Մ.Ը.Մ.-Հայաստան յանձնախումբեր: Հ.Մ.Ը.Մ.-Հայաստան յանձնախումբը Կեդրոնական Վարչութեան կողմէ լիազօրութիւն կը ստանայ Հայրենիքի մէջ մասնաճիւղեր ստեղծելու եւ կազմակերպչական աշխատանքներ տանելու: Երկամեակի աւարտին կազմին գործունէութիւնը «Գնահատելի» կը նկատուի:

Շրջանի 13րդ Ներկայացուցչական ժողովին կողմէ 4 Հոկտեմբեր 1992ին ընտրուած Շրջանային Վարչութիւնը – [Ծ/130.26] իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Արմէն Աբրահամեան, փոխ ատենապետ՝ Հայկ Յովսէփեան, ատենադպիր՝ Կարպիս Շիրտրմեան, գանձապահ՝ Հարմիկ Սարեան, խորհրդականներ՝ Մարո Քէչիչեան, Զապէլ Գազանճեան, Շանթ Հայթայեան, Մանուէլ Մարսէլեան եւ Գրիգոր Մկրեան:

1993 եւ 1994 տարեշրջաններուն Շրջանի բոլոր մասնաճիւղերը կ'արձանագրեն յարաճուն վերելք՝ մարզական, սկսողական, ընկերային, հրապարակային եւ ազգային նախանձեռնութիւններու յաջողութիւններով: 14 Մարտ 1993ին Շրջանի մասնաճիւղերու ցանցին կը միանայ Քրեսենթա Վալիի մասնաճիւղը: 6 Փետրուար 1994ին Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ, մասնաճիւղերու նորընտիր վարչական կազմերուն յատուկ ղեկավարման սեմինար – [Ծ/146.29]:

9 Հոկտեմբեր 1994ին, Շրջանային Ներկայացուցչական ժողովէն ընտրուած Շրջանային

9 Հոկտեմբեր 1994ին, Շրջանային Ներկայացուցչական ժողովէն ընտրուած Շրջանային



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 13րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովի խմբանկար – Հոկտեմբեր 1992



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 2006-2007 երկամեակի Շրջանային Վարչութեան կազմը. ոտքի՝ Օշին Յարութիւնեան, Րաֆֆի Խաչատուրեան, Պերն Պետոյեան, Ժանօ Քահվէճեան, Զարեհ Մովսիսեան, Խաչիկ Խալաթեան: Նստած՝ Անօ Մանսուրեան, Սալբի Ճէճէյեան, Սթիւ Արթիւնեան, Մարօ Քէշիշեան, Յովիկ Պետեւեան

Վարչութեան մաս կը կազմեն ատենապետ՝ Րաֆֆի Սարգիսեան, փոխ ատենապետ՝ Հայկ Յովսէփեան, ատենադպիր՝ Կարպիս Շիրտորմեան, գանձապահ՝ Սիրան Պոսնոյեան, խորհրդականներ՝ Մանուէլ Մարսէլեան, Կարօ Իսբէնճեան, Ֆրէտ Խաչիկեան, Ժողա Մարտիրոսեան եւ Ճոն Անտոնեան:

Այս կազմը, Միութիւնը հայ եւ օտար հանրութեան ծանօթացնելու նպատակով, կը հրատարակէ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ներկայացնող անգլիատառ գրքոյկ մը:

1995ին կը հիմնուի Շրջանի 15րդ՝ Պրըպէնքի մասնաճիւղը:

13 Հոկտեմբեր 1996ին 17րդ Շրջանային Ներ-

կայացուցչական Ժողովը կ'ընտրէ հետեւեալ Շրջանային Վարչութեան կազմը.- ատենապետ՝ Մհեր Դաւիթեան, փոխ ատենապետ՝ Ժողա Մարտիրոսեան, ատենադպիր՝ Վարդան Եաղմուրեան, գանձապահ՝ Սիրան Պոսնոյեան, խորհրդականներ՝ Սագօ Կարապետեան, Րաֆֆի Իսբէնճեան, Օշին Փիրումեան, Սթիվ Արթիւնեան եւ Շահէ Աղապապեան:

Այս կազմին կ'օժանդակեն շրջանային եօթը յանձնախումբեր՝ սկաուտական, մարզական, դաստիարակչական, տնտեսական, մարզախաղերու, նուագախումբի, յարաբերական - «Մարզիկ» պաշտօնաթերթի:

1997ի Մարտ ամսուան ընթացքին կը հիմնուի

Շրջանի 16րդ՝ Լաս Վեկասի մասնաճիղը:

20 Հոկտեմբեր 1998ին նորընտիր Շրջանային վարչութիւնը 1998-99 երկամեակի աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Մանուէլ Մարսէլեան, փոխ ատենապետ՝ Հայկ Յովսէփեան, ատենադպիր՝ Կարպիս Շիրտըմեան, Գանձապահ՝ Բիանքա Մանուկեան, խորհրդականներ՝ Շահէն Աղապապեան, Լէոնարդ Մանուկեան, Րաֆֆի Իսբէնճեան, Սազօ Կարապետեան եւ Պերճ Պետոյեան:

Այս երկամեակի վարչութեան նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք 1.177.000, ելք՝ 1.133.000 ամ. տոլար:

Շրջանի 17րդ՝ Ֆենիքսի մասնաճիղը կը հիմնուի 1998ի Փետրուարին:

29 Հոկտեմբեր 2000ին ընտրուած Շրջանային վարչութեան անդամակցած են՝ Մանուէլ Մարսէլեան, Հայկ Յովսէփեան, Կարպիս Շիրտըմեան, Լէոնարդ Մանուկեան, Կարօ Իսբէնճեան, Թերէզ Քեմանճեան, Պերճ Պետոյեան, Սթիվ Արթինեան եւ Ռազմիկ Արիսեան՝ փոխարինուած վարդգէս Շիրտըմեանով: 2000ին կը հիմնուին Շրջանի 18րդ եւ 19րդ մասնաճիղերը, Ուոլնաթ Քրիք՝ 2 Ապրիլին եւ Գոլորատօ նահանգի Տենվէր քաղաք, 20 Ապրիլին:

27 Հոկտեմբեր 2002ին, 23րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը կ'ընտրէ հետեւեալ վարչական կազմը. ատենապետ՝ Վիգէն Դաւթեան, փոխ ատենապետ՝ Րաֆֆի Իսբէնճեան, ատենադպիր՝ Մարօ Քէչիչեան, գանձապահ՝ Սթիվ Արթինեան, խորհրդականներ՝ Էմիլ Տէր Գրիգորեան, Վիգէն Աբէլեան, վարդգէս Շիրտըմեան, Ֆրէտ Խաչիկեան, Շաքէ Զոհրապեան, Զապէլ Հինտոյեան եւ Արմանտ Քրիճեան:

2006-2007 երկամեակին, Շրջանային վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ՝ Սթիվ Արթինեանի, Յովիկ Պետեւեան, Մարօ Քէչիչեան, Օշին Յարութիւնեան, Սալբի Ճէճէյեան, Զարեհ Մովսիսեան, Պերճ Պետոյեան, Ժանօ Քահվէճեան, Խաչիկ Խալաթեան, Անօ Մանսուրեան եւ Րաֆֆի Խաչատուրեան:

Շրջանային Սկաուտական Գործունէութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութիւններուն օժանդակած են Շրջանային Սկաուտական Խորհուրդներ: Բացի սկաուտական թեքնիք աշխատանքներէն՝ արշաւներ, բանակումներ, ազգային հանդիսութիւններու ներկայութիւն, 1991-92 երկամեակին, Շրջանի սկաուտական կազմերէն 161 սկաուտներ յաջողութեամբ կ'անցնեն Ա. կարգի քննութիւնները: Կը կազմուին վկայեալ կարգի զոյգ սեմինարներ, 14 սկաուտներ կը ստանան «Կրօնական Շքանշան»:

Շրջանէն սկաուտական պատուիրակութիւններ մասնակցած են համաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ, 6րդ եւ 7րդ ընդհանուր բանակումներուն՝ 1994ին, 1998ին եւ 2002ին, Հայաստանի մէջ: 1999ին Շրջանէն 9 խմբապետներ ամերիկեան սկաուտական կեդրոնէն վուտ Պէճի աստիճան կը ստանան:

Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Խորհուրդներուն 1990էն 2004 ժամանակաշրջանին մասնակցած են հետեւեալ անդամները՝ Գրիգոր Մկրեան, Հայկ Չպուքեան, Սիւզի Օհանեան, Կարէն Մեսրոպեան, Անդրանիկ Ղարիպեան, Ալէք Յովասափեան, Ճոնի Իսկէնտէրեան, Արա Գազանճեան, Լարա Քրիստեան, Օշին Յարութիւնեան, Պերճ Ճամճեան, Յարութ Մատէնլեան, Կարինէ Աւաննէս, Ալին Աղաբաբեան, Թամար Ուրիչեան, Մարալ Լէոն, Շողեր Գասարճեան, Արփի Կարապետեան, Արա Ասլանեան, Յարութ Պետեւեան, Ծովիկ Կարապետեան, Էմիլ Տէր Գրիգորեան, Գօգօ Սարգիսեան, Հենրիկ Եղիկեան եւ ուրիշներ:

Շրջանային մարզական գործունէութիւն 1990-92 երկամեակին Շրջանային Մարզական Խորհուրդներուն մաս կազմած են Մանուէլ Մարսէլեան, Մարք Փիրանեան, Լի Չաքալոգեան, Սամ Ազիզեան, Հրանդ Դաւիթեան եւ Նորա Եագուպեան:

Շրջանային Մարզական Խորհուրդի ընթա-



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Երջանի 1996 տարուան խմբապետական սեմինար-բանակումին մասնակիցներու խմբանկար:

ցիկ աշխատանքներէն են՝ Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերը (ՔԱՀԱՄ), 1991ին՝ 45 խումբերու եւ 380 անհատական մարզիկներու, իսկ 1992ին՝ 62 խումբերու եւ 425 անհատական մարզիկներու մասնակցութեամբ: Շրջանային Մարզական Խորհուրդը կը հովանաւորէ միջմասնաճիւղային խաղերը եւ Քալիֆորնիոյ շրջանի հայ մարզական խումբերու մրցաշարքերը (Համահայկական խաղեր անուանումով) :

Խորհուրդի գլխաւոր աշխատանքն է Նաւասարդեան խաղերու կազմակերպումը, որոնք տեղի ունեցան հետեւեալ շարքով եւ նախագահութիւններով.-

1991, 16րդ Տէր եւ Տիկին Վարդգէս Ալահայտոյեան-[Ծ/115.6]

1992, 17րդ Տէր եւ Տիկին Ժիրայր Սարգիսեան-[Ծ/128.26]

1993, 18րդ Տիար Քերոբ Առաքելեան - [Ծ/136.33] եւ [Ծ/138.12-20]

1994, 19րդ Յիշատակ Երուանդ Սիսեանի

1995, 20րդ Տիար Քերոբ Առաքելեան

1996, 21րդ Տէր եւ Տիկին Հրաչ Անտոնեան

1997, 22րդ Տէր եւ Տիկին Կարպիս Քեմանճեան - [Ծ/181.3-10]

1998, 23րդ Տէր եւ Տիկին Տիգրան Տէր Ղազարեան - [Ծ/195.28]

1999 24րդ [Ծ/208.15]

2000, 25րդ Տիկին Աշխէն Փիլաւճեան - [Ծ/218.36]

2001, 26րդ Տէր եւ Տիկին Վաչէ Սողոմոնեան-[Ծ/230.17-22]

2002, 27րդ *Տիար Ալպեր Շահինեան* – [Ծ/241.17]

2003, 28րդ *Տէր եւ Տիկին Սարգիս Կիտցինեան* – [254.14-22]

2004, 29րդ *Տէր եւ Տիկին Չարլի Կալեան* – [Ծ/267.16-24]

2005, 30րդ *Տէր եւ Տիկին Շանթ Հայթայեան* – [Ծ/278.25]:

Չարլի Կալեան, Գոգո Պալեան, Մարո Քէչիչեան, Վազգէն Աբրահամեան, Բաֆֆի Իսբէնճեան, Օշին Յարութիլեան, Գրիգոր Սարտարեան, Նորա Չափարեան, Արփի Օհաննէսեան, Մայք Վարդանեան, Ներսէս Զէյթունեան, Հայկ Յովսէփեան, Սազո Կարապետեան, Գրիգոր Մկրեան, Գոգո Գալայճեան, Արսինէ Աղաջանեան, Հրայր Լէօն, Արմանտ Քիլիճեան, Բենիթա Օրթուրէքեան, Յակոբ Աւետեան, Շուշիկ Հաւաթեան, Սիրան Մարսէլեան, Վարդգէս Շիրտրմեան, Վահագն Թովմասեան, Ճորճ Մելքոնեան, Ժասիկ Ճարահեան, Յարութ Մանուկեան, Մհեր Դաւիթեան, Մայք Փիրանեան, Լի Չաքալոզեան, Սամ Ազիզեան, Հրանդ Դաւիթեան, Նորա Եագուպեան, Յարութ Մատէնլ-

Նաւասարդեան խաղերու կազմակերպման Շրջանային յանձնախումբերուն 1990էն 2004 տարիներուն իրենց մասնակցութիւնը բերած են Շանթ Հայթայեան, Կարպիս Շիրտրմեան, Մանուկ Մարսէլեան, Սազո Ուրֆալեան, Փիէո Չրախչեան, Հարմիկ Սարեան, Փասքալ Կիւզէլ,



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ խաղերու վոլիպոլի մրցաշարքի ախոյեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու Աերկայացուցչական խումբը

եան, Ռազմիկ Արիսեան, Գառնիկ Ուղուրլեան, Վիգէն Աբէլեան, Ռուբիկ Իպրահիմի, Ռուբինա Ճանսրզեան, Արամ Անանեան եւ ուրիշներ:

Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային մարզական խորհուրդի գործունէութեան ծիրին մաս կը կազմեն ՔԱՀԱՄԻ մրցաշարքերու կազմակերպումը: Իւրաքանչիւր տարի այս խաղերուն մասնակցած են հայ թէ օտար վարժարաններ յաճախող հայ աշակերտական պասքէթպոլի, վոլիպոլի եւ փինկփոնկի խումբեր, շուրջ մէկ ամսուան միջոցին, յատկապէս օտար վարժարաններ յաճախող աշակերտներուն առիթ ստեղծելով մրցումներու մասնակցութեամբ, ապրելու հայաշունչ մթնոլորտի մէջ: ՔԱՀԱՄԻ խաղերը ունին իրենց բացման եւ փակման հանդիսութիւնները: Աւելի քան 60 զանազան դասակարգի խումբեր եւ բազմահարիւր մարզիկներ կը մասնակցին այս մրցաշարքերուն:

Մարզական Շրջանային խորհուրդը կը կազմակերպէ նաեւ համահայկական կոչումով միջմասնաճիւղային պասքէթպոլի եւ վոլիպոլի

մրցաշարքեր, որոնց հիւրաբար կը մասնակցին Հ.Բ.Ը.Մ.ի, Հայ Երիտասարդաց Միութեան եւ Նարեկ Մշակութային Միութեան զանազան դասակարգի զոյգ սեռերու խումբերը:

Տնտեսական

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային տնտեսական յանձնախումբը զանազան առիթներով՝ ճաշկերոյթով, խրախճանքներով եւ նուիրահաւաքներով, կ'ապահովէ Շրջանային Վարչութեան գործունէութեան նիւթական միջոցները: Հոկտեմբեր 1992ին, Շրջանային Վարչութեան նիւթական գործունէութեան կշիռն է 1.593.000 ամերիկեան տոլար: Շրջանային տնտեսական յանձնախումբի 1990-92ի գործունէութիւնը կը վարեն Շանթ Հայթաթեան, Շահէ Քիտոքեան եւ Յակոբ Թիւֆէնքճեան:

Ընկերային, Ազգային եւ հրապարակային գործունէութիւններ
Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կարեւոր ներդրում ունեցած է Շրջանի ընկերային, ազգային եւ հրապարակային ելոյթներուն, որոնք կազմակերպուած են իր նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ Ազգային առաջնորդարանի եւ ուղեկից միութիւններու նախաձեռնութեամբ: Այս մարզին մէջ 1991էն 2000 ժամանակաշրջանին արձանագրելի իրականացումներ են եղած.-

- Իւրաքանչիւր տարի Ապրիլ 24ի ոգեկոչման մասնակցութիւն
- Իւրաքանչիւր տարի Մայիս 28ի առթիւ քարոզչական աշխատանքներ, Ազգային վարժարաններէ ներս :
- 14 Մայիս 1992ին «Արժանեաց» շքանշանով կը պարգեւատրուի Եղիշէ Մանուկեան:
- 10 Դեկտեմբեր 1993ին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակի տօնակատարութեան ծիրին մէջ տեղի կ'ունենայ երէց մարզիկներու մեծարանքի հանդիսութիւն — [Ծ/142.60]:
- 1994ին «Արժանեաց» շքանշանով կը պարգե-



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ խաղերու պասքէթպոլի մրցաշարքի ախոյեան Արեւմտեան Միացեալ Նահանգներու աղջկանց ներկայացուցչական խումբը

լատրոլին Վարդգէս Ալահայտոյեան եւ Սեւակ Սագինեան:

- 1998ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակի տօնակատարութեան առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով կը պարգեւատրուի Սամուէլ Մկրտիչեան:

- Նոյեմբեր 2000ին Հայաստան հիմնադրամի ի նպաստ թելեթոնի մասնակցութիւն:

- 2003ին կը տօնակատարուի Միութեան հիմնադրութեան 85ամեակը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գ Ա Ն Ա Տ Ա

- ՆԵՐԱԾԱԿԱՆ
- ՄՈՆԹՐԷԱԼ
- ՀԱՄԻԼԹԸՆ
- ԹՈՐՈՆԹՕ
- ՔԷՄՊՐԻԾ
- ՍԷՆԹ ԳԱԹՐԻՆԶ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1991-2005 ժամանակաշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանը ունեցաւ բնականոն զարգացման գործունէութիւն: Գաղութի հայութեան թուական աճը կարելոր դեր ունեցաւ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի նուաճումներուն: Սակայն հարկ է արձանագրել, որ այս զարգացման զոյգ բեւեռները հանդիսացած են երկու մեծագոյն մասնաճիւղերը՝ Մոնթրէալը եւ Թորոնթոն: Երեք այլ մասնաճիւղերը՝ Համիլթըն, Քէմպրիճ եւ Սէնթ Գաթրինզ նուազ չափով կրցան հետեւիլ Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ական զարգացման, մերթ մասնաճիւղերու քաղաքներէն ներս հայութեան կայուն եւ երբեմն ալ նահանջող թիւերուն պատճառով եւ մերթ մասնաճիւղերու յաջորդական վարչական տկար կազմերու համեստ գործունէութիւններուն պատճառով:

ՍՈՆԹՐԷԱԼ

Կազմակերպչական Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ. Կամքի անդամական ընդհանուր ժողովը, 11 Մարտ 1991ին, կ'ընտրէ տարեշրջանի վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն.

- Ատենապետ՝ Բաբկէն Կարապետեան
- Փոխ ատենապետ՝ Մոսիկ Թոփուզեան
- Ատենադպիր՝ Յարութ Ասատուրեան
- Գանձապահ՝ Մայտա Պոյաճեան
- Հաշուապահ՝ Նորայր Շալճեան
- Գոյքապահ՝ Վահէ Թաշճեան

Մարզականի պատասխանատու՝ Պետրոս Հայրապետեան

Սկստականի պատասխանատու՝ Սեդրակ Պուրսալեան

Խորհրդական՝ Յարութիւն Զիլինկիրեան:

Վարչութեան օժանդակ յանձնախումբերն են.- միջմասնաճիւղային ձմեռնային խաղերու, Սկստական Խորհուրդ, Ֆուտպոլի, պարահանդէսի եւ անդամական յանձնախումբերը: Մասնաճիւղը իր ներկայացուցիչներով կը մասնակցի

միջվարչական, սկստական եւ մարզական սեմինարին եւ միջմասնաճիւղային բոլոր մրցաշարքերուն:

Մասնաճիւղի գործունէութեան մասին լայն արձագանք կը տրուի «Հորիզոն» շաբաթաթերթի, «Մարզիկ» պաշտօնաթերթի եւ «Հորիզոն» հեռատեսիլի կայանի միջոցներով:

1992 տարուան ընթացիկ գործունէութիւնը կը վարէ վարչական կազմը.-

- Ատենապետ՝ Բաբկէն Կարապետեան
- Փոխ ատենապետ՝ Մոսիկ Թոփուզեան
- Ատենադպիր՝ Յարութ Ասատուրեան
- Գանձապահ՝ Յակոբ Արեւեան

Խորհրդականներ՝ Նորայր Շալճեան, Սեդրակ Պուրսալեան, Պետրոս Հայրապետեան, Յարութ Զիլինկիրեան եւ Սոնա Լախոյեան:

1 Փետրուար 1993ին ընտրուած վարչական կազմի աշխատանքներու բաժանումը կը կատարուի հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Սեդրակ Պուրսալեան, փոխ ատենապետ՝ Տիգրան Մելքոնեան, ատենադպիր՝ Վահէ Յակոբեան, գանձապահ՝ Սարգիս Գուլումճեան, հաշուապահ՝ Բաֆֆի Ֆրունճեան, մարզականի պատասխանատու՝ Նուպար Վարդիվառեան, խորհրդական՝ Մկո Մղտեսեան:

Տարեշրջանի անդամական ընդհանուր թիւն է՝ 854, որոնցմէ 336ը սկստական շարքերէն եւ 368ը մարզական ճիւղերէն: Շրջանի 19րդ ձմեռնային խաղերու կողքին, տարեշրջանի գլխաւոր ձեռնարկը համաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ խաղերու կազմակերպումն է Ֆուտպոլի եւ աթլետիկամի բաժիններով, ինչպէս նաեւ մասնաճիւղի հիմնադրութեան 35րդ տարեդարձի նշումը: Տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է. մուտք՝ 78.997 գանատական տոլար, ելք՝ 82.836 գանատական տոլար:

1994 տարուան վարչական կազմին մասնակցած են, ատենապետութեամբ Սեդրակ Պուրսալեանի, Տիգրան Մելքոնեան, Ժիրայր Գասպարեան, Սարգիս Գուլումճեան, Գրիգոր Ապրաքեան, Նուպար Վարդիվառեան, Յովիկ Գաթարոյեան, Վահան Մանուկեան եւ էտի Մելքոնեան:



Մոնթրեալի Հ.Մ.Ը.Մ.-կամքի 2007 տարուան վարչական կազմը: Ա. շարք՝ Ռիշար Մելքոնեան, Յարութ Պոյամեան, Տիրան Ծահիմեան, Սիլվա Պուրսալեան, Գեորգ Պիլեմեան, Բ. շարք՝ Յարութ Մեսրոպեան, Սօսի Հայրապետեան, Ծորճ Պալուզեան, Գրիգոր Ապրաքեան

1995 տարեշրջանի Մոնթրեալի մասնաճիւղի վարչութիւնը կ'ընտրուի անդամական ընդհանուր ժողովին կողմէ՝ հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Արամ Մանուկեան
- Փոխ ատենապետ՝ Ժիրայր Գասպարեան
- Ատենադպիր՝ Նուպար Վարդիվառեան
- Գանձապահ՝ Յովիկ Գաթարոյեան
- Խորհրդականներ՝ Էտի Մելքոնեան, Մկօ Մղտեսեան, Յակոբ Գարայեան եւ Կասիա Ստամպուլեան:

Մասնաճիւղը այս տարեշրջանին եւս ներկայ է Շրջանային վարչութեան կազմակերպած բոլոր միջմասնաճիւղային ձեռնարկներուն, որոնցմէ իր գործակցութեամբ կ'իրականանան միջմասնաճիւղային խաղերը:

Մոնթրեալի մասնաճիւղի ներկայացուցիչները մասնակցած են միջմասնաճիւղային վարչական ժողովներուն, մարզական եւ սկստական զոյգ սեմինարներուն:

Վարչութիւնը այս տարեշրջանին կազմակերպած է դաշտագնացութիւն եւ պարահանդէս՝ եկամուտներ ապահովելու համար մասնաճիւղի սնտուկին:

1996 տարուան վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Մկօ Մղտեսեան
- Ատենադպրուհի՝ Նորա Խոզոզեան
- Գանձապահ՝ Կապի Թապէթ
- Հաշուապահ՝ Յակոբ Պարտաքճեան

Սկսած 1997 թվականի պատասխանատու՝ Յակոբ Գարայեան

Մարզականի պատասխանատու՝ Յարուկ Պոյամեան

Խորհրդականներ՝ Ալին Հաճէթեան, Արամ Մանուկեան եւ Յովիկ Գաթարոյեան :

Մասնաճիւղի մարզական գործունէութեան առանցքը կը կազմեն պասքեթպոլը՝ զանազան դասակարգի եւ երկու սեռերու 10 խումբերով, վոլիպոլը՝ 2 խումբերով, Ֆլորհաքին՝ 2 խումբերով, ֆութպոլը՝ 15 խումբերով եւ աթլետիզմը:

1997ի վարչական կազմը կը բաղկանայ եօթը անդամներէ.-

- Ատենապետ՝ Մկօ Մղտեսեան
- Ատենադպիրուհի՝ Նորա Խոզոզեան
- Գանձապահ՝ Ֆրանսուա Գարայեան
- Հաշուապահ՝ Լեւոն Աֆէյեան
- Գոյքապահ՝ Յարուկ Պոյամեան

Մարականի պատասխանատու՝ Կապի Թապէթ

Սկսած 1998 թվականի պատասխանատու Յովիկ Գաթարոյեան:

16 Փետրուար 1998ին Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահին մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.- Կամքի տարեկան անդամական ընդհանուր ժողովը, որուն վերջաւորութեան նորընտիր վարչական կազմը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Ժիրայր Գասպարեան
- Փոխ ատենապետ՝ Րաֆֆի Ֆրունճեան
- Ատենադպիր՝ Յարուկ Տէր Աշոտեան
- Գանձապահ՝ Արի Սերոբեան
- Հաշուապահ՝ Րաֆֆի Աբանեան
- Գոյքապահ՝ Յարուկ Պոյամեան

Սկսած 1999 թվականի ներկայացուցիչ՝ Յարուկ Ասատուրեան

Յուլիանի պատասխանատու՝ Էլիզ Պողոսեան

Խորհրդական՝ Վարուժ Բաբախեան:

1999 եւ 2000 տարիներուն մասնաճիւղի վարչական կազմերուն կը մասնակցին, ատենապետութեամբ Վարդան Բաբախեանի, Նորա Խոզոզեան, Րաֆֆի Աբանեան, Կապի Թապէթ, Արամ Մանուկեան, Մկօ Մղտեսեան, Նիկողոս Մարունեան, Ֆրանսուա Գարայեան, Տիրան Շահինեան, Յակոբ Թահէլեան, Ժիրայր Գասպարեան, Արի Սերոբեան, Ռիչարտ Մելքոնեան, Զարեհ Տոլմաճեան եւ Յովիկ Գաթարոյեան:

2001 տարուան վարչական կազմը կը բաղկանայ հետեւեալ անդամներէ.-

- Ատենապետ՝ Մկօ Մղտեսեան
- Ատենադպիր՝ Յակոբ Դանիէլեան
- Գանձապահ՝ Ժիրայր Գասպարեան
- Հաշուապահ՝ Րաֆֆի Աբանեան
- Անդամական՝ Արի Սերոբեան
- Սկսած 2002 թվականի վարչական կազմը կը բաղկանայ յետ վերջնական դասաւորման կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վարդան Բաբախեան

- Ատենադպիր՝ Յակոբ Դանիէլեան
- Գանձապահ՝ Ժիրայր Գասպարեան
- Հաշուապահ՝ Րաֆֆի Աբանեան
- Սկսած 2003 թվականի վարչական կազմը կը բաղկանայ յետ վերջնական դասաւորման կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վարդան Բաբախեան

Այս տարեշրջանին անդամներու թիւն է 665: Մասնաճիւղը կը մասնակցի Շրջ. Վարչութեան կազմակերպած սկսած 1998 թվականի սեմինարին եւ ձմեռնային խաղերուն, կը կազմակերպէ տարեկան պարահանդէս եւ Աղեքսանդրիոյ Հ. Մ. Ը. Մ. - Կամքի հիմնադրութեան 90ամեակի տօնակատարութիւն:

2003 տարուան վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Րաֆֆի Ֆրունճեան
- Փոխ ատենապետ՝ Արի Սերոբեան
- Ատենադպիր՝ Արպի Ղազարեան
- Գանձապահ՝ Սերոբ Գարայեան

Հաշուապահ՝ Գրիգոր Ապրաքեան
Գոյքապահ՝ Գէորգ Պիլէմճեան
Սկաուտական՝ Աւագ Քահուէճեան:

2004 տարեշրջանի վարչութեան կ'անդամակցին.-

Ատենապետ՝ Տիրան Շահինեան
Ատենադպիր՝ Ժիրայր Գասպարեան
Գանձապահ՝ Գրիգոր Ապրաքեան
Հաշուապահ՝ Սիլվիա Պուրսալեան
Խորհրդականներ՝ Գէորգ Պիլէմճեան, Արպի Ղազարեան եւ Թորոս Հալլաճեան: Վարչութիւնը կը փոխադրուի իր նոր գրասենեակը՝ տրամադրուած Հայ Կեդրոնի վարչութեան կողմէ: Տարեշրջանի ընթացքին անդամական ցանկի բիւրեղացումով եւ նոր անդամակցութիւններու կարեւոր աճով անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 814ի: Մասնաճիւղի աւանդական

ձեռնարկները կ'իրագործուին հերթականութեամբ:

12 Ապրիլ 2005ին կ'ընտրուի նոր վարչական կազմ.

Ատենապետ՝ Տիրան Շահինեան
Ատենադպիր՝ Սօսի Հայրապետեան
Գանձապահ՝ Գրիգոր Ապրաքեան
Հաշուապահ՝ Ժիրայր Գասպարեան
Խորհրդականներ՝ Նուպար Վարդիվառեան, Վիգէն Պասմաճեան եւ Ճինիա Պէյլէրեան:
Օգոստոսէն սկսեալ այս կազմին օժանդակելու կը հրաւիրուի Ռիչրտ Մելքոնեան: Մասնաճիւղը ունի 640 գործօն եւ 180 օժանդակ անդամներ:

2006-2007 ի վարչական կազմը կը մնայ նոյն-



Մոնթրէալի մասնաճիւղի 1995 տարուան պասքեթպոլի խումբը



Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-Կամք մասնաճիւղի արջերը իրենց պատասխանատուներուն հետ: Ուտքի՝ վեցերորդը Զաւէն Դաւիթեան՝ Համահայկական Ա. խաղերու 100 մ. վազքի ախոյեան

նր, բացի Ժիրայր Գասպարեանէ եւ Նուպար Վարդիվառեանէ, որոնց կը փոխարինէ Ճորճ Պալէոզեան:

Նախորդող բոլոր վարչական կազմերուն կ'օժանդակեն Սկաուտական Խորհուրդներ եւ զանազան՝ մարզական, ընկերային եւ այլ յանձնախումբեր, նշանակուած վարչական կազմերուն կողմէ:

Մարզական Գործունէութիւն

1991ին պասքեթպոլի տղոց առաջին կազմը, յաղթելով Longueuil խումբին, կը տիրանայ Մոնթրէալի Բ. դասի ախոյեանութեան: Խումբի մարզիկներէն Մանուկ Զիլինկիրեան կ'արժանանայ մրցաշարքի լաւագոյն մարզիկի տիտղոսին: Երկրորդական դասի զոյգ խումբեր եւս կը

տիրանան իրենց դասակարգերու Մոնթրէալի ախոյեանութիւններուն:

1992ին մասնաճիւղի պասքեթպոլի երէցներու խումբը կը տիրանայ Մոնթրէալի Ֆետերասիոնի բաժակին - [Ծ/131.22]:

1993ին մասնաճիւղի փինկ-փոնկի երէց տղոց խումբը կը տիրանայ Քէպէք նահանգի ախոյեանութեան: Փոքրերու դասակարգին մէջ կը փայլի 12ամեայ Մարիամ Մանուկեան - [Ծ/138.27]:

1994ին տղոց եւ աղջկանց զանազան դասակարգերու 13 խումբեր կը մասնակցին Մոնթրէալի լիկի ախոյեանական մրցաշարքերուն:

Ֆուտպոլի եւ պասքեթպոլի խումբերը կը մասնակցին համաամերիկեան միջմասնաճիւղային մրցաշարքերուն: Մասնաճիւղը կը կիրարկէ հետեւեալ մարզաճիւղերը.- աթլետիզմ՝ 7

մարզիկներ, Ֆուլթայոլ՝ 156, պասքեթբոլ՝ 207, վոլեյբոլ՝ 30, ֆլորհաքի՝ 20 եւ սոֆթբոլ՝ 10:

1999ին կրտսերներու Ֆուլթայոլի խումբը, յաջողութեամբ աւարտելով եղանակի մրցումները, կը տիրանայ 2000ի Գոնգորտիա լիկի ախոյեանի տիտղոսին:

23էն 26 Նոյեմբեր 2000ին, Մոնթրէալի մէջ տեղի կ'ունենան պասքեթբոլի միջմասնաճիւղային 24րդ խաղերը, մասնակցութեամբ Գանատայէն եւ Միացեալ Նահանգներու զոյգ շրջաններէն 20 խումբերու: Խաղերը կը նախագահեն Տէր եւ Տիկին Հայկ եւ Անահիտ Մարգարեաններ [-Ծ/223.33]:

2001 տարեշրջանին մասնաճիւղի (12 տարեկան) պատանիներու Ֆուլթայոլի խումբը կը յաջողի ապահովել Գոնգորտիա լիկի հիւսիսային շրջանի ախոյեանութիւնը: Մարզական պատւիրակութիւններ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական ճրդ խաղերուն՝ Պէյրութ, համա-հայկական Բ.խաղերուն՝ Երեւան եւ միջմասնաճիւղային խաղերուն՝ Թորոնթօ:

24 Մարտ 2002ի յաղթանակով Հ.Մ.Ը.Մ. կամքի Ֆուլթայոլի երէցներու կազմը կը յաջողի ապահովել Գոնգորտիա լիկի փակ դաշտի 2002 եղանակի ախոյեանութիւնը:

2003ի եղանակին, մասնաճիւղի ֆլորհաքիի երէց տղոց խումբը կը յաջողի տիրանալ Մոնթրէալի ախոյեանութեան տիտղոսին: Խումբին մարզիչն է Յակոբ Դանիէլեան:

2004ին մասնաճիւղի կիրարկած ճիւղերուն վրայ կ'աւելնայ կոլֆի ճիւղը:

1991էն 2005 ժամանակամիջոցին, մարզական յանձնախումբերուն մաս կազմած են հետեւեալ անդամները.- Նիկողոս Մարունեան, Պօղոս Հայրապետեան, Նուպար Թովմասեան, Վարդան Բաբախեան, Առջի Մանասեան, Վարուժան Զուրիկեան, Տիգրան Եօթնաղբերեան, Ասպետ

Կենճ, Արմէն Հացագործեան, Տիգրան Մելքոնեան, Ս. Լախոյեան, Ն. Վարդիվառեան, Վ. Լախոյեան, Մոսիկ Թոփուզեան, Վ. Յուսիկեան, Նորայր Շալճեան, Սեդա Թոփուզեան, Ժողէֆ Գոզանեան, Յովսէփ Եագուպեան, Էտմոն Մուրալեան, Վազգէն Մաղաքեան, Վերա Գիզիրեան, Կասիա Սթամպուլեան, Յարուժ Պոյամեան, Արամ Խաչիկեան, Գէորգ Պիլէմճեան, Կարօ Քէօշկերեան, Արմէն Թորոսեան, Արա Բանոյեան, Վահէ Թաշճեան, Սագօ Խշխրչեան, Սարգիս Մանճրլթեան, Վարուժ Բաբախեան, Թային Նաճարեան, Արփի Հայրապետեան, Գօգօ Օհաննէսեան, Զաւէն Տարաքճեան, Յակոբ Դանիէլեան, Բաբէն Կարապետեան, Արշօ Գանաճեան, Օննիկ Գուլումճեան, Ժանօ Սարգիսեան, Ժիրայր Շատարեւեան, Աւագ Գահուէճեան, Քրիստին Մարգարեան, Մկօ Շահինեան, Յակոբ Մոմճեան, Կարօ Գունտաքճեան, Արա Կիրակոսեան, Սեդրակ Կարապետեան, Վիգէն Սարգիսեան եւ Գառնիկ Թորիկեան:

Սկաուտական գործունէութիւն

1991 տարուան Սկաուտական Խորհուրդին մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Ռոպէր Թուխմանեան
Փոխ Ատենապետ՝ Ֆրանսուա Գարայեան
Ատենադպիր՝ Յասմիկ Մանուկեան
Գանձապահ՝ Անի Գուլումճեան
Հաշուապահ՝ Սիլվիա Պուրսալեան
Գոյքապահ՝ Սարգիս Գուլումճեան
Խորհրդական՝ Րաֆֆի Գազանճեան:

Սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 306: Սկաուտական հաւաքոյթները տեղի կ'ունենան Սբ. Յակոբ վարժարանի մէջ, Շաբաթ օրերը: Նիւթական եկամուտները աւանդաբար կ'ապահովուին Զատիկուան շոքոլայի, Մայրերու Օրուան ծաղիկի, Կաղանդի շնորհաւորական քարթերու եւ խնձորի վաճառքներէն: Բոլոր միաւորները կ'ունենան իրենց յատուկ բանակումները եւ միասնաբար տարեկան ընդհա-



Մոնթրեալի Հ.Մ.Ը.Մ.-Կամքի 2005 տարուան սկաուտական սեմինարին մասնակիցներու խմբանկար նուր բանակում: Տարեկան մուտքերու ընդհանուր գումարն է 45.455 գանատական տոլար, ելք՝ 40.000 գանատական տոլար:

1992էն 1996 Սկաուտական Խորհուրդներու մաս կազմած են Ֆրանսուա Գարայեան, Յասմիկ Մանուկեան, Անի Գուլյումճեան, Սիլվիա Պուրսալեան, Սարգիս Գուլյումճեան, Յակոբ Պարթեւեան, Սոնա Լիպարեան, Արա Կալենց, Անթուանէթ Երէցեան, Րաֆֆի Թէքէեան, Թալին Հաճեան, Տիրան Շահինեան:

1993ին սկաուտական գործունէութեան նիւթական բաժինը բացառիկ աճ կ'արձանագրէ. ելքերու ընդհանուր գումարն է 126.724 գանատական տոլար:

1996էն սկսեալ, միայն թմբկահարներէ բաղկացող նուագախումբը կը զարգանայ փողերա-

յին գործիքներու յաւելումով, մասնակցութեամբ աւելի քան 60 նուագաժողովներու, ղեկավարութեամբ՝ Սարգիս Պոյաճեանի: Նուագախումբի գլխաւոր ելոյթներէն են Մոնթրեալի պողոտաներուն մէջ կազմակերպուող Մայիս 28ի տարեկան տողանցքները, որոնք կը գնահատուին հայ եւ օտար զանգուածներու կողմէ:

1996ին սկաուտական շարքերու ընդհանուր թիւը կը բարձրանայ 387ի: Մասնաճիւղի ընդհանուր խմբապետն է Թորոս Հալլաճեան, ընդհանուր խմբապետուհի՝ Թալին Սերոբեան:

Մասնաճիւղի 1997 տարեշրջանի Սկաուտական Խորհուրդի կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Տիրան Շահինեան
Փոխ ատենապետ՝ Արա Իմամէճեան
Ատենադպիր՝ Յասմիկ Մանուկեան



Մոնթրեալի մասնաճյուղի արեւոյշներու տողանցք՝ Մայիս 28ի Հայաստանի անկախութեան տօնին առթիւ

Գանձապահ՝ Թալին Հաճեան
Հաշուապահ՝ Յակոբ Գարայեան
Գոյքապահ՝ Րաֆֆի Թէքէեան
Քարտուղար՝ Մարալ Յակոբեան:

Սկսած 2001 թվականից շարքերու ընդհանուր թիւն է 383, հետեւեալ են թափաքանուկներով - գայլիկներ՝ 96, արիներ՝ 64, երէցներ՝ 40, աւագ երէցներ՝ 29, արծուիկներ՝ 41, արեւոյշներ՝ 53, հետախոյզներ՝ 42, պարմանուհիներ՝ 18: Մասնաճյուղի սկսած 2001 թվականի նուազախումբը կը բաղկանայ 31 նուազողներէ, ղեկավարութեամբ՝ Սարգիս Պոյաճեանի:

Սկսած 2001 թվականի հաւաքոյթները կը կատարուին շաբաթական հերթականութեամբ, Հայ Կեդրոնի զանազան բաժիններէն ներս: Արշալոններու եւ բանակուկներուն առընթեր խումբերը կը մասնակցին ազգային եւ եկեղեցական տօներու եւ հանդիսութիւններու: Արեւոյշական ճիւղը արձանագրուած է Guirl Guides of Canada ի մօտ իբրեւ անջատ խմբաւորում, զուտ Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրով գործելու իրաւունքով:

1998ին 63 սկսածներ եւ արեւոյշներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական ճիւղ Ընդհանուր Բանակումին:

2001 տարեշրջանի Սկսածական Խորհուրդին կ'անդամակցին Թորոս Հալլաճեան, Զեփիւռ Լուլու Քէօսէեան, Հայկ Նշանեան, Մարի Մուրատեան, Ճօ Աբիկեան, Սօսի Հայրապետեան եւ Նուարդ Աղամեան: 2002ին, Զեփիւռ Լուլու Քէօսէեան, Սօսի Հայրապետեան, Կարօ Թոնդեան, Ծովիկ Կուտեան, Արփի Գազարեան, Լեւոն Գաբրիէլեան: Սկսածական Խորհուրդի գանձին տարեկան մուտքն է 82.153 գանատական տոլար: 2002էն սկսեալ, սկսածական նուազախումբի վարիչն է Լեւոն Կարապետեան:

2004ին մասնաճյուղի խմբապետն է Արմէն Մարգարեան, խմբապետուհի՝ Հուրիկ Հայրապետեան:

2005ին խմբապետն է Էրիք Արապեան, խմբապետուհին՝ Լենա Մինասեան:

2003էն 2005 տարեշրջաններուն մասնաճյուղի Սկսածական Խորհուրդներուն մաս կազմած են Զեփիւռ Լուլու, Սօսի Հայրապետեան, Անի Գուլյումճեան, Ֆրանսուա Գարայեան, Ճորճ Պալէոզեան, Բետրօ Ուղուրլեան, Էննեստ Պատալեան, Լեւոն Արապեան, Հուրիկ Լիպարեան, Նորա Թազազեան, Քրիստին Սահակեան, Արա Էկոյեան, Մարալ Իմամէճեան, Լիսա Բարդամեան, Արչօ Դերձակեան, Մարալ Գաթարոյեան, Միհրան Ծառուկեան, Արթօ Պասմաճեան եւ Հուրիկ Հայրապետեան:

Հրապարակային գործունէութիւններ
25 Սեպտեմբեր 1993ին Հ.Մ.Ը.Մ.-Կամքի Մոնթրեալի մասնաճյուղը կը տօնէ իր հիմնադրութեան 35ամեակը: Օրուան պատգամաբերն է Արմէն Աւագ Քահանայ Իշխանեան -[Ծ/141.18]:

5 Դեկտեմբեր 1999ին կը նշուի մասնաճյուղին հիմնադրութեան 40ամեակը՝ սկսածական հրապարակային հանդիսութեամբ -[Ծ/211.3]:



Հայաստանի առաջին անկախության՝ Մայիս 28ի տօնին առթիվ Մոնթրեալի մասնաճիղի ակաուտները կը տողանցեն

ՀԱՄԻԼԹԸՆ

Հիմնադրուիթեան կարգով, Գանատայի երկրորդ մասնաճիղն է Համիլթընի մասնաճիղը, որ 17 Մարտ 1991ին կ'ընտրէ իր վարչուիթիւնը հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Ղազար Մաթեան
- Փոխ ատենապետ՝ Սարգիս Ժամկոչեան
- Ատենադպիր՝ Եփրաքսի Աբգարեան
- Գանձապահ՝ Նորայր Գրիչեան
- Մարզական պատասխանատու՝ Արիս Աբգարեան:

Այս տարեշրջանին մասնաճիղի մարզական գործունէութիւնը կը շարունակուի նոյն թափով: Վարչուիթիւնը կը կազմակերպէ միջմասնաճիղային վոլիպոլի եւ պասքեթպոլի

մրցաշարք, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Գանատայի 4 մասնաճիղերու եւ Տիթրոյիթի մասնաճիղի խումբերը: Մասնաճիղի խումբերը կը մասնակցին Շրջանի ամառնային 25րդ եւ ձմեռնային 17րդ խաղերուն: Տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է, մուտք՝ 9465, ելք՝ 8512 գանատական տոլար:

1992ին մասնաճիղը կ'ընտրէ իր վարչական կազմը բաղկացած հետեւեալներէն.-

- Ատենապետ՝ Վաչէ Գալուստեան
- Փոխ ատենապետ՝ Ղազար Մաթեան
- Ատենադպիր՝ Եփրաքսի Աբգարեան
- Գանձապահ՝ Նորայր Գրիչեան
- Մարզական պատասխանատու՝ Արիս Աբգարեան:

Այս կազմը, Բէմպրիճի մէջ, 1 եւ 2 Փետրուա-



Մոնթրեալի մասնաճիղի սկսուտական հիմնու նոր անդամներու հաւաք, 22 Նոյեմբեր 1997

րին, տեղւոյն մասնաճիղին գործակցութեամբ, կը կազմակերպէ Շրջանի ձմեռնային 18րդ խաղերը, մասնակցութեամբ Գանատայի 5 մասնաճիղերու եւ Տիթրոյիթի մասնաճիղի պասքեթպոլի եւ վոլիպոլի երկու սեռերու խումբերուն- [Ծ/127.8]:

6 Մարտ 1993ին վարչական կ'ընտրուին.-

- Ատենապետ՝ Արիս Աբգարեան
- Փոխ ատենապետ՝ Ղազար Մաթեան
- Ատենադպիր՝ Եփրաքսի Աբգարեան
- Գանձապահ՝ Սարգիս Գալուստեան
- Հաշուապահ՝ Նորայր Գրիչեան
- Գոյքապահ՝ Րաֆֆի Աբգարեան

Մարզական պատասխանատու՝ Արա Մանուկեան:

Մասնաճիղը կը գործէ Համիլթընի Հայ Կեդրոնին մէջ, անդամներու ընդհանուր թիւ՝ 63: Մասնաճիղը կը կիրարկէ աթլետիզմ, փինկփոնկ, քոնկֆու, պասքեթպոլ եւ վոլիպոլ: Բացի

հրապարակային ընթացիկ ելոյթներէն, մասնաճիղը կը նշէ իր հիմնադրութեան 25ամեակը՝ ճաշկերոյթ-պարահանդէսի մը կազմակերպութեամբ:

7 Փետրուար 1994ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Ղազար Մաթեան
- Փոխ ատենապետ՝ Րաֆֆի Աբգարեան
- Ատենադպիր՝ Եփրաքսի Աբգարեան
- Գանձապահ՝ Նորայր Գրիչեան
- Գոյքապահ՝ Սարգիս Գալուստեան

Մասնաճիղը կ'օգտագործէ Hislop schoolի դաշտերը: 45 մարզիկներ կը մասնակցին մասնաճիղի կիրարկած ճիւղերուն. աթլետիզմ՝ 11, ֆուլթպոլ՝ 16, պասքեթպոլ՝ 10, վոլիպոլ՝ 8: Անդամներու ընդհանուր թիւ՝ 57: Ընթացիկ գործունէութեան մաս կը կազմեն Զատկական հաւկերթախաղ, Ծննդեան Աւետում, նարտի մրցաշարք:

1995 տարեշրջանի վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետութեամբ Վաչէ Գալուստեանի, Սարգիս Գալուստեան, Նորայր Գրիշեան, Յովիկ Ժամկոչեան եւ Արա Մանուկեան: Վարչութիւնը կը մասնակցի Գանատայի միջվարչական սեմինարին եւ աւանդական մարզական եւ հրապարակային ելոյթներուն: 2000 գանատական տոլարով կը մասնակցի Հայ Կեդրոնի նորոգութեան ծրագրին: Տարեկան մուտքերու ընդհանուր գումարն է 4072 գանատական տոլար, ելքն է 5272 գանատական տոլար:

1996ին մասնաճիւղը տկար շրջան մը կը բոլորէ: Գանատայի Շրջանային վարչութիւնը 1997 եւ 1998 տարիներուն համար կը յառաջացնէ նշանակովի վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Արիս Աբգարեան
- Ատենադպիր՝ Նորայր Գրիշեան
- Գանձապահ՝ Յովիկ Ժամկոչեան
- Մարզականի պատասխանատու՝ Արա Մանուկեան

Խորհրդական՝ Սարգիս Գալուստեան:

25 Մարտ 2001ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Վաչէ Գալուստեան
- Փոխ ատենապետ՝ Սարգիս Գալուստեան
- Ատենադպիր՝ Նորայր Գրիշեան
- Գանձապահ՝ Արիս Աբգարեան
- Մարզականի պատասխանատու՝ Արա Մանուկեան:

Ընթացիկ գործունէութեան կողքին, վարչութիւնը 8 Յուլիսին կը կազմակերպէ դաշտագնացութիւն, մասնակցութեամբ 200 անդամներու եւ տարեկան պարահանդէս:

ԹՈՐՈՆԹՕ

Կազմակերպչական

1991 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են:-

- Ատենապետ՝ Յակոբ Արթինեան
- Փոխ ատենապետ՝ Վահրամ Փիրջանեան

- Ատենադպիր՝ Թագուհի Զահրան
- Գանձապահ՝ Սօսի Թաշճեան
- Գոյքապահ՝ Արա Պալէոզեան
- Մարզականի պատասխանատու՝ Հայկ Ակոբեան

Սկստականի պատասխանատու՝ Յովսէփ Գազարեան:

Մասնաճիւղի գործունէութիւնը կը զարգանայ Հայ Կեդրոնի յարկէն ներս: Կեդրոնի ծախսերուն համար մասնաճիւղը տարեկան շուրջ 10.000 գանատական տոլար կը յատկացնէ:

Երկրորդ տարին ըլլալով մասնաճիւղը կ'արձանագրէ անդամական թիւի կարեւոր աճ, ընդհանուր թիւը բարձրացնելով 774ի: Վարչութիւնը զանազան ձեռնարկներով (դաշտագնացութիւն, թէյասեղան եւ այլք), կը զարգացնէ անդամներու միջեւ ընկերային կապը: Տարեշրջանի նիւթական գործունէութեան ընդհանուր պատկերն է մուտք՝ 55309 գանատական տոլար, ելք՝ 57739:

1992ին, մասնաճիւղի վարչութիւնը, ատենապետութեամբ Յակոբ Արթինեանի, թեքնիք եւ կազմակերպիչ յանձնախումբերու օժանդակութեամբ փայլուն յաջողութեամբ կ'իրականացնէ Հ.Մ.Ը.Մ.ի համաամերիկեան անդրանիկ խաղերուն կազմակերպումը:

3 Փետրուար 1993ին, մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Արմէն Կէտիկեան
- Փոխ ատենապետ՝ Պետրոս Պետրոսեան
- Ատենադպիր՝ Սիւզի Գալթեան
- Գանձապահ՝ Սոնա Ֆարրա
- Ձեռնարկներու պատասխանատու՝ Յովսէփ Արապեան
- Համամիութենական խաղերու պատասխանատու՝ Արմէն Սերոբեան
- Սկստական Խորհուրդի ներկայացուցիչ՝ Լիւսի Պալեան

Մարզական Խորհուրդի ներկայացուցիչ՝
Վարդան Ադամեան

Անդամական ներկայացուցիչ՝ Մարի Թերեզ
Քիրեճեան:

Վարչութեան օժանդակ յանձնախումբերն են՝ համամիութենական խաղերու յանձնախումբ, ձեռնարկներու յանձնախումբ, սկսուտական խորհուրդ եւ մարզական խորհուրդ: Մասնաճիւղի կազմակերպական գործունէութիւնը կը զարգանայ տարեկան երեք անդամական ընդհանուր ժողովներու կայացումով: Անդամներու ընդհանուր թիւը 605էն կը բարձրանայ 637ի: Համամիութենական խաղերու բացման հանդիսութիւնը եւ կարգ մը զտումի մրցումներ կ'իրականացուին մասնաճիւղի անդամներէն բաղկացած յանձնախումբերու միջոցաւ: Տարեշրջանի մուտքերու ընդհանուր գումարն է 55.792 գանատական տոլար, ելք՝ 54.633 գանատական տոլար:

9 Փետրուար 1994ին, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը իր վերջին օրակարգով կ'ընտրէ տարեշրջանի նոր վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Բեննա Թարգի
- Փոխ ատենապետ՝ Բիւզանդ Վարդանեան
- Ատենադպրուհի՝ Շաքէ Ֆերմանեան
- Գանձապահէ՝ Ժան Սարխանեան
- Հաշուապահ՝ Պետրոս Պետրոսեան
- Մարզական Խորհուրդի կապ՝ Լիսա Տէմիրճեան

Սկսուտական Խորհուրդի կապ՝ Լիւսի Պալեան:

Մասնաճիւղի մարզական եւ սկսուտական ընթացիկ գործունէութեան առընթեր, վարչութիւնը կը կազմակերպէ Հ.Մ.Ը.Մ.ի Օրուան տօնակատարութիւն, դաշտագնացութիւն եւ պարահանդէս, իր շուրջ բոլորելով Թորոնթոյի հայկական գաղութի անդամները:

1995ին մասնաճիւղի վարչութեան ատենապետ

ութիւնը կը վարէ Չարեհ Տէրվիչեան:

28 Փետրուար 1996ին, նորընտիր վարչական կազմը աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով:-

- Ատենապետ՝ Բիւզանդ Վարդանեան
- Փոխ ատենապետ՝ Աւօ Բորբոսեան
- Ատենադպիր՝ Սիւզի Գալթակեան
- Գանձապահ՝ Վիգէն Հաննէսեան
- Հաշուապահ՝ Վարուժ Պոյաճեան
- Մարզական խորհրդատու՝ Գէորգ Յակոբեան

Խորհրդական՝ Չարեհ Տէրվիչեան:

Տարեշրջանի անդամական ընդհանուր թիւն է 608: Մասնաճիւղը կը մասնակցի Շրջանի բոլոր նախաձեռնութիւններուն՝ միջվարչական ժողով, Քէմպրիճի մէջ 27րդ միջմասնաճիւղային խաղեր եւ Բ. ընդհանուր բանակում:

1997 տարուան վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Արա Պալէոզեան: Կազմի միւս անդամներն են՝ Աւօ Բորբոսեան, Վիգէն Հաննէսեան, Գէորգ Յակոբեան, Վահան Չալքեան, Վարուժան Պոյաճեան եւ Մելքոն Քարկոցեան:

1988 տարեշրջանին վարչութեան կ'անդամակցին Չարեհ Տէրվիչեան՝ ատենապետ, Սիւզի Գալթակեան, Արաքս Խաչերեան, Պետրոս Պետրոսեան, Վաչէ Պոյաճեան, Թամար Փիլաւճեան, Մելքոն Քարկոցեան, Շաքէ Ֆերմանեան եւ Վրէժ Սարխանեան: Տարեշրջանի գործունէութիւնը կ'ըլլայ սահմանափակ՝ վարչական, սկսուտական եւ մարզական բաժիններով, ուր կը յաջողին ներկայացուցչական խումբ մը աթլէթներով մաս կազմել Շրջանի 29րդ ամառնային խաղերուն:

1999ին վարչութեան ատենապետն է Հրաչ Նաճարեան, անդամներ՝ Յակոբ Պարտաքճեան, Վաչէ Պոյաճեան, Թամիճա Սարխանեան, Մելքոն Քարկոցեան, Յովիկ Քէշիշեան եւ Շաքէ Ֆերմանեան:

2000-2001 տարեշրջանի գործունեությունների համար Շրջանային վարչությունը կը նշանակէ առժամեայ վարչական կազմ՝ մինչեւ ընտրովի վարչության կազմումը:

2 Ապրիլ 2001ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ վարչական կազմ:-

- Ատենապետ՝ Արմէն Կէտիկեան
- Ատենադպիր՝ Շաքէ Ֆերմանեան
- Գանձապահ՝ Վրէժուհի Տէրվիչեան
- Հաշուապահ՝ Պետրոս Պետրոսեան
- Գոյքապահ՝ Թագուհի Լուսարարեան
- Մարզականի պատասխանատու՝ Միհրան Խաչերեան
- Խորհրդական՝ Վիգէն Խանամիրեան:

Բացի սկսողական Խորհուրդէն, այս կազմին կ'օժանդակեն յանձնախումբեր՝ դաշտագնացութեան, պարահանդէսի, Հ.Մ.Ը.Մ.ի Օրլան տօնակատարութեան եւ ձմեռնային խաղերու: Տարեշրջանին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 620ի: Մասնաճիւղը կը մասնակցի Շրջանի սկսողական խմբապետական սեմինարին, միջվարչական սեմինարին, համա Հ.Մ.Ը.Մ.ական մարզական խաղերուն Պէյրուսի մէջ եւ Գանատայի ձմեռնային խաղերուն: Վարչությունը 10.000 գանատական տոլարով կը մասնակցի Հայ Կեդրոնի տարեկան ծախսերուն: Տարեկան նիւթական գործառնություններն պատկերն է մոտաք՝ 66.354 գանատական տոլար, ելք՝ 73.207 գանատական տոլար:

2002 տարեշրջանի վարչություններ անդամներ կ'ընտրուին:-

- Ատենապետ՝ Վահան Զալքեան
- Ատենադպիր՝ Յուլիէ Բէշիչեան
- Գանձապահ՝ Վաչէ Պոյաճեան
- Հաշուապահ՝ Գէորգ Յակոբեան
- Քարտուղար՝ Անդրանիկ Խաչատուրեան
- Սկսողականի ներկայացուցիչ՝ Հրաչ Նաճարեան
- Մարզականի ներկայացուցիչ՝ Միհրան Խաչերեան:

2002ը մարզական, սկսողական եւ ընկերային բոլոր ճիւղերու լայն գործունեություններ տարեշրջան մը պիտի հանդիսանար: 230 անդամներ մաս կը կազմեն սկսողական շարքերուն: 180 մարզիկներ կը գործեն Ֆուտպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, Ֆլորհաքիի, փինկփոնկի, աթլետիկի, սոֆթպոլի եւ մարտարուեստի բաժանմունքներուն մէջ:

2003 տարեշրջանի մասնաճիւղի վարչություններ կ'անդամակցին:-

- Ատենապետ՝ Հրաչ Նաճարեան
- Փոխ ատենապետ եւ քարտուղար՝ Անդո Խաչատուրեան
- Ատենադպիր՝ Շաքէ Ֆերմանեան
- Գանձապահ՝ Մոսիկ Քարկոցեան
- Հաշուապահ՝ Անդո Պոյաճեան
- Սկսողականի ներկայացուցիչ՝ Գէորգ Յակոբեան
- Մարզականի ներկայացուցիչ՝ Միհրան Խաչերեան:

Մարզական գործունեութիւն

1991ին մարզական խումբերու թեքնիք յաջողությունները եւ որակի բարձրացումը զգալիօրէն կը յառաջդիմեն: Վոլիպոլի տղոց խումբը եւ փինկփոնկի զոյգ մարզիկները կը մասնակցին Արեւմտեան Միացեալ Նահանգներու Նաւասարդեան խաղերուն: Պասքեթպոլի եւ վոլիպոլի խումբերը կը մասնակցին Թորոնթոյի, Քէմպրիճի եւ Համիլթընի մասնաճիւղերուն միջեւ կազմակերպուած մրցաշարքին: 20 անդամներ կը մասնակցին մասնաճիւղի փինկփոնկի ներքին մրցաշարքին, 10 մարզիկներ՝ միջվարժարանային քրոս քաունթրիի մրցումին, 40 մարզիկներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի վոլիպոլի մրցաշարքին: Մասնաճիւղը ունի նաեւ մարտարուեստի ճիւղ, ուր 12 մարզիկներ կը հասնին Սեւ Գօտիի աստիճանին: Մասնաճիւղի մարզիկներէն Վահիկ Ղարախանեան կը տիրանայ Օնթարիոյ նահանգի փինկփոնկի Master մրցաշարքի ախոյեանություններուն:



Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի 1996 տարուան ֆուտպոլի խումբը՝
Օնթարիո նահանգի ախոյեան եւ բաժակակիր

1994-95 տարեշրջանի մարզական խորհուրդի անդամներն են Սիլվա Ֆերմանեան՝ ատենապետ, Արա Պալէոզեան՝ ատենադպիր, Վիգէն Հաննէսեան՝ գանձապահ, Վահրամ Փիրջանեան՝ փոխ ատենապետ, Ռուպինա Պարոնեան՝ խորհրդական, Մանօ Սարխանեան՝ վարչութեան ներկայացուցիչ:

1994ին մասնաճիւղի տղոց պասքեթպոլի եւ ֆուտպոլի խումբերը կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի համաամերիկեան մրցաշարքերուն: Ֆուտպոլի խումբը կը հանդիսանայ երկրորդ: Պասքեթպոլի խումբը Արեւմտեան Միացեալ Նահանգներու տարեկան մրցաշարքին, Նիւ Ճըրզիի մէջ կը շահի ախոյեանութեան բաժակը: Գանատայի 20րդ ձմեռնային խաղերուն մասնաճիւղի տղոց եւ աղջկանց խումբերը եւ Ֆլոր հաքիի խումբը կը տիրանան ախոյեանութեան: Տարեշրջանին գործող 16 մարզական խումբերը կը հաշուեն 270 մարզիկներ, որոնք կը մասնակցին միջակրմբային բարեկամական հանդիպումներուն:

1996 եղանակին մասնաճիւղի ֆուտպոլի խումբը կը տիրանայ Օնթարիո նահանգի ախոյեանութեան տիտղոսին, մրցաշարքին 16 մրցումները յաղթանակով աւարտելով եւ 46 կողի դէմ միայն մէկ կող ստանալով: Խումբին մարզիչն է՝ Սուրէն Պապօզեան- [Ծ/177.30]:

1997ին Թորոնթոյի մասնաճիւղը կը կազմակերպէ Շրջանի 21րդ ձմեռնային խաղերը, իսկ 1998ին՝ ամառնային 29րդ խաղերը: Մասնաճիւղի խումբերը իրենց մասնակցութիւնը կը բերեն Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջաններու տարեկան մարզական ելոյթներուն՝ քանի մը ներկայացուցչական խումբերով: Մարզական յանձնախումբը կը պարգեւատրէ մասնաճիւղի խումբերու մարզիչները: Բ. դասակարգի ախոյեանութեան տիրանալով, 1998ին ֆուտպոլի խումբը Օնթարիոյի լիկի Ա. դասակարգ կը բարձրանայ:

30 Յունիս 2000ին Ուաշինկթընի մէջ մասնա-

ճիւղէն մարզական պատուիրակութիւն մը կը մասնակցի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպած միջմասնաճիւղային խաղերուն- [Ծ/219.28]: Տարեվերջին մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան Քրոս քաունթրիի մրցաշարքը, մասնակցութեամբ երկու դասակարգերու 75 մարզիկներու:

2002ին մասնաճիւղի մարզական խորհուրդի ատենապետն է Յարութ Գասապեան: Մասնաճիւղը կը շարունակէ կիրարկել պասքեթպոլ, վոլիպոլ, ֆուտպոլ եւ ֆլոր հաքիի, աթլետիզմ եւ մարտարուեստ: Երկսեռ մարզիկներու ընդհանուր թիւ՝ 398: Պասքեթպոլի տղոց խումբը կը մասնակցի Շիքակոյի եւ Մոնթրէալի միջմասնաճիւղային խաղերուն, աղջկանց կազմը Մոնթրէալի միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցա-

շարքին: 27 Հոկտեմբերին, Ֆուտպոլի Բ. խումբը, Օնթարիոյի արեւմտեան բաժնի ախոյեանական մրցաշարքի վերջին մրցումին յաղթանակով իրաւունք կը ստանայ Ա. դասակարգէն բարձրանալու նահանգի բարձրագոյն դասակարգին: Այս մրցաշարքի իր յաղթանակներու կողքին խումբէն Տիգրան Թորոսեան եւ Սեւակ Չաքմաքճեան կը հանդիսանան նահանգի լաւագոյն բերդապահները, իսկ Նորիկ Գրիգորեան կը տիրանայ մրցաշարքի լաւագոյն մարզիկի տիտղոսին:

Սկաուտական գործունէութիւն

1991 տարեշրջանի Սկաուտական Խորհուրդի անդամներ կը նշանակուին.-
Ատենապետ՝ Բեննա Թարզի



Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի քրոս քաունթրիի աղջկանց խումբը

Ատենադպիր՝ Աբո Նգրուրեան
Գանձապահ՝ Սոնա Ֆարրա
Գոյքապահ՝ Արմէն Սերոբեան
Խորհրդականներ՝ Մարտիրոս Բախտիկեան,
Ալեքսան Մարտիրոսեան եւ Մելքոն Քարկոցեան:

Սկսած 1992 թվականից իրենց ղեկավարած ընկերային ձեռնարկներին են՝ Զատկուան հակաթախաղը, հայրերու օրուան դաշտագնացութիւնը եւ Սբ. Ծնունդի Աւետման երգեցողութիւնը: Խորհուրդը կը կազմակերպէ նաեւ ծնողական ժողովներ, խմբապետական դասընթացքներ եւ դասախօսութիւններ: 15էն 17 Մարտին Bonita Gleyn բանակավայրին մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղին ձմեռնային բանակումը - [Ծ/115.15]:

1992ին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան կողմէ, մասնաճիւղի խմբապետուհի Անի Հոթոյեան սկսած անցնել կեդրոնական յանձնախումբի անդամ կը նշանակուի:

1993 տարեշրջանի Սկսած 1992 թվականից իրեն մաս կը կազմեն՝ Ալեքսան Մարտիրոսեան՝ ատենապետ, Գառնիկ Նազարէթեան՝ փոխ ատենապետ, Ովսաննա Փիլաւճեան՝ ատենադպիր, Վրէժուհի Տէրվիչեան՝ գանձապահ, Տէնի Մարկոսեան՝ հաշուապահ, Մարտիրոս Բախտիկեան՝ նուագախումբի պատասխանատու, Սօսի Թաշճեան՝ խմբապետուհի, Ճոնի Չերքէզեան՝ խմբապետ, Լիւսի Պալեան՝ վարչութեան ներկայացուցիչ:

Կազմակերպական եւ դաստիարակչական զանազան ձեռնարկներու կողքին մասնաճիւղի սկսած անցնել կեդրոնական զանազան բաժինները կը կազմակերպեն 10 բանակումներ:

1994ին նոր անդամներ կը ստանան Սկսած 1992 թվականից իրեն պաշտօնները. Արմիկ Հացագործեան՝ ատենապետ, Թամիճա Սարխանեան՝ փոխ ատենապետուհի, Սիլվա Ղազարեան՝

ատենադպրուհի, Գառնիկ Նազարէթեան՝ գանձապահ, Սիլվա Փայլեան՝ հաշուապահ, Գէորգ Յակոբեան եւ Շուշան Յակոբեան՝ խորհրդականներ: Վարչութեան ներկայացուցիչն է սկիզբը Լիւսի Պալեան, ապա Բեննա Թարգի: Մասնաճիւղին 35 հոգինոց պատուիրակութիւն մը կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական Ծրագրի ընդհանուր բանակումին՝ Հայաստանի մէջ, խմբապետութեամբ Ճոնի Չերքէզեանի: Տարիներու ընթացքին ձեռք բերուած փորձառութիւններով սկսած անցնել կեդրոնական բաժնի թեքնիք եւ կազմակերպչական մակարդակը զգալի յառաջդիմութիւն կ'արձանագրէ:

3 Յունիս 1995ին Ալիսթընի մէջ տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան բանակումը - [Ծ/161.27]:

1998ին ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ծրագրի ընդհանուր Բանակումին մասնաճիւղի սկսած անցնել կեդրոնական կազմը կը մասնակցի 46 հոգիէ բաղկացած պատուիրակութեամբ:

2001ին Սկսած 1992 թվականից իրեն ատենապետութիւնը կը վարէ Արի Քէսքէնեան, սկսած խմբապետ՝ Ժանօ Սարխանեան: Հաւաքոյթները տեղի կ'ունենան Կիրակի օրերը, ժամը 11էն 13, Հայ կեդրոնին մէջ:

Հրապարակային եւ այլ գործունէութիւններ

Թորոնթոյի Հ.Մ.Ը.Մ.ի վարչութիւնը իրեն օժանդակ յանձնախումբերու կարգին ունեցած է ընկերային յանձնախումբեր, որոնց զանազան կազմերուն մաս կազմած են, ի միջի այլոց, Վրէժ Աւագեան, Սիլվա Յովհաննէսեան, Մաննիկ Խոտավերտեան, Յակոբ Պաղտատեան, Մուրատ Հալլաճեան, Ժիլպէր Թարգի, Լուսին Պալեան, Ճորճիկ Խոտավերտեան, Մովսէս Աշրգեան, Արմիկ Հացագործեան, Յակոբ Ղազարեան, Պարգեւ Պասմաճեան եւ Վահէ Հարմանտեան:

24 Փետրուար 1991ին մասնաճիւղը կը նշէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 73րդ տարեդարձը:

[Ծ/109.12]: 2 Փետրուար 1992ին մասնաճիւղը կը կազմակերպէ «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան տօնակատարութիւն Հայ Կեդրոնի սրահին մէջ- [Ծ/127.10]: 28 Մարտ 1993ին կը նշուի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը-[Ծ/137.29] :

1994ին մասնաճիւղը յատուկ ձեռնարկով կը նշէ իր հիմնադրութեան 25ամեակը: Ընկերային կեանքը զարգացնելու նպատակով, Հայ Կեդրոնի իր սրահին մէջ, կը կազմակերպէ նարտի եւ պլոթի մրցաշարքեր, խրախճանքի երեկոներ, որոնք նաեւ նիւթական եկամուտի աղբիւրներ են:

1998ին Հ.Մ.Ը.Մ.ի 80ամեակին նուիրուած ժողովրդային հանդիսութեան ընթացքին կը կարգադրուի Գանատայի վարչապետ Ժան Գրէթիէնի

շնորհաւորական նամակը, ուղղուած մասնաճիւղի վարչութեան-[Ծ/199.3]:

14 Նոյեմբեր 1999ին, Հայ Կեդրոնի սրահին մէջ ժողովրդային պաշտօնական հանդիսութեամբ կը նշուի մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակը -[Ծ/111.6]:

4 Փետրուար 2001ին, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 83ամեակը-[Ծ/226.34], 21 Նոյեմբերին՝ իր հիմնադրութեան 35 ամեակը -[Ծ/270.20] եւ [Ծ/271.11]:

ՔԵՄՊՐԻՃ

1991ին Քէմպրիճի մասնաճիւղի նախորդ տարուան տկար գործունէութիւնը զգալիօրէն



Հ.Մ.Ը.Մ.ի Քէմպրիճի մասնաճիւղի 2007 տարուան վարչական կազմը

կը բարելավուի: Նորընտիր վարչական կազմը իր անդրանիկ նիստին ընթացքին իր դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Հայկազ Թիթիգեան

Գանձապահ՝ Մհեր Պետիրեան

Գոյքապահ՝ Արամ Գասամանեան

Մարզականի պատասխանատու՝ Վաչէ Պաղտոյեան:

Մասնաճիւղը յաջողութեամբ կ'իրականացնէ Շրջանային վարչութեան նախաձեռնած կրտսերներու միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքը, կը մասնակցի Թորոնթոյի միջմասնաճիւղային պասքեթպոլի մրցաշարքին, Համիլթընի վոլիպոլի մրցաշարքին եւ շրջանի ձմեռնային խաղերուն: Աւելի քան 200 հանդիսականներու ներկայութեամբ կը կազմակերպէ «Հ.Մ.Ը.Մ.ի ՕՐուան հանդիսութիւն, արժանանալով քաջալեր հայութեան գնահատանքին: Վարչութեան տարեշրջանի գործառնութեան պատկերն է. մուտք՝ 11285, ելք՝ 10443 գանատական տոլար:

1992ին, Քէմպրիճի մասնաճիւղը, գործակցութեամբ Համիլթընի Հ.Մ.Ը.Մ.ին, կ'իրականացնէ Գանատայի 18րդ միջմասնաճիւղային ձմեռնային խաղերուն կազմակերպումը:

1994 տարուան վարչական կազմին կ'անդամակցին.-

Ատենապետ՝ Սամսոն Քահքէճեան

Ատենադպիր՝ Ժոզէֆ Ինճէճիկեան

Գանձապահ՝ Խորէն Մուրատեան

Գոյքապահ՝ Պողոս Մուրատեան

Մարզական վարդան Թիթիգեան:

Տարեշրջանի անդամներու ընդհանուր թիւն է 50: Վարչութիւնը Հայ Կեդրոնի ծախսերուն կը մասնակցի տարեկան 1000 տոլարի յատկացումով: Մասնաճիւղը կը կազմակերպէ փինկփոնկի միջանդամական մրցաշարք, երեք մասնաճիւղերու միջեւ Ֆուլթոնի մրցաշարք, կը մասնակցի Գանատայի ամառնային եւ ձմեռնա-

յին խաղերուն: Կը կազմակերպէ Մայիս 28ի առթիւ դրօշակի օրհնութիւն, պարահանդէս եւ միջանդամական նարտի մրցաշարք: Տարեկան նիւթական գործառնութիւն. մուտք՝ 23610, ելք՝ 19900 գանատական տոլար:

27 եւ 28 Մայիս 1995ին մասնաճիւղը կը կազմակերպէ սոֆթպոլի եւ Ֆլորհաքի միջմասնաճիւղային մրցաշարքեր, նախաձեռնութեամբ Շրջ. վարչութեան եւ մասնակցութեամբ Մոնթրէալի, Թորոնթոյի, Համիլթընի եւ իր խումբերուն:

Մասնաճիւղի 1997 տարուան վարչական կազմը կը յաջողի զօրացնել մարզական խումբերուն մակարդակը եւ մասնաճիւղը մէկ աթլէթով կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ խաղերուն:

2003 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան անդամներն են.-

Ատենապետ՝ Վարանդ Սարմազեան

Փոխ ատենապետ՝ Հրանդ Մարտիրոսեան

Քարտուղար՝ Սիլվա Կակոսեան

Գանձապահ՝ Շանթ Սարմազեան

Խորհրդական՝ Պողոս Փոստաճեան:

ՍԵՆՁ ԳԱԹՐԻՆՁ

23 Փետրուար 1991ին, Սէնթ Գաթրինգի մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային վոլիպոլի եւ փինկփոնկի մրցաշարք, մասնակցութեամբ Թորոնթոյի, Քէմպրիճի եւ Համիլթընի մասնաճիւղերու խումբերուն: Կը մասնակցի միջմասնաճիւղային ամառնային խաղերուն, Թորոնթոյի մէջ: Սակայն մէջընդմէջ երեւան եկող այս յաջողութիւնները մնայուն բնոյթ չեն ստանար:

17 Մարտ 1991ին մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ բաղկացած հետեւեալ անդամներէն.-

Ատենապետ՝ Սարգիս Պալապանեան
Ատենադպիր՝ Լէզլի Էքմէքճեան
Գանձապահ՝ Սիլվա Քէշիշեան
Գոյքապահ՝ Յարութ Քէշիշեան
Մարզականի պատասխանատու՝ Քրիս Բարոյեան:

Տարեշրջանի ընթացքին Տիգրանուհի Կէօքճեան կը փոխարինէ Լէզլի Էքմէքճեանը: Մասնաճիւղը կը գործէ նոր աւարտած Հայ Կեդրոնէն ներս: Անդամներու թիւն է 57: Այս կազմի ճիգերով մասնաճիւղը կը յաջողի նիւթապէս վերագտնել ինքզինք, յարգել Շրջանային Վարչութեան հանդէպ իր պարտաւորութիւնները եւ 337 գանատական տոլար փոխանցել նոր ընտրելի վարչութեան:

1992ին վարչական կազմին կ'անդամակցին Սարգիս Պալապանեան, Սեպուհ Թոքաճեան, Մ.

Գէորգեան եւ Վ. Էքմէքճեան:
Անցեալին բաղդատմամբ, մասնաճիւղին գործունէութիւնը կը մնայ տկար, հակառակ Շրջանային Վարչութեան հետապնդումներուն: Անդամներու ընդհանուր թիւը կը նուազի 36ի: Մասնաճիւղը կը մասնակցի Շրջանի ձմեռնային խաղերուն, Թորոնթոյի մէջ:

7 Մարտ 1993ի Բ. նիստով, Սէնթ Գաթրինգի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ մասնաճիւղի նոր վարչական կազմը՝ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Սեպուհ Թոքաճեան
Ատենադպիր՝ Անի Խաչերեան
Գանձապահ՝ Սիլվա Քէշիշեան
Մարզականի պատասխանատու՝ Սարգիս Քէշիշեան



Հ.Մ.Ը.Մ.ի Սէնթ Գաթրինգի կրտսերներու ֆութպոլի խումբը

Գոյքապահ՝ Յովսէփ Գասարճեան:

Մասնաճիւղը կը գործէ ֆուլթայլի, վոլիպոլի, աթլետիքի եւ քարաթէի ճիւղերով: Զգալի է սկաուտ մասնագէտի բացակայութիւնը, որով սկաուտական ճիւղը դադրած է գործելէ:

Մասնաճիւղի տարեկան պարահանդէսը կը փոխարինէ Հ.Մ.Ը.Մ.ի 75ամեակի հանդիսութիւնը: Սէնթ Գաթրինգի մասնաճիւղէն ներկայացուցիչներ կը մասնակցին Շրջանային վարչութեան կազմակերպած զոյգ սեմինարներուն: Մասնաճիւղի նիւթական գործառնութեան պատկերն է. մուտք՝ 4370 գանատական տոլար, ելք՝ 4222 գանատական տոլար:

1997ին եւ 1998ին հակառակ կազմակերպչական դժուարութիւններուն, Սէնթ Գաթրինգի մասնաճիւղի երիտասարդ աթլետները կը յաջո-

ղին իրենց մասնակցութիւնը բերել Շրջանի 28րդ եւ 29րդ ամառնային խաղերուն արձանագրելով քաջակերական արդիւնքներ:

2003 տարուան մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին.-

Ատենապետ՝ Յովսէփ Գասարճեան

Ատենադպիր՝ Թամար Խաչերեան

Գանձապահ՝ Անի Օհանեան

Մարզականի պատասխանատու՝ Երուանդ Էքմէքճեան

Խորհրդական՝ Սարգիս Քէչիչեան:

Շրջանային Կազմակերպչական Գործունէութիւն

1էն 3 Մարտ 1991ին, Թորոնթոյի Հայ Կեդրո-



Գանատայի 27րդ Շրջանային ներկայացուցչական ժողովի մասնակիցներ - Համիլթոն, 20 Մարտ 2000

նի սրահին մէջ գումարուեցաւ Գանատայի Շրջանային 20րդ Ներկայացուցչական ժողովը: Շրջանի հինգ մասնաճիւղերը մասնակցեցան սոյն ժողովին՝ իրենց 32 լիազօր ներկայացուցիչներով: Ժողովը վարեցին նախագահներ Արմէն Կէտիկեան եւ Գէորգ Մանկէլեան եւ քարտուղարներ՝ Մոսիկ Թոփուզեան եւ Լայիկ Նգրուրեան:

Շրջանաւարտ վարչութեան տեղեկագրի ընթերցումէն եւ գործունէութեան քննութենէն ետք, ընտրուեցան աշխատանքային զոյգ յանձնախումբեր՝ կանոնադրային եւ մարզական, որոնց հաւաքոյթներու արդիւնքներով ճշդուեցաւ յառաջիկայ տարեշրջանի գործունէութեան նախագիծը յատկապէս Շրջանային վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուող միջմասնաճիւղային խաղերու յայտագիրները, երկու տարիներ առաջ ճշդելով յաջորդող ամառնային եւ ձմեռնային խաղերու յայտագիրները եւ խաղերը կոչել «Գանատայի Շրջանային Խաղեր», հրաւիրելով նաեւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանէն կարգ մը մասնաճիւղեր մասնակցելու վերոյիշեալ խաղերուն:

Ժողովի հաշուեքննիչ եւ արխիւային յանձնախումբերու զեկուցումներէն ետք եւ ժողովականներու քննարկումներէն եզրակացնելով, բանաձեւի յանձնախումբի առաջարկով Շրջանային վարչութեան գործունէութիւնը «գնահատելի» նկատուեցաւ:

Ներկայացուցչական ժողովի աւարտին 1991 տարուան Գանատայի Շրջանային վարչութեան անդամ կ'ընտրուին.-

- Ատենապետ՝ Գէորգ Մանկէլեան
- Ատենադպիր՝ Արմէն Կէտիկեան
- Գանձապահ եւ ատենադպիր՝ Սերոբ Կիրակոսեան
- Քարտուղար՝ Աբօ Աբրահամեան
- Խորհրդական՝ Վրէժ Մելքոնեան:

Նորընտիր Շրջանային վարչութիւնը իր կողքին կը նշանակէ սկաուտական, դաստիարակչական, կանոնադրային եւ մամուլի շրջանային յանձնախումբեր: 29 Մարտէն 4 Ապրիլ 1991ին Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Լեւոն Պէնկեան կը մասնակցի Միութեան 5րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին:

Շրջանային վարչութեան նախաձեռնութեամբ 3 եւ 4 Օգոստոսին կազմակերպուեցան Գանատայի 23րդ ամառնային խաղերը, 20էն 22 Սեպտեմբերին սկաուտական խմբապետական սեմինար, 2 եւ 3 Նոյեմբերին կրտսերներու մարզախաղեր, 29 Նոյեմբերին միջմասնաճիւղային ձմեռնային խաղեր:

Գանատայի 21րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 6, 7 եւ 8 Մարտ 1992ին Մոնթրէալի Հայ Կեդրոնի սրահին մէջ, ներկայութեամբ 33 լիազօր ներկայացուցիչներու:

Ժողովի դիւանի անդամներ ընտրուեցան նախագահներ՝ Լեւոն Պէնկեան եւ Յակոբ Արթինեան, քարտուղարներ՝ Մոսիկ Թոփուզեան եւ Սօսի Թաշճեան: Հաշուեքննիչ, բանաձեւ, արխիւային եւ քուէախոյզ յանձնախումբերու ընտրութիւններէն ետք յաջորդական չորս նիստերու ընթացքին ժողովը քննեց շրջանաւարտ Շրջանային վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրը: Ապա ծրագրեց յառաջիկայ տարուան գործունէութեան ուղեգիծն ու քուէարկեց նախահաշիւը: Բանաձեւի յանձնախումբի առաջարկով շրջանաւարտ վարչութեան միամեայ գործունէութիւնը «Գնահատելի» նկատուեցաւ:

Ժողովի վերջին օրակարգով նախորդ տարեշրջանի Շրջանային վարչութեան կազմը նոյնութեամբ վերընտրուեցաւ:

Նորընտիր Շրջանային վարչութեան գլխաւոր իրականացումներէն եղան՝ միջմասնաճիւղային անդրանիկ սկաուտական բանակումի եւ Հ.Մ.Ը.Մ.ի համաամերիկեան առաջին մարզա-



Գանատայի 30րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի խմբանկար

խաղերու կազմակերպումը: Առաջին անգամ ըլլալով իրագործուող այս զոյգ նախաձեռնութիւնները կատարեալ յաջողութեամբ պսակուեցան:

Այս եւ ընթացիկ նախաձեռնութիւններու (21րդ ամառնային միջմասնաճիւղային խաղեր) իրագործման համար Շրջանային Վարչութիւնը նշանակեց հետեւեալ օժանդակ յանձնախումբերը՝ սկաուտական, դաստիարակչական, կանոնադրային, մամուլի եւ Հ.Մ.Ը.Մ.ի 75ամեակի տօնակատարութեան: Յունիս 27էն Յուլիս 5, Քինկսթըն քաղաքի Rideau Aeres բանակատեղիին մէջ Շրջանային Վարչութիւնը կը նախաձեռնէ Գանատայի առաջին ընդհանուր բանակումին: Մոնթրէալի եւ Թորոնթոյի մասնաճիւղէն 173 սկաուտներ, երէցներ, արենոյշներ եւ պարմանուհիներ կը մասնակցին այս բանակումին,

ղեկավարութեամբ ձոնի Չէրքէզեանի եւ Թորոս Հալլաճեանի:

Տարեշրջանի նիւթական գործառնութեան պատկերն է՝ մուտք՝ 23.623 գանատական տոլար, ելք՝ 20.825 գանատական տոլար:

Տարեվերջին, Շրջանային Ներկայացուցչական Ժողովը «Գնահատելի» կը նկատէ Շրջանային Վարչութեան վերոյիշեալ գործունէութիւնը:

*

* *

22էն 24 Յունուար 1993ին, Համիլթընի մասնաճիւղի սրահին մէջ տեղի ունեցաւ Գանատայի 22րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը: Յետ 1992 տարեշրջանի Շրջանային վարչու-

թեան նիւթաբարոյական տեղեկագրի ընթերցման եւ քննարկումին, ժողովի վերջին օրակարգով, Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ 1993 տարեշրջանի Շրջանային Վարչութեան անդամ ընտրուեցան.-

Ատենապետ՝ Գէորգ Մանկէլեան
 Ատենադպիր՝ Լեւոն Պէնկեան
 Գանձապահ՝ Սերոբ Կիրակոսեան
 Քարտուղար՝ Մոսիկ Թովուզեան
 Խորհրդականներ՝ Վրէժ Մելքոնեան, Յակոբ Արթինեան եւ Վահրամ Փիրջանեան:

Շրջանային վարչութեան 1993 տարուան գործունէութեան գլխաւոր բաժինները հանդիսացան համաՀ.Մ.Ը.Մ.ական ֆուլթայոլի եւ ասիւթիզմի Բ. խաղերու կազմակերպումը: Այս նպատակով Շրջանային Վարչութիւնը նշանակեց զոյգ յանձնախումբեր, առաջինը Մոնթրէալէն՝ մասնակցութեամբ Գրիգոր Ապրաքեանի, Րաֆֆի Ֆրունճեանի, Նիկողոս Մարունեանի, Լեւոն Աֆէեանի, Յարութ Զիլինկիրեանի, Վահան Մանուկեանի, Թալին Սերոբեանի, Վարուժան Բու-

չիկեանի, Վահէ Փանոսեանի եւ Լեւոն Պէնկեանի, երկրորդ յանձնախումբը նշանակուեցաւ Թորոնթոյէն, մասնակցութեամբ Վահէ Մարտիրոսեանի, Արմէն Կէտիկեանի, Արմէն Գասապեանի, Յարութ Գասապեանի, Բեննա Թարգլի, Զարեհ Տէրվիչեանի, Սօսի Թաշճեանի, Նատիա Թաթիկեանի, Արմէն Սերոբեանի, Վարդ Զաքարեանի, Յակոբ Մնայեանի, Վազգէն Թերզեանի, Յովսէփ Արապեանի, Լիզա Տէմիրճեանի, Խաչիկ Գանձապետեանի, Պարգեւ Պասմաճեանի եւ Վահրամ Փիրջանեանի:

Այս առթիւ յատուկ յանձնախումբ մը Միութեան 75ամեակին նուիրուած « Հորիզոն» շաբաթաթերթի բացառիկ մը կը հրատարակէ: Իսկ համաՀ.Մ.Ը.Մ.ական խաղերու բացման եւ փակման հանդիսութիւններուն կը միացուին 75ամեակի տօնակատարութեան յատուկ յայտագրի բաժինները:

Տարեշրջանի նիւթական պատկերն է. մուտք՝ 46.122 գանատական տոլար, ելք՝ 38.806 գանա-



Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի 29րդ Երջանային Ներկայացուցչական Ժողովի խմբանկար

տական տոլար: Շրջանի իրականացումով համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղերու ելեմոստքի պատկերն է. մոստքեր՝ 224.000 գանատական տոլար, ելքեր՝ 161.000 գանատական տոլար:

*
* *

Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի 23րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ Մոնթրէալի մէջ, 1994ի Յունուար 20-28 շաբաթավերջի ընթացքին: Ժողովի ղեկանին մաս կազմեցին նախագահներ՝ Գրիգոր Գուլյումճեան եւ Արմէն Կէտիկեան, քարտուղարներ՝ Սիւզի Գալթակեան եւ Աբօ Ահարոնեան:

Ժողովը 1994 տարուան Շրջանային վարչութեան անդամներ ընտրեց.-

- Ատենապետ՝ Լեւոն Պէնկեան
- Ատենադպիր՝ Մոսիկ Թոփուզեան
- Գանձապահ՝ Ռոպէր Թուխմանեան
- Քարտուղար՝ Աբօ Ահարոնեան
- Խորհրդական՝ Արմէն Սերոբեան:

Այս կազմի ընթացիկ իրականացումներէն եղան ամառնային 25րդ միջմասնաճիւղային խաղերու կազմակերպումը, ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ե. Ընդհանուր Բանակումի մասնակցութիւն, վարչական եւ ղեկավար անդամներու տարեկան սեմինարի կազմակերպումը, ձմեռնային 20րդ միջմասնաճիւղային խաղերու կազմակերպում, Հ.Մ.Ը.Մ.ի համաամերիկեան Բ. մրցաշարքին նախաձեռնութիւնը եւ միջշրջանային խաղերու շրջուն բաժակներու դրութեան հաստատումը:

Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի 24րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ 24-26 Փետրուար 1995ին, Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ:

Ժողովին որոշումով, բացառաբար 1995 եւ 1996 զոյգ տարիներու պաշտօնավարութեան համար Շրջանային վարչութեան անդամ ընտրուեցան.-

- Ատենապետ՝ Լեւոն Պէնկեան
- Ատենադպիր՝ Մոսիկ Թոփուզեան
- Գանձապահ՝ Սեդրակ Պուրսալեան
- Հաշուապահ՝ Ռոպէր Թուխմանեան
- Քարտուղար՝ Տիգրան Մելքոնեան
- Խորհրդականներ՝ Արմէն Սերոբեան եւ Արա Պալէոզեան:

Այս կազմէն Միութեան Զ. Պատգամաւորական Ընդհ. ժողովին Շրջանային վարչութեան ներկայացուցիչն էր Լեւոն Պէնկեան, որուն կ'ընկերանային Գանատայի պատգամաւորներ Գէորգ Մանկէլեան, Գրիգոր Գուլյումճեան, Մոսիկ Թոփուզեան, Արմէն Կէտիկեան եւ Սիւզի Գալթակեան, իսկ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ Սեդրակ Պուրսալեան եւ Արա Պալէոզեան:

1995-96 երկամեայի ընթացքին Շրջանային վարչութիւնը իրագործեց հետեւեալ աշխատանքները.- միջվարչական ժողովներ 13 եւ 14 Ապրիլ 1996ին Համիլթոնի մէջ, ամառնային զոյգ խաղեր՝ առաջինը Մոնթրէալի մէջ, երկրորդը Թորոնթոյի մէջ, սոֆթպոլի եւ ֆլորհաքիի խաղեր 27 եւ 28 Մայիս 1995ին, Քէմպրիճի մէջ: Շրջանային վարչութիւնը կազմակերպեց Կեդրոնական վարչութեան նախաձեռնած համաՀ.Մ.Ը.Մ.ական պասքեթպոլի մրցաշարքին զոյգ հանգրուանները՝ Թորոնթոյի եւ Մոնթրէալի մէջ: Մարզիչներու եւ մարզական պատասխանատուներու զոյգ սեմինարներ՝ 1 Հոկտեմբեր 1995ին եւ 12 Նոյեմբեր 1995ին: Սկաուտական բաժինին համար Շրջանային վարչութիւնը նախաձեռնեց միջմասնաճիւղային բանակումի կայացման, 29 Յունիսէն 7 Յուլիս 1996:

7-9 Մարտ 1997ին, Մոնթրէալի մէջ, Գանատայի 25րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը ընտրեց երկամեայ գործունէութեան համար Շրջանային վարչութեան կազմ՝ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Գէորգ Մանկէլեան
 Ատենադպիր՝ Մոսիկ Թոփուզեան
 Գանձապահ՝ Սեդրակ Պուրսալեան
 Խորհրդականներ՝ Արմէն Կէտիկեան եւ Վրէժ
 Մելքոնեան:

Շրջանային Վարչութիւնը իր ներկայացուցիչներով մասնակցեցաւ հետեւեալ ձեռնարկներուն. Կեդրոնական Վարչութեան կողմէ կազմակերպուած միջդիւանային խորհրդաժողով 26-28 Մարտ 1997ին Փարիզի մէջ, համաՀ.Մ.Ը.Մ.ական խաղեր 31 Յուլիսէն 10 Օգոստոս 1997 Ուաշինկթընի եւ Նիւ Ճրքի մէջ, միջմասնաճիւղային միացեալ սեմինար՝ վարչական, սկաուտական եւ մարզական բաժիններով՝ 20-21 Սեպտեմբեր 1997ին, համաՀ.Մ.Ը.Մ.ական Զ. Ընդհանուր Բանակում 12-22 Յուլիս 1998ին Աղաւնաձորի մէջ՝ Հայաստան:

Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուեցան հետեւեալ ձեռնարկները.- միջշրջանային ժողով՝ մասնակցութեամբ Հիւսիսային Ամերիկայի երեք շրջաններու ներկայացուցիչներուն, ամառնային խաղեր 1997ին եւ 1998ին, ձմեռնային խաղեր Թորոնթոյի մէջ՝ 1997ին, իսկ Մոնթրէալի մէջ՝ 1998ին:

Զոյգ տարեշրջանի Շրջանային Վարչութեան նիւթական գործառնութեան պատկերն է. մուտք՝ 182.735, ելք՝ 120.436 գանատական տոլար:

Շրջանի 19-21 Փետրուար 1999ին կայացած 26րդ Ներկայացուցչական ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Պարոյր Գազանձեան ատենադպիր՝ Հրաչ Տէր Սարգիսեան, գանձապահ՝ Բարգէն Կարապետեան, խորհրդական-



Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի միջմասնաճիւղային երկրորդ բանակումի մասնակիցներ- Յուլիս 1996

ներ՝ Վահան Չալրքեան եւ Վրէժ Մելքոնեան: 1999ի Ապրիլին Հրաչ Տէր Սարգիսեան Կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ, զինք կը փոխարինեն նախ Լեւոն Պէնկեան, ապա Յարութիւն Տէր Աշոտեան:

Աւանդական ամառնային եւ ձմեռնային խաղերու նախաձեռնութիւններու կողքին, Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ Մոնթրէալի եւ Թորոնթոյի հայ մարզական միութիւններու հաւաքականներուն մեծամասնութեան թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութիւնը, որոնք կը մասնակցին Համահայկական Ա. Խաղերուն Երեւանի մէջ: 22 Յունիս 1999ին կը կազմակերպէ յատուկ հանդիսութիւն՝ Մոնթրէալի վեթերան անդամներէն Կեդրոնական Վարչու-

թեան նախկին փոխ ատենապետ՝ Վարուժան Սերոբեանի Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» Շքանշանով պարգեւատրումին-[Ծ/205.10]: Կը յաջողի Հ.Մ.Ը.Մ. - Կամքի անդամակցութիւնը ապահովել Գանատայի ողիմպիական ընտանիքին:

2000 տարեշրջանի գործունէութեան համար, կազմի մասնակի վերակազմութեան հետեւանքով, աշխատանքներու բաժանումը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Պարոյր Գազանճեան, փոխ ատենապետ՝ Վրէժ Մելքոնեան, ատենադպիր՝ Յարութիւն Տէր Աշոտեան, գանձապահ՝ Տիրան Շահինեան, խորհրդական՝ Վահան Չալրքեան:

2001ին Մոսկի Թոփուզեանի ատենապետու-



2001-2002 տարեշրջանի Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի Ծրջանային վարչութեան կազմը. Բարգէն Կարապետեան, Տիրան Շահինեան, Հրաչ Տէր Սարգիսեան (Կեդրոնական Վարչութեան անդամ), Մոսկի Թոփուզեան, Վահան Չալրքեան, Զարեհ Տերվիշեան, Սեդրակ Պուրսալեան

Թեամբ, Շրջանային Վարչութեան կ'անդամակցին ատենադպիր՝ Տիրան Շահինեան, գանձապահ՝ Բաբկէն Կարապետեան, խորհրդականներ՝ Վահան Զալըքեան եւ Զարեհ Տէրվիչեան: Այս կազմի գլխաւոր իրականացումներէն պիտի ըլլային Գանատայի ներկայացուցչական խումբերուն մասնակցութիւնը Համա Հ.Մ.Ը.Մ.ական ճրգ խաղերուն՝ Լիբանան եւ Համահայկական Բ. խաղերուն՝ Երեւան: 2001ին Շրջանի անդամներու ընդհանուր թիւն է 1556 հետեւեալ ենթաբաժանումներով սկառուտներ՝ 727, մարզիկներ՝ 479, օժանդակներ՝ 350:

Մարտ 2002էն մինչեւ Ապրիլ 2005, Շրջանային Վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ Մոսիկ Թոփուզեանի, ատենադպիրներ՝ Տիրան Շահինեան եւ Լեւոն Նաճարեան, գանձապահ՝ Սեդրակ Պուրսալեան, խորհրդականներ՝ Զարեհ Տէրվիչեան, Վիգէն Խանամիրեան, Վրէժ Մելքոնեան եւ Արմէն Կէտիկեան:

2005-2006 երկամեակին Շրջանային Վարչութեան կ'անդամակցին Սեդրակ Պուրսալեան՝ ատենապետ, Լեւոն Նաճարեան, Բաբկէն Կարապետեան, Արմէն Կէտիկեան եւ Վահան Զալըքեան:

Շրջանային մարզական գործունէութիւն

Գանատայի Շրջանի մարզական աւանդական նախաձեռնութիւնները կը մնան միջմասնաճիւղային ամառնային եւ ձմեռնային խաղերը՝ տարեկան հերթականութեամբ:

Գանատայի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ 1992ին կը հաստատուի միջշրջանային մարզախաղերու շրջուն բաժակի դրութիւն, քաջալերելու համար մասնաճիւղերու

խումբերը մրցակցութեան ոգիով եւ մնայուն ձեւով վերապահելու յաղթանակի տիտղոսներ:

Այսպէս, աթլետիզմի մէջ շրջուն բաժակին կը տիրանան Մոնթրէալի մասնաճիւղը (1992 եւ 1993), Թորոնթոյի մասնաճիւղը (1994, 1995 եւ 1996) :

Պասքետպոլ՝ Մոնթրէալ (1993 եւ 1994) , Կլէնտէյլ (1996):

Ֆուտպոլ՝ Թորոնթո (1994), Մոնթրէալ (1995), Սան Ֆրանսիսքօ (1996):

Վոլիպոլ՝ Թորոնթո՝ (1994), Մոնթրէալ (1995), Լոս Անճելըս (1996):

Աղջկանց վոլիպոլ՝ Կլէնտէյլ (1996):

Հրատարակչական

1998ին, Միութեան ութսունամեակին առիթով Շրջանային Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ը տեղական պաշտօնական շրջանակներուն ծանօթացնելով կը յաջողի ապահովել, պետութեան կողմէ շնորհուած Citation For Citizenship Awardը, իբրեւ գնահատագիր գանատական քաղաքացիութեան օժանդակման համար Հ.Մ.Ը.Մ.ի տարած ճիգերուն:

2000ին, Շրջանային Վարչութիւնը կը յաջողի Հ.Մ.Ը.Մ.-կամքը արձանագրել Գանատայի ողիմպիական ընտանիքին անդամ, մարզական գետնի վրայ իր տարած յաջող գործունէութեան համար:

Իւրաքանչիւր տարի մասնաճիւղը կը հրատարակէ գեղատիպ պատի օրացոյց մը, ուր կը ներկայացուին տարեշրջանի սկառուտական եւ մարզական գործունէութեան նկարներ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄԵԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ



1. Մոնթրեալի Հ.Մ.Ը.Մ.-կամքի ֆութպոլի վեթերաններու խումբը:
 2. Հ.Մ.Ը.Մ.-կամքի ֆութպոլի աղջկանց խումբը: 3. Մոնթրեալի մասնաճիղի 2004 տարեշրջանի Սկսուտական Խորհուրդի կազմը: 4. Հ.Մ.Ը.Մ.-կամքի մարզական խորհուրդի անդամները: 5. Մոնթրեալի մասնաճիղի 2004 տարուան սկսուտ խմբապետական կազմը:
 6. Մոնթրեալի մասնաճիղի 2005 տարուան վարչական անդամներու խմբանկար

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

- ՖԻԼԱՏԵԼՖԻԱ
- ՏԻԹՐՈՅԻԹ
- ՊՈՍԹԸՆ
- ՈՒԱՇԻՆԿԹԸՆ
- ՆԻԻ ԵՈՐՔ
- ՓՐՈՎԻՏԸՆՍ
- ՇԻՔԱԿՕ
- ՆԻԻ ԾԸՐԶԻ
- ՆԻԻ ԵՈՐՔ - ՊԷՅՍԱՅՏ
- ՄԻԱՄԻ
- ԱԼՊԸՆԻ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու մասնաճիւղերը Միութեան արտասահմանի հնագոյն շրջաններու առաջիններէն եղած են երբ 1921էն սկսեալ Պոլիսէն մեկնած Հ.Մ.Ը.-Մ.ականներ, Նիւ Եորքի եւ շրջակայքի հայկական գաղութներուն մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր հիմնած են եւ գործած տարիներ շարունակ:

Ներկայիս Շրջանին մէջ կը գործեն 10 մասնաճիւղեր՝ հիմնադրութեան ժամանակագրական հետեւեալ կարգով.- Ֆիլատելֆիա, Տիթրոյիթ, Պոսթըն, Ուաշինկթըն, Նիւ Եորք, Փրովիտընս, Շիքակօ, Նիւ Ճըրզի, Միամի - հարաւային Ֆլորիտա եւ Ալպընի:

Շրջանը կը գործէ երկամեայ ժամանակաշրջանի համար ընտրուած Շրջանային վարչական կազմերու գլխաւորութեամբ:

ՖԻԼԱՏԵԼՖԻԱ

Մասնաճիւղը 1992ին կը հաշուէ 76 անդամներ, որոնցմէ 29ը սկաուտական շարքերէն:

1993ի Օգոստոսին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի միջմասնաճիւղային ընդհ. բանակումը:

20էն 24 Օգոստոս 1997ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 11րդ ընդհ. բանակումը, մասնակցութեամբ 68 սկաուտներու:

18 Ապրիլ 1998ին Ֆիլատելֆիոյ մէջ տեղի կ'ունենայ Շրջանի մասնաճիւղերու վարչութեանց դիւաններու ժողով, իսկ 2-5 Յուլիսին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 8րդ միջմասնաճիւղային խաղերը, մասնակցութեամբ 800 մարզիկներու:

21 Նոյեմբեր 1999ին Ֆիլատելֆիոյ մէջ կը կազմակերպուի միջմասնաճիւղային սկաուտական աստիճանաւորական սեմինար:

2001տարուան մասնաճիւղի վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Էլիզապէթ Տրամկոչեան: 17 եւ 18 Նոյեմբերին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանային սկաուտական սեմինար:

13-14 Ապրիլ 2002ին մասնաճիւղը կը հիւրըն-

կալէ միջմասնաճիւղային վարչական դիւաններու ժողովը:

23 եւ 24 Հոկտեմբեր 2004ին Ֆիլատելֆիոյ մէջ կը կայանայ Շրջանային սկաուտական վկայեալ կարգի սեմինար:

1-4 Յուլիս 2005ին Ֆիլատելֆիոյ մէջ կը կայանան Շրջանի 15րդ միջմասնաճիւղային խաղերը, մասնակցութեամբ շուրջ 700 մարզիկներու:

ՏԻԹՐՈՅԻԹ

1992ին Հ.Մ.Ը.Մ.ի Տիթրոյիթի մասնաճիւղը, մարզական եւ օժանդակ բաժիններով, կը հաշուէ 117 անդամներ: Յուլիսին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի միջմասնաճիւղային խաղերը, մասնակցութեամբ 400 մարզիկներու:

1994 տարին Մասնաճիւղի սկաուտական շարքերու վերակազմութեան տարին է: Այս գործը վարչութեան կողմէ կը վստահուի Սկաուտական Խորհուրդին, որուն մաս կը կազմեն ի միջի այլոց տոքթ. Սիմոն Փայասլեան՝ ատենապետ, Յակոբ Տէմիրճեան, Թամար Արսլանեան, Փօլ Մախուլեան, Սեպուհ Սարգիսեան եւ Լենա Թիւֆէնքճեան: Սկաուտական շարքերը կը վարեն խմբապետ Փօլ Մախուլեան եւ խմբապետուհի Ճէնի Ուլիկեան:

20-22 Մայիս 1994ին մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային պասքեթպոլի եւ վոլիպոլի մրցաշարքեր, մասնակցութեամբ Շիքակոյի, Թորոնթոյի եւ Մոնթրէալի մասնաճիւղերու կազմերուն:

14 Օգոստոսին սկաուտական կազմը կը կազմակերպէ երդման արարողութիւն - [Մ/152.30]:

1994ին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Ռոզիկ Գարճեան:

22 Յուլիս 1995ին եւ 18 Մայիս 1996ին Տիթրոյիթի մէջ կը գումարուին միջմասնաճիւղային Սկաուտական Խորհուրդներու խորհրդաժողովներ:

1999ին մասնաճիւղին պասքեթպոլի աղջկանց կազմը բացառիկ յաջողութիւններ կ'արձանագ-



Տիթրոյի մասնաճյուղի պասքեթպոլի աղջկանց խումբը: Թի 32 Մարիա Չիլեան անդամ է Ամերիկայի Միացեալ Նահանգներու կրտսերներու հաւաքականին: Զախէն առաջինը՝ մարզիչ Ալետիս Չիլեան

ըէ Տիթրոյի միջվարժարանային կրտսերներու մրցաշարքին: Այս կազմին յաջողութեան գլխաւոր կերտիչն է Հ.Մ.Ը.Մ.ական Մարիա Չիլեան, որ մաս կը կազմէ Միացեալ Նահանգներու պասքեթպոլի կրտսերներու ազգային հաւաքականին [Ծ/212.18]:

1 Մայիս 2004ին Տիթրոյի մասնաճիւղը կը հիւրընկալէ միջմասնաճիւղային Սկաուտական Խորհուրդներու եւ խմբապետական կազմերու խորհրդաժողովը:

ՊՈՍԹԸՆ

1990ին Պոսթընի մասնաճիւղը արդէն կը գործէ աւելի քան 15 տարիէ ի վեր: Մասնաճիւղը կը շարունակէ գործել մարզական եւ սկաուտա-

կան ճիւղերով: Կիրարկուող մարզաճիւղերն են Ֆութպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, փինկփոնկ եւ աթլետիզմ:

1993ին մասնաճիւղի ատենապետութիւնը կը վարէ Սարգիս Ուրֆալեան, կազմի մնացեալ անդամներն են՝ Րաֆֆի Տօնապետեան, Սեւակ Դաւիթեան, Սիւզի Մարտուպեան, Լիզա Սարգիսեան, Գագար Քէօչկէրեան եւ Ռազմիկ Փանոսեան: Այս կազմը կը կազմակերպէ մասնաճիւղի հիմնադրութեան 20ամեակի տօնակատարութիւնն — [Ծ/145.20]: Մարզաճիւղերուն վրայ կ'աւելնայ իգական սեռի ֆութպոլի խումբը:

1994ին Աբրահամ Մանճիկեան կը վարէ մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը: Սկաուտական կազմերը կը զարգացնեն իրենց գործունէութիւնը՝ բանակումներու եւ ընկերա-

յին հաւաքոյթներու կազմակերպութեամբ - [Ծ/156.33]:

1995ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Մարսէլ Գարեան: Կազմին կ'անդամակցին Պետիկ Տէր Վարդանեան, Եզեկէլ Քէօմիւրճեան, Շուշան Ստեփանեան, Հեղիկ Մարկոսեան, Սուրէն Էթիէմեզեան եւ Գասպար Քէօշկէրեան: Սկսած սկստական Խորհուրդի ատենապետն է Սարգիս Ստեփանեան:

1995ի Յունուարին մասնաճիւղը կը կազմակերպէ յատուկ մրցանակաբաշխութիւն, ի պատիւ նախորդ եղանակի մարզական յաջող արդիւնքներ ապահոված մարզիկներուն - [Ծ/157.33]: 1995ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Պետրոս Կարապետեանի յիշատակին նուիրուած Շրջանի միջմասնաճիւղային 5րդ խաղերուն մասնակից խումբերը:

20 եւ 21 Ապրիլ 1996ին Պոսթընի մէջ կը կայանայ Շրջանի մասնաճիւղերու վարչութեանց դիւաններու ժողովը, իսկ 1997ին՝ Շրջանի Սկսած սկստական Խորհուրդներու ժողովը:

1996էն 2002 յաջորդական վարչական կազմերու ատենապետութիւնը վարած են Ժան Աւետիսեան, Մարսէլ Գարեան, Աւօ Պետրոսեան, Պետիկ Տէր Վարդանեան եւ Արա Պարսումեան: Վարչական կազմերուն անդամակցած են Ռոտրիկ Սաֆարեան, Սուրէն Էթիէմեզեան, Եզեկէլ Քէօմիւրճեան, Լեւոն Խաչատուրեան, Սիւզի Էթիէմեզեան, Պէթի Տէր Վարդանեան, Յակոբ Սարգիսեան, Լիզա Սարգիսեան, Լինտա Մարսումպեան, Գազար Քէօշկէրեան, Յարութ Արապեան, Վարդան Սուքիասեան, Միսաք Ուրֆալեան, Սարգիս Աւագեան, Վարուժ Աղիարեան, Մանուկ Քէօշկէրեան, Շանթ Սարգիսեան, Անի Պարսումեան, Ռուբէն Բանեան, Յարութ Մաթոսեան, Վիգէն Պետոյեան, Րաֆֆի Տօնապետեան, Յովին Սարեան, Լեւոն Պլլքեան, Ալպէրթ Պարսումեան, Ժիրօ Իսկէնտէրեան, Խաչիկ Գանթարճեան եւ Արամ Գալսէրեան:

16 Մարտ 2001ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի մասնաճիւղերու վարչութեանց դիւաններու ժողովը, իսկ Յունիսին մասնաճիւղը կը

կազմակերպէ Շրջանի միջմասնաճիւղային խաղերը:

17 եւ 18 Մայիս 2002ին Պոսթընի մէջ կը կայանայ միջմասնաճիւղային Սկսած սկստական Խորհուրդներու ժողով եւ սկսած սկստական սեմինար, իսկ Օգոստոսին՝ միջմասնաճիւղային 16րդ ընդհանուր բանակումը:

2003 տարուան վարչութեան մաս կը կազմեն ատենապետ՝ Արա Պարսումեան, փոխ ատենապետ՝ Խաչիկ Գանթարճեան, քարտուղարուհի՝ Յասմիկ Մանուկեան, գանձապահ՝ Վարդան Սուքիասեան, սկսած սկստական՝ Լեւոն Կիւպէնլեան, դաստիարակչական՝ Վաննէս Յովհաննէսեան: Մասնաճիւղի Սկսած սկստական Խորհուրդի ատենապետն է Ռոպէրթ Քալանթարի: Մարզական խորհուրդը կը գործէ ատենապետութեամբ Լինտա Մարսումպեանի, ընկերայինը՝ ատենապետութեամբ Զարուկ Գանթարճեանի:

2003ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 30ամեակը:

20 եւ 21 Մարտ 2004ին մասնաճիւղը կը հիւրընկալէ միջմասնաճիւղային սկսած սկստական Ա. եւ Բ. կարգերու սեմինար, իսկ Յունիսին Պոսթընի մէջ կը կայանան 14րդ միջմասնաճիւղային խաղերը, մասնակցութեամբ 750 մարզիկներու:

1 Հոկտեմբեր 2005ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի գայլիկ-արծուիկ պատասխանատուներու դաստիարակչական սեմինարը:

Մասնաճիւղի մարզիկները մաս կազմած են Շրջանի հաւաքականներուն՝ մասնակցելու համար համա-Հ.Մ.Ը.Մական բոլոր խաղերուն: Նոյնպէս, սկսած սկստական շարքերէն պատուիրակութիւններ մասնակցած են համա-Հ.Մ.Ը.Մական բոլոր բանակումներուն:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ

1993 տարուան Ուաշինկթընի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Սարգիս Տուտազլեան: 27 Մարտին Հայ Կեդրոնի սրահին մէջ մասնաճիւղը կը կազմակերպէ ճաշ-



Արեւելեան Մ. Նահանգներու միջմասնաճիւղային 9րդ խաղերու վոլիպոլի մրցաշարքի ախոյեան Ուաշինկթընի մասնաճիւղի տղոց խումբը-1999

Կերոյթ-պարահանդէս, նշելու համար Միոլթեան հիմնադրութեան 75ամեակը: 2-5 Յուլիսին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի միջմասնաճիւղային խաղերը, մասնակցութեամբ 530 մարզիկներու:

6 Մայիս 1995ին Ուաշինկթընի մէջ կը կայանայ Շրջանի մասնաճիւղերու վարչութեանց դիւաններու ժողովը: 16-20 Օգոստոսին մասնաճիւղը կը հիւրընկալէ 9րդ Շրջանային ընդհ. բանակումը, մասնակցութեամբ 160 սկաուտներու:

30 Յուլիս 1997ին, Ուաշինկթընի մէջ տեղի կ'ունենան համաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ խաղերու բացման հանդիսութիւնը եւ Ա. հանգրուանի մրցումները:

1 Մայիս 1999ին եւ 1 Ապրիլ 2000ին մասնաճիւղը կը հիւրընկալէ միջշրջանային վարչական դիւաններու ժողովները: 2000ի Յուլիսին Ուաշինկթընի մէջ կը կայանան միջմասնաճիւղային 10րդ խաղերը:

2001 տարուան վարչութեան ատենապետն է Սարգիս Տոտազլեան:

22 Սեպտեմբեր 2001ին մասնաճիւղը պաշտօնական ճաշկերոյթ-պարահանդէսով կը տօնէ իր հիմնադրութեան 30ամեակը -[Ծ/233.29]:

31 Մայիս 2003ին մասնաճիւղը կը հիւրընկա-



Արեւելեան Մ. Նահանգներու միջմասնաճիւղային 9րդ խաղերու վոլիպոլի մրցաշարքի ախոյեան Ուաշինկթընի մասնաճիւղի աղջկանց խումբը -1999

լէ միջմասնաճիւղային սկաուտական խմբապետական համագումարը, իսկ 13-17 Օգոստոսին՝ միջմասնաճիւղային 17րդ ընդհ. բանակումը:

6-8 Փետրուար 2004ին Ուաշինկթընի մէջ կը կայանայ Շրջանի 27րդ ներկայացուցչական ժողովը, ուր կը մշակուին Շրջանի ներքին եւ սկաուտական կանոնագրութիւնները:

ՆԻՒ ԵՈՐՔ

1992ին Նիւ Եորքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 91:

1993ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Վարդգէս Վարդանեան: 23 Նոյեմբերին մասնաճիւղը կը նշէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը եւ մասնաճիւղի հիմնադրութեան 16ամեակը՝ ճաշկերոյթ-պարահանդէսով մը, որուն ընթացքին վարչութեան գնահատագիրներ կը ստանան վեթերան Հ.Մ.Ը.Մ.ականներ Կարպիս Տէր Մեսրոպեան եւ Կարօ Անասթագեան:

1994ի Յունուարին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 17րդ ներկայացուցչական ժողովը:

1997ին վարչական կազմին կ'անդամակցին Վահրամ Մինասեան, Արշակ Պոյաճեան, Կարօ



Արեւելեան Մ. Նահանգներու միջմասնաճիւղային Գրդ խաղերու պասքեթպոլի մրցաշարքի ախոյեան Նիւ Եորքի մասնաճիւղի կրտսերներու խումբը

Անասթազեան, Վահէ Անտոնեան, Վիգէն Շքուքեան եւ Զաւէն Վարդանեան:

1 Յունուար 1998ին Նիւ Եորքի մէջ կը գումարուի Արեւելեան Մ. Նահանգներու 21րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը:

2-5 Յուլիս 1999ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի Գրդ միջմասնաճիւղային խաղերը, նուիրւած՝ Կարպիս Տէր Մեսրոպեանի յիշատակին:

Մասնաճիւղի Ֆուլթպոլի կազմը կը մասնակցի տեղւոյն Ֆետերասիոնի մրցաշարքերուն:

30 Նոյեմբեր 2005ին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 2006ի գործունէութեան համար նոր վարչական կազմ, ատենապետ՝ Վարդգէս Վարդանեան, փոխ ատենապետ՝ Սարգիս Մկրեան, ատենադպիր՝ Վահրամ Շիշմանեան, գանձապահ՝ Կարօ Անասթազեան, սկաուտական՝ Վահրամ Մինասեան, մարզական՝ Միքայէլ Մկրեան, խորհրդական՝ Վիգէն Շքուքեան:

ՓՐՈՎԻՏԸՆՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Փրովիտընսի մասնաճիւղը կը կիրարկէ Ֆուլթպոլ, պասքեթպոլ, փինկփոնկ, վոլիպոլ եւ աթլետիք, միջմասնաճիւղային մրցա-

շարքերուն ապահովելով աթլետիք խաղերու մետալներու առիւծի բաժինը:

1991 տարեշրջանին, ատենապետութեամբ Գէորգ Վիշապեանի, վարչական կազմին անդամակցած են Գրիգոր Պետրոսեան, Անի Թորոսեան, Յակոբ Տոնոյեան, Յակոբ Ճեվահիրճեան, Մինաս Մինասեան եւ Մկրտիչ Սագոյեան: 1992ին ատենապետութիւնը կը վարէ Սարգիս Եփրեմեան, նախորդ կազմէն կը բացակային Գէորգ Վիշապեան, Յակոբ Ճեվահիրճեան եւ Մինաս Մինասեան, փոխարինուած Սօսի Վիշապեանով եւ Յարութ Թարաքցեանով:

1993էն 1996 յաջորդական վարչական կազմերուն ատենապետութիւնը վարած են, Սարգիս Մինասեան եւ Յակոբ Խաչատուրեան անդամակցութեամբ Գրիգոր Պետրոսեանի, Գարլա Թորոսեանի, Յակոբ Ճեվահիրճեանի, Յակոբ Տոնոյեանի, Մինաս Մինասեանի, Շաքէ Սարգիսեանի, Արսէն Աճոյեանի, Օննիկ Սողանեմէզեանի, Նորայր Փալանճեանի, Սարգիս Դարբինեանի, Թամար Յովակիմեանի, Յարութ Թարաքցեանի, Սեպուհ Եփրեմեանի եւ Քրիստափոր Գրիգորեանի: 1996ի Յունուարին Փրովիտընսի մէջ կը կայանայ Շրջանի 19րդ Ներկայացուցչական ժողովը:

1997ին մասնաճիւղը կը կազմակերպէ Շրջանի 7րդ միջմասնաճիւղային խաղերը, հիւրընկալելով 700 մարզիկներ եւ 200 սկաուտներ: Այս խաղերուն ընթացքին մասնաճիւղին խումբերը կը տիրանան «Խոյեան» եւ «Սթամպուլեան» Շրջուն Բաժակներուն:

1997էն 2001 տարիներուն վարչական կազմերուն կ'անդամակցին, ատենապետութեամբ Քրիստափոր Գրիգորեանի եւ Յարութ Թարաքցեանի, Թամար Յովակիմեան, Սեպուհ Եփրեմեան, Սարգիս Դարբինեան, Համազասպ Ռչտունի, Մկրտիչ Սագոյեան, Լեւոն Աթթարեան, Վիգէն Զուխատարեան, Թալին Տիարպեան, Տիգրանուհի Մինասեան, Անահիտ Աթթարեան, Արամ Սարգիսեան եւ Սեդիկ Աթթարեան:

Հիմնադրութեան թուականէն սկսեալ մաս-

նաճիւղի սկսողական խումբերը մասնակցած են արշաւներու եւ բանակումներու: Սկսողական Խորհուրդը պարբերաբար կազմակերպած է ծնողական հաւաքոյթներ, պտոյտներ եւ ընկերային հաւաքոյթներ: Աստիճանաւորական կազմերը մասնակցած են Շրջանային Սկսողական Խորհուրդի սեմինարներուն եւ բանակումներուն: Սկսողական շարքերէն ներկայացուցիչներ մասնակցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 3րդ, 4րդ, 5րդ, 6րդ եւ 7րդ ընդհանուր բանակումներուն:

21 Մայիս 2000ին մասնաճիւղը կը կազմակերպէ սկսողական երդման արարողութիւն եւ աստիճաններու տուչութիւն-[Ծ/217.35]:

13 Հոկտեմբեր 2001ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 20ամեակը, հովանաւորութեամբ Արեւելեան Միացեալ Նահանգներու թեմի առաջնորդ Օշական Արք. Չոլոյեանի, ներկայութեամբ շրջանի ազգային եւ պետական աւագանիի ներկայացուցիչներու եւ քաղաքապետ Վինսընթ Սիանսիի-[Ծ/233.33]:

2002 եւ 2003 տարեշրջաններուն վարչութեան ատենապետն է Սարգիս Մինասեան: Վարչական կազմերուն կ'անդամակցին Մարալ Ռշտունի, Անահիտ Աթթարեան, Յարութ Թարաքեան, Իշխան Դաւիթեան, Քրիստ Գրիգորեան, Պետրոս Քէչիչեան եւ Մկրտիչ Սագոյեան:

Ազգային գետնի վրայ մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերած է Ապրիլ 24ի նշումներուն, քայլարշաւներուն եւ ծաղկեպսակ գետեղած է Եղեռնի յուշարձանին:

Վարչութիւնները կազմակերպած են ճաշկերոյթ-պարահանդէսներ, դաշտահանդէսներ, Սբ. Ծննդեան, Միջինքի եւ Սբ. Զատիկուան ընթրիքներ:

Մասնաճիւղի գործունէութեան մասին արձագանգած են «Հայրենիք», «Արմինիլը Ուիքլի» եւ «Մարզիկ» թերթերը:

ՇԻՔԱԿՕ

4-9 Յուլիս 1996ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 6րդ միջմասնաճիւղային խաղերը:

2002 տարուան վարչական կազմին կ'անդամակցին.-

Ատենապետ՝ Վարուժան Ճինտոյեան

Ատենադպիր՝ Գրիգոր Գասարճեան

Գանձապահ՝ Լեւոն Սահակեան

Խորհրդականներ՝ Յակոբ Խոլամեան եւ Սիւզի Պրոճեան:

Վարչութեան օժանդակ յանձնախումբերը կը վարեն, աթլետիզմ՝ Ճէնի Թորեան, Սկսողական Խորհուրդ՝ Մանուշ Դանիէլ, միջմասնաճիւղային խաղեր՝ Սեւոն Թորոսեան:

4-7 Յուլիս 2002ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 12րդ միջմասնաճիւղային խաղերը:



Ուաշինգթոնի մասնաճիւղի վոլիպոլի տղոց խումբը

Սկսողական շաբաթական հաւաքոյթները տեղի կ'ունենան Ամենայն Սրբոց եկեղեցոյ Խոլտավերտեան սրահին մէջ: Սկսողական Խորհուրդը եւ մարզական յանձնախումբը ամսական հաւաքոյթներ կը կազմակերպեն ակումբէն ներս, ընկերային ջերմ միջնորոտ ստեղծելով անդամներու եւ համակիրներու միջեւ:

ՆԻՒ ԵՐՐԶԻ

1992ին Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Ճըրզիի մասնաճիւղը կը ստանձնէ Շրջանի 6րդ ընդհանուր բանակումի կազմակերպումը, 27-30 Օգոստոսին, Նիւ Ճըրզիի մէջ:

17 Ապրիլ 1993ին մասնաճիւղը կը հիւրըկալէ Շրջանի վարչական կազմերու դիւաններու ժողովը:



Նիւ Ճըրզիի Հ.Մ.Ը.Մ.ի վոլիպոլի աղջկանց խումբը – 1999ին

1-4 Յուլիս 1994ին Նիւ Ճըրզիի մէջ կը կայանան միջմասնաճիւղային խաղերը, նուիրուած Յովհաննէս Սթամպուլեանի յիշատակին:

19-25 Օգոստոսին մասնաճիւղը կը հիւրըկալէ Շրջանի 10րդ միջմասնաճիւղային ընդհ. բանակումը:

1998ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Ջարեհ Յարութիւնեան: 26 Սեպտեմբերին Նիւ Ճըրզիի մէջ կը տօնակատարուի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակը եւ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանի կազմութեան 20ամեակը, պաշտօնական ճաշկերոյթ-պարահանդէսով, ներկայութեամբ 700 մասնակիցներու:

2000 տարուան վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Ջարեհ Յարութիւնեան: 2000ի ընթացքին մասնաճիւղը կը հիւրըկալէ Շրջանի Սկաուտական Խորհուրդներու խորհրդակցութիւնը,

Շրջանի 14րդ ընդհ. բանակումը, Ա. եւ Բ. կարգի սկաուտական քննութիւններ եւ սեմինարը, ինչպէս նաեւ կը մասնակցի Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի Նիւ Ճըրզի այցելութեան հանդիսութեանց: Դեկտեմբերին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան 25ամեակը - [Մ/224.30]:

2001ին Նիւ Ճըրզիի մէջ կը կայանայ Շրջանի 15րդ տարեկան ընդհ. բանակումը:

2003 տարուան վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վազգէն Գաբրիէլեան
 Փոխ ատենապետ՝ Վիգէն Մազպանեան
 Քարտուղար՝ Աւետիս Գասարճեան
 Գանձապահ՝ Յովիկ Գուշաքճեան
 Մարզական՝ Սեպուհ Կալեան
 Սկաուտական՝ Նանօր Խաչատուրեան
 Ընկերային՝ Աբգար Աբգարեան:

Այս կազմին գլխաւոր իրականացումը կը հանդիսանայ Արեւելեան Միացեալ Նահանգներու 13րդ միջմասնաճիւղային խաղերու կազմակերպումը, 3-6 Յուլիս 2003ին:

2004ին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Նանօր Խաչատուրեան:

14 Մարտ 2004ին Սբ. Վարդանանց եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ խոստման եւ երդման արարողութիւն, կնքահայրութեամբ Պերճ Մասոյեանի - [Մ/261.34]: Սկաուտական շարքերու ընդհանուր թիւն է 60:

17-21 Օգոստոս 2005ին Նիւ Ճըրզիի մէջ կը կայանայ միջմասնաճիւղային 18րդ սկաուտական բանակումը:

2006 տարուան վարչական կազմի անդամներն են. ատենապետ՝ Ալպէր Մասոյեան, փոխ ատենապետ՝ Ջոհրապ Տաղլեան, ատենադպիր՝ Ջերոն Աբգարեան, գանձապահ՝ Մարք Թորոսեան, ընկերային՝ Երուանդ Քիլէճեան, խորհրդականներ՝ Վիգէն Տաուտ եւ Յակոբ Սումպուլեան:

ՆԻՒ ԵՈՐՔ-ՊԵՅՍԱՅՏ

1991ին Նիւ Եորք-Պէյսայտի մասնաճիւղի ան-

դամներու ընդհանուր թիւն է 80, սակայն մարգական եւ սկաուտական գործունէութիւնները կը մնան տկար:

1992ին անդամներու ընդհանուր թիւը թէեւ կը նուազի, սակայն 12 սկաուտներով կորիզի մը կազմութիւնը յաջողութիւն մը կը հանդիսանայ:

1995ի Փետրուարին Շրջանի 18րդ Ներկայացուցչական ժողովը կը հաստատէ մասնաճիւղին լուծումը:

ՄԻԱՄԻ - ԶԱՐԱԲԱՅԻՆ ՖԼՈՐԻՏԱ

3-5 Փետրուար 1995ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 18րդ Ներկայացուցչական ժողովը:

2-4 Փետրուար 2001 ին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանային 24րդ Ներկայացուցչական ժողովը:

17-18 Ապրիլ 2004ին Միամիտ մէջ կը գումարուի Շրջանի մասնաճիւղերու դիւաններու ժողովը:

ԱԼՊԸՆԻ

Հիմնադրութեան կարգով Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու կրտսերագոյն մասնաճիւղն է Ալպընիի մասնաճիւղը՝ հիմնուած 1986ին:

1992ի Փետրուարին մասնաճիւղը կը հիւրընկալէ Շրջանի 15րդ Ներկայացուցչական ժողովը, ուր կը վաւերացուի Շրջանի վերամշակուած մարզական ներքին կանոնադրութիւնը:

Ապրիլ 1997ին Ալպընիի մէջ կը գումարուի միջմասնաճիւղային վարչական դիւաններու ժողովը:

26-30 Օգոստոս 1998ին մասնաճիւղը կը հիւրընկալէ 12րդ միջմասնաճիւղային ընդհ. բանակումը:

17 եւ 18 Նոյեմբեր 2002ին, Ալպընիի մէջ կը գումարուի Շրջանային սկաուտական սեմինար:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Կազմակերպչական

15-17 Փետրուար 1991ին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու 14րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը 1991-92 երկամեակին համար կ'ընտրէ Շրջանային Վարչութիւն՝ հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Ժոզէֆ Մելիքեան

Փոխ ատենապետ՝ Սարգիս Ստեփանեան

Քարտուղար՝ Մուրատ Մանուկեան

Գանձապահ՝ Ենովք Գարակէօզեան

Յարաբերական՝ Խոսրով Խաչատուրեան

Մարզական՝ Զարեհ Յարութիւնեան

Սկաուտական՝ Գօգօ Գասապեան: Վերջինիս մեկնումով զայն կը փոխարինէ Դաւիթ Քէօսէեանը:

Այս կազմը մօտէն կը հետեւի Շրջանի 11 մասնաճիւղերու գործունէութիւններուն՝ այցելութիւններով, հեռաձայնային եւ թղթատարական կապերով, կը կազմակերպէ միջմասնաճիւղային ընդհանուր բանակումներ, աստիճանաւորական դպրոց-բանակում, Ա. կարգի սեմինար, միջմասնաճիւղային զոյգ խաղեր, կը մասնակցի 3 միջշրջանային խորհրդակցական ժողովներու Գանատայի, Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու ներկայացուցիչներու մասնակցութեամբ եւ համաամերիկեան առաջին մրցաշարքերուն- [Ծ/135.31]: Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին Շրջանը կը ներկայացնեն Զարեհ Յարութիւնեան, Եղիշէ Խոստեղեան, Խոսրով Խաչատուրեան, Ենովք Գարակէօզեան, Գօգօ Գասապարեան եւ Վահրամ Մինասեան:

29-31 Յունուար 1993ին Շրջանի 16րդ Ներկայացուցչական ժողովին կողմէ ընտրուած Շրջանային Վարչութեան անդամներն են. ատենապետ՝ Մուրատ Մանուկեան, փոխ ատենապետ՝ Խոսրով Խաչատուրեան, քարտուղար՝ Սօսի Վիչապեան, գանձապահ՝ Ենովք Գարակէօզեան, մարզական՝ Զարեհ Յարութիւնեան, սկաուտա-

կան՝ Վահէ Տուտազլեան, խորհրդական՝ Արա Թէլպէլեան:

17 եւ 18 Ապրիլ 1993ին Նիւ Ճըրզիի Սուրբ Վարդանանց եկեղեցւոյ սրահին մէջ կը գումարուի Շրջանի մասնաճիւղերու վարչութիւններու դիւաններու կազմակերպչական ժողովը, համադրելու համար 1993ի միջմասնաճիւղային խաղերը, Ընդհանուր Բանակումը եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակի տօնակատարութիւնը:

2- 5 Յուլիսին տեղի կ'ունենան միջմասնաճիւղային Գ. խաղերը, մասնակցութեամբ 530 մարզիկներու եւ 100 սկաուտներու -[Ծ/140.25]: Այս առթիւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բլինթըն կը յղէ հետեւեալ ողջոյնի գիրը.-

«Հաճոյք է ողջունել բոլոր անոնք, որոնք պիտի խմբուին Ուաշինկթընի մէջ, Յուլիս չորսի շաբաթավերջին, Հ.Մ.Ը.Մ.ի միջմասնաճիւղային խաղերուն առիթով:

«Եօթանասունհինգ տարիներու ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ը երիտասարդութեան համար ստեղծած է առիթը՝ մասնակցելու մարմնամարզի եւ զօրացնելու անոնց ազգային եւ ընկերային գիտակցութիւնն ու հպարտութիւնը: Դո՛ւք օգնած էք անթիւ հայ տղոց եւ աղջիկներուն, ապրելու՝ առողջ միտք, առողջ մարմնի մէջ նշանաբանով եւ բոլոր անոնք, որոնք կապ ունին այս խաղերուն հետ, հպարտ պէտք է զգան այս առաքելութեամբ:

«Ուրախ եմ, որ մեր մայրաքաղաքը, Ուաշինկթըն, պիտի հիւրընկալէ Արեւելեան շրջանի երրորդ միջմասնաճիւղային խաղերը: Յաջողութիւն բոլոր մրցողներուն:

«Բարեմաղթութիւններ՝ հաճելի ձեռնարկի մը համար»:

10էն 18 Յուլիս 1993ին Շրջանի ներկայացուցչական պատուիրակութիւն մը կը մասնակցի Գանատայի մէջ կայացած համաՀ.Մ.Ը.Մ.ական Դ. խաղերու Ֆուլթոնի եւ աթլէթիզմի մրցաշարքերուն:

25 Սեպտեմբերին տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակին նուիրուած ճաշկերոյթ-պարահանդէսը, հովանաւորութեամբ Արեւելեան Միացեալ Նահանգներու թեմի առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանի -[Ծ/140.22]:

16 Հոկտեմբերին Ալպընիի մէջ կը կազմակերպուին Ա. եւ Բ. կարգերու սկաուտական դաստիարակչական սեմինարներ:

15 եւ 16 Մայիս 1994ին Շրջանային Սկաուտական Խորհուրդը կը կազմակերպէ Ա. կարգի գիտելիքներու սեմինար, ուր 26 աստիճանաւորներ կը հետեւին զանազան դասախօսութիւններու՝ պատրաստելով թիւով եւ որակով յառաջացած սկաուտ դեկավարներ: Նոյն օրերուն Շրջանի Սկաուտական Խորհուրդները կը կազմակերպեն խորհրդաժողով -[Ծ/149.26-27]:

1995-96ին Շրջանային Վարչութեան կազմին կ'անդամակցին, ատենապետ՝ Մուրատ Մանուկեան, ատենադպիր՝ Վահէ Տուտազլեան, փոխ ատենապետ եւ զանձապահ՝ Սարգիս Ստեփանեան, հաշուապահ՝ Զարեհ Յարութիւնեան, մարզական՝ Արա Թէլպէլեան, խորհրդական՝ Վազգէն Գարրիէլեան եւ Դաւիթ Քէօսէեան:

31 Յունուարէն 2 Փետրուար 1997ին, Ֆիլատելֆիոյ մէջ տեղի կ'ունենայ Շրջանի 20րդ Ներկայացուցչական ժողովը, որուն վերջին օրա-



Արեւելեան Մ. Նահանգներու 1997-1999 երկամեակի Շրջանային Վարչութեան կազմը

կարգով կ'ընտրուի Շրջանային Վարչութեան
հետեւեալ կազմը.-

Ատենապետ՝ Արա Թէլպէլեան
Փոխ ատենապետ՝ Վարդգէս Վարդանեան
Քարտուղար՝ Յակոբ Խաչատուրեան
Գանձապահ՝ Պետիկ Տէր Վարդանեան
Մարզականի պատասխանատու՝ Րաֆֆի Տո-
նապետեան

Սկստակականի ներկայացուցիչ՝ Վազգէն
Գաբրիէլեան

Խորհրդական՝ Սարգիս Տուտազլեան:

Տասը մասնաճիւղերով գործող այս Շրջանը
1997ի աւարտին կը հաշուէ 1119 անդամներ: 26-
28 Մարտ 1997ին, Շրջանի ներկայացուցիչները
մասնակցած են Փարիզի մէջ կայացած եւ կեդ-
րոնական Վարչութեան կողմէ կազմակեր-
պուած միջդիւանային ժողովին:

1998ին տեղի կ'ունենայ Արեւելեան Միացեալ
Նահանգներու 21րդ Շրջանային Ներկայացուց-
չական ժողովը, որ քննելէ ետք ընթացաւարտ
Շրջանային Վարչութեան գործունէութեան տե-
ղեկագիրը, զայն կը նկատէ «Յոյժ գնահատելի»:
1999-2000 երկամեակին Արեւելեան Միացեալ
Նահանգներու Շրջանային Վարչութեան մաս կը
կազմեն.-

Ատենապետ՝ Անդրանիկ Տէր Օհաննէսեան
Փոխ ատենապետ՝ Վարդգէս Վարդանեան
Ատենադպիր՝ Սարգիս Տուտազլեան
Քարտուղար՝ Յակոբ Խաչատուրեան
Գանձապահ՝ Պետիկ Տէր Վարդանեան
Մարզական՝ Րաֆֆի Տոնապետեան
Սկստակական՝ Արշակ Սարգիսեան:

Շրջանէն 5 պատգամաւորներ եւ 2 հրաւիր-
եալներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգա-



Արեւելեան Միացեալ Նահանգներու 21րդ Շրջանային Ներկայացուցչական
Ժողովի խմբանկար՝ Նիւ Եորք, 1 Փետրուար 1998



Արեւելեան Մ. Նահանգներու 1999-2001 երկամեակի Շրջանային Վարչութեան կազմը. Պետիկ Տէր Վարդանեան, Արշակ Սարգիսեան, Վարդգէս Վարդանեան, Անդրանիկ Տէր Օհաննէսեան, Յակոբ Խաչատուրեան, Սարգիս Տուտազեան, Բաֆֆի Տօնապետեան

մաւորական Ընդհ. Ժողովին:

24 Փետրուար 2001ին Արեւելեան Միացեալ Նահանգներու 24րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ Ֆլորիտայի մէջ, մասնակցութեամբ 41 լիազօր ներկայացուցիչներու, որոնք կը ներկայացնէին Շրջանի 10 մասնաճիւղերը: Յետ ժողովի օրակարգերու սպառումին, ժողովը ընտրեց 2001-2002 երկամեակի Շրջանային Վարչութիւն հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Սարգիս Ստեփանեան
- Քարտուղար՝ Վահէ Տուտազեան
- Գանձապահ՝ Մարսէլ Գարեան
- Հաշուապահ՝ Զարեհ Յարութիւնեան

Խորհրդականներ՝ Յարութ Արապեան, Գէորգ Օհանեան եւ Յովիկ Աբգարեան -[Ծ/226/32]:

2002ին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանը ունի 10 մասնաճիւղեր, ուր կը գործեն 1056 անդամներ՝ կազմակերպական, մարզական եւ սկաուտական բաժիններով:

2003-2004 տարեշրջանին Շրջանային Վարչութեան մաս կը կազմեն.-

- Ատենապետ՝ Մարսէլ Գարեան
- Փոխ ատենապետ՝ Սարգիս Տուտազեան

Քարտուղար՝ Յակոբ Խաչատուրեան
Գանձապահ՝ Զարեհ Յարութիւնեան
Սկաուտական՝ Կարպիս Թոսունեան
Մարզական՝ Բաֆֆի Տօնապետեան
Խորհրդական՝ Յովիկ Աբգարեան:

Այս կազմին կը գործակցին Շրջանային Սկաուտ Խորհուրդը՝ բաղկացած հետեւեալ անդամներէն.- Երան Սիմոնեան, Սրբուհի Ոսկանեան, Թամար Յովակիմեան, Մատլէն Գաբրիէլեան, Ժիրօ Իսկէնտէրեան, Ալլաքր Պարսումեան եւ Թամար Քեսայեան: Շրջանային մարզական յանձնախումբին կ'անդամակցին՝ Բաֆֆի Գրիգորեան, Մաթիլտա Ֆրունճեան, Գօգօ Մաթիկեան, Սարգիս Դարբինեան, Վրէժ Մելքոնեան եւ Գէորգ Օհանեան:

2005-2006 տարեշրջանին Շրջանային Վարչութեան անդամներն են, Յակոբ Իշխանեան՝ ատենապետ, Հրաչ Մեսրոպեան, Վահէ Թանաչեան, Ռոպէրթ Քալանթարի, Վազգէն Լախոյեան, Սարգիս Դարբինեան եւ Վարուժան Ճինտոյեան:

Մարզական

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային մարզական գործունէութեան առանցքը կը կազմեն իւրաքանչիւր տարի մասնաճիւղի մը կազմակերպութեամբ կայացող միջմասնաճիւղային խաղերը, Գանատայի Շրջանին կողմէ կազմակերպուած ձմեռնային եւ ամառնային մրցաշարքերը, որոնց կը մասնակցին մասնաճիւղային խումբեր:

1էն 4 Յունիս 1994ին Նիւ Ճըրզիի մէջ կը կայանան Շրջանի չորրորդ միջմասնաճիւղային խաղերը, նուիրուած Յովհաննէս Սթամպուլեանի յիշատակին: Շրջանի 10 մասնաճիւղերէն 700 մարզիկներ եւ սկաուտներ կը մասնակցին այս խաղերուն -[Ծ/152.24]:

30 Յունիսէն 4 Յունիս 1995ին Պոսթըրնի մէջ կը կայանան Շրջանի 5րդ միջմասնաճիւղային խաղերը, առաջնորդութեամբ «Մէկ Ժողովուրդ, Մէկ Հայրենիք» կարգախօսին, ի յիշատակ



Արեւելեան Մ.Նահանգներու 22րդ Ծրջանային Ներկայացուցչական Ժողովի խմբանկար – Նիւ Ճըրզի, 5-7 Փետրուար 1999



Արեւելեան Մ.Նահանգներու Հ.Մ.Բ.Մ.ի 27րդ Ծրջանային Ներկայացուցչական Ժողովի խմբանկար - 6-8 Փետրուար 2004, Ուաշինկթըն

Շրջանային վարչութեան նախկին ատենապետ՝ Պետրոս Կարապետեանի, հովանաւորութեամբ Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի թեմի առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանի եւ նախագահութեամբ Տէր եւ Տիկին Յովսէփ Աւագեաններու: Վերջինս այս առթիւ կ'արտասանէ հետեւեալ խօսքը . «Ինձի համար այս օրը եւ հանդէսը յատուկ նշանակութիւն եւ զգացական ապրում ունին, տարիներ առաջ, երբ Պոսթընէն Լոս Անճելըս կը փոխադրուէի, մտքէս երբեք չէր անցներ թէ օր մը պիտի կանգնիմ հոս, այս հարազատ միջավայրին մէջ, սրտի խօսք ըսելու որպէս Պոսթընի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն մէկը: Այսօր վերադարձած անոր, ի տես այս տօնական հայաբոյր մթնոլորտին եւ տարուած գնահատելի աշխատանքին, հպարտութեամբ մը կը լեցուի հոգիս, քաջ գիտնալով որ տարիներ առաջ խումբ մը նուիրեալներու սերմանած հունտերը արդիւնաւորուած են եւ հասկեր դարձած» [Ծ/160.26]:

4-9 Յունիս 1996ին Շիքակոյի մէջ, 6րդ միջմասնաճիւղային խաղերուն կը մասնակցին 625 մարզիկներ:

Շրջանի 7րդ միջմասնաճիւղային խաղերը տեղի կ'ունենան Փրովիտընսի մէջ, նուիրուած Խոսրով Խաչատուրեանի յիշատակին, Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի 11 մասնաճիւղերու 700 հոգիէ բաղկացած պատուիրակութիւններու մասնակցութեամբ եւ նախագահութեամբ Նուարդ Արամեանի - [Ծ/183.4]:

Շրջանի 8րդ միջմասնաճիւղային խաղերը տեղի կ'ունենան Փենսիլվանիոյ մէջ, հովանաւորութեամբ Արեւելեան Միացեալ Նահանգներու թեմի Առաջնորդ Օշական Եպս. Չոլոյեանի եւ նախագահութեամբ՝ Տէր եւ Տիկին Յովհաննէս Գազանճեաններու: Շրջանէն եւ Գանատայէն 11 մասնաճիւղերու 800 մարզիկներ կը մասնակցին այս խաղերուն - [Ծ/196.26]:

30 Յունիսէն 10 Օգոստոս 1997ին Շրջանը կը կազմակերպէ Համա Հ.Մ.Ը.Մ.ական 5րդ խաղերը - [Ծ/182.6-29]:

Շրջանի 9րդ միջմասնաճիւղային խաղերը

կայացան Նիւ Եորքի մէջ, 2-5 Յունիս 1999ին, նուիրուած Կարպիս Տէր Մեսրոպեանի յիշատակին, նախագահութեամբ Հերան Փափազեանի, ներկայութեամբ՝ Կեդրոնական վարչութեան ատենապետ Բիւզանդ Թորիկեանի եւ անդամ՝ Մուրատ Մանուկեանի, մասնակցութեամբ 600 մարզիկներու - [Ծ/210.16]:

30 Յունիսէն 4 Յունիս 2001ին Պոսթընի մէջ տեղի կ'ունենան Շրջանի 11րդ միջմասնաճիւղային խաղերը, մասնակցութեամբ մասնաճիւղերու 52 խումբերը կազմող 560 մարզիկներուն: Խաղերը կը հովանաւորէ Արեւելեան Միացեալ Նահանգներու թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեան - [Ծ/230.29]: 10էն 16 Օգոստոսին Շրջանը ներկայացնող պատուիրակութիւն մը կը մասնակցի Համա Հ.Մ.Ը.Մ.ական 6րդ խաղերուն Ֆուլթոնի եւ աթլետիկայի խումբերով:

3էն 6 Յունիս 2003ին Նիւ Ճըրզի մէջ տեղի կ'ունենան 13րդ միջմասնաճիւղային խաղերը, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 85ամեակին, մասնակցութեամբ 10 մասնաճիւղերու եւ Մոնթրէալի ու Թորոնթոյի մասնաճիւղերու շուրջ 700 մարզիկներուն - [Ծ/254.27]:

1էն 4 Յունիս 2005ին, Ֆիլատելֆիոյ մէջ տեղի կ'ունենան Շրջանի 15րդ խաղերը, ներկայութեամբ Կեդրոնական վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանի, որ այս առթիւ արտասանած իր խօսքին մէջ կ'ըսէ «...Այսպէս, ուրեմն, Հ.Մ.Ը.Մ.ի նոր սերունդը կեանքով, խանդավառութեամբ եւ յոյսերով կը լեցնէ հայ իրականութիւնը ամէն տեղ, մէկ կողմէ մեր կեանքի ընկրկումներուն եւ թերութիւններուն հակադրելով իր տեսական կենսունակութիւնը, իսկ միւս կողմէ՝ հաստատ երաշխիքը տալով այն խոստումին, թէ ինք միշտ պատրաստ է իր դերին ու կոչումին հաւատարմութեամբ բարձրանալու եւ իրմով հպարտացող հայութիւնն ալ իր հետ բարձրացնելու» - [Ծ/277.18]:

Յունիս 2005ին Շրջանէն պատուիրակութիւն մը Աթէնքի մէջ կը մասնակցի Համա Հ.Մ.Ը.Մ.ական 7րդ Խաղերուն պասքէթպոլի եւ լողի խումբերով:

Սկաուտական

27-30 Օգոստոս 1992ին Նիւ Ճըրզիի North Bergen Bay Scouts բանակավայրին մէջ կը կայանայ Շրջանի 6րդ ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ Ուաշինկթընի, Պոսթընի, Ֆիլատելֆիոյ, Փրովիտընսի եւ Նիւ Ճըրզիի 110 սկաուտներուն: Բանակումին աշխատանքներուն մաս կը կազմեն դաստիարակչական եւ թեքնիք բաժիններ: Բանակումին ընդհանուր խմբապետն է Ջարեհ Գարակիւլլէեան, փոխ խմբապետներ՝ Վիգէն Զուխատարեան եւ Երան Սիմոնեան -[Ծ/130.38]:

1994ին Շրջանէն 20 սկաուտներէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.-Մ.ական 5րդ ընդհանուր բանակումին, Բիւրականի մէջ: 24-28 Օգոստոսին տեղի կ'ունենայ Շրջանային 8րդ ընդհ. բանակումը, մասնակցութեամբ 128 սկաուտներու -[Ծ/152.32]:

20-24 Օգոստոս 1997ին տեղի կ'ունենայ Արեւելեան Միացեալ Նահանգներու միջմասնաճիւղային 11րդ ընդհանուր բանակումը - [Ծ/184.20]:

Շրջանի 13րդ միջմասնաճիւղային ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 19-24 Օգոստոս 1999ին, Ռոտ Այլընտի, Քէմփ Ֆայնսթայնի բանակավայրին մէջ, ընդհանուր խմբապետութեամբ Թամար Յովակիմեանի-[Ծ/209.17]:

20 եւ 21 Մայիս 2000ին, Շրջանի 45 սկաուտներու մասնակցութեամբ, Փրովիտընսի մէջ, տեղի ունեցաւ Ա. եւ Բ. կարգերու սկաուտական սեմինարը՝ զօրացնելով եւ վերաորակաւորելով

Արեւելեան Միացեալ Նահանգներու Սկաուտական շարքերու թեքնիք, միութենական եւ ազգային դաստիարակութիւնները- [Ծ/217.34]:

Շրջանի 14րդ միջմասնաճիւղային բանակումը տեղի կ'ունենայ Նիւ Ճըրզիի Camp Winebagoի բանակավայրին մէջ, 2-7 Օգոստոս 2000ին, մասնակցութեամբ 96 սկաուտներու, ընդհանուր խմբապետութեամբ Մատլէն Գաբրիէլեանի [Ծ/222.32]:

15-19 Օգոստոս 2001ին կը կայանայ Շրջանի 15րդ միջմասնաճիւղային բանակումը, մասնակցութեամբ 6 մասնաճիւղերէ 113 սկաուտներու, ընդհանուր խմբապետութեամբ՝ Սերժ Շահապեանի -[Ծ/233.30]:

13-17 Օգոստոս 2003ին Շրջանը կը կազմակերպէ իր 17րդ ընդհ բանակումը -[Ծ/256.33]: Իսկ 18-22 Օգոստոս 2004ին՝ 18րդ ընդհ. բանակումը, Փրովիտընսի մէջ:

Այլք

25 Սեպտեմբեր 1993ին շրջանը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը, Նիւ ճըրջիի մէջ, նախագահութեամբ Տէր եւ Տիկին Օհան Օհանեաններուն:

Շրջանը Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակը կը նշէ կրկին Նիւ Ճըրջիի մէջ կայացած ճաշկերոյթ-պարահանդէսով, որուն կը մասնակցին 750է աւելի հիւրեր:

28 Սեպտեմբեր 2002ին Շրջանը կը տօնէ իր վերակազմութեան 25ամեակը - [Ծ/244.12]:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԱԻՍՏՐԱԼԻԱ

- ՍԻՏՆԻ
- ՄԵԼՊՈՒՌԻՆ
- ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԻՏՆԻ
- ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍԻՏՆԻ
- ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԻՏՆԻ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՍԻՏՆԻ

Հ.Մ.Ը.Մ.ի Սիտնիի «Անդրանիկ» մասնաճիւղը Շրջանի մայր մասնաճիւղի հանգամանքով կը շարունակէ իր նուաճումները կազմակերպչական, մարզական եւ սկաուտական բաժիններով:

Մասնաճիւղը կը շարունակէ կիրարկել ֆուլթայոլ՝ 8 խումբեր, պասքեթպոլ՝ 15 խումբեր, փինկփոնկ, վոլիպոլ եւ աթլետիզմ: Ֆուլթայոլի եւ պասքեթպոլի խումբերը կը մասնակցին Սիտնիի պատկան ֆետերասիոններու ախոյեանական մրցաշարքերուն:

18 Յունուար 1993ին մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան ընդհանուր բանակումը Castle Mountain բանակավայրին մէջ, սկաուտական շարքերէն 120 անդամներու մասնակ-

ցութեամբ: Այդ առթիւ կը կազմակերպուի երդման արարողութիւն՝ հանդիսապետութեամբ մասնաճիւղի ընդհանուր խմբապետ Շահէ Վարդանեանի: Դրօշակներու օրհնութիւնը կը կատարէ Արամայիս Աւագ Քհնյ. Միրզոյեան:

27 Օգոստոս 1994ին North Bridge խումբին դէմ ֆուլթայոլի աւարտական մրցումի իր յաղթանակով (1-0), Հ.Մ.Ը.Մ.ի խումբը կ'ապահովէ 1994 եղանակի շրջանի ախոյեանութիւնը: Մրցումի ընթացքին կը փայլին մարզիկներ Յակոբ Սարգիսեան, Բաֆֆի Շանլեան եւ Վիգէն Իվանեան: Նոյն եղանակին մասնաճիւղի 12 տարեկանէն վար տղոց խումբը կը շահի դահուկի ախոյեանութիւնը: Խումբի մարզիչն է Բաֆֆի Մանճիկեան:

1995ին մասնաճիւղի վարչութեան ատենա-



Աւտրալիոյ «Անդրանիկ» մասնաճիւղի եւ Արեւմտեան Մ. Նահանգներու «Արարատ» մասնաճիւղի պասքեթպոլի խումբերը 24 Դեկտեմբեր 2000ին

պետն է Սազո Վարդանեան, ատենադպիրը՝ Տիրան Վահրատեան:

1996ի Սեպտեմբերին, Շրջանային Վարչութեան կողմէ նշանակեալ վարչութեան անդամներն են.-

- Ատենապետ՝ Արմանտո Ֆերհատեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Կապոնեան
- Քարտուղար՝ Յոլինէ Պալիէմէզեան
- Գանձապահ՝ Հրանդ Զատիկեան

Խորհրդականներ Վաչէ Իվանեան, Արթո Զատիկեան:

1996ին մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 201, մարզական եւ սկաուտական ճիւղերով: Մինչեւ 1998ի սկիզբը անդամակցութեան աճը ընդհանուր թիւը կը բարձրացնէ 361ի, որոնցմէ 80ը սկաուտական շարքերէն:

1997 տարուան մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Եփրատ Իվանեան: 21 Սեպտեմբերին Աւստրալիոյ սկաուտական Ֆետերասիոնը մասնաճիւղի սկաուտական բաժինին կը յանձնէ ընդարձակ սրահի մը բանալին՝ մնայուն կերպով օգտագործուելու համար մասնաճիւղին կողմէ, իբրեւ քաջալերանք մասնաճիւղի սկաուտական գործունէութեան -[Ծ/184.19]: Մարզական կարեւորագոյն ձեռնարկը կ'ըլլայ պասքեթպոլի խումբին մասնակցութիւնը համաՀ.Մ.Ը.Մ.ական Ե. խաղերուն, նիւ Ճըրզի մէջ:

6 Ապրիլ 1998ին մասնաճիւղի անդամական Ընդհանուր Ժողովէն ընտրուած վարչութիւնը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Եփրատ Իվանեան
- Փոխ ատենապետ եւ քարտուղար՝ Ռուբէն Նալչայեան
- Գանձապահ՝ Տիանա Թերզեան

Խորհրդականներ՝ Յոլինէ Պալիէմէզեան, Լիզ Ալավերտեան, Յարութ Խաչատուրեան եւ Յարութ Պուլղուրճեան:

1998ին մասնաճիւղէն սկաուտական պատւիրակութիւն մը կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ ընդհանուր բանակումին, Աղաւնաձորի մէջ, իսկ 1999ին պասքեթպոլի հա-

մահայկական խաղերու մրցաշարքին մասնակցեցան յատուկ պատուիրակութեամբ:

2000ին անդամներու ընդհանուր թիւն է 394: Սկաուտական բաժինը անկայուն վիճակ մը կը պարզէ՝ մնայուն հաւաքավայրի մը չգոյութեան պատճառով: 2001ին վարչութիւնը կը վերակազմէ սկաուտական ծնողաց խորհուրդ մը՝ զբաղելու համար սկաուտական բաժինով:

Ֆութպոլի խումբին մարզիչն է Հայաստանի հաւաքականի մարզիչներէն Աշոտ Կիրակոսեան:

2001ին պասքեթպոլի 9 տարբեր դասակարգի խումբեր կը մասնակցին տեղւոյն Ֆետերասիոնի մրցաշարքերուն:

ՄԵԼՊՈՒՌՆ

Հիմնադրութեան շարքով Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Մելպուռնի «Արաքս» մասնաճիւղը Շրջանի երկրորդ մասնաճիւղն է:



Հ.Մ.Ը.Մ.ի Մելպուռնի «Արաքս» մասնաճիւղի պասքեթպոլի խումբը 24րդ Նաւասարդեան խաղերու ախոյեան

18 Մարտ 1990ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ 1990 տարուան վարչական կազմ.-

Ատենապետ՝ Վարդան Մարտիրոսեան

Ատենադպիր՝ Մոսիկ Գոճատեղեան

Գանձապահ՝ Էտի Զաքարեան

Գոյքապահ՝ Թ. Շէօհմէլեան

Սկաուտական եւ մարզական՝ Սարգիս Հալ-լաճեան:

1991 տարեշրջանի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Մովսէս Գոճատեղեան:

1991ի ընթացքին մասնաճիւղը, մրցաշարքերով, սկաուտական խարուկահանդէսներով, զանազան հանդիսութիւններով եւ խրախճանք հաւաքներով կը նշէ իր հիմնադրութեան քսանհինգամեակը -[Մ/123.22]: Յատուկ արձանագրութեան արժանի է մասնաճիւղի սկաուտական նուագախումբը, որ իր յաջող ելոյթներով կը խանդավառէ մասնաճիւղին հրապարակային ձեռնարկները:

1993ին մասնաճիւղի անդամական ընդհանուր թիւն է 175: Մասնաճիւղին գլխաւոր մարզական ճիւղն է պասքեթպոլը: Ունի 10 խումբեր, որոնք յաջողութիւններով կը մասնակցին Ֆետերասիոնի մրցաշարքերուն: Կը կիրարկէ նաեւ փինկփոնկ, վոլիպոլ եւ աթլետիզմ:

1995-96 տարեշրջանին մասնաճիւղի 11 տարե-



Մելպուռնի 2005 տարուան աղջկանց պասքեթպոլի խումբը կանէն վար աղջիկներու պասքեթպոլի խումբը փայլուն յաջողութեամբ կը տիրանայ Waverley Basketball Associationի ախոյեանութեան բաժակին: Խումբի մարզիչն է Օննիկ Եսայեան-[Մ/169.33]:

1996ին մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 76: 1998ին այս թիւը կը բարձրանայ 107ի:

1998 տարուան մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Պետո Գաբլանճեան: 1998ին սկաուտական բաժինէն 3 խմբապետներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական ճրդ ընդհանուր



Հ.Մ.Ը.Մ.ի Մելպուռնի մասնաճիւղի 1996 տարուան փոքր տղոց պասքեթպոլի խումբը



Մելպուռնի մասնաճիւղի 2004 տարուան պասքեթպոլի կրտսերներու խումբը Բ.դասակարգի ախոյեան

բանակումին, Աղաւնաձորի մէջ:

1999ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Մոսիկ Գոճատեղեան:

2000ին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 147ի: Սկստակաւ նուագախումբը կը մասնակցի Շրջանի Նաւասարդեան խաղերու տողանցքներուն:

2001ին մասնաճիւղի անդամներէն Պրիան Գուրճեան կը նշանակուի Աւստրալիոյ պասքեթպոլի պետական հաւաքականի երէց տղոց խումբի մարզիչ:

2002ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Խաչիկ Աղամեան:

14-15 Դեկտեմբեր 2002ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան բանակումը եւ խորուկահանդէս -[Ծ/247.24]:

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՍԻՏՆԻ

Հ.Մ.Ը.Մ. Սիտնիի արեւմտեան շրջանի «Նաւասարդ» մասնաճիւղը հիմնուած է 1974ին: Մասնաճիւղը սկստութեան կողքին կը կիրարկէ ֆութպոլ եւ պասքեթպոլ: Խումբերը կը մասնակցին Ֆետերասիոնի ախոյեանական մրցաշարքերուն:

1992ին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 156:

1995ին մասնաճիւղի վարչութեան փոխ ատենապետն է Սամուէլ Պէրպէրեան:

Հակառակ Շրջանային վարչութեան հսկողութեան եւ միջոցառումներուն, մասնաճիւղի գործունէութիւնը այս տարեշրջանին զգալի յետադիմութիւն կ'արձանագրէ՝ վարչական կազ-



Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի «Նաւասարդ» եւ «Անդրանիկ» մասնաճիւղերու աղջկանց պասքեթպոլի խումբերը 2005ին



Աստրալիոյ «Նաւասարդ» մասնաճիւղի պասքէթպոլի մարզիկներու ընդհանուր խմբանկար



Աստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի «Նաւասարդ» մասնաճիւղի պասքէթպոլի տղոց խումբը Նաւասարդեան Խաղերու ախոյեան

մի տկարութեան եւ ներքին անհասկացողութիւններու պատճառով: Անդամներու թիւը զգալիօրէն կը նուազի: Այսուհանդերձ, մասնաճիւղի խումբեր կը մասնակցին Շրջանի Նաւասարդեան խաղերուն:

1996-97 եղանակին մասնաճիւղի պասքէթպոլի

լի խումբը կ'ապահովէ իր շրջանի Ֆետերասիոնի մրցաշարքի ախոյեանութիւնը: 1996ի Յունիսին կ'ընտրուի մասնաճիւղի նոր վարչական կազմ՝ բաղկացած հետեւեալ անդամներէն.- Հենրիկ Սեդրակեան, Յովսէփ Շնորհօքեան, Յարութ Թաշճեան, Յովին Թաշճեան եւ Թամար Պապլանեան:

2000ին «Նաւասարդ» մասնաճիւղի պասքէթպոլի տղոց խումբը կը յաջողի տիրանալ իր դասակարգի Ֆետերասիոնի ախոյեանութեան:

2001ին անդամներու ընդհանուր թիւն է 134, որոնցմէ 33ը սկաուտական շարքերէն:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՍԻՏՆԻ

1981ին հիմնուած արեւելեան Սիտնիի Հ.Մ.Ը.-Մ.ի «Կամք» մասնաճիւղը Աստրալիոյ չորրորդ մասնաճիւղն է:

Մասնաճիւղի մարզական գործունէութեան առանցքը կը կազմէ պասքէթպոլը, ուր 1993ին տղոց խումբը խլեց Ֆետերասիոնի մրցաշարքին ախոյեանութիւնը: Մասնաճիւղը կը կիրարկէ նաեւ փինկփոնկ, վոլիպոլ եւ աթլէթիզմ: Անդամներու ընդհանուր թիւն է 196, որոնցմէ 46ը սկաուտական շարքերէն, ղեկավարութեամբ 6 հոգիէ բաղկացած խմբապետական կազմի:

1994ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Ժիրայր Պապիկեան: Վարչական կազմին կ'անդամակցին Մարկո Սարգիսեան, Հրանդ Շահինեան, Դաւիթ Շահինեան, Ալօ Տէր Պետրոսեան, Լեւոն Պալգապանեան եւ Արմէն Մարկոսեան: Մասնաճիւղի սկաուտ ընդհանուր խմբապետն է Լեւոն Պալգապանեան:

26 Յունիս 1994ին տեղի կ'ունենայ մասնաճիւղին վերանորոգուած ակումբին բացման հանդիսութիւնը, ներկայութեամբ Աստրալիոյ թեմի առաջնորդ Աղան Արք. Պալէոզեանի, քաղաքապետական, ազգային եւ միութենական աւագանիին -[Ծ/152.19]:

1995ին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 107, որոնցմէ 35ը սկաուտական շարքերէն:

1998ին մասնաճիւղը չքեղ պարահանդէսով կը նշէ իր հիմնադրութեան 17ամեակը եւ Հ.Մ.Ը.-Մ.ի հիմնադրութեան 80ամեակը:

Որպէս Սիտնիի Արեւելեան շրջանի միակ հայկական կազմակերպութիւն, մասնաճիւղը առաքելութիւնը ունի ազգային, մշակութային եւ այլ ձեռնարկներով խանդավառելու շրջանի հայութիւնը:

1999ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Ժիրայր Պապիկեան:

2000ին անդամներու ընդհանուր թիւն է 110: Մասնաճիւղը մարզական եւ սկաուտական գործունէութեան կողքին կը տանի ընկերային եւ մշակութային աշխատանք:

ՂԻՄԻՍԱՅԻՆ ՍԻՏՆԻ

1989ին հիմնուած Աւստրալիոյ Շրջանի կրտսերագոյն մասնաճիւղն է Հ.Մ.Ը.Մ.ի հիւսիսային Սիտնիի «Արարատ» մասնաճիւղը: 1991ին վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Ասատուր Ասատուրեան

Փոխ ատենապետ՝ Գ. Ղարիպեան

Ատենադպիր՝ Բ. Քէհեայեան

Գանձապահ՝ Գ. Ոսկանեան

Խորհրդականներ՝ Մ. Խաչիկեան, Շ. Յարութիւնեան եւ Ա. Սարգիսեան:

Մասնաճիւղը կը կիրարկէ դաշտային, սրահի եւ մինի ֆութպոլի ճիւղեր եւ պասքեթպոլ: Կարգ մը անդամներ կը կիրարկեն ինքնապաշտպանութիւն (Karate) եւ ճատրակ:

28 Սեպտեմբեր 1991ին մասնաճիւղը կը կազմակերպէ սկաուտական խումբի երդման արարողութիւն, հանդիսավարութեամբ մասնաճիւղի ընդհանուր խմբապետ՝ Սուրիկ Սարգիսեանի -[Ծ/125.26]:

1992 տարեշրջանին վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Ճորճ Յարութիւնեան: 15-20 Յունուարին մասնաճիւղը կը կազմակերպէ իր ընդհանուր բանակումը, իսկ 23 Օգոստոսին՝ մասնաճիւղի աթլետիկ մրցումները:



Հիւսիսային Սիտնիի «Արարատ» մասնաճիւղի փոքրերու պասքեթպոլի խումբը 2005ին

12 Սեպտեմբեր 1992ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան երրորդ տարեդարձը: Այս շրջանին մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւը կը բարձրանայ 320ի, որոնցմէ 140ը սկաուտական շարքերէն, ղեկավարութեամբ 15 հոգինոց խմբապետական կազմին :

2 Հոկտեմբեր 1994ին մասնաճիւղը կը տօնէ իր հիմնադրութեան հնգամեակը -[Ծ/155.26]:

Հիւսիսային Սիտնիի մասնաճիւղը կը գործէ տեղւոյն Համազգայինի «Նայիրի» մասնաճիւղին հետ միացեալ վարչութեամբ: 1995 տարուան վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Վահիկ Խաչիկեան:



Աւստրալիոյ «Նաւասարդ» եւ «Արարատ» մասնաճիւղերու աղջկանց մինի ֆութպոլի խումբերը

1996-97 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն՝

Ատենապետ՝ Շահէն Յարութիւնեան
Փոխ ատենապետ՝ Վարուժ Սարգիսեան
Ատենադպրուհի՝ Յուլեր Ոսկանեան
Գանձապահ՝ Վրէժ Մնացականեան
Խորհրդականներ՝ Ռազմիկ Խուտավերտեան
եւ Հերոս Առաքելեան:

1998ին մասնաճիւղը կը հաշուէ 223 անդամներ, որոնցմէ 124ը սկաուտական շարքերէն: Ունի իր սեփական հաւաքավայրը Ռայտի շրջանին մէջ: Կը հրատարակէ «Գարուն» ամսաթերթը: 15 սկաուտներէ բաղկացած պատուիրակութեամբ մը մաս կազմեց Աւստրալիոյ Շրջանի պատուիրակութեան՝ մասնակցելու համար ՀամաՀ.Մ.-Ը.Մ.ական ճրդ ընդհանուր բանակումին:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Կազմակերպչական

3 եւ 4 Մարտ 1990ին Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի ճրդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին կողմէ ընտրուած 1990 եւ 1991 երկամեակի Շրջանային վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յովհաննէս Մարտոյեան
Ատենադպիր՝ Արդուշ Աղամալեան
Գանձապահ՝ Շանթ Աւագեան
Խորհրդականներ՝ Փայլակ Աղամեան եւ Պերճ Մոմճեան:

Աւստրալիոյ 7րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը 1992 Փետրուարին կ'ընտրէ նոր



Աւստրալիոյ 12րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի մասնակիցներու խմբանկար Սիտնիի Հայ Մշակութային Կեդրոնի մուտքին

Շրջանային վարչութեան կազմ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յովհաննէս Մարտոյեան
Ատենադպրուհի՝ Յուլիէնէ Պալիէմէզեան
Գանձապահ՝ Արմոնտ Միրզոյեան
Մարզական՝ Կարօ Քրիշեան
Խորհրդական՝ Փայլակ Ադամեան:

Այս կազմը իր կողքին կը նշանակէ Շրջանային սկստական խմբապետ, Շրջանային մարզական յանձնախումբ, որոնց գործակցութեամբ կ'իրականացուին Շրջանի 24րդ եւ 25րդ Նաւասարդեան խաղերը, Շրջանային ընդհանուր բանակումներ, Մայիս 28ի առթիւ տողանցք եւ Ապրիլ 24ի յիշատակի երեկոյ: Շրջանի անդամներու ընդհանուր թիւն է 1297: Կազմակերպչական գետնի վրայ Շրջանային վարչութիւնը կը մշակէ Աւստրալիոյ շրջանի ներքին եւ ԱՀՎԱՄի (Աւստրալիոյ Հայկական վարժարաններու Աշակերտական Մարզախաղեր) կանոնադրութիւնները:

1994-95 երկամեակին Շրջանային վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Սարգիս Տէր Պետրոսեան
Փոխ Ատենապետ՝ Պերճ Մոմճեան
Ատենադպրուհի՝ Յուլիէնէ Պալիէմէզեան
Գանձապահ՝ Կիրիշ Ոսկանեան

Խորհրդականներ՝ Քաթրին Քէհեայեան, Հրանդ Զարիկեան եւ Պերճ Թաշճեան:

Այս կազմի գործունէութիւնը կ'արգելակեն մասնաճիւղերու վարչութիւններու ներքին անհասկացողութիւնները, որոնց վրայ կ'աւելնայ Քէհեայեանի, Զարիկեանի եւ Պալիէմէզեանի հրաժարականները: Շրջանային վարչութեան կազմը կ'ամբողջացուի Երեմ Ծահինեանի մասնակցութեամբ:

Շրջանային վարչութիւնը յանձն կ'առնէ Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու լաւագոյն մարզիկներով կազմուած պասքեթպոլի ներկայացուցչական խումբի ծախսերը: Խումբի մարզիչն է Արմանտօ Ֆերհատեան, օգնականներ՝ Հրանդ Զարիկեան եւ Ալէքս վարեան:

17 Մարտ 1996ին Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Զրդ ժողովը տեղի կ'ունենայ Սիտնիի Հայ Մշակութային Կեդրոնի սրահին մէջ, մասնակցութեամբ Շրջանի հինգ մասնաճիւղերու ներկայացուցիչներուն: 1994-95 երկամեակի Շրջանային վարչութեան գործունէութիւնը քննարկելէ ետք ժողովը զայն նկատեց «Գնահատելի»: Ապա ընտրուեցաւ 1996-1997 երկամեակի Շրջանային վարչութեան կազմ՝ բաղկացած հինգ անդամներէ.-

Ատենապետ՝ Պերճ Մոմճեան

Ատենադպիր՝ Յակոբ Ծամպագեան, փոխարինուած Մարի Սերխօշեանով

Գանձապահ՝ Կիրիշ Ոսկանեան

Խորհրդականներ Ճորճ Յարութիւնեան եւ Շանթ Աւագեան: Վերջինս հրաժարած 1996ի Օգոստոսին:

Այս կազմը գործեց երկուքուկէս տարի՝ կազմակերպելով մարզական, սկստական եւ ընկերային բազմաթիւ ձեռնարկներ, սկստական սեմինարներ եւ ազգային տօնախմբութիւններ եւ յաջողեցաւ Շրջանի հինգ մասնաճիւղերու միջեւ ստեղծել գործակցութեան ոգի: Շրջանի կազմերը մասնակցեցան ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ խաղերուն եւ 6րդ ընդհանուր բանակումին: Իւրաքանչիւր Դեկտեմբեր ամսուան վերջաւորութեան կազմակերպուեցան աւանդական Նաւասարդեան խաղերը, իրենց շուրջ հաւաքելով բազմահազար թիւով հայութիւն:

Շրջանային վարչութեան գլխաւոր աշխատանքը եղաւ ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական սկստական խմբապետական համագումարի կազմակերպումը 1996ի Դեկտեմբերին:

1997ի Փետրուար ամսուան ընթացքին Շրջանը մասնակցեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի Աւստրալիա այցելութեան կազմակերպումին:

Սեպտեմբերին, երկար եւ հետեւողական աշխատանքէ ետք, Շրջանային վարչութիւնը կը յաջողի HOMENETMEN INCORPORATED պետական արձանագրութեան:

3 եւ 4 Հոկտեմբեր 1998ին Սիտնիի Հայ Մշա-

կուլթային կեդրոնի սրահին մէջ տեղի կ'ունենայ Աւստրալիոյ Շրջանի 10րդ Ներկայացուցչական ժողովը, նախագահութեամբ՝ Յովհաննէս Մարտոյեանի եւ Եփրատ Իվանեանի, քարտուղարներ՝ Վազրիկ Մկրտիչեան եւ Զաւէն Բրուտեան: Յաջորդական 4 նիստերով ժողովը քննեց շրջանաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրը եւ հաշուեքննիչ, յարաբերական եւ բանաձեւի յանձնախումբերու զեկուցումներու աւարտին ընտրեց Շրջանային Վարչութեան նոր կազմ՝ 1998-2000 երկամեակի գործունէութեան համար, բաղկացած հետեւեալ անդամներէն.-

- Ատենապետ՝ Պերճ Մոմճեան
- Փոխ ատենապետ՝ Ճորճ Յարութիւնեան
- Քարտուղարուհի՝ Մարի Սերխօշեան
- Գանձապահ՝ Հրանդ Զարիկեան
- Խորհրդականներ՝ Յակոբ Ճամպազեան, Սարգիս Հալլաճեան, Օննիկ Եսայեան:

1999ի Ապրիլին Պերճ Մոմճեանի հրաժարումով ատենապետի պաշտօնը ստանձնեց Ճորճ Յարութիւնեան:

Կազմակերպչական յաջող գործունէութեամբ այս կազմը կը յաջողի երիտասարդացնել մասնաճիւղերու վարչական կազմերը եւ իր մասնակցութիւնը բերել Աւստրալիոյ ազգային եւ միջմիութենական բոլոր նախաձեռնութիւններուն:

28 Մայիս 2000ին Աւստրալիոյ հինգ մասնաճիւղերու սկաուտական կազմերը, մեկնելով Սբ. Յարութիւն եկեղեցիէն՝ տողանցեցին թաղերուն մէջ եւ ծաղկեպսակ զետեղեցին Անծանօթ Զինուորի յուշարձանին: Այս առթիւ օրուան պատգամը փոխանցեց Շրջանային Վարչութեան ատենապետ Վիգէն Քորթեան -[Ծ/217.29]: Մայիս 28ի տողանցքները Աւստրալիոյ Շրջանի աւանդութիւն դարձած ելոյթներէն են - [Ծ/229.28]:

Աւստրալիոյ Շրջանային 11րդ Ներկայացուցչական ժողովը տեղի ունեցաւ 5 եւ 6 Փետրուար 2000ին Սիտնիի մէջ, ներկայութեամբ 26 լիազօր ներկայացուցիչներու:

Շրջանային Վարչութեան անդամներ ընտրուեցան՝

- Ատենապետ՝ Ճորճ Յարութիւնեան, փոխարինուած Վիգէն Քորթեանով
- Ատենադպիր՝ Մարի Սերխօշեան
- Գանձապահ՝ Ճորճ Շահինեան
- Խորհրդականներ՝ Յակոբ Պողոսեան, Սարգիս Հալլաճեան եւ Զարեհ Դաւիթեան:

Շրջանային Վարչութեան գլխաւոր աշխատանքը կը կեդրոնանայ նոր կեդրոնի մը ապահովման եւ շինութեան վրայ, գործակցութեամբ քոյր միութիւններուն: Շրջանային Վարչութեան կողմէ Ethnic Australian Scouts Associationի աշխատանքներուն կը մասնակցին Ալիս Մոմճեան եւ Մարի Սերխօշեան:

24 Փետրուար 2001ին կը կազմուի Armenian Assembly of Australia, որուն հիմնադիր ժողովին Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնեն Յովհաննէս Մարտոյեան եւ Մարի Սերխօշեան:

Շրջանային Վարչութիւնը կը ծրագրէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնել Արեւմտեան Աւստրալիոյ Perth նահանգին մէջ:

16 եւ 17 Փետրուար 2002ին Սիտնիի Հայ Մշակութային կեդրոնի սրահին մէջ գումարուեցաւ Աւստրալիոյ 12րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը, նախագահութեամբ Յովհաննէս Մարտոյեանի եւ Եփրատ Իվանեանի, քարտուղարներ՝ Զաւէն Բրուտեան, Ալիս Մոմճեան եւ Շողիկ Ճամպազեան: Յետ 2000-2001 տարիներու գործունէութիւններու քննութիւններուն, 2002-2003 զոյգ տարիներու գործունէութեան համար նոր Շրջանային Վարչութեան անդամներ ընտրուեցան.-

- Ատենապետ՝ Վիգէն Քորթեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Պողոսեան
- Ատենադպիր՝ Յովիկ Կիրակոսեան
- Գանձապահ՝ Ճորճ Շահինեան
- Խորհրդականներ՝ Յակոբ Ճամպազեան, Օննիկ Եսայեան եւ Տիգրան Հովիւեան:

2004-2005 երկամեակի գործունէութեան համար Շրջանի նորակազմ Շրջանային Վարչու-

թեան մաս կը կազմեն Յարութ Քէօշկէրեան՝ ատենապետ, Վիգէն Քորթեան, Անի Բանոյեան, Արա Պոյաճեան եւ Յովիկ Կիրակոսեան:

Մարզական Գործունէութիւն

25-28 Դեկտեմբեր 1991ին Սիտնիի մէջ տեղի կ'ունենան Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի 24րդ միջմասնաճիւղային Նաւասարդեան խաղերը, նուիրուած նահատակ Վարդան Բախշեանի յիշատակին: Խաղերու յայտագրին մաս կը կազմեն պասքեթպոլ, աթլետիզմ եւ սրահի Ֆութպոլ զանազան դասակարգերու տղոց եւ աղջկանց բաժիններ: Խաղերը, տողանցքը եւ յայտագիրը կը խանդավառէ «Անդրանիկ» մասնաճիւղի նորակազմ նուագախումբը -[Ծ/125.28]:

Մելպուռնի Հայ Մշակութային Կեդրոնի դաշտին վրայ 25-27 Դեկտեմբեր 1992ին Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ 25րդ միջմասնաճիւղային խաղերը՝ աթլետիզմի, պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկփոնկի մրցաշարքերով: Խաղերուն կը մասնակցին Շրջանի հինգ մասնաճիւղերու մարզական խումբերը:

1994ի Դեկտեմբերին Սիտնիի մէջ տեղի կ'ունենան Շրջանի 26րդ Նաւասարդեան խաղերը, հինգ մասնաճիւղերու եւ Մելպուռնի Սահակեան Մարզական Միութեան Ֆութպոլի եւ պասքեթպոլի խումբերու մասնակցութեամբ:

23-25 Դեկտեմբեր 1995ին Մելպուռնի մէջ տեղի կ'ունենան Շրջանի 27րդ Նաւասարդեան խաղերը, մասնակցութեամբ Շրջանի հինգ մասնաճիւղերու եւ Սահակեան Մարզական Միութեան պասքեթպոլի եւ Ֆութպոլի խումբերուն: Խաղերը կը փակուին յաղթանակի պարահանդէսով -[Ծ/163.10]:

Շրջանի 28րդ Նաւասարդեան խաղերը տեղի կ'ունենան 1996ի Դեկտեմբերին, միաժամանակ տեղի ունեցող ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Սկաուտական Գ. համագումարին: Խաղերուն ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետը՝ Վարուժան Սերոբեան, Աւստրալիոյ փոքրամասնութեանց հարցե-

րու յանձնաժողովի նախագահ Ստեփան Գրգեաշարեան եւ հազարաւոր հանդիսականներ: Այս առթիւ Կեդրոնական Վարչութիւնը «Արտակարգ» շքանշանով պարգեւատրեց Շրջանի մարզական ճիւղի վեթերան Զաւէն Բրուտեանը -[Ծ/177.22]:

29րդ Նաւասարդեան խաղերը տեղի կ'ունենան 1997ի Դեկտեմբերին -[Ծ/190.33]:

30րդ Նաւասարդեան խաղերը նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակին, տեղի կ'ունենան Մելպուռնի մէջ, 1998ի Դեկտեմբեր 25ին:

31րդ Նաւասարդեան խաղերը, տեղի ունեցան 25-27 Դեկտեմբեր 1999ին, Սիտնիի մէջ, մասնակցութեամբ Շրջանի հինգ մասնաճիւղերու եւ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-Կամքի պասքեթպոլի խումբերուն -[Ծ/213.27]:

Շրջանի 32րդ Նաւասարդեան խաղերը տեղի ունեցան 25 Դեկտեմբեր 2000ին, մասնակցութեամբ Շրջանի հինգ մասնաճիւղերու եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի պասքեթպոլի խումբերուն -[Ծ/225.26]:

33րդ Նաւասարդեան խաղերը կայացան Մելպուռնի մէջ, 22-25 Դեկտեմբեր 2001ին:

Շրջանի 34րդ Նաւասարդեան խաղերը տեղի ունեցան 25 Դեկտեմբեր 2002ին, արձանագրելով աննախընթաց յաջողութիւն -[Ծ/247.21]:

35րդ Նաւասարդեան խաղերը կայացան 25-28 Դեկտեմբեր 2003ին, Սիտնիի մէջ -[Ծ/259.18]:

Սկաուտական

1994ին Աւստրալիոյ Շրջանի 28 հոգիներէ բաղկացող սկաուտական պատուիրակութիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Ընդհանուր Բանակումին Բիւրականի մէջ՝ Հայաստան:

1995ի 29 Նոյեմբերէն 2 Դեկտեմբերի ընթացքին տեղի կ'ունենայ Աւստրալիոյ 10րդ ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ սկաուտական շարքերէն 133 երկսեռ անդամներու, գլխաւորութեամբ Լեւոն Պալգապանեանի:



Աւստրալիոյ միջմասնաճիւղային 12րդ ընդհանուր բանակումի խմբապետական կազմի անդամները

1996-97 երկամեակին Շրջանային խմբապետի պաշտօնը կը ստանձնէ Լեւոն Պալգապանեան, իսկ Շրջանային խմբապետուհիի պաշտօնը՝ Ալիս Մոմճեան: Շրջանի 11րդ միջմասնաճիւղային բանակումը կը կայանայ 1996ին:

Քանի մը տարուան դադարէ ետք, Աւստրալիոյ միջմասնաճիւղային 12րդ ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 15-17 Դեկտեմբեր 2000ին, Սիտնիի չորս մասնաճիւղերու 115 սկաուտներու մասնակցութեամբ: Բանակումին ընդհանուր խմբապետն է Գրիշ Ոսկանեան - [Ծ/225.29]:

Հրապարակային Հանդիսութիւններ

Աւստրալիոյ Շրջանի աւանդական հրապար-

ակային ձեռնարկներուն մաս կազմած են Ապրիլ 24ի յուշատօները եւ Մայիս 28ի տողանցքները:

Դեկտեմբեր 1995ին Շրջանը տօնեց իր հիմնադրութեան 30ամեակը: Այս առթիւ կազմակերպուած հանդիսութիւններուն ներկայ գտնուեցաւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ տոքթ. Միսաք Արզումանեան: Սիտնիի եւ Մելբուռնի մէջ կայացած մարզական խաղերու եւ պարահանդէսներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» շքանշանին արժանացան Արսէն Հէքիմեան, Սարգիս Տէր Պետրոսեան, Պերճ Մոմճեան, Յովհաննէս Մարտոյեան, Փայլակ Աղամեան եւ Պերճ Թաչճեան-[Ծ/163.3-12]:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

- ԱՐԺԱՆԹԻՆ
 ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ
 ԳՈՐՏՈՊԱ
- ՈՒՐՈՒԿՈՒԷՅ
 ՄՈՆԹԵՎԻՏԵՕ
- ՊՐԱԶԻԼ
 ՍԱՆ ՓԱՈՒԼՕ
- ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ


Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի երիցագոյն մասնաճիւղը՝ Պուէնոս Այրէս 1991էն սկսեալ, նորանոր նուաճումներով, կը շարունակէ իր գործունէութիւնը մարզական, սկաուտական եւ ազգային գետիններուն վրայ:

Կազմակերպչական գործունէութիւն

1991 տարուան վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետ՝ Կրեկորիո Խաչատուրեան, փոխ ատենապետ՝ Խուան Կրեկորիո Գուլթնույեան, քարտուղար՝ Փետրո Թադէոսեան, փոխ քարտուղար՝ Կրեկորիո Սամանճեան, գանձապահ՝ Սերխիո Օհաննէսեան, փոխ գանձա-

պահ՝ Ստեփան Գափլանեան, խորհրդականներ՝ Արթուրո Աջոյեան, Գասպար Պաղտասարեան, Րաֆֆի Զորպաճեան, Ալվարո Օհաննէսեան, Տանիէլ Սապագտանեան եւ Ռոպերթո Թիւֆէնէքճեան, հաշուեքննիչներ՝ Ալպերթո Կէկէեան եւ Խուան Գարլոս Պարսամեան:

1992ին վարչութեան դիւանի կազմը կը մնայ նոյնը, բացի գանձապահէն եւ փոխ գանձապահէն, որոնք զիրար կը փոխարինեն, իսկ խորհրդականներն են Գասպար Պաղտասարեան, Էտուարտո Կոստանեան, Ռաֆայէլ Գուլմանեան, Ալպերթո Կէկէեան, Ալվարո Օհաննէսեան, Ռոպերթո Թիւֆէնէքճեան, Նորպերթո Գուլյումճեան եւ Կրեկորիո Թոսունեան, հաշուեքննիչներ՝ Սիմոն Մալիլեան եւ Տանիէլ Մալճեան: 6 Յունիսին մասնաճիւղի ներկայացուցիչները կը մաս-



Պուէնոս Այրէսի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով՝ Նոյեմբեր 2004ին, Աերկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանի

նակցին Շրջանի երրորդ Շրջանային Ներկայացուցչական ժողովին: Մասնաճիւղէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Սան Փառլոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութեան հանդիսութեան:

1993էն մինչեւ 1999ի Յուլիս ամսուան տարեշրջաններուն, ատենապետութեամբ Ստեփան Գափլանեանի, մասնաճիւղի վարչական կազմերուն կ'անդամակցին Ալպերթօ Կէկէեան, Փետրօ Թադէոսեան, Կրեկորիօ Գասերճեան, Ալվարօ Օհաննէսեան, Ռոպերթօ Թիւֆէնէքճեան, Ռաֆայէլ Գուրմանեան, Վիսենթէ Յովասափեան, Սիմոն Մաւիլեան, Կրեկորիօ Սամանճեան, Խորխէ Թորգոմեան, Նորպերթօ Գուլյումճեան, Ուկօ Թոփալեան, Տանիէլ Մալճեան, Էտոլարտօ Սաղաթելեան, Խոսէ Մինասեան, Աւագ Գրիգորեան, Րաֆֆի Գուրմանեան, Տանիէլ Ճիւպէլեան, Վահան Ալազահան, Արմանտօ Տիրատուրեան, Արիէլ Հանաչեան, Խուլիօ Պոհչալեան, Քլաուտիօ Տիրատուրեան, Արմանտօ Թորգոմեան, Արթուրօ Տէր Յակոբեան, Ալեխանտրօ Գափլանեան, Րաֆֆի Չորպաճեան, Վարուժան Քէչեան, Յակոբ Տիգրանեան, Օրասիօ Թերզեան եւ Պերճ Գարգայեան:

25 Յունիս 1994ին մասնաճիւղի ներկայացուցիչները կը մասնակցին Հարաւային Ամերիկայի 4րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովին, իսկ 25 Նոյեմբեր 1995ին՝ 5րդ Ներկայացուցչական ժողովին:

Ապրիլ 1999ին, մասնաճիւղի պատգամաւորներ Ստեփան Գափլանեան եւ Արմանտօ Թորգոմեան կը մասնակցին Լիբանանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհ. ժողովին: 26 Յունիսին մասնաճիւղի ներկայացուցիչները կը մասնակցին Հարաւային Ամերիկայի 7րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովին:

1999-2000 տարեշրջանի գործունէութեան համար մասնաճիւղի անդամական ընդհ. ժողովէն ընտրուած վարչութեան կազմն է.-

Ատենապետ՝ Աւագ Արմէն Գրիգորեան

Փոխ ատենապետներ՝ Ալպերթօ Կէկէեան եւ Կրեկորիօ Է. Խաչատուրեան

Ատենադպիր՝ Քլաուտիօ Տիրատուրեան
Փոխ ատենադպիր՝ Սիմոն Քարլոս Մաւիլեան
Գանձապահ՝ Արմանտօ Տիրատուրեան
Փոխ գանձապահ՝ Վիսենթէ Ա. Յովասափեան
Խորհրդականներ՝ Նորպերթօ Ժ. Գուլյումճեան, Վարուժան Քէչեան, Արմանտօ Թորգոմեան, Րաֆֆի Չորպաճեան, Օրասիօ Թերզեան, Յակոբ Տիգրանեան, Խուլան Գուլթնուլյեան: Հաշուեքննիչներ՝ Ռոզալիա Ագապրահամեան եւ Արիէլ Մ. Հանաչեան:

30 Ապրիլ 2000ին մասնաճիւղը, Ռամոս Մելիայի կեդրոնին մէջ, կազմակերպեց Հայկական Յեղասպանութեան 85ամեակին առթիւ Սբ. Պատարագ, հոգեհանգիստ, նոյն նպատակին նուիրուած յուշատախտակի բացում եւ մատաղի պաշտօնական ճաշկերոյթ՝ ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Բիւզանդ Թորիկեանի, որ այս առթիւ արտասանեց հանդիսութեան եզրափակիչ պատգամը - [Ծ/216.20]:

2000ի Օգոստոսէն 2002ի Յուլիս զոյգ տարեշրջաններուն, ատենապետութեամբ Ալպերթօ Կէկէեանի, մասնաճիւղի վարչական կազմերուն կ'անդամակցին Էտոլարտօ Խաչերեան, Արմանտօ Տիրատուրեան, Քարլոս Տէօքմէճեան, Սերխիօ Գոճայեան, Օրասիօ Թերզեան, Գարլոս Սարաֆեան, Վիսենթէ Յովասափեան, Խուլան Գուլթնուլյեան, Արմանտօ Թորգոմեան, Յակոբ Տիգրանեան, Կրեկորիօ Խաչատուրեան, Ալֆոնսօ Թապագեան եւ Խաւիէր Խաչատուրեան: Փոխ անդամներ՝ Ռուբէն Պօզողեան, Խուլան Գարլոս Քէչէճեան, Կրեկորիօ Սամանճեան, Լուսիա Վարդեան եւ Վիվիան Գարամանուկեան, հաշուեքննիչներ՝ Ռոզալիա Ագաբրահամեան, Արիէլ Հանաչեան, եւ Տանիէլ Քէչեան:

2001ի Օգոստոսին մասնաճիւղէն 25 մարզիկներ եւ պատասխանատուներ կը մասնակցին ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ խաղերուն, Պէյրութի մէջ:

9 Յուլիս 2002ին Ռամոս Մեխիկոյի մարզադաշտին վրայ եւ 14 Սեպտեմբեր 2002ին Արմենիա Մշակութային Ընկերակցութեան սրահին մէջ մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 75րդ տարեդարձը:

2002ի Օգոստոսէն 2004ի Յուլիս զոյգ տարեշրջաններուն մասնաճիւղի վարչական կազմերուն կ'անդամակցին, ատենապետութեամբ Էտուարտո Խաչերեանի, Արմանտո Տիրատուրեան, Կրեկորիո Խաչատուրեան, Ալֆոնսո Թապազեան, Սերխիո Գոճայեան, Յակոբ Տիգրանեան, Քարլոս Սարաֆեան, Խաւիէր Խաչատուրեան, Լուսիա Վարդեան, Խուան Քարլոս Քէչէճեան, Տանիէլ Քէչեան, Վիսենթէ Յովասափեան, Մեսրոպ Տէր Մեսրոպեան, Տանիէլ Սապագտան-

եան, Քրիստինա Միխիթարեան, Հաչուեքննիչներ՝ Միկէլ Յովհաննէսեան, Ռուբէն Միխիթարեան եւ Քարլոս Հաննէսեան:

15 եւ 16 Մարտ 2003ին մասնաճիւղի ներկայացուցիչները կը մասնակցին Հարաւային Ամերիկայի Զրդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովին: Յունիսին Արմանտո Թորգոմեան եւ Ալֆոնսո Թապազեան շրջանը կը ներկայացնեն Հ.Մ.Ը.Մ.ի Զրդ Պատգամաւորական Ընդհ. Ժողովին, Ծաղկաձորի մէջ, Հայաստան:

2004էն 2006 զոյգ տարեշրջաններուն մասնաճիւղի վարչական կազմերուն կ'անդամակցին ատենապետութեամբ՝ Արմանտո Տիրատուրեանի, Կրեկորիո Խաչատուրեան, Վիսենթէ Յովա-



Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրեսի վոլիպոլի աղջկանց կազմը 1999ին

սափեան, Ալֆոնսո Թապազեան, Տանիէլ Սապազտանեան, Յակոբ Տիգրանեան, Գարլոս Հաննէսեան, Քարլոս Սարաֆեան, Սերխիո Գոնճայեան, Խուան Գարլոս Քէչէճեան, Յարութիւն Գետերեան, Քրիստինա Միխիթարեան, Միկէլ Յովհաննէսեան, Խաւիեր Խաչատուրեան, Օրասիո Թերզեան, Գարուիինա Խաչատուրեան, Վարուժան Քէչեան եւ Ռուբէն Սարաֆեան, հաշուեքրննիչներ՝ Սիլվանա Սաաթճեան եւ Բաֆֆի Զարուկեան:

Դեկտեմբեր 2004ին մասնաճիւղը կ'ընդունի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Գառնիկ Մկրտիչեանի այցելութիւնը:

9 Ապրիլ 2005ին մասնաճիւղի ներկայացուցիչները կը մասնակցին Շրջանային 10րդ Ներկայացուցչական ժողովին: Յուլիսին մասնա-

ճիւղի մարզիկներ մաս կը կազմեն Հարաւային Ամերիկայի պատուիրակութեան՝ մասնակցելու համաՀ.Մ.Ը.Մ.ական Դրդ խաղերուն՝ Աթէնք:

Մարզական Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի կիրարկած մարզախաղերն են, հէնտպոլ, վոլիպոլ, թենիս եւ մանկապատանեկան ֆուտպոլ, որոնց ֆետերասիոններու մրցաշարքերուն կը մասնակցին իր խումբերը: 1998ին հէնտպոլի խումբը կը տիրանայ պաշտօնական մրցաշարքի ախոյեանութեան: Մասնաճիւղը ունի նաեւ ֆուտպոլի, պասքեթպոլի, լողի, սառույցի վրայ սահանքի զանազան դասակարգի երկու սեռերու խումբեր որոնք կը գործեն Ռամոս Մեխիայի համալիրէն ներս:



Պուէնոս Այրէսի մասնաճիւղի կրտսերներու ֆուտպոլի խումբը 1999ին



Հ.Մ.Ը.Մ.ի Պուլեյնոս Այրէսի ութը տարեկան փոքրերու ֆութպոլի խումբը 1999ին

Պուլեյնոս Այրէսի մարզական խումբերը իւրաքանչիւր տարի մասնակցած են Հարաւային Ամերիկայի միջմասնաճիւղային խաղերուն, որոնք տեղի կ'ունենան յաջորդաբար զանազան մասնաճիւղերու կազմակերպութեամբ եւ նախաձեռնութեամբ Շրջանային Վարչութեան:

Մասնաճիւղի յաջորդական վարչութիւններու կազմակերպութեամբ տեղի կ'ունենան Պուլեյնոս Այրէսի հայ վարժարաններու նախակրթարաններու եւ երկրորդական կարգերու կամ միայն երկրորդական կարգերու մարզական խումբերու միջեւ մրցաշարքեր, որոնք կ'երկարին ամիսներու վրայ, մասնակցութեամբ աւելի քան 1000 աշակերտներու եւ կ'եզրափակուին փակման հանդիսութիւններով: Այս նպատակով 2004էն սկսեալ մասնաճիւղի վար-

չութեան եւ հայկական վարժարաններու տնօրէնութիւններու գործակցութեամբ կը հիմնուի «Հ.Մ.Ը.Մ.ի Հայկական Մարզական Միջ-Դպրոցական Լիկա» ն (LIDAH):

Սկաուտական գործունէութիւն

Մասնաճիւղի սկաուտական շարժումը կը կրէ «Արարատ» անունը: Միաւորի զանազան բաժինները կը կազմակերպեն իրենց տարեկան ընդհանուր բանակումները, կը մասնակցին միջմասնաճիւղային բանակումներուն: 1992ի Յունուարին 18 սկաուտներ կը մասնակցին ամերիկեան ցամաքամասի գիւտի 500ամեակին նուիրուած միջազգային ճէմպորիին Պրազիլի մէջ:

1994ին, 1998ին, 2002ին եւ 2006ին Հարաւային Ամերիկայի Շրջանի պատուիրակութիւններուն մաս կազմելով՝ մասնաճիւղէն արիներ եւ արեւոյշներ մասնակցած են համաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ 6րդ 7րդ եւ 8րդ ընդհանուր բանակումներուն, Հայաստանի մէջ: Նոյնպէս, խմբապետական կազմէն անդամներ մասնակցած են ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումարներուն:

Ընկերային, ազգային –
հրապարակային գործունէութիւն

Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ազգային աւանդական նախաձեռնութիւններէն է Հայկական Եղեռնի յիշատակութեան նուիրուած Սբ.

Պատարագը, հոգեհանգստեան արարողութիւնը, մատաղօրհնէքը եւ հոգեճաշը, որոնք կը կազմակերպուին ամէն տարի Ռամոս Մելիայի մարզադաշտին մէջ, պաշտօնական եւ ժողովրդական մեծաթիւ մասնակիցներով: Նոյնպէս, մասնաճիւղը իւրաքանչիւր տարի Մայիսին նշած է Արժանթինի եւ Հայաստանի անկախութեան եւ Սեպտեմբերին Հայաստանի վերանկախացման տօները, խորովածի ճաշկերոյթ-խրախճանքներով:

1993ին, Պուէնոս Այրէսի մասնաճիւղի եւ Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Ռամոս Մելիայի դաշտին վրայ պաշտօնական ճաշկերոյթով տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակի տօնակատարութիւն: Հանդիսութեան



Մոնթեվիտէոյի արեւոյշներու տողանցքը Երեւանի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակի տօնակատարութեան առիթով

Հ.Մ.Ը.Մ.

ՄԵՐ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՐՔԸ ԿԸ ՄԱՏՈՒՑԱՆԵՆՔ
 ՄԵՐ ՄԷԿՈՒԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ՝
 ՋՈՀ ԹՈՒՐՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ:
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ:

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆՔ ՀԱՅ
 ԺՈՂՈՂՈՒՐԴԻ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ՀԱՄԱՐ:

Esteban	ADJEMIAN y Flia.	Gregorio	KHACHADOURIAN y Flia.
Abraham	AHARONIAN y Flia.	Gregorio	KHASSERDJIAN y Flia.
Sergio	AKRABIAN y Flia.	Eduardo	KHATCHERIAN y Flia.
Carlos	AKRABIAN y Flia.	Ruben	KODJAIAN y Flia.
Juan	ALACAHAN y Flia.	Juan G.	KOUTNOUYAN y Flia.
Martín J.C.	APOCHIAN y Flia.	Norberto	KOUYOUMDJIAN y Flia.
Manuel	ARSLANIAN y Flia.	Avak A.	KRIKORIAN y Flia.
Movses	ASVANIAN y Flia.	Nicolás	KUYUMDJIAN y Flia.
Barkev	BARSAMIAN y Flia.	Aldo A.	LEONIAN y Flia.
Henry	BAZARIAN y Flia.	Alberto	MARCARIAN y Flia.
Raúl	BEDIKIAN	Carlos	MARCARIAN y Flia.
Carlos J.	BERBERIAN y Flia.	Jorge J.	MIRIDJIAN y Flia.
Marcar	BOGIAZIAN y Flia.	Juan	MIRIDJIAN y Sra.
Vahram	CITCIOGLU y Flia.	Adom	MORDJIKIAN y Flia.
Jorge	DAGHLIAN y Flia.	Mario	NALPATIAN y Flia.
Mesrob	DERMESROPIAN y Flia.	Arturo	OHANESSIAN y Flia.
Carlos	DERSTEPANIAN y Flia.	Sergio	OHANESSIAN y Flia.
Esteban	DIRADOURIAN y Sra.	Ricardo H.	PAPAZIAN y Flia.
Armando	DIRADOURIAN y Flia.	Carlos	POTIKIAN y Flia.
Esteban E.C.	DIRADOURIAN y Flia.	Bedrós	RIZIAN y Sra.
Kevork	DOKMETJIAN y Flia.	Gregorio	SAMANDJIAN y Flia.
Alberto	DONIGUIAN y Flia.	Jorge	SARAFIAN y Flia.
Antranik	GUENKIAN y Flia.	José	SIMPATIAN y Flia.
Ricardo	GUENKIAN y Flia.	Tigran	TER AKOPIAN y Flia.
Antonio	GULEDJIAN y Flia.	Arsen	TERZIAN y Flia.
Abraham	HAIRABETIAN y Flia.	Harutiun	TORKOMIAN y Flia.
Carlos	HANESSIAN y Flia.	Nubar	TOSSOUNIAN y Flia.
Esteban C.	KAPLANIAN y Flia.	Daniel	VANESKEHEIAN y Flia.
Gureg	KARAKASIAN y Flia.	Vagharshag	VARTERIAN y Flia.
Kevork	KARAMANUKIAN y Flia.	Minas	VERTANESSIAN y Flia.
Berc	KARCAYAN y Flia.	Varoujan	YAGHDJIAN y Flia.
Missak	KAYAYAN y Flia.	Haik	YAMKOCHIAN y Flia.
Harutiun	KEDERIAN y Flia.	Adolfo	ZAKIAN y Flia.
Hrach	KETCHIAN y Flia.	Harutiun	ZAROUKIAN y Flia.

85° ANIVERSARIO DEL PRIMER GENOCIDIO DEL SIGLO XX

RENDIMOS HOMENAJE A LA MEMORIA DE NUESTROS MARTIRES

MASACRADOS POR EL ESTADO TURCO

EXIGIMOS JUSTICIA PARA EL PUEBLO ARMENIO

1915 - 24 DE ABRIL - 2000

BUENOS AIRES - ARGENTINA



COMITÉ GENERAL ARGENTINO DE RESCATE ARMENIO

BUENOS AIRES



COMITÉ ARGENTINO A LOS MARTIRES

BUENOS AIRES

Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի անունով Հայկական Ցեղասպանութեան
 85ամեակի յիշատակին և նուիրում յուշատախտակ՝
 գետեղում Ռամոն Մեխիայի մարզական համալիրի մուտքին

պաշտօնական բաժինով խօսք կ'առնեն Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամ Արթուրո Յովհաննէսեան, Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Գէորգ Գարամանուկեան եւ Պուլէնոս Այրէսի մասնաճիւղի ատենապետ Ստեփան Գափլանեան: Այս առթիւ յուշամետալներ կը յանձնուին Պուլէնոս Այրէսի, Գորտոպայի եւ Մոնթէվիտէոյի վեթերան անդամներու: Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով կը պարգեւատրուին Ժորժ Տաղլեան եւ Պարգեւ Պարսամեան- [Ծ/142.62]:

առիթներ են անդամներու եւ համակիրներու կողմէ եւ օգտակար՝ վարչութեան գանձին:

1992ի ընթացքին Ռամոս Մելիսայի կեդրոնին մէջ վարչութիւնը ընդունած է այցելութիւնը Լէյտի Գարոլայն Քոքսի, ճատրակի միջազգային ախոյեան Կէրի Գասպարովի, Հայաստանի Հանրապետութեան նախարարներ՝ Ռաֆֆի Յովհաննէսեանի եւ Արմէն Դարբինեանի:

1996ին մասնաճիւղը կ'ընդունի Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելութիւնը: 17 Դեկտեմբեր 1997ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 70ամեակը:



Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի «Տեքորթիօ Արմէնիօ» անունով ծանօթ ֆութպոլի կազմը. ոտքի՝ Արթին Մերտիսեան, Հերման Փանոսեան, Գլաուտիոյ Գասապեան, Միկէլ Անիէլ Անալեան, Խուան Միկէլ Գատեան, Արա Տէր Յակոբեան, մարզիչ՝ Տիէկօ Փանոսեան: Նստած՝ Արիէլ Փանոսեան, Էրնան Ստեփանեան, Մարսելօ Սիմոնեան, Կուստաօ Ծուլֆայեան, Մարթին Սեսատ, Արթիւր Զէյթունեան

23 Մայիս 2004ին Ռամոս Մեխիայի կեղրոն կ'այցելէ Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի Ռամոս Մեխիայի համալիրը Միութեան կարեւորագոյն եւ ամենակազմակերպ կեղրոններէն մէկն է իր մշտանորոգ զարգացումներով, 13 Սեպտեմբեր 2002ին, հոն բացումը կը կատարուի վարչութեան «Միրոն Լեոնեան» սրահին, իսկ 10 Յուլիս 2005ին կը կատարուի բացումը «Օհաննէս Աշարճեան» վերանորոգուած կեղրոնական սրահին:

ԳՈՐՏՈՊԱ

Կազմակերպչական, մարզական եւ սկաուտական գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի գոր-

ծունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ ամէն տարի Մայիս 1ի աշխատաւորական տօնի առթիւ հրապարակային խորովածի հաւաքոյթը, որ կը կայանայ «Անդրանիկ» ակումբին սրահին մէջ, ուր կը գտնուի ազգային հերոս Արամ Երկանեանի շիրիմը: Աւանդական այս հանդիսութիւններուն ներկայ կը գտնուին Գորտոպայի ազգային եւ միութենական աւագանին (Հ.Յ.Դ.ի Հ.Օ.Մ.ի, Հ.Մ.Ը.Մ.ի) եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Խօսք կ'առնեն վերոյիշեալ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ դրուատելով Հ.Մ.Ը.Մ.ի տարածուն գործունէութիւնը:

Մասնաճիւղի 1991 տարեշրջանի վարչութեան մաս կազմած են.-

Ատենապետ՝ Տոբթ. Սիմոն Սիմոնեան



Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի երէց աղջկանց վոլիպոլի խումբը



Գորտոպայի մասնաճիղի սկաուտական խմբապետական կազմ

Ատենադպիր՝ Միքայել Աւագեան
Գանձապահ՝ Սերխիո Փանոսեան

Խորհրդականներ՝ Լուիս Թուլթուլչեան, Ռի-
քարտո Թզազիրեան, Սամսոն Մերտինեան եւ
Արթին Մերտինեան:

Սեպտեմբեր 28-30, մասնաճիղի 70 մարզիկ-
ներ Պուլէնոս Այրէսի մէջ կը մասնակցին
միջմասնաճիղային մրցաշարքերուն: Մասնա-
ճիղը կը կազմակերպէ անիւասահնակի (patin)
դաշտի բացումը:

1992 տարուան վարչական կազմը կը մնայ
անփոփոխ, բացի Արթին Մկրտիչեանէ, որ կը
փոխարինուի Մարսելլո Թորոսեանով: Ամրան
եղանակին կը կազմակերպուին Ֆուլթպոլի
ախոյեանական խաղեր: Ընթացիկ գործունէու-
թեան տարի մը:

1993ի անդամական ընդհանուր ժողովէն

ընտրեալ վարչուիթիւնը կը ներկայանայ հետեւ-
եալ կազմով:-

Ատենապետ՝ Ռոպերթո Սուքիասեան
Ատենադպիր՝ Մարսելլո Թորոսեան
Գանձապահ՝ Դանիել Սազեան

Խորհրդականներ՝ Լուիս Թուլթուլչեան,
Սերխիո Փանոսեան, Էտուարտո Գատիմեան եւ
Հեքթոր Պալէոզեան:

Մայիս 1ին տեղի կ'ունենայ խորովածի հաւա-
քոյթը, 180 անձերու ներկայութեամբ: Մայիս
25ին կը մեծարուին վոլիպոլի խումբի մարզիկ-
ներ, որոնք կը գրաւեն Գորտոպայի ախոյեանու-
թեան Բ. դիրքը: Մասնաճիղը կը մասնակցի
Արամ Երկանեանի յիշատակին նուիրուած հրա-
պարակային ելոյթներուն: Սեպտեմբերին տեղի
կ'ունենայ սկաուտական բաժնի վերամուտի
հանդիսութիւն:



2000 տարուան Գորտոպայի մասնաճիղի սկաուտ խմբապետական կազմը մասնաճիղի ատենապետ՝ Էտուարտո Թուրուշեանի եւ Հարաւային Ամերիկայի Օրջանային Վարչութեան անդամ Ալպերթո Տօնիկեանի հետ, ձախէն երրորդը եւ վերջինը

1994 եւ 1995 տարիներու վարչական կազմին մաս կազմած են.-

Ատենապետ՝ Էտուարտո Թուրուշեան

Ատենաղպիր՝ Արթին Մերտինեան

Գանձապահ՝ Դանիէլ Սազեան

Խորհրդականներ՝ Ռոպերթօ Սուքիասեան, Լուիս Թուրուշեան, Ալպերթօ Տօնիկեան եւ Կարապետ Փեթէնեան:

1994ին երկու սկաուտներ մաս կը կազմեն Ուրուկուէյի պատուիրակութեան՝ մասնակցելու համար համաշխարհային Ճէմպորիին: 1995ին Հ.Մ.Ը.Մ-ի անդամները Ուրբաթ օրերը կ'օժանդակեն «Անդրանիկ» ակումբի ճաշարանի յանձնախումբին:

1996 տարեշրջանին վարչական կազմի անդամներն են.- Ատենապետ՝ տոքթ. Խուան Քարլոս Մերտինեան

Ատենաղպիր՝ Սերխիօ Փանոսեան

Գանձապահ՝ Դանիէլ Սազեան

Խորհրդականներ՝ Էտուարտօ Թուրուշեան, Դանիէլ Մանուկեան, Ալպերթօ Տօնիկեան եւ Լուիս Թուրուշեան:

Սեպտեմբեր 9ին կը նշանակուի Ծնողական Յանձնախումբ՝ օժանդակելու համար սկաուտական բաժնի աշխատանքներուն: Մասնաճիղի մարզիկներէն 50 անդամներէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մասնակցի Հարաւային Ամերիկայի միջմասնաճիղային խաղերուն: Կը կազմուի փաթէնի (անիւասասնակ) փոքրիկներու խումբ:

1997ի անդամական ընդհանուր ժողովէն կ'ընտրուի տարեշրջանի վարչական կազմը.-

Ատենապետ՝ Ռոպերթօ Սուքիասեան

Ատենաղպիր՝ Մարսելօ Սիմոնեան

Գանձապահ՝ Ալպերթօ Թերզեան

Խորհրդականներ՝ Դանիէլ Մանուկեան, Տիէկօ Սազեան, Էտուարտօ Թուրուշեան:

Տարեշրջանի ընթացքին մասնաճիղը կը



Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի երիտասարդականի անդամներու խմբանկար բնութեան ծոցին մէջ

կազմակերպէ վեթերան անդամներու հաւաք: Դեկտեմբերին կը կազմակերպուի մասնաճիւղի տարեկան ձեռնարկը:

1998ին, բացի Դանիէլ Մանուկեանէ եւ Դանիէլ Սագեանէ վարչական կազմը կը մնայ նոյնը: Մասնաճիւղէն 10 անդամներ կը մասնակցին համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրգ ընդհանուր բանակումին: Մասնաճիւղը կը կազմակերպէ Հարաւային Ամերիկայի Շրջանի Նաւասարդեան խաղերը, մասնակցութեամբ Պոլէնոս Այրէսի եւ Մոնթէվիտէոյի մասնաճիւղերու պատուիրակութիւններուն, եւ Շրջանային սկաուտական բանակում՝ 200 սկաուտներու մասնակցութեամբ:

1999ի վարչական կազմի անդամներն են.- Ատենապետ՝ Էտուարտո Թուլթուչեան
Փոխ ատենապետ՝ Մարսելո Թորոսեան
Ատենադպիր՝ Մարսելո Սիմոնեան

Գանձապահ՝ Արիէլ Փանոսեան
Խորհրդականներ՝ Տիէկո Սագեան, Դանիէլ Մանուկեան, Ռոպերթո Սուքիասեան:

Մասնաճիւղէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Համահայկական Ա. Խաղերուն, Երեւանի մէջ:

2000 տարուան վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի Ռոպերթո Սուքիասեանէն եւ Մարսելո Սիմոնեանէն, որ կը փոխարինուի Սուսանա Վրզվրզեանով, իսկ գանձապահի պաշտօնը կը ստանձնէ Անթոնիո Մանկուէլոզէ:

2000ին մասնաճիւղէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Շրջանային ընդհանուր բանակումին Պարիլոչէի մէջ: Մասնաճիւղը կը կազմակերպէ Շրջանային Նաւասարդեան խաղերը: Ապրիլի վերջաւորութեան կ'ընդունի Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Բիւզանդ Թո-

րիկեանի այցելութիւնը: 14 Յուլիսին 15 նորագիր գայլիկ-արծուիկներ իրենց խոստովմը կուտան միանալով սկաուտական շարքերուն:

2001 տարեշրջանին վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Ալպերթո Տօնիկեան

Փոխ ատենապետ՝ Մարսելօ Թորոսեան

Ատենադպրուհի՝ Սոլսանա Վրզվրգեան

Գանձապահ՝ Անթոնիօ Մանկուէլոզէ

Խորհրդականներ՝ Արիէլ Փանոսեան, Էտուարտօ Թուլթուշեան եւ Տիէկօ Սագեան:

Յէն 13 Յունուար 2001ին էլենայի անտառին մէջ մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան բանակումը, մասնակցութեամբ 62 սկաուտներու —[Ծ/228.34]:

2001ին մասնաճիւղի ներկայացուցիչները կը մասնակցին Հարաւային Ամերիկայի Շրջանային Ներկայացուցչական Ժողովին: Երկու մարզիկներ կը մասնակցին Համահայկական Բ. Խաղերուն Երեւանի մէջ, հինգ մարզիկներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական ճրգ խաղերուն Պէյրութի մէջ: Շրջանային Նաւասարդեան խա-

ղերը տեղի կ'ունենան Գորտոպայի մէջ, մասնակցութեամբ 260 մարզիկներու, որոնք կը ներկայացնեն Պուէնոս Այրէսի, Մոնթեվիտէոյի տեղւոյն մասնաճիւղերը եւ Պրագիլէն հիւրաբար հրաւիրուած «Սամա» ակումբին մարզիկները:

2002 տարուան վարչական կազմը կը մնայ նոյնը, բացի Դանիէլ Մանուկեանէն, որ կը փոխարինուի Էտուարտօ Թուլթուշեանով: Պաշտօնական հանդիսութեամբ մասնաճիւղը բացումը կը կատարէ «Վարդգէս Տէր Կարապետեան» ժողովասրահին, ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան անդամ Աբրահամ Ահարոնեանի, Հարաւային Ամերիկայի Շրջանային եւ Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեանց ներկայացուցիչներուն: Ժողովասրահի օրհնութեան արարողութիւնը կը կատարէ Աւետիս քհնյ. Թորոսեան—[Ծ/247.29]: Մասնաճիւղէն պատուիրակութիւն մը կը մասնակցի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի 75ամեակին նուիրուած Նաւասարդեան խաղերուն:



Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեվիտէոյի 1999 տարուան վարչական կազմը Կեդրոնական Վարչութեան անդամներ Բիւզանդ Թորիկեանի եւ Աբրահամ Ահարոնեանի հետ (Աստած՝ ձախէն երկրորդ եւ երրորդ)

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ - ՄՈՆԹԵՎԻՏԵՕ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ
ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐ

1988ի Հարաւային Ամերիկայի Շրջանային կառոյցի ստեղծումէն սկսեալ, Մոնթեվիտէոյի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը աւելի հաստատ հիմերու վրայ կը զարգացնէ իր կազմակերպչական գործունէութիւնը: Տարեկան հերթականութեամբ, իրերայաջորդ վարչական կազմեր մասնաճիւղի սկաուտական եւ մարզական գործունէութիւնները կը զարգացնեն «Վուամեան» ակումբէն ներս եւ յարակից մարզադաշտերուն վրայ:

Մասնաճիւղի գործունէութեան գլխաւոր

առանցքը կը կազմեն սկաուտական «Կամք» խումբի աշխոյժ ելոյթները, շաբաթական հերթական հաւաքոյթներ, արշաւներ եւ բանակումներ:

Մասնաճիւղի ներկայացուցիչներ կը մասնակցին Հարաւային Ամերիկայի Շրջանային Ներկայացուցչական Ժողովներուն: Մարզական խումբեր տարեկան հերթականութեամբ կը մասնակցին միջմասնաճիւղային Նաւասարդեան մրցաշարքերու եւ սկաուտական խումբեր՝ միջմասնաճիւղային բանակումներու:

Սեպտեմբեր 1993ին մասնաճիւղը կը ստանձնէ միջմասնաճիւղային խաղերու կազմակերպումը Մոնթեվիտէոյի մէջ:

Սկաուտական խումբէն պատուիրակութիւն-



Մոնթեվիտէոյի մասնաճիւղի կրտսերներու միացի ֆութպոլի խումբը



Մոնթեվիտեոյի արեւոյշները
բանակուսմի ընթացքին

ներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումներուն, յաջորդաբար 1994ին, 1998ին, 2002ին եւ 2006ին Հայաստանի մէջ:

2000-2001 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին.-

- Ատենապետ՝ Մելքոն Սանթուրեան
- Փոխ ատենապետ՝ Սարգիս Բազլայեան
- Ատենադպիր՝ Ատրիանա Ռաֆայէլեան
- Փոխ ատենադպիր՝ Պէաթրիս Պատանեան
- Գանձապահ՝ Ալիսիա Կըրկրեան
- Փոխ գանձապահ՝ Յարութ Յակոբեան
- Խորհրդականներ՝ Արմանտո Թորոսեան եւ Գաբրիէլ Դանիէլեան:

Մասնաճիւղի շինարարական ծրագիրներէն է «Վռամեան» ակումբի կից մարզադաշտերու նորոգութիւնը եւ արդիական սարքաւորումներով կազմակերպումը:

ՊՐԱԶԻԼ

ՍԱՆ ՓԱՌԲԼՕ

1991էն շարունակաբար, եւ համաձայն նախորդող տարիներու աւանդութեան, Պրազիլի Սան Փաուլօ քաղաքին մէջ «Բլիւպ Արմենիօ»

անունով ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարակից ՍԱՄԱ Հայ Մարզական ակումբը կը փոխարինէ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին գործունէութիւնը:

1993ին ՍԱՄԱյի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Պերճ Քարթալեան: ՍԱՄԱն կը կիրարկէ հետեւեալ մարզաճիւղերը. Ֆութպոլ, պասքեթպոլ, վոլիպոլ, հէնտպոլ, թենիս, փինկ փոնկ եւ ճատրակ, տղոց եւ աղջկանց զոյգ բաժիններով: Այս խումբերը տարիքային զանազան դասակարգի բաժանումներով կը մասնակցին տեղւոյ Ֆետերասիոններու ախոյեանութեանց մրցաշարքերուն:

ՍԱՄԱՆ ունի շատ արդիական կազմածներով կահաւորուած ակումբ եւ ընկերային կենաք, ուր կը ժամադրուին քաղաքի հայերը նարտիի եւ հաւաքական այլ զբաղումներու առիթներով:

11 Հոկտեմբեր 2001էն սկսեալ ՍԱՄԱյի մարզական խումբերը կը մասնակցին Հարաւային Ամերիկայի շրջանի միջմասնաճիւղային Նաւասարդեան խաղերուն: 21էն 25 Յուլիս 2004ին, ՍԱՄԱն կը կազմակերպէ եւ կը հիւրընկալէ Հարաւային Ամերիկայի Նաւասարդեան Զրդ խաղերը, մեծ խանդավառութիւն ստեղծելով տեղւոյն հայ հաւաքականութեան եւ պաշտօնական շրջանակներուն մօտ- [Ծ/265.19]:

2004ին ՍԱՄԱյի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Լեւոն Եզէկէլեան Նեթօ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի անդրանիկ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան աւարտին, 7 եւ 8 Ապրիլ 1990ին Շրջանային Բ. Ներկայացուցչական Ժողովը կ'ընտրէ նոր Շրջանային Վարչութիւն.-

- Ատենապետ՝ Աբրահամ Ահարոնեան
- Քարտուղար՝ Գէորգ Գարամանուկեան
- Գանձապահ՝ Քարլոս Պոզօլլեան

Խորհրդականներ՝ Յարութիւն Զարուկեան, Ռուբէն Գոճայեան, Կրեկորիո Գասպարեան, Ռոպերթօ Սուքիասեան եւ Ալպերթօ Հալլաճեան:


Կազմը կ'իրականացնէ Հարաւային Ամերիկայի միջ մասնաճիւղային տարեկան մրցաշարքը Պուէնոս Այրէսի մէջ:

Շրջանային Գ. ներկայացուցչական ժողովը, 7 Յունիս 1992 ին կ'ընտրէ նոր Շրջանային Վարչութիւն, ատենապետ՝ Յարութիւն Զարուկեան, քարտուղար՝ Գէորգ Գարամանուկեան, փոխ քարտուղար՝ Լուիս Կոստանեան, գանձապահ՝ Տանիէլ Սապագոտանեան, խորհրդականներ՝ Արմանտօ Թորգոմեան, Կրեկորիո Գասպարեան եւ

Արթին Մերտինեան:

Այս կազմի նախաձեռնութիւններէն պիտի ըլլար, 1992ի Դեկտեմբերին, Պրագիլի Սան Փաուլօ քաղաքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը կազմութիւնը, որ մէկ տարուան կեանք միայն կ'ունենայ: 1992ի եւ 1993ի միջ մասնաճիւղային մրցաշարքերը եւ 1994 Յունուարի միջմասնաճիւղային բանակումը տեղի կ'ունենան յաջորդաբար Գորտոպայի, Մոնթէվիտօյի եւ Սանթա Թերասայի մէջ:

25 Յունիս 1994ին տեղի կ'ունենայ Հարաւային Ամերիկայի Շրջանային Ներկայացուցչական Գ. ժողովը, մասնակցութեամբ Պուէնոս Այ-



Պուէնոս Այրէսի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակին նուիրուած, Արժանթինի փոսթ-հեռագրական նախարարութեան հրատարակած կնիքը 2002ին

րէսի, Գորտոպայի եւ Մոնթէվիտէոյի մասնաճիւղերու ներկայացուցիչներուն: Մասնաճիւղերու եւ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան քննարկումէն ետք 1994-96 երկամեակի գործունէութեան համար կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութեան կազմ, որուն կ'անդամակցին ատենապետութեամբ՝ Գէորգ Գարամանուկեանի, Աբրահամ Ահարոնեան, Յարութիւն Զարուկեան, Լուիս Կոստանեան, Արմանտո Թորգոմեան եւ Արթին Մերտինեան – [Ծ/151.34]:

25 եւ 26 Նոյեմբեր 1995ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի 5րդ Շրջանային ներկայացուցչական ժողովը 1996-1998 երկամեակի գործունէութեան համար կ'ընտրէ Շրջանային նոր Վարչութեան կազմ, որուն անդամներն են՝ ատենապետութեամբ՝ Արթուրո Յովհաննէսեանի, Գէորգ Գարամանուկեան, Փետրո Թադէոսեան, Յարութիւն Զարուկեան, Լուիս Կոստանեան, Կրեկորիո Խաչատուրեան եւ Ալպերթո Տօնիկեան:

Շրջանը նոր թափով կը սկսի մարզական եւ սկաուտական գործունէութեան: Կը կազմակերպուին միջմասնաճիւղային բանակում, Շրջանի «Նաւասարդեան» անուանումով Ա. միջմասնաճիւղային խաղեր եւ վեթերաններու մարզական հանդիպումներ: Արժանթինի հէնտպոլի ազգային խումբին կը մասնակցին երեք Հ.Մ.Ը.Մ.ականներ: Հ.Մ.Ը.Մ.ական Դաւիթ Նալպանտեան կը տիրանայ Ամերիկայի Մ. Նահանգներու թենիսի կրտսերներու մրցաշարքի ախոյեանութեան, իսկ Ասդրիտ Կիւլէսերեան մաս կը կազմէ Արժանթինի հաւաքականին, որ կը տիրանայ կոլֆի կրտսերներու աշխարհի մրցաշարքի ախոյեանութեան – [Ծ/203.5]: Մարտ 1997ին, կազմէն Փետրո Թադէոսեան կը մասնակցի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած միջ դիւանային խորհրդաժողովին:

30 Նոյեմբեր 1997ին կ'ընտրուի նոր Շրջանային Վարչութիւն, ատենապետութեամբ Աբրահամ Ահարոնեանի: Կազմին կ'անդամակցին էտ-

ուարտո Խաչերեան, Արթուրո Յովհաննէսեան, Յարութիւն Զարուկեան, Կրեկորիո Խաչատուրեան, Խուան Գուլթնուեան, Լուիս Կոստանեան, Փետրո Թադէոսեան, Ալպերթո Տօնիկեան, Նշան Քէօրօղլեան եւ Ալետիս Պատանեան: 1998ին Շրջանը ներկայացնող 51 սկաուտներ կը մասնակցին ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ ընդհանուր բանակումին՝ Հայաստան:

1999ի Ապրիլին Շրջանի պատգամաւորներ Աբրահամ Ահարոնեան, Ստեփան Գափլանեան եւ Արմանտո Թորգոմեան կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին: 1999ին Հարաւային Ամերիկայի շրջանի անդամական ընդհանուր թիւն է 1087:

9էն 11 Հոկտեմբեր 1999ին, Պուէնոս Այրէսի Ռամոս Մելիայի համալիրին մէջ տեղի կ'ունենան Շրջանի Դ. Նաւասարդեան խաղերը, մասնակցութեամբ 300 մարզիկներու, որոնք կը ներկայացնեն Պուէնոս Այրէսի, Գորտոպայի եւ Մոնթէվիտէոյի մասնաճիւղերը - [Ծ/210.13]:

15էն 26 Յունուար 2000ին Լանին լերան լանջին կայացաւ Հարաւային Ամերիկայի միջմասնաճիւղային հինգերորդ ընդհանուր բանակումը, մասնակցութեամբ Մոնթէվիտէոյի «Կամք», Գորտոպայի «Արագած» եւ Պուէնոս Այրէսի «Արարատ» խումբերէն 120 սկաուտներու: Բանակումի ընդհանուր խմբապետն է Փապլո Քէօշկէրեան: Բանակումի տասնօրեայ յայտագիրը գործադրուեցաւ յաջողութեամբ եւ փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 25 Յունուարին. [Ծ/215.34]:

2000-2001 երկամեակին Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Ստեփան Գափլանեան, ատենադրպիր՝ Անահիտ Զաքարեան, գանձապահ՝ Քարլոս Տէր Ստեփանեան, խորհրդականներ՝ Մելքոն Սանդուրեան եւ Եղուարդ Մինասեան:

30 Ապրիլ 2000ին Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը Հայկական Յեղասպանութեան 85ամեակը նշեց յա-

տուկ հանդիսութեամբ. այս առթիւ Ռամոս Մեխայի համալիրի գլխաւոր մուտքին զետեղուեցաւ 85ամեակի յուշատախտակ, ապա սրահին մէջ Սբ. Պատարագ եւ հոգեհանգիստ կատարուեցաւ Յեղասպանութեան զոհերուն յիշատակին եւ փակ մարզադաշտին մէջ մատաղի պաշտօնական ճաշկերոյթ: Այս առթիւ 85ամեակի պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Բիւզանդ Թորիկեան, որ 28 Ապրիլէն 3 Մայիսի ժամանակամիջոցին այցելեց Շրջանի երեք մասնաճիւղերը - [Ծ/219.19]:

22 եւ 23 Յուլիս 2000ին Շրջանային վարչութիւնը կը կազմակերպէ միջվարչական սեմինար- [Ծ/219.19] եւ 5 Օգոստոսին միջդիւանային ժողով:

14էն 16 Հոկտեմբեր 2000ին Մոնթէվիտէոյի մէջ կը կազմակերպուին Հարաւային Ամերիկայի Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Նաւասարդեան խաղերը, մասնակցութեամբ երեք մասնաճիւղերու Ֆուտպոլի, վոլիպոլի եւ հէնտպոլի ներկայացուցչական խումբերուն: Խաղերը տեղի կ'ունենան «Վռամեան» ակումբի վերանորոգուած մարզադաշտին վրայ: Եւօրեայ մրցումներու աւարտին Մոնթէվիտէոյի մասնաճիւղը կը յայտարարուի 5րդ Նաւասարդեան խաղերու ախոյեան - [Ծ/224.32]:

2001ի Օգոստոս 11էն 16ին Շրջանը մասնակցեցաւ ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ խաղերուն, Ֆուտպոլի եւ աթլետիզմի խումբերով, Պէյրուի մէջ, իսկ 18էն 26ին համահայկական Բ. խաղերուն, Ֆուտպոլի եւ վոլիպոլի խումբերով, Երեւանի մէջ: Հոկտեմբեր 2001ին Շրջանը կը կազմակերպէ իր 6րդ Նաւասարդեան խաղերը: Գորտոպայի «Անդրանիկ» ակումբի դաշտին վրայ, մինի ֆուտպոլի, վոլիպոլի, պասքեթպոլի, թենիսի եւ փինկփոնկի մրցաշարքերուն կը մասնակցին Պուէնոս Այրէսի, Մոնթէվիտէոյի, Սան Փաուլոյի եւ Գորտոպայի մասնաճիւղերէն 200 մարզիկներ: Տեղի կ'ունենան բացման եւ փակ-

ման հանդիսութիւններ, ճաշկերոյթ-պարահանդէս: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ Աբրահամ Ահարոնեան մարզիկներուն ուղղած իր պատգամին մէջ կ'ըսէ. «Դուք լծուած էք հայ ժողովուրդի ծառայութեան: Ունիք նուիրակա՞ն պարտականութիւն մը, զգացում մը, նշանաբան մը որ Հ.Մ.Ը.Մ.ի ձեր պատկանելիութիւնն է «Բարձրացիր-Բարձրացուր»ի հաւատարմութեամբ» - [Ծ/237.24]:

2003 եւ 2004 տարիներու գործունէութեան համար Հարաւային Ամերիկայի Շրջանային ներկայացուցչական ժողովին կողմէ ընտրուած շրջանային վարչութեան մաս կը կազմեն՝ ատենապետ՝ Ստեփան Գափլանեան, ատենադպիր՝ Խորիսէ Գարամանուկեան, գանձապահ՝ Գարլոս Տէր Ստեփանեան, խորհրդականներ՝ Յարութիւն Զարուկեան, Նորպերթօ Գուլյումճեան, Արսէն Տէրտէրեան եւ Էտուարտօ Մինասեան:

10 էն 12 Հոկտեմբեր 2003ին տեղի կ'ունենան 8րդ Նաւասարդեան խաղերը, որոնց կը մասնակցի նաեւ Սան Փաուլոյի «Սամա» ակումբը:

24 Նոյեմբերէն 6 Դեկտեմբեր 2004, Շրջանը կ'այցելէ Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Գառնիկ Մկրտիչեան: 24-28 Նոյեմբերին Գորտոպայի մասնաճիւղի հիմնադրութեան 25ամեակին առթիւ, Շրջանային վարչութեան գործակցութեամբ, կը կազմակերպուի ֆուտպոլի մրցաշարք, մասնակցութեամբ Պուէնոս Այրէսի եւ Գորտոպայի մասնաճիւղերու, Սան Փաուլոյի «Սամա» ակումբի եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի խումբերուն:

10 Ապրիլ 2005ին կ'ընտրուի նոր Շրջանային վարչութիւն՝ ատենապետութեամբ Խորիսէ Գարամանուկեանի, կազմին կ'անդամակցին Էտուարտօ Խաչերեան, Յարութիւն Զարուկեան, Տանիէլ Ճիւլիանի, Յակոբ Յակոբեան, Էտուարտօ Թիւթիւնճեան եւ Գարլոս Տէր Ստեփանեան:

Շրջանի 10րդ Նալասարդեան խաղերէն ետք, Յուլիսին, Աթէնքի մէջ Շրջանը ներկայացնող 30 մարզիկներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ խաղերուն:

1991էն 2005 իւրաքանչիւր տարի մասնաճիւղերու սկաուտական միաւորներու մասնակցութեամբ, յաջորդական Շրջանային Վարչութիւն-

ները կազմակերպած են միջմասնաճիւղային բանակումներ:

1998էն սկսեալ Պուէնոս Այրէսի եւ Գորտոպայի մասնաճիւղերու երիտասարդական բաժիններու նախաձեռնութեամբ կը հրատարակուի սպաներէն լեզուով «Հ.Մ.Ը.Մ.ի Ձայն» 10 էջերէ բաղկացող ամսաթերթը:



1.- Հ.Մ.Ը.Մ.ի Պուլճոս Այրէսի մասնաճիւղի ֆութպոլի կրտսերներու խումբը 2.- Գորտոպայի Հ.Մ.Ը.Մ.ի 2001 տարուան ֆութպոլի խումբը 3.-Գորտոպայի մասնաճիւղի պասքէթպոլի կրտսերներու խումբը 4.- Սան Փաուլոյի ՍԱՄԱ ակումբի 2001 տարուան ֆութպոլի խումբը 5.- Վոլիպոլի տղոց խումբը 6.- Վոլիպոլի աղջկանց խումբը 7.- Գորտոպայի Հ.Մ.Ը.Մ.ի հեռնտպոլի աղջկանց 2001ի կազմը:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

- ՍՈՖԻԱ
- ՓԼՈՎՏԻՎ
- ՌՈՒՍԷ
- ՎԱՌՆԱ
- ՇՈՒՄԷՆ
- ՊՈՒՐԿԱԶ
- ՏՈՊՐԻԶ
- ՄԱՍՆԱԾԻԻՂԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՇՐՋԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ



Սիլիսթրա Տօպրիշ

Դրսէս

Շուսէն

Վանոնա

Պուրկաս

Սօֆիա

փլոպտիլ



Համաշխարհային Բ. ընդհանուր պատերազմի ժամանակաշրջանին (1939-1945), Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութիւնը հետզհետէ կը տկարանայ: 1944ին, երկրի իշխանութեան համայնավար վարչակարգին փոխանցուելուն պատճառով, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը, ինչպէս գաղութին հայկական բոլոր կառույցները, ճնշումի կ'ենթարկուին: Բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ կ'աքսորուին իրենց ազգային գաղափարական համոզումներուն պատճառով: Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գոյքերը կը բռնագրաւուին, ահումբները կը փակուին եւ Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ կազմակերպութիւն կը դադրի շնչելէ, իր գոյութիւնը պահելով գաղափարապաշտ Հ.Մ.Ը.Մ.ականներու հոգիներէն ներս, ամբողջ 50 տարիներ:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, հետզհետէ կեանքի կը կոչուին Պուլկարիոյ գանազան շրջաններու մասնաճիւղերը՝ հետեւեալ կարգով.- 1991ին՝ Սոփիա, Փլովտիվ, Ռուսէ եւ Վառնա, 1997ին՝ Շումէն, 1998ին՝ Պուրկազ եւ 1999ին՝ Տոպրիչ:

ՍՈՖԻԱ

27 Մարտ 1991ին, Սոփիայի Հայկական Տան մէջ հաւաքուած 46 նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ վերակազմուած կը յայտարարեն 1944էն ի վեր դադրեցուած Սոփիայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը եւ կ'ընտրեն վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Ֆիլիպ Չաքրրեան
- Փոխ ատենապետ՝ Կարօ Դաւիթեան
- Ատենադպրուհի՝ Արմենուհի Թազուրեան
- Գանձապահ՝ Օննիկ Քիւչիւքեան
- Սկաուտ խմբապետ՝ Նուպար Քերէստէճեան
- Մարզական պատասխանատու՝ Գառնիկ Թադէոսեան

Խորհրդականներ՝ Սրապ Աստուածատուրեան, Վասքօ Վասիլեան եւ Արման Քիրազեան:

Յուլիս 9ին, վերոյիշեալ կազմին մէջ փոփոխութեանց արդիւնքով ատենապետութեան պաշտօնը կը ստանձնէ Խորէն Քիրազեան, իսկ

վարչական կազմի մասնակցութեան կը հրաւիրուին Ստեփան Աժտէրեան իբրեւ ատենադպիր եւ Ժիրայր Վարդերեան: Ֆիլիպ Չաքրրեան իբրեւ քննիչ յանձնախումբի անդամ կը գործակցի վարչութեան:

20 Յուլիս 1991 թուակիր նամակով եւ փրոֆէսէօր Պողիկ Մեսրոպի ստորագրութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սոփիայի մասնաճիւղի վերականգնումի աքթը պաշտօնապէս կը տեղեկացուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Կեդրոնական Վարչութիւնը վաւերացնելէ ետք Սոփիայի մասնաճիւղի անդամակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կառույցին, յաջորդաբար Պուլկարիա կը գործուղէ իր ներկայացուցիչները՝ Յովհաննէս Տէր Յարութիւնեան եւ Միհրան Շիմչիրեան: Կեդրոնական Վարչութեան նիւթական նպաստներով կը տարազաւորուին Սոփիայի մասնաճիւղի սկաուտական շարքերուն անդամները: Այս աշխատանքին իր կարեւոր օժանդակութիւնը կը բերէ տեղւոյն ՀՕՄի մասնաճիւղը:

Սկաուտական նորակազմ խումբը 1992ին պաշտօնապէս իր մասնակցութիւնը կը բերէ Ապրիլ 24ի եւ Մայիս 28ի նշումներուն: 31 Մայիս 1992ին, Սուրբ Պատարագի աւարտին, Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ բակին մէջ տեղի կ'ունենայ խոստման հանդիսաւոր արարողութիւն: Տարուան ընթացքին խումբը կը կազմակերպէ զոյգ բանակումներ՝ Յուլիս 2էն 12 Պոյքովոյի մէջ եւ Օգոստոսին՝ Վիտոշ լեռան «Պելիթէ Պրէզի» հանգստատան մէջ:

12 Մայիս 1992 թուակիր թիւ 6207 հաստատագրով Սոփիայի քաղաքային դատարանը պետական ճանաչում կը շնորհէ մասնաճիւղին:

20 Նոյեմբեր 1992ին տեղի կ'ունենայ մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը, որու կողմէ ընտրուած նորակազմ վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Խորէն Քիրազեան, փոխ ատենապետ՝ Կարօ Դաւիթեան, ատենադպրուհի՝ Անի Աճէմեան, գանձապահ՝ Օննիկ Քիւչիւքեան, մարզական պատասխանատու՝ Գառնիկ Թադէոսեան, սկաուտ աւագ խմբա-



Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ միջմասնաճիւղային բանակում Պոռովէցի մէջ, 25 Յուլիսէն 5 Օգոստոս 1996, մասնակցութեամբ Վառնայի, Ռուսէի, Շումէնի, Պուրկազի եւ Սոֆիայի մասնաճիւղերու սկաուտներուն

պետ՝ Եղուարդ Բարսեղեան, սկաուտ խմբապետ՝ Խաչիկ Համբերեան, խորհրդականներ՝ Տիրան Մսրրլեան, Աստիկ Եաղճեան, Խաչիկ Մարտիրոսեան եւ Պօղոս Մարաչլեան:

Այս կազմը կը գործէ մինչեւ 1994ի Մարտ ամիսը: 15ամսեայ ժամանակաշրջանին մասնաճիւղը յաջորդաբար Վարդանանցի, Ապրիլ 24ի, Մայիս 28ի, Խանասորի արշաւանքի եւ Վարդավառի հանդիսութիւններէն ետք, 20 Նոյեմբեր 1993ին տօնեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը, գլխաւոր պատգամաբեր՝ Յովսէփ Պարազեան՝ Յունաստանէն:

16-26 Յուլիսին սկաուտական պատուիրակութիւն մը մասնակցեցաւ Յունաստանի միջմասնաճիւղային 4րդ բանակումին: 21էն 29

Օգոստոսին տեղի ունեցաւ խմբապետական բանակում, մասնակցութեամբ Վառնայի, Ռուսէի եւ Փլովտիվի խմբապետներու: Այս բանակումի մասնակցութեան համար Կեդրոնական Վարչութիւնը գործուղեց խմբապետներ՝ Կարպիս Գապասագալեանը եւ Հրայր Մարգարեանը:

25 Փետրուար 1994ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով, մասնակցութեամբ 62 անդամներու: 1992 եւ 1993 տարիներու վարչութեան նիւթաբարոյական գործունէութեան զեկուցումէն ետք ներկաները առաջարկներ ներկայացուցին 1994ի գործունէութեան համար եւ ժողովի վերջին օրակարգով ընտրուեցաւ նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Խորեն Քիրազեան, ատենապիր՝ Աստիկ Եաղճեան, գանձապահ՝ Զարուհի Շահինեան, խորհրդականներ՝ Գառնիկ Թադէոսեան, Եղուարդ Բարսեղեան, Խաչիկ Համբերեան, Տիրան Մսրրլեան, Խաչիկ Մարտիրոսեան, Ենովք Մաքսուտեան:

Այս կազմը աւանդական հրապարակային ձեռնարկներու շարքին կարեւոր մասնակցութիւն ունեցաւ Եղեռնի 80ամեակի համազգային ոգեկոչման հանդիսութեան: Սկսած ատենական գետնի վրայ մասնաճիւղի գործունէութիւնը տարուէ տարի աւելի զարգացաւ: Բացի տեղական բանակումներէն, որոնց իրենց մասնակցութիւնը բերին Պուլկարիոյ վեց մասնաճիւղերու սկսած ատենական պատուիրակութիւնները, մասնաճիւղէն ըսկսած 1995ի Յուլիսին կը մասնակցին Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի միջմասնաճիւղային ընդհանուր բանակումին: Մասնաճիւղի աստիճանաւորական ցանցը տակաւ կը զօրանայ: Երկրին տնտեսական անհամեմատ դժուարին պայմանները կը դժուարացնեն մասնաճիւղին յառաջդիմութիւնները:

1995ի Ապրիլին մասնաճիւղի ատենապետ Խորեն Քիրազեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի 6րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

19 Մարտ 1996ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով նախագահութեամբ տոքթ. Պ. Ինճէեանի եւ քարտուղարութեամբ Փրոֆ. Պողիկ Մեսրոպի: Ժողովը լսելէ ետք ընթացաւարտ վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը, ինչպէս նաեւ հաշուեքննիչ յանձնախումբի զեկուցումը, առաջարկներ ներկայացուց յառաջիկայ տարեշրջանի գործունէութեան համար, ապա միաձայնութեամբ ընտրուեցաւ 1996-1997 տարեշրջանի վարչական կազմը, բաղկացած հետեւեալ անդամներէն՝ Խորեն Քիրազեան, Աստիկ Եաղճեան, Գառնիկ Թադէոսեան, Տիրան Մսրրլեան, Եւա Յակոբեան, Եղուարդ Բարսեղեան, Խաչիկ Համբերեան, Վարուժան Աչճեան եւ Հռիփսիմէ Տումանեան: Հաշուեքննիչ յանձնախումբի անդամներ ընտրուեցան՝ Կարօ Կէմճեան, Անդրա-

նիկ Մոզեան եւ տոքթ. Սրապ Աստուածատուրեան:

Այս կազմի գլխաւոր աշխատանքը եղաւ, Պուլկարիոյ այլ մասնաճիւղերու մասնակցութեամբ, 1996ի ընդհանուր բանակումի կազմակերպութիւնը Շումնաթիցայի մէջ, որուն առընթեր քննուեցաւ Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան մը կազմութեան կարեւորութիւնը եւ 1997ի Պուլկարիոյ միջմասնաճիւղային ընդհանուր բանակումի կայացումը նոյն վայրին մէջ:

26 Մարտ 1997ին մասնաճիւղի ատենապետ Խորեն Քիրազեան Փարիզի մէջ կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի միջդիւանային 4րդ խորհրդաժողովին՝ ներկայացնելով Պուլկարիոյ Շրջանը:

22 Նոյեմբեր 1997ին կը գումարուի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով՝ Սոֆիայի Հայկական Տան մեծ սրահին մէջ: Ժողովին հիւրաբար մասնակցեցան նաեւ Վառնայի, Շումնի, Փլովտիվի եւ Ռուսէի մասնաճիւղերու եւ պուլկարահայ թեմական խորհուրդի ներկայացուցիչներ: Մասնաճիւղի ատենապետը կարգաց 1996 եւ 1997 տարեշրջաններու գործունէութիւններու տեղեկագրերը, ապա ժողովը վարչութեան կազմէն քաղաքէն մեկնած 2 անդամներու փոխարէն ընտրեց նոր անդամներ, յանձին տոքթ. Իզապէլ Հիւսիւմեանի եւ Րաֆֆի Թոսունեանի:

1998ին Պուլկարիոյ Շրջանը ներկայացնող 5 սկսածներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական վեցերորդ ընդհանուր բանակումին, Աղաւնաձորի մէջ:

28 Նոյեմբեր 1998ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան անդամական ընդհանուր ժողով: Ժողովը կը վարեն Փլովտիվէն մասնաճիւղի պատուոյ նախագահ Տիգրան Պարտիզպանեան (ատենապետ) եւ Ֆիլիպ Մեսրոպ (քարտուղար): Յետ նիւթաբարոյական գործունէութիւններու տեղեկագրերու ընթերցումին եւ քննութեան, ժողովը նոր վարչականներ ընտրեց Վարուժան Թիւրապեանն ու Օննիկ Փիլիպոսեանը, որոնք պիտի փոխարինեն երկրէն մեկնած

զոյգ վարչական անդամները: Այսպէսով Սոֆիայի Հ.Մ.Ը.Մ-ի վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով. ատենապետ՝ Խորէն Քիրազեան, անդամներ՝ Աստիկ Եաղճեան, Գառնիկ Թաղէոսեան, Եւա Յակոբովիչ, Վարուժան Աշճեան, Րաֆֆի Թոսունեան, Իզապէլ Հիւսիւմեան, Վարուժան Թիւրապեան եւ Օննիկ Փիլիպոսեան:

2001էն սկսեալ Սոֆիայի մասնաճիւղի հրապարակային գործունէութիւնը աւելի զգալի ձեւով կը յայտնուի ազգային գետնի վրայ: Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի, Վարդանանցի, Ապրիլ 24ի, Մայիս 28ի յիշատակութեան տօնախմբութիւնները յաջորդաբար կը կազմակերպուին վարչութեան նախաձեռնութիւններով:

7 եւ 8 Ապրիլ 2001ին ճատրակի մրցաշարքով եւ շաբաթ մը ետք Փլովտիվի մասնաճիւղին այցելութեամբ եւ փինկփոնկի մրցաշարքով Սոֆիայի սկաուտական կազմերը կը զարգացնեն նաեւ իրենց մարզական գործունէութիւնը [Ծ/232.34]:

2003ին, մասնաճիւղի պատուոյ անդամ Արմէն Նազարեան, Փարիզի մէջ կայացող ըմբշամարտի աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին կը տիրանայ ոսկի մետալի:

ՓԼՈՎՏԻՎ

11 Մայիս 1991ին խումբ մը նախկին Հ.Մ.Ը.Մ-ականներու նախաձեռնութեամբ կեանքի կը վերակոչուի Պուլկարիոյ Փլովտիվ քաղաքի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը, որ 1945էն ի վեր դադրած էր գործելէ Պուլկարիոյ մէջ համայնավար իշխանութեան հաստատման պատճառով:

Մասնաճիւղի հիմնադիր ժողովը այս առթիւ կը նշանակէ առժամեայ վարչական կազմ:

Նախապատրաստական եռամսեայ աշխոյժ գործունէութեան իբրեւ արդիւնք, հետզհետէ կը կազմուի սկաուտական խումբ: Սեպտեմբեր

1991ին Սբ. Գէորգ եկեղեցւոյ բակին մէջ տեղի կ'ունենայ դրօշակի օրհնութիւն եւ խոստման արարողութիւն: 2 Մարտ 1992ին վարչութիւնը կը կազմակերպէ Վարդանանցի տօնակատարութիւն, Հայ Մշակոյթի Տան սրահին մէջ [Ծ/125.23]:

Մասնաճիւղի առաջին անդամական ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ 7 Մարտ 1992ին, որու ընթացքին վարչութեան ատենադպիր՝ Թորոս Տօնիկեան կը զեկուցէ մասնաճիւղի եռամսեայ գործունէութեան մասին:

2էն 12 Յուլիսին տեղի կ'ունենայ մասնաճիւղին առաջին բանակումը, մասնակցութեամբ Սոֆիայի, Վառնայի, Ռուսէի մասնաճիւղերէն պատուիրակութիւններու. ընդհանուր թիւ՝ 100 բանակողներ:

2 Հոկտեմբերին մասնաճիւղը կը նշէ Հ.Մ.Ը.-Մ-ի հիմնադրութեան եօթանասունհինգամեակը, մասնակցութեամբ Սոֆիայի, Ռուսէի եւ Վառնայի մասնաճիւղերու սկաուտական պատուիրակութիւններուն: Օրուան բանախօսն է Տիգրան Պարտիզպանեան:

1992-93 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Ազատ Յովսէփեան, ատենադպրութեամբ Թորոս Տօնիկեանի, գանձապահ՝ Ապրօ Մինասեան, մարզիկներու եւ սկաուտներու պատասխանատու Օնջօ Օվաննէսեան:

7 Մայիս 1994ին տեղի ունեցաւ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով, մասնակցութեամբ 68 անդամներու: Ժողովին նախագահեց Տիգրան Պարտիզպանեան, քարտուղարութեամբ Ապրօ Մինասեանի: Ժողովը լսելէ ետք մասնաճիւղին երկամեայ գործունէութեան նիւթաբարոյական գործունէութիւններու զեկուցումները, քննեց զանոնք, ապա ընտրեց նոր վարչական կազմ՝ ատենապետութեամբ Ապրօ Մինասեանի եւ մասնակցութեամբ հետեւեալ անդամներուն.- Մելիք Ճամճեան, Մատլէն Պասմաճեան, Անահիտ Երկաթ, Սիմոն Թիւթէլեան, Վարդան Տէր Վահանեան, Կարօ Ամուճեան, Մեսրոպ Տողրամաճեան, Մէրի Քըթրմեան: Հաշ-



Հ.Մ.Ը.Մ.ի Փլովտիվի 22 – 30 Յուլիս 1996ի սկաուտական բանակումը

Լեքննիչ մարմնի անդամներ ընտրուեցան Թագ-
 ևոր եւ Գրիգոր Թեյլալեաններ եւ Ֆլորա Յակոբ-
 եան:

1995ին մասնաճիւղը կ'ունենայ բեղուն գոր-
 ծունէութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի 77ամեակի հանդիսու-
 թիւն, Սբ. Ծննդեան Աւետում, Վարդանանցի
 տօնակատարութիւն, Մայիս 28ի տօնակատա-
 րութիւն - [Ծ/164.28]:

1996ին մասնաճիւղի սկաուտական շարքերէն
 30 սկաուտներ ութօրեայ բանակում մը կը կա-
 տարեն Ռոտոփօ լերան լանջին, զանազան բա-
 ժիններ կ'արշաւեն եւ կը բանակին զանազան
 վայրերու մէջ, յատկապէս քարայրներու այցե-
 լութեամբ եւ քարայրներու մէջ բանակելով: Այս
 մասնագիտական աշխատանքները կը վարէ Մե-
 լիք Ճամճեան:

30 Նոյեմբեր 1996ին Պուլկարիոյ մասնաճիւ-
 ղերու վերականգնումի հնգամեակը եւ Հ.Մ.Ը.-
 Մ.ի հիմնադրութեան 78ամեակը կը նշուի Փլով-
 տիվի մէջ:

1997ին մասնաճիւղի վարչութեան մաս կը
 կազմեն պատուոյ նախագահ՝ Տիգրան Պար-
 տիզպանեան, ատենապետ՝ Ապրօ Մինասեան,
 փոխ ատենապետ՝ Կարօ Ամուճեան, ատենադ-
 պիր՝ Սիմոն Թիւթէլեան, գանձապահ՝ Մատլէն
 Պասմաճեան, սկաուտ խմբապետ՝ Մելիք Ճամճ-
 եան, Աքելյա՝ Վարդան Տէր Վահանեան, խոր-
 հրդական Մէրի Բըթրմեան:

Այս տարեշրջանին մասնաճիւղը կը նշէ Ապ-
 րիլ 24ի սգատօնը, Մայիս 28ը, Պուլկարիոյ
 «Յաղթանակի Օր»ը՝ 9 Մայիսին: 3- 14 Օգոստո-
 սին մասնաճիւղի 37 հոգիէ բաղկացած պատուի-

րակուլթիւն մը կը մասնակցի Պուլկարիոյ Հ.Մ.Ը.Մի ընդհանուր բանակումին: 21 Սեպտեմբերին 22 նորագիրներ կու տան իրենց խոստումը Աքելլա Վարդան Տէր Վահանեանի առաջնորդութեամբ: 22 Նոյեմբերին մասնաճիւղէն պատուիրակութիւն մը կը մեկնի Սոֆիա, ներկայ ըլլալու տեղւոյն մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 79ամեակի հանդիսութեան եւ Պուլկարիոյ մասնաճիւղերու ներկայացուցիչներու խորհրդաժողովին:

5 Սեպտեմբեր 1998ին Փլովտիվի Թիւթիւնճեան Վարժարանի բակին մէջ մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակը [Ծ/196.3]:

Մարձիկանիցա գիւղին մէջ, 14 Յուլիս 2000ին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան բանակումը:

ՌՈՒՍԷ (Ռուսչուք)

2 Յուլիս 1991ին նախկին Հ.Մ.Ը.Մական երէց անդամներու նախաձեռնութեամբ տեղի կ'ունենայ անդրանիկ հաւաք, ուր 30 ներկաներ Ռուսէի մասնաճիւղին անդամ կ'արձանագրուին: Մասնաճիւղին առժամեայ ղեկավար մարմինը յաջորդական մարզական եւ սկսողական հաւաքներով կը հաստատէ մասնաճիւղին գործունէութիւնը: Մասնաճիւղի առաջին հրապարակային հանդիսութիւնը տեղի կ'ունենայ հովանաւորութեամբ Պուլկարիոյ հայոց առաջնորդ Տիրայր Արքեպիսկոպոս Մարտիկեանի:

Վերոյիշեալ նախաձեռնութիւնը կը վարէ ղեկավար մարմինը, որուն մաս կը կազմեն՝ ատենապետ՝ Նորայր Տիւլկէրեան, ատենադպիր՝ Մարինկա Ֆետեան, գանձապահ՝ Լեւոն Աւետիսեան, քարտուղար՝ Թորգոմ Տիւլկէրեան, գոյքապահ՝ Պօղոս Տերէճեան, գեղարուեստական՝ Սարգիս Կիւրեղեան, մարզական՝ Յակոբ Տոլապճեան, սկսողական՝ Յակոբ Ասատուրեան, խորհրդականներ՝ Թորգոմ Ալթունեան, Սարգիս Յարութիւնեան եւ Գրիգոր Սարգիսեան:

Հակառակ նիւթական դժուարին պայմաններու, մասնաճիւղի գործունէութիւնը կը շարունակուի տարուէ տարի, ձեռնարկներու յաւելումով: Սկսողական հաւաքոյթներ տեղի կ'ունենան Կիրակի օրերը, սկսողական խումբեր կը մասնակցին քոյր մասնաճիւղերու կազմակերպած բանակումներուն: 1992ին մասնաճիւղը կը կազմակերպէ հրապարակային գոյգ ելոյթներ՝ սկսողական եւ մարզական յայտագիրներով:

1997ին մասնաճիւղի ներկայացուցիչ Լեւոն Աւետիսեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին, որպէս Շրջանի պատգամաւոր:

7-9 Յուլիս 2000ին մասնաճիւղը կը կայացնէ իր տարեկան երկօրեայ բանակումը, որուն ընթացքին 20 գայլիկ-մարզիկներ կը զօրացնեն իրենց սկսողական գիտելիքները:

ՎԱՌՆԱ

8 Նոյեմբեր 1991ին, սկսողական կորիզի մը կազմութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Վառնայի մասնաճիւղը վերսկսած է գործել հիմնադիր մարմնի ճիգերով, որուն անդամակցած են ի միջի այլոց Օհան Օհաննէսեան եւ Լեւոն Սանտալճեան: Մասնաճիւղի անդրանիկ ընդհանուր ժողովը քննելէ ետք կազմակերպիչ մարմնի վեցամսեայ գործունէութիւնը կ'ընտրէ մասնաճիւղի առաջին վարչութիւնը հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Փանոս Համամճեան

Ատենադպիր՝ Միհրան Յովհաննէսեան

Սկսողական պատասխանատու՝ Օհան Օհաննէսեան

Մարզական պատասխանատու՝ Վահան Սարգիսեան:

1994 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան ատենապետութեան պաշտօնը կը վարէ Օհան Օհաննէսեան: Մասնաճիւղը ունի զօրաւոր ֆութպոլի կազմ, որ Վառնայի ախոյեանական մրցումներուն աչնանային եղանակի առաջնութեան կը տիրանայ:

1997էն սկսեալ մասնաճիւղը կազմած է «Գա-



Հ.Մ.Ը.Մ.ի Վառնայի մասնաճյուղի սկաուտները
իրենց խմբապետներով 1996ի Պոռովեցի բանակավայրին մեջ

յիանէ Մարաշլեան» հայկական պարախուժքը, որ իր գործունէութիւնը կը ծաւալէ Պուլկարիոյ հայկական եւ միջազգային փառատօններու մասնակցութեամբ:

1999էն սկսեալ Վառնայի հայ Վարժարանին մէջ մասնաճիւղին կը տրամադրուի աւելի մեծ սրահ: Մասնաճիւղի ատենապետ՝ Օհան Օհաննէսեան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին, իբրեւ Պուլկարիոյ Շրջանի պատգամաւոր:

21 Օգոստոս 2000ին մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան բանակումը Ալաճա Մանասթեր գիւղին մէջ:

13 Հոկտեմբեր 2001ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդամական հաշուետուական եւ ընտրական ընդհանուր ժողով, ներկայութեամբ 36

անդամներու: Վարչութեան երկամեայ գործունէութեան քննարկումէն ետք ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Խաչիկ Մանկիկեան
Փոխ ատենապետ՝ Գրիգոր Գրիգորեան
Քարտուղար՝ Մատլէնա Գաբրիէլեան
Գանձապահ՝ Կալին Սիմեոնով
Գոյքապահ՝ Մարտիկ Պէհլերեան:

2002ին անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 80ի, որոնցմէ 50ը սկաուտական շարքերէն եւ 15ը մարզիկներ: Մասնաճիւղը կը կազմակերպէ հայերէն ուսուցման դասընթացք:

ՇՈՒՄԵՆ

27 Օգոստոս 1997ին Պուլկարիոյ Շումէն քա-

ղաքի հայ եկեղեցական վարչութեան նախաձեռնութեամբ կը կազմուի Հ.Մ.Ը.Մ.ի Շումի մասնաճիւղի հիմնադիր նշանակեալ մարմին մը, ատենապետութեամբ Արմենակ Կիւմիւզեանի եւ անդամակցութեամբ Օննիկ Հաննէսեանի եւ Յարութիւն Իլիելի: Փոքրաթիւ հայութիւն ունեցող Շումի մասնաճիւղի գործունէութիւնը կը սահմանափակուի սկստական աշխատանքներով:

ՊՈՒՐԿԱԶ

1944ի ծանօթ պատճառներով դադրեցումէն ետք, Պուրկազի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը վերսկսած է գործել 1998 թուականէն սկսեալ, Հայկական դպրոցին մէջ շաբաթօրեայ հաւաքոյթներով: 1998ին 19 սկսուածներ կը մասնակցին Պուրկարիոյ Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր բանակումին:

Մասնաճիւղի վերակազմութեան պաշտօնական աթիւր տեղի կ'ունենայ 9 Յունուար 1999ին, Պուրկարիոյ Ազգային Տան սրահին մէջ, 21 նորագիր սկսուածներու երդման արարողութենէն ետք գումարուած առաջին անդամական ընդհանուր ժողովով: Ժողովի վերջին օրակարգով կ'ընտրուի մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Անդրանիկ Փոստաճեան
- Փոխ ատենապետ՝ Յակոբ Աբրահամեան
- Քարտուղար՝ Ովսաննա Եանչեւա
- Գանձապահ՝ Էլզա Տատուրեան
- Գոյքապահ՝ Օննիկ Տատուրեան:

17 Մայիս 1999 թուակիր որոշումով մասնաճիւղը կը ստանայ պետական վաւերացում:

ՏՈՊՐԻՉ

20 Նոյեմբեր 1999ին Տոպրիչի մէջ տեղի կ'ունենայ Պուրկարիոյ 7րդ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողով, ուր կ'ընտրուի վարչական կազմ. ատենապետ՝ Աբրահամ Սալապաշեան, անդամներ՝ Սթանքա Քէչիչեան, Արմէն Զոլաքեան, Տալիտա Կիւլիքեան, Անդրանիկ Սա-

լապաշեան, Վարդօ Սեդրակեան, Նիկողոս Հիւպէսէրեան, Յովհաննէս Առաքելեան եւ Օլէկ Տօնեւ:

2000ին սկսուողական բաժանմունքին մաս կը կազմեն 15 սկսուածներ եւ 10 գայլիկներ: Վարչութիւնը կը կազմակերպէ Նոր Տարուան եւ Ապրիլ 24ի տօնակատարութիւն եւ սկսուողական կազմի դաշտագնացութիւն՝ Փչալարեւօ գիւղին մէջ: Սկսուողական հաւաքոյթները տեղի կ'ունենան հայկական վարժարանի բակին մէջ:

Պուրկարիոյ Մասնաճիւղերու Միացեալ Գործունէութիւն

1991ին Սոֆիայի մասնաճիւղի վերակազմութենէն սկսեալ, հետզհետէ վերակազմուած են Պուրկարիոյ այլ մասնաճիւղերը: Այս վերակազմութիւնները արդիւնքն են Սոֆիայի Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութեամբ կազմակերպուած բանակումներուն եւ ազգային կամ միութեանական տօներու նշումներուն, որոնց մասնակցած են այլ մասնաճիւղերէ պատուիրակութիւններ: Այս ձեւով Սոֆիայի մասնաճիւղը կատարած է Պուրկարիոյ Շրջանային Վարչութեան մը դերը:

Տարիներու ընթացքին մեծ ու փոքր թիւի պատուիրակութիւններով ընդհանուր բանակումներուն եղած են հետեւեալ մասնակցութիւնները.

- 25ն 12 Յունիս 1992ին, մասնակցութեամբ 100 արի-արենոյշներու -[Ծ/132.2]:
- 165ն 23 Յունիս 1993ին սկսուողական տասնանդամ պատուիրակութիւն մը կը մասնակցի Յունաստանի միջմասնաճիւղային Դ. բանակումին :
- 215ն 29 Օգոստոս 1993 ին դպրոց-բանակում Վիտոշ լեռան Իկլիքա շրջանին մէջ- [Ծ/140.14] :
- 205ն 30 Յունիս 1994ին միջմասնաճիւղային Բ. բանակում, ուր Սոֆիայի, Փլովտիվի, Ռուսէի, Վառնայի խումբերու կողքին կը մասնակցին Պազարճըքէն 10 սկսուածներ:
- 27 Յունիսէն 7 Օգոստոս 1994, Պուրկարիոյ մասնաճիւղերէն սկսուողական եռանդամ պատ-

Լիրակուծիւն մը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Ե. ընդհանուր բանակումին՝ Բիւրական:

- 19-29 Յուլիս 1995ին կը կազմակերպուի միջմասնաճիւղային Գ. ընդհանուր բանակում, մասնակցութեամբ 90 արի-արենոյշներու:

- 25 Յուլիսէն 5 Օգոստոս 1996ին, Պոռովէցի Շումնաթիցայի բանակավայրին մէջ - [Ծ/172.24]:

- 1997ին Պոռովէցի Շումնաթիցայի բանակավայրին մէջ - [Ծ/185.5]:

- 22 Յուլիսէն 10 Օգոստոս 1998ին Պոռովէցի Շումնաթիցա բանակավայրին մէջ 179 բանակողներով - [Ծ/196.22]:

- 31 Յուլիսէն 9 Օգոստոս 1999ին Պուլկարիոյ Շրջանի ընդհանուր բանակումին կը մասնակցին 222 արի-արենոյշներ հետեւեալ թիւերով՝ Փլովտիվ՝ 60, Վառնա եւ Տոպրիչ՝ 59, Սոֆիա՝ 38, Պուրկազ՝ 31, Ռուսէ՝ 23 եւ Շումնէն՝ 11 - [Ծ/209.23]:

- 29 Յուլիսէն 7 Օգոստոս 2000ին Ուրզանայի մէջ 7 մասնաճիւղերէ 107 արի-սկառուտներու մասնակցութեամբ - [Ծ/220.32]:

- 28 Յուլիսէն 5 Օգոստոս 2001ին միջմասնաճիւղային բանակումին 110 արի արենոյշներով:

Միջմասնաճիւղային խորհրդաժողովներ եւ Շրջանային Կառոյցի Կազմութիւն

8 Մարտ 1992էն սկսեալ Պուլկարիոյ մասնաճիւղերու վարչութեանց ներկայացուցիչներ պարբերաբար գումարած են խորհրդաժողովներ, նպատակ ունենալով Պուլկարիոյ Շրջանին կազմակերպումը եւ Շրջանային վարչութեան մը կազմութիւնը, համաձայն Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կանոնադրութեան տրամադրութիւններուն:

Այս կարգի խորհրդակցական 22 ժողովներ կը գումարուին մինչեւ 23 Յունիս 2001 թուականը, յաճախ Շրջանի միջմասնաճիւղային բանակումներուն առընթեր:

Այս խորհրդաժողովներուն շարքը կը յանգի Պուլկարիոյ անդրանիկ Շրջանային Ներկայացուցչական ժողովին եւ առաջին Շրջանային վարչութեան կազմութեան:

Ժողովը տեղի կ'ունենայ 27 Ապրիլ 2002ին մասնակցութեամբ Սոֆիայի, Փլովտիվի, Շումնէի, Ռուսէի եւ Պուրկազի մասնաճիւղերու 27 ներկայացուցիչներուն: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը կը ներկայացնեն Յարութ Չէքիճեան եւ Պետիկ Սապունճեան: Ժողովին հիւրաբար կը մասնակցին Տիգրան Պարտիզպանեան, Ռուբէն Գրիգորեան եւ վարդուհի Թոփակպաշեան եւ Ռուսէի մասնաճիւղէն 3 անդամներ:

Ժողովին բացումը կը կատարէ Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Յարութ Չէքիճեան. ապա կ'ընտրուին ժողովի դիւանի անդամներ, նախագահ՝ Խաչիկ Մանկիկեան, քարտուղարուհի՝ Մատլէն Գաբրիէլեան: Յաջորդաբար մասնաճիւղերու ներկայացուցիչները իրենց գործունէութեան մասին կու տան ամփոփ զեկուցումներ:

Երկօրեայ 5 նիստերով ժողովը կը քննէ Պուլկարիոյ մասնաճիւղերու իրավիճակը սկառուտական, մարզական, կազմակերպական եւ տնտեսական բաժիններով. կ'արձանագրէ առաջարկներ յաջորդ տարեշրջանի գործունէութեան ծրագրումին համար եւ կ'ընտրէ Շրջանային վարչութիւն բաղկացած 7 անդամներէ:

29 Ապրիլ 2002ին նորընտիր Շրջանային վարչութիւնը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Կարապետ Ամուճեան
- Փոխ ատենապետ՝ Սարգիս Խաչիկեան
- Ատենադպիր՝ Սիմոն Թիւթէլեան
- Գանձապահ՝ Խորէն Քիրազեան
- Սկառուտական՝ Գարին Պեհլէրեան
- Մարզական՝ Խաչիկ Մանկիկեան
- Յարաբերական՝ Օննիկ Տատուրեան:

ԳԼՈՒԽ ՏԱՄԼԵՐՈՐԴ

ՄԻՋՇՐՋԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

- ՆԵՐԱԾԱԿԱՆ
- ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐ
- ԳԱՆԱՏԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՒ ՋՄԵՌՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ
- ԵԻՐՈՊԱԿԱՆ ՄԻՋՄԱՍՆԱԺԻԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐ
- ՄԵՐՋԱԻՈՐ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋՇՐՋԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ
- ՀԱՐԱԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻՋՇՐՋԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Համաձայն Հ.Մ.Ը.Մ-ի ընդհանուր կանոնագրի տրամադրությունների, «Շրջանային եւ Մեկուսի Շրջանի վարչությունները կրնան մարզական եւ սկաուտական միջ-շրջանային հանդիպումներ կազմակերպել կեդրոնական վարչություն հալանություններ»:

Ժամանակի ընթացքին, շրջանները կազմակերպչական զարգացումներուն առընթեր, գլխաւորաբար աշխարհագրականօրէն մօտակայ շրջաններ նախաձեռնած են նման միջշրջանային հաւաքներու, այլ շրջաններու մարզական խումբերու մասնակցություններ, ճոխացնելու

համար իրենց յայտագիրները եւ հետաքրքրություններ ստեղծելով համակիր բազմություններու եւ համակիրներու մօտ:

Միջշրջանային խաղերը կամ բանակումները փոխադարձ հանդիպումներու միջոցով օգտակար դարձած են խումբերու թեքնիք զարգացումին եւ անդամներու ծանօթացման:

Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչությունները հաւատարմով միջշրջանային խաղերու եւ բանակումներու օգտակարություններուն միշտ ալ արտօնած եւ քաջալերած են նման նախաձեռնություններ եւ իրենց ներկայացուցիչներու մասնակցությունները նպաստած են այդ հաւաքներու յաջողություններ:



Գանատայի եւ Արեւելեան Մ.Նահանգներու ձմեռնային 24րդ խաղերու պասքեթպոլի մրցաշարքի աւարտականին հասած Մոնթեպելլոյի եւ Թոթոնթոյի խումբերը-2000ին

Ստորեւ 1975էն 1990 ժամանակաշրջանի միջշրջանային հերթական խաղերու մասին տեղեկութիւններ:

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐ

1976էն սկսեալ Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը կազմակերպած է Նաւասարդեան խաղեր, որոնց նախօրեակին տեղի ունեցած են միջմասնաճիւղային մրցաշարքերու զտումի մրցումներ: Նաւասարդեան խաղերը աւանդականօրէն կազմակերպուած են, աւարտականին եւ փակման հանդիսութեան եւ ընդհանուր տողանցքին հասնելու համար Յունիս 4ի մօտակայ շաբաթավերջին:

- 1976էն սկսեալ տարեկան հերթականութեամբ իրագործուող, Նաւասարդեան խաղերը տեղի ունեցած են հետեւեալ շարքով.-

- Բ. խաղեր 1977ին

- Գ. խաղեր 1978ին՝ նուիրուած Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 60ամեակին:

- Դ. խաղեր 1979ին

- Ե. խաղերը տեղի ունեցած են 25 Մայիս 1980ին, օրուան նախագահութեամբ՝ Հրայր Յովնանեանի: Ֆուտպոլի մրցաշարքին մասնակցեցաւ Վենեզուելայի «Արմենիա» Ֆուտպոլի խումբը — [Ծ/5,20-25]:

- Զ. խաղերուն մասնակցեցան Մոնթրէալի եւ Տիթրոյիթի մասնաճիւղերու խումբերը: Փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ 24 Մայիս 1981ին, նախագահութեամբ Տէր եւ Տիկին Քերոբ Առաքելեաններու — [Ծ/17,31-40]:

- Է. խաղեր 1982ին, մասնակցութեամբ՝ Մոնթրէալի, Թորոնթոյի եւ Նիւ Եորքի մասնաճիւղերուն [Ծ/27.16]:

- Ը. խաղեր 1983ին, նախագահութեամբ՝ Վահան Շամլեանի, մասնակցութեամբ՝ Պէյրութի եւ Թորոնթոյի մասնաճիւղերուն — [Ծ/34.21]:

- Թ. խաղեր 5-8 Յունիս 1984ին, մասնակցութեամբ՝ Պէյրութի Ֆուտպոլի Վեթերաններու խումբին — [Ծ/34.2]:

- Ժ. խաղերը կայացան 1էն 7 Յունիս 1985ին, մասնակցութեամբ՝ Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուտպոլի ներկայացուցչական կազմին:

- Նաւասարդեան 15րդ խաղերը 4-8 Յունիս 1990ին [Ծ/103. 104.20]: Նաւասարդեան 15րդ խաղերուն մասնակցած են Մոնթրէալի, Համիլթոնի մարզական խումբերը եւ Աւստրալիոյ Շրջանի ներկայացուցչական կազմը:

- Նորագոյն՝ Նաւասարդեան 32րդ խաղերը կայացած են 3էն 7 Յունիս 2007ին Վէն Նայսի Պըրմինկհամ Հայ սքուլի շրջափակէն ներս, հովանաւորութեամբ Վարուժ Պետիկեանի:

ԳԱՆԱՏԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՍԱՌՆԱՅԻՆ ԵՒ ԶՍԵՌՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու ամառնային եւ ձմեռնային խաղերը առանց ընդմիջումի կազմակերպուած են տարեկան հերթականութեամբ: Ամառնային խաղերու առաջինը տեղի ունեցած է 1969ին: Զմեռնային խաղերու առաջինը տեղի ունեցած է 1975ին: Աւանդականօրէն, ամառնային խաղերու յայտագրին մաս կազմած են ֆուտպոլի եւ աթլետիզմի մրցումներ, իսկ ձմեռնային խաղերուն մասնակցած են պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկփոնկի խումբերը:

Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու ամառնային 12րդ խաղերը տեղի ունեցան Թորոնթոյի մէջ, 27 եւ 28 Յունիս 1980ին, մասնակցութեամբ Նիւ Եորքի, Պոսթընի, Տիթրոյիթի, Ֆիլատելֆիոյ, Մոնթրէալի, Քէմպրիճի եւ Թորոնթոյի մասնաճիւղերու ֆուտպոլի եւ աթլետիզմի խումբերուն: Խաղերը փակուեցան մասնակից մասնաճիւղերու մարզիկներու եւ



Հ.Մ.Ը.Մ.ի համաամերիկեան Ա. խաղերուն մասնակից Կլէմտէյլի Արարատ եւ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.- «Կամք» մասնաճիւղերու աղջկանց պասքեթպոլի խումբերը- Նոյեմբեր 1992

սկաուտական պատուիրակութիւններու ընդհանուր տողանցքով – [Ծ/8.32]:

չրջաններու մասնաճիւղերու եւ այլ Շրջաններու մասնաճիւղերու մարզական խումբերուն:

Ձմեռնային ճրգ խաղերը կայացան 28, 29 եւ 30 Նոյեմբեր 1980ին Նիւ Ճրրգիի մէջ, մասնակցութեամբ Մոնթրէալի, Թորոնթոյի, Նիւ Եորք Պէյսայտի, Նիւ Եորք Վոլտսայտի, Պոսթընի, Տիթրոյիթի, Շիքակոյի, Ուաշինկթընի, Ֆիլատելֆիոյ, Նիւ Ճրրգիի եւ Յորդանանէն Ամմանի մասնաճիւղերու պասքեթպոլի, վոլիպոլի եւ փինկփոնկի երկու սեռի խումբերու մարզիկներուն – [Ծ/12.33]:

Այսպէս, Արեւելեան Միացեալ Նահանգներու 16րդ մարզախաղերը կայացան 1-4 Յուլիս 2006ին, մասնակցութեամբ շրջանի 10 մասնաճիւղերու եւ Գանատայի շրջանէն Մոնթրէալի, Թորոնթոյի եւ Քէմպրիճի մասնաճիւղերու խումբերուն – [Ծ/ 291-292.22]: Իսկ Գանատայի միջմասնաճիւղային 36րդ մարզախաղերը կայացան 24-26 Նոյեմբեր 2006ին, Մոնթրէալի մէջ մասնակցութեամբ, Գանատայէն՝ Մոնթրէալի, Թորոնթոյի եւ Քէմպրիճի, Անգլիայէն՝ Լոնտոնի, Արեւմտեան Միացեալ Նահանգներէն՝ Փասատինայի եւ Կլէնտէյլի, Արեւելեան Միացեալ Նահանգներէն՝ Փրովիտենսի մասնաճիւղերու

Ներկայիս այս խաղերը կը կոչուին իւրաքանչիւր շրջանի յատուկ միջմասնաճիւղային մարզախաղեր անունով, մասնակցութեամբ զոյգ



Նիւ Ծրրգիի եւ Մոնթրէալի աղջկանց վոլիպոլի խումբերը

58 մարզական երկսեռ խումբերուն – [Ծ/ 295-296.20]:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՋՄԱՍՆԱԾԻՂԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Եւրոպական միջշրջանային առաջին խաղերը կազմակերպուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Իտալիոյ մեկուսի շրջանի՝ Միլանոյի մասնաճիւղի նախաձեռնութեամբ, 1985ի Սբ. Զատիկուն զուգադիպող թուականին եւ Հ.Մ.Ը.Մ-ի միջդիւանային անդրանիկ խորհրդաժողովին զուգահեռ, 5-7 Ապրիլին:

Այս առթիւ կազմակերպուած Ֆուլթպոլի մրցաշարքին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի Վալանսի, Վիեննայի «Արարատ»ի, Զուլիցերիոյ «Մասիս»ի եւ Միլանոյի մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբերը: 6 Ապրիլի զտումի մրցումներէն ետք,

7 Ապրիլին, մասնակից խումբերու մարզիկներու տողանցքին հետեւեցաւ ախոյեանութեան մրցումը, որ վերջացաւ Վալանսի Հ.Մ.Ը.Մ. խումբի յաղթանակով – [Ծ/49.9]:

Նոյն թուականի Մայիսի 26ին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մասնաճիւղը կազմակերպեց «Սուրէն Մուրատեան» բաժակի պասքեթպոլի միջմասնաճիւղային մրցաշարքը, մասնակցութեամբ Լոնտոնի մասնաճիւղի, Վալանսի մասնաճիւղի եւ իր խումբերուն: Մրցաշարքը փակուեցաւ մասնակից խումբերու մարզիկներուն եւ Փարիզի մասնաճիւղի սկաուտական կազմերու տողանցքով – [Ծ/51.14]: «Սուրէն Մուրատեան» պասքեթպոլի մրցաշարքը կը կրկնուի իւրաքանչիւր տարի, մասնակցութեամբ Եւրոպայի զանազան շրջաններու խումբերուն:

29 եւ 30 Մարտ 1986ին, Վալանսի Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ միջմասնաճիւղային ֆուլթայոլի եւ պասքեթպոլի մրցաշարք, մասնակցութեամբ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.ի մեկուսի շրջաններու՝ Փարիզի, Միլանոյի եւ Վալանսի, ինչպէս նաեւ Զուիցերիոյ «Մասիս» ֆուլթայոլի ակումբի խումբերուն: Մրցաշարքերու բացման հանդիսութեան տեղի ունեցաւ ընդհանուր տողանցք՝ մասնակից խումբերու մարզիկներուն եւ Վալանսի նորակազմ գայլիկներու մասնակցութեամբ - [Ծ/58.18]:

Եւրոպայի միջմասնաճիւղային ֆուլթայոլի եւ պասքեթպոլի նորագոյն մրցաշարքերը տեղի ունեցան 3 եւ 4 Յունիս 2006ին, Փարիզի մէջ, մասնակցութեամբ Ալմելոյի (Հոլանտա), Լոնտոնի, Սթոքհոլմի (Շուէտ) եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խումբերուն — [Ծ/285-286.30]:

ՄԵՐՉԱԻՈՐ ԱՐԵԻԵԼԵԱՆ
ՄԻՋՇՐՁԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի հնագոյն մասնաճիւղերէն Հալէպի Զատկական միջմասնաճիւղային խաղերը միութեան պատմութեան հպարտառիթ էջերը կազմած են ու դեռ կը շարունակուին:

Այս շարքին վրայ աւելցան Մերձաւոր Արեւելեան միջշրջանային նորագոյն խաղերը, որոնք տեղի ունեցան 28 եւ 29 Ապրիլ 2007ին, Կիպրոսի մէջ, Նիկոսիոյ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի մասնաճիւղի կազմակերպութեամբ: Խաղերու յայ-

տագիրին մաս կազմեցին ֆուլթայոլի տղոց եւ պասքեթպոլի աղջկանց մրցաշարքերը: Խաղերուն մասնակցեցան Քուէյթի, Դամասկոսի, Անթիլիասի, Երուսաղէմի եւ Նիկոսիոյ մասնաճիւղերու խումբերը, նորագոյն էջ մը բանալով միութեան մարզական լայնատարած գործունէութեան առջեւ:

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԵԱՆ
ՄԻՋՇՐՁԱՆԱՅԻՆ ԽԱՂԵՐ

1996էն սկսեալ, Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած են միջշրջանային խաղեր, մասնակցութեամբ՝ Արժանթինի, Ուրուկուէյի եւ աւելի ուշ Պրագիլի մասնաճիւղերու մարզական խումբերուն: Առաջին խաղերը կազմակերպուած են Պուէնոս Այրէսի Ռամոս Մեխիայի դաշտին վրայ:

1998ին Յրդ Նաւասարդեան խաղերը կը կայանան Գորտոպայի մէջ, մասնակցութեամբ Պուէնոս Այրէսի եւ Գորտոպայի մասնաճիւղերու խումբերուն:

14էն 16 Հոկտեմբեր 2000ին Նաւասարդեան Ծրդ խաղերը տեղի կ'ունենան Մոնթեվիտէոյի մէջ:

21էն 25 Յուլիս 2004ին Նաւասարդեան միջշրջանային խաղերը կը կայանան Սան Փաուլոյի մէջ, տեղւոյն ՍԱՄԱ ակումբի կազմակերպութեամբ:

Գ. ՄԱՍ

ՍԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԳԻՊՏՈՍ

- ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ
- ԳԱՀԻՐԷ



Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.- « Կամք»ի 1995 տարուան պասքեթպոլի խումբը եւ վարչական կազմը

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

1992ի Յունուարին, Միուլթեան երիցագոյն մասնաճիւղը՝ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. - Կամքը կը նշէ իր հիմնադրութեան 80ամեակը: Կը կազմակերպուի պասքեթպոլի մրցաշարք, մասնակցութեամբ եգիպտահայ մարզական ակումբներու եւ Հ.Յ.Դ. երիտասարդական միութեան մարզական եւ մշակութային խումբերուն:

1994ին մասնաճիւղի պասքեթպոլի խումբը կ'ապահովէ Եգիպտահայ մրցաշարքերու ախոյեանութիւնը:

1995ին մասնաճիւղին վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ տոքթ. Արմէն Գաւուքճեան
Փոխ ատենապետ՝ Պերճ Միսքճեան

Ատենադպրուհի՝ Ալիս Թոփալեան
Գանձապահ՝ Նուպար Լէյլէկեան
Խորհրդականներ՝ Վահէ Պէնօհանեան, Արմէն Լէյլէկեան, Հրայր Մարտիկեան, Գէորգ Հալաճեան եւ Պերճ Թոսունեան:

1995ի եղանակին մասնաճիւղին պասքեթպոլի խումբը եգիպտահայ միութիւններու կազմակերպած չորս մրցաշարքերուն յաջորդաբար յաղթական դուրս գալով, կ'ապահովէ եգիպտահայ պասքեթպոլի ախոյեանութիւնը: Խումբը նոյն տիտղոսը կը պահէ 1996ին եւ 1997ին: Խումբը կը տիրանայ նաեւ Եգիպտոսի Բ. դասակարգի Ա. բաժանումի ախոյեանութեան, իսկ խումբի մարզիկներէն Արմէն Լէյլէկեան «տիպար մարզիկ»ի տիտղոսին: Մասնաճիւղը ունի նաեւ մինի պասքեթի փոքրերու խումբ:

19 Ապրիլ 1997ին, մասնաճիւղի հիմնադրու-

Թեան 85ամեակին առթիւ, վարչութիւնը կը կազմակերպէ պասքեթպոլի մրցաշարք եւ ճակերոյթ-պարահանդէս, հովանաւորութեամբ Վարուժան Գազանճեանի -[Ծ/185.28]: Կը կազմակերպուի նաեւ «Վեթերաններու Օր»:

1998ին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին տղքթ. Արմէն Գաւուքճեան (ատենապետ), Ժորժ Կասեան, Գէորգ Գաւուքճեան, տղքթ. Ճէնի Թովմասեան, Պերճ Միսքճեան, Նուպար Լէյլէկեան, Գէորգ Հալլաճեան, Հրայր Մարտիկեան, Արթո Միսքճեան, Արման Պէնօհանեան, Վահէ Պէնօհանեան եւ Պերճ Թոսունեան:

23 Օգոստոս 1998ին մասնաճիւղը պաշտօնական հանդիսութեամբ կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակը: Տեղի կ'ունենայ սկաուտական մարզական օր, տողանցք եւ դրօշակի արարողութիւն, «Վեթերաններու Օր» եւ աւանդական եգիպտահայ պասքեթպոլի մրցաշարք՝ ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Միհրան Շիմշիրեանի: «Ծառայութեան» շքանշանով կը պարգեւատրուին Զոհրապ Գաւուքճեան եւ Խաչիկ Շահպազեան -[Ծ/195.36]:

1999ին մասնաճիւղի անդամներուն ընդհա-

նուր թիւը կը բարձրանայ 172ի:

Մարզական գլխաւոր գործունէութիւնը կը մնայ պասքեթպոլը: Մասնաճիւղը կը կազմակերպէ եգիպտահայ մրցաշարք՝ պահելով եգիպտահայ խումբերու ախոյեանութիւնը: Խումբը կը մասնակցի նաեւ Աղեքսանդրիոյ պասքեթպոլի Ֆետերասիոնի Բ. դասի ախոյեանութեան մրցաշարքերուն, ապահովելով առաջնակարգ դիրքեր:


1999ին մասնաճիւղը կը նախաձեռնէ սկաուտական խումբի վերակազմութեան՝ կազմակերպելով «Մարզական եւ Սկաուտական Օր», այս առթիւ շուրջ 30 նորագիր գայլիկներ կու տան իրենց խոստումը -[Ծ/208.38]:

Տարեվերջին մասնաճիւղը պասքեթպոլի 18 հոգինոց պատուիրակութեամբ մը կ'այցելէ Աւստրալիոյ Մելպուռնի եւ Սիտնիի մասնաճիւղեր եւ կը մասնակցի Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ի 31րդ Նաւասարդեան խաղերուն -[Ծ/213.31]:

29 Ապրիլ 2001ին մասնաճիւղին դաշտին վրայ կը ճակատին Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ հայ



Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի 1996 տարուան պասքեթպոլի խումբը մասնաճիւղի վարչութեան հետ



Աղեքսանդրիոյ մասնաճիւղի 1996ի անդամական ընդհանուր ժողովի խմբանկար
ակումբներու հաւաքականներու պասքեթպոլի
կազմերը՝ առ ի պատրաստութիւն Համահայկա-
կան Բ. խաղերու մասնակցութեան:

2001-2002 տարեշրջանի գործունէութեան
համար մասնաճիւղի անդամական ընդհանուր
ժողովէն ընտրուած վարչական կազմը կը ներ-
կայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վահէ Պէնօհանեան
Փոխ ատենապետ՝ տոքթ. Գարլօ Կարապետեան
Ատենադպրուհի՝ Մարիա Հալլաճեան
Գանձապահ՝ Հրայր Մարտիկեան
Խորհրդականներ՝ Նուպար Լէյլէկեան, Պերճ
Միսքճեան, Պերճ Թոսունեան, Միհրան Գալաթճե-
ան, Կարի Պօհճէլեան եւ Սեդա Միսքճեան:

12-15 Սեպտեմբեր 2002ին մասնաճիւղը կը նշէ
իր հիմնադրութեան 90 ամեակը՝ կազմակերպե-
լով պասքեթպոլի մրցաշարք եւ մեծաշուք ճաշ-
կերոյթ - պարահանդէս - [Ծ/ 245.27]:

2004-2005 տարեշրջանին մասնաճիւղի վար-
չութեան կ'անդամակցին, ատենապետու-

թեամբ տոքթ. Գարլօ Կարապետեանի, Պերճ
Միսքճեան, Մարիա Հալլաճեան, Հրայր Մար-
տիկեան, Կարի Պօհճէլեան, Միհրան Գալաթճե-
ան, Էտի Պահարեան, Վահէ Պէնօհանեան, Ալին
Ազնաւուրեան եւ Նորա Լէյլէկեան:

ԳԱՅԻՐԷ

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. - «Արարատ»ի եւ Աղեք-
սանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. - «Կամք»ի եղբայրական
սերտ գործակցութիւնը՝ փոխադարձ կազմա-
կերպուած պասքեթպոլի մրցումներու ճամբով,
զոյգ մասնաճիւղերու կենսունակութեան
գլխաւոր առանցքը կը կազմէ:

1989-1991 երկամեակին մասնաճիւղի վարչու-
թեան կ'անդամակցին, ատենապետ՝ Վարուժան
Գազանճեան, ատենադպիր՝ տոքթ. Սուրէն Պայ-
րամեան, գանձապահ՝ Խոսրով Զաքարեան,
խորհրդականներ՝ Պետրոս Մխտիկեան, Էտի
Գարակէօզեան, Յրէտի Գարակէօզեան եւ Յա-
կոբ Ոսկերիչեան:

1992ին, մասնաճիւղի անդամներէն՝ Եգիպ-

տոսի աղաւնիի նշանառութեան հաւաքականի անդամ՝ Հէրի Գազանճեան կը յաջողի Սպանիոյ Մալակա քաղաքին մէջ կայացած աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին, 775 մարզիկներու վրայ պատուաբեր 4րդ դիրքը գրաւել:

1991-1993 երկամեակին վարչական անդամներն են, ատենապետ՝ Վարուժան Գազանճեան, ատենադպիր՝ տոքթ. Սուրէն Պայրամեան, փոխատենապետ՝ Խոսրով Զաքարեան, գանձապահ՝ Յակոբ Ոսկերիչեան, խորհրդականներ՝ Պետրոս Մխտիկեան, Էտի Գարակէօզեան եւ Ֆրէտի Գարակէօզեան:

1993ի Օգոստոս 20էն 22ի միջեւ կայացած եգիպտահայ մարզական միութիւններու պասքեթպոլի ախոյեանութեան կը տիրանայ Հ.Մ.Ը.Մ. - «Արարատ»ի կազմը: Խումբին մաս կը կազմեն Վարդան Գազանճեան, Գառնիկ Կրպոյեան, Հէրի Գազանճեան, Էտուար Մելիքեան, Հայկ Ասատուրեան, Նորայր Մխտիկեան, Արմէն Կրպոյեան, Կարօ Ասատուրեան, Ճորճ Թո-

րոսեան, Րաֆֆի Հեղինեան եւ Յակոբ Սայեան:

1993-1997 քառամեակին վարչութեան կ'անդամակցին, ատենապետութեամբ՝ Վարուժան Գազանճեանի, Խոսրով Զաքարեան, տոքթ. Սուրէն Պայրամեան, Յակոբ Ոսկերիչեան, Ֆրէտի Գարակէօզեան, Վարդան Գազանճեան, Բարսեղ Գրգըլեան, Իվան Թորոսեան եւ Գառնիկ Կրպոյեան:

26 Նոյեմբեր 1993ին մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը, մասնակցութեամբ Գահիրէի հայ աւագանիին, գլխաւորութեամբ Զաւէն Արք. Զինչինեանի: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով կը պարգեւատրուի մասնաճիւղի վեթերան անդամներէն Վարուժան Գազանճեան:

24 Սեպտեմբեր 1995ին մասնաճիւղի պասքեթպոլի խումբը կը տիրանայ եգիպտահայ խումբերու մրցաշարքի ախոյեանութեան:



Աղեքսանդրիոյ մասնաճիւղի պասքեթպոլի 1997ի կազմը՝ տարուան եգիպտահայ 5 մրցաշարքերու ախոյեան



Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. - «Կամք»ի 1998 տարուան վարչական կազմը.- Ժորժ Կասեան, Գեորգ Գաւուքճեան, տոքթ. Շէնի Թովմասեան, Պերճ Միսքճեան, տոքթ. Արմէն Գաւուքճեան, Նուպար Լէյլէկեան, Գեորգ Հալլաճեան, Հրայր Մարտիկեան, Արթօ Միսքճեան, Արման Պենօհանեան: Կը բացակային Վահէ Պենօհանեան եւ Պերճ Թոսունեան

26-29 Սեպտեմբեր 1996ի եգիպտահայ միութիւններու պասքեթպոլի մրցաշարքը՝ նուիրուած՝ Հայաստանի վերանկախացման 5րդ տարեդարձին, կը կազմակերպուի մասնաճիւղի վարչութեան կողմէ: Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալլայի մասնաճիւղի խումբը կը մասնակցի մրցաշարքին -[Ծ/175.24]:

1997-99 երկամեակին վարչութեան կազմին անդամներն են, Վարուժան Գազանճեան՝ ատենապետ, Խոսրով Զաքարեան, Լեւոն Դելփեան, տոքթ. Արմէն Մազլումեան, Վարդան Գազանճեան, տոքթ. Սուրէն Պայրամեան, Կարօ Թումայեանց, Արա Քէօհնէլեան, տոքթ. Լորիս Քէօհնէլեան եւ Գարօլին Յովակիմեան:

1997ին մասնաճիւղը կը նախաձեռնէ սկաուտական շարժումի աշխուժացման կազմակերպելով բանակում Հելիոպոլսոյ իր կեդրոնին մէջ: Բանակումին հսկողութիւնը կը կատարէ

Լիբանանէն Լուսին Գազէզեան: Այնուհետեւ նորագիր սկաուտներ, թիւով 31 հոգի, կը շարունակեն իրենց շաբաթական հաւաքոյթները:

1998ին մասնաճիւղը մեծ շուքով կը նշէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակը: Կը կազմակերպուի պասքեթպոլի մրցաշարք՝ հովանաւորութեամբ Հայաստանի դեսպան՝ դոկտ. Էտուարտ Նալպանտեանի: «Ծառայութեան» շքանշաններով կը պարգեւատրուին մասնաճիւղի վեթերան անդամներ՝ Համբարձում Եալընըզեան, Կարապետ Թումայեանց, Վրէժ Քէօհնէլեան, Խոսրով Զաքարեան, տոքթ. Գեորգ Մազլումեան եւ Նազարէթ Գալուստեան:

1999ին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 165ի:

31 Մարտ 1999ին մասնաճիւղի պագամաւոր տոքթ. Սուրէն Պայրամեան Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի բաց-

ման հանդիսութեան ընթացքին կը պարգե-
լատրուի Հ.Մ.Ը.Մ-ի «Արտակարգ» շքանշանով:

2000ի տարեսկիզբին մասնաճիւղը կը նախա-
ձեռնէ սկստական շարժումի վերակենդա-
նացման: Կը կազմուի Սկստական Խորհուրդ:
19-21 Յունուարին մասնաճիւղի կեդրոնատեղի-
ին դաշտին վրայ կը կազմակերպուի սկստա-
կան բանակում՝ ճէն 14 տարիքի 48 նորագիրնե-
րու մասնակցութեամբ: Աստիճանաւորներուն
մաս կը կազմեն Յարութիւն Պալեան, Կարէն
Եանրգեան, Ծովիկ եւ Նարինէ Աւետանեաններ:
Բանակումի ղեկավարման եւ սկստական
թեքնիք պատրաստութեան կը մասնակցի այս
նպատակով Լիբանանի Հ.Մ.Ը.Մ-էն հրաւիր-
ուած՝ խմբապետ՝ Ֆէտի Թաթրա:

29 Հոկտեմբեր 2000ին մասնաճիւղի անդա-
մական ընդհանուր ժողովի Բ. նիստին կ'ըն-
տրուի նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Պերճ Ասատուրեան
Փոխ ատենապետ՝ Կարօ Թումայեանց
Քարտուղար՝ Զաւէն Լէյլոզեան
Գանձապահ՝ Վահրամ Կէվրէկեան
Խորհրդականներ՝ Էտի Գարակէօզեան, Լեւոն
Դելիբեան եւ Սիլվա Ասատուրեան - Կապէյեան:

Տարեվերջին, մասնաճիւղին կազմակերպած
եզիպտահայ պասքեթպոլի մրցաշարքին մաս-
նաճիւղին խումբը կը տիրանայ ախոյեանու-
թեան: Մրցաշարքի պաշտօնական փակման
հանդիսութեան առթիւ մասնաճիւղի երկարամ-
եայ ատենապետ Վարուժան Գազանճեան կը
հռչակուի Հ.Մ.Ը.Մ- «Արարատ»ի ցկեանս պա-
տուոյ նախագահ:

22-24 Փետրուար 2002ին, մասնաճիւղի
կրտսեր պասքեթպոլիսթներու պատուիրակու-
թիւն մը կ'այցելէ Լիբանան, գլխաւորութեամբ
Տէր եւ Տիկին Ճէքի եւ Սեդա Կէվրէկեաններու



Աղեքսանդրիոյ մասնաճիւղի սկստական կազմը կայցելէ Ապրիլ 24ի յուշարձան



Աղեքսանդրիոյ մասնաճիւղի մինի պասքեթպոլի փոքրերու խումբը 1998ին

եւ մրցումներ կ'ունենայ Անթիլիասի մասնաճիւղի տարեկից խումբին դէմ -[Մ/236.18]:

23 Նոյեմբեր 2002ին մասնաճիւղի վարչութեան անդամներ կ'ընտրուին.-

Ատենապետ՝ Ծէքի Կէվրէկեան
 Փոխ ատենապետ՝ Յրէտի Գարակէօզեան
 Քարտուղար՝ Արա Քէօհնէլեան
 Գանձապահ՝ Վարդան Գազանճեան
 Խորհրդականներ՝ Պերճ Ասատուրեան,
 Հրայր Յովակիմեան, Սարգիս Գրգըլեան:

Նոյեմբերին, մասնաճիւղի պասքեթպոլի կրտսերներու խումբը (12 տարեկանէն վար) Ֆետերասիոնի մրցաշարքին մասնակցելով՝ Գահի-

րէի եւ Կիզէի խմբակցութեան առաջին դիրքը կը գրաւէ -[Մ/246.27]:

Հոկտեմբեր 2003ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի կազմակերպած եգիպտահայ միջակմբային պասքեթպոլի մրցաշարք, նուիրուած՝ Հ.Մ.-Ը.Մ.ի հիմնադրութեան 85ամեակին, մրցաշարքի բաժակին կը տիրանայ մասնաճիւղին խումբը: Միութեան 85ամեակի նշումի փակման հանդիսութիւնը տեղի կ'ունենայ պաշտօնական ճաշկերոյթ-պարահանդէսով, ուր ներկայ կը գտնուի այդ օրերուն իր լիազումարը Գահիրէի մէջ կատարող Կեդրոնական Վարչութեան ամբողջ կազմը-[Մ/256.8]:

ՊԱՂԵՍՏԻՆ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՂԵՍՏԻՆ

- ԵՐՈՒՍԱՂԷՄ
- ՀԱՅՖԱ
- ԵԱՖԱ



Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղեմի սկաուտներու լրի կազմը հայոց եկեղեցոյ զանգակատան առջև

ԵՐՈՒՍԱՂԵՍ

Երուսաղեմի մասնաճիւղի աւանդական ձեռնարկներէն են հրապարակային տողանցքներ, նշելու համար Սբ. Ծննդեան, Սբ. Զատիկուան եւ Մայիս 28ի տօները: Տօնախմբութիւններ կը կազմակերպուին նաեւ՝ Խանասորի արշաւանքի, Փետրուարեան ապստամբութեան եւ 21 Սեպտեմբերի Հայաստանի վերանկախացման տարեդարձներուն առիթներով:

Մասնաճիւղի գործունէութեան մաս կը կազմեն, բացի մարզական եւ սկաուտական բաժիններէն, նաեւ մշակութային ու գեղարուեստական բաժինները: Մասնաճիւղը ունի 40 անդամներ հաշուող «Բարսեղ Կանաչեան» երգչախումբ:

Մարզական գետնի վրայ մասնաճիւղը կը

պահէ մինի Ֆուլթպոլի երէցներու եւ կրտսերներու խումբեր:

1994 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն Վիգէն Գրիգորեան, Յակոբ Տէմիրճեան, Գօգօ Գրիգորեան, Գէորգ Հեքիմեան, Օհան Տէմիրճեան, Էլի Քահուէճեան եւ Օհան Կիւրեղեան:

1995ի Յունիսին մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային «Մարզական Օր»։ 1-8 Յունիսի տարեկան ընդհանուր բանակումը կը փակուի մարզիկներու ինքնապաշտպանութեան փորձերու ցուցադրութեամբ:

1996ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Յակոբ Տէմիրճեան:

15էն 22 Յուլիս 1996ին մասնաճիւղի սկաուտական շարքերէն 70 գայլիկներ, մրջնիկներ, արիներ եւ արենոյշներ բանակեցան Լաթրունի



Երուսաղեմի մասնաճիւղի սկաուտական նուագախումբը
կը տողանցէ Սր. Ծճնդեան տօնին առթիւ - Յունուար 2006

վանքին պուրակին մէջ: Այս առթիւ 19 Յունիսին նշուեցաւ Խանասորի արշաւանքին տարեդարձը, նախագահութեամբ Երուսաղեմի Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի - [Ծ/171.33]:

3 Մայիս 1996ին մասնաճիւղը մեծ շուքով կը նշէ իր հիմնադրութեան 60ամեակը: Այս առթիւ 15 անդամներ կը պարգեւատրուին «Ծառայութեան» շքանշանով – [Ծ/169.3]:

1998ին մասնաճիւղէն 5 սկաուտներ մասնակցեցան ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ճրգ Ընդհանուր Բանակումին, Աղաւնաձորի մէջ՝ Հայաստան:

1999ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Սերոբ Սահակեան, վարչական կազմին կ'անդամակցին, Վիքի Տէր Մատթէոսեան, Վաչէ Միսեան, Կարօ Պաղպուտարեան, Գաբօ Տիքալիքեան, Գէորգ Հեքիմեան, Ազնիւ Հինտոյեան,

Րաֆֆի Եզէկեղեան եւ Օհան Տէմիրճեան : 17էն 23 Յունիս 1999ին, մասնաճիւղի տարեկան բանակումին կը նշուի Խանասորի արշաւանքին 102րդ տարեդարձը, տեղի կ'ունենայ երդման արարողութիւն, նախագահութեամբ Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի - [Ծ/207.37]:

2000ի Յունուար ամսուան ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի եւ Հայաստանի հանրապետութեան նախագահի՝ Ռոպէրթ Քոչարեանի Երուսաղեմ այցելութեան առիթով մասնաճիւղին սկաուտական կազմերը կը մասնակցին պաշտօնական բոլոր ելոյթներուն - [Ծ/213.3]: 23էն 30 Յունիսին տեղի կ'ունենայ մասնաճիւղի տարեկան բանակումը՝ խմբապետութեամբ՝ Օհան Տէմիրճեանի - [Ծ/219.37]:

19 Յունիս 2001ին, նորընտիր վարչութիւնը իր

դիւանը կը կազմէ հետեւեալ ձեւով. ատենապետ՝ Վիգէն Գրիգորեան, փոխ ատենապետ՝ Օհան Տէմիրճեան, քարտուղարուհի՝ Ազնիւ Հինտոյեան, գանձապահ՝ Ռուբէն Գահուէճեան, սկաուտապետ՝ Վահէ Եազուպեան, խորհրդականներ՝ Պետիկ Կիրակոսեան, Րաֆֆի Եզէկելեան, Կարօ Պաղպուտարեան, Թամար Կիրակոսեան, Գաբրիէլ Տիքպիքեան եւ Իվան Պէնլեան:

2002 ին վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Վիգէն Գրիգորեան:

Հակառակ քաղաքական անապահով կացութեան, Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերը, իրենց շեփորախումբի առաջնորդութեամբ, 13 եւ 18 Յունուար 2002ին կը տողանցեն

Բեթղեհէմի թաղերուն մէջ, Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան առիթներով -[Ծ/238-33]:

Յուլիսին, մասնաճիւղէն սկաուտական եօթնանդամ պատուիրակութիւն մը կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական է. ընդհանուր բանակումին, Բիւրականի Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿի բանակավայրին մէջ:

2003ին մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւն է 136, հետեւեալ բաժանումներով՝ սկաուտներ՝ 75, մարզիկներ՝ 20 եւ օժանդակներ՝ 41:

2003 - 2004 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են Գէորգ Քահուէճեան՝ ատենապետ, Յարութ Պաղամեան, Ռուբէն Գահուէճեան, Յակոբ Տլտըլեան, Միհրան Տէր Մաթոսեան, Միհրան Գրիգորեան, Թամար Կիրակոսեան:



Երուսաղէմի սկաուտական պատուիրակութիւնը կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ ընդհանուր բանակումին, 2002 Բիւրական



Երուսաղէմի մասնաճիւղի «Բարսեղ Կանաչեան» երգչախումբը, կեդրոնը՝ ղեկավար Վարուժան Մարգարեան

եան, Կարօ Պաղպուտարեան եւ Ռուբէն Նալպանտեան:

2003ին, Հայֆայի մասնաճիւղը եւ Եաֆայի մասնաճիւղերուն հետ միասնաբար մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մի հիմնադրութեան 85ամեակը-[Ծ/262.30]:

Մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած, 2004-2005 տարեշրջանի գործունէութեան համար, վարչական կազմի անդամներն են.

- Ատենապետ՝ Սերոբ Սահակեան
- Ատենադպիր՝ Յարութիւն Պաղամեան
- Գանձապահ՝ Յակոբ Տլտըլեան

Մարզականի պատասխանատու՝ Ռուբէն Նալպանտեան

Ընկերայինի պատասխանատու՝ Թամար Կիրակոսեան

Սկստականի ներկայացուցիչ՝ Ազնիւ Հինտոյեան

Մշակութայինի պատասխանատու՝ Ռոզան Կիրակոսեան:

Երուսաղէմի մասնաճիւղի հիմնադրութեան 70ամեակին նուիրուած բանակումը տեղի կ'ունենայ 16-22 Յունիս 2005ին, Լաթրունի անտառին մէջ:

Մասնաճիւղը կը կատարէ իր տարեկան սկստական բանակումը, Սբ. Զատիկուան, Ապրիլ 24ի եւ Մայիս 28ի աւանդական տոհանցքները: Մարզական բաժինը կը կիրարկէ ֆութպոլ, պասքեթպոլ եւ փինկփոնկ: Մասնաճիւղը ունի «Նայիրի» պարախումբ: Մասնակցած է համահայկական Գ. խաղերուն, մինի ֆութպոլի կազմով:

2005-2006 տարեշրջանին մասնաճիւղի վար-

չուլթեան մաս կը կազմեն Սերոբ Սահակեան՝ ատենապետ, Յակոբ Տլտրլեան, Յարուլթ Պաղամեան, Ազնիւ Հինտոյեան, Րաֆֆի Եզէկելեան, Ռուբէն Նալպանտեան, Կարօ Պաղպուտարեան, Թամար Կիրակոսեան եւ Ռոզան Կիրակոսեան:

18 Յունուար 2006ին, ըստ աւանդական սովորուլթեան, մասնաճիւղի սկաուտական շարքերը կը մասնակցին Ս. Ծննդեան արարողուլթիւններուն, շեփորախումբի առաջնորդուլթեամբ տողանցելով դէպի Բեթղեհէմի հայոց վանքը, ուր երեկոյեան եկեղեցական արարողուլթեան ներկայ կը գտնուի Պաղեստինի նախագահ՝ Մահմուտ Ապպաս:

2006ին մասնաճիւղէն 25 սկաուտներ կը մասնակցին ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Տրդ Ընդհանուր Բանակումին Բիւրականի մէջ:

Երուսաղէմի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը իր ղեկավարուլթեամբ եւ շարքերով, ազգային բարձր գիտակցուլթեամբ կը գործէ, պաշտպանելու համար սաղիմահայ կալուածներն ու եկեղեցական իրաւունքները:

ՀԱՅՖԱ

Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած 1995 տարեշրջանի մասնաճիւղի վարչուլթեան անդամներն են՝ Անդրանիկ Գաթարեան, Միքայէլ Գաթարեան, Աւետիս Շահինեան, Րաֆֆի Տէմիրճեան եւ Ճոնի Մուրատճալեան:

Յունիսին մասնաճիւղի մարզիկները, Երուսաղէմի մէջ, կը մասնակցին «Մարզական Օր»-ւան խաղերուն:

1996էն 2002 տարիներուն մասնաճիւղի իրերայաջորդ վարչական կազմերուն ատենապետուլթիւնը վարած են Երեմ Լափաճեան, Եղիա Թաշճեան:

Վարչական կազմերուն անդամակցած են, Հայկ Բանոյեան, Յուսիկ Բանոյեան եւ ուրիշներ:

Իւրաքանչիւր տարի, Երուսաղէմի մէջ, մաս-

նաճիւղի մարզիկները կը մասնակցին միջմասնաճիւղային խաղերուն: Յատուկ տեղ կը գրաւեն Ֆուլթպոլի խումբին յաղթանակները Երուսաղէմի քոյր մասնաճիւղի խումբին դէմ:

2003ին, մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 90, հետեւեալ բաժանումներով՝ սկաուտներ՝ 25, մարզիկներ՝ 20 եւ օժանդակ անդամներ՝ 35: Տարեշրջանի ընթացքին մասնաճիւղը կ'ունենայ ընկերային աշխոյժ գործունէուլթիւն: Մարզական գետնի վրայ կը գործեն Ֆուլթպոլի եւ փինկփոնկի խումբերը: Վարչուլթիւնը Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրուլթեան 85ամեակը կը տօնէ Երուսաղէմի մէջ, տեղւոյն եւ Եաֆայի մասնաճիւղերու մասնակցուլթեամբ: Այս առթիւ մասնաճիւղէն 7 վեթերան անդամներ կը պարգեւատրուին:

2004-2005 տարեշրջանի գործունէուլթեան համար մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետ՝ Ճոնի Մուրատճալեան, ատենադպիր՝ Զաւէն Բանոյեան, գանձապահ՝ Միքայէլ Գաթարճեան, գոյքապահ՝ Րաֆֆի Տէմիրճեան, մարզական՝ Յուսիկ Բանոյեան:

2004ի Սուրբ Զատիկուան առիթով մասնաճիւղի սկաուտական կազմը եւ շեփորախումբը կը միանան Երուսաղէմի մասնաճիւղի կազմին եւ շեփորախումբին, Պատրիարք Սրբազան Հօր եւ միաբանական թափօրը առաջնորդելու Սուրբ Յարուլթեան տաճար [Ծ/263.29]:

Շնորհիւ Միհրան Պարոնեանի 60.000 ամ. տուլարի իշխանական նուիրատուուլթեան, 2005ին մասնաճիւղին ակումբը հիմնական նորոգուլթիւններու կ'ենթարկուի: Ակումբը Հայֆայի հայուլթեան ամէն կարգի գործունէուլթիւններու կեդրոնատեղին կը հանդիսանայ:

ԵԱՖԱ

Եաֆայի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը գործէ տեղւոյն «Հայկաչէն» ակումբին մէջ, որ քաղաքի հայուլթեան մնայուն հաւաքավայրը կը հանդիսանայ: Հ.Մ.Ը.Մ.ի Եաֆայի մասնաճիւղի սկաուտա-



կան եւ մարզական խումբերը իւրաքանչիւր տարի կը մասնակցին Երուսաղէմի մասնաճիւղի կազմակերպած Նաւասարդեան խաղերուն:

25 Մարտ 1994ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն. ատենապետ՝ Գօգօ Գալալեան, փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Միսաք Գատէրեան, ատենադպիր՝ Սուրէն Օհաննէսեան, մարզական՝ Գէորգ Հինտոյեան եւ գոյքապահ՝ Բիւզանդ Օհաննէսեան:

Իւրաքանչիւր տարի, սկաուտական խումբը կը կազմակերպէ տարեկան բանակում, Մայիս 28ի եւ Խանասորի արշաւանքի տօնակատարութիւններ: Ֆուլթուլի խումբը յաճախակի յաղթանակներ արձանագրած է այս առիթներով կազմակերպուող միջմասնաճիւղային խաղերու ընթացքին:

1995ին անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութեան կ'անդամակցին Պօղոս Ղուկասեան՝ ատենապետ, Վազօ Թորոսեան, Խաչիկ Աւետիսեան, Անդրանիկ Տարագճեան եւ Սուրէն Օհաննէսեան: Յունիսին, մասնաճիւղի

մարզիկները կը մասնակցին, Երուսաղէմի մէջ «Մարզական Օր»-ուան խաղերուն:

2002ին մասնաճիւղի ատենապետն է Գրիգոր Գուլյումճեան, փոխ ատենապետ՝ Հրանդ Յովհաննէսեան:

2003ին մասնաճիւղի գործունէութիւնը կը սահմանափակուի քաղաքական եւ ապահովական դժուարին պայմաններու բերումով: Միութեան հիմնադրութեան 85ամեակը կը նշուի գործակցութեամբ Երուսաղէմի եւ Հայֆայի մասնաճիւղերուն - [Ծ/262.30]:

2003-2004 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Գրիգոր Գուլյումճեան, ատենադպիր՝ Վարդգէս Թորոսեան, գանձապահ՝ Հրանդ Օհաննէսեան, մարզական՝ Մեսրոպ Ղուկասեան, մշակութային՝ Անդրանիկ Տարագճեան:

2005էն սկսեալ, հայոց վանքի հիւրասրահ՝ ակումբի շէնքի նորոգութիւններուն պատճառով, մասնաճիւղին իբրեւ կեդրոնատեղի կը ծառայէ վարչական անդամ Պօղոս Ղուկասեանի բնակարանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՅՈՐԴԱՆԱՆ

- ԱՄՄԱՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ



Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակին առթիւ Վահան Արք. Թովալեան Ամմանի մասնաճիւղի վարչական կազմին հետ

Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղը կը շարունակէ իր առաքելութեան ծառայել սկաուտական, մարզական եւ ընկերային բաժիններով:

Մասնաճիւղին սկաուտական բաժինը իր տարեկան բանակումը կը կազմակերպէ 10-13 Յունիսին, Շրնելըր վանքի պարտէզներուն մէջ: Եռօրեայ այս բանակումը կը փակուի խարուկահանդէսով- [Ծ/128.15]:

19-24 Սեպտեմբեր 1992ին, մասնաճիւղը կը հիւրընկալէ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի տղոց եւ աղջկանց պասքէթպոլի խումբերը, որոնք մրցումներ կ'ունենան մասնաճիւղի համապատասխան խումբերուն եւ տեղական այլ խումբերու դէմ, փոխադարձ ծանօթացումի առիթներ ստեղծելով:

1992ին Ամմանի մասնաճիւղի տղոց պասքէթ-

պոլի խումբը, տեղւոյն ախոյեանութեան մրցաշարքի աւարտական մրցումի յաղթանակով, կը բարձրանայ առաջին դասակարգ:

24 Նոյեմբեր 1993ին, մասնաճիւղը կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը: Տարեշրջանի ընթացքին տեղի կ'ունենան բանակում եւ տողանցք՝ նուիրուած միութեան 75ամեակին —[Ծ/145.6]:

1994ին մասնաճիւղի վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Էլի Պէննէեան: Վարչութեան կ'անդամակցին Աւետիս Առաքելեան, Յակոբ Մարգարեան, Գէորգ Աւագեան, Սիլվա Մէնէքչեան եւ Ռոստոմ Մխճեան: Տարուան ընթացքին մասնաճիւղը կ'ունենայ սկաուտական, մարզական եւ ընկերային բեղուն գործունէութիւն. կը կազմակերպուին բանակում, արշաւ,



Ամմանի մասնաճիղի սկաուտ եւ արեւոյշ աստիճանատրները 2004ին

զարգացման մրցում: Մարզական գետնի վրայ մասնաճիղի պասքեթպոլի տղոց զոյգ խումբերը կը մասնակցին Ֆետերասիոնի մրցաշարքերուն: Կը կազմակերպուին փինկփոնկի եւ Ֆուլթպոլի մրցաշարքեր- [Ծ/151.11]: Տարեվերջի աւանդական ձեռնարկներէն են Կաղանդի երեկոն, Սբ. Ծննդեան Աւետումը, ինչպէս նաեւ ընկերային հաւաքոյթներ աւուրճէն ներս- [Ծ/156.28]:

1995ին մասնաճիղի խմբապետական կազմի ճիգերը կ'արդիւնաւորուին. կը կազմակերպուին երդման արարողութիւն եւ բանակումներ.- — [Ծ/161.22]: Արի - արեւոյշ բաժնի խմբապետուհին է Ալին Պէննէեան: Գայլիկական բաժինը կը վարէ Սեւան Սարգիսեան:

Մասնաճիղի սկաուտ ընդհանուր խմբապետն է Կարօ Եումճեան:

23 Մարտ 1997ին կ'ընտրուի նոր վարչական կազմ. Արամ Մանուկեան՝ ատենապետ, Պետրոս Ասլանեան, Արսինէ Ճամպազեան, Համբարձում Հալլաճեան, Յակոբ Թոքաճեան, Յակոբ Մուրատեան եւ Գէորգ Կելրէկեան: Կազմի վարչական օժանդակ անդամներն են՝ Վարդգէս Տէրտէրեան եւ Ասատուր Ճէրէճեան:

1998ի եղանակի աւարտին սկաուտական բաժինը կը կազմակերպէ երդման արարողութիւն: Մասնաճիղի կրտսերներու պասքեթպոլի խումբը իր դասակարգի ախոյեանութեան երկրորդ դիրքը գրաւելով կը բարձրանայ Ա. դասակարգ:

Մասնաճիղը Հ.Մ.Ը.Մ.ի 80ամեակը կը տօնէ պաշտօնական հանդիսութեամբ, հովանաւորութեամբ Յորդանանի հայոց թեմի Առաջնորդ Վահան Արքեպիսկոպոս Թովալեանի: Այս առթիւ յուշանուէրներ կը ստանան մասնաճիղի

վեթերան անդամներ՝ Գէորգ Տաքէսեան, Էլի Պէննէեան, Գէորգ Աւագեան, Գէորգ Խուլմուլեան եւ Արամ Մուրատեան: Հովանաւոր Սրբազանը կը դրուատէ Միութեան գործունէութիւնը իր խօսքին մէջ նշելով «80 տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ. փաստած է, թէ ուր որ ալ ըլլայ, աճ իր ներդրումը ունի հայ պատանիներու դաստիարակութեան գործին մէջ, հետեւաբար, մենք իբրեւ հայ անհատներ պարտինք սատարել Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ձեռի աշխատանքներուն...» —[Ծ/199.6]:

15 Յուլիս 2000ին մասնաճիւղի սկստական աստիճանաւորական 16 սկստներէ բաղկացող կազմը մասնակցեցաւ սեմինար-բանակում, ղեկավարութեամբ Լիբանանէն խմբապետուհի Լուսին Գազէգեանի:

Մասնաճիւղը 2000ին կը հաշուէ 236 անդամ, որոնցմէ 90ը սկստական շարքերէն:

20 Ապրիլ 2001ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ. ատենապետ՝ Եղուարդ Չաքմաքեան,

փոխ ատենապետ Վարդգէս Տէրտէրեան, ատենադպիր՝ Գէորգ Խուլմուլեան, հաշուապահ՝ Պօղոս Նալպանտեան, սկստական՝ Կարօ Եումճեան, երիտասարդական՝ Կարօ Հերտեմեան, մարզական՝ Սեւան Սարգիսեան:

24 Ապրիլին վարչութիւնը կը կազմակերպէ Եղեռնի յուշատօն, բանախօս՝ Լիբանանէն Հրաչ Վարժապետեան: Մայիս 28ին կը կազմակերպէ անկախութեան խրախճանք:

28 Յունիսէն 1 Յուլիս 2001ին, մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան բանակումը՝ Սալթ քաղաքի «Հիւսէյն» բանակավայրին մէջ:

2003 տարուան վարչական կազմին կ'անդամակցին Եղուարդ Չաքմաքեան, Վարդգէս Տէրտէրեան, Կարօ Եումճեան, Գէորգ Խուլմուլեան, Կարօ Հերտեմեան, ԺողէՅ Հայրապետեան եւ Ռոզէթ Չաթմաճեան:

2006ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Կարօ Հերտեմեան:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՓԱՐԻԶ

Հ.Մ.Ը.Մ. - ՖՐԱՆՍ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ



Հ.Մ.Ը.Մ. - Ֆրանսի 1999-2000 տարուան վարչական կազմը Կեդրոնական Վարչութեան անդամ Հրաչ Սիսեռեանի հետ. ոտքի՝ Գրիգոր Արթինեան, Ալետիս Խշուաճեան, Սիմոն Ալիսի, Նազարէթ Նաճարեան, Կապի Պոսնոյեան, Ժորժ Գալփաքեան, Ժոզէֆ Պետիկեան, նստած՝ Սեդա Արթինեան, Անդրանիկ Պահարեան, Հրաչ Սիսեռեան (Կ.Վ.), Լեոն Պաղտասարեան, Այտա Խանճեան

Կազմակերպչական Գործունէութիւն

Հ.Մ.Ը.Մ.- Ֆրանսի մեկուսի շրջանը հիմնուած է 1977ի Դեկտեմբերին: 1991-92 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետ՝ Հրաչ Սիսեռեան*
- Փոխ ատենապետ՝ Մկրտիչ Օսկեան*
- Ատենադպիր՝ Թամար Գալէմեան*
- Փոխ ատենադպիր՝ Սեդա Արթինեան*
- Գանձապահ՝ Գէորգ Աբգարեան*
- Հաշուապահ՝ Շանթ Ոսկերիչեան*
- Խորհրդականներ՝ Վարանդ Պաղտասարեան, Յարութ Պազգալեան եւ Կարօ Թոսունեան՝ փոխարինուած Կապի Պոսնոյեանով: Մարզական,*

սկաուտական եւ ընկերային յանձնախումբեր կ'օժանդակեն վարչութեան գործունէութեան: Անդամներու ընդհանուր թիւն է 185: Մասնաճիւղին նստավայրն է Փարիզի Հայ Մշակոյթի Տունը. 17 rue Bleu, Paris 75009:

Սկիզբէն ի վեր, մասնաճիւղին գլխաւոր տազնապը կը մնայ սեփական դաշտ մը ունենալու պարագան: Մասնաճիւղի իրերայաջորդ վարչական կազմերը ճիգ չեն խնայեր այս հիմնական հարցին լուծում մը գտնելու համար եւ այս նպատակով կը հաստատեն յատուկ ֆոնտ:

1992-93 տարեշրջանին, վարչութեան կ'անդամակցին՝ Հրաչ Սիսեռեան, Կապի Պոսնոյեան, Թամար Գալէմեան, Սեդա Արթինեան, Գէորգ

Աբգարեան, Լեւոն Պաղտասարեան, Շանթ Ոսկերիչեան, Յարութ Պազգալեան եւ Ներսէս Շահինեան: 1993ի աւարտին մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւն է 244, որոնցմէ 104ը սկառուտական շարքերէն:

1993-94 տարեշրջանին վարչական կազմի անդամներն են Հրաչ Սիսեռեան՝ ատենապետ, Կապի Պոսնոյեան, Արմէն Մնացականեան, Հարմիկ Օհանեան, Գէորգ Աբգարեան, Վարանդ Պաղտասարեան, Շանթ Ոսկերիչեան, Յարութ Պազգալեան եւ Լեւոն Պաղտասարեան: Մարզական եւ սկառուտական ընթացիկ գործունէութեանց առընթեր վարչութիւնը կը կազմակերպէ ընկերային հաւաքոյթներ: Գանձի մուտքերու ընդհանուր գումարն է 731.000 Ֆրանք:

1994-95ին, վարչական նախորդ կազմին վրայ կ'աւելնան Ռիթա Իսահակեան եւ Ժողէֆ Պե-

տիկեան: 1995ի Ապրիլին Հրաչ Սիսեռեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ կ'ընտրուի: Վարչութեան ատենապետ կ'ընտրուի Վարանդ Պաղտասարեան, կազմը կ'ամբողջացուի Ճորճ Գալփաքեանի մասնակցութեամբ: Մարզական եւ սկառուտական աշխատանքները կ'ընթանան բնականոն զարգացումով: Մայիս 28ի առիթով, 22 հոգիներէ բաղկացող պատուիրակութիւն մը կը մեկնի Աթէնք՝ մասնակցելու հանդիսութեան եւ մրցելու տեղւոյն մասնաճիւղի ֆուտպոլի եւ պասքեթպոլի խումբերուն դէմ: Վարչութիւնը վերանորոգումներով, ջեռուցումի եւ հեռաձայնի սարքաւորումներով կ'օժտէ Սամուէլ-Մուրատ վարժարանի կողմէ մասնաճիւղի սկառուտութեան տրամադրուած բաժինները:

Մասնաճիւղի 21րդ անդամական ընդհանուր



Հ.Մ.Ը.Մ. «Ֆրանս»ի մասնաճիւղի 1996 տարուան վարչական կազմը



1998 տարեշրջանի Հ.Մ.Ը. Մ. «Ֆրանս»ի վարչութիւնը

Ժողովէն ընտրուած վարչական կազմը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ 11 Նոյեմբեր 1996ի նիստին ընթացքին.-

Ատենապետ՝ Վարանդ Պաղտասարեան

Փոխ ատենապետներ՝ Կապի Պոսնոյեան եւ Լեւոն Պաղտասարեան

Ատենադպիր՝ Ռիթա Իսահակեան

Գանձապահ՝ Յարութ Պազգալեան

Հաշուապահներ՝ Գէորգ Աբգարեան եւ Հարմիկ Օհանեան

Խորհրդականներ՝ Արմէն Մնացականեան, Ժողէֆ Պետիկեան, Ճորճ Գալփաքեան եւ Շանթ Ոսկերիչեան:

26էն 28 Մարտ 1997ին վարչութիւնը կը հիւրընկալէ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջաններու եւ Մեկուսի շրջաններու վարչութիւններու միջդիւանային 4րդ խորհրդաժողովը՝ Roissyի Sofitel պանդոկին մէջ:

31 Յունիսէն 10 Օգոստոս պասքեթպոլի խումբեր կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ-ական 5րդ մարզախաղերուն, Ուաշինկթընի եւ Նիւ Ճըրզիի մէջ:

1997-98 տարեշրջանին վարչական կազմին կ'անդամակցին, Վարանդ Պաղտասարեան, Ռիթա Իսահակեան, Յարութ Պազգալեան, Կապի Պոսնոյեան, Լեւոն Պաղտասարեան, Արմանտ Փինարպաշեան եւ Աւօ Խշուածեան: Վարչութեան տարեշրջանի գործունէութեամբ, դրամատուներու մէջ, սեփական դաշտի գնման ծրագրին յատուկ իր պատրաստ գումարները կը բարձրանան 67.888 Ֆրանքի եւ 226.401 ամերիկեան տոլարի:

1999-2000 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան անդամներն են.-

Ատենապետ՝ Անդրանիկ Պահարեան



2005 տարուան Հ. Մ. Ը. Մ. - «Ֆրանս»ի վարչական կազմը Կեդրոնական Վարչութեան անդամներու հետ, ատենապետ Գառնիկ Մկրտիչեանն աստած կեդրոնը եւ Լեւոն Պաղտասարեանն ուտքի աջէն երրորդը

*Փոխ ատենապետ՝ Լեւոն Պաղտասարեան
 Քարտուղար՝ Ճորճ Գալփաքեան
 Գանձապահ՝ Սեդա Արթինեան
 Հաշուապահ՝ Նազարէթ Նաճարեան
 Գոյքապահ՝ Այտա Խանճեան
 Ընկերային՝ Կապի Պոսնոյեան
 Սկաուտական՝ Գրիգոր Արթինեան
 Պասքեթպոլ՝ Աւետիս Խշուաճեան
 Ֆուլթպոլ՝ Ժոզէֆ Պետիկեան եւ Սիմոն Ալլը-
 ճը:*

Այս տարեշրջանին կը նորոգուին վարչութեան նստավայրի սենեակը եւ սկաուտական հաւաքավայրը:

22 Հոկտեմբեր 2000ին մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ:-

Ատենապետ՝ Անդրանիկ Պահարեան

*Ատենադպիր՝ Սեդա Արթինեան
 Գանձապահ՝ Յարութ Պազգալեան
 Հաշուապահ՝ Նազարէթ Նաճարեան
 2001 տարուան մասնաճիւղի վարչութեան
 մաս կը կազմեն:-*

*Ատենապետ՝ Անդրանիկ Պահարեան
 Փոխ ատենապետ եւ գանձապահ՝ Լեւոն Պաղ-
 տասարեան*

*Ատենադպիր՝ Արթինէ Շմաւոնեան
 Հաշուապահ՝ Նազո Նաճարեան
 Խորհրդականներ՝ Այտա Խանճեան, Կապի
 Պոսնոյեան, Ալօ Խշուաճեան, Ժոզէֆ Պետիկ-
 եան եւ Սեւակ Թորոսեան:*

*2002-2003 տարեշրջանին վարչական կազմին
 կ'անդամակցին Անդրանիկ Պահարեան, (ատե-
 նապետ), Լեւոն Պաղտասարեան, Նազարէթ*

Նաճարեան, Ժողէֆ Պետիկեան, Այտա Խանճեան, Կապի Պոսնոյեան եւ Սեւակ Թորոսեան, փոխարինուած Ճորճ Գալփաքեանով:

Տարեշրջանի անդամական ընդհանուր թիւն է 214:

2003ի Յունիսին, Հ.Մ.Ը.Մ.ի Տրդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը Լեւոն Պաղտասարեանը կ'ընտրէ Կեդրոնական Վարչութեան անդամ: Տարեշրջանի մասնաճիւղի գործունէութեան մուտքերու ընդհանուր գումարն է 147.026 եւրօ, ելք՝ 144.396 եւրօ:

2004էն 2006 մասնաճիւղի վարչութեանց կ'անդամակցին, ատենապետութեամբ՝ Հրաչ Սիսեռեանի, Ռիթա Իսահակեան, Յարութ Պագալեան, Նազարէթ Նաճարեան, Վարանդ Պաղ-

տասարեան, Կապի Պոսնոյեան, Ժողէֆ Պետիկեան, Ճորճ Գալփաքեան, Հարմիկ Օհանեան, Արմէն Մնացականեան, Մորիս Տէմիրճեան եւ Նարեկ Արթինեան:

Մարզական Գործունէութիւն

Ֆութպոլ

Ֆութպոլի խումբերու փորձերը կը կատարուին Գլամար քաղաքի քաղաքապետութեան stade de la plaine ի դաշտին վրայ:

Ֆութպոլի խումբը կը մասնակցի Hauts de Seine նահանգի Գ. դասակարգի ախոյեանութեան մրցաշարքերուն: Խումբի մարզիչն է Պ.



Հ.Մ.Ը.Մ.- «Ֆրանս»ի «Սուրէն Մուրատեան» ֆութպոլի եւ պասքետպոլի տարեկան միջմասնաճիւղային մրցաշարքերու փակման հանդիսութեան ընդհանուր տեսարան, 3 Յունիս 2000

Ասլան: Տարեշրջանի ախոյեանուլթիւնը ապահովելով, խումբը 1992-93 եղանակին կը բարձրանայ Բ. դասակարգ: 12 եւ 13 Յունիս 1993ին, վարչուլթիւնը կը կազմակերպէ միջերոպական մասնաճիւղերու Ֆուլթպոլի եւ պասքեթպոլի մրցաշարք նուիրւած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրուլթեան 75ամեակին: Մրցաշարքին կը մասնակցին Վալանսի, Լոնտոնի եւ Յունաստանի խումբերը: Ֆուլթպոլի խումբէն 4 մարզիկներ կը մասնակցին Փարիզի եւ շրջակայքի հայ խումբերու հաւաքականին՝ մրցելով Variete Football Clubի խումբին դէմ: Մրցումի եկամուտին տասը տոկոսը կը տրամադրուի Հայաստանի Ֆոնտին:

1996-97 եղանակին Ֆուլթպոլի Ա. խումբը իր դասակարգի 12 խումբերուն շարքին կը գրաւէ ախոյեանուլթեան 5րդ դիրքը, իսկ պահեստի խումբը՝ 2րդ դիրքը: Խումբերու մարզիչն է Ժան Փօլ Խորանեան:

1997ին, մասնաճիւղէն պատուիրակուլթիւն մը կը մասնակցի Գանատայի Հ.Մ.Ը.Մ.ի միջշրջանային մարզախաղերուն:

1998ին մասնաճիւղի Ֆուլթպոլի երեք դասակարգի խումբերը, շնորհիւ Hauts de Seine նահանգի ախոյեանուլթեան մրցաշարքերուն իրենց ապահոված դիրքերուն, մէկական դասակարգի բարձրացում կ'ապահովեն -[Ծ/207.34]: Ֆուլթպոլի առաջին խումբը Յուլիսին կը մասնակցի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 23րդ Նաւասարդեան խաղերուն: 1998-99 տարեշրջանի խումբերու մարզիչն է Սահակ Չաւուշ: 1999ի Սեպտեմբերին մասնաճիւղը կը հիմնէ 9-11 տարեկան փոքրերու յատուկ Ֆուլթպոլի դպրոց: 2000ին, 85 Ֆուլթպոլիստներ կը կազմեն մասնաճիւղի ներկայացուցչական, պահեստի, 17 տարեկանէն վար կրտսերներու եւ փոքրերու չորս խումբերը:

2001ին մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբերու ցանցը կը ծաւալի, Փետերասիոնի Բ. դասակարգի ներկայացուցչական կազմի կողքին կը գործեն պահեստի, կրտսերներու եւ փոքրերու երեք խումբերը: Յունիսին մասնաճիւղը կը կազմակերպէ Արեւմտեան Եւրոպայի միջՀ.Մ.Ը.Մ.-

ական Ֆուլթպոլի մրցաշարք, որուն կը մասնակցին Լոնտոնի, Ալմելոյի եւ Վալանսի մասնաճիւղերու կազմերը, ինչպէս նաեւ՝ Ալֆորվիլէն եւ Իսի Լէ Մուլինոյէն հայկական խումբերը -[Ծ/232.37]:

2002-2003 եղանակին Ֆուլթպոլի Ա. եւ Բ. խումբերու մարզիչն է Ժան Փօլ Խորանեան, կրտսերներունը՝ Յարուլթ Պապանազարեան: 7 եւ 8 Յունիսին «Սուրէն Մուրատեան» տարեկան մրցաշարքին կը մասնակցին Լոնտոնի եւ Վալանսի մասնաճիւղերու, Զուիցերահայ Միուլթեան, Գերմանահայ, Ազա եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.- Արծիւի խումբերը: Մրցաշարքի փաւման հանդիսուլթեան կը նախագահէ Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետ՝ երեսփոխան Անտրէ Սանլթինի:

Պասքեթպոլ

Մասնաճիւղի կարեւորագոյն ձեռնարկներէն է տարեկան հերթականուլթեամբ կազմակերպուող «Սուրէն Մուրատեան» պասքեթպոլի մրցաշարքը:

1992ին, պասքեթպոլի խումբերու փորձերը կը կատարուին Կլասիէրի դաշտին վրայ: Երէցներու խումբը կը մասնակցի Excellence դասակարգի ախոյեանուլթեան մրցաշարքերուն:



Հ.Մ.Ը.Մ. - «Ֆրանս»ի 1995 տարուան պասքեթպոլի խումբը

1993-94 եղանակին, խումբը յառաջդիմելով, կը մասնակցի Փարիզի եւ շրջակայքի Պատուոյ դասակարգի ախոյեանութեան յաջող արդիւնքներով:

1996-97 եղանակին պասքեթպոլի Ա. եւ Բ. կազմերը կը մասնակցին Պատուոյ եւ Ա. դասակարգի Ֆետերասիոնի ախոյեանական մրցաշարքերուն: Ա. խումբը կը գրաւէ 10 խումբերու վրայ երրորդ դիրքը, իսկ Բ. խումբը 8 խումբերու վրայ երրորդ դիրքը:

1997-98 տարեշրջանին պասքեթպոլի յանձնախումբին կ'անդամակցին Աւօ Խշուածեան, Հրաչ Մակարեան, Արա Իսահակեան եւ Էլիզապէթ Սիսեռեան: Պասքեթպոլի զոյգ խումբերը կը մասնակցին պատկան Ֆետերասիոնի ախոյեանութեանց մրցաշարքերուն:

2002-2003 տարեշրջանին մասնաճիւղը Ֆետերասիոնի մրցաշարքին կը մասնակցի մէկ խումբով եւ մրցաշարքի աւարտին կ'ունենայ դասակարգի բարձրացում: Խումբը կը մասնակցի միջերոպական հայկական միութիւններու Ե. մրցաշարքին:

Սկաուտական Գործունէութիւն

16էն 21 Յունիս 1991ին մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան Տրդ բանակումը, Ֆոնթընէ Թրէսինյի մօտակայ Շաթօ Տ'էքուպլէ անտառին մէջ- [Ծ/113.30 եւ 115.16]:

1992ին Սկաուտական Խորհուրդի ատենապետուհին է Իտա Մալոյեան: Խորհուրդը 12 Ապրիլին կը կազմակերպէ «Հայ Սկաուտի Օր»ուան հանդիսութիւն՝ գեղարուեստական ճոխ յայ-



Հ.Մ.Ը.Մ. - «Ֆրանս»ի 2004 տարուան ընդհանուր բանակումին մասնակիցներու խմբանկար

տագրով: Յուլիսին, 10 սկսողները կը մասնակցին Լոնտոնի մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումին: Տարեշրջանի ընթացքին կը կազմուի 7 հոգինոց սկսողական նուազախումբ, ուսուցիչ՝ Եղուարդ Բարսեղեան:

1993ին մասնաճիւղի ընդհանուր խմբապետն է Արմէն Մնացականեան: Խումբի անդամներու թիւը կը բարձրանայ 86ի: Արչաւներ, բանակումներ, ազգային հանդիսութեանց մասնակցութիւններ (Ապրիլ 24, Մայիս 28, Ղարաբաղի ի նպաստ ցոյց) մաս կը կազմեն խումբի գործունէութեան: Խումբի բոլոր անդամները կը վերատարազաւորուին:

20 Հոկտեմբերէն 1 Նոյեմբեր 1994ին մասնաճիւղը կը կազմակերպէ սկսող աւտիճանաւորներու դասընթացք, ղեկավարութեամբ՝ Լիբանանէն հրաւիրուած խմբապետ՝ Կարպիս Գապասագալեանի -[Ծ/156.30]: 14 Դեկտեմբերին տեղի կ'ունենայ ծնողական ժողով: Խումբերը կը կազմակերպեն 1995ի Ամանորի հաւաքոյթ, տարազահանդէս: Տարեկան ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 18 Յուլիս 1995ին, խմբապետ՝ Նարեկ Արթինեան: 1էն 10 Օգոստոսին 10 սկսողները կը մասնակցին Լոնտոնի մասնաճիւղի տարեկան բանակումին: 14-24 Դեկտեմբեր 1996ին Նարեկ Արթինեան եւ Սեւակ Թորոսեան կը մասնակցին սկսողական խմբապետական համագումարին, Աւստրալիոյ մէջ: Անոնք 1997ին կը ստանձնեն խումբի ընդհանուր խմբապետի եւ փոխ խմբապետի պաշտօնները:

1998ին կը կազմուի մասնաճիւղի երէց սկսողական փաղանգը, խմբապետութեամբ Արմէն Մնացականեանի: 12-21 Յուլիսին 17 արիարենոյշներ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ Ընդհանուր Բանակումին Աղաւնաձորի մէջ՝ Հայաստան:

9 Մայիս 1999ին մասնաճիւղը կը կազմակերպէ տարեկան «Սկսողութիւն Օր»-ուան տօնակատարութիւն-[Ծ/203.31]:

2000ի Փետրուարին մասնաճիւղի սկսողական կազմերը առաջնորդեցին ազգային հերոս Զօրավար Անդրանիկի աճիւններու Հայրենիք

փոխադրման յուղարկաւորութիւնը Փարիզի Փէր Լաշէզ գերեզմանատունէն: Տարուան մասնաճիւղի սկսող ընդհանուր խմբապետն է Արա Մատէնեան:

2001-2002 տարեշրջանին մասնաճիւղի սկսող խմբապետուհին է Արթինէ Շմաւոն:

2002ի ամրան մասնաճիւղէն 22 հոգինոց սկսողական պատուիրակութիւն մը կը մասնակցի ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ Ընդհանուր Բանակումին, Բիւրականի մէջ:

2002-2003 տարեշրջանի Սկսողական Խորհուրդի անդամներն են Լուի Պաղտասարեան, Սոնիկ Լը Ֆոր, Հրաչ Եագուպեան եւ Ռոյ Վարդերեսեան: Վարչութեան ներկայացուցիչ՝ Ճորճ Գալփաքեան, ընդհանուր խմբապետ՝ Պօղոս Մահպուլապեան:

Ազգային եւ Հրապարակային
Գործունէութիւններ

Մասնաճիւղի հրապարակային գլխաւոր ելոյթը տարեկան ճաշկերոյթ-պարահանդէսն է, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ական եւ համակիր անդամներու: Ընկերային յանձնախումբը կը կազմակերպէ անդամական խրախճանքներ:

1993ի Նոյեմբերին մասնաճիւղը կը նշէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը՝ «Կամք» օրաթերթի բացառիկով, «Ռատիօ Այբ»-էն հարցազրոյցով եւ Գրիգոր Յակոբեանի շիրիմին այցելութեամբ:

13 Յունուար 1996ի ճաշկերոյթ - պարահանդէսի ընթացքին վարչութիւնը «Ծառայութեան» շքանշանով կը պարգեւատրէ մասնաճիւղի վարչութեան բազմամեայ ատենապետ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Հրաչ Սիսեռեանը: 12 Դեկտեմբերին մասնաճիւղի սկսողները ներկայ կ'ըլլան Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Ռոպէրթ Քոչարեանի այցելութեան՝ Հայ Մշակութային Տուն:

25 Յունուար 1997ին, սկսողական կազմերը կը հետեւին Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսի այցելութիւններուն Փարիզի եւ Ալֆորվիլի հայկական զանազան յուշարձաններ եւ

եկեղեցիներ: Ապրիլին անոնք կ'առաջնորդեն Ապրիլ 24ի հայկական ցոյցը՝ տողանցելով էթնոլալի հրապարակէն մինչեւ թրքական դեսպանատուն:

1997ին Հ.Մ.Ը.Մ. - Ֆրանսի հիմնադրութեան քսանամեակը կը նշուի շքեղ ճաշկերոյթ-պարահանդէսով: Այս առթիւ Պահա եւ Սատ Հարիրի



Հ.Մ.Ը.Մ. - «Ֆրանս»ի հիմնադրութեան 30ամեակի յիշատակի վահանը

եղբայրները մասնաճիւղի դաշտի անձեռնմխելի Ֆոնտին կը նուիրեն 70.000 ամ. տոլար- [Ծ/177.27]: 20ամեակի նոյն առիթով մասնաճիւղի տարեկան «Սկաուտի Օր»ուան նշումը տեղի կ'ունենայ 18 Մայիսին բացառիկ հանդիսութեամբ: Իսկ 23 Մայիսին, Հրաչ Սիսեռեան Ֆրանսայի պասքեթպոլի ֆետերասիոնին կողմէ կը պարգեւատրուի յատուկ «Գնահատանքի Գիր»ով: Վարչութիւնը կը պատրաստէ 20ամեակը նշող արծաթեայ 20 մետալներ, յատուկ թուագրումով եւ վկայականով, որոնց վաճառքը կը նպաստէ մասնաճիւղի գանձին:

2000ի Յունուարին «Ծառայութեան» շքանշանով կը պարգեւատրուի մասնաճիւղի երկարամեայ վարչական եւ ատենապետ Կապի Պոսնոյեան:

10 Յունուար 2004ին մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան ճաշկերոյթ-պարահանդէսը:

Մամուլ

Մասնաճիւղը կը տարածէ «Մարզիկ» պաշտօնաթերթը եւ թղթակցութիւններով կը մասնակցի բովանդակութեան: Թղթակցութիւններով կը մասնակցի նաեւ «Կամք» եւ «Յառաջ» օրաթերթերուն, «Armenascope»ին եւ «Ռատիոյ Այբ»ի սփռումներուն:

2000էն սկսեալ մասնաճիւղը կը հրատարակէ իր ներքին տեղեկատուն՝ երկլեզու «Հ.Մ.Ը.Մ.ի Զայն»ը, գործակցութեամբ մասնաճիւղի անդամներուն, խմբագիր՝ Սեւակ Թորոսեան:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԼՈՆՏՈՆ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ԸՆԿԵՐԱՅԻՆ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

Կազմակերպչական

Հ.Մ.Ը.Մ.ի Անգլիոյ մայրաքաղաք՝ Լոնտոնի մեկուսի մասնաճիւղը յառաջընթաց թափով իր գործունէութիւնը կը շարունակէ 1990ական թուականներուն եւս: 1991-92 թուականի վարչական կազմին կ'անդամակցին.-

Ատենապետ՝ Հրաչ Պօղոսեան
Ատենադպիր՝ Սիլվա Դիլանչեան
Հաշուապահ՝ Ալենոյշ Գրիգորեան
Սկաուտական պատասխանատու՝ Ալէք Խաչատրեան

Մարզականի պատասխանատու՝ Դաւիթ Ստեփանեան, փոխարինուած Համգիկ Օհանեանով:

Այս տարեշրջանին մասնաճիւղի անդամներ-

րուն ընդհանուր թիւն է 396: Մասնաճիւղը կը գործէ Լոնտոնի Հայ Կեդրոնին մէջ:

1992ի ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձևով.-

Ատենապետուհի՝ Անահիտ Սարգսեան
Ատենադպիր-Գանձապահ՝ Էդմոնդ Աբրահամեան

Հաշուապահ՝ Ալենոյշ Գրիգորեան
Սկաուտական՝ Յարութ Պօղոսեան
Մարզական՝ Համգիկ Օհանեան:

Այս տարեշրջանին մասնաճիւղի պատասխանատուներու պատուիրակութիւն մը կը բանակի Brownsea Islandի պատմական բանակավայրին մէջ, ուր սկաուտական շարժումի հիմնադիր



Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի 6 Հոկտեմբեր 1991ի անդամական ընդհանուր ժողովին մասնակիցներու խմբանկար

Լորտ Պէյտրն Փառլը կազմակերպած է սկսու-
տական առաջին բանակումը, հիմնելով միջազ-
գային շարժումը: Մասնաճիւղի գործունէու-
թեան նստավայրը տարեշրջանի կիսուն կը փո-
խադրուի Acton High School, Հայ Կեդրոնի
վերջնական փակման պատճառով:

1993-94 տարեշրջանի վարչութեան մաս կը
կազմեն Հրաչ Պօղոսեան, Էդմոնդ Աբրահամ-
եան, Նազիկ Դիլանչեան, Վիոլէթ Թադէոսեան
եւ Զարեհ Խաչատրեան: 1994-95 տարեշրջանին
Ալենոյշ Գրիգորեան եւ Ալդօ Ֆլէրի կը փոխարի-
նեն Էդմոնդ Աբրահամեանն ու Զարեհ Խա-
չատրեանը: Մասնաճիւղի պատգամաւորները
կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի ճրդ Պատգամաւորա-
կան Ընդհանուր Ժողովին:

1995-96 տարեշրջանին Հրաչ Պօղոսեան կը շա-
րունակէ վարել մասնաճիւղի վարչութեան
ատենապետութիւնը, գործակցութեամբ Էդ-
մոնդ Աբրահամեանի՝ ատենադպիր, Շաքէ
Օհանեանի՝ գանձապահ եւ խորհրդականներ՝
Ռուպինա Ազիզեանի, Լինտա Բեշիրեանի, Ալդօ
Ֆլերիի եւ Ռոպէրթ Օհանեանի: Այս տարեշրջա-
նին զգալի տեղատուութեամբ անդամներու
ընդհանուր թիւը կը նուազի 226ի:

1996-97ի վարչական կազմը մեծամասնու-
թեամբ նախորդ տարուան կազմն է, միայն
Ալէք Խաչատրեան եւ Շիրազ Վարդանեան կը
փոխարինեն Շաքէ եւ Ռոպէրթ Օհանեանները:
Մասնաճիւղի նստավայրը կը տեղափոխուի
«Նաւասարդ» կեդրոն:

1997-98ի վարչութեան կ'անդամակցին Ալէք
Խաչատրեանի ատենապետութեամբ՝ Շիրազ
Վարդանեան, Ռուպինա Ազիզեան, Էդմոնդ Աբ-
րահամեան, Անահիտ Զրաղացպանեան, Լինտա
Բեշիրեան եւ Սիլվա Դիլանչեան:

1998-99 տարեշրջանին մասնաճիւղի վարչու-
թեան անդամներն են.-

Ատենապետ՝ Ալէք Խաչատրեան

Ատենադպիր՝ Ալենոյշ Գրիգորեան
Հաշուապահ՝ Ռուբինա Ազիզեան
Գանձապահ՝ Լինտա Բեշիրեան
Մարզական՝ Շիրազ Վարդանեան
Տնտեսական՝ Անահիտ Զրաղացպանեան
Սկսուտական՝ Մարինա Աւագեան:

1999-2000 տարեշրջանի գործունէութեան հա-
մար անդամական ընդհանուր ժողովէն նոր
ընտրութեամբ քարտուղարութեան պաշտօնը
կը ստանձնէ Անտրէ Դադայեանը: Նախկին վար-
չութենէն կազմին մէջ կը մնան Ալէք Խաչատր-
եան, Անահիտ Զրաղացպանեան, Ալենոյշ Գրի-
գորեան եւ Մարինա Աւագեան. նոր անդամներ
կ'ընտրուին Ռոպէրթ Օհանեան եւ Ալդօ Ֆլէրի:

5 Նոյեմբեր 2000ին կը վերընտրուի վարչա-
կան նոյն կազմը:

2001-2002 տարեշրջանի վարչական կազմին
կ'անդամակցին.-

Ատենապետ՝ Արմանտ Աբրահամեան
Ատենադպիր՝ Ալէք Խաչատրեան
Գանձապահ՝ Ռուբինա Ազիզեան
Հաշուապահ՝ Ալենոյշ Գրիգորեան
Սկսուտական՝ Անտրէ Դադայեան
Մարզական՝ Շիրազ Վարդանեան
Տնտեսական՝ Մարինա Աւագեան:

2002-2003 տարեշրջանի վարչական կազմին
կ'անդամակցին Արմանտ Աբրահամեան՝ ատե-
նապետ, Ալէք Խաչատրեան՝ ատենադպիր, Անտ-
րէ Դադայեան՝ գանձապահ, Ալենոյշ Գրիգոր-
եան՝ հաշուապահ, Մարինա Աւագեան տնտեսա-
կանի պատասխանատու, Թալին Տատուրեան՝
մարզականի պատասխանատու եւ Արմինէ
Գասպարեան՝ խորհրդական: 2003ի տարեվեր-
ջին վարչութիւնը կը կազմակերպէ իր աւանդա-
կան պազարը ուր ուտելիքներու եւ խմիչքներու
կողքին կը վաճառուին գայլիկ-արծուիկներու
ձեռային աշխատանքները:

2004-2005 տարեշրջանի վարչական կազմի
ամդամներն են, Ֆրէտ Հայրապետեան՝ ատենա-



Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի սկաուտներ Արագածի գագաթին, 2002ի ընդհանուր բանակումին առթիւ

պետ, Ալենոյշ Օհանեան, Արմինէ Գասպարեան, Մարինա Աւագեան, Սեւան Արթին, Ռուբինա Ազիզեան եւ Վահան Գրիգորեան:

Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի վարչական կազմերուն կը գործակցին անդամական ընդհանուր ժողովներէն ընտրուած հաշուեքննիչ յանձնախումբեր: Այս յանձնախումբերուն, տարիներու ընթացքին մաս կազմած են Ռոպէրթ Օհանեան, Խաչիկ Սերայտարեան, Արսէն Սապունճեան, Անէթ Մուկոֆեան, Արմէն Արթունով, Վահիկ Ազիզեան:

Սկաուտական

Մասնաճիւղի սկաուտական գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ տարեկան ընդհանուր բանակումը:

31 Յուլիսէն 6 Օգոստոս 1991ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի 12րդ ընդհանուր բանակումը Chalfont Heightsի բանակավայրին մէջ, սկաուտական շարքերէն 90 անդամներու մասնակցութեամբ:

1992ին տեղի կ'ունենայ 13րդը, մասնակցութեամբ Փարիզի Հ.Մ.Ը.Մ.էն 10 սկաուտներու [Մ/129-28]:

Մարտ 1993ի անդրանիկ ծնողական բանակումէն ետք, 13-15 Ապրիլ 1994ին, մասնաճիւղի ծնողական յանձնախումբը Brownsea Islandի մէջ կը կազմակերպէ երկօրեայ ծնողական բանակում: Իսկ մասնաճիւղէն 10 հոգինոց պատւիրակութիւն մը կը մասնակցի ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 5րդ Ընդհանուր Բանակումին, որ առաջին անգամ ըլլալով կը կայանայ Հայրենիքի մէջ, Բիւրականի բարձունքին:

1995ին կը կազմուի երէց սկաուտներու «Ասպետ» փաղանգը:

1998ին մասնաճիւղէն 39 հոգինոց պատուիրակութիւն մը կը մասնակցի ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ ընդհանուր բանակումին Աղաւնաձորի մէջ՝ Հայաստան:


Մարզական

1991ին մասնաճիւղի մարզական գործունէութեան մաս կը կազմեն Ֆութպոլ՝ զոյգ դասակարգի խումբերով, պասքեթպոլ՝ երկու սեռի զոյգ դասակարգերու խումբերով, վոլիպոլ, փինկփոնկ, սքուաշ եւ թենիս: 1992ին փինկփոնկի խումբը կը տիրանայ West Middlesex Leagueի Բ. բաժնի մրցաշարքի ախոյեանութեան: Մարտ

1992ին մասնաճիւղը կը կազմակերպէ Հայ Դատի նուիրուած մարզական մրցաշարքը:

1993-94 տարեշրջանի մարզական խումբերը կը մասնակցին պասքեթպոլի, փակ դաշտի Ֆութպոլի եւ փինկփոնկի տեղական պաշտօնական մրցաշարքերուն: 1995ին տղոց պասքեթպոլի խումբը կը տիրանայ Middlesex Leagueի Ա. դասակարգի ախոյեանութեան: Նոյն տարին խումբը կը մասնակցի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանի 20րդ Նաւասարդեան խաղերու մրցաշարքին:

1996ին Ֆութպոլի խումբը կը տիրանայ Middlesex Leagueի Ա. դասակարգի ախոյեանութեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի պատուիրակութիւնը ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ Ընդհանուր Բանակումին, Աղաւնաձոր 1998



Լոնտոնի մասնաճիղի 1996 տարուան ֆուտպոլի խումբը . ծունկի՝ Ռոպերթ Մալաս, Արթուր Յովսէփեան, Սթիվ Հայրապետեան, Գարլօ Տիլանչեան, Ալիօ Ֆլէրի, Ալիօ Արզայեան, ոտքի՝ Ռոնի Սարգսեան, Ռուրիկ Ուրաչեան, Սազօ Սերայտարեան, Շանթ Մէնլումեան, Ռիչարտ Արզուեան, Յարութ Պոզաճեան, Գօգօ Սերայտարեան

18-20 Ապրիլ 2003ին ժընեւի մէջ մասնաճիղի խումբերը կը մասնակցին ԶուիցերաՀայ Միութեան կազմակերպած միջգաղութային հինգերորդ մրցաշարքին:

Ազգային-Ընկերային-Հրապարակային

26 Նոյեմբեր 1991ին մասնաճիղը իր կեդրոնին մէջ կ'ընդունի Հայաստանի արտաքին գործոց նախարար Րաֆֆի Յովհաննէսեանի այցելութիւնը: 11 Հոկտեմբեր 1991ին մասնաճիղը կը մասնակցի Հայաստանի դեսպանատան բացման արարողութեան:

Մասնաճիղի հրապարակային գործունէութեան աւանդական ձեռնարկներէն են Ապրիլ 24ի նշում, Սկաուտի Օրուան եւ մասնաճիղի հիմնադրութեան տարեդարձի տօնակատարութիւնները ինչպէս նաեւ յատուկ ձեռնարկ մը նիւթապէս եւ բարոյապէս օժանդակելու համար Հայ Դատի աշխատանքներուն:

1993ի Նոյեմբերին մասնաճիղը կը նշէ Միութեան հիմնադրութեան 75ամեակը շքեղ պարահանդէսով:

1999ին գոյգ ձեռնարկներով, «Սկաուտի Օր» եւ «Համախմբումի Երեկոյ», մասնաճիղը կը տօնէ իր հիմնադրութեան 20ամեակը [Ծ/204-3]:



Լոնտոնի մասնաճիղի 2003 տարուան ֆուրսպոլի կազմը



Լոնտոնի պասքեթպոլի տղոց եւ աղջկանց խումբերը 2003ին

15 Մարտ 2003ին, «Հայ Սկաուտի Օր»ուան եւ մասնաճիւղի հիմնադրութեան 24 ամեակի նշումը կատարուեցաւ ազգային աւագանիի մասնակցութեամբ-[Ծ/250-32]:

Յրատարակչական

Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղը իր հիմնադրութեան օրէն սկսեալ հրատարակած է «ԱՅԳ» ներքին տեղատուական պարբերաթերթը:

1998ին մասնաճիւղը կը հրատարակէ իր հիմնադրութեան 20ամեակին նուիրուած 1999ի գրպանի օրացոյց:

Փետրուար 2002ին լոյս կը տեսնէ Լոնտոնի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 20ամեակին նուիրուած գիրքը, իմբագրութեամբ յատուկ յանձնախումբի մը, որուն կ'անդամակցին Վահէ Սպունճեան, Ալենուլ Օհանեան, Արսինէ Բալալեան, Սիլվա Դիլանչեան եւ Հրաչ Պօղոսեան: Խնամուած տպագրութեամբ, գունաւոր 24x21 սմ. ծաւալով, 80 էջերէ բաղկացող այս գիրքը կը պարունակէ մասնաճիւղի 20 տարիներու (1979-1999) գործունէութեան ամփոփ, բայց ամբողջական պատկերը, բազմաթիւ լուսանկարներով: Գիրքի ձեւաւորում՝ Թինա Իւսէֆիանեանի, կողքի գծագրութիւն՝ Թալին Օլմասէքեանի:

ՔՈՒԷՅԹ

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՔՈՒԷՅԹ

ՔՈՒԷՅԹ - ՔԱՂԱՔ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՍԿԱՈՒՏԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ
ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔՈՒԷՅԹ

Կազմակերպչական, սկաուտական եւ մարզական գործունեություններ

Հ.Մ.Ը.Մ-ի Քուէյթի 1990 տարուան նշանակովի վարչական կազմը 1991-92 տարեշրջանի գործունէութեան համար կը փոխարինուի ընտրեալ վարչութեամբ, ատենապետութեամբ՝ Քեռի Սարգիսեանի:

29 Մայիս 1992ին մասնաճիւղը կը տօնէ Հայաստանի հանրապետութեան 74րդ տարեդարձը, ներկայութեամբ 300 հանդիսականներու: Այս առթիւ 150 սկաուտներ եւ մարզիկներ կը

տողանցեն Քուէյթի եւ հայկական Եռագոյն դրօշակներու առաջնորդութեամբ -[Ծ/126.32]: Նոյեմբերին կը կազմակերպուի Ֆութպոլի մրցաշարք՝ նուիրուած Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝ նահատակ Վարդան Բախշեանի յիշատակին.-[Ծ/132.34]:

1993ին վարչական կազմի ատենապետութիւնը կը վարէ Քեռի Սարգիսեան, կազմին կ'անդամակցին ատենադպիր՝ Յարութիւն Պետիրեան, գանձապահ՝ Յարութիւն Մահտէսեան, հաշուապահ՝ Վազգէն Պապողլեան, խորհրդականներ՝ Յակոբ Մարտիրոսեան, Սարգիս Երեմեան եւ Ալեքսան Մելքոնեան:



Քուէյթի մասնաճիւղի 1999 տարուան վարչական կազմը. Վահան Մարտիրոսեան, Սարգիս Թաթարեան, Եղիկ Կարպուշեան, Յակոբ Յովակիմեան, Յակոբ Պերպերեան, Արամ Մահտեսեան, Անդրանիկ Գուզուեան



Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի սկաուտական շարքերը կը տողանցեն «Հալա Ֆեպրայր» փառատօնի առթիւ, Փետրուար 2000

Մասնաճիւղը հրապարակային հանդիսութեամբ կը նշէ 28 Մայիսի Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակը, նաեւ մասնաճիւղի հիմնադրութեան 10ամեակը, նախագահութեամբ Տէր եւ Տիկին Աբրահամ Մարտիրոսեաններու, ներկայութեամբ՝ Արաբական Ծոցի Երկիրներու հայոց թեմի առաջնորդ Օշական Ծ. Վրդ. Չորոյեանի եւ ազգային իշխանութեան անդամներուն: Տեղի կ'ունենան ընդհանուր տողանցք եւ մարզախաղեր— [Ծ/136.2]: Նոյն առթիւ կը կազմակերպուին երգահանդէս, կատարողութեամբ Գառնիկ Սարգիսեանի եւ ճաշկերոյթ-պարահանդէս, որուն ընթացքին յուշանուէրներ կը ստանան մասնաճիւղի վաստակաշատ անդամներ Գաբրի-

էլ Թասլաքեան, Անդրանիկ Գոճապաշեան, Միհրան Մարտիրոսեան, Մարտիրոս Մարտիրոսեան եւ Քեռի Սարգիսեան - [Ծ/ 145.2]:

Մասնաճիւղը սկաուտութեան կողքին կը կիրարկէ ֆուլթպոլ, մարզիչ՝ Կարօ Մելքոնեան, պասքեթպոլ եւ փինկփոնկ:

1997ին մասնաճիւղի մարզական գործունէութիւնը նոր թափ կը ստանայ: Կը կազմակերպուին ճատրակի, փինկփոնկի, պիլիարտի, նարտի մրցաշարքեր եւ ուլի փէյփըրի մրցում մը: Յատուկ արձանագրութեան արժանի են ֆուլթպոլի ներկայացուցչական խումբին յաղթանակները Քուէյթի փոքրամասնութեանց խումբերու մրցաշարքին, ուր խումբը տիրանայ ախոյեանութեան — [Ծ/179.26]:

Իր կարգին սկառուտական բաժինը կը զարգանայ որակով եւ թուային աճով:

1999ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Արամ Մահտեսեան: Մեծ շուքով կը կայանայ տարեկան մարզահանդէսը, նախագահութեամբ Կիրակոս Գուլյումճեանի եւ հովանաւորութեամբ Արաբական Ծոցի երկիրներու կաթողիկոսական փոխանորդ Սեպուհ Եպիսկոպոս Սարգիսեանի, որ այս առթիւ իր ուղղած պատգամին մէջ ի միջի այլոց կ'ըսէ. «...Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ քուրայ իր հուրով բիրենդացուց սրտերն ու հոգիները հայ մանուկին, պատանիին ու պարմանուհիին, երիտասարդին ու երիտասարդուհիին, զանոնք վերածելով վեհութեան, ազնուութեան, մարդկայնութեան շտեմարանի:


«Հ.Մ.Ը.Մ.ը որպէս դարբնոց կերտեց հոգիները բոլոր անոնց, որոնք իր շարքերէն անցան, զանոնք վերածելով հայրենիքի ու Աստուծոյ հաւատաւոր ու քաջակորով զինուորի որ միշտ կազմ ու պատրաստ է գերագոյն գոհողութեան ու նուիրումի »-[Ծ/205.33]:

2 Փետրուար 2000ին մասնաճիւղի սկառուտական խումբերը կը մասնակցին Քուէյթի Փետրուարեան տարեկան փառատօնին առթիւ կազմակերպուած տողանցքին («Հալա Ֆեպրայրը»), ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի նուագախումբին -[Ծ/214.29]:

7 Ապրիլ 2000ի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Վահան Մարտիրոսեան
 Քարտուղար՝ Կարօ Տուշքունեան
 Գանձապահ՝ Հարօ Տէյիրմէնճեան
 Խորհրդականներ՝ Տիգրան Տէր Պետրոսեան,
 Յովակ Խաչատուրեան, Պերճ Կենճոյեան եւ
 Գէորգ Չաղլասեան:

Մասնաճիւղի սկառուտ ընդհանուր խմբապետն է Յակոբ Մելիքսէթեան: Հոկտեմբեր եւ Նոյեմբեր ամիսներուն սկառուտներ կը մասնակցին ազգային գաղափարական նիւթերով դասա-



Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի 2000 տարուան Ապու Հըլէֆէի ընդհանուր բանակումի դրօշակներու կայմերը

խօսական շարքին:

9 Յունիս 2000ին մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան փառատօնը, նախագահութեամբ Տէր եւ Տիկին Ալեքսան Մելքոնեաններու -[Ծ/219.33]:



Քուելթի մասնաճիւղի փոքրերու «Շիրակ» ֆութպոլի խումբը 1992ին



Քուելթի Հ.Մ.Ը.Մ.ի պարի խումբերը հայկական տարազներով կը պարեն «Հալա Ֆեպրալըր» տօնակատարութեանց առթիւ



Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մասնաճիւղի 1992 տարուան վեթերաններու ֆութպոլի խումբը

2001 տարեշրջանի վարչական կազմի անդամներն են.-

Ատենապետ՝ Մարտիրոս Մարտիրոսեան
Ատենադպիր՝ Սարգիս Ա. Հալէպլեան
Գանձապահ՝ Յարութ Զերչեան
Հաշուապահ՝ Վազգէն Աւագեան
Խորհրդական՝ Լեւոն Ծուպանեան:

2001-2002 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին Յակոբ Յովակիմեան՝ ատենապետ, Սիմոն Օքճեան, Մանուկ Մանուկեան, Վարուժան Արմուտճեան եւ Անդրանիկ Մազմազեան:

2005-2006 տարեշրջանի նորընտիր վարչական կազմը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յակոբ Յովակիմեան
Ատենապետ՝ Յովհաննէս Սերոբեան
Գանձապահ՝ Յարութ Զաքարեան
Հաշուապահ՝ Գէորգ Զաղլասեան
Մարզական՝ Եսայի Էմրազեան
Սկաուտական՝ Վազգէն Աւագեան
Խորհրդական՝ Տիգրան Տէր Պետրոսեան:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ՖՐԱՆՍԱ

- ՎԱԼԱՆՍ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՄԱՐՍԷՅ
- ՎԵՐԱՄԻԱՑՈՒՄ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻՆ

ՎԱԼԱՆՍ

1983ին հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի Վալանսի մասնաճիւղը կը գործէ Վալանսի Հայ Մշակութային Տան մէջ, ըստ առաջւոյն:

1986ին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Կարպիս Տէր Գրիգորեան, որուն նախաձեռնութեամբ 1987ին մասնաճիւղը կը սկսի սկստական գործունէութեան:

Մասնաճիւղին գործունէութիւնը նոր թափ կը ստանայ 1990էն սկսեալ, երբ Վալանսի մէջ 12-15 Ապրիլին կը կայանան Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Գ. խաղերը (համագաղութային պասքեթպոլի Բ. մրցաշարք), մասնակցութեամբ եօթը երկիրներէ 11 երկու սեռի խումբերու – [Ծ/101-102.32]:

1992ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Ժագ Ղարիպեան:

1996ին մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յակոբ Թումայեան:

6 եւ 7 Ապրիլին մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային ֆութպոլի մրցաշարք, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.- «Ֆրանս»ի, Լոնտոնի եւ տեղւոյն մասնաճիւղի խումբերուն: Մրցաշարքի ախոյեան կը հանդիսանայ Վալանսի մասնաճիւղի Ա. խումբը: Մրցաշարքի փակման հանդիսութեան տեղի կ'ունենայ տողանցք եւ մրցանակներու բաշխում:

28 Մարտ 1998ին մասնաճիւղը ճաշկերոյթ պարահանդէսով կը տօնէ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 80ամեակը եւ իր հիմնադրութեան



Հ.Մ.Ը.Մ.- «Վալանս»ի 2002-2003 եղանակի ֆութպոլի առաջին խումբը, որ Տրոս Արտէշ Աահանգի խումբերու առաջին դասակարգէն բարձրագոյն դասակարգ բարձրացաւ



Հ.Մ.Ը.Մ.- «Վալանս»ի մասնաճիղի Բ. խումբը կը մասնակցի Տրոմ Արտէշ նահանգի Գ. դասակարգի խումբերու ախոյեանութեանց մրցաշարքերուն

15ամեակը: Օրուան պատգամը կը փոխանցէ Վարդան Պօղոս:

4 Յունիս 2001ին մասնաճիղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

Ատենապետ՝ Պօղոս Տէրտէրեան
Քարտուղար՝ Սիլվի Կօչկարեան
Գանձապահ՝ Յակոբ Քիրազեան
Խորհրդականներ՝ Մանուէլ Չոփուրեան,
Շանթ Ղազարեան, Վահէ Կօչկարեան եւ Տալիտա Եթերեան:

Այս կազմը յատուկ հոգածութիւն կը ցուցաբերէ ֆուտպոլի խումբերուն հանդէպ, որոնք կը գրաւեն իրենց դասակարգերուն առաջնակարգ դիրքերը՝ պարտութեան մատնելով իրենց դասակարգէն աւելի բարձր դասակարգերու խումբեր:

Սկաուտական բաժինին կ'օժանդակեն Մակի Եթերեան, Արագ Սարգիսեան եւ Նեկտար Աբելեան: Շարքերու ընդհանուր թիւն է 33:

8 Յունիս 2002ին վարչական կազմը նոյնութեամբ կը վերընտրուի: Սկաուտական եւ մարզական խումբերը միշտ կը մասնակցին Արեւմտեան Եւրոպայի մեկուսի մասնաճիղերու մրցաշարքերուն, բանակումներուն եւ դիւաններու հանդիպումներուն:

2002ին ֆուտպոլի խումբը կը բարձրանայ Ա. դասակարգ, իսկ 2003ին՝ Տրոմ Արտէշ նահանգի բարձրագոյն դասակարգ [Ծ/254.33]:

30 Յունիս 2003ին, մասնաճիղի անդամական ընդհանուր ժողովը, 2003-2004 տարեշրջանի գործունէութեան համար կ'ընտրէ նոր վարչական կազմ.- Ժան Ճպուռեան՝ ատենապետ, Աւե-



Մարսէյի Հ.Մ.Ը.Մ. - Արծիւ մասնաճիւղի ատենապետ՝ Ֆիլիպ Ղազարեան մասնաճիւղի յուշադրօշը կը յանձնէ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանին, 19 Մայիս 2005

տիս Ղազարեան՝ փոխ ատենապետ, Շնորհիկ Ճպուռեան՝ ատենադպիր, Թոմաս Ճպուռեան՝ գանձապահ, Ժագ Ղազարեան՝ Ֆուլթպոլ, Մարիլին Միխօ՝ սկաուտական եւ Արմենակ Ճպուռեան՝ ձեռնարկներ:

2005ին մասնաճիւղի վարչութեան ատենապետի պաշտօնը կը վարէ Գրիգոր Սեւտալեան:

2006ին նորակազմ վարչութեան կ'անդամակցին Պօղոս Տէրտէրեան՝ ատենապետ, Վահէ Կօշկարեան, Քլոտ Ազատեան, Յակոբ Քիրազեան, Դաւիթ Համալեան, Շանթ Ղազարեան եւ Յովհաննէս Միքօ:

մասնաճիւղը հիմնուած է 1924ին եւ գործած մինչեւ Բ. Աշխարհամարտի սկիզբը, մարզական եւ սկաուտական բաժիններով: 1940-1946 տարիներու ղաղարէն ետք, մասնաճիւղը կը վերակենդանացնէ իր գործունէութիւնը՝ գլխաւորաբար կեդրոնանալով Ֆուլթպոլի կիրարկման վրայ: 1964ին մասնաճիւղի զանազան ղասակարգերու խումբերը միանալով տեղւոյն Արծիւ Մարզական Միութեան համապատասխան խումբերուն կը կազմեն Հ.Մ.Ը.Մ.-Արծիւ (U.S.J – Arziv) մասնաճիւղը իրագործելով ծաւալուն գործունէութիւն:

ՄԱՐՍԷՅ

Հարաւային Ֆրանսայի Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.ի

1974ին, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութեան վերածուելու օրերուն, Հ.Մ.Ը.Մ.-Արծիւ չի մասնակցիր կեդրոնական

կառույցի կազմութեան եւ կը շարունակէ գործել՝ բարոյական իր կապերը պահելով հետագային կազմուած Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ղեկավարութեան հետ:

2005ի Մայիսին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանի եւ անդամ Լեւոն Պաղտասարեանի այցելութիւնը Ֆրանսայի շրջան, առիթ մը կը հանդիսանայ հանդիպումներ ունենալու Հ.Մ.Ը.Մ.-Արծիւի ղեկավարութեան հետ, որուն շնորհիւ

Հ.Մ.Ը.Մ.-Արծիւ պատրաստակամութիւն կը յայտնէ վերամիանալու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական կառույցին- [Ծ/274.4-5]:

Հ.Մ.Ը.Մ.-Արծիւ մասնաճիւղը կը հաշուէ շուրջ 400 անդամներ, ունի յատուկ գեղեցիկ ակումբ-նստավայր եւ կը գործէ ֆուտպոլի ճիւղի կիրարկումով՝ իր զանազան դասակարգի խումբերով, մասնակցելով Ֆրանսայի հարաւային շրջանի պաշտօնական ախոյեանութիւններու մրցաշարքերուն:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵԻՐՈՊԱ

- ՎԻԵՆՆԱ
- ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՊՈՒՏԱՓԵՇՏ
- ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱ

1991 տարուան վարչական կազմի ատենապետն է ԱԼՕ ԳՈԼՅՈՒՄՃԵԱՆ:

Կիրակի, 1 Դեկտեմբեր 1991ին տեղի ունեցաւ սկաուտական երգման արարողութիւն՝ Վիեննայի Հայ Կեդրոնի սրահին մէջ, հոծ բազմութեան մը ներկայութեան: Հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ՝ Եւրոպայի ներկայացուցիչ տղայ Յարութիւն Գազանճեան (Յ. Գեղարդ):

Հանդէսը բացուեցաւ «Մեր Հայրենիք» օրհներգով, ապա հայերէն եւ գերմաներէն բացման զոյգ խօսքերէն ետք կատարուեցաւ սկաուտական շարքերու երգման արարողութիւն: Գեղարուեստական կոկիկ յայտագրէ մը ետք մասնաճիւղի պատգամը փոխանցեց ատենապետ՝ ԱԼՕ ԳՈԼՅՈՒՄՃԵԱՆ, որուն հետեւեցաւ երգման արարողութեան կնքահայր եւ օրուան բանախօս Յ. Գեղարդի ոգեշունչ ճառը: Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերգի երգեցողութեամբ -[Ծ/123.32]:

2000 տարուան վարչական կազմի անդամներն են.-

- Ատենապետուհի՝ Ռիմա Բարոյեան
- Քարտուղար՝ Արսինէ Կարապետեան
- Գանձապահ՝ Սարգիս Սիրաքեան
- Խորհրդականներ՝ ԱԼՕ ԳՈԼՅՈՒՄՃԵԱՆ եւ Սարգիս Շատոյեան:

2004ի Ապրիլին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետուհի՝ Ռիմա Բարոյեան
- Փոխ ատենապետ՝ ԱԼՕ ԳՈԼՅՈՒՄՃԵԱՆ
- Ատենադպիր՝ Արսինէ Կարապետեան
- Գանձապահ՝ Սէմ Նահապետեան
- Խորհրդական՝ Անժել Սիմոնեան:
- Այս կազմին գործունէութիւնը կը սահմանա-

փակուի ազգային տօներու ոգեկոչման եւ անդամական հաւաքոյթներու մէջ: Անդամներու ընդհանուր թիւն է 33:

25 Սեպտեմբերին մասնաճիւղը կը կազմակերպէ Հայ Դատի նուիրուած դասախօսական հրապարակային ելոյթ, գլխաւոր դասախօս՝ Հիլտա Չոպոյեան -[Ծ/269.21]: 2005ին մասնաճիւղը կը նպաստէ Վիեննայի մէջ կազմակերպուած Եղեռնի 90ամեակին ոգեկոչման ձեռնարկներուն - [Ծ/273.24]:

ՊՈՒՏԱՓԵՇՏ

28 Մայիս 2005ին, Հունգարիոյ մայրաքաղաք Պուտափեշտի քաղաքապետարանի սրահին մէջ, տեղւոյն հայ համայնքէն 90 անդամներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղէն 32 անդամներու ներկայութեամբ տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան 87րդ տարեդարձի տօնակատարութիւն: Օրուան պատգամը փոխանցեց Վիեննայի մասնաճիւղի ատենապետուհի՝ Ռիմա Բարոյեան:

Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ Պուտափեշտի Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան հիմնադիր ժողով, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ Մանուէլ Մարսէլեանի:

Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչը խօսք առնելով շնորհաւորեց ներկաները եւ ներկայացուց մասնաճիւղի նշանակովի անդրանիկ վարչութեան անդամներու ցանկը հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Նիկողոս Յակոբեան
- Փոխ ատենապետ՝ Յարութիւն Պալապանեան
- Քարտուղար՝ Քնար Ղազարեան
- Գանձապահ՝ Գագիկ Զոթեան
- Խորհրդականներ՝ Ադամ Սարգիսեան, Լիլիթ Ուտումեան, Էրմոնէ Զապէլ Մարտայեան, Հայաստան Ազէկեան, Մամիկոն Ենգիբարեան, Վահան Վահանեան, Արամ Ուտումեան եւ Նառա Յակոբեան:

Մասնաճիւղին արտօնագիրի ապահովումէն ետք, վարչութիւնը կապեր կը հաստատէ

Վիեննայի մասնաճիւղին հետ գործունէութիւն կազմակերպելու նպատակով:

24 Ապրիլ 2006ին մասնաճիւղը կը կազմակերպէ Եղեռնի յուշատօն՝ մասնակցութեամբ օփերայի երգիչ Գուրգէն Յովսէփեանի:

Հետզհետէ կը կազմակերպուին մարզական եւ ընկերային աշխատանքները՝ օժանդակութեամբ

Լոնտոնի մասնաճիւղէն այցելու Հ.Մ.Ը.Մ.ականներ Ֆրէտ Հայրապետեանի եւ Արմինէ Գասպարեանի:

Նորակազմ վարչութիւնը անյապաղ գործի կը ձեռնարկէ կազմակերպելով անդամարշաւ եւ զիմելով հունգար պետութեան՝ ստանալու համար արտօնագիր:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՀՈԼԱՆՏԱ

- ԱԼՄԵԼՕ
- ԿԱԶՄՈՒԹԻԻՆ ԵՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻԻՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻԻՆՆԵՐ

ԱԼՍԵԼՕ

1996ի գարնան, Յարուժիկն Պողոսեանի եւ իր ընկերներու նախաձեռնութեամբ կը ծրագրուի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնել Հոլանտայի Ալմելօ հայաշատ քաղաքին մէջ: Նախապատրաստական կարգ մը աշխատանքներէն ետք ծրագիրը կը ներկայացուի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան:

44 անդամներու ներկայութեան, 23 Յունիս 1996ին, տեղի կ'ունենայ մասնաճիւղի հիմնադիր ժողովը, ներկայութեամբ կեդրոնական վարչութեան անդամ Հրաչ Սիսեռեանի, որ կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը եւ անոր ծառայութիւնները Սփիւռքի զանազան հայ գաղութներէն ներս: Տեղւոյն վրայ կ'ընտրուի մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Յարուժիկն Պողոսեան
- Փոխ ատենապետ՝ Վահան Գաբրիէլեան
- Ատենադպիր՝ Յասմիկ Օհանեան
- Գանձապահ՝ Սիրանոյշ Պողոսեան

Խորհրդականներ՝ Նուարդ Պողոսեան, Վարդան Պողոսեան եւ Նուպար Մարտիրոսեան աւելի ուշ փոխարինուած Նուպար Ասքազով - [Ծ/170.25] :

8 Օգոստոս 1996ին մասնաճիւղը կ'արձանագրուի պետութեան մօտ:

Շուտով անդամներու թիւը կը բարձրանայ 210ի օժանդակ, մարզական եւ սկստական բաժիններով: Նորակազմ վարչութիւնը կը ձեռնարկէ աշխատանքի՝ կը կազմուի Ֆուլպոլի խումբ, 5 սկստներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ. - Ֆրանսի բանակումին, կազմելով խմբապետական կորիզը: 26 Հոկտեմբեր 1996ին պաշտօնապէս սկստական կազմին, կը փոխանցուի Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը -[Ծ/173.22]: Սկստական բաժինը մաս կը կազմէ Հոլանտայի սկստական կեդրոնին:

21 Յունիս 1997ին տեղի կ'ունենայ երկրորդ անդամական Ընդհանուր ժողով, որմէ ընտր-

ւած վարչութեան մաս կը կազմեն, ատենապետ՝ Նուպար Մարտիրոսեան, ատենադպիր՝ Յասմիկ Օհանեան, գանձապահ՝ Վանէս Գաբրիէլեան, խորհրդականներ՝ Վարդան Պողոսեան, Գեղամ Մարտիրոսեան, Նուպար Հայկազ եւ Սամուէլ Կարապետեան: Այս կազմը կը նշանակէ Սկստական Խորհուրդ՝ զբաղելու համար սկստական բաժինով: Ֆուլպոլի խումբը կ'անդամակցի Հոլանտայի պատկան Ֆետերասիոնին: Կը կազմակերպուին ազգային տօնակատարութիւններ եւ հանդիսութիւններ՝ Ապրիլ 24 , Միջինք, Մայիս 28, Մայրերու Օր -[Ծ/186.27] :

28 Յունիս 1998ին կ'ընտրուի նոր վարչական կազմ, ուր նախկին 5 անդամները կը մնան պաշտօնի վրայ, իսկ Սարգիս Սարգիսեան եւ Կարապետ Արմեղանեան կը փոխարինեն Սամուէլ Կարապետեանը եւ Վարդան Պողոսեանը: Սկստական հաւաքոյթները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը: 36 սկստներ կը մասնակցին մասնաճիւղի տասնօրեայ անդրանիկ բանակումին - [Ծ/ 196.25]: Սկստական խումբը կը կազմակերպէ հայկական պարի խումբ: Ֆուլպոլի խումբը կը մասնակցի Հոլանտայի Երդ դասակարգի ախոյեանութեան մրցաշարքին: Վարչութիւնը կը մշակէ մասնաճիւղին յատուկ ներքին կանոնագրութիւնը: Տարեշրջանի մասնաճիւղի նիւթական գործունէութիւնը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը. մուտքեր՝ 70.060 հոլանտական կիւլտրն, ելքեր՝ 44.500:

1999 տարուան վարչական կազմին կ'անդամակցին, ատենապետ՝ Կարապետ Արմեղանեան, քարտուղար՝ Գէորգ Զատոյեան, գանձապահ՝ Յովհաննէս Գաբրիէլեան, խորհրդականներ՝ Շանթ Մանուկեան եւ Լեւոն Գաբրիէլեան: Վարչութիւնը կ'ապահովէ վարձու նոր կեդրոն: 3-9 Օգոստոսին սկստական կազմը կը կազմակերպէ տարեկան երկրորդ բանակումը, մասնակցութեամբ 26 գայլիկ-արծուիկներու եւ 15 արի-արենոյշներու: Այս առթիւ փոխ առաջնորդի աստիճան կը ստանան Սիլվա Մարտիրոսեան, Նայիրի Սարգիսեան, Նժդէհ Սարգիսեան եւ Մասիս Պողոսեան -[Ծ/209.26] :

Մասնաճիւղի պատգամաւոր Յարութիւն Պողոսեան 31 Մարտ 1999ին մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին եւ 2001ին միջդիւանային 5րդ խորհրդաժողովին՝ Լիբանան:

2001էն 2006 տարեշրջաններուն մասնաճիւղի յաջորդական վարչական կազմերուն անդամակցած են, ատենապետներ՝ Յարութիւն Պո-

ղոսեան եւ Վարդան Պողոսեան, անդամներ՝ Նուպար Մարտիրոսեան, Սիրանոյշ Պողոսեան, Գեղամ Մարտիրոսեան, Վանուհի Պողոսեան, Ազատ Պողոսեան, Յասմիկ Օհանեան, Սարգիս Տէր Ղազարեան, Գեղեցիկ Յովհաննէսեան, Յակոբ Խարիկեան, Հայկ Շահպազեան, Հրայր Յակոբեան, Ասլան Ասլանեան, Րաֆֆի Ամիրխանեան եւ Նայիրի Սեւտալեան:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ԿԻՊՐՈՍ

- ՆԻԿՈՍԻԱ
- Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ե.Մ.
- ՎԵՐԱՄԻԱՑՈՒՄ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԻԿՈՍԻԱ

Վերամիացում

1987ի հաղորդակցութիւններու դադարէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան եւ Հ.Ե.Մ.ի միջեւ կապերը կը մնան սառած (Տե՛ս Գ. Հատոր, էջ 348):

1997-98 տարեշրջանը անկիւնադարձային կը դառնայ Հ.Ե.Մ.ին համար: Տեղական համայնքային ղեկավարու շարքի մը իբրեւ հետեւանք, զգալի բարելաւում կ'արձանագրուի պառակտուած Հ.Ե.Մ.ական շրջանակին միջեւ: Ասոր իբրեւ արդիւնք, Հ.Ե.Մ.ի երիտասարդ զանգուածը, փակելով Հ.Յ.Դ. «Ազատամարտ» երիտասարդական կեդրոնը, կը վերամիանայ Հ.Ե.Մ.ի ակումբին, իր հետ վերադարձնելով նոր թափ ստացած գործունէութիւն եւ նոր մարդուժ:

Հ.Ե.Մ.ի վարչութիւնը 18 Մայիս 1998 թուա-

կիր նամակով կը դիմէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան, յայտնելով որ կը փափաքի մասնակցիլ Հ.Մ.Ը.Մ.ի միջմասնաճիւղային եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզական խաղերուն: Նոյնիմաստ երկրորդ նամակ մը եւս կը յղուի կեդրոնական վարչութեան, առանց Հ.Մ.Ը.Մ.ին վերամիանալու ցանկութեան:

1999ի Սեպտեմբերին, Երեւանի մէջ, Հայաստան-Սփիւռք Ա. Խորհրդաժողովին առիթով, հանդիպում մը տեղի կ'ունենայ կեդրոնական վարչութեան ատենապետ՝ Բիւզանդ Թորիկեանի եւ Հ.Ե.Մ.ի վարչութեան ատենապետ՝ Սիմոն Այնէճեանի միջեւ, ուր փոխադարձ փափաք կը յայտնուի Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Ե.Մ.ի գործակցութիւնը վերակենդանացնելու : 2000ին Հ.Ե.Մ.ի վարչութիւնը կը յայտնէ թէ իր անդամական ընդհանուր ժողովը պիտի քննէ Հ.Մ.Ը.Մ.ին վերամիանալու պայմանները:

2001ին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչու-



Կիպրոսի Հ.Մ.Ը.Մ. Հ.Ե.Մ. մասնաճիւղի 2007 տարուան ֆութպոլի խումբը



Միջին Արեւելեան երկիրներու միջմասնաճիւղային խաղերու բաժակակիրները Կեդրոնական եւ Կիպրոսի վարչական ներկայացուցիչներու հետ

Թիւնը կը հրաւիրէ Հ.Ե.Մ.ի Փուլթպոլի խումբը մասնակցելու համաՀ.Մ.Ը.Մ.ական ճրդ խաղերու մրցաշարքին: Հ.Ե.Մ.ի մասնակցութիւնը այս խաղերուն առիթ մը կը հանդիսանայ կապերու վերահաստատման: Այս առիթ հանդիպում մը կը կայանայ, ուր Կեդրոնական Վարչութիւնը Հ.Ե.Մ.ի խումբի պատասխանատու Վազգէն Պոտիկեանի միջոցաւ կը հրաւիրէ Հ.Ե.Մ.ը վերամիանալու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական կառույցին:

20 Նոյեմբեր 2001ին, մասնաճիւղը կ'ընտրէ նոր վարչական կազմ.- ատենապետ՝ Կարօ Թերզեան, փոխ ատենապետ՝ Լեւոն Սարեան, ատենադպրուհի՝ Մայտա Նշանեան, գանձապահ՝ Ատուր Գարակիւլլեան, հաշուապահ՝ Մկրտիչ Բարոյեան, խորհրդականներ՝ Լինտա Անանիկեան եւ Յակոբ Մանուկեան: Ժողովը

կ'որոշէ նաեւ որ Հ.Ե.Մ.ը վերամիանայ Հ.Մ.Ը.Մ.ին որպէս Մեկուսի Շրջան:

2002 Օգոստոսին, ատենապետ Կարօ Թերզեան եւ Ատուր Գարակիւլլեան Պէյրութի մէջ ժողով մը կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ: Ստանալէ ետք Կեդրոնական Վարչութեան թիւ 404 նամակը, 19 Սեպտեմբեր 2002 թուակիր նամակով Հ.Ե.Մ.ի վարչութիւնը վերամիանալու իր պատրաստակամութիւնը կը յայտնէ:

Վերամիացման աքթը տեղի կ'ունենայ 22 Մարտ 2003ին, Նիկոսիոյ մէջ, անդամական հաւաքի եւ պաշտօնական ճաշկերոյթի մը ընթացքին, ուր ներկայ կը գտնուին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներ Բիւզանդ Թորիկեան եւ Պետիկ Սապունճեան: Այս

առթիւ Հ.Ե.Մ.ի վարչութեան ատենապետ Կարօ Թերզեանին կը յանձնուի Հ.Մ.Ը.Մ.ի դրօշակը եւ Ընդհանուր Ծրագիր Կանոնագրի մէկ օրինակը: Հ.Ե.Մ.ը կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի 90րդ մասնաճիւղ՝ Մեկուսի Շրջան:

Կազմակերպչական եւ Մարզական Գործունէութիւն

31 Յուլիս 2003ին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանի մասնաճիւղի 66րդ անդամական ընդհանուր ժողովը կը մշակէ Նիկոսիոյ Մեկուսի Շրջանի ներքին կանոնագրութիւնը: Մասնաճիւղը կը կոչուի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ. մասնաճիւղ: Ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.- ատենապետ՝ Աւօ Թերզեան, փոխ ատենապետ՝ Վազգէն Պոտիկեան, ատենադպիր՝ Յարութ Թահմազեան, գանձապահ՝ Արամ Դաւի-

թեան, գոյքապահ՝ Հրաչ Գազանճեան, խորհրդականներ՝ Բեկի Պոտիկեան, Լուի Պալթայեան, Գրիգոր Մահտեսեան եւ Անդրանիկ Աշճեան:

8 Յուլիս 2004ին, մասնաճիւղի 66րդ անդամական ընդհանուր ժողովը կը քննէ եւ կը վաւերացնէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի ներքին կանոնագրութիւնը եւ կ'ընտրէ նոր վարչական կազմ.- ատենապետ՝ Ատուր Գարակիւլլէեան, փոխ ատենապետ՝ Ստեփան Կոստանեան, ատենադպիր՝ Յակոբ Մանուկեան, գանձապահ՝ Նարեկ Դաւիթեան, գոյքապահ՝ Հայկ Մահտեսեան: Մասնաճիւղը կը վերակազմէ Ֆուլթպոլի խումբը՝ երիտասարդ մարզիկներու մասնակցութեամբ: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի հիմնադրութեան 70ամեակը կը նշուի յատուկ հանդիսութեամբ: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ը Աթէնքի մէջ կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ խաղերուն լողի մէկ մարզիկով:



Միջին Արեւելեան երկիրներու միջմասնաճիւղային Ա. խաղերու մասնակիցները Կիպրոսի ազգային առաջնորդարանի բակին մէջ. Կեդրոնը՝ Թեմի կաթողիկոսական փոխանորդ Տ. Վարուժան Արք. Հերկելեան:

12 Յուլիս 2005ին, մասնաճիւղի 67րդ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.- ատենապետ՝ Եսայի Մազմանեան, ատենադպիր՝ Յարութ Թահմազեան, գանձապահ՝ Վազգէն Պոտիկեան, անդամներ՝ Օհան Ուզունեան, Հրաչ Գազանճեան, Գրիգոր Մահտեսեան, Րաֆֆի Մահտեսեան: Տարեշրջանի ընթացքին մասնաճիւղի անդամներուն թիւը զգալի աճ կ'արձանագրէ: Մասնաճիւղի ներկայացուցիչ՝ Յարութ Թահմազեան 2005ի Օգոստոսին Աթէնքի մէջ եւ 2006ի Սեպտեմբերին Ամմանի մէջ կը մասնակցի միջդիւանային խորհրդաժողովներուն:

16 Նոյեմբեր 2006ին մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.- ատենապետ՝ տոքթ. Անդրանիկ Աշճեան, փոխ ատենապետ՝ Տիգրան Ատուրեան, ատենադպիր՝ Յարութ Թահմազեան, գանձապահ՝ Նարեկ Դաւիթեան, խորհրդականներ՝ Կա-

րօ Թերզեան, Համազասպ Սամոնեան, Արթուր Յարութիլենեան, Մարտիկ Կոստանեան եւ Օհան Ուզունեան: Այս կազմին գլխաւոր իրականացումներէն հանդիսացաւ Մերձաւոր Արեւելքի Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու միջշրջանային տղոց Ֆութպոլի եւ աղջկանց պասքեթպոլի մրցաշարքերու կազմակերպութիւնը Նիկոսիոյ մէջ, 28 եւ 29 Ապրիլ 2007ին:

Վերոյիշեալ մրցաշարքերու կազմակերպումը առիթ կ'ընծայէ որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ը առաջին անգամ ըլլալով կազմէ աղջկանց պասքեթպոլի խումբ: 30 Ապրիլ 2007ին մասնաճիւղը դիմում կը ներկայացնէ Կիպրոսի պասքեթպոլի ֆետերասիոնին, անդամակցելու անոր եւ մասնակցելու 2007-2008 եղանակի ախոյեանութեան մրցաշարքերուն: Վարչութիւնը միաժամանակ գործի կը լծուի պետական հովանաւորութեամբ ձեռնարկելու ակումբին կից դաշտին վրայ արդիական մարզադաշտ մը կառուցելու աշխատանքին:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆՄԷԿԵՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆ

- ԶԱԻԱԽՔ
- ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ԶԱՎԱԽՔ

Հիմնադրութիւն

Զաւախքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան հիմնադրման առաջին քայլերը կ'առնուին 2000 թուականէն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նախաձեռնութեամբ եւ պատասխանատուութեամբ՝ ՀԱՍԿի Կեդրոնական Վարչութեան անդամ Արամ Ֆրանկեանի:

Կազմակերպչական

2001ին Ախալքալաքի մէջ կազմուած սկաուտական առաջին կորիզին կը հետեւի, 2002-2004 ժամանակաշրջանին, Ախալցխայի, Գանձայի եւ Ծալկայի սկաուտական կորիզներուն կազմութիւնը:

Այս ժամանակամիջոցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները եւ սկաուտ աստիճանաւորները հերթական հաւաքոյթներու, սեմինարներու եւ դպրոց-բանակումներու միջոցներով կը պատրաստեն Զաւախքի չորս մասնաճիւղերու սկաուտական խմբապետական կազմերը:

Սկաուտական գործունէութիւն

19էն 21 Յունիս 2002ին, Գանձայի մէջ կը կայանայ եռօրեայ դպրոց-բանակում, որուն կը մասնակցին 35 սկաուտներ, ներկայացնելով Ախալքալաքը՝ 15, Ախալցխան՝ 8, Սաթխան՝ 5, Գանձան՝ 6, Փոկան՝ 2 եւ Զիգրաչէնը՝ 1 անդամներով: Այս եռօրեայ բանակումէն ընտրուած 10 սկաուտներէն ութը Զաւախքը կը ներկայացնեն համաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ ընդհանուր բանակումին, Բիւրականի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները մնայուն կերպով կ'այցելեն Զաւախք՝ կազմակերպչական նպատակներով, սեմինարներու առիթներով եւ կը նպաստեն նիւ-



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական ծրոյ ընդհանուր բանակումին մասնակից Զաւախքի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական պատուիրակութիւնը

թական օժանդակութեամբ:

10 Փետրուար 2003ին կը կազմուի Զաւախքի սկաուտական խմբապետական խորհուրդը, որ կը կազմէ իր դիւանը, տարեկան գործունէութեան ծրագիր եւ նախահաշիւ: 14-16 Մարտին խորհուրդի անդամները լրիւ կազմով կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կազմակերպած սեմինար-բանակումին Ծաղկաձորի մէջ: Բանակումի աւարտին վարիչ առաջնորդի աստիճան կը ստանան Աշոտ Պապոյեան, Արկաղի Համազարեան, Գուրգէն Շիրինեան եւ Գէորգ Պօղոսեան: 20 Ապրիլին Ախալքալաքի Սբ. Խաչ եկեղեցւոյ բակին մէջ, Եղեռնի յուշարձանին մօտ, տեղի կ'ունենայ 35 սկաուտներու երդման արարողութիւն:

Ապրիլ ամսուան ընթացքին, Բոգդանովկայի մէջ, կը գրանցուի սկաուտական կազմակերպութիւնը իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ:

4էն 7 Յունիս 2003ին Գուրգէն Շիրինեան

Ջալախքը կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի եօթներորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին:

26-28 Մարտ 2004ին, Ախալքալաքի ՀՕՄի կեդրոնի տարածքին, Ջալախքի՝ Ախալքալաք, Ախալցխա, Բոգղանովկա, Ղարգախ, Գիմբիրդա, Արագովա, Թախչա, Բարալէթ, Չխալովա, Խոսպիա եւ Վաչիան քաղաքներու եւ գիւղերու վարժարաններու 34 աշակերտներ որպէս Հ.Մ.Ը.Մ.ի նորագիրներ կը մասնակցին նորընծայ կարգի սեմինար-բանակումին: Բանակումի աւարտին 13 նորընծայ սկառտներ կու տան իրենց սկառտական երգումը:

Ապրիլին, Շրջանի տարբեր գիւղերուն մէջ կը

կազմակերպուին հայկական Եղեռնի յիշատակին շուրջ եւ ջահագնացութիւններ - [Ծ/ 262.29]:

2005ի Փետրուարին, Ծաղկաձորի մէջ Ջալախքի սկառտներ մասնակցած են Հ.Ա.Ս.Կ.ի մնայուն դպրոցի գործնական սեմինարի Ա. փուլին, իսկ 24էն 27 Յունիսին՝ Բիւրականի մէջ Բ. փուլին:

Ջալախքի Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը ծաւալելու լայն կարելիութիւններ ունի, սակայն վայրի, գոյքերու եւ ծրագիրներու իրականացման համար նիւթական միջոցներու անբաւարարութիւնը կ'արգելակէ յառաջխաղացքը:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԻՐԱՔ

- ՊԱՂՏԱՏ
- ՄՈՒՍՈՒԼ
- ՔԵՐՔՈՒՔ



Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի Վարչութեան կազմը ընտրուած Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ժողովին կողմէ 17 Օգոստոս 2000ին: Նստած՝ Յարութիւն Խանամիրեան, Պարգեւ Ասլանեան, Վահագն Մեսրոպեան, Վահէ Միհրանեան: Ոտքի՝ Արշակ Պետրոսեան, Արմենակ Մկրտիչեան, Վրէժ Պօղոսեան, Սարգիս Չոլաքեան

ՊԱՂՏԱՏ

Իրաքի մէջ 1949էն մինչեւ 1972 գործող Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի զոյգ մասնաճիւղերը, ինչպէս նաեւ Մուսուլի եւ Քերքուքի մէջ 1960ական թուականներէն սկսեալ գործող մասնաճիւղերը, իրենց լայնածաւալ գործունէութեամբ, պետական սեղմումներ դիմակալելով եւ յաճախակի դադարներով, կրցան իրենց գոյութիւնը պահել:

1982ին միայն, նոր հողամասի մը ապահովումով, կարելի կ'ըլլայ գործունէութեան վերսկսել՝ «Հայ Մարզական Ակումբ» անուն արտօնագրով: 1988ին այս հողամասին կը կցուի 9000 քառ. մ. տարածութեամբ հողամաս մը եւս, ըն-

դարձակելով մարզական եւ սկաուտական գործունէութեանց կարելիութիւնները: Ազգային եւ մշակութային ձեռնարկները յաճախակիօրէն կը ճոխացնեն մասնաճիւղի գործունէութիւնը:

1988էն սկսեալ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ը Ռազմիկ Աւագեանի ջանքերով կը կազմէ Սկաուտական Խորհուրդ եւ մասնաճիւղը կը կազմակերպէ երդման արարողութիւն: Սակայն աստիճանաւորական ցանցի մը կազմակերպումը կը բախի դժուարութիւններու, պատրաստուած աստիճանաւորներու երկրէն մեկնումներու պատճառով: Այսուհանդերձ սկաուտական կազմը կազմակերպած է բազմաթիւ բանակումներ Պաղտատի, Քերքուքի, Մուսուլի, Պասրայի եւ Զախոյի մէջ: Սկաուտական շարքերէն անդամ-



Պաղտատի մասնաճիւղի սկաուտական պատուիրակութիւնը կ'այցելէ Անթիլիասի Մայրավանք

ներ մասնակցած են պետական նահանգային բանակումներու:

1992ի Հոկտեմբերին մասնաճիւղի սկաուտական բաժինը կը ստանայ պետական ճանաչում:

29 Հոկտեմբեր 1993ին Պաղտատի մասնաճիւղի նախաձեռնութեամբ եւ իր դաշտին վրայ կը մատուցուի Սբ. Պատարագ՝ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի քահանայութեան 50ամեակին նուիրուած — [Ծ/146.17]:

1995ը պիտի ըլլար մասնաճիւղի վերաշխուժացման տարի:

Վարչութեան ատենապետութիւնը կը վարէ Յովհաննէս Եսայեան, փոխ ատենապետ՝ Վահագն Մեսրոպեան:

11 Սեպտեմբեր 1995ին մասնաճիւղը կը կազմակերպէ ճրդ միջմասնաճիւղային մարզահանդէս, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Քերթուքի, Մուսուլի, Պասրայի եւ Զախոյի մաս-

նաճիւղերու մարզիկները — [Ծ/162.35]:

1996ին մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւը կը բարձրանայ 1080ի: 1997ին մասնաճիւղը երկրի 180 մարզական ակումբներու շարքի դասաւորման մէջ կը գրաւէ 17րդ դիրքը: Մասնաճիւղի կիրարկած մարզաճիւղերն են պասքեթպոլ, վոլիպոլ, փինկփոնկ, թենիս, սուսերամարտ, մարմնամարզ, հէնտպոլ, պատմինթըն եւ ծանրաբարձրութիւն:

10էն 12 Սեպտեմբեր 1999ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 50ամեակը, միջմասնաճիւղային խաղերու կազմակերպութեամբ՝ տեղի կ'ունենան զանազան մարզաճիւղերու 120 մրցումներ, բացման եւ փակման հանդիսութիւններ — [Ծ/209.28]: 9 Դեկտեմբերին տեղի կ'ունենայ հրապարակային հանդիսութիւն — [Ծ/212.31]:

1999ի տարեվերջին իրաքի 200 մարզական ակումբներու շարքին մասնաճիւղը կը



Պաղտատի պասքեթպոլի աղջկանց 2004 տարուան խումբը

գրաւէ ճրդ դիրքը - [Ծ/227.31]:

2000ին մասնաճիւղի վարչութեան կ'անդամակցին ատենապետ՝ Վահագն Մեսրոպեան, Յարութիւն Խանամիրեան, Պարգեւ Ասլանեան, Վահէ Միհրանեան, Արշակ Պետրոսեան, Արմենակ Մկրտիչեան, Վրէժ Պետրոսեան եւ Սարգիս Զոլաքեան: 2000էն սկսեալ սկաուտական կազմը կ'ունենայ երգչախումբ, դեկավարութեամբ Արա Քիչմիչեանի: 8 Օգոստոսին կը նշուի մասնաճիւղի սկաուտութեան հիմնադրութեան 40ամեակը՝ միջմասնաճիւղային մարզական եւ սկաուտական հանդիպումներով — [Ծ/225.31]:

Օգոստոս 2001ին, Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի պատւիրակութիւն մը, բաղկացած պասքեթպոլի եւ փինկփոնկի խումբերու երկսեռ մարզիկներէն, կը մասնակցի Լիբանանի մէջ համա Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ մարզախաղերուն:

2003ին իրաքեան վարչակարգի փոփոխու-

թեան պատճառով կը նշանակուի առժամեայ ողիմպիական կոմիտէ: Վերջինս կը հրահանգէ բոլոր մարզական կազմակերպութիւններուն նոր վարչական կազմեր յառաջացնել:

22 Յունիս 2003ին կ'ընտրուի Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի նոր վարչական կազմ՝ ատենապետ՝ Պարգեւ Ասլանեան, փոխ ատենապետ՝ Վահէ Միհրանեան, ատենադպիր՝ Յարութիւն Խանամիրեան, գանձապահ՝ Զուարթ Աւագեան, Խորհրդականներ՝ Արմենակ Մկրտիչեան, Արամ Արամեան, Սարո Պողոսեան, Շանթ Քիչմիչեան, Հրաչ Յակոբեան, Սեւան Իշխանեան եւ Խաչիկ Խաչիկեան:

Մասնաճիւղէն երկսեռ 52 մարզիկներ մաս կը կազմեն Իրաքի ազգային զանազան հաւաքականներուն:

27 Նոյեմբեր 2003ին, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան կեդրոնատեղիին մէջ տեղի ունե-



Պաղտատի պասքեթպոլի տղոց բարձրագույն դասակարգի ախոյեան խումբը

ցաւ Պաղտատի մասնաճիւղի, Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կառույցին վերամիացման, պաշտօնական արարողութիւնը – [Ծ/257.11]:

Հակառակ տիրող պատերազմական իրավիճակին Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը միշտ կանգուն կը մնայ պատնէշի վրայ, իր բազմաճիւղ՝ մարզական, սկստական, մշակութային եւ ազգային գործունէութիւններով – [Ծ/263.24]:

24 Օգոստոս 2004ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի նորաշէն մարզասրահի բացման հանդիսութիւն: Մարզասրահի շինութեան գլխաւոր բարերարն է International Relief & Development հաստատութիւնը:

2005ի Յուլիսին վարչութեան դիւանէն Արամ Արամեան եւ Սեւան Իշխանեան Աթէնքի մէջ կը մասնակցին համաՀ.Մ.Ը.Մ.ական շրջանային եւ մեկուսի շրջաններու վարչութեանց դիւաններու խորհրդաժողովին:

2006ի եղանակին մարզական պաշտօնական մրցաշարքերու արդիւնքներէն են. աղջկանց վոլիպոլի երկրորդական կազմ՝ Իրաքի փոխ ախոյեան, խումբէն՝ Հուրի Խաչատուրեան մրցաշարքի

լաւագոյն մարզիկուհի: Աղջկանց վոլիպոլի Ա. կազմ՝ երրորդ: Տղոց պասքեթպոլի սկսնակներ՝ ախոյեան: Փինկփոնկի միջարբական ախոյեան ակումբներու մրցաշարքի անհատական՝ երրորդ եւ Իրաքի մրցաշարքին ախոյեանուհի՝ Մարալ Մաթէոսեան:

ՄՈՒՍՈՒԼ

1995ին Մուսուլի Հ.Մ.Ը.Մ.ի «Նահատակ Սերօր ակումբ» անունով ծանօթ մասնաճիւղի ատենապետն է Ռոստոմ Յակոբ Պողոսեան:


1996ին մասնաճիւղի աթլէթները կը մասնակցին շրջանի միջակմբային մրցումներուն, ուր տղոց խումբը կը տիրանայ ախոյեանութեան, իսկ աղջկանց կազմը՝ հինգերորդ դիրքին:

2002ին Մուսուլի ակումբին մէջ կը կայանան Պաղտատի մասնաճիւղի արի-արենոյներու եւ երէց-պարմանուհիներու գոյգ բանակումները:

20 Օգոստոս 2005ին, Հալէպի մէջ տեղի ունեցաւ Մուսուլի մասնաճիւղի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական կառույցին վերամիացման աթթ: - [Ծ/277. ներքին կողք]:



Մուսուլի երեք սկաուտները Կեդրոնական Վարչությունն հետ - Հալէպ, 20 Օգոստոս 2005



Իրաքի տարեկան մարզահանդեսին բուրգի կազմություն

2006ին քաղաքի ապահովական կացութիւնը կը վատթարանայ երկրի պատերազմական վիճակին պատճառով: Մուսուլի աղուժը պետութեան կողմէ կը փակուի անգործունէութեան պատճառով:

ՔԵՐՔՈՒՔ

Հ.Մ.Ը.Մ.ի Քերքուքի մասնաճիւղը, ծանօթ «Նահատակ Մասիս աղուժը» անունով, հիմնուած է 1960ին, սակայն անոր գործունէութիւնը բնականոն ձեւով չէ զարգացած եւ չէ հրապարակուած երկրի քաղաքական պայմաններուն բերումով:

Մասնաճիւղի մարզական միաւորները կը մասնակցին Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի տարեկան Շրջանային մարզահանդէսներուն:

2002ին Քերքուքի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը կը կազմակերպէ միջմասնաճիւղային գայլիկարժուիկներու բանակում:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ



1. Պաղտատի երեցներն ու պարմանուհիները ընկերակցությամբ Տաթև Արդ. Յակոբեանի եւ Վարդան քհնյ. Պոտուրեանի: 2. Պասրայի մասնաճիւղի 1995 տարուան մարզիկներու խմբանկար:
3. ,4. ,5., 6. Իրաքի միջմասնաճիւղային մարզախաղերու բացումին յաջորդաբար կը տողանցեն Զախոյի, Քերբուկի, Պասրայի եւ Մուսուլի մասնաճիւղերու մարզիկները:

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՇՈՒԷՏ

- ՍԹՈՔԸՆԴՆԵՐ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔ
- ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

ՍԹՈՔՅՈՒՆ

12 Փետրուար 1991ին կարգ մը նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներու նախաձեռնութեամբ, Շուէտի մայրաքաղաք Սթոքհոլմի մէջ կը հիմնուի տեղւոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Հիմնադիր անդամները կը յառաջացնեն առժամեայ վարչութիւն հետեւեալ կազմով.-

- Ատենապետ՝ Ժան Սարաֆեան
- Փոխ ատենապետ՝ Արա Արոյեան
- Քարտուղար՝ Սիմոն Գարօղլանեան
- Գանձապահ՝ Անդրանիկ Նաճարեան
- Ֆուլթպոլի պատասխանատու՝ Սուրէն Մարտիրոսեան

Խորհրդականներ՝ Մուշեղ Սերոբեան եւ Վազգէն Մելքոնեան:

Առաջին հերթին կը կազմուի Ֆուլթպոլի խումբ մը, որ կը մասնակցի տեղական մրցումներու:

23 Յունիսին անդամական անդրանիկ ընդհանուր ժողովը կ'ընտրէ վարչական կազմատենապետ՝ Ժան Սարաֆեան, փոխ ատենապետ՝ Արա Արոյեան, քարտուղար՝ Մէրի Արոյեան, հաշուապահ՝ Անդրանիկ Նաճարեան, սկաուտական՝ Խաթակ Արոյեան, մշակութային՝ Սիլզան Խարտալեան, խորհրդական՝ Արմենակ Մահտեսեան:

Օգոստոսին մասնաճիւղի անդամներուն ընդհանուր թիւը կը հասնի 150ի: Վարչութիւնը կ'իրականացնէ սկաուտական, մշակութային եւ ընկերային զանազան նախաձեռնութիւններ:

9 Մայիս 1993ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ.-

- Ատենապետ՝ Ժան Սարաֆեան
- Փոխ ատենապետ՝ Արա Արոյեան
- Քարտուղար՝ Երջանիկ Մահտեսեան
- Հաշուապահ՝ Անդրանիկ Նաճարեան
- Ընկերային՝ Միքայէլ Արապսէյիզեան
- Մարզական՝ Փօլ Տարուիչ եւ Յակոբ Վարդանեան:

1994ին կը կազմուի պասքեթպոլի աղջկանց

խումբը: Սկաուտական կորիզը կը կատարէ շաբաթական հաւաքոյթներ:

5 Յունիս 1994ին, Սթոքհոլմ կ'այցելէ Կեդրոնական Վարչութեան անդամ տոքթ. Յարութիւն Գազանճեան: Տեղի կ'ունենայ դասախօսական երեկոյթ եւ նորագիր սկաուտներու երդման արարողութիւն: Մարզական եւ սկաուտական գործունէութեանց կողքին, վարչութիւնը կը կազմակերպէ շաբաթական հայերէն լեզուի դասընթացք: 1994ի վարչական կազմին կ'անդամակցին Ժան Սարաֆեան, Արա Արոյեան, Անդրանիկ Նաճարեան, Մայք Սէյիզեան եւ Յակոբ Վարդանեան:

Շուրջ 4 տարիներու ընթացիկ գործունէութենէն ետք 1995ին վարչութիւնը կը մատնուի անգործունէութեան, յատկապէս նիւթական միջոցներու անբաւարարութեան պատճառով:

7 Յունիս 1995 թուակիր՝ Կեդրոնական Վարչութեան ուղղուած իր նամակով, վարչութիւնը կը յայտնէ թէ պիտի դադրեցնէ մասնաճիւղի գործունէութիւնը:

Մասնաճիւղի լուծման պարագաները կը մնան առկա:

2005ին, Պուլկարիոյ մէջ, Քրիստափոր Միքայէլեանի մահուան 100ամեակի յիշատակութեան առթիւ, Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան կը հանդիպի Սթոքհոլմի Հ.Մ.Ը.Մ.ականներէն Սիլզան Խարտալեանին, որմէ նպաստաւոր տեղեկութիւններ կը ստանայ Սթոքհոլմի Հ.Մ.Ը.Մ.ի անդամներու եւ Ֆուլթպոլի խումբի գործունէութեան շարունակման մասին: Նոյն օրերուն Լիբանան կ'այցելէ Սթոքհոլմի անդամներէն Յակոբ Խաչերեան: Կեդրոնական Վարչութիւնը վերջինիս պարտականութիւն կը յանձնէ յայտնելու Սթոքհոլմի Հ.Մ.Ը.Մ.ականներուն, դիմելու Կեդրոնական Վարչութեան, վերամիանալու համար Հ.Մ.Ը.Մ.ի կառույցին:

1 Հոկտեմբեր 2005 թուակիր նամակով, Սթոքհոլմի Հ.Մ.Ը.Մ.ականներու կողմէ դիմում կը կատարուի Կեդրոնական Վարչութեան՝ կրկին միանալու Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին, յայտ-

նելով որ արդէն կը գործէ նշանակովի առժամ-
եայ վարչութիւն մը՝ դիւրացնելու համար մաս-
նաճիւղի պաշտօնական գրանցման գործողու-
թիւները եւ 6 Նոյեմբերին կը նախատեսեն կա-
յացնել անդամական ընդհանուր ժողով եւ ընտ-
րել նոր վարչական կազմ: Նամակը կը ստորագ-
րեն Յակոբ Վարդանեան եւ Յակոբ Խաչերեան:

Մասնաճիւղը կը ստանայ պետական արտօ-
նագիր, որպէս մարզական ակումբ:

4 Նոյեմբեր 2005ին Սթոքհոլմ կ'այցելեն Կեդ-
րոնական Վարչութեան անդամներ Գառնիկ
Մկրտիչեան եւ Լեւոն Պաղտասարեան ներկայ
ըլլալու վերակազմեալ մասնաճիւղի անդամա-
կան ընդհանուր ժողովին: Նախնական կարգ մը
հանդիպումներէ ետք, ուր կը հարթուին 1995ի
մասնաճիւղի գործունէութեան դադրեցման
պարագաները, 6 Նոյեմբերին կը կայանայ ժո-
ղովը ներկայութեամբ 62 անդամներու, որոնք
կու գան Շուէտի զանազան քաղաքներէն: Խան-
դավառ մթնոլորտի մէջ ժողովը իր առաջարկնե-
րով կը վերակենդանացնէ մասնաճիւղի գործու-
նէութիւնը, իր կազմակերպչական, մարզական
եւ սկստական բաժիններով:

Մասնաճիւղի նորըտիր վարչութեան մաս կը
կազմեն. ատենապետ՝ Յակոբ Վարդանեան,
փոխ ատենապետ՝ Արա Արոյեան, ատենադպիր՝
Յակոբ Խաչերեան, գանձապահ՝ Վահէ Մահտես-
եան, խորհրդականներ՝ Աբիկ Տոլմաճեան, Ար-
մենակ Մահտեսեան եւ Պօղոս Սերոբեան:
Սկստական բաժինին իր կարեւոր մասնակ-
ցութիւնը կը բերէ Լիբանանի շրջանէն նոր փո-
խանցուած սկստ խմբապետ Ֆետի Թաժրա,
որ սկստական ճիւղի լիազօրի հանգաման-
քով, կը մասնակցի վարչական ժողովներուն:

Վարչութիւնը Շուէտի հետեւեալ հայաչա-
շրջաններուն համար կը նախատեսէ օժանդակ
յաճնախումբեր՝ Սթոքհոլմ, Սէոտերթալիա եւ
Վեսթերոս, ուր Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացում եւ գոր-
ծունէութիւն պիտի մշակուի:

26 Նոյեմբեր 2005ին, Վեսթերոսի մէջ տեղի
կ'ունենայ սկստական առաջին աստիճանա-
ւորական կորիզ կազմելու հանդիպում:

Սթոքհոլմի վերակազմեալ մեկուսի շրջանը
խոստամալից հորիզոններու նախօրեակին կը
գտնուի:

ԻՏԱԼԻԱ

ԳԼՈՒԽ ՏԱՄՆՉՈՐՐՈՐԴ

ԻՏԱԼԻԱ

-ՄԻԼԱՆՕ

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻԼԱՆՕ

Հ.Մ.Ը.Մ.ի Իտալիոյ մասնաճիւղը 1991ին կը շարունակէ գործել, իբրեւ կեդրոնատեղի ունենալով Միլանոյի Հայ Տունը: Մասնաճիւղը ունի մարզական, սկաուտական եւ ազգային գործունէութիւն: Տարեկան հերթականութեամբ կազմակերպուող ձեռնարկներն են՝ Ապրիլ 24ի նշում, Մայիս 28ի տօնակատարութիւն եւ ճաշկերոյթ-պարահանդէս:

Մասնաճիւղի 1991ի վարչութեան ատենապետն է Յարութիւն Սթամպուլեան, քարտուղարութեամբ Ռոպէրթ Գալուստեանի: Մասնաճիւղը վերակազմակերպման շրջան մը կը բոլորէ մարզական եւ սկաուտական խումբերու վերակազմութեան նպատակով: Այսուհանդերձ ազգային գետնի վրայ եւ Հայ Տան գործակցութեամբ վարչութիւնը զանազան նախաձեռնութիւններ կ'իրականացնէ. Մայիս 28ի տօնակատարութիւն, դաշտագնացութիւն եւ պարահանդէս: 7 Դեկտեմբերին, վարչութիւնը կը կազմակերպէ փինկփոնկի ներքին մրցաշարք 14 կրտսերներու եւ 18 երէցներու մասնակցութեամբ: Մրցաշարքը կը փակուի խանդավառ երեկոյթով - [Ծ/121.27] :

1992ին վարչութեան դիւանը կը մնայ նոյնը: Կազմի մնացեալ անդամներն են՝ Սամուէլ Գէորգեան, Սարօ Խիւտավերտեան, Յարութիւն Պաստրմաճեան եւ Յովիկ Մուրատեսեան:

1992ի գարնան, Յակոբ Սթամպուլեանի ջանքերով կը կազմուի պատանիներու Ֆուլթպոլի խումբ մը, որ կ'ունենայ իր շաբաթական փորձերը: Վարչութիւնը նիւթապէս եւ բարոյապէս կը նպաստէ այս խումբին յառաջդիմութեան:

9 Մայիս 1992ին վարչութիւնը կը կազմակերպէ ճաշկերոյթ - պարահանդէս՝ Հայաստանէն հրաւիրուած նուագախումբի մասնակցութեամբ: Ձեռնարկը աննախընթաց յաջողութիւն կ'արձանագրէ եւ նիւթական եկամուտ կ'ապահովէ վարչութեան գանձին:

17 եւ 18 Հոկտեմբերին մասնաճիւղը կը կազ-

մակերպէ թենիսի մրցաշարք՝ Միլանոյի եւ շրջակայի քաղաքներէն, ինչպէս նաեւ Իտալիոյ Լուկանօ քաղաքէն 28 մարզիկներու մասնակցութեամբ: Մրցաշարքի ախոյեաններ կը հանդիսանան երէցներու դասակարգէն՝ Ստեփան Բաբայեանց, իսկ կրտսերներէն՝ Կարէն Ուչերեան - [Ծ/131.13] :

17 Սեպտեմբեր 1993ին Հայաստան կը մեկնի մասնաճիւղէն պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմեն Յարութիւն Սթամպուլեան, Սարօ Խիւտավերտեան, Սիլվա Սթամպուլեան եւ Սիրան Խիւտավերտեան: Պատուիրակութիւնը իր հետ կը տանի 15.000 ամ. տոլար արժողութեամբ օժանդակութիւն՝ յատկացուելու համար Կիւմրիի երկրաշարժի նահատակներու ընտանիքներուն: Այս առթիւ պատուիրակութիւնը կ'այցելէ նաեւ Արցախ՝ նոյն առաքելութեամբ:

28 Նոյեմբեր 1993ին մասնաճիւղը կը գումարէ անդամական ընդհանուր ժողով:

1էն 3 Ապրիլ 1994ին, մասնաճիւղի Ֆուլթպոլի խումբ, Ժընեւի մէջ կը մասնակցի Զուիցերիահայ Միութեան կազմակերպած միջերոպական հայ մարզական խումբերու մրցաշարքին՝ ստանալով լաւագոյն մարզական ոգի ցուցաբերող խումբի տիտղոսը:

1995-1996 տարեշրջանի մասնաճիւղի վարչութեան մաս կը կազմեն.-

Ատենապետ՝ Ռոպէրթ Գալուստեան
Ատենադպիր՝ Յարութիւն Պաստրմաճեան
Գանձապահ՝ Արմէն Մալոյեան
Խորհրդականներ՝ Գրիգոր Սագայեան եւ Վաչէ Լիպարեան:

1997էն սկսեալ, Միլանոյի եւ շրջակայքի Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդ տարրերու երկրէն մեկնումներուն պատճառով, մասնաճիւղին շարքերը կը նօսրանան եւ սկաուտական ու մարզական նախաձեռնութիւնները ամլութեան կը մատնուին: Մասնաճիւղին գործունէութիւնը կը սահմանափակուի ազգային տօնակա-

տարույթի ընդունելու մասնակցությունը՝ «Հայ Տան» այլ կազմակերպություններում հետ գործակցություններում:

2004-ին 2006, Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչությունը քանի մը առիթներով կապ կը հաստատ-

տէ մասնաճիւղին վերջին վարչական կազմի անդամներուն հետ յանձնարարելով որ ճիգ չխնայեն թէկուզ փոքր թիւի անդամներու գործակցություններ վերակենդանացնելու մասնաճիւղին գործունէությունը:


Դ. ՄԱՍ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱԻՈՐՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
ԸՍՏ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒ
1991 - 2003

- ԵՐԵՒԱՆ ԿԵԴՐՈՆ - ՔԱՆԱՔԵՌ - ԷՐԵՐՈՒՆԻ -
- ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ - ՇԷՆ ԳԱԻԻԹ - ՇԱՀՈՒՄԵԱՆ «Շաւարշ Քրիստեան»
- ԿՈՏԱՅՔ ԱԲՈՎԵԱՆ - ՉԱՐԵՆՑԱԻԱՆ - ՀՐԱԶԴԴԱՆ - ԲԻԻՐԵՂԱԻԱՆ
- ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՄԱՐՏՈՒՆԻ - ՍԵՒԱՆ - ԾՈՎԻՆԱՐ
- ՍԻՒՆԻՔ ՍԻՍԻԱՆ - ԿԱՊԱՆ
- ՇԻՐԱԿ ԿԻՒՄՐԻ «Վառան Զերազ» - ԱԽՈՒՐԵԱՆ
- ԱՐԱԳԱԾՈՏՆ ԹԱԼԻՆ - ԱՊԱՐԱՆ
- ԱՐԱՐԱՏ ԱՐԱՐԱՏ - ՄԱՍԻՍ - ԱՐՏԱՇԱՏ - ՎԵԴԻ - ՓՈՔՐ ՎԵԴԻ -
ՆՈՐ ԿԵԱՆՔ - ՍԻՍԱԻԱՆ - ԱՇՈՑՔ
- ԱՐՄԱԻԻՐ ԷԶՄԻԱԾԻՆ «Վաչէ» - ԲԱՂՐԱՄԵԱՆ - ԱՐՄԱԻԻՐ
«Վարդան Բախշեան»
- ՏԱԻՈՒՇ ԻԶԵԻԱՆ - ԶՕՐԱԿԱՆ - ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ
- ԼՈՒԻ ԱԽԹԱԼԱ - ՍՏԵՓԱՆԱԻԱՆ - ՎԱՆԱԶՈՐ - ՏԱՇԻՐ - ԱԼԱՎԵՐՏԻ -
ՍԱՆԱՀԻՆ - ՄԱՐԳԱՀՈՎԻՏ - ՍՊԻՏԱԿ



6.- ԿՈՐՄԱՅՐԻԻ մասնաճիղ
28 Դեկտեմբեր 1990

10.- ՀՐԱԶԴԱՆԻ մասնաճիղ
3 Փետրուար 1991

7.- ԹԱԼԻՆԻ մասնաճիղ
8 Յունուար 1991

2.- ԱԲՈՎԵԱՆԻ մասնաճիղ
26 Հոկտեմբեր 1990

4.- ԶԱՐԵՆՁԻԱՆԻ մասնաճիղ
28 Նոյեմբեր 1990

3.- ՄԱՐՏՈՒՆԻԻ մասնաճիղ
18 Նոյեմբեր 1990

1.- ԵՐԵՎԱՆԻ Մայր Մասնաճիղ
2 Դեկտեմբեր 1989

8.- ԲԱԴՐԱՄԵԱՆԻ մասնաճիղ
28 Յունուար 1991

5.- ՍԻՍԻԱՆԻ մասնաճիղ
20 Դեկտեմբեր 1990

9.- ՂԱՓԱՆԻ մասնաճիղ
31 Յունուար 1991

**Հ.Մ.Ը.Մ.Ի
ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
1991Ի ՍԿԻԶԲԸ**

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ծանօթ է, որ Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի վերընձիւղման հոլովոյթը, մինչեւ 1990ի սկիզբը, կառուցային յստակ կացութիւն մը չէր ներկայացներ: Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական վարչութիւնը, Հ.Մ.Ը.Մ.Ի գործունէութիւնը հայրենիքէն ներս ծաւալելու աշխատանքը վստահած էր Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան, իր կողմէ տեղւոյն վրայ ներկայացուցիչ նշանակելով Տիգրան Ճինպաշեանը:

Խ. Հայաստանի կառավարութեան 6 Յունիս 1990ի նիստին ընթացքին որոշում կը տրուի Հ.Մ.Ը.Մ.Ին արտօնել գործունէութիւն ծաւալելու Հայաստանի մէջ, յատկապէս սկաուտական


խումբեր կազմակերպելով պետական վարժարաններէ ներս: Շուտով կը կազմակերպուին խումբեր եւ 26 Յունիսէն 4 Օգոստոս 1990ին տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտական անդրանիկ բանակումը Հայաստանի մէջ:

1991ի սկիզբը գործող մասնաճիւղերու վարչական կազմերու մասնակցութեամբ կը կազմակերպուի հանդիպում մը, ուր կը նշանակուի Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.Ի Պատասխանատու Մարմին: 1991ի Ապրիլին, Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.Ի պատգամաւորները կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.Ի հինգերորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին: Հինգերորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի ընթացքին, Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.Ի Պատասխանատու Մարմնի անդամ Վարդան Բախշեան Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական վարչութեան անդամ կ'ընտրուի: Արագօրէն մասնաճիւղեր կը հիմնուին Հայաստանի մարզերու զանազան համայնքներուն մէջ: Անոնց կեանքը յաճախ կարճատեւ պիտի ըլլար՝ կազմակերպչական փորձառութեան, մասնագէտ մարդու թիւ եւ նիւթական միջոցներու սղութեան պատճառով:

1995ին, հնգամեայ բանակցութիւններու իբրեւ արդիւնք, Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտական ճիւղը կը ստանայ միջազգային ճանաչում՝ Հայաստանի Ազգային Սկաուտական կազմակերպութիւն (Հ.Ա.Ս.Կ.) անուանումով: Կը կազմուի Հ.Ա.Ս.Կի կեդրոնական վարչութիւն վարելու համար սկաուտական շարժումը հայրենիքի տարածքին: Հ.Ա.Ս.Կ.ը կը ստանայ պաշտօնական գրանցում Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ:

5 Դեկտեմբեր 2000ին Հայաստանի կառավարութիւնը կ'որոշէ Արագածոտնի մարզի Բիւրականի հանգստեան տունը իբրեւ սեփականութիւն անվճար յանձնել Հ.Ա.Ս.Կ. հասարակական կազմակերպութեան:

Յաջորդող էջերով, հիմնադրութեան ժամանակագրական շարքով կը ներկայացնենք Երեւանի եւ Հայաստանի ինը մարզերու (նահանգ-



WORLD ORGANIZATION OF THE SCOUT MOVEMENT
ORGANISATION MONDIALE DU MOUVEMENT SCOUT

This is to certify that the National Scout Organization in
Nous certifions que l'Organisation Scout Nationale de

Republic of Armenia


Known as
Connue sous le nom

Armenian National Scout
Movement (HASK)



having complied with the requirements laid down by the Constitution of the World Organization of the Scout Movement, has been duly granted recognition as a Member Organization and is hereby registered with the World Scout Bureau, with effect from

ayant rempli les conditions requises par la Constitution de l'Organisation Mondiale du Mouvement Scout, a été officiellement reconnue comme Organisation Membre. Elle est désormais inscrite auprès du Bureau Mondial du Scoutisme, à compter du

18th April 1997



Francisco S. Romero
Chairman / Président
World Scout Committee
Comité Mondial du Scoutisme

Jacques Moreillon
Secretary General / Secrétaire Général
World Organization of the Scout Movement
Organisation Mondiale du Mouvement Scout

Հ.Ա.Ս.Կ.ի միջազգային սկաուտական շարժումին անդամակցութեան վկայագիրը

ներու) զանազան համայնքներուն (քաղաք կամ գիւղ) մէջ Հ.Մ.Ը.Մ.ի տարածման եւ գործունէութեան փուլերը, բացի Վայոց Ձորի մարզէն, ուր գործունէութիւն չէ զարգացած, արձանագրելով նաեւ որ հատորի հրատարակութեան օրերուն, գործօն կը մնային Երեւանի մասնաճիւղի եւ Աբովեանի, Չարենցաւանի, Հրազդանի, Կիւմրիի, Ապարանի, Մասիսի, Արմաւիրի եւ Վանաձորի միաւորները կարելոր գործունէութիւն արձանագրելով ազգային եւ միջազգային գետիններուն վրայ:

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՐԶ

ԵՐԵՒԱՆ - ԿԵԴՐՈՆ


Հայաստանի աւագ մասնաճիւղ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի Կեդրոնի մասնաճիւղը հիմնրած է 2 Դեկտեմբեր 1989ին: Մասնաճիւղի անդրանիկ վարչութեան մաս կազմած են Վարդան Բախչեան, Սուսաննա Դաւթեան, Տիգրան Նազարեան, Նայիրի Յունանեան եւ Բագրատ Եսայեան:

1991 եւ 1992 տարիներու ընթացքին յաջորդաբար կը կազմուին Երեւանի հետեւեալ միաւորները. Երեբունի, Շահումեանի շրջան՝ «Շաւարշ Քրիսեան», Քանաքեռ, Խորհրդային Շրջան, Շէնգաւիթ, Նոր Արաբկիր:

Էրեբունիի միաւորը 1991ի Մայիսին ունի 20 օժանդակ եւ 74 սկաուտ անդամներ: 29 Մարտ 1992ին դպրոցականներու Մշակութային Պալատին մէջ տեղի կ'ունենայ սկաուտական շարքերէն 50 արի-արենոյշներու երդման արարողութիւն: Երդումը կը ստանայ մասնաճիւղի խմբապետուհի Լուսինէ Աւդալեանը: Արարողութեան աւարտին Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Պատասխանատու Մարմնի ատենապետը կը շնորհաւորէ մասնաճիւղին յառաջդիմութիւնները:

Շահումեանի շրջանի միաւորը կը կրէ «Շաւարշ Քրիսեան» անունը: 1992ին միաւորի անդամներուն ընդհանուր թիւը կը բարձրանայ 170ի, որոնցմէ 150ը՝ սկաուտական շարքերէն:

Քանաքեռի միաւորի սկաուտական շարքե-



Համահայկական Երիտասարդական Հիմնադրամի Յանձնաժողովի հաստատագիրը տրուած Հ.Ա.Ս.Կ.ին որպէս 2000 տարուան լաւագոյն երիտասարդական ծրագիր

րուն ընդհանուր թիւը 1992ին կը բարձրանայ 40ի:

Մայրաքաղաքի Խորհրդային շրջանի սկաուտական կազմը 1992ին կը հաշուէ 30 անդամներ: Շէնգաւիթի միաւորը կը գործէ իր սեփական կեդրոնատեղիին մէջ:

Մինչեւ 1995 այս միաւորներէն գործօն կը մնան Էրեբունի, «Շաւարշ Քրիսեան», Քանաքեռ եւ Արաբկիր միաւորները:

1996ի գարնան, Երեւանի մասնաճիւղը վերակենդանացաւ շնորհիւ սկաուտ խմբապետներու ճիգերուն: Մասնաճիւղը կազմակերպեց աստի-



Հ.Ա.Ս.Կ.ի Երեւանի, Լոռիի եւ Իջեւանի սկաուտներու միացեալ բանակումի խմբանկար, Վանաձոր 2000 ճանաւորական սեմինար-բանակում, մասնաճիւղի ընդհանուր բանակում եւ իր գործունէութիւնը տարածեց մայրաքաղաքի կարգ մը թաղամասերուն վրայ:

Տարեվերջի անդամական ընդհանուր ժողովի ընթացքին, Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը հաղորդէ, թէ մարզային դասաւորումներու հիման վրայ յետ այսու Երեւանի մասնաճիւղը պիտի ունենայ իւրայատուկ վարչութիւն՝ անկախ Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութենէն, որուն ենթակայ պիտի ըլլան Երեւանի համայնքներու (թաղամասերու) սկաուտական ութ խումբերը: Առ այդ ժողովը կ'ընտրէ Երեւանի մասնաճիւղի անդրանիկ վարչութիւն, որուն մաս կը կազմեն՝ ատենապետ՝ Անրի Վարդանեան, Արմէն Աղայեան, Յովիկ Մարանեան, Բագրատ Եսայեան եւ Ադա Մանուկեան

[Ծ/177.21]:

9 Մայիս 1997ին Երեւանի մասնաճիւղի սկաուտները Շուշիի ազատագրման 5րդ տարեդարձին առթիւ արշաւ մը կը կազմակերպեն Ծաղկաձոր, ուր Ապրես Զոհրապեան դասախօսութիւն մը կու տայ Շուշիի ազատագրման մասին: Ապա արշաւողները կ'ունենան զարգացման մրցոյթ, Մեղրաձորի մէջ: Յուլիսի 25էն մինչեւ 29 կայացած 35 արի-արենոյչ աստիճանաւորներու դպրոց-բանակումին կը հետեւի մինչեւ 6 Օգոստոս երկարող մասնաճիւղի տարեկան բանակումը -[Ծ/184.4] :

1998ի ընթացքին մասնաճիւղի գործունէութիւնը աւելի թափ կը ստանայ մայրաքաղաքի տարբեր բաժիններուն մէջ, շարքերու ընդհանուր թիւը բարձրացնելով 233ի: Մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ



նայ Աղաւնաձորի մէջ: Մասնաճիւղի սկաուտները կը մասնակցին ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական վեցերորդ Ընդհանուր Բանակումին, կը կազմակերպեն դաստիարակչական եւ ծանօթացման արշաւներ Հայաստանի գանազան շրջաններուն մէջ եւ անկախութեան 7րդ տարեդարձը կը նշեն Արագածի գագաթ մագլցումով: Մասնաճիւղը կը գործէ Երեւանի գանազան դպրոցներուն մէջ:

1999ին մասնաճիւղի տարեկան ընդհանուր բանակումը կը կայանայ 22-30 Յուլիսին, Ծաղկաձորի մէջ: 7 սկաուտներ կը մասնակցին Հ.Ս.Շ.ի (Excel Scout) բանակումին եւ 3 աստիճանաւորներ՝ միջազգային 19րդ ճէմպորիին Չիլիի մէջ:

2000ի սկիզբը նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ծանօթ յայտարարութեան պատճառով կը

ձերբակալուի Յարութիւն Յարութիւնեանը, ինչ որ ծանր անդրադարձ կ'ունենայ մասնաճիւղի գործունէութեան ընթացքին վրայ, զգուշաւոր սակայն միշտ կանգուն պահելով զայն: Յարութիւնեանի անպարտ արձակումէն ետք մասնաճիւղի գործունէութիւնը կը վերագտնէ իր նախկին աշխուժութիւնը:

10 Դեկտեմբեր 2000ին Երեւանի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին կողմէ ընտրուած վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ կազմով.-

Ատենապետ՝ Արմէն Աղայեան, փոխատենապետ՝ Ռազմիկ Աւագեան, ատենադպիր՝ Լենա Միրզոյեան, գանձապահ՝ Աղա Մանուկեան, խորհրդական՝ Յարութ Նասոյեան:

Այս կազմը կը գործէ մինչեւ Մայիս ամիսը



Հ.Ա.Ս.Կ.ի աստիճանատրական բանակում, Ծաղկաձոր 2003ին

ապա կը ներկայացնէ հաւաքական հրաժարական: Կեդրոնական վարչութիւնը կը նշանակէ աստիճանաւորական խորհուրդ՝ գործելու համար մինչեւ Հ.Ա.Ս.Կ.ի յառաջիկայ համաժողով: Այս միջոցին մասնաճիւղին դադրած կարգ մը խումբերը կը վերակազմուին եւ մինչեւ 2002 մասնաճիւղին գործունէութիւնը կ'աշխուժանայ սկստական հինգ խումբերու գործունէութեամբ:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՈՎԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Արովեանի միաւորը կը կազմաւորուի 1990ի վերջաւորութեան: Հիմնադրութեան աքթը տեղի կ'ունենայ 7 Նոյեմբեր 1990ին:

1991ի Մայիսին մասնաճիւղը կը գործէ մարզական եւ սկստական բաժիններով, Արովեանի Դպրոցականներու Մշակոյթի Պալատի սենեակներէն մէկը իբրեւ հաւաքավայր օգտագործելով:

Մարզական բաժինը կը մշակէ վոլիպոլ: Սկստականներու թիւն է 125: Գործօն անդամները՝ 70:

1998ին շարքերու ընդհանուր թիւն է 25: Մասնաճիւղը իր տարեկան բանակումը կը կատարէ Չարենցաւանի մասնաճիւղին հետ համատեղ:

1999ի ընթացքին մասնաճիւղի գործունէութիւնը կը ծաւալի Արովեանի մանկապատանեկան կեդրոնին մէջ, շաբաթական հաւաքոյթներով: Սկստական կազմը կը բաժնուի տարիքային 3 բաժիններու: Տարուան ընթացքին մասնաճիւղը կը մասնակցի Հ.Ա.Ս.Կ.ի «Հայ Սկստատի Օր»ուան հանդիսութեանց, Ապրիլ 24ին

«Եղեռնի Օր» ունի սգերթին, «Հաւատք եւ Ժառանգութիւն» միջոցառումին (Տաթևի վանքին մաքրութեան եւ յարդարման ձեռնարկ), արշաւներու եւ 8 սկաուտներու պատուիրակութեամբ Հ.Ա.Ս.Կ.ի տարեկան ընդհանուր բանակումին, Օգոստոս 6էն 16 Ծաղկաձորի մէջ:

1999ի ուսումնական եղանակի սկիզբը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Աբովեանի միաւորը նոր թափով կը վերսկսի գործունէութեան: 70 անդամներ մաս կը կազմեն միաւորին: Հոկտեմբեր 31ին, 21 չափահաս անդամներու եւ Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան 3 ներկայացուցիչներու մասնակցութեամբ կը գումարուի անդամական ընդհանուր ժողով, ուր Աբովեանի կազմը կը ստանայ մասնաճիւղային կարգավիճակ: Կ'ընտրուի մասնաճիւղի վարչութիւն՝ հետեւեալ կազմով.- ատենապետ՝ Ռոմանոս Պետրոսեան, փոխ ատենապետ՝ Նարինէ Թովմասեան, ատենադպիր՝ Սիլվա Յարութիւնեան, գանձապահ՝ Էլբա Խաչատրեան, դաստիարակչականի պատասխանատու՝ Քնար Փանոսեան: 7 Նոյեմբերին, մասնաճիւղի 3 ներկայացուցիչներ կը մասնակցին Հ.Ա.Ս.Կ.ի համաժողովին: 1999ին մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան տասնամեակը: Այս առթիւ 20 նորագիրներ կու տան իրենց սկաուտական երգումը:

2000ի սկիզբը մասնաճիւղի գործունէութիւնը կը ծաւալի Աբովեանի կարգ մը վարժարաններէն ներս. զգալի է փորձառու աստիճանաւորական կազմի պակասը:

2000-2001ի տարեշրջաններուն մասնաճիւղը կը ծաւալէ նաեւ մշակութային եւ հասարակական աշխատանքներ՝ իր ներկայութիւնը հաստատելով քաղաքի զանազան շրջանակներէն ներս:

2002ին նոր վարչականներու միացումով Աբովեանի մասնաճիւղի գործունէութիւնն ալ աւելի կը զարգանայ: Մասնաճիւղէն 3 սկաուտներ կը յաջողին Ա. կարգի քննութիւններուն:

22 Ապրիլ 2002ին մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչութիւնը կը ներկայանայ հետեւեալ կազմով.- ատենա-

պետ՝ Ռոմանոս Պետրոսեան, ատենադպիր եւ մասնաճիւղի խմբապետ՝ Լիլիթ Զաքարեան, գանձապահ եւ գոյքապահ՝ Մհեր Մելիքեան, անդամական բաժնի ներկայացուցիչ՝ Վլատիկ Ապրոյեան, փոխարինուած՝ Արմինէ Պապէցեանով, ծրագրերու պատասխանատու՝ Անուշաւան Հայրապետեան:

Մասնաճիւղի սկաուտական գործունէութեան մաս կը կազմեն բազմաթիւ արշաւներ, երդման արարողութիւն, միջմասնաճիւղային բանակում, համաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ Ընդհանուր Բանակումի մասնակցութիւն՝ երեք խմբապետներով, ծնողական հանդիպումներ: Կը ծրագրուի երէցական փաղանգի կազմութիւն:

ՉԱՐԵՆՑԱԻԱՆ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Զարենցաւանի մասնաճիւղը հիմնուած է 28 Նոյեմբեր 1990ին, հիմնադիր 19 անդամներու ներկայութեամբ, որոնք կ'ընտրեն մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը՝ բաղկացած հետեւեալ անդամներէն.- Սամուէլ Նալթակեան, Սուսաննա Նալթակեան, Ժիրայր Գաբրիէլեան, Վահէ Նշանեան, Կամօ Ագեան եւ Արթիւր Գոգոյեան:

Հազիւ տարի մը բոլորած՝ մասնաճիւղը կը հաշուէ 35 գործօն անդամ եւ 125 արի-արենոյշներ: Մասնաճիւղը քաղաքին մէջ ունի իր կեդրոնատեղին:

Շուտով արի-արենոյշները կը տիրանան նորընծայի եւ Բ. կարգի գիտելիքներուն, առաջնորդութեամբ խմբապետ Ասատուրի:

28 Մայիս 1991ին, 31 սկաուտներ կու տան իրենց երգումը, իսկ 28 Մայիս 1993ին՝ գայլիկներ առաջին խոստումը: Միաւորի անդրանիկ բանակումը տեղի կ'ունենայ Թղիթի մէջ 1994ին: 1994ին միաւորէն պատուիրակութիւն մը կը մասնակցի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. Ընդհ. Բանակումին:

1995ին մասնաճիւղի սկաուտական աստիճանաւորական կազմը աշխատանքները կը վարէ ձեռնհասօրէն: Մասնաճիւղի խմբապետները կը

փորձեն նաեւ օժանդակել մօտակայ մասնաճիւղերու աշխատանքներուն: Շրջանի մանկապարտէզներուն մէջ կը ստեղծուին գայլիկական խմբակներ: Այսպէս, 19էն 30 Օգոստոս 1996ին մասնաճիւղի կազմակերպած տարեկան բանակումին կը մասնակցին նաեւ Հրազդանի եւ Աբովեանի մասնաճիւղերու սկառուտները եւ Թիֆլիսէն հինգ նորագիր սկառուտներ, որոնք իրենց սկառուտական երդումը կու տան բանակումի աւարտին:

1996ին սկառուտական գործունէութիւնը աւելի ծաւալ կը ստանայ արշաւներու եւ բանակումներու մասնակցութեամբ:

9 Մայիս 1997ին մասնաճիւղի սկառուտները Շուշիի ազատագրման Ծրագրի տարեգարձին առթիւ կ'այցելեն «Յաղթանակի Զբօսայգի», ծաղկեպսակ զետեղելով ազատամարտիկներու շիրիմին: Իսկ Մայիսի 11ին տեղի կ'ունենայ հետախուզական արշաւ - [Մ/180.9]:

1998ին մասնաճիւղի սկառուտներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 148ի: Մասնաճիւղը կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական 6րդ Ընդհանուր Բանակումին, կը կազմակերպէ իր տարեկան բանակումը՝ հաստատելով իր ուրոյն յաջողութիւնները կազմակերպական ծրագիրներուն մէջ:

19 Մարտ 2000ին Չարենցաւանի Կուլտուրայի Տան մէջ կը գումարուի մասնաճիւղի նորընտիր վարչութեան անդրանիկ նիստը, ուր վարչութեան կազմը իր աշխատանքներու բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Գէորգ Գասպարեան, փոխ ատենապետ՝ Սեւադա Մելիքեան, ատենադպիր՝ Մարինէ Այվազեան, գանձապահ՝ Աստղիկ Մնացականեան, սկառուտ պատասխանատու՝ Շուշան Մելիքեան:

Այս կազմը կը գործէ զգալի վերիվայրումներով: Կեդրոնական վարչութեան օժանդակութեամբ կը վերանորոգուի մասնաճիւղի գրասենեակը: Կեդրոնական վարչութեան ընդհանուր խմբապետի դասաւորումով մասնաճիւղի խմբապետը կը փոխարինուի նոր խմբապետով:

Մինչեւ 2001ի Մարտ ամիսը մասնաճիւղը կը

գումարէ չորս անդամական ընդհանուր ժողով: Մասնաճիւղի սկառուտական շարքերու թիւն է 28 արի-արենոյշ եւ 17 գայլիկ-արծուիկ:

Մարտ 2001ին կը նշանակուի աստիճանաւորական նոր կազմ.- ատենապետ՝ Ալիկ Մուրատեան, փոխ ատենապետ՝ Բախշի Շախնազարեան, գանձապահ՝ Վարդան Միրումեան, գոյքապահ՝ Արմէն Նազարեան, սկառուտ պատասխանատու՝ Շուշան Մելիքեան, գայլիկ պատասխանատուներ՝ Լիլիթ Մնացականեան, Գարիկ Քոչարեան եւ Կարէն Մակեան:

Այս կազմի գլխաւոր աշխատանքը կ'ըլլայ Մարտին այցելել Չարենցաւանի թիւ 1 եւ թիւ 4 միջնակարգ վարժարանները՝ ծանօթացնելու համար սկառուտական շարժումը, իսկ Ապրիլին քաղաքի միւս վարժարանները՝ նոյն ծրագրով:

2002 Նոյեմբերէն մինչեւ 2004 պատասխանատուներու բացակայութեան պատճառով միաւորին աշխատանքները կը դադրեցուին, 2005ին վերսկսելու համար նոր աստիճանաւորական կազմի առաջնորդութեամբ:

ՀՐԱՁԴԱՆ

Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եօթներորդ մասնաճիւղն է Հրազդանի մասնաճիւղը: 1991ի Յունուարին, Անդրանիկ Աբոյեան, Վոլոդիա Պօղոսեան եւ Խաչիկ Աբրահամեան կը նախաձեռնեն անդամագրութեան եւ 3 Փետրուար 1991ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն ընթացքին կ'ընտրուի մասնաճիւղի անդրանիկ վարչութիւնը: Եօթը անդամներէ բաղկացած վարչութիւնը կը վարէ մասնաճիւղի աշխատանքները. վարչութեան ատենապետն է Անդրանիկ Բանոյեան: Սկառուտական Խորհուրդի ատենապետն է Արտաշէս Յակոբեան: Մասնաճիւղը ունի 27 անդամներ եւ սկառուտական բաժին:

Մարզական բաժինը կը մշակէ քարաթէ եւ պասքէթպոլ:

7 Հոկտեմբեր 1991ին 60 սկառուտներ կու տան իրենց սկառուտական խոստումը:



Հրազդանի մասնաճյուղի սկաուտներ 2001ին

26 Յուլիս 1991ին մասնաճյուղը կը գրանցուի քաղաքային խորհուրդին մօտ: 1992ի Յունիսին մասնաճյուղի սկաուտական խորհուրդի ատենապետ Արտաշէս Յակոբեան կը մասնակցի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանի 17րդ նաւասարդեան խաղերուն:

17 Ապրիլ 1993ին, մասնաճյուղը կը կազմակերպէ ծառատնկում՝ Հայրենական Մեծ Պատերազմի զոհերու յուշարձանի տարածքին: 9 Յունիսին Թեղենիս լերան Գէորգ Չաւուշ յուշադրի մօտ սկաուտներ կու տան իրենց երգումը: Մասնաճյուղի տարեկան բանակումը տեղի կ'ունենայ 7-13 Յուլիսին, Մեղրաձորի մէջ:

1994-95 տարեշրջանին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հրամանագրի հետեւանքով վարչութիւնը դադրեցուց իր ընթացիկ գործունէութիւնը: Մասնաճյուղին գրասենեակը կողոպտուեցաւ:

1994ին 7 սկաուտներ կը մասնակցին համա-Հ.Մ.Ը.Մ.ական 5րդ Ընդհ. Բանակումին, իսկ 10-17 Յուլիս 1995ին 57 սկաուտներ կը կայացնեն

բանակում՝ Սեւանի շրջանին մէջ:

1997ին Արտաշէս Յակոբեանի ճիգերով մասնաճյուղին գործունէութիւնը կը վերսկսի: Սկաուտական շարքերուն թիւը շուտով կը բարձրանայ 71ի, օժանդակ անդամներու թիւն է 16: Սեպտեմբեր 21ին մասնաճյուղը կը նշէ Հայաստանի վերանկախացման 6րդ տարեդարձը: Նոյեմբեր 1ին տեղի կ'ունենայ մասնաճյուղի անդամական ընդհանուր ժողով, ուր կ'ընտրուինոր վարչական կազմ: Վարչական կազմի ճիգերով մասնաճյուղին կ'ապահովուի նստավայր, քաղաքի թիւ 18 մանկապարտէզի շէնքին մէջ: 1997ին Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութիւնը մասնաճյուղը կը գնահատէ Հայաստանի լաւագոյն մասնաճյուղի տիտղոսով:

Որակաւոր խմբապետներու բացակայութիւնը զգալի բաց մըն է Հրազդանի մասնաճյուղին համար: 1995էն 1998 տարեշրջաններուն այս կացութեան պատճառաւ մասնաճյուղի գործունէութիւնը նահանջ կ'արձանագրէ, մինչեւ Արտաշէս Յակոբեանի վերադարձը Հրազդան, ուր



Հրազդանի մասնաճիղի սկաուտներ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութիւններէն անդամներու ընկերակցութեամբ

ենթական կը ստանձնէ Հ.Ա.Ս.Կ.ի ներկայացուցչութիւնը մասնաճիղէն ներս:

1998ին մասնաճիղը կ'արձանագրէ կարեւոր ան, շարքերու թիւը բարձրացնելով 130ի: Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնական Վարչութեան հետ իր կապերը օրինակելի են: Մասնաճիղը կը մասնակցի միջմասնաճիղային բոլոր ձեռնարկներուն՝ բանակում, սեմինար, Մայիս 28ի արշաւ դէպի Սարգարապատ, համաՀ.Մ.Ը.Մ.ական Զ. Ընդհ. Բանակում եւ կ'արդարացնէ իր սեփական կեդրոնատեղիին ընձեռած առաւելութիւնները:

1999ին մասնաճիղը կը բանայ իր երկրորդ ակումբը Հրազդան քաղաքին մէջ: 18 Ապրիլին 52 սկաուտներ կը նշեն «Սկաուտի Օր»ը: 1-2 Մայիսին 90 սկաուտներ կը մասնակցին Հայաստանի եկեղեցիներու մաքրութեան արշաւին:

22 Ապրիլ 2000ին Հրազդանի մասնաճիղի անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ՝ ատենապետութեամբ Թ. Գաբրիէլեանի: 26 Յունիսին, ատենապետի հրաժարումով վարչական կազմը կ'ամբողջացուի Գագիկ Այվազեանի մասնակցութեամբ եւ աշխատանքներու բաժանումը կը կատարուի հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Ռաֆիկ Կուրղինեան, ատենադպիր՝ Ծովինար Յովսէփեան, գանձապահ՝ Արմինէ Մկրտչեան, գոյքապահ եւ սկաուտ խմբապետ՝ Յ. Յարութիւնեան, կազմակերպչականի պատասխանատու՝ Գագիկ Այվազեան:

Այս կազմը կը գործէ մինչեւ 2000ի Դեկտեմբեր ամիսը, մասնակցելով Ապրիլ 24ի, Շուշիի ազատագրման, Մայիս 28ի եւ այլ յուշահանդէս

տողանցքներուն, արշալ-բանակումներու եւ աստիճանաւորական Ա. կարգի սեմինարին: Տարեվերջին մասնաճիւղը կը հաշուէ 22 անդամ, 45 երդուեալ սկաուտ եւ 25 գայլիկ: Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնական Վարչութեան յանձնած է անդամատուրքերէ գանձուած 89.200 դրամ:

28 Դեկտեմբեր 2000ին մասնաճիւղի նորընտիր վարչութիւնը իր աշխատանքներուն բաժանումը կը կատարէ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Արեւիկ Գալստեան, փոխ ատենապետ՝ Գագիկ Այվազեան, ատենադպիր՝ Նայիրա Յարութիւնեան, գանձապահ՝ Արմինէ Մկրտչեան:

Այս կազմը կը գործէ մինչեւ 2001ի Յունիս ամսուան վերջաւորութիւնը, ապա աշխատանքը կը վարէ մասնաճիւղին խմբապետական կազմը՝ մասնաճիւղի խմբապետ՝ Ա. Մկրտչեան, խումբի խմբապետ՝ Մ. Յարութիւնեան, գայլիկ պատասխանատու՝ Ծովինար Յովսէփեան, փոխարինւած՝ Արկաղի Ղազարեանով:

27 Յունիս 2001էն մինչեւ 14 Ապրիլ 2002 խմբապետական կազմի առաջնորդութեամբ մասնաճիւղի սկաուտներ կը մասնակցին քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակի արշալին, գայլիկական համահայաստանեան բանակումին, Հրազդանի թիւ 11 միջնակարգ վարժարանի մէջ հայկական պարի խումբի կազմակերպման, խմբապետական բանակումներու եւ ընթացիկ հաւաքոյթներու:

ԲԻՒՐԵՂԱԲԱՆ

Բիւրեղաւանի մասնաճիւղը հիմնուած է 1991ի սկզբնաւորութեան: Մայիսին մասնաճիւղը ունի 15 գործօն անդամներ եւ 20 արի-արեւունչներ:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՐՁ

ՍԱՐՏՈՒՆԻ

Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ.ի Մարտունիի մասնաճիւղը հիմնուած է 15 Յունիս 1990ին: 18 Նոյեմբե-

րին մասնաճիւղի 16 անդամներ կը գումարեն անդամական ընդհանուր ժողով, ուր կ'ընտրուի անդրանիկ վարչական կազմ եւ մարզական խորհուրդ- [Ծ/109-110.6]: Վարչութեան ատենապետուհին է Քնար Յովասափեան:

1992ին անդամներու ընդհանուր թիւն է 45, որոնցմէ 30ը սկաուտական շարքերէն:

Համեմատաբար կարճ ժամանակաշրջանի մը խանդավառ գործունէութենէն ետք, միաւորի պատասխանատուին Երեւան փոխադրուելուն պատճառով տեղւոյն աշխատանքները կը սկսին կաղալ: Մինչեւ 1998 միաւորը կազմալոյծ վիճակի մէջ կը մնայ՝ աստիճանաւորական ցանցի մը բացակայութեան պատճառով:

ՍԵԻԱՆ

1997ին Սեւանի մէջ կը սկսի գործել սկաուտական խումբ: 1998ի ամրան նորաստեղծ այս մասնաճիւղը փոքր թիւով անդամներով կը մասնակցի համահ.Մ.Ը.Մ.ական Զ. ընդհանուր բանակումին եւ աստիճանաւորական սեմինարին, սակայն որակաւոր աստիճանաւորական ցանցի բացակայութեան պատճառով տարեվերջին իր աշխատանքները առժամաբար կը դադրեցնէ:

2000ին Սեւանի մասնաճիւղը կը վերսկսի իր գործունէութեան:

ԾՈՎԻՆԱՐ

2000ի Մարտ ամիսէն սկսեալ նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Գենաղի Ղազարեանի, Գվիդոն Թառոյեանի եւ Կարէն Սարգսեանի գլխաւորութեամբ Մարտունիի շրջանի Ծովինար գիւղին մէջ 20 անդամներով կը ձեռնարկուի սկաուտական գործունէութեան:

ՍԻՆԻՔԻ ՍԱՐՁ

ՍԻՍԻԱՆ

20 Դեկտեմբեր 1990ին Մարօ Քէշիշեանի,

Վարդան Բախչեանի եւ Վլատիկ Աւաննէսեանի նախաձեռնութեամբ եւ Սիսիանի թիւ 2 միջնակարգ վարժարանի աշակերտներու մասնակցութեամբ կը սկսի գործել Սիսիանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Հիմնադիր հաւաքին խօսք կ'անէ Մարօ Քէչիչեան, որ կը ծանօթացնէ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը, ապա կ'ընտրուի մասնաճիւղի անդրանիկ վարչական կազմը, մասնակցութեամբ Վլատիկ Աւաննէսեանի, Վարդան Գալստեանի, Ժեւիկ Սանթրեանի, Վահրամ Պարսամեան եւ Շաւարշ Իսաջանեանի: 1991ի գարնան կը սկսին գործել նաեւ Բռնակոթ եւ Նորավան մօտակայ գիւղերու սկառուտական խումբերը:

1991ի Ապրիլին մասնաճիւղի անդրանիկ անդամական ընդհանուր ժողովը կ'ընտրէ նոր վարչական կազմ, մասնակցութեամբ Վլատիկ Աւաննէսեանի, Հրաչ Կարապետեանի, Գուրգէն Թանգեանի, Արամ Սարգսեանի եւ Վենիամին Թանգեանի:

Մասնաճիւղին առաջին հրապարակային գործունէութիւնը կ'ըլլայ Հայաստանի անկախութեան տօնին նուիրուած արշալ-բանակումը, որ տեղի կ'ունենայ 26 Մայիս 1991ին, Բռնակոթ գիւղի Պապոյի Աղբիւրի տարածքին, մասնակցութեամբ երեք խումբերու 80 նորընծայ սկառուտներու:

19էն 25 Յունիս 1991ին Որոտնավանքի մէջ մասնաճիւղը կը կազմակերպէ իր առաջին ընդհանուր բանակումը որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ Կիւմրիի, Թալինի, Երեւանի եւ Կապանի նորընծայ սկառուտները: Տարեկան Բ. ընդհանուր բանակումը կը կայանայ 14էն 16 Յուլիս 1992ին, իսկ մասնաճիւղի սկառուտներէն Մհեր Գրիգորեան մաս կը կազմէ Հայաստանի սկառուտական պատուիրակութեան, մասնակցելու համար Արեւմտեան Միացեալ Նահանգներու 1992ի Նաւասարդեան խաղերուն: Անդամներու ընդհանուր թիւը կը բարձրանայ 90ի:

Մասնաճիւղը 29 Ապրիլ 1993ին կը ստանայ պետական գրանցում: Սկառուտական 20 հոգի-

նոց խումբ մը իր մասնակցութիւնը կը բերէ 1993ի Մայիս 28ի առթիւ Սիսիանի մէջ կազմակերպուած շքերթին:

9 Մայիս 1994ին Դառ կոչուող տարածքին մասնաճիւղը կը կազմակերպէ Փիքնիք, տօնելու համար Շուշիի ազատագրման առաջին տարեդարձը, իսկ 30 Մայիսէն 1 Յունիս Պապոյի Աղբիւրի տարածքին տեղի կ'ունենայ բանակում նշելու համար անկախութեան տօնը: Մասնաճիւղի տարեկան Գ. ընդհանուր բանակումը կը կայանայ 20էն 26 Օգոստոս 1994ին, Որոտնավանքի բանակավայրին մէջ:

Մասնաճիւղի անդամներէն Գուրգէն Թանգեան 1995ի Ապրիլին կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, իբրեւ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պատգամաւորական պատուիրակութեան անդամ:

1995ի տարեկան ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 10էն 13 Յուլիսին, Բռնակոթի Յրտաղբիւր տարածքին վրայ:

19էն 30 Յունիս 1996ին տեղի կ'ունենայ Անկախ Պետութեանց Հասարակապետութեան (ԱՊՀ) սկառուտական կազմակերպութիւններու ընդհանուր բանակումը: Հայաստանի պատուիրակութեան մաս կը կազմեն Սիսիանի մասնաճիւղէն Բ. կարգի 10 սկառուտներ, որոնք ընդհանուր զարգացման մրցումին մասնակցելով կը գրաւեն առաջին դիրքը:

Նոյն տարուան մասնաճիւղի ընդհանուր բանակումը տեղի կ'ունենայ 20էն 25 Օգոստոսին, Որոտնավանքի մէջ: Մասնաճիւղին վարչութիւնը ՄԱԿի կողմէ Ազրպէյճանէն գաղթականներու հարցով զբաղուող յանձնախումբի հետ գործակցաբար 17 Յուլիսէն 15 Օգոստոս 1997ին, կը կազմակերպէ միամսեայ բանակում 60 փոքրերու մասնակցութեամբ: Բանակումը կը վարէ Գուրգէն Թանգեան:

1997ին, մասնաճիւղին խմբապետական ցանցը զօրացնելու նպատակով խմբապետ Սասուն Ներսիսեան կը մասնակցի Թիֆլիսի մէջ կազմակերպուած դասախօսական շարքերուն: Երեք այլ աստիճանաւորներ կը մասնակցին Չարեն-

ցաւանի մէջ կազմակերպուած խմբապետական սեմինարին: 10էն 25 Հոկտեմբերին Գուրգէն Թանգեան եւ Մարտիկ Գրիգորեան կ'այցելեն Թեհրան՝ «Սիփան» միութեան հրաւերով:

Մասնաճիւղին կազմակերպուածութիւնը եւ միջազգային մակարդակի գործունէութիւնը կը գնահատուի համաշխարհային գրասենեակին կողմէ՝ տրամադրելով 5000 ամերիկեան տոլարի օժանդակութիւն:

1998ին մասնաճիւղը կազմակերպական տկար հանգրուան մը կը բոլորէ:

1999ի Յունուարին մասնաճիւղը կ'ունենայ իր նոր գրասենեակը: Մայիսի 1ին եւ 2ին մասնաճիւղէն 50 սկաուտներ եւ 70 կամաւորներ կը մասնակցին Ղարաբաղի շրջանին մէջ պատմական յուշարձաններու բարեկարգման աշխատանքներուն «Հաւատք եւ Ժառանգութիւն» ծրագրի ծիրին մէջ:

Տասնամեայ իր գործունէութեան ընթացքին, իրերայաջորդ վարչական կազմերու ատենապետութեան պաշտօնը վարած են Վլադիկ Աւաննէսեան, Երուանդ Պօղոսեան, Գուրգէն Թանգեան, Մարտիկ Գրիգորեան եւ Սասուն Ներսիսեան:

Հակառակ Կեդրոնական Վարչութեան հետեւողական հսկողութեան, մասնաճիւղը նոր ծրագիրներ չէ կրցած իրականացնել: Գործիսի եւ Ախլաթեան գիւղի մէջ խումբեր կազմելու աշխատանքներ չեն կատարուած: Գրասենեակի նորոգութիւնը մնացած է կիսաւարտ եւ գոյքերը թաւանուած են:

2001ին Կեդրոնական Վարչութիւնը ստիպուած է մասնաճիւղը լուծուած յայտարարել:

ԿԱՊԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կապանի մասնաճիւղը հիմնուած է 31 Յունուար 1991ին, սկաուտական կորիզի մը գործունէութեան սկզբնաւորութեամբ: Դանդաղ զարգացող Կապանի մասնաճիւղի դժուարութիւնները գլխաւորաբար նիւթական են:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԿԻԻՄՐԻ

Կիւմրիի «Վահան Զերազ» մասնաճիւղը հիմնուած է Դեկտեմբեր 1990ին, Վիգէն Եթերեանի գլխաւորութեամբ կազմուած սկաուտական կորիզով: 23 Դեկտեմբերին տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, ուր կ'ընտրուի հետեւեալ անդամներէն բաղկացող վարչական կազմ՝ Սարգիս Սարգիսեան, Մնացական Մուրատեան, Սամուէլ Յակոբեան, Սամուէլ Յովհաննէսեան, Գագիկ Կիրակոսեան, Աշխէն Սարգսեան եւ Վաղարշակ Ասատուրեան:

1992ին անդամներուն թիւը կը հասնի 55ի, որոնցմէ 40ը՝ սկաուտական շարքերէն:

1993ին մասնաճիւղը կը վերագտնէ աշխատանքի իր թափը 60 անդամներու մասնակցութեամբ:

ԱԽՈՒՐԵԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆ

3 Յունուար 1991ին, 24 անդամներու մասնակցութեամբ տեղի կ'ունենայ Թալինի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր ժողովը, ուր խօսք կ'առնէ Մարօ Քէչիշեան՝ ծանօթացնելով միութեան ծրագիր - կանոնագիրը եւ նպատակը: Տեղւոյն վրայ կ'ընտրուի անդրանիկ վարչական կազմ:

ԱՊԱՐԱՆ

1998ի աշունէն սկսեալ, Աշոտի ջանքերով, Ապարանի թիւ 2 միջնակարգ վարժարանին մէջ աշակերտութեան կը ծանօթացուի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտական շարժումը:

2000ին Ապարանի միաւորին կ'այցելեն Կեդրոնական Վարչութենէն Հրաչ Շմաւոնեան եւ

Յարութիւն Յարութիւնեան: Այնուհետեւ միա-
ւորի սկաուտներէն եւ արենոյշներէն ներկայա-
ցուցիչներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի
կազմակերպած աստիճանաւորական սեմինար-
ներուն, կազմելով միաւորի աստիճանաւորա-
կան ցանցը:

2002ի ամրան միաւորի սկաուտական խումբ-
ըր եւ գայլիկական վոհմակը կը տարազաւոր-
ւին: Միաւորի գործունէութեան մասին տեղեակ
կը պահուի տեղւոյն քաղաքապետութիւնը, որ-
մէ կը խնդրուի յատուկ հաւաքավայր՝ աւելի
ծաւալելու համար միաւորի գործունէութիւնը -
[Ծ/273.16]:

2004ի Մայիսէն սկսեալ միաւորի աշխատանք-
ները աւելի կը հիմնաւորուին արշաւներու կազ-
մակերպութեամբ եւ սկաուտական սեմինարնե-
րու մասնակցութեամբ:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ԱՐԱՐԱՏ

5էն 11 Օգոստոս 1996ին Խոսրովի Անտառի
«Բիւսուս»ի մէջ մասնաճիւղը կը կազմակերպէ
տարեկան երրորդ բանակումը:

1998ին շարքերու թիւը կը նուազի 10ի, տկա-
րացնելով մասնաճիւղին գործունէութիւնը:

2000ին մասնաճիւղի սկաուտ խմբապետն է
Արթուր Խաչատրեան:

Սկաուտական հաւաքոյթները տեղի կ'ունե-
նան շաբաթական հերթականութեամբ, հետեւ-
եալ շարքով՝ Երկուշաբթի-Արալէզ գիւղ, Երեք-
շաբթի-Վեղի քաղաք, Չորեքշաբթի-Վեղի գիւղ,
Հինգշաբթի-Նոր Կեանք գիւղ, Ուրբաթ-Սիսա-
ւան գիւղ:

2001ին խանդավառ այս ընթացքը զգալիօրէն
կը դանդաղի մասնաճիւղի խմբապետին բանակ
զօրակոչումին պատճառով:

ՄԱՍԻՍ

21 Փետրուար 1991ին Հայկ Աղաբաբեանի,
Մասիս Յարութիւնեանի, Ռոպէրթ Մարկոսեա-

նի, Կամօ Նազարեանի, Նուէր Առաքելեանի եւ
Մամիկոն Գրիգորեանի միացեալ ճիգերով կը
հիմնուի Մասիսի միաւորը:

Առաջին հերթին, 1991ին, 10 սկաուտներ կը
մասնակցին Արեւմտեան Մ. Նահանգներու
Շրջանի սկաուտերու կազմակերպած բանակու-
մին, Հանքաւանի մէջ:

Միամեայ գործունէութեան աւարտին միա-
ւորը արդէն կը հաշուէ 60 անդամ:

1992ին եւ 1993ին միաւորի սկաուտներ կը
մասնակցին Բ. եւ Ա. կարգի բանակումներուն:
1994ին 9 սկաուտներ կը մասնակցին հա-
մա Հ.Մ.Ը.Մ.ական Ե. Ընդհ. Բանակումին՝ Բիւ-
րական:

1996ին, 6 սկաուտներ կը մասնակցին Ա.Պ.Հ.ի
(Անկախ Պետութեանց Հասարակապետութեան)
կազմակերպած անդրանիկ բանակումին Մաղ-
կաձորի մէջ, իսկ 1997ին եւ 1998ին միաւորի
սկաուտները կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.-
Հ.Ա.Ս.Կ.ի կազմակերպած բոլոր միջոցառումնե-
րուն: 1998ին միաւորը կը հաշուէ 200 անդամներ:

1999էն սկսեալ միաւորի գործունէութիւնը
կը սկսի տկարանալ: Միաւորը կը դադրի գործե-
լէ մինչեւ 2003 տարին: 2003ին վերսկսելու հա-
մար գործունէութեան, նոր ուժերու մասնակ-
ցութեամբ:

ԱՐՏԱՇԱՏ

1991ի հիմնադրութենէն հազիւ տարի մը ան-
ցած՝ Արտաշատի մասնաճիւղը 1992ին անգոր-
ծունեայ վիճակի կը մատնուի, գործող ուժերու
բացակայութեան պատճառով:

ԱՇՈՅՔ

ԱՐՄԱԻՐԻ ՄԱՐԶ

ԲԱՂՐԱՍԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Բաղրամեանի մասնաճիւղը կը
հիմնուի 23 Յունուար 1991ին:

1992ին մասնաճիւղի անդամներու թիւն է 66, որոնցմէ 50ը սկառուտական շարքերէն:

ԷԶՄԻԱԾԻՆ «Վաչէ»

20էն 30 Յուլիս 1996ին Ապարանի շրջանի Լուսազիւղի անտառին մէջ մասնաճիւղը կը կազմակերպէ իր տարեկան բանակումը՝ մասնակցութեամբ 70 արի-արենոյշներու եւ գայլիկ-արծրիկներու: Բանակումի աւարտին կայացած քննութիւնները յաջող անցուցած սկառուտները կը ստանան համապատասխան կարգեր: Նոյն տարուան 20էն 27 Օգոստոսին Սեւանի մէջ մասնաճիւղի աստիճանաւորական կազմը կը կազմակերպէ աստիճանաւորական բանակում գարգացնելու համար սկառուտական գիտելիքները:

4էն 14 Օգոստոս 1997ին մասնաճիւղէն 69 սկառուտներ իրենց տարեկան բանակումը կը կատարեն Ապարանի մէջ, ամբողջութեամբ ղեկավարուած մասնաճիւղի աստիճանաւորական կազմին կողմէ, օժանդակութեամբ ծնողական յանձնախումբին:

1998 եղանակին մասնաճիւղի կազմակերպչական գործունէութիւնը կը կաղայ: Սկառուտական խումբերը ոտքի են, ծնողական յանձնախումբերը գործնապէս կ'օգնեն անոնց աշխատանքներուն, սակայն վարչական կազմերը չեն յաջողիր համադրական աշխատանքով գործի ընթացքը զարգացնել:

Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը հսկէ այս իրավիճակին վրայ, մասնաճիւղին գործունէութիւնը վերականգնելու համար:

12 Դեկտեմբեր 1998ին էջմիածնի Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ.ի «Վաչէ» մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովէն ընտրուած վարչական կազմը հետեւեալ ձեւով կը կատարէ իր աշխատանքներուն բաժանումը.- ատենապետ՝ Հրաչ Ռոստոմեան, փոխ ատենապետ՝ Ռոպէրթ Խաչատրեան, ատենադպիր՝ Նազելի Թալասեան, գանձապահ՝ Սրբուհի Շահնազարեան, խորհրդական՝ Շուշան Շուշանեան:

Այս կազմին գլխաւոր իրականացումը կ'ըլլայ քաղաքապետարանէն վարձել Կոմիտասի անուան մշակոյթի պալատէն երկու սենեակ՝ մասնաճիւղի գործունէութեան համար: Շարքերու ընդհանուր թիւն է 45:

1999ի ընթացքին մասնաճիւղի սկառուտական կազմերը մասնակցած են 18 Ապրիլին «Սկառուտի Օր»ուան քայլարշաւին Երեւանի մէջ, Ապրիլ 24ի սգահանդէսին, Մայիս 1 եւ 2ին «Հաւատք եւ Ժառանգութիւն»ի ձեռնարկներուն, Յուլիսի 7ին Գարեգին Ա. Կաթողիկոսի յուղարկաւորութեան եւ 6էն 16 Օգոստոսին համահայաստանեան ընդհանուր բանակումին Ծաղկաձորի մէջ: Մասնաճիւղի խմբապետ Արթիւր Ռաւոյեանը 2էն 16 Սեպտեմբերին Եալթայի մէջ կը մասնակցի «էքսէլսկաուտ» (excelscout)ի սեմինարին:

2000ի կէսէն սկսեալ մինչեւ 2001ի վերջաւորութիւնը էջմիածնի մասնաճիւղի գործունէութիւնը սառած վիճակ մը կը ներկայացնէ, վարչութեան ատենապետ Ռոպէրթ Խաչատրեանի Հայաստանէն մեկնելուն պատճառով: Կեդրոնական Վարչութիւնը մասնաճիւղի գործերը վարելու համար նշանակած է խմբապետուհի, որուն ճիգերով աշխատանքները մասամբ վերսկսած են 2002ի ձմրան:

Քաղաքապետութիւնը մասնաճիւղի գործունէութեան համար տրամադրած է նստավայր-հաւաքավայր:

ԱՐՄԱԻՐ «Վարդան Բախշեան»

1992ի Մայիսէն սկսեալ սկառուտական գործունէութիւն կը սկսի Արմաւիրի մէջ: Միաւորի խմբապետն է Արամ Ֆրանկեանը, գործակցութեամբ Սամուէլ Մարգարեանի: Միաւորի գրասենեակը կը գտնուի Վարդան Բախշեան թիւ 2 միջնակարգ դպրոցին մէջ, որուն հետագային տրուեցաւ Վարդան Բախշեան Երկրորդական Վարժարան անունը:

23 Սեպտեմբեր 1993ին տեղի կ'ունենայ մասնաճիւղի հիմնադիր ժողովը, որուն կը մասնակցին Հայաստանի պատասխանատու մարմնի



ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ցրդ Ընդհանուր Բանակումի խմբապետներ
կ'այցելեն նահատակ Վարդան Բախչեանի շիրիմ

ատենապետ՝ Յարութիլն Յարութիլենեան, սկաուտական պատասխանատու Վիգէն Եթերեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ Մարո Քէշիշեան: Այս ժողովէն ընտրուած Ա. վարչական կազմին կ'անդամակցի Վարդան Բախչեանի մայրը՝ Այտա Բախչեան, որ կը ստանձնէ մասնաճիւղի սկաուտական միաւորի աշխատանքները:

21 Հոկտեմբեր 1995ին վարժարանի բակին մէջ գետեղուեցաւ Վարդան Բախչեանի արձանը [Ծ/162.12]:

4էն 14 Օգոստոս 1996ին 42 սկաուտներ կը մասնակցին մասնաճիւղի տարեկան երրորդ բանակումին:

1996ին մասնաճիւղի սկաուտները կը մասնակցին համահայաստանեան ընդհանուր բանակումին:

Սկաուտական խումբը 1997ին, Մայիս 28ի տօնական օրը նշեց դէպի Ամբերդ կազմակերպուած արշաւով:

1998ին շարքերու ընդհանուր թիւն է 50: Մասնաճիւղը կը մասնակցի համաՀ.Մ.Ը.Մ.ական Զ. Բանակումին, աստիճանաւորական եւ վարչական սեմինարներուն: Կեդրոնական Վարչութեան հետ կապերը համեմատաբար տկար են:

1999էն սկսեալ Այտա Բախչեանի ճիգերով մասնաճիւղը կը վերագտնէ իր աշխուժութիւնը եւ զգալի յառաջդիմութիւններ կ'արձանագրէ կազմակերպչական եւ սկաուտական գետնի վրայ: Մասնաճիւղը խումբ կը ստեղծէ Սարդարապատի մէջ: Սկաուտական խումբը կը մասնակցի համահայաստանեան բոլոր ձեռնարկներուն՝ ամբողջ քառամեակի ընթացքին:

2003ին Արմաւիրի Հ.Ա.Ս.Կ.ի միաւորի սկաուտական շարքերու ընդհանուր թիւը կը բարձրանայ շուրջ 100ի: Միաւորի խմբապետուհին է Ռուզան Թամրազեանը:

2004ին միաւորի խմբապետուհի Գոհար Զարդարեան կը մասնակցի Թայուանի մէջ Համաշխարհային Սկաուտական Երիտասարդական Հաւաքոյթին:

ՏԱԻՈՒՇԻ ՄԱՐԶ

ԻԶԵԻԱՆ

1999 թուականի Յունիս ամիսէն սկսեալ Անդրանիկ Դիլբարեանի նախաձեռնութեամբ Իջեւանի մէջ կը սկսի գործել սկաուտական միաւոր մը, որուն մաս կը կազմեն 17 անդամներ: Սկզբնական ամէնօրեայ հաւաքոյթներով միաւորի սկաուտները շուտով կ'իւրացնեն նորընծայի գիտելիքները:

Կեդրոնական Վարչութեան թելադրանքով Երեւանի մասնաճիւղի 2000 թուականի տարեկան բանակումը տեղի կ'ունենայ Իջեւանի մէջ, տեղւոյն սկաուտական խումբի մասնակցութեամբ: Սակայն տեղւոյն պատասխանատուները նոյն խանդավառութեամբ չեն շարունակեր աշխատանքները եւ Կեդրոնական Վարչութիւնը կը լուծէ Իջեւանի միաւորը:

ԶՕՐԱԿԱՆ

2000 թուականի Յունիս ամիսէն սկսեալ Նոյեմբերեանի շրջանի Զօրական գիւղին մէջ կը ձեռնարկուի սկաուտական գործունէութեան: Սեպտեմբերին միաւորը ունի արդէն 15 օժանդակ անդամներ եւ սկաուտական շարքերու 67 անդամներ: Միաւորի պատասխանատուն է Արսէն Գրիգորեան, իսկ սկաուտական աշխատանքները կը վարէ Յասմիկ Առուստամեան:

ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ

ԼՈՌԻԻ ՄԱՐԶ

ԱԽԹԱԼԱ

Ախթալայի միաւորը սկսած է գործել 1991ին: Փոքրաթիւ կազմով այս շարժումը գործած է ընդմիջումներով: 1998ին 3 հոգի կը մասնակցին Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտական սեմինարին: 1999էն ետք Ախթալայի միաւորին գործունէութիւնը կը դադրի նիւթական միջոցներու անբաւարարութեան պատճառով:

ՍՏԵՓԱՆԱԻԱՆ

Միաւորի գործունէութեան գլխաւոր առանցքը կը կազմէ լեռնագնացութիւնը: 1992ին մասնաճիւղը կը հաշուէ 15 գործօն անդամ եւ 27 արի-արենոյշներ: Շարժումը, որ կը միանայ Լոռիի մարզի միւս միաւորներու գործունէութեան, կարճ ժամանակ ետք կը դադրի նիւթական միջոցներու անբաւարարութեան պատճառով:

ՎԱՆԱԶՈՐ (Կիրովական)

Վանաձորի մասնաճիւղը հիմնուած է 1991ին, գործունէութեան առանցք ունենալով պասքեթպոլի ճիւղը: Սակայն մարզական բաժինը երկար կեանք չէ ունեցած:

1995ի Սեպտեմբերէն սկսեալ Լոռիի մարզին մէջ կը սկսի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կիւմրիի Վանաձոր սկաուտական շարժումը, անդրանիկ բանակումով: 1996ի ամրան խումբը կը մասնակցի Ծաղկաձորի մէջ Ա.Պ.Հ. երկիրներու անդրանիկ բանակումին - [Ծ/224.15]:

1997ին Յովհաննէս Թադեւոսեանի եւ Հրանդ Այվազեանի նախաձեռնութեամբ Վանաձորի մէջ կը սկսին մասնաճիւղի կազմակերպական աշխատանքները: Ապրիլի 24ին նորակազմ մասնաճիւղի սկաուտները արշաւ մը կը կազմակերպեն դէպի 1915ի Յեղասպանութեան Վանաձորի յուշարձան: Իսկ Մայիսի 28ին Հայաստանի

առաջին հանրապետութեան տօնը կը նշեն արշաւ մը կազմակերպելով դէպի Կոտրած Եկեղեցի - [Ծ/180.9]:

1998ին ներքին կազմակերպչական փոքր խարխափումներէ ետք, 1999ին մասնաճիւղը կը վերագտնէ աշխատանքի իր թափը: Խումբը կը մասնակցի համահայաստանեան Բ. կարգի սեմինարին: 1999-2000 տարեշրջանին մասնաճիւղի վարչութեան ատենապետն է Յովհաննէս Նիկողոսեանը, ատենադպիր եւ Աքելլա՝ Անահիտ Ոսկանեան, գանձապահ՝ Շահէն Յարութիւնեան, խմբապետ՝ Դաւիթ Ոսկանեան, փոխխմբապետ՝ Էմմա Ղամբարեան, վարիչ առաջնորդ՝ Նունէ Պալեան:

26էն 30 Սեպտեմբեր 2001ին մասնաճիւղի խմբապետութեան եւ Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան գործակցութեամբ եւ Արցախեան պատերազմի հետեւանքով 24 որբերու մասնակցութեամբ կը կայանայ բանակում, որ կ'արժանանայ US AIDի «Համաշխարհային Ուսուցում»

կազմակերպութեան պարգեւին: Բանակումի խմբապետ Դաւիթ Ոսկանեանին կ'օժանդակեն Յովհաննէս Նիկողոսեան (Վանաձոր), Արմէն Թորոսեան (Տաշիր), եւ Յասմիկ Վերանեան (Ալավերտի) խմբապետները:

Մինչեւ 2002 թուական Վանաձորի մասնաճիւղի ճիգերով կը ստեղծուին Լոռիի զանազան քաղաքներուն եւ գիւղերուն մէջ նոր խումբեր: Մասնաճիւղը կը վայելէ տեղւոյն մարզպետին աջակցութիւնը եւ «Համաշխարհային Ուսուցում» մրցոյթի պարգեւին կ'արժանանայ, գաղթական փոքրերու աշխատանքներուն իր գործակցութեան համար: Մասնաճիւղը կը կազմակերպէ Բ. կարգի սեմինարներ եւ բանակումներ: Վարչութեան եւ խմբապետներու ճիգերով Տաշիրի եւ Ալավերտիի մէջ կը ստեղծուին նոր միաւորներ եւ կ'աշխուժանայ Ախթալայի սկսուտական խումբի գործունէութիւնը: 2002ին Երեւանի մէջ կազմակերպուած հաւաքական կազ-



Վանաձորի սկսուտներ 1999ին



Վանաձորի սկաուտները Սանահինի վանքի բարեկարգումի աշխատանքէն ետք



Վանաձորի սկաուտներ այցելութիւն կու տան Երկրաշարժի յուշակոթող-խաչքարին

մակերպություններու ցուցահանդէսին վանաձորի մասնաճիւղը կը ներկայացնէ Հ.Ա.Ս.Կ.ը: 2002ին կը կազմուի նաեւ վանաձորի մասնաճիւղի երէցական փաղանգը: Մասնաճիւղի սկաուտական գործունէութիւնը կը շարունակուի Հայաստանեան եւ միջազգային ելոյթներու մասնակցութեամբ արձանագրելով յաջողագոյն արդիւնքներ:

ՏԱՇԻՐ

Տաշիրի սկաուտական գործունէութիւնը ուղղակի կապուած է վանաձորի մասնաճիւղի գործունէութեան Արմէն Թորոսեանի հսկողութեամբ: Նախապատրաստական աշխատանքները կ'երկարին մինչեւ 2002ի աշուն, նորընծայ

սկաուտները պատրաստելու համար Բ. կարգի քննութիւններուն - [Մ/ 232.14]:

ԱԼԱՎԵՐՏԻ

Ալավերտիի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտական կորիզի գործունէութիւնը կը ղեկավարուի վանաձորէն Յասմիկ Վերանեանի հսկողութեամբ: Շրջանէն սկաուտներ կը մասնակցին Բիւրականի մէջ կազմակերպուած մասնաճիւղային բանակումներուն:

ՍԱՆԱՅԻՆԻ, ՍԱՐԳԱՅՈՎԻՏԻ ԵՒ ՍՊԻՏԱԿԻ միաւորներու գործունէութիւնները, Տաշիրի նմանողութեամբ կը նշուին վանաձորի գործունէութեան առընթեր եւ կարճ ժամանակէ ետք կը մատնուին անգործունէութեան:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ**

1991 - 1995

- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ - ԴՊՐՈՑ - ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ
- ՄԻՋՄԱՍՆԱԺԻԻՂԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ
- ՄԻՋՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ
- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ - ՄԱՐԶԱՇԽԱՐՀ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

20 Յունիս 1991ին, Հայաստանի մէջ գործող վեց մասնաճիւղերու ներկայացուցիչներու նիստի ընթացքին կը կազմուի Հ.Մ.Ը.Մ-ի Պատասխանատու Մարմինը, որ կոչուած է կատարելու Հայաստանի Շրջանային Վարչութեան պարտականութիւնները:

Կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-
Ատենապետ՝ Գրիգոր Սուքիասեան
Փոխատենապետ՝ Բագրատ Եսայեան
Ատենադպիր՝ Ռուբինա Պետրոսեան
Փոխատենադպիր՝ Վարդան Բախչեան
Գանձապահ՝ Սմբատ Կարախանեան
Հաշուապահ՝ Արամ Կարապետեան
Գոյքապահ՝ Մամիկոն Գրիգորեան
Ընդհ. խմբապետ՝ Մանուկ Մանուկեան
Խորհրդական՝ Սամուէլ Բալոյեան:

Տարեշրջանի ընթացքին կազմէն կը դադրին Արամ Կարապետեան, Սամուէլ Բալոյեան եւ Գրիգոր Սուքիասեան: Կազմը կ'ամբողջացուի մասնակցութեամբ Յարութիւն Յարութիւնեանի, Վաղարշակ Սարգսեանի, Նազարէթ Աբանեանի եւ Սամուէլ Նազարէթեանի:

9 Մարտ 1991ին Հայաստան կը ժամանէ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Երուանդ Տէմիրճեան, որ կ'այցելէ նորակազմ մասնաճիւղերը՝ խանդավառելով գանոնք դէպի Հ.Մ.Ը.Մ-ական աշխատանք: Տէմիրճեան կ'այցելէ նաեւ պետական բարձրաստիճան պաշտօնեաներու եւ նախարարներու:

13 Մարտ 1991ի նիստին պատասխանատու մարմինը կը նշանակէ Շրջանային Սկստակական Խորհուրդ, բաղկացած հետեւեալ անդամներէն. Ասատուր Արամեան, Վիգէն Եթերեան, Մոսիկ Պալէոզեան, Յովիկ Թանաչեան եւ Զաւէն Կարապետեան: Նոյն նիստին ընթացքին կը նշանակուին նաեւ տնտեսական յանձնախումբի անդամները՝ Սամուէլ Բալոյեան, Արամ Կարապետեան եւ Սմբատ Կարախանեան: 1էն 3 Ապրիլ 1991ին Հայաստանի Շրջանը 5 պատգամաւորներով եւ 2 հրաւիրեալներով կը մասնակցի

Հ.Մ.Ը.Մ-ի 5րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին: 1991ը կ'ըլլայ Հայաստանի Շրջանի կազմաւորման տարի: Մինչեւ 1992ի Մայիս ամիսը մասնաճիւղերու թիւը կը բարձրանայ 16ի:

Հայաստանի Պատասխանատու Մարմինը կը կազմակերպէ եւ կ'իրականացնէ հետեւեալ գլխաւոր աշխատանքները. 1992ի Ապրիլ 18ին «Սկստակութիւն Ծր»-ուան առթիւ շքերթ եւ ծառատունկ, 8 մասնաճիւղերու 350 արի-արենոյշներու մասնակցութեամբ, Ապրիլ 24ի տողանցք եւ ծաղկեպսակի զետեղում՝ Եղեռնի զոհերու յիշատակին, Մայիս 28ի առթիւ 100 արի-արենոյշներ կը տողանցեն Երեւանի հրապարակին վրայ: Ամրան ընթացքին կը կազմակերպուին չորս միջմասնաճիւղային բանակումներ:

20 Յունիս 1992ին տեղի կ'ունենայ Բ. Շրջանային Ներկայացուցչական Ժողով, ուր կը վաւերացուի Շրջանի ներքին ծրագիր - կանոնագիրը եւ կ'ընտրուի ինը անդամներէ բաղկացած Շրջանային Վարչութիւն, ատենապետ՝ Յարութիւն Յարութիւնեան, ատենադպիր՝ Մասիս Յարութիւնեան, գանձապահ՝ Վաղարշակ Սարգսեան, խորհրդականներ՝ Յարէթ Թափալցեան, Ռուբինա Տէր Պետրոսեան, Վիգէն Եթերեան, Վիգէն Նազարեան, Նազարէթ Աբանեան եւ Արամ Գրիգորեան:

5 Յունիսին 12 արի-արենոյշներէ բաղկացած պատուիրակութիւն մը կը մասնակցի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 17րդ Նաւասարդեան խաղերու առթիւ կազմակերպուած ընդհանուր տողանցքին:

11 Դեկտեմբեր 1993ին, 10 մասնաճիւղերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ-ի Գ. Ներկայացուցչական Ժողովը: Ժողովի առժամեայ դիւանի անդամներ ընտրուեցան Հայկ Պետրոսեան՝ ատենապետ եւ Արթուր Գոզդեան՝ ատենադպիր: 20 ներկայացուցիչներու լիազօրագրերու ստուգումէն ետք, մնայուն դիւանի ատենապետ ընտրուեցաւ Գուրգէն Թանգեան եւ ատենադպիրներ՝ Հայկ Պետրոսեան եւ Արթուր Գոզդեան:

Յետ Պատասխանատու Մարմնի մէկ ու կէս տարուան գործունէութեան ըստ էութեան քննարկման, ժողովը զայն նկատեց «Բաւարար»:

Որոշուեցաւ համաՀ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումի Հայաստանի մէջ կայացնելու հարցը վստահիլ յաջորդ Պատասխանատու Մարմնի ուսումնասիրութեան: Առաջարկուեցաւ յաջորդ տարեշրջանի ընթացքին զօրացնել դաստիարակչական, գաղափարական եւ կազմակերպչական աշխատանքները, փորձելով ծաւալել Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը այլ շրջաններու մէջ: Սկստակական գետնի վրայ Սփիւռքէն հրաւիրել փորձառու խմբապետներ՝ պատրաստելու համար խմբապետական քատրեր, զօրացնել վարժարաններէ ներս սկստակական գործունէութիւններ, կազմակերպել միջմասնաճիւղային մարզական մրցաշարքեր, քարոզչական աշխատանքները բազմացնել, շարունակել «Մարզաշխարհ» եւ «Հայ Արի» թերթերու հրատարակութիւնը:

Ապա տեղի ունեցաւ նոր Պատասխանատու Մարմնի ինը անդամներու ընտրութիւն: Ընտրուեցան՝ Վիգէն Եթերեան, Յարութիւն Յարութիւնեան, Արամ Գրիգորեան, Վաղարշակ Սարգսեան, Վաչէ Գրլրպոզեան, Ռոլանտ Շառոյեան, Սիրեկան Աւագեան, Արմէն Բէկթաշեան եւ Վիգէն Նազարեան:

Ապա ժողովը փակուեցաւ «Յառաջ Նահատակ» քայլերգի երգեցողութեամբ:

Ընտրեալ Կեդրոնական Վարչութիւնը իր անդրանիկ նիստին ընթացքին իր աշխատանքներուն բաժանումը կատարեց հետեւեալ ձեւով.՝ ատենապետ՝ Յարութիւն Յարութիւնեան, ատենադպիր՝ Վաղարշակ Սարգսեան, գանձապահ՝ Արմէն Բէկթաշեան, մարզական պատասխանատու՝ Արամ Գրիգորեան եւ Վաչէ Գրլրպոզեան, խորհրդականներ՝ Վիգէն Եթերեան, Սիրեկան Աւագեան, Վիգէն Նազարեան եւ Ռոլանտ Շառոյեան:

1994ի Դեկտեմբեր 28ի հրամանագրով Հա-

յաստանի Հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան կ'ամբաստանէր Հ.Յ.Դաշնակցութեան գործունէութիւնը՝ «հայրենավնաս» որակումով եւ ստեղծելով հասարակական ժխտական կարծիք հայրենիքէն ներս Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան հանդէպ, իբրեւ ուղեկից կազմակերպութիւն Հ.Յ.Դաշնակցութեան: Նախագահական այս ելոյթին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի գրասենեակին փակումը եւ արխիւներու գրաւումը պետական ապահովութեան սպասարկութեան կողմէ:

Փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարզաշխարհ» ի խմբագրատունը եւ կողոպտուեցան գրասենեակին գոյքերը:

Ց Մարտ 1995ին հրապարակային մամուլը ասուլիսի մը ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի Պատասխանատու Մարմնի ատենապետ՝ Յարութիւն Յարութիւնեան եւ պաշտօնաթերթի խմբագիր՝ Ռոլանտ Շառոյեան բացայայտեցին նախագահական ամբաստանութիւններու անհիմն ըլլալը եւ Հ.Մ.Ը.Մ.ի ոչ քաղաքական գործունէութիւնը, յայտնելով նաեւ որ Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ գործել ըստ առաջնոյն, Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարութեան 3 Դեկտեմբեր 1991ի գրանցման համաձայն- [Ծ/157.4]:

Նախորդող էջերով նկարագրուած գործունէութեան դժուարին պայմաններէն դուրս գալով, 29 Մայիս 1995ին Հայաստանի Հանրապետութեան արդարադատութեան նախարարութեան մօտ գրանցուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Հայաստանի կազմակերպութիւնը՝ Հայաստանի Ազգային Սկստակական Շարժում՝ «Հ.Ա.Ս.Կ.» Հասարակական կազմակերպութիւն նոր անվանումով:

Մայիս 1995ին, Հ.Ա.Ս.Կ.ի Պատգամաւորական ժողովը ընտրեց նոր Կեդրոնական Վարչութիւն հետեւեալ կազմով.՝

Ատենապետ՝ Յարութիւն Յարութիւնեան
Փոխ ատենապետ՝ Տիգրան Նաղդալեան



Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասնակից Հ.Ա.Ս.Կ.ի պատգամաւորներ Սերոբ Տէր Պօղոսեան, Յարութիւն Յարութիւնեան, Բագրատ Եսայեան, Իշխան Երէցեան, Աւօ Պէրպէրեան

*Ատենադպիր՝ Ռուզան Բաբայեան
Գանձապահ՝ Արմէն Բէկթաշեան*

Խորհրդականներ՝ Արման Վարդանեան, Խաչիկ Մինասեան, Արտիուշա Կարապետեան, Գուրգէն Թանգեան եւ Արթուր Գոողլեան:

Վերջինս չմասնակցելով Կեդրոնական Վարչութեան ժողովներուն, ժամանակի ընթացքին փոխարինուեցաւ Սիրեկան Աւագեանով:

Ժամանակի ընթացքին անձնական պատճառներով Կեդրոնական Վարչութեան հետ իրենց գործակցութիւնը չկրցան շարունակել Արմէն Վարդանեանը, Արտիուշա Կարապետեանը եւ Ռուզան Բաբայեանը, իսկ Խաչիկ Մինասեանը դադրեցուեցաւ կազմի անդամակցութենէն:

Այս կազմը պիտի գործէր մինչեւ 1997ի Հոկտեմբեր ամիսը:

Դպրոց Բանակումներ Եւ Սեմինարներ

7-29 Օգոստոս 1991ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնա-

կան Վարչութեան սկաուտական խմբապետական յանձնախումբի նախաձեռնութեամբ, Հայաստանի մէջ տեղի ունեցաւ նորագիր, նորընծայ եւ Բ. կարգի գիտելիքներու դպրոց-բանակում: Բանակումին մասնակցեցան Մարտունի, Սիսիան, Մասիս, Աբովեան, Երեւան, Արտաշատ, Հրազդան, Չարենցաւան, Բաղրամեան եւ Ղափան մասնաճիւղերէն 162 արի-արենոյճներ: Դպրոց-բանակումի ընթացքին մասնակիցներուն տրուեցան դաստիարակչական դասախօսութիւններ՝ միութենական, ազգային, քաղաքացիական, կրօնական, կազմակերպչական, առողջապահական, սկաուտական եւ մարզական նիւթերով: Տարիքային տարբեր դասակար-

գերու բաժնուած բանակողներուն տեսական եւ գործնական քննութիւններու աւարտին տրուեցան համապատասխան աստիճաններ: Նախապատրաստական եւ գործնական բաժիններով Օգոստոս 1991ի ամբողջ տեւողութեան վրայ տարածուող այս ծրագիրը իրականացուցին Լիբանանէն սկսած խմբապետներ՝ Րաֆֆի Կէօփօլլանեան, Արփի Էթիէմեզեան, Արաքս Գուլաճեան, Թալին Օրտօղլեան եւ Ալին Լիպարեան: Դասախօսական բաժիններուն մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Վարդան Բախչեան- [Ծ/117-118.4] :

14էն 24 Յուլիս 1992ին Արեւմտեան Միացեալ Նահանգներու սկսածական աստիճանաւորական պատուիրակութեան առաջնորդութեամբ, Հանքաւանի մէջ տեղի ունեցան նորընծայի եւ Բ. կարգի գիտելիքներու զոյգ բանակումներ: Նորընծայի բանակումին մասնակցեցան 150, իսկ Բ. կարգի բանակումին՝ 55 արի-արենոյշներ: Այս առթիւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու աստիճանաւորական պատուիրակութեան անդամներ հանդիպումներ ունեցան Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահ Բաբկէն Արարքեանի հետ, այցելեցին Եռաբլուր Վարդան Բախչեանի եւ Վիգէն Զաքարեանի շիրիմներուն: Բանակումի աւարտին, քննութիւններուն յաջողած մասնակիցներ ստացան համապատասխան վկայագրեր- [Ծ/131.6] :

3էն 23 Օգոստոս 1992ի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ զոյգ հանգրուաններով տեղի ունեցաւ Հայաստանի մասնաճիւղերէն 45 արի-արենոյշներու մասնակցութեամբ զպրոց-բանակում, Հանքաւանի մէջ: Բանակումի դաստիարակչական բաժինը ստանձնեցին Լիբանանէն եւ Սուրիայէն 7 սկսած խմբապետներ՝ Վաչէ Նաճարեան, Վազգէն Պէքէրէճեան, Հրայր Մարգարեան, Սեդա Նշանեան, Մարալ Գալայճեան եւ Րաֆֆի Փալանճեան, գլխաւորութեամբ Արփի Էթիէմեզեանի:

Դպրոց-բանակումի աւարտին եւ յետ քննութեան՝ 43 արի-արենոյշներ յաջողութեամբ ան-

ցուցին Ա. կարգի եւ խմբապետական որակաւորման քննութիւնները: Այսպիսով պատրաստուեցաւ Հայաստանի սկսածական խմբապետական ընդհանուր կազմը՝ Վարդան Բախչեան սերունդ անուանումով, որոնք պիտի գործեն զանազան մասնաճիւղերէ ներս- [Ծ/130.2-18] :

Միջմասնաճիւղային Բանակումներ

19-23 Յունիս 1991ին տեղի ունեցաւ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին միջմասնաճիւղային բանակումը Սիսիանի մէջ, մասնակցութեամբ Ղափանի, Թալինի, Կիւմրիի եւ Սիսիանի մասնաճիւղերէն 78 արի-արենոյշներու: Բանակումի ընդհանուր խմբապետն էր Ասատուր Արամեան:

Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի միջմասնաճիւղային երկրորդ բանակումը տեղի ունեցաւ 3-8 Յուլիս 1991ին Հանքաւանի մէջ, մասնակցութեամբ՝ Հրազդանի, Զարենցաւանի, Աբովեանի եւ Երեւանի մասնաճիւղերէն 92 արի-արենոյշներու, ընդհանուր պատասխանատուութեամբ՝ Մանուկ Մանուկեանի:

Միջշրջանային բանակումներ

Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի միջշրջանային առաջին բանակումը տեղի ունեցաւ 20էն 28 Յուլիս 1991ին: Հանքաւանի մօտակայ Ծաղկունեաց լեռան լանջին: Բանակումին մասնակցեցան Ամերիկայի Միացեալ Նահանգներու Շրջանի խմբապետական կազմէն ութ խմբապետներ եւ Հայաստանի մասնաճիւղերէն 60 արի-արենոյշներ: Բանակումին մասնակցեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Վարդան Բախչեան: Բանակումին նպատակն էր Հայաստանի սկսածական շարքերու ղեկավարման համար պատրաստել աստիճանաւորական կազմ: Սկսածական ղեկավարման եւ մանկավարժական նիւթերու ուսուցման կողքին տրուեցան ազգային եւ քաղաքական նիւթերով դասախօսութիւններ: Զանազան նիւթերու դասախօսներն էին Վարդան Բախչեան, Սէյրան Պաղտասարեան, Լեւոն Շիրինեան, Մանուկ Մա-

նուկեան, Մարո Քէշիշեան, Օշին Փիրումեան, Կարէն Պաղտասարեան, Էմիլ Մաղաքեան, Ալին Էքմէքեան, Վահէ Մանուէլեան, Անէթ Բժշկեան, Մարինէ Մարտոյեան, Արսինէ Յարութիւնեան եւ Միլէն Զրախչեան:

Այս առթիւ բանակումի ղեկավարներէն պատուիրակութիւն մը տեսակցութիւն մը ունեցաւ Հայաստանի մարմնամարզի նախարար Ռաֆայէլ Թորոյեանի հետ-[Ծ/124.16]:

8 էն 20 Յունիս 2001ին Բիւրականի բանակավայրին մէջ տեղի ունեցան յաջորդաբար Բ. կարգի սեմինար եւ համահայաստանեան 7րդ բանակում, մասնակցութեամբ 117 սկաուտներու: Սեմինարին պատասխանատուն էր Ռուզան Թամրազեանը, բանակավայրինը՝ Գէորգ Գասպարեան -[Ծ/230.15]:

Միջազգային Բանակումներ Հ.Ա.Ս.Կ.ի միջազգային ճանաչումէն ետք, Ա.Պ.Հ.ի երկիրներու սկաուտական կազմակերպութիւններու՝ Ռուսիոյ, Պիելոուուսիոյ, Մոլտաւիոյ, Ուքրանիոյ, Ղազախստանի, Տաճիկիստանի, Վրաստանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սփիւռքի մասնաճիւղերու խմբապետներու պատուիրակութեանց մասնակցութեամբ, 20-30 Յունիս 1996ին Հայաստանի մէջ տեղի ունեցաւ առաջին միջազգային բանակումը (Տե՛ս Դ. մաս-ի չորրորդ գլուխը):

Մարզական Գործունէութիւն Մարզական գետնի վրայ, Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Պատասխանատու Մարմինը կը հովանաւորէ եւ կը ֆինանսաւորէ կարգ մը մար-



Սկաուտական Եւրասիական տարածաշրջանի «excelscout» սեմինարի մասնակից Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտական պատուիրակուիւնը

զական խումբեր: Ֆուլթպոլի խումբը 1991ի եղանակին կը հասնի Հայաստանի ֆուլթպոլի բաժակի փոխ ախոյեանութեան:

Պասքեթպոլի փոքրերու խումբը (11 տարեկան) Հայաստանի լաւագոյն կազմը կը հանդիսանայ: Նոյնն է պարագան նետաձիգներու խումբին համար:

1992ի եղանակին, Երեւանի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթպոլի նորակազմ խումբը, ղեկավարութեամբ Խորէն Յովհաննէսեանի եւ Վիգէն Նազարեանի, կը մասնակցի Հայաստանի Ա. դասակարգի ախոյեանութեան մրցաշարքին եւ եղանակը կ'աւարտէ ախոյեանութեան տիտղոսի տիրացումով հաւասարապէս Կիւմրիի Շիրակ ակումբի խումբին հետ - [Մ131.10]:

1993ի եղանակին խումբը կը շարունակէ իր ընթացքը ղեկավարութեամբ Գագիկ Սաֆարեանի եւ մնալով ախոյեանութեան մրցաշարքի առաջին դիրքերուն վրայ: 1993ին խումբը կ'այցելէ Լիբանան:

1992-93 տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթպոլի խումբին մաս կազմած են Արթուր Աւագեան, Արմէն Գալստեան, Վարդան Մինասեան, Սարգիս Յովսէփեան, Արմէն Մարտիրոսեան, Սուրէն Զախալեան, Վարազդատ Աւետիսեան, Խորէն Յովհաննէսեան, Արսէն Աւետիսեան, Հայկ Մարգարեան, Պօղոս Գալուստեան, Սարգիս Նազարեան, Հայկ Գէորգեան, Արսէն Խանամիրեան, Յակոբ Մկրեան, Գէորգ Փիլոսեան: Խումբի վարչական կազմի անդամներն են՝ խմբապետ՝ Վիգէն Նազարեան, աւագ մարզիչ՝ Խորէն Յովհաննէսեան. մարզիչներ՝ Գէորգ Պապեան եւ Սամուէլ Ղապապօղլեան, բժիշկ՝ Մաքսիմ Պաղտասարեան եւ գանձապահ՝ Սամուէլ Յովհաննէսեան - [Մ/128.19] :

Հրապարակային եւ Պաշտօնական
Հանդիսութիւններ
«Հայ Սկաուտի Օր»ուան տօնակատարու-

թիւնները Հայաստանի մէջ սկսան 1991էն սկսեալ եւ «Վարդանանց»ի օրուան զուգարդպող թուականներուն: Այս առթիւ կազմակերպուած են սկաուտական տողանցքներ՝ Երեւանի գլխաւոր պողոտաներուն վրայ:

18 Ապրիլ 1993ին Հայաստանի մասնաճիւղերու սկաուտական կազմերը Վարդանանցի յիշատակի օրուան հետ նշուող «Հայ Սկաուտի Օր»ուան տողանցքը կատարեցին սկսելով Մատենադարանէն մինչեւ Թամանեան հրապարակ, ուր տեղի ունեցաւ ծառատնկում:

«Մարգաշխարհ» Պաշտօնաթերթ

Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանատու մարմնի նախաձեռնութեամբ 4 Սեպտեմբեր 1993էն սկսեալ լոյս տեսաւ «Մարգաշխարհ» պաշտօնաթերթը, խմբագրութեամբ՝ Ռոլանտ Շառոյեանի: 22 x 44 սմ. ծաւալով եւ 8 էջերէ բաղկացող հայրենի շաբաթաթերթը Հայաստանի մարզական կեանքը ցոլացնող եւ միջազգային մարզական լուրեր պարունակող հրատարակութիւն մըն է: Մարգաշխարհի առաքելութեան մաս կը կազմէ գլխաւորաբար Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացումը հայրենիքի մէջ, իր մարզական եւ սկաուտական բաժիններով: Թերթը իւրաքանչիւր ամիս ունի «Հայ Արի» անունով ներդիր, 32x22 սմ. ծաւալով եւ զուտ սկաուտական նիւթերու բովանդակութեամբ, ուր կան Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու գործունէութեանց մասին տեղեկութիւններ, սկաուտական գիտելիքներ եւ խաղեր:

«Մարգաշխարհ»ը կը տպուի Երեւանի «Միքայէլ Վարանդեան» հրատարակչատան մէջ: Պաշտօնաթերթը կը շարունակէ հրատարակուիլ մինչեւ 1994ի Դեկտեմբեր ամիսը՝ շուրջ 80 թիւ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**Հ.Ա.Ս.Կ.Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ**

1995 - 2003

- ՀԱՅԱՍՏԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ
ԵՒ Հ.Ա.Ս.Կ. ՎԵՐԱՆՈՒԱՆՈՒՄ
- ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՎՐԱՍՏԱՆ -ՋԱԻԱԽՔ
- ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ
- ԲԱՆԱԿԱՎԱՅՐ
- ԱՅԼ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
- ՆԻԻԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Հ.Ս.Ը.Մ.Ի
ՎԵՐԱՆՈՒԱՆՈՒՄ Հ.Ա.Ս.Կ.

Հ.Մ.Ը.Մ. ի նրդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը յատուկ օրակարգով քննեց Հայաստանի Շրջանի սկաուտական բաժնի միջազգային ծանօթացման պարագան: Ժողովը լսեց այս նպատակով Համաշխարհային Սկաուտական Շարժումի կեդրոնական Գրասենեակին հետ կապ հաստատած, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան անդամ տոքթ. Յարութիւն Գազանճեանի զեկուցումը Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական բաժնի միջազգային ծանօթացման մասին, որ կը յանգէր այն եզրակացութեան, թէ Հ.Մ.Ը.Մ.ը իր ներկայ կառոյցով չի կրնար մասկազմել սկաուտական միջազգային ընտանիքին: Ժողովը լսեց նաեւ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի Պատասխանատու Մարմնի ատենապետ Յարութիւն Յարութիւնեանի զեկուցումը եւ որոշեց յատուկ յանձնախումբի մը յանձնել այս հարցին եզրակացման բանաձեւումը:

Յետ ուսումնասիրութեան, վերոյիշեալ յանձնախումբի զեկուցաբեր Կարպիս Գապասագալեան հետեւեալ բանաձեւը ներկայացուց ժողովին.-

«Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի սկաուտական միաւորը, միջազգային սկաուտական ընտանիքին (OMMS, Organisation Mondiale du Mouvement Scout)ի անդամ դարձնելու համար ոչ մէկ ճիգ չխնայել: Կեդրոնական Վարչութիւնը այս աշխատանքներու ծիրին մէջ պարտի յառաջացնել Հայաստանէն ներկայացուցչական կազմ մը՝ ներկայացնելու Հայաստանի սկաուտական միաւորը յաջա Հ.Ս.Շ. Գրասենեակին: Այս ներկայացուցչական կազմը միութենական ներքին հասկացողութեամբ համարատու է Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան:

«Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի Սկաուտական միաւորի OMMSի մօտ արձանագրութիւնը հարկ է որ արտացոլացնէ այս իրագործումին՝ Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնութիւնը, ինչպէս՝ Հ.Ա.Ս.Կ. (Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.) ԲԱՐՁՐԱՅԻՐ - ԲԱՐՁՐԱ-

ՅՈՒՐ Armenian National Scout Movement-HOMENETMEN»:

Ժողովը միաձայնութեամբ որդեգրեց յանձնախումբին բանաձեւած առաջարկը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ
ԵՒ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

1995ի Օգոստոսին, Հ.Ա.Ս.Կ.ի 12 սկաուտներ Հոլանտայի մէջ մասնակցեցան համաշխարհային 17րդ ճէմպորիին: Այս առթիւ տեղի ունեցաւ համաշխարհային սկաուտական Ընդհանուր Ժողով, ուր որոշուեցաւ Ա.Պ.Հ.ի երկիրներու սկաուտական կազմակերպութեանց Ա. ընդհանուր բանակումը կայացնել 1996ին, Հայաստանի մէջ:

1995ի Հոկտեմբերին Համաշխարհային Սկաուտական Շարժման եւրոպական շրջանի պատասխանատու Ժան Քասինիօ Հայաստանի մէջ հանդիպումներ ունեցաւ քաղաքական թէ պետական շրջանակներու պատասխանատուներու հետ: Ենթական այցելեց արտաքին գործոց, մշակոյթի, մարմնամարզի եւ երիտասարդութեան, արդարադատութեան նախարարութիւններուն եւ Ազգային Ժողովի ներկայացուցիչներուն եւ վերադարձին նպաստաւոր զեկոյցներով ապահովութիւն յայտնեց Համաշխարհային Սկաուտական Բիւրոյին, Հայաստանի Սկաուտական Շարժման մասին իբրեւ յաջող կազմակերպութիւն:

23-30 Յունիս 1996ին Ծաղկաձորի մէջ տեղի ունեցաւ Ա.Պ.Հ.ի երկիրներու սկաուտական անդրանիկ բանակումը, մասնակցութեամբ Ռուսիոյ, Խրիմի, Տաճիկիստանի, Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի, Արցախի, Ջաւախքի Հ.Մ.Ը.Մ.ներու եւ Հայաստանէն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտական պատուիրակութիւններու: Բանակումի 23 Յունիսի պաշտօնական հանդիսութեան առթիւ Ֆրանսայի «Հայ Արի» կազմակերպութեան ներկայացուցիչ Աւետիս Տօնապետեան պաշտօնապէս Հ.Ա.Ս.-

Կ-ին փոխանցեց համաշխարհային սկաուտական բանակումներու խորհրդանիշ ջահը եւ միջազգային բանակումներուն Հայաստանը Եռագոյն դրօշակով ներկայացնելու իրաւունքը: Հանդիսութեան ներկայ գտնուեցան հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի, Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Համաշխարհային Սկաուտական Բիւրոյի ներկայացուցիչները եւ նախարար Արշակ Թանուշեան- [Ծ/169.8] : Այս առթիւ Հայաստանի Ազգային Ժողովի անդամ Արամ Մանուկեան հանրապետութեան նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հետեւեալ ուղերձը փոխանցեց ներկաներուն.-

«Սիրելի սկաուտներ, յարգարժան հիւրեր,

«Անկեղծօրէն ուրախ եմ, որ Անկախ Պետութիւնների Համագործակցութեան անդամ երկիրների սկաուտական կազմակերպութիւններն իրենց առաջին բանակումն անցկացնում են Հայաստանում: Սկաուտութիւնը, որպէս ազնի պատանեկան շարժում, Հայաստանում արմատներ է գցել մօտ ութ տասնամեակ առաջ: Ցաւօք, պոլշեիկեան աղետը ոչ միայն տապալեց Հայոց անկախ պետականութիւնը, այլեւ կասեցրեց հասարակական եւ քաղաքացիական ակտիւութեան ցանկացած դրսեւորում, որը չէր տեղաւորում կոմունիստների ամբողջատիրական ծրագրերի մէջ: Սկաուտական գործի մի շարք կազմակերպիչներ, ինչպէս Վահան Չերազը, դատապարտուեցին գնդակահարութեան: Եւ, այդուհանդերձ, սկաուտութիւնն արմատախիլ չարուեց հայկական միջավայրից, այլ տեղափոխուեց աշխարհասփիւռ հայ գաղութներ, ուր գոյատեւեց խորհրդային կարգերի եօթ տասնամեակների ընթացքում: Խորհրդանշական է, որ Ֆրանսիայի Հայ Արիների միութիւնը պետութիւն ներկայացնելու հնարաւորութիւնից զրկուած լինելով բացառութեան կարգով արժանացաւ Համաշխարհային Սկաուտական Կազմակերպութեան լիիրաւ անդամի կարգավիճակին:

«1991 թուականին Հայաստանը վերականգնեց իր անկախութիւնն ու վտարանդի սկաուտութիւնը վերադարձաւ հայրենիք: Այսօր արդէն Հայաստանի Ազգային Սկաուտական Ծարժումը հայկական ամենամերկայանալի պատանեկան կազմակերպութիւններից մէկն է եւ այն, որ Հայաստանը արժանացել է Ա.Պ.Հ. առաջին բանակումն ընդունելու պատուին, միջազգային սկաուտական շարժման կողմից գնահատանքի լուրջ վկայութիւն է: Հաւատացած եմ, որ շատ շուտով Հ.Ա.Ս.Կ.ը կ'ընդունի էստաւտը Հայ Արիներից, նաեւ Համաշխարհային կազմակերպութիւնում, որպէս ազատ ու ինքնիշխան Հայաստան պետութեան մշտական ներկայացուցիչ:

«Այսօր հայ սկաուտները հիւրընկալում են իրենց քոյրերին եւ եղբայրներին ԱՊՀ տարբեր երկրներից, ինչպէս նաեւ Ֆրանսիայի եւ Լիբանանի հայկական գաղութներից:

«Ա.Պ.Հ. առաջին սկաուտական բանակումի առթիւ ողջունում եմ բոլոր մասնակիցներին եւ մաղթում, որ Հայաստանում անցկացուած այս օրերը իսկական տօն դառնան բոլորի համար»:

Լուրի Ֆիոլէտով տարածքին վրայ, 15-24 Օգոստոս 1997ին, Հ.Ա.Ս.Կ-ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ Համահայաստանեան տարեկան բանակումը մասնակցութեամբ 10 մասնաճիւղերու 160 սկաուտներուն: Բանակումը վարեց ընդհանուր խմբապետ Աւետիս Պէրպէրեան, օժանդակութեամբ Լիլիթ Վարդանեանի, Էլէն Պետրոսեանի եւ Արտաշէս Յակոբեանի: Բանակումի ընթացքին եղան դասախօսական ելոյթներ, իսկ վերջին օրը՝ երզման արարողութիւն:

18 եւ 19 Հոկտեմբեր 1997ին տեղի ունեցաւ Հ.Ա.Ս.Կ-ի Պատգամաւորական Ժողով (համաժողով), ներկայութեամբ Երեւանի, Մասիսի,

Աբովեանի, Վանաձորի, Չարենցաւանի, Հրազդանի, Վետիի եւ Սեւանի մասնաճիւղերու պատգամաւորներուն: Կը բացակայէին էջմիածնի եւ Արմաւիրի պատգամաւորները, իսկ Սիսիանի պատգամաւորները ներկայ եղան 19 Հոկտեմբերի նիստէն սկսեալ:

Պատգամաւորական ժողովը վարեցին նախագահներ՝ Սերոբ Տէր Պօղոսեան եւ Աւօ Պէրպէրեան, քարտուղարուհիներ՝ Լիլիթ Վարդանեան, Անահիտ Յարութիւնեան եւ Մարինէ Այվազեան: Ժողովի կողմէ ընտրուեցան հետեւեալ յանձնախումբերը.-

- Արխիւլային եւ հաշուեքննիչ՝ մասնակցութեամբ Բագրատ Եսայեանի, Սիսակ Սիմոնեանի եւ Յարութիւն Պետրոսեանի:

- Բանաձեւի՝ մասնակցութեամբ էլէն Պետրոսեանի, Նարինէ Թովմասեանի, Հրաչ Շմաւոնեանի եւ Հրանդ Այվազեանի:

- Քուէախոյզ՝ մասնակցութեամբ Արմէն Յովհաննէսեանի եւ Վահագն Միրումեանի:

Ժողովի աշխատանքներուն մաս կազմեցին Հ.Ա.Ս.Կ.Ի կանոնադրութեան յօդուածներու բարեփոխում, Հ.Ա.Ս.Կ.Ի Կեդրոնական Վարչութեան գործունէութեան տեղեկագրի ընթերցում եւ քննութիւն, 1997-98 տարեշրջանի գործունէութեան եւ նախահաշիւ պիւտճէի ծրագիրներու առաջարկներ, Կեդրոնական եւ վերստուգիչ յանձնախումբի ընտրութիւն:

Արխիւլային, հաշուեքննիչ եւ բանաձեւի յանձնախումբերու ղեկուցումներու ունկնդրութենէն ետք ժողովը ընտրեց նոր Կեդրոնական Վարչութիւն որուն մաս կը կազմեն Յարութիւն Յարութիւնեան, Գուրգէն Թանգեան, Սիրեկան Այվազեան, Սերոբ Տէր Պօղոսեան, Բագրատ Եսայեան, Սիսակ Սիմոնեան, Աւետիս Պէրպէրեան, Յովիկ Թադեւոսեան եւ էլէն Պետրոսեան:

Վերստուգիչ յանձնախումբի անդամներն են՝ Սասուն Ներսէսեան, Արմէն Աղայեան եւ Հրաչ Շմաւոնեան: Տարեշրջանի նախահաշիւի ընդհանուր գումարն է 6.000.000 դրամ:

Տարեշրջանի ընթացքին կարգ մը վարչական պաշտօններու փոփոխութիւններէ ետք՝ վարչութեան կազմը կը ներկայանայ հետեւեալ ձեւով.-

Ատենապետ՝ Յարութիւն Յարութիւնեան
Փոխ ատենապետ՝ Սերոբ Տէր Պօղոսեան
Ատենադպիր՝ էլէն Տէր Պետրոսեան
Գանձապահ՝ Բագրատ Եսայեան
Սկաուտ պատասխանատու՝ Աւետիս Պէրպէրեան

Կոտայքի մարզի պատասխանատու՝ Սիրեկան Աւագեան

Լոռիի մարզի պատասխանատու՝ Յովիկ Թադեւոսեան

Արարատեան դաշտի պատասխանատու՝ Սիսակ Սիմոնեան

Սիւնիքի մարզի պատասխանատու՝ Գուրգէն Թանգեան:

Մինչեւ 15 Նոյեմբեր 1998 այս կազմը կ'իրականացնէ հետեւեալ աշխատանքները.- աստիճանաւորներու եւ վարչականներու սեմինարներ, համաՀ.Մ.Ը.Մ.ական Զ. Ընդհանուր Բանակումի կազմակերպութիւն, սկաուտական Եւրասիա տարածաշրջանի հիմնադիր համագումար եւ սկաուտական համագումար:

18 Ապրիլ 1999ին Կեդրոնական Վարչութիւնը կը կազմակերպէ «Հայ Սկաուտի Օր»ուան նշում, 6-16 Օգոստոսին համահայաստանեան Զ. սկաուտական ընդհանուր բանակում, Ծաղկածորի մէջ, ուր տեղի ունեցաւ աստիճաններու տուչութիւն, իսկ 15-22 Օգոստոսին՝ համահայաստանեան եւ գայլիկական բանակում: 1 եւ 2 Մայիս 1999ին Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի հանդիսութեան ծիրին մէջ տեղի ունեցաւ 120 եկեղեցիներու եւ վանքերու մաքրման աշխատանք, որուն մասնակցեցան 12.000 դպրոցականներ եւ երիտասարդներ, որոնց կարգին Հ.Ա.Ս.Կ.Ի բոլոր մասնաճիւղերու սկաուտական կազմերը: Այս ծրագիրը հովանաւորեց Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան: Այս առթիւ հրատարակուեցան սկաուտական երգարան, քարտէս,

աղօթագիրք եւ բաժնուեցան անմիջական օգնութեան լուրջով շապիկներ:

Հ.Ա.Ս.Կ.ի «Հայ Արի» լրատունն այս տարեշրջանին լոյս կը տեսնէ երկու թիւերով: 31 Մարտէն 4 Ապրիլ 1999-ին Հ.Ա.Ս.Կ.ի 5 պատգամաւորներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի եօթներորդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին:

7էն 15 Օգոստոս 1999ին Ծաղկաձորի մէջ տեղի ունեցաւ Հ.Ա.Ս.Կ.ի միջմասնաճիւղային տարեկան 5րդ բանակումը, ընդհ. խմբապետութեամբ՝ Արտաշէս Յակոբեանի: Յիշատակելի է, որ այս բանակումին կը մասնակցէր Վահան Զերագի ծոռը -[Ծ/209.16]:

Այս կազմի գլխաւոր իրականացումներէն պիտի ըլլային Զիլիի մէջ կայացած համաշխարհային սկաուտական բամակումին Հ.Ա.Ս.Կ.ի 3 սկաուտներու մասնակցութիւնը, 5-11 Սեպտեմբեր 1999ին Եալթայի մէջ կայացած Ա.Պ.Հ. (Անկախ Պետութեանց Հասարակապետութիւն) երկիրներու սկաուտական սեմինարին Հ.Ա.Ս.Կ.ի 8 սկաուտներու մասնակցութիւնը եւ «EXCEL SCOUT» կարգի տիրացումը, Հ.Ա.Ս.Կ.ի Համաշխարհային Սկաուտական Շարժման լիիրաւանդամի արտօնագրի տիրացումը 1999ի Յունիսին: Կազմակերպչական գետնի վրայ Կեդրոնական Վարչութիւնը լուծուած յայտարարեց Հրազդանի եւ Զարենցաւանի միաւորները, համաձայն նախորդ համաժողովի որոշման:

8 Նոյեմբեր 1999ին Հ.Ա.Ս.Կ.ի համաժողովը երկամեայ գործունէութեան համար կ'ընտրէ, նոր Կեդրոնական Վարչութիւն՝ բաղկացած հետեւեալ անդամներէն.-

Ատենապետ՝ Բագրատ Եսայեան, նաեւ գանձապահ 27 նոյեմբերէն սկսեալ

Ատենադպիր՝ Լիլիթ Վարդանեան, գանձապահ՝ Աւետիս Պէրպէրեան փոխարինուած Եուրա Նաւոյեանով, գրասենեակի տնօրէն եւ սկաուտական ընդհ. խմբապետ՝ Հրաչ Շմալոնեան, Սիւնիքի մարզի պատասխանատու՝ Գուրգէն Թանգեան, Լոռիի մարզի պատասխա-

նատու՝ Հրանդ Այվազեան, Կոտայքի մարզի պատասխանատու՝ Սիրեկան Աւագեան, Արարատեան դաշտի պատասխանատու՝ Մարտին Դարաբեան, փոխարինուած Արմէն Բաղիրեանով, ծրագրերու պատասխանատու՝ Արմէն Աղայեան, փոխարինուած Սերոբ Տէր Պօղոսեանով:

Այս կազմին կ'օժանդակեն հետեւեալ յանձնախումբերը իրենց պատասխանատուներով.-

Համացանցի՝ Յարութիւն Յարութիւնեան, դաստիարակչական-հրատարակչական՝ Հրաչ Շմալոնեան, լրատուական-քարոզչական՝ Լիլիթ Վարդանեան, կանոնադրային՝ Բագրատ Եսայեան:

Կազմակերպչական գետնի վրայ արձանագրութեան արժանի են հետեւեալ իրականացումները.- 2000ի Փետրուարին եռօրեայ դպրոց-բանակում, որմէ Ա. կարգի քննութեանց յաջողած 16 սկաուտներ ստացան համապատասխան վկայական, չորս հանգրուաններով եւ մասնաճիւղերու զանազան խմբակցութիւններով: Բ. կարգի սեմինարներ, որմէ 66 սկաուտներ ստացան վկայականներ: Քատրերու այս կազմով, ամրան կարելի կ'ըլլայ իրագործել մասնաճիւղերու որակաւոր բանակումներ եւ մինչեւ Հոկտեմբեր ամիսը Հ.Ա.Ս.Կ.ի շարքերուն մէջ կը գործեն 9 խմբապետներ, 8 փոխ խմբապետներ 10 վարիչ առաջնորդներ, 25 առաջնորդներ եւ 21 փոխառաջնորդներ:

Նոյն տարեշրջանին, ընթացիկ գործունէութեան մաս կազմած են Ապրիլ 24ին Եղեռնի համալիրի այցելութիւն, Մայիս 28ին արշաւ դէպի Սարգարապատ, Յունիս 1ին Վարդան Բախշեանի ծննդեան 35ամեակի յիշատակում, Հոկտեմբեր 3ին Մուղնիի եկեղեցւոյ օժման արարողութեան ներկայութիւն:

12 Նոյեմբեր 2000ին, Հ.Ա.Ս.Կ.ի համաժողովը մասնակի ընտրութեամբ կը վերակազմէ Կեդրոնական Վարչութիւն՝ հետեւեալ ձեւով.- ատենապետ՝ Բագրատ Եսայեան, ատենադպիր՝ Լիլիթ Վարդանեան, գանձապահ՝ Յարութիւն Յարութիւնեան, ընդհանուր խմբապետ եւ գրասեն-

եակի տնօրէն՝ Հրաչ Շմալոնեան, Լոուի մարզի պատասխանատու՝ Հրանդ Այվազեան, Կոտայքի մարզի պատասխանատու՝ Ռաֆիկ Կուրդիեան, Սիւնիքի մարզի պատասխանատու՝ Գուրգէն Թանգեան, որուն հրաժարման պատճառով կազմը կ'ամբողջացուի Եուրա Նաւոյեանով՝ ծրագիրներու պատասխանատու եւ Արմէն Բաղիրեանով՝ Արարատի մարզի պատասխանատու-[Ծ/222.24]:

Այս տարեշրջանին սկստական աշխատանքները զգալի դանդաղութիւն կ'արձանագրեն, անդամատրերու դասաւորումը կը կաղայ եւ նիւթական միջոցներու պակասը կը կասեցնէ Կեդրոնական Վարչութեան կողմէ գործադրելի կարեւոր աշխատանքներ: Այսուհանդերձ, Կեդրոնական Վարչութիւնը մեծ կարեւորութեամբ կը հետեւի Բիւրականի բանակավայրի շինարարական աշխատանքներուն, համա Հ.Մ.Ը.Մ.-ական 7րդ ընդհանուր բանակումի կայացման ժամկէտին պատրաստ ունենալու համար բանակավայրը:

20-22 Յունուար 2001ին Կեդրոնական Վարչութիւնը կը կազմակերպէ համահայաստանեան գայլիկ պատասխանատուներու սեմինար, կազմելու համար գայլիկական պատասխանատուներու ցանց:

2001ի Ապրիլ ամսուան ընթացքին կը մշակուի Հ.Ա.Ս.Կ.Ի սկստական ներքին կանոնագիրը եւ Կեդրոնական Վարչութիւնը 29 Ապրիլին կը նշանակէ Հ.Ա.Ս.Կ.Ի Խմբապետական Խորհուրդ հետեւեալ կազմով.

- Ընդհանուր խմբապետ՝ Հրաչ Շմալոնեան
- Ընդհանուր փոխ խմբապետ՝ Գէորգ Գասպարեան
- Ընդհանուր փոխ խմբապետուհի՝ Ռուզան Թամրազեան
- Հայաստանի Աքելլա՝ Մարինէ Այվազեան
- Ծրագրերու պատասխանատու՝ Իդա Թովմասեան:

Այս կազմը կ'իրականացնէ վարչական, սկստական եւ գայլիկական բազմաթիւ սեմինարներ, դպրոց-բանակումներ, որոնցմէ կը գո-

յանայ Ա. կարգի աստիճանաւորական կարեւոր ցանց:

Խմբապետական Խորհուրդի աշխատանքի ժամանակաշրջանը կ'երկարի մինչեւ 2003 թուական:

1 Սեպտեմբեր 2001ին Հ.Ա.Ս.Կ.Ի Երեւանի Կեդրոնին մէջ տեղի կ'ունենայ գայլիկ պատասխանատուներու սեմինար: Սեմինարը կը վարէ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ Մարո Քէչիչեան:

2001ին միջազգային World Scout Parliamentary Unionի համագումարին կը մասնակցին Հայաստանի Ազգային Ժողովի անդամներ Վահան Յովհաննէսեան եւ Շաւարշ Քոչարեան: Վահան Յովհաննէսեան կ'ընտրուի այս կազմակերպութեան գործադիր մարմնի անդամ:

14 Ապրիլ 2002ին Հ.Ա.Ս.Կ.Ի համաժողովի կողմէ ընտրուած Կեդրոնական Վարչութեան կազմը իր աշխատանքները կը բաժնէ հետեւեալ ձեւով.-

- Ատենապետ՝ Բագրատ Եսայեան
- Փոխատենապետ՝ Սերոբ Տէր Պողոսեան
- Ատենադպիր՝ Ռուզան Թամրազեան
- Գանձապահ՝ Յարութիւն Յարութիւնեան
- Միջազգային կապերու պատասխանատու՝ Մատլէն Թաչճեան
- Գրասենեակի տնօրէն՝ Լիլիթ Վարդանեան
- Հայաստանի ընդհանուր խմբապետ՝ Հրաչ Շմալոնեան
- Լոուի մարզի եւ ծրագիրներու պատասխանատու՝ Գուրգէն Թանգեան
- Ջաւախքի պատասխանատու՝ Արամ Ֆրանկեան:
- Կազմակերպչական ընթացիկ աշխատանքներու կողքին, այս կազմին գլխաւոր աշխատանքներէն պիտի ըլլար Բիւրականի բանակավայրի շինարարական աշխատանքներուն ամբողջացումը:

14էն 16 Մարտ 2003ին Ծաղկաձորի մէջ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի եւօրեայ աստի-

ճանաւորական բանակում, մասնակցութեամբ 43 աստիճանաւորներու:

ՎՐԱՍՏԱՆ

1996ի վերջաւորութեան եւ Հ.Ա.Ս.Կ.ի ղեկավարութեան քաջալերանքով, Թիֆլիսի թիւ 104 հայկական վարժարանին մէջ կը սկսի սկաուտական գործունէութիւն, 50 նորընծայ սկաուտներով եւ Մանանա Գրիգորեանի գլխաւորութեամբ: Անոնք կը մասնակցին Չարենցաւանի մասնաճիւղի տարեկան 11օրեայ բանակումին, Սեւանայ լիճի ափին, ծանօթանալով թեքնիք գիտութեան:

21 Սեպտեմբեր 2001ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աստիճանաւորական պատուիրակութիւն մը այցելեց Ջաւախքի զանազան քաղաքները ուր Հ.Մ.Ը.Մ.ի միաւորներ գոյութիւն ունէին: Այցելութեան նպատակն էր Բ. կարգի սեմինարը: Պատուիրակութեան անդամները բաժնուեցան հետեւեալ ձեւով՝ Լենա Միրզոյեան եւ Արթուր Խաչատրեան (Բողոզանովկա), Աշխէն Առաքելեան եւ Արամ Ֆրանկեան (Ախալքալաք), Լիլիթ Վարդանեան, Յարութիւն Վարդանեան եւ Արթուր Ռաւոյեան (Ախալքալաք) եւ նոյն օրը Նորընծայ կարգի գործունէութեամբ աւարտեցին աշխատանքները: 22 Սեպտեմբերին երեք քաղաքներու պատասխանատուները հաւաքուեցան Ախալքալաքի մէջ, ուր տեղի ունեցաւ Բ. կարգի սեմինար: 23 Սեպտեմբերին սեմինարին մասնակիցները եւ նորագիր սկաուտներու խումբը այցելեց Ախալքալաքի եկեղեցին, ապա կեդրոն, ուր տեղի ունեցան աստիճանաւորներու քննութիւն եւ բաժնուեցան նորընծայի եւ Բ. կարգի վկայագրերը: Այս այցելութիւնը մեծապէս նպաստեց Հ.Մ.Ը.Մ.ի ծանօթացման Ջաւախքի մէջ:

14 Մարտ 2003ին Ջաւախքի Հ.Մ.Ը.Մ.ի 4 աստիճանաւորներ՝ Աշոտ Պապոյեան, Արկաղի Համազարեան, Գուրգէն Շիրինեան եւ Գէորգ Պօղոսեան մասնակցեցան Ծաղկաձորի մէջ

Հ.Ա.Ս.Կ.ի աստիճանաւորական բանակումին, որուն աւարտին ստացան վարիչ առաջնորդի աստիճան:

Յ.Ա.Ս.Կ.ի նոր կեդրոնատեղի

1998ի ընթացքին կեդրոնական Վարչութեան ճիգերուն շնորհիւ Հ.Ա.Ս.Կ.ը կը տիրանայ նոր կեդրոնատեղիի մը Երեւանի Ալէք Մանուկեան պողոտայի շէնքին գետնայարկը: 120 քառ.մեթր տարածութիւն ունեցող այս կեդրոնատեղիի գնման կ'օժանդակեն Հ.Ս.Շ. Բիւրոն 15.000 տոլարով եւ Հ.Մ.Ը.Մ. Գանատայի Շրջանային Վարչութիւնը՝ 10.000 տոլարով: Կեդրոնատեղիի նորոգութիւնները յառաջ կը տարուին անյապաղ, Հ.Ա.Ս.Կ.ի գործունէութիւնը տեղաւորելով Երեւանի կեդրոնական շրջանին մէջ: Սակայն շինարարական աշխատանքներու աւարտը կ'ուշանայ նիւթականի սղութեան պատճառով:

Բանակավայր

Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնական Վարչութեան հետեւողական ճիգերուն իբրեւ արդիւնք, 5 Դեկտեմբեր 2001 թուակիր հրամանագրով, Հայաստանի կառավարութիւնը Հ.Ա.Ս.Կ.ին կը նուիրէ Բիւրականի Հանգստեան Տան շուրջ 15.000 քառակուսի մեթր տարածութեամբ հողաշերտը:

Բիւրականի բանակավայրի շինարարական աշխատանքներուն համար կը տրամադրուի Հ.Մ.Ը.Մ.ի 80ամեակին առթիւ կեդրոնական Վարչութեան նախատեսուած ծրագիրներու կարգին հանգանակուած 80 հազար ամերիկեան տոլար նուիրահաւաքի վերջին բաժինը՝ շուրջ 35.000 ամերիկեան տոլար: Այս գումարին վրայ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութիւնը իր գանձէն կը տրամադրէ շուրջ 20.000 ամերիկեան տոլար, ինչպէս նաեւ Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնական Վարչութիւնը իր գանձէն տրամադրելի եւ Հայաստանի նուիրատուներէ ապահովուած գումարներ:

Մնայունն եւ սեփական Բիւրական բանակավայրի աշխատանքները կը տարուին առաւելագոյն արագութեամբ, բանակավայրը պատրաստ ունենալու համար 2002ի ամրան նախատեսուած համաՀ.Մ.Ը.Մ.ական 7րդ ընդհանուր բանակումին: Ծրագիրը կ'իրականանայ ըստ նախատեսութեան: Ծախսերու ընդհանուր գումարը կը բարձրանայ շուրջ 57.000 ամերիկեան տոլարի:

Այլ Գործունէութիւններ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հրապարակային եւ պաշտօնական գործունէութիւններէն եղած են հետեւեալները.-

- «Հայ Սկսուած Օր»ուան տօնակատարութիւն

- 18 Ապրիլ 1992ին, Վարդանանցի տօնին օրը, առաջին անգամ ըլլալով, Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու սկսուած կազմերը տօնեցին «Հայ Սկսուած Օր» ընդհանուր տողանցքով մը, որ երկարեցաւ Օփերայի հրապարակէն մինչեւ Թամանեանի հրապարակ, ուր եւ տեղի ունեցաւ ծառատնկում: Այս կարգի տողանցքներ կատարուած են յաճախակի, յաջորդ տարիներու ընթացքին:

- Պարգեւատրում Գարեգին Ա. Կաթողիկոսին 1996ին Հ.Ա.Ս.Կ.ի ղեկավարութենէն պատուիրակութիւն մը, ընկերակցութեամբ Ազգային Ժողովի անդամներ՝ Արամ Մանուկեանի եւ Արչակ Մանուկեանի, այցելեց Էջմիածին՝ վանք Գարեգին Ա. Կաթողիկոսին յանձնելու համար Հ.Ա.Ս.Կ.ի յուշամետալը՝ Վեհափառ Հայրապետը հուշակելով 1996ի Տարուան Մարզը:

«Ոսկի Շուշանաճաղիկ»ով պարգեւատրուած են նաեւ Հայաստանի մշակոյթի, մարմնամարզի եւ երիտասարդութեան հարցերու փոխ նախարար Արամ Մանուկեանը՝ 1997ին, Հանրապետութեան նախագահի խորհրդական Վահան Յովհաննէսեանը՝ 1998ին, Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանը՝ 1999ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ Ժիրայր Սարգիսեանը

եւ Գօգօ Պալեանը՝ 2002ին - [Ծ/243.25]:

Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութիւնը սիրալիր կապեր կը հաստատէ Հայաստանի երիտասարդական ոչ սկսուած կազմակերպութիւններու հետ: Յատուկ կարեւորութիւն կը տրուի Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծանօթացման եւ անոր խորհուրդներուն եւ արարողութիւններու վարժեցումին:

Հ.Ա.Ս.Կ.ի հիմնադրութեան 80ամեակի տօնակատարութիւն

20 Յուլիս 1998ին, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ պաշտօնական տողանցք՝ մասնակցութեամբ ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական վեցերորդ ընդհանուր բանակումին մասնակցող սկսուածներուն: Տողանցքը հովանաւորեց Երեւանի քաղաքապետ՝ Սուրէն Աբրահամեան. տողանցքին աւարտին խօսքեր արտասանեցին նախարար Ռոլանտ Շառոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Կարօ Թիւթիւնճեան եւ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան: Տողանցքի աւարտէն ետք տողանցող սկսուածները մեկնեցան Օփերայի շէնք, ուր հովանաւորութեամբ հանրապետութեան նախագահ Ռոպէրթ Քոչարեանի, տեղի ունեցաւ 80ամեակի տօնակատարութեան փառաշուք հանդէս: Այս առթիւ խօսք առին Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ Յարութիւն Յարութիւնեան, նախագահի խորհրդական՝ Վահան Յովհաննէսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ տղթ. Միսաք Արզումանեան, Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Ներսէս Արք. Պողոսեան: Պաշտօնական բաժինին հետեւեցաւ զեղարուեստական յայտագիր՝ ուրախ եւ խանդավառ ելոյթներով [Ծ/193-194.4-13]:

Հրատարակութիւններ «Հայ Արի» Լրատու

Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ խմբագրութեամբ Լիլիթ Վարդանեանի, 1999ի Փետրուարին լոյս կը տես-

նէ «Հայ Արի» լրատուի Ա. թիւը: Չորս էջերէ բաղկացող այս լրատուն կը ներկայացնէ Հ.Ա.Ս.Կ.ի գործունէութիւնը Հայաստանի մէջ, սկսած սկստական եւ կազմակերպչական բաժիններով:

1999ին Նարինէ Թովմասեանի խմբագրութեամբ կը սկսի լոյս տեսնել NEWS LETTER լրատուն:

2002ին «Ես Գայլիկ Եմ» գայլիկական գրքոյկը կը հրատարակուի. Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ, մեկենասութեամբ Թորոս Մանկասարեանի:

2003ին կը հրատարակուի «Ես Սկսուտ Եմ» սկսուտական Նորընծայ, Բ. եւ Ա. կարգի գիտելիքներու գիրքը:

Նիւթական գործունէութիւն
1999-2000 քառամեակի ընթացքին Հ.Ա.Ս.Կ.ի նիւթական գործունէութեան մուտքերու ընդհանուր գումարն է 101.039 ամերիկեան տոլար, ելքերը՝ 115.024 ամերիկեան տոլար:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ

- ՆԵՐԱԾԱԿԱՆ
- ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԵՒ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ
- Հ.Ս.Շ.Ի ԵԻՐՈԱՍԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
- ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆՑ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
- Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ Հ.Ս.Շ.ԻՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ծանօթ է, որ Համաշխարհային Սկաուտական Շարժումին կը մասնակցին աշխարհի տարբեր երկիրներու սկաուտական պաշտօնական կազմակերպութիւնները: Այս սկզբունքէն մեկնելով, հակառակ հիմնադրութեան օրերէն սկսեալ բազմաթիւ փորձերու, Հ.Մ.Ը.Մ.ին մերժուեցաւ մաս կազմել Համաշխարհային Սկաուտական Շարժումին, նախ՝ որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. պետականօրէն ներկայացուցչական համգամանք մը չէր ներկայացներ, ապա՝ այն պատճառով որ նոյն յարկին տակ կը գործէին մարզական եւ սկաուտական բաժինները:

1928ին, Փարիզի Հայ Արիներու կազմակերպութեան Հ.Մ.Ը.Մ.էն բաժանումով, նկատի ու-

նենալով որ հայ անկախ պետականութիւն գոյութիւն չունէր, Հայ Արիներուն արտօնուեցաւ մաս կազմել Համաշխարհային Սկաուտական Շարժումին, իբրեւ հայ պետական սկաուտական կազմակերպութեան շարունակութիւն, 1918ի Հայաստանի Հանրապետութեան Եռագոյն (կարմիր, կապոյտ, նարնջագոյն) դրօշակի խորհրդանիշով եւ ARMENIA անունով:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք եւ 1991ին Հայաստանի անկախ պետութիւն հռչակումով, նոր վիճակ մը կը ստեղծուէր սկաուտական ազգային կազմակերպութեան համար: Հ.Մ.Ը.Մ.ը 1988էն սկսեալ կը գործէր արդէն հայրենիքէն ներս եւ պաշտօնապէս գրանցուած էր 29 Մայիս 1995ին, արդարադատութեան նախարարութեան կողմէ: Արդ ան



Համաշխարհային Սկաուտական Ծարժումի Եւրոպական 6րդ տարածաշրջանի հիմնադիր ժողովի մասնակիցներ, Ժընեւ 1998:



Եւրոսիական շրջանի համաշխարհային համագումար, Հայաստան, 1998

կրնար, իբրեւ Հայաստանը ներկայացնող պետական կազմակերպութիւն, մաս կազմել Հ.Ս.Շ.ին: Այս իրողութիւններու լոյսին տակ, Հ.Ս.Ը.Մ.ի Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովը քուէարկեց հետեւեալ որոշումը. «Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտական միաւորը միջազգային սկաուտական ընտանիքին անդամ դարձնելու համար ոչ մէկ ճիգ չխնայել: Կեդրոնական Վարչութիւնը այս աշխատանքներու ծիրին մէջ պարտի յառաջացնել Հայաստանէն ներկայացուցչական կազմ մը՝ ներկայացնելու Հայաստանի սկաուտական միաւորը յաջս միջազգային սկաուտական գրասենեակին: Այս ներկայացուցչական կազմը միութենական ներքին հասկացողութեամբ համարատու է Հ.Ս.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան: Հ.Ս.Ը.Մ.ի Հայաստանի սկաուտական միաւորին OMMSի մօտ ար-

ձանագրութեան անունը հարկ է որ արտացոլացնէ այս իրագործումին՝ Հ.Ս.Ը.Մ.ի նախաձեռնութիւնը, ինչպէս Հ.Ա.Ս.Կ.(Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.) բարձրացիր-բարձրացո՛ւր. Armenian National Scouts Movement - Homenetmen»:

Կը մնար այն արգելքը, որ Հայաստանի մէջ կը գործէր Հայկազունիներ արտօնեալ սկաուտական կազմակերպութիւնը: Այս վերջին արգելքն ալ վերցուեցաւ, երբ Հ.Ս.Շ. Բիւրոյի ներկայացուցիչները, հիմնուելով իրենց կատարած քննութեանց վրայ, Հ.Ս.Ը.Մ.ի կազմակերպութիւնը աւելի հարազատ գտան իբրեւ սկաուտական սկզբունքները ճշգրտօրէն կիրարկող կազմակերպութիւն: Այսպէսով Հայաստանի Հ.Ս.Ը.Մ.ի սկաուտական կազմակերպութեան համար կարելի կը դառնար դիմել միջազգային գրասենեակին՝ մաս կազմելու համար Հ.Ս.Շ արժուածին:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ ԵՒ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

1995ին, Հոլանտայի մէջ Հ.Ա.Ս.Կ.Ի 12 սկաուտներէ բաղկացած պատուիրակութիւն մը մասնակցեցաւ Համաշխարհային 17րդ Ճամպորիին: Այս առթիւ գումարուեցաւ Հ.Ս.Շ.Ի ընդհանուր ժողով, ուր որոշուեցաւ Ա.Պ.Հ.Ի երկիրներու սկաուտական կազմակերպութիւններու անդրանիկ ընդհանուր բանակումը կայացնել 1996ին, Հայաստանի մէջ:

1997ի Մարտ ամսուան ընթացքին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Ա.Պ.Հ. երկիրներու՝ Վրաստանի, Մոլտավիոյ, Տաճիկիստանի, Պիելոուուսիոյ սկաուտական կազմակերպութիւններու, Հ.Ա.Ս.Կ.Ի եւ Հ.Ս.Շ. Բիւրոյի ներկայացուցիչներու համաժողով, ուր որոշուեցաւ ստեղծել սկաուտութեան «Եւրասիական» նոր տարածաշրջան:

1999ին, Զիլիի մէջ միջազգային 19րդ ճէմպորիին Հ.Ա.Ս.Կ.Ի կողմէ մասնակցեցան Արմէն Յովհաննէսեան, Գայիանէ Նաւոյեան եւ Արէն Մանուկեան:

Նոյն տարուան Սեպտեմբերի 5էն 11, Գուրգուֆի (Խրիմ) մէջ կայացող, քաղաքական, ընկերային, կենսոլորտային եւ այլ դժուարին պարագաներուն օգտակար լուծումներ հնարելու մասնագիտական Ա.Պ.Հ.Ի սկաուտական կազմակերպութեանց յատուկ սեմինարին՝ «EXCELSOUT 99» մասնակցեցան ութ սկաուտներ՝ Լիլիթ Վարդանեան, Նոյ Էլբակեան, Կարօ Ասատրեան, Լուսինէ Կիւրդիւնեան, Սիրանոյշ Սահակեան, Աշխէն Առաքելեան, Արթիւր Ռաւոյեան, Ալիկ Երէցեան եւ Զինաւոր Մեղրեան: Ենթակաները ստացան համապատասխան պէճեր եւ վկայականներ: Հ.Ա.Ս.Կ.Ի ներկայացուցիչները մասնակցած են նաեւ «EXCELSOUT 00» սեմինարներուն:

28 Դեկտեմբեր 2002էն 7 Յունուար 2003ին Թայլանտի մէջ համաշխարհային 20րդ ճէմպորիին մասնակցեցան Հ.Ա.Ս.Կ.Ի հետեւեալ աստիճանաւորները՝ Յարութ Նասոյեան, Լիլիթ Զաքարեան, Սոնա Գրիգորեան, Գայիանէ Կաբալեան, Ժիրայր Դուրգարեան, Արա Յակոբ-

եան, Տիգրան Սարգիսեան եւ Աշխէն Առաքելեան - [Ծ/247.7]:

Հ.Ս.Շ.Ի ԵՒՐՈԱՄԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

Մարտ 1997ին, Ծաղկաձորի մէջ, Հ.Ս. Շարժումի Ա.Պ.Հ. գրասենեակի փոխ նախագահ՝ Ժոսլին Ճենտինիի եւ Հ.Ս.Շ.Ի պատասխանատուներ Մալէք Կապրի, Ժան Քասինիոյի եւ Ալեքսանտր Պոնտարի ներկայութեամբ, տեղի ունեցաւ խորհրդակցական ժողով մը, մասնակցութեամբ Հայաստանի, Մոլտավիոյ, Տաճիկիստանի, Պիելոուուսիոյ եւ Վրաստանի ազգային սկաուտական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն: Ժողովին կողմէ Հ.Ս.Շ.Ի նախագահ Ֆրանսիսքօ Ռոմանոյին ուղղուեցաւ նամակ մը՝ առաջարկելով որ ստեղծուի Հ.Ս.Շ.Ի եւրոասիական բաժանմունք մը՝ համախմբելով Ա.Պ.Հ.Ի երկիրներու սկաուտական կազմակերպութիւնները:

Ժողովը նշանակեց ստեղծուելիք բաժանմունքին կանոնադրութիւն մը մշակելու առժամեայ վարչութիւն, մասնակցութեամբ Հ.Ա.Ս.Կ.Ի ատենապետ Յարութիւն Յարութիւնեանի:

26 Ապրիլ 1997ին Հ.Ս.Շ.Ի Բիւրոն կ'որոշէ ստեղծել շարժումի եւրոասիական տարածաշրջան, իբրեւ 6րդ տարածաշրջան: Նորաստեղծ տարածաշրջանի հիմնադիր ժողովը տեղի կ'ունենայ 25-28 Ապրիլ 1998ին, Երեւանի մէջ - [Ծ/190.3]: Տարածաշրջանի կոմիտէի նախագահ կ'ընտրուի Յարութիւն Յարութիւնեանը, օժանդակ յանձնախումբերու անդամներ՝ Բազրատ Եսայեանը եւ Արմէն Աղայեանը:

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆՑ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հ.Ա.Ս.Կ.Ի Կեդրոնական Վարչութիւնը, իբրեւ Հայաստանի պետական սկաուտութեան ներկայացուցիչ Հ.Ս.Շ.Ի մօտ, 1998էն սկսեալ կը հետաքրքրուի նաեւ Հայաստանի մէջ գտնուող փոքրամասնութիւն ներկայացնող ազգերու

սկառուտական շարժումներով, հովանաւորելով անոնց գործունէութիւնները: Այս իմաստով Երեւանի մասնաճիւղը պարտականութիւն կը ստանձնէ ասորի սկառուտական խումբ յառաջացնել մայրաքաղաքին մէջ: Կը նախատեսուի որ ապագային յունական, ռուսական, ուքրանիական, եգիտի եւ այլ ազգութիւններու անդամներէն բաղկացած, իւրաքանչիւրը անջատ սկառուտական միաւորներ կազմուին Հայաստանի մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ Հ.Ա.Ս.Կ.Ի ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄԻՆ՝ Հ.Ս.Շ.

Նախորդ հատորի Դ. մասին եւ ներկայ հատո-

րի Դ. մասի նախորդ գլուխներուն մէջ տեսանք Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.ի կազմաւորման, զարգացման, տարածման, ազգայնացման եւ միջազգայնացման զանազան փուլերը կազմող կազմակերպչական եւ սկառուտական գործունէութիւններու հոլովոյթը:

Ստորեւ, ժամանակագրական կարգով արձանագրուած այդ հոլովոյթի կարեւորագոյն հանգրուանները, որոնցմով 26 Յուլիս 1999ին, Հ.Ս.Շ.ի 35րդ համագումարին ընթացքին, Հ.Ա.Ս.Կ.ին յանձնուեցաւ Հ.Ս.Շ.ին անդամակցութեան վկայականը:

- 1.- 2 Դեկտեմբեր 1989ին Հ.Մ.Ը.Մ. կը հիմնուի Հայաստանի մէջ:
- 2.- 2 Մայիս 1990ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը վաւերացնէ Հ.Մ.Ը.Մ.ի Երեւա-



Հ.Ս.Շ.ի Երոսիական տարածաշրջանի Աորընտիր Բիւրոն, ոտքի՝ ձախէն 4րդը Յարութիւն Յարութիւնեան- Երեւան 1998



Անկախ Պետությանց Հասարակապետության առաջին ընդհանուր բանակումին Փարիզի «Հայ Արի»ներու եւ Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտ անդամներու մասնակցութիւնը

նի մասնաճիւղին կազմութիւնը եւ անդրանիկ վարչութեան կազմը:

3.- 6 Յունիս 1990ին Հ.Ս.Խ.Հ.ի կառավարութիւնը կ'արտօնէ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը հայրենիքէն ներս:

4.- 31 Մարտ 1991ին Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի պատգամաւորներ կը մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի 5րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին: Վարդան Բախշեան կ'ընտրուի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ ներկայացնելով Հայաստանի Շրջանը:

5.- 13 Սեպտեմբեր 1991ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Միհրան Շիմշիրեան Պէյրութի մէջ կապ կը հաստատէ Հ.Ս.Շ.ի ընդհանուր քարտուղար Ժագ Մորէոնի հետ՝ ապահովելու համար Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի

մասնակցութիւնը Հ.Ս.Շարժման, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ծանօթացնելով Հ.Ս.Շ.ի ընդհանուր քարտուղարին -[Ծ/121.26]:

6.- 1993ին Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական կանոնագրութեան մէկ օրինակը կը ներկայացուի Հ.Ս.Շ. Բիւրոյին: Կանոնագրութիւնը սկզբունքով կ'ընդունուի, բացի Հ.Մ.Ը.Մ.ի անկախ պետութիւն մը չներկայացնելու պարագան, որով ան չի կրնար մաս կազմել Հ.Ս.Շ.ին:

7.- Ապրիլ 1995ին Հ.Մ.Ը.Մ.ի 6րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովը կ'որոշէ Հայաստանի Շրջանի սկաուտական բաժինը կոչել Հայ Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն (Հ.Ա.Ս.Կ.) անոր տալով պետական պաշտօնական հանգամանք, կարելիութիւն ստեղծելու համար մաս կազմելու Հ.Ս.Շ.ի ընտանիքին:



Ա.Պ.Հ.ի Ծաղկաձորի բանակումին «Հայ Արի»ներու
ներկայացուցիչ Ալեոսի Տօնապետեան հայկական
սկաուտութեան խորհրդանիշ ջահը
կը փոխանցէ Հ.Ա.Ս.Կ.ին, 23 Յունիս 1996

թեան ընթացքին, Ֆրանսայի «Հայ Արի» կազմակերպութիւնը Հ.Ա.Ս.Կ.ին կը փոխանցէ միջազգային ճէմպորիներու մասնակցութեան իրաւունքի խորհրդանշան ջահը:

11.- 17 Ապրիլ 1997ին Հ.Ս.Շ.ի Բիւրոն պաշտօնապէս կ'ընդունի Հ.Ա.Ս.Կ.ը, որպէս միջազգային Շարժումին լիիրաւ անդամ- [Ծ/180.3]:

12.- 22-23 Ապրիլ 1998ին Երեւանի մէջ կը գումարուի սկաուտական երրօսիական բաժանմունքի հիմնադիր ժողովը: Բաժանմունքի Բիւրոյի նախագահ կ'ընտրուի Յարութ Յարութիւնեանը- [Ծ/191.5]:

13.- 19 Յունիս 1998 Հ.Ս.Շ.ի միջազգային Բիւրոյի անդամ երրօսիական բաժանմունքի ներկայացուցիչ Ալեքսանտր Պոնտար կ'այցելէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զ. Ընդհանուր Բանակումը Աղաւնաձորի մէջ:

14.- 26 Յունիս 1999ին Տիւրպանի մէջ (Հարաւային Աֆրիկէ), Հ.Ս.Շ.ի 35րդ համագումարի բացման օրը, Հ.Ս.Շ.ի Բիւրոն Հ.Ա.Ս.Կ.ին կը յանձնէ շարժումի անդամակցութեան իր վկայականը -[Ծ/206.3]:

15.- 2000ին Հ.Ս.Շ.ի ժընեւի գրասենեակը կը հրատարակէ համաշխարհային սկաուտական կազմակերպութեան մասնակից 216 երկիրներու խորհրդանիշերու պաշտօնական որմագըր, ուր այբբենական կարգով Հայաստանը կը գրաւէ 5րդ տեղը եւ կը ներկայացուի Հ.Մ.Ը.Մ.ի վահանով, Շուշանաժաղիկով եւ «Բարձրացիր - Բարձրացուր» նշանաբանի արձանագրութեամբ:

8.- 1995ի Օգոստոսին Հ.Ա.Ս.Կ.ի Սկաուտական պատուիրակութիւնը կը մասնակցի միջազգային 17րդ ճէմպորին:

9.- 1995ի Հոկտեմբերին Հայաստանի պետական պատասխանատուներուն կ'այցելէ Հ.Ս.Շ.ի եւրոպական բաժանմունքի պատասխանատու՝ Ժան Քասինիօ:

10.- 23 Յունիս 1996ին Ա.Պ.Հ.ի երկիրներու սկաուտական կազմակերպութիւններու առաջին ընդհանուր բանակումի բացման հանդիսու-

Ե. ՄԱՍ

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ - 1991
- ԺՈՂՈՎԱԿԱՆ ԵՒ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ - 1992
- ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ- ԿԱՆՈՆԱԳԻՐ - 1995
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ - 2001
- Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՓՐՈԹՈՔՈԼԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ - ԾՔԱՆԾԱՆՆԵՐՈՒ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ - 2007

Հ.Մ.Բ.Մ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



2001

Հ.Մ.Բ.Մ.

ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ



1995

Համաձայն Հ.Մ.Ը.Մ.ի եօթներորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի, 7րդ Կեդրոնական Վարչութեան, Շրջաններու Ներկայացուցչական Ժողովներուն եւ Մեկուսի Շրջաններու անդամական ընդհանուր ժողովներու որոշումներուն, 1991էն 2007 ժամանակաշրջանին հետեւեալ կանոնադրութիւնները հրատարակած են յատուկ գրքոյկներով, յետ վերոյիշեալ ժողովներուն կողմէ սահմանուած բարեփոխումներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիր -1991

Միութեան համագաղութային կազմակերպութեան վերածուելու կոչուած, 1974ի անդրանիկ Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը, հետեւեալ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներու կողմէ քուէարկուած բարեփոխումներով:

Բ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով - Նիկոսիա, Ապրիլ 1979

Գ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով - Աթէնք, Ապրիլ 1983

Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողով - Աթէնք, Ապրիլ 1991

20 x 14 սմ. չափի 32 էջերէ եւ 107 յօդուածներէ բաղկացող կանոնադրութիւն մը, հրատարակուած՝ Պէյրուսթ, 1991ին:

Ժողովական եւ Վարչական Կանոններ - Բ. տպագրութիւն 1992

1987ի հրատարակութեան (Տես՝ Գ. հատորի էջ 358ը) Բ. տպագրութիւնը:

20 x 14 սմ. չափի, 32 էջերէ եւ զանազան գլուխներու տակ 82 կանոններ պարունակող գրքոյկ մը: Հրատարակուած է Պէյրուսթ, 1992ին:

Հ.Մ.Ը.Մ.ի Սկստակական Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիր - 1995

1995ի Զ. Պատգամաւորական Ընդհանուր







Ժողովին կողմէ քուէարկուած բարեփոխումներով, 1983ին հրատարակուած (Տես՝ Գ.հատոր էջ 358), Հ.Մ.Ը.Մ.ի Սկստակական Ընդհանուր Ծրագիր-Կանոնագրի գրքոյկը կը բաղկանայ 20 x 14 սմ. չափի 48 էջերէ եւ կը պարունակէ սկստակական ընդհանուր կանոնագիրը 100 յօդուածներով, նաեւ՝ համաՀ.Մ.Ը.Մ.ական ընդհանուր բանակումներու ծրագիր-կանոնագիրը 15 յօդուածներով: Հրատարակուած է Պէյրուսթ, 1995 ին:

Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիր - 2001

Համաձայն Հ.Մ.Ը.Մ.ի 7րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի (30 Մարտ-5 Ապրիլ 1999) կողմէ առաջարկուած եւ քուէարկուած բարեփոխումներուն, 2001ին հրատարակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ընդհանուր Ծրագիր Կանոնագիրը, որ մէկ գրքոյկի մէջ միացած կը պարունակէ Միութեան Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը 105 յօդուածներով (էջ 7-25), Սկստակական Ընդհանուր Ծրագիր-Կանոնագիրը 93 յօդուածներով (էջ 27-50), ՀամաՀ.Մ.Ը.Մ.ական Ընդհանուր Բանակումներու Ծրագիր-Կանոնագիրը 15 յօդուածներով՝ թիւ 94էն 108 (էջ 51-54) եւ Ժողովական եւ Վարչական Կանոնները 82 բաժիններով (էջ 57-77): 20 x 14սմ. չափի 80 էջերէ բաղկացող հրատարակութիւն մը, տպուած՝ Պէյրուսթ, 2001ին:

Հ.Մ.Ը.Մ.ական Կենցաղագիտութեան եւ Փրոթոքոլային Հասկացողութեան Ուղեցույց, Շքանշաններու Կանոնագրութիւն - 2007

20 x 13 սմ. չափի 32 էջերէ բաղկացող գրքոյկ մը՝ զոյգ բաժիններով: Էջ 3էն 14 կենցաղագիտութիւն եւ փրոթոքոլային կանոններ, իսկ էջ 15էն 31 շքանշաններու կանոնադրութիւն: Հրատարակուած է Հ.Մ.Ը.Մ.ի Հրատարակչական Կեդրոնական Ֆոնտին (Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հատորներու շարքի) ծախսերով:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱՊՐԻԼ 24
- Հ.Մ.Ը.Մ. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ
- ՄԱՐԶԻԿ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ Բ. ՀԱՏՈՐ

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԵՍ ԳԱՅԼԻԿ ԵՄ - ԵՍ ՍԿԱՈՒՏ ԵՄ - ՊԷՃԵՐՈՒ ԳԻՐՔ
- ԵՐԳԱՐԱՆ
- ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱՆՉԵՐՈՒ ԳՐՔՈՅԿ

ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ

- ԼՈՆՏՈՆԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՔՍԱՆԱՄԵԱԿ
- ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿ
- ԿԼԷՆՏԷՅԼԻ Հ.Մ.Ը.Մ. - ԱՐԱՐԱՏԻ ՔՍԱՀԻՆԳԱՄԵԱԿ
- GRAND REUNION -2000

ԱՆՀԱՏԱԿԱՆ

- Հ.Մ.Ը.Մ. Ի 70 ԱՄԵԱԿ ՅՈՒՇԱՏԵՏՐ
- ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄԵՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
- ՅՈՒՇԵՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԸՍ
- Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐ
- Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՌՈՅՑ
- Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ
- Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԴԷՄՔԵՐ
- 80 ԱՄԵԱԿ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Հ.Մ.Ը.Մ. Ի 1924-2003
- ՎԱՐԴԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի
ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՅՑ




ՎԱՐՈՒԿԱՌ ՅՈՎԱՆՆԵՍԵԱՆ
ՅՈՒՇԵՐ
Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷՍ
1940 - 1952



VARTIVAR OHANNESSIAN
LES ANNEES GLORIEUSES DU FOOTBALL
HOMENETMEN LIBAN 1940 - 1952
EN ANNEXE: LE RESUME EN FRANCAIS

ՄԱՄՈՒՒՂ ԻՎԻՐՏԻԶԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ. ԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ
ԱՊՐՈՒՄՆԵՐ



Հ.Մ.Ը.Մ. ԵՐ
ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԴԵՄԵՐ

ՄԱՐԶԻԿ
ՊԱՇՏՆԱԹԵՐԹԻ



«ԱՅՈՒՍԵ ԵՒ ԺԱՌՆԳՈՒԹՅՈՒՆ»
Չարժանան կազմակերպիչ մարմին

ԵՐԲԵՐԱՐ



«ԱՅՈՒՍԵ ԵՒ ԺԱՌՆԳՈՒԹՅՈՒՆ»
1-2 ՄԱՅԻՆ 1999

1991-ին 2007 ժամանակամիջոցին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Շրջանային Վարչութիւններու, մասնաճիւղային եւ անհատական նախաձեռնութիւններով Հ.Մ.Ը.Մ.ի մասին լոյս տեսած են շարք մը հրատարարակութիւններ, որոնք կը ներկայացացնենք յաջորդող էջերով:

Ա. Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութիւններ

Հ.Մ.Ը.Մ. ԵՒ ԱՊՐԻԼ 24

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հայրապետի վկայութեամբ առաջնորդուող գրքոյկ մը, հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան: Կարճ բաժիններով կը նկարագրէ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան փուլերը սկիզբէն մինչեւ առաքելութիւն դէպի հայրենիք եւ անոր գործունէութիւնը հայրենիքէն ներս: Գրքոյկը կը պարունակէ Եղեռնի զոհ Հ.Մ.Ը.Մ.ականներու հակիրճ կենսագրականներ եւ յատկանշական գրութիւններ ընթերցման համար: Պատկերազարդ այս գրքոյկը 20 x 14 սմ. չափով 40 էջերէ կը բաղկանայ եւ նուիրուած է Եղեռնի 90ամեակին:

Պատրաստութիւն՝ Կարօ Թիւթիւնճեանի: Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ- Անթիլիաս 2005:

Հ.Մ.Ը.Մ.ի ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՅՑ

Կը պարունակէ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակի, ծրագիրներու, պատմութեան, առաքելութիւններու եւ կազմակերպչական կանոններու մասին տեղեկութիւններ եւ յօդուածներ: Վարչագիտական ծանօթութիւններ, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկի տասնաբանեան եւ հայոց պատմութենէն բաժիններ: Խմբագրութիւն՝ Կեդրոնական Վարչութեան կողմէ նշանակուած յատուկ յանձնախումբի:

Գրքոյկը կը բաղկանայ 19 x 13.5 սմ. չափի 40 էջերէ: Տպագրուած Հ.Մ.Ը.Մ.ի հրատարակչական Փոնտի (Հ.Մ.Ը.Մ.ի Պատմութեան շարք) միջոցներով: Տպագրութիւն՝ Կարպիս- Պէյրութ 2005:

«ՄԱՐԶԻԿ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ - Բ. ՅԱՏՈՐ

«Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրականներու հաւաքածոյի Բ. հատորը կ'ընդգրկէ թերթին 103րդ թիւէն մինչեւ 294րդ թիւի խմբագրականներէն հաւաքածոյ մը՝ ընդհանուրը 124 խմբագրականներ: Անոնցմէ առաջին չորսը գրուած են Երուանդ Տէմիրճեանի կողմէ, յաջորդող 15ը արգասիքն են Յ. Գեղարդի (Տոբթ. Յարութիւն Գազանճեանի) մտորումներուն, իսկ մնացեալ 105ը «Մարզիկ»ի խմբագիր՝ երիտասարդ մտաւորական Վիգէն Աւագեանի: Հատորը հրատարակութիւնն է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, մեկենասութեամբ վեթերան Հ.Մ.Ը.Մ.ականներ Ճորճ Տագէսեանի (Ամմանէն), Սարգիս Տէր Պետրոսեանի եւ Յովհաննէս Մարտոյեանի (Սիտնիէն):

24 x 17 սմ. չափի եւ 264 էջերէ բաղկացող այս հատորի իւրաքանչիւր խմբագրականի կողքին զետեղուած է նոյն թիւի պաշտօնաթերթին կողքի նկարը: Խմբագրութիւն Վ. Աւագեանի: Տպարան Կարպիս Պէյրութ — 2007:

Շրջանային նախաձեռնութիւններ

ԵՍ ԳԱՅԼԻԿ ԵՍ

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան: «Ես Գայլիկ եմ» գիրքը կը պարունակէ գայլիկներու եւ արծուիկներու յատուկ տեսական եւ գործնական գիտելիքներ, կակուղ թաթիկի, միաստղի եւ երկաստղի բաժիններով: Գիրքը կը պարունակէ նաեւ բանակումի, կապերու, հետախուզական նշաններու

եւ ձեռային աշխատանքներու բաժիններ: Փոքր բաժին մը յատկացուած է հայոց պատմութեան: Վերջաւորութեան արձանագրուած են խաղեր եւ երգեր: 20 x 14 սմ. չափի 108 էջեր պարունակող այս գիրքի խմբագիրներն են Բագրատ Եսայեան եւ Յարութիւն Յարութիւնեան, օժանդակութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի խմբագրատներէ բաղկացող խմբագրական կազմի: Մեկենաս՝ Թորոս Մանկասարեան: Յառաջաբան ժազ Մորէնի՝ Հ.Ս. Շարժումի գլխաւոր քարտուղար: Երեւան 2000:

ԵՍ ՍԿԱՈՒՏ ԵՍ

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան: «Ես Սկսուած եմ» ուսուցողական հատորը կը բաղկանայ վեց գլուխներէ. ընդհանուր տեղեկութիւններ, սկսուածական տեսական գիտելիքներ, սկսուածական գործնական գիտելիքներ, առաջին բուժօգնութիւն, աշխարհագրութիւն եւ խաղեր: 20 x 14 սմ. չափի եւ 228 էջերէ բաղկացող այս գիրքի հրատարակութեան ծախսերը հոգացուած են Հայաստանի Հանրապետութեան Մշակույթի եւ Երիտասարդութեան հարցերու նախարարութեան եւ Նիւ Ճըրզիէն Անդրանիկ Յովհաննէսեանի կողմէ: Խմբագիր՝ Գագիկ Եղեան, խմբագրական կազմ՝ Վիգէն Յովհաննէսեան եւ Լիլիթ Վարդանեան, օժանդակներ՝ Հրաչ Շմաւոնեան եւ Վարդան Այվազեան: Երեւան:

ՊԵՃԵՐՈՒ ԳԻՐՔ

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկսուածական Խորհուրդին, 24 x 17 սմ. չափի 140 էջեր պարունակող այս գիրքը կը պարունակէ արի-արենոյչական եւ գայլիկ-արծուիկական փոխ խմբագրական եւ խմբագրական բաժիններու յատուկ պէճերու նկարագրականը եւ անոնց տիրացման պայմանները: Պէճերու գիրքի Բ. տպագրութիւնը իրականացած է Հալէպ, 2002ին:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱՆՉԵՐՈՒ ԳՐՔՈՅԿ

Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկսուածական Խորհուրդին: Փոքր ծաւալի 32 էջերէ բաղկացող այս գրքոյկը կը պարունակէ հայատառ զանազան լեզուներով սկսուածական շարքերու յատուկ կանչեր, որոնք պիտի օգտագործուին բանակումներու, խարուկահանդէսներու եւ սկսուածական զանազան առիթներու ընթացքին:

ԵՐԳԱՐԱՆ

Գ. Մասնաճիւղային Նախաձեռնութիւններ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ 25ԱՄԵԱԿ 1968-1993

Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան 25ամեակի գրքոյկի խմբագրական մարմնի անդամներ՝ Աշխէն Իսբէնճեանի, Գօգօ Պալեանի, Ռուբինա Պօղոսեանի, Կարպիս Շիրտըմեանի, Յարութիւն Բարսեղեանի եւ Մհեր Դաւիթեանի խմբագրութեամբ՝ պատկերազարդ ալպոմ մասնաճիւղի 25 տարիներու գործունէութեան, որուն առթիւ շնորհաւորական գիրով կը մասնակցին Տաթեւ Արք. Սարգիսեան, Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւն, Հ.Յ.Դ. Գարեգին Նժդէհ կոմիտէ, ՀՕՄ, Համագգային, մասնաճիւղի վարչութիւն: 28 x 21.5 սմ. չափի յաջորդական 56 էջերով կը ներկայացուի մասնաճիւղի հիմնադրութեան օրերէն մինչեւ 2003 թուականի, մարզական, սկսուածական, ազգային, ընկերային եւ ժողովական կեանքի փուլերը: Տպարան VARTCO, Լոս Անճելըս 2003:

Յ.Մ.Ը.Մ.ի ԼՈՆՏՈՆԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԻ
ՅԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ 20 ԱՄԵԱԿ. 1979-1999

Գունաւոր պատկերազարդ ալպոմ, Մեծն Բրիտանիոյ Հայոց Առաջնորդի, Հայաստանի

դեսպանի, Անգլիոյ ՀՕՄի, Համազգայինի, Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ վարժարաններու տնօրէնութեան շնորհաւորական գիրով առաջնորդուող այս հրատարակութիւնը խմբագրած են Հրաչ Պօղոսեան, Սիլվա Դիլանչեան, Արսինէ Բալայեան, Վահէ Առաքոնջեան եւ Ալենուշ Օհանեան: Ալպոմը կը պարունակէ մասնաճիւղի 20ամեայ գործունէութեան բոլոր կարեւոր փուլերը՝ մարզական, սկաուտական, ընկերային, ազգային, մշակութային զանազան կարգի ելոյթներով, գործող վարչութիւններու եւ յանձնախումբերու անուններու թւումով: 21 x 24 սմ. չափի 82 էջերով եւ գեղատիպ կողքով հրատարակութիւն մը տպուած Լոնտոնի մէջ, Փետրուար 2002ին:

Յ.Ս.Ը.Ս.ի ԿԼԵՆՏԵՅԼԻ «ԱՐԱՐԱՏ»
ՄԱՍՆԱԾԻԻՂԻ 25 ԱՄԵԱԿԻ
ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ 1978-2003

Գունաւոր ճոխ պատկերազարդումով Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ, Ս. Աստուածածին Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ, Հ.Յ.Դ. Ահարոնեան կոմիտէի, Հայ Դատի յանձնախումբի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, Համազգային, ՀՕՄի, ազգային եւ պետական շարք մը կազմակերպութիւններու եւ պետական հաստատութիւններու շնորհաւորական գիրերով առաջնորդուող երկլեզու հրատարակութիւն մը որ կը պարունակէ մասնաճիւղի մարզական, սկաուտական, մշակութային, ընկերային, երիտասարդական, շինարարական եւ այլ գործունէութիւններուն արձանագրութիւնները: 28 x 21 սմ. չափի 104 էջերէ եւ զոյգ ներդիրներով գեղատիպ կողքով հրատարակութիւն մը: Խմբագրութեան մաս կազմած են Լիլիթ Բաղտասարեան, Գրիգոր Մկրեան, Ռուբէն Գիւրջեան եւ Արմիկ Աբրահամեան եւ թարգմանութեան եւ սրբագրութեան մարմին մը:

GRAND REUNION -2000

Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի հիմնադրութեան 32րդ տարեդարձին առթիւ հրատարակուած յուշագրական ալպոմ մը, հեղինակ՝ Մարօ Քէչիչեան: Ամփոփ էջերու մէջ հեղինակը արձանագրած է մասնաճիւղի 32 տարիներու գործունէութեան պատմութիւնը, վարչական կազմերու, հին ու նոր անդամներու անունանացանկեր եւ կենսագրական ծանօթութիւններ ղեկավար անդամներու մասին: Շատ ճոխ պատկերազարդումով՝ (40 էջ) , գեղատիպ հատոր մը 25x18 սմ. չափի 104 էջերով:

Դ. Անհատական նախաձեռնութիւններ

Ստորեւ, ժամանակագրական շարքով, 1991էն մինչեւ մեր օրերը, անհատական նախաձեռնութիւններով լոյս տեսած եւ մեզի ծանօթ հրատարակութիւններու մասին ամփոփ տեղեկութիւններ:

Յ.Ս.Ը.Ս.ի 70ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ
1918-1988

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան, ղէպի Հայաստան առաքելութեան, Մերձաւոր Արեւելքի, Եւրոպական երկիրներու, Աւստրալիոյ, Հարաւային Ամերիկայի եւ Հիւսիսային Ամերիկայի մասնաճիւղերու գործունէութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի մասին ժամանակագրական կարգով տեղեկութիւններ, սկիզբէն մինչեւ 1988 թուական: Խմբագիր՝ Հրազդան (Պարգեւ Շիրինեան): 28 x 21.5 սմ. ծաւալով, 346 էջերէ բաղկացող, ճոխ պատկերազարդումով հրատարակութիւն մը: Տպարան Մշակ Ֆրեզնօ, Քալիֆորնիա, 1991: Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՅԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ, Հատոր Առաջին, սկիզբէն մինչեւ 1939 թուական

Հայկական զարթոնքէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւն, սկզբնական գործունէութիւնէն մինչեւ Ա. Պատգամաւորական ժողով, Հ.Մ.Ը.Մ.ի կառուցային կազմաւորում եւ Հ.Մ.Ը.Մ.ական մամուլ, հինգ մասերէ բաղկացող Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը: Հեղինակ՝ Բիւզանդ Թորիկեան: 29 x 22 սմ. ծաւալով, 376 երկսիւնակ էջերէ բաղկացող կաշեկազմ պատկերազարդ հրատարակութիւն մը: Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս 1995: Վկայախօսք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ, Հատոր երկրորդ, 1940-1974

Բ. Աշխարհամարտի սկիզբէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կազմակերպութիւն վերածուելու թուականը պարփակող Բ. հատորը կը բաղկանայ հետեւեալ բաժիններէն. դադրած եւ փոխակերպուած մասնաճիւղեր, գործօն մասնաճիւղեր, Շրջանային կառույցներ եւ Շրջանային գործունէութիւններ, Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի կազմաւորում եւ Հ.Մ.Ը.Մ.ական մամուլ: Հեղինակ՝ Բիւզանդ Թորիկեան: 29 x 22 սմ. ծաւալով երկսիւնակ 414 էջերէ բաղկացող պատկերազարդ կաշեկազմ հրատարակութիւն մը: Տպագրութիւն՝ Կարպիս - Պէյրուիթ 1999:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ, Հատոր երրորդ, 1975 – 1990

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան հատորներու այս երրորդ համարը կ'ընդգրկէ Միութեան համագաղութային կազմակերպութեան վերածուելէն մինչեւ Հայաստանի վերանկախացման ժամանակաշրջանը: Հատորը կը բաղկանայ հինգ մասերէ. -Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի հաստատում եւ զարգացում, Շրջաններ եւ Շրջանային Գործունէութիւններ, Մեկուսի

Շրջաններ, Հայաստան եւ Հ.Մ.Ը.Մ ական մամուլ: Հեղինակ՝ Բիւզանդ Թորիկեան: 29x22 սմ. ծաւալով , երկսիւնակ 384 էջերէ բաղկացող պատկերազարդ կաշեկազմ հատոր մը: Տպագրութիւն Կարպիս – Պէյրուիթ 2003:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ, Հատոր Զորրորդ, 1991 – 2007 (ներկայ հատորը):

ՅՈՒՇԵՐ Զ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷՍ, 1 940-1952

Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի փառքի շրջանը (1940-1952) յուշատետրի մը մանրամասն եւ ամբողջական նկարագրական էջերով արձանագրուած վկայարական մը: Հեղինակ՝ Վարդիվառ Յովհաննէսեան: Հատորը կը բաղկանայ հետեւեալ եօթը գլուխներէն. - 1. Հ.Մ.Ը.Մ.ի հսկաներու խումբը, 1940-1944: 2. Վերակազմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի խումբին 1945-1947: 3. Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթը 1948-1952: 4. Լիբանանի ազգային խումբը: 5. Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդական խումբերը 1937-1952: 6. 1955-Ամերիկա- ոտքիս գործողութիւնը: 7. Միշտ Հ.Մ.Ը.Մ.ի հետ մինչեւ օրերս 1956: Memoires d'un footballeur de Homenetmen du Liban:

Խօսք գնահատանքի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն: Խօսք ողջոյնի, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւն: Յառաջաբան Յ. Գեղարդի: Մեկենաս՝ Հրաչ Սիսեուեան: 24 x 17 սմ. չափի, 448 էջերով, պատկերազարդ հրատարակութիւն մը, Տպարան Կիլիկիա, Հալէպ: Փարիզ 2000:

Հ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐ Տեսութիւններ եւ ակնարկներ, դէմքեր, Հ.Մ.Ը.Մ.ական յուշեր, մարզական կեանք պարունակող յուշագրութիւն մը: Հեղինակ՝ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական, գաղափարախօս Սամուէլ Մկրտիչեան, խմբագրութեամբ՝ Վ. Աւագեանի: Յառաջաբան տղքիթ. Միսաք Արզումանեանի: 27 x 20 սմ. չափի, երկսիւնակ եւ պատկե-

րազարդ 240 էջերէ բաղկացող հատոր մը: Պէյ-րուրթ 2002:

Հ.Ս.Ը.Ս.ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԿԱՌՈՅՑ 2000-2002

Պատրաստութիւն՝ Պօղոս Չոլաքեանի: 335 էջերէ բաղկացող գունաւոր պատճենահանումով կազմուած աշխատասիրութիւն մը

Հ.Ս.Ը.Ս.ի ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Հ.Ս.Ը.Ս.ի Գաղափարաբանութիւնը ներփողող հրատարակութիւն մը: Հեղինակ՝ Կարօ Թիւթիւնճեան: Վիզէն Աւագեանի առաջնորդող յօդուածէն ետք, սկիզբի 24 էջերուն մէջ (7-30) հեղինակը կը թուէ Միութեան հիմնադրութեան օրերէն սկսեալ անոր նպատակի իրագործման համար ղեկավար սերունդի ճիգերը, մէջբերումներ կատարելով Հ.Ս.Ը.Ս.ի մասին կարգ մը մտաւորականներու կարծիքներէն: Յաջորդող 10 էջերուն մէջ հեղինակը արձանագրած է վկայութիւններ հաստատուած հեղինակաւոր անձնաւորութիւններու կողմէ: Գրքոյկը կը բաղկանայ 24 x 17 սմ. չափի 40 էջերէ: Մեկենասներ՝ Նազարէթ, Պետիկ եւ Րաֆֆի Սապունճեան եղբայրներ: Տպագրութիւն՝ Կարպիս, Պէյրուրթ 1999:

Հ.Ս.Ը.Ս. ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԴԵՍՔԵՐ

Հ.Ս.Ը.Ս.ի մասին հայ հոգեւորական, ազգային, մտաւորական, գաղափարական եւ գրչի սպասարկու մեծանուն անձնաւորութիւններու կողմէ արձանագրուած վկայութիւններու քաղուածք մը անոնց կենսագրականներու մանրամասն ուսումնասիրութեամբ եւ անոնց կարծիքներէն մէջբերումներով: Հատորը կ'առաջնորդուի տոքթ. Միսաք Արզումանեանի եւ Յ.Գեղարզի վկայախօսքերով: Հեղինակ Կարօ Թիւթիւնճեան: 24 x 17 սմ. չափի 120 էջերէ բաղկացող հրատարակութիւն մը: Մեկենասներ՝ Ժի-

րայր եւ Սրբուկ Սարգիսեաններ Տպագրութիւն Կարպիս - Պէյրուրթ 2002:

80 ԱՄԵԱԿ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Հ.Ս.Ը.Ս.ի
1924-2003

Հ.Ս.Ը.Ս.ի Յունաստանի վեթերան ամուսններէն Կարպիս Գուլյումճեանի խմբագրութեամբ լոյս տեսաւ Շրջանի հիմնադրութեան 80ամեակին նուիրուած այս հատորը: Հատորը կը պարփակէ Աթէնք-Ֆիքսի, Թեսաղոնիկէի եւ այլ մասնաճիւղերու առաջին տարիներու կազմակերպչական, մարզական եւ սկաուտական գործունէութեան մասին տեղեկութիւններ: Ապա ժամանակագրական շարքով արձանագրուած են 2 Հոկտեմբեր 1927ի Ա. Պատգամաւորական ժողովէն մինչեւ 5 Յունիս 2004ի Շրջանային ներկայացուցչական ժողովի ատենագրութիւնները յայտնաբերելով Յունաստանի Հ.Ս.Ը.Ս.ի 80 տարիներու գործունէութեան փուլերը, կից ունենալով համապատասխան նկարները:

24 x 17 սմ. չափի 250 էջերէ բաղկացող այս հատորը Հ.Ս.Ը.Ս.ի Յունաստանի պատմութեան վրայ լոյս կը սփռէ հարազատ վաւերականութեամբ: Տպուած է Աթէնք, 2004ին:

ՎԱՐԴԱՆ

Նախաձեռնութեամբ իր մօր Այտա Բախշեանի, Լ. Սահակեանի, Ռ. Սահակեանի, Է. Սարգսեանի եւ Ա. Ղազարեանի, Երեւանի մէջ լոյս տեսած հատոր մը՝ նուիրուած Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝ նահատակ Վարդան Բախշեանի յիշատակին: Հատորին մէջ ամփոփուած են Վարդան Բախշեանի կենսագրութիւնը եւ ծանօթ հրապարակագիրներու ստորագրութեամբ Վարդանի հերոսական կեանքին մասին յօդուածներ: Յօդուածներու շարքին յատկանշական է «Իմ Տեղս Ղարա-

բաղն է» խորագրով Երուսանդ Տէմիրճեանի գրութիւնը, ուր վարդան կ'ըսէ. «Ինչ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ: Ուրկէ ուր: Իմ տեղս Ղարաբաղն է, ես ղարաբաղցի եմ: Ինծի համար վատութիւն է նստիլ

Երեւանի մէջ ու ժողով-ժողով խաղալ»: Ճոխակարագարդումով, 20 x 14 սմ. չափի 108 էջեր պարունակող այս հատորի գլխաւոր խմբագիրն է Սուրէն Սահակեան: Հրատարակչատուն՝ «Լուսնակն»- Երեւան 2000:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԵՐ

- ՄԱՐԶԻԿ - ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻԻՆ
- ՍԿԱՌԻՏԻՆ ԶԱՅՆԸ - ՍՈՒՐԻԱ
- Հ.Մ.Ը.Մ. Ի ԶԱՅՆ - ՎԻԵՆՆԱ
- ՄԱՐԶԱՇԽԱՐՀ - ՀԱՅԱՍՏԱՆ
- ՀԱՅ ԱՐԻ - ՀԱՍԿ
- ԶԱՐԳԱՑԻՐ-ԶԱՐԳԱՑՈՒՐ - ԱՆԹԻԼԻԱՍ
- ՄԱՐԶԱՍԷՐ - ԳՈՔԻՆԻԱ
- Հ.Մ.Ը.Մ.Ի ԶԱՅՆ - ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ, ԳՈՐՏՈՊԱ
- Հ.Մ.Ը.Մ.Ի ԶԱՅՆ - ՓԱՐԻԶ

ՄԱՐԶԻԿ

Պաշտօնաթերթ՝ հրատարակուած Ն.Մ.Ը.- Մ.ի կեդրոնական վարչութեան: Մարզական եւ սկսուտական ամսաթերթ, առաջին թիւը լոյս տեսած է Մարտ 1980ին: Մինչեւ 1990 տարուան հրատարակութեան մասին տեղեկութիւնները տե՛ս Գ. հատորին էջ 367ին մէջ:

1991էն մինչեւ 2007 թերթին խմբագրութիւնը յաջորդաբար վարած են վարուտան Մուրատեան (1991էն - Մայիս 1993), Զաւէն Թորիկեան (Յունիս 1993 - Մարտ 1995), Վիգէն Աւագեան (Ապրիլ 1995էն ի վեր): Պաշտօնաթերթի խմբագրականները գրած են Երուանդ Տէմիրճեան՝ 4 խմբագրական, տոքթ. Յարութիւն Գազանճեան- (Յ. Գեղարդ) 15 խմբագրական եւ Վիգէն Աւագեան՝ 132 խմբագրական :

Շրջաններու աշխատակիցներէն են.-
Յարութիւն Յարութիւնեան՝ Հայաստան Լեւոն Պէնկեան, Մոսիկ Թոփուզեան, Զարեհ Տէրվիչեան, Տիրան Շահինեան՝ Գանատա Կարպիս Գուլումճեան՝ Յունաստան
Զաւէն Սապունճեան, Տոքթ. Արամ Աւետիսեան, Վիգէն Գապաքեան, Մեղրիկ Ապահունի, Խաժակ Տիւպէրեան եւ Զեփիւռ էլէյճեան՝ Սուրիա

Պարգեւ Շիրինեան- (Հրազդան), Սամուէլ Մկրտիչեան եւ Մարո Քէչիչեան՝ Արեւմտեան Մ. Նահանգներ

Յ. Գեղարդ, Շանթ Ոսկերիչեան, Ժորժ Գալփաքեան, Յարութ Պազգալեան եւ Սեւան Նազարեան՝ Ֆրանսա

Յակոբ Խաչատուրեան՝ Արեւելեան Մ. Նահանգներ

Ալին Պէննէեան՝ Յորդանան
Խորէն Քիրազեան՝ Պուլկարիա
Խաչիկ Մուրատեան, Լուսիկ Կիւլոյեան-Սրապեան, Շուշիկ Մաւիսագալեան, Սեդա Դ. Գրիգորեան, Թորգոմ Զանան, Գէորգ Թորոյեան, Ալին Զէյթունլեան, Պէթի Փանոսեան, Սալբի Լատոյեան, Տիրան Մ. Աղազարեան, Պետրոս Շեմմեսեան, Բիւզանդ Թորիկեան, Յովհաննէս

Տէր Յարութիւնեան, էլի Հուլիչեան, Սեդա Պէչլեան եւ ուրիշներ՝ Լիբանան:

ԺԸ. տարիէն սկսեալ Մարզիկ կը հրատարակուի ամբողջութեամբ գունաւոր նկարագարով:

1991էն 2007 տարիներուն լոյս տեսած են.

- Ժ. Տարի 12 թիւ 109-120, 6 զոյգ թիւեր
- ԺԱ. Տարի 12 թիւ 121-132
- ԺԲ. Տարի 12 թիւ 133-144, 1 եռեակ թիւ
- ԺԳ. Տարի 12 թիւ 145-156
- ԺԴ. Տարի 6 թիւ 157-162
- ԺԵ. Տարի 12 թիւ 163-174
- ԺԶ. Տարի 12 թիւ 175-186
- ԺԷ. Տարի 12 թիւ 187-198, 1 զոյգ թիւ
- ԺԸ. Տարի 12 թիւ 199-210, 1 զոյգ թիւ
- ԺԹ. Տարի 12 թիւ 211-222
- Ի. Տարի 12 թիւ 223-234
- ԻԱ. Տարի 12 թիւ 235-246
- ԻԲ. Տարի 12 թիւ 247-258 1 զոյգ թիւ
- ԻԳ. Տարի 12 թիւ 259-270 1 զոյգ թիւ
- ԻԴ. Տարի 12 թիւ 271-282
- ԻԵ. Տարի 12 թիւ 6 զոյգ թիւեր
- ԻԶ. Տարի 6 թիւ 295-302, 4 զոյգ թիւ

ՄԱՐԶԻԿ կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան, ազգային տենչերու իրագործման ի խնդիր տարուող պայքարի, Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպչական, մարզական, սկսուտական բոլոր իրագործումները արձագանգող բեմը: Ունի մասնաճիւղէ-մասնաճիւղ, Շրջաններու գործունէութեան մասին տեղեկագրութիւններ, սկսուտական թեքնիք գիտութեան բաժին, Միութեան անցեալի պատմութենէն էջեր, ժամանցի, մանկապատանեկան, նամականիի, համացանցի եւ այլ բաժիններ:

Արդար գնահատանքի արժանի հրատարակութիւն մը, որ յաջողած է իր հետեւողականութեամբ մրցանիչ մը հաստատել հայ մարզական պաշտօնաթերթերու հրատարակութեան տրեգրութեան մէջ:

ՍԿԱՈՒՏԻՆ ՁԱՅՆԸ - ՍՈՒՐԻԱ

Պարբերաթերթ՝ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ս.Օ.Խ.ի: Մեքենատիպ հրատարակութիւն մը, խմբագրութեամբ Սուրիոյ Շրջանային Սկստակական խմբապետութեան գրական յանձնախումբին: Պարբերաթերթի առաջին թիւը լոյս տեսած է 1990ի տարեվերջին: 28 x 21 սմ. ծաւալով եւ 60 էջեր պարունակող թերթին աշխատակիցներն են Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ս.Օ.Խ.ի Սուրիոյ մասնաճիւղերու խմբապետներ եւ խմբապետուհիներ: Թերթին առաջնորդող յօդուածին կը հետեւին մարզական, սկստակական, տեղեկագրական, սկստակական գործունէութիւններու եւ թեքնիք ուսուցման, պատմութեան եւ ժամանցի նիւթեր:

Յ.Ս.Ը.Մ.ի ՁԱՅՆ - ՎԻԵՆՆԱ

Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղի ներքին ամսաթերթ, հրատարակուած 1991ի Մարտ ամիսէն սկսեալ, խմբագրութեամբ Յասմիկ Բարոյեանի: 29 x 22 սմ. ծաւալով երկու էջերէ բաղկացող ներքին տեղեկատու մը: Կարճ կեանք մը ունեցած է:

ՍԱՐՁԱՇԽԱՐՅ

Հ.Մ.Ը.Մ.ի Հայրենի պաշտօնաթերթ, հրատարակուած է նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի Պատասխանատու Մարմնին, շաբաթական հերթականութեամբ: Առաջին թիւը լոյս տեսած է 4 Սեպտեմբեր 1993ին: Խմբագիր՝ Ռոլանտ Շառոյեան: 42 x 29 սմ. ծաւալով 8 էջերէ բաղկացող պատկերազարդ շաբաթաթերթը կը հրատարակէ հայրենի եւ միջազգային մարզական լուրեր:

ՀԱՅ ԱՐԻ - ՀԱՍԿ

1999ի Փետրուար ամիսէն սկսեալ Հ.Մ.Ը.Մ.-

Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ լոյս կը տեսնէ Հայ Արի լրատու ամսաթերթը: 29 x 22 սմ. ծաւալով 6 էջերու մէջ ամսաթերթը կը պարունակէ միութենական, հայոց պատմութեան, ընդհանուր զարգացման, սկստակական թեքնիք եւ ժամանցի յատուկ նիւթեր: Թերթին խմբագիրն է տոքթ. Լիլիթ Վարդանեան, օժանդակութեամբ Գայիանէ Նաւոյեանի, Վիգէն Յովհաննիսեանի եւ Կորիւն Խաչատրեանի: Նախապէս «Հայ Արի»ն հրատարակուած է որպէս ներդիր պաշտօնաթերթ Մարզաշխարհին:

ԶԱՐԳԱՅԻՐ - ԶԱՐԳԱՅՈՒՐ - ԱՆԹԻԼԻԱՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Անթիլիասի մասնաճիւղի սկստակական խմբապետութեան նախաձեռնութեամբ 31 Հոկտեմբեր 1993ի առաջին թիւով կը սկսի հրատարակուիլ «Զարգացիր - Զարգացուր» պարբերաթերթը: Թերթը կը պարունակէ մասնաճիւղի սկստակական գործունէութեան մասին մանրամասն տեղեկութիւններ, սկստակական ձեռնարկներու նկարագրականներ, մարզական, ազգային, պատմական եւ կրօնական նիւթեր, որոնք կը միտին զարգացնել մասնաճիւղի սկստակական շարքերը: 29 x 22 սմ. ծաւալի էջերով (12էն մինչեւ 48 էջ), Զարգացիր - Զարգացուր լոյս տեսած է գրեթէ տարեկան հերթականութեամբ, վերջին՝ ութերորդ թիւը, 1999ին, գունաւոր կողքով:

ՍԱՐՁԱՍԵՐ - ԳՈՔԻՆԻԱ

Ամսաթերթ՝ հրատարակութիւն Յունաստանի Գոքինիոյ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի վարչութեան: Առաջին թիւը լոյս տեսած է Նոյեմբեր 1993ին: Երկլեզու (հայերէն եւ յունարէն) ամսաթերթը կը պարունակէ մասնաճիւղի մարզական եւ սկստակական գործունէութիւններու նորագոյն լուրերը, վարչութեան կողմէ առաջնորդուող գրութեամբ: 28 x 21 սմ. ծաւալով եւ 8 էջերէ բաղկացող պաշտօնաթերթ մը:

Հ.Ս.Ը.Ս.Ի ՁԱՅՆ - ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ,
ԳՈՐՏՈՊԱ

Պուէնոս Այրէսի եւ Գորտոպայի մասնաճիւղերու երիտասարդական յանձնախումբերու խմբագրութեամբ տեղեկատու - պարբերաթերթ, կը պարունակէ սկառտական, մարզական եւ ազգային նիւթեր: Հրատարակուած է 1997էն սկսեալ:

Հ.Ս.Ը.Ս.Ի ՁԱՅՆ - ՓԱՐԻՉ

Հ.Ս.Ը.Ս.- ՖՐԱՆՍԻ ներքին տեղեկատու, հա-

յերէն եւ ֆրանսերէն բովանդակութեամբ: Սկսած է հրատարակուիլ 2000ի սկիզբը: 29 x 22 սմ. ծաւալով 8 էջերու վրայ Հ.Ս.Ը.Ս.Ի ՁԱՅՆը կը պարունակէ մասնաճիւղի սկառտական, մարզական եւ ընկերային գործունէութիւններու արձագանգը, ինչպէս նաեւ նիւթեր Հ.Ս.Ը.Ս.Ի եւ հայոց պատմութեան մասին: Տեղեկատուի վարչութեան տնօրէնն է Սեւակ Թորոսեան:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

**ՔԱՐՈԶԶԱԿԱՆ
ԼՍՈՂԱՏԵՍՈՂԱԿԱՆ**

- ՀԱՄԱՑԱՆՑ
- ԽՏԱՍԱԼԻԿ
- ՁԱՅՆԱՍՓԻԻՌ

ՀԱՄԱՑԱՆՑ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան համացանցի գլխաւոր կայքը կը գործէ յատուկ յանձնախումբի մը հսկողութեամբ, կազմուած Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանէն անդամներէ:

Համացանցի կայքի հասցէն է՝
www.homenetmen.org:

Այս հասցէի ենթաբաժանումներով (Links) կարելի է կապուիլ շրջաններու եւ Մեկուսի շրջաններու կայքերուն հետ:

Կեդրոնական կայքէջը կը պարունակէ տեղեկութիւններ եւ նկարներ վարչական կազմերու, հրատարակութիւններու, մասնաճիւղերու եւ Շրջաններու կազմութեան, վերջին նախաձեռնութիւններու եւ այլ նիւթերու մասին: Արձանագրութիւններուն կարելի է հետեւիլ զոյգ լեզուներով՝ հայերէն եւ անգլերէն:

ԽՏԱՍԱԼԻԿՆԵՐ

Խտասալիկներու հրատարակութեամբ Շրջաններ եւ մասնաճիւղեր իրենց գործունէութենաց արձագանգով Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչութիւնը կ'ապահովեն:

Խտասալիկներու հրատարակութեամբ արձանագրութեան արժանի են Կլէնտէյլի մասնաճիւղի սկաուտական երգերու հաւաքածոն, Գաբրիէլ Փանոսեանի սկաուտական երգերը, որոնց միջոցաւ սկաուտական եւ միութենական, ազգային, հայրենասիրական երգերու շարք մը կարելի է ուսուցանել նորեկներուն: Կան նաեւ կարգ մը Շրջաններու եւ մասնաճիւղերու հրատարակային ելոյթներու, հիմնադրութեանց տարեդարձներու հանդիսութեանց բազմաթիւ խտասալիկներ:

ՁԱՅՆԱՍՓԻՒՌ

Ձայնասփիւռի հաղորդումներով Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական աշխատանքը կ'ապահովուի յատուկ յայտագիրներով:

Ժողովրդական լայն ունկնդրութեան արժանացած են Լիբանանի «Վանայ Ձայն»ի հաղորդումները: Յունուար 2002էն մինչեւ Սեպտեմբեր 2004 Լիբանանի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Խմբապետութեան կողմէ շաբաթական մէկուկէս ժամուան յայտագրով սփռուած են սկաուտական թեքնիք զարգացման, սկաուտական վերջին նուաճումներու, Լիբանանի, այլ Շրջաններու եւ մասնաճիւղերու ընթացիկ գործունէութեանց, անցեալի պատմութեան եւ ապագայի ծրագիրներու մասին տեղեկութիւններ:

Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանին մէջ «Հորիզոն» ռատիոկայանէն ամէնօրեայ կէս ժամուան յայտագրով հաղորդումներ կը սփռուին զուտ Հ.Մ.Ը.Մ.ական յայտագրով: Այս հաղորդումներու պատասխանատուն է Նորա Չափարեան:

Պուէնոս Այրէսի մասնաճիւղի անդամներէն իրաւաբան Գէորգ Գարամանուկեանի աշխատանքով մասնաճիւղի գործունէութեան եւ առհասարակ Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն նուաճումներուն մասին վերջին տեղեկութիւններու բովանդակութեամբ կը սփռուի ռատիոյ յայտագիր մը «Հայ Ժամ» անունով եւ հայերէն լեզուով արժանանալով մեծ թիւով ունկնդիրներու գնահատանքին:

Մոնթեվիտէոյի «Կոմիտաս» ռատիոկայանը, ղեկավարութեամբ Կարօ Հէքիմեանի, իր ընթացիկ յայտագիրներու կարգին, լայն տեղ կու տայ տեղւոյն մասնաճիւղի ու ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ.ի լայնատարած գործունէութեան մասին հայերէն յայտագիրներով:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ներկայ հատորի խմբագրութեան համար օգտագործած ենք Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական արխիւները, կեդրոնական վարչութեան, Շրջաններու եւ Մեկուսի Շրջաններու միջեւ փոխանակուած թղթակցութիւնները, շրջաբերականները, Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներու, Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու եւ անդամական ընդհանուր Ժողովներու ատենագրութիւնները եւ այդ ժողովներուն ներկայացուած գործունէութեանց տեղեկագրութիւնները: Այս պարագաներուն մեր արձանագրութիւնները հաստատող մատենագիտական աղբիւրները չենք յիշած:

Օգտագործած ենք նաեւ 1991էն 2006 ժամանակաշրջանին ՄԱՐԶԻԿ պաշտօնաթերթին մէջ լոյս տեսած թղթակցութիւններն ու նկարները: Այս պարագային, ընթերցողի պրպտումներուն իբրեւ ուղեցոյց [] կցագիծի մէջ յիշած ենք մատենագիտական ցանկի մեր այբբենական թուագրումները հետեւեալ ձեւերով:-

Այբբենական թուագրումով կը ճշգոլի հրատարակութեան անունը:

[/] նշանին հետեւող թուանշանը կը ճշգէթերթի հրատարակութեան շարքի թիւը:

[.] միջակէտին կը հետեւի թերթի տուեալ թիւի էջաթիւը:

Կու տանք օրինակներ.-

1.- էջերու շարունակական թուագրումով հրատարակութիւններ.

[ԶԱ.] Իրաքի Հ.Մ.Ը.Մ.ի 1963ի օրացոյց, (տես՝ ներկայ հատորի էջ 50ը):

2.- Հրատարակութեան թուականի յիշատակութեամբ թերթեր.

[Ե/7.11.1995] Ազատ Օր օրաթերթի 7 Նոյեմբեր 1995ի թիւը, (Տե՛ս ներկայ հատորի էջ 73ը) :

3.- Մամուլի շարունակական շարքի յիշատակութեամբ թերթեր.

[Ծ/282.5] կը նշանակէ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ՄԱՐԶԻԿ պաշտօնաթերթի 282րդ թիւի էջ 5ը, (տես՝ ներկայ հատորի էջ 53ը):

Յատուկ անուններու ցանկ չենք կազմած նկատի ունենալով որ այդ մէկը վերջին հատորի նիւթը պիտի ըլլայ: Աշխատած ենք յատուկ անունները յիշել ամբողջութեամբ՝ առանց կրճատումներու:

Մ Ա Տ Ե Ն Ա Ք Ի Տ ՈՒ Թ Ի Ի Ն

- [Ե] ԱԶԱՏ ՕՐ, Օրաթերթ, Աթէնք
- [Զ] ԱԶԴԱԿ, Օրաթերթ, Պէյրուտ
- [Ը] ՀԱՅՐԵՆԻՔ, Շաբաթաթերթ, Պոսթրն
- [Թ] ԱՍՊԱՐԷՉ, Օրաթերթ, Լոս Անճելըս
- [Ծ] ՄԱՐԶԻԿ, Ամսաթերթ, Պաշտօնաթերթ
- [Կ] Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան արխիւներ

- [ԿԱ] Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենագրութիւններ
- [ԿԲ] Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան գործունէութեանց տեղեկագիրներ
- [ԶԱ] Իրաքի Հ.Մ.Ը.Մ.ի 1963ի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան օրացոյց

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Յառաջարան

3

Ա. ՄԱՍ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ եւ Կեդրոնական Վարչութիւններու Գործունէութիւններ

Գլուխ Առաջին	Պատգամաւորական Հինգերորդ Ընդհանուր Ժողով	5
Գլուխ Երկրորդ	Հինգերորդ Կեդրոնական Վարչութեան Գործունէութիւն	11
Գլուխ Երրորդ	Պատգամաւորական Վեցերորդ Ընդհանուր Ժողով	15
Գլուխ Չորրորդ	Վեցերորդ Կեդրոնական Վարչութեան Գործունէութիւն	21
Գլուխ Հինգերորդ	Պատգամաւորական Եօթներորդ Ընդհանուր Ժողով	29
Գլուխ Վեցերորդ	Եօթներորդ Կեդրոնական Վարչութեան Գործունէութիւն	35
Գլուխ Եօթներորդ	Պատգամաւորական Ութերորդ Ընդհանուր Ժողով	43
Գլուխ Ութերորդ	Ութերորդ Կեդրոնական Վարչութեան Գործունէութիւն	49
Գլուխ Իններորդ	Ծքանշաններ եւ Ծքանշանակիրներ	57

Բ. ՄԱՍ Ծրջաններ եւ Ծրջանային Գործունէութիւններ

Գլուխ Առաջին	Յունաստան	63
Գլուխ Երկրորդ	Լիբանան	81
Գլուխ Երրորդ	Սուրիա	119
Գլուխ Չորրորդ	Արեւմտեան Միացեալ Նահանգներ	139
Գլուխ Հինգերորդ	Գանատա	187
Գլուխ Վեցերորդ	Արեւելեան Միացեալ Նահանգներ	217
Գլուխ Եօթներորդ	Աւստրալիա	233
Գլուխ Ութերորդ	Հարաւային Ամերիկա	247
Գլուխ Իններորդ	Պուլկարիա	269
Գլուխ Տասներորդ	Միջշրջանային Խաղեր	281

Գ. ՄԱՍ Մեկուսի Ծրջաններ

Գլուխ Առաջին	Եգիպտոս	289
Գլուխ Երկրորդ	Պաղեստին	299
Գլուխ Երրորդ	Յորդանան	307
Գլուխ Չորրորդ	Փարիզ	313
Գլուխ Հինգերորդ	Լոնտոն	325
Գլուխ Վեցերորդ	Քուէյթ	335
Գլուխ Եօթներորդ	Հարաւային Ֆրանսա	343
Գլուխ Ութերորդ	Կեդրոնական Եւրոպա	349

Գլուխ Իններորդ	Հոլանտա	353
Գլուխ Տասներորդ	Կիպրոս	357
Գլուխ Տասնմեկերորդ	Վրաստան	363
Գլուխ Տասներկուերորդ	Իրաք	367
Գլուխ Տասներեքերորդ	Շուէտ	375
Գլուխ Տասնչորրորդ	Իտալիա	379

Դ. ՄԱՍ Հայաստան

Գլուխ Առաջին	Հ.Մ.Ը.Մ.ի Մասնաճիղեր եւ Միաւորներ Հայաստանի Մէջ	383
Գլուխ Երկրորդ	Հայաստանի Պատասխանատու Մարմին	405
Գլուխ Երրորդ	Հ.Ա.Ս.Կ.ի Կազմակերպչական եւ Սկաուտական Գործունէութիւն	413
Գլուխ Չորրորդ	Հ.Ա.Ս.Կ.ի Անդամակցութիւնը Համաշխարհային Սկաուտական Ծարժումին	423

Ե. ՄԱՍ Մամուլ

Գլուխ Առաջին	Կանոնագրութիւններ	431
Գլուխ Երկրորդ	Հրատարակութիւններ	435
Գլուխ Երրորդ	Պաշտօնաթերթեր	443
Գլուխ Չորրորդ	Քարոզչական- Լսատեսողական	449
	Գործնական թելադրանքներ ընթերցողին	453
	Մատենագիտութիւն	453